




785

L 55







ՀԱՆԴԵՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

b h

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

...» ԵՐԵՌՈՒԹԻ ԳԻՒԹ. «...»

ՄՈՍԿՈՒԱ.

ՑՊԱՐԱՆ ՄԿՐՑԻՉ ԲԱՐԻՍՈՒԻԴԱՐԵԱՆԻ.

1890

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

— 22 —

| | |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| I. ԱԴԱՄԱՅ ՄՈՒԹԸԸ, աւանդումին. ՊԵՐՑ ՊՈԴ- ՇԵԱՆՑ | 1 |
| II. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՆԱԼՅԱՆԴԵԱՆ | 8 |
| III. ԴՈՆ ՔԻՇՈՏԻ ԻՄԱՍՏԸ (Ն. Ստորօժենկօ) | 27 |
| IV. ՏՂՄՈՒՏ. ԶԻՆՈՒՈՐԻ ՄԱՀԸ. ՏԵՄՆՈՒՄ ԵՄ ԱՀԱ... բանաստ. Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ | 45 |
| V. ԱՌԱԽՈՏԵԱՆ ԺԱՄԻՆ, Սերբիական գրոյց Լ. Կ. Լա- զարեվիչից | 50 |
| VI. ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐԻՆ, բանաստ. Լ. ՄԱՆՈՒԵ- ԼԵԱՆՑ | 69 |
| VII. ՓԻԼԻՍՈՓԱՅՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԻ- ՄՈՒՆՔՆԵՐՆ լսու Լինյաների Յ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ | 71 |
| VIII. ԵՐԿՈՒ ՎԱՐԴ (Մ. Վալյուշից), ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ և ԵՐԳԵՐ (Ռ. Պրուտցից), ԵՐԳԵՐ (Հայնէից). ՓՈ- ԹՈՐԿԻՑ ՅԵՑՈՅ (Ռ. Պրուտցից). բանաստ. ԱԴ- ԾԱՑՈՒԵԱՆ | 96 |
| IX. ԻՆՉՈՒ ԱՇԽԱՐՀԱ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԱԾ ԶԵ, Կոտ- Մուռիկայից. Մ. ՏԵՐ-ԶԱՐԱՐԵԱՆՑ | 101 |
| X. ՄԱՇԱՆ, պատկեր. ՍՈՒՐԹԱՆ | 105 |
| XI. ՄԱՐՏՈՎԻՑ. ՕՏԱՐ ՊՈՒՏԻՆ. ՄՈԿՈԼՈՎԻՑ. ՆՈՐ ԼՈՒՐԵՐ ՏԱԶԿՈՅԱՅՍԱՍԱՆԻՑ. ԷՇԼ. ԵԹԵ ԴՈՒ ՄԻ ՕՐ... բանաստ. Զ. ԲԱԼՈՒԿԵԱՆ | 135 |
| XII. ՀԱՆՍ ՇԻԼԴԲԵՐԳԵՐԻ ԿԵԱՆՔԻ և ՃԱՆԱՊԱ- ՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՄԻՆ. Վ. ՍՈՒՐԵԿԵԱՆՑ | 148 |

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵԽ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ.

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՈՒԹՅԱՐԵԱՆԻ.

1890

Дозволено цензурою. С.-Петербургъ, 26 Марта 1890 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

— 23 —

| | |
|-------------------------------------------------|-----|
| I. ԱՐԱՄԱՅ ՄՈՒԹԸ, աւանդութիւն. Պերճ Պիտօ- | |
| ՇԵԱՆՑ | 1 |
| II. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ | 8 |
| III. ԴԱՆ ՔԻՇՈՑԻ ԻՄԱՍՏԸ (Ն. Ստորօժնկօ) | 27 |
| IV. ՏՂՄՈՒՏ. ԶԻՆՈՒՈՐԻ ՄԱՀԸ. ՏԵՍՆՈՒՄ ԵՄ | |
| ԱՀԱ... բանաստ. Յ. ՅՈՎՃԱՆԻՒԽԵԱՆ | 45 |
| V. ԱՌԱԽՈՑԵԱՆ ԺԱՄԻՆ, Սերքիական գրոլց 1, Կ. Լու- | |
| զարեվիչից | 50 |
| VI. ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐԻՆ, բանաստ. 1. ՄԱՆՈՒԵ- | |
| ԼԵԱՆՑ | 69 |
| VII. ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԻ- | |
| ՄՈՒՆՔՆԵՐՆ բատ Լինդների Յ. ԲԱՐԻՈՒՈՒԴԱՐԵԱՆ | 71 |
| VIII. ԵՐԿՈՒ ՎԱՐԴ (Մ. Վալդուից), ՄԱՐԴԱՐԻՏՆԵՐ | |
| և ԵՐԳԵՐ (Ռ. Պրուտյից). ԵՐԳԵՐ (Հայնէից). ՓՈ- | |
| ԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ (Ռ. Պրուտյից). բանաստ. Աղ.՝ | |
| ԾԱՑՈՒՐԵԱՆ | 96 |
| IX. ԻՆՉՈՐԻ ԱՇԽԱՄԲՅԱ ԲԱՐԵԿԱՄՐԳՈՒԱԾ ԶԵ, Կոտ- | |
| Մուռլիկայից. Մ. ՏԵՐ-ԶԱՐԱՐԵԱՆՑ | 101 |
| X. ՄԱՇԱՆ, պատկեր. ՍՈՒԼԹԱՆ | 105 |
| XI. ՄԱՐՏՈՎԻՑ. ՕՏԱՐ ՊՈԷՏԻՆ. ՍՈԿՈԼՈՎԻՑ. ՆՈՐ | |
| ԼՈՒՐԵՐ ՏԱՁԿԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ. ԷՇԸ. ԵԹԵ ԴՈՒ | |
| ՄԻ ՕՐ... բանաստ. Ջ. ԲԱԼՈՒՀԵԱՆ | 135 |
| XII. ՀԱՆՍ ՇԻԼԴԲԵՐԳԵՐԻ ԿԵԱՆՔԻ և ՃԱՆԱՊԱՐ- | |
| ՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. Կ. ՍՈՒՐԵԿԵԱՆՑ . . . | 148 |

| | | | | | | | | | |
|--------|------------------|-------------|--------------|------------|------------|-------------------|------|---|-----|
| XIII. | ԴԱԻԱՑԱՆԻՆ. | ԻՄ | ՀԱՅՐԵՆԻՔՆ... | բանասո. | L. | - | | | |
| | | ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ | . | . | . | 166 | | | |
| XIV. | ԿԱՐԱԲԱՍ, | Մօրիս | Մօնտղգիւց | Զ. | Պ. | 168 | | | |
| XV. | ԱՐԾԻԻ, | բանասո. | ՍԵՇԹ. | . | . | 213 | | | |
| XVI. | ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ, | ֆանտազիա. | հ. | Տուրգենևից | . | 214 | | | |
| XVII. | ԵԵՐ | ԺԱՄԿՈՉԸ, | գարնանային | իդիլիա. | Վ. | Կօրոլյն- կովից | . | . | 258 |
| XVIII. | ԹԱ.ՓՈՐ | ԱԻԱԴ | ՈՒՐԲԱԹ | ԵՐԵԿՈՑԵԱՆ, | բանասո. | | | | |
| | | Պ. | Հ. | ԱԴԱՄԵԱՆ | . | . | 267 | | |
| XIX. | ՎԱՐԴԱՆԱՆՑ | ՊԱՏԵՐԱԶՄԻ | ՊԱՏՁԱՌՆԵՐՆ | և | | | | | |
| | | ՀԵՏԵՒԱՆՔԸ. | ԵՐ. | ՇԱՀԱԶԻՋ | . | 269 | | | |
| XX. | ԼՅՈՊՈԼԴ | ՖՕՆ | ՌԱՆՔԻ | և | ՀԱՅՈՑ | ՊԱՏՄՈՒ- ԹԻՒՆԸ, | ԼՈՐԴ | . | 289 |
| XXI. | ՇԱՀԻՐ | ԽԱԶԱՏՐԻ | ԵՐԳԵՐԻՑ | . | . | . | 312 | | |
| XXII. | ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. | ՍՈՍ | և | Վարդիթեր, | վէպ | | | | |
| | | ՊԵՐՃ | Պոշնանցի. | Մ. | ՆԱԼԲԱՆԴԵԱՆ | . | 322 | | |
| XXIII. | ՍՏԱՑՈՒԱԾ | ԳՐԲԵՐ | . | . | . | . | 353 | | |
| XXIV. | ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ | . | . | . | . | . | 354 | | |
| I. | ՀԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆ, | հաղորդեց | Վ. | ԵԶԵԱՆՑ | . | . | 1 | | |



ԱԴԱՄԱՅ ՄՈՒԹԸ.

Պայծառ և գեղեցիկ օրին տեղի տուեց երեկօյեան մժութիւնը։ Քաղցր եղանակը սկսեց խստանալ մեղմահնչեան զեփիւոր փոխարկուեց հիւսիսային կատաղի փոթորկի։

Մի նորանշան երեսյթ էր այս տարագէտ փոփոխութիւնը մշաագարուն աշխարհքի համար. այն տեղ շարունակ գալար էր, միշտ բարեհամբոյր էր, յաւէտ ծաղկազարդ դրախտ էր, աշխարհքի ստեղծման օրից այն տեղ մշտական լոյսն էր թագաւորում, խաղաղ հովի ու զովի էին երջանիկ բնակիչներին բաւականութիւն տալիս, աշուն, ամոռ. և ձմեռ իւրեանց բոլոր բարիքները գարնանն էին թողել պարզելու Աստուծոյ սիրելի արարածներին, իսկ իրանք գլուխ էին առել կորել ոչ վարելու, ոչ հնձելու, ոչ մշակելու և ոչ ճակատի քըրտինքով ապրուստ անելու հոգածութեան կարիք չը զգացուած այս զարմանալի աշխարհքում։

Այդ էր պատճառը որ յանկարծական մումը և խստաշունչ եղանակը կապարի ծանրութեամբ Ճնշեցին բոլոր բնակիչների հոգին ու սիրտը։

— Դուրս, անարժան ապերախտներ, հեռու իմ Տիրոջ քաղցր աչքից. — սուլը ձեռքին յառաջ արած Հանդէս III.

Քշում էր դեպի խաւարի սահմանը թոյլ և երկչուարարածներին ահեղ զոչեւնով մի աներկիւղ զօրական:

Նփոթ, իրարանցում, տագնապ, արհաւիրք միմեանց էին խառնուել փախչող փախչողի, վազող վազողի էր, քաջ կարիծի սուրը երկնածին պատժական զործիք էր, նրա ծօծիւնների հետ կայծեր էին ցայտում, ոչ մինը չեր վստահանում զիմազրել անազորոյն զօրականին, ամէն ոք աշխատում էր ոտքերի ոյժը օգնութիւն կանչել և զլուխը պլծացնել:

Ահա յետ քաշեց իւր սատակիչ գործին քաջ սպառազէնը. նա էլ չի հետեւում փախստականներին:

— Գնացէք, տանջուեցէք, — ասաց վերջին անգամ հալածող ոգին և սլացաւ դեպի լուսոյ թագաւորութիւնը:

Յանկարծ ամբողջ տիեզերքը մթութեան մէջ մըտաւ, խաւարը պատեց ամէն տեղ և բոլոր բնակիչները ահահար, դողահար, խսրխսափելով սկսան թափառել և գայթել: Գլորուում էին, քարերի էին զիազում, ընկեր էին պառտում և ոչ ոք ուրիշին մօտենալ չեր վստահանում երկիւղը համատարած էր, վերացել էր ախնկին սէրը և համերաշնութիւնը, գյութեան կոփւը նրանց աչքերը բացել էր, փոխադարձ թշնամութիւնն ընդհանրացել էր, այդ պատճառաւ ամէն ոք աշխատեց իւր համացեղ, իւր նման մի ուրիշին գտնել ու նրա հետ զլուխ պահելու հոգսի մէջ մտնել:

Բայց այս ի՞նչ զարմանալի աշխարհք էր, ի՞նչ օտարութի մարդիկ էին նրա բնակիչները:

Խորթ չի լինել մեզ համար, եթէ ասենք, որ համակ աշխարհքի բնակիչ մարդիկը երկու հոգի էին, մեր նախահայրերն էին նրանք, թնացած բնակիչները էին գաղանները, անսասունները և միւս շնչառը կենդանիները:

Մինչև այդ օրը ամէն կենդանիք հաւասարապէս հնագանդ էին մեր պապին, մեր տատին. իսկ այդ դժբնդակ օրը՝ պատուիլազանցութեան ըոպէից արարածներից շատերը թշնամի հանդիսացան նրանց։ Մարդը կորցրեց իւր գերիշխանութիւնը. Արարիչը երեսը թիքեց նրանցից և բոցեղէն սերովեէի ձեռքով դուրս խոկեց Աղամին եղեմական գրախոտից իւր վայելչութեան համար ստեղծուած բոլոր արարածների հետ գետի չարչարանց աշխարհը։

Բարձր հայաստանի Բիւրակնեան լերինքն էին, ուր առաջին անգամ ոտք դրին նախաստեղծները, և Բիւրակնեան լեռների քարածերպերի խոռոշներից մէկի տակ կուճ հկան նրանք։

Ի՞նչ անէին տարաբաղդ չուառները. մերկութիւնը, ցուրտը, խաւարը նրանց կաշկանդել է, միանգամայն անմիջար են, բոլորովին անծար են։ Մթութեան մէջ ամէն մի քարի ծայր, ամէն մի կենդանու ոտնածայն, մի ծառի սօսափիւն նրանց սասանհցնում է։ Ճարը կրարած պինդ փաթաթուեցան իրար և փոքրիկ մանուկների նման սկսան լալ։ Փամեր անցան, և զրութիւնը նոյնն է, խաւարը չի ցրուում երկրի երեսից։

Նրանց յուսահատութիւնը ծայրայիշութեան հասաւ մանաւանդ, երբ ցուրտն աւելի սաստկացաւ և մըթութեան թանձրութիւնը կրկնապատկուեց, եռապատկուեց, միմեանց ստուերն էլ չէին նշմարում։

Այս արկածքը միապէս ներգործեց ամէն շնչաւորների վերայ, բոլոր աեղերից նորից աղաղակներ բարձրացան. մանչիւն, խոնչիւն, կառանչիւն, խրխնջիւն, բառանչիւն, կաղկանձիւն, գռնչիւն, բոռոց, սուոց, ծուոց, շուոց, մկմկոց, ճկճկոց, զբդոց, կրկոց միմեանց էին խառնուել և այս ծայները թնդացնող բոլոր կենդանիների վերայ փոխադարձ երկիւղ տարածել։

Կենդանիների նուռագահանգիսին մասնակցեցին և
մեր նախահայրերը, աւելի և աւելի գոռացին, Ճիշ ու
ծղբառոց բարձրացրին և օգնութիւն կանչեցին, բայց թէ
ուժից, իրանք էլ չեն հասկանում:

Ահա այդ ժամանակն էր, որ անսահման մթու-
թեան մէջ մի առաւել մթագոյն էակ զրանց մօտե-
նում է:

—Ի՞նչ էք լալիս, Ագամ, —հարցնում է ստուերը:
—Մեզ մի վրկութեան ելք, ազատութեան միջոց.
յուրաքանչական չէ, գաղանների ձայներն էլ մեր հո-
գին են քաղումի մութն էլ միւս կողմից բոլորովին ուշ-
քներս կորցրեց, չզիտենք ուր ենք, ի՞նչ տեղում ենք,
այս ի՞նչ փորձանքի մէջ ենք ընկել քանի գնում, ա-
ւելի է մթնում. մի՞թէ միշտ մթնում պիտի մնանք:

—Ինձ ի՞նչ կըտաք, որ ձեզ լոյս աշխարհ հանեմ,
դաշտաններին հալածեմ, ցրակ ազատեմ:

—Ի՞նչ որ քո սիրաք կըցանկանայ:
Խաւարի թագաւորը՝ չարն սատանան թերեց մի
կոփածոյ մարմարոնեայ քար հետեւեալ փորագրութեամբ.
«Մեր հոգին և մեր սերնդի հոգին մեր յօժար կամքով
քեզ ենք ծախում, եթէ մեզ այս խաւարից գէպի լոյս
տանես»:

—Կարդա և սասրագրիր—ասաց խարերան և իս-
կոյն պայծառ լոյսը ձեզ կընդգրկի, սառած անձերդ ջեր-
մութիւն կըստանան, գաղանները ձեղանից կըվախենան
և ամէն բարիք ձեզ համար պատրաստ կըվինի...

Մարդը կնոջը հարցրեց, կինը մարդուն, խորհեցան
դուրս գալ այս դառը, անել զրութիւնից, բայց գե-
տարակուսում էին. ըինի՞ թէ օձի ուես մի խարերան
էլ սա լինի:

—Էլ քանի՞ ինձ ու շացնէք, —նեղացաւ սատանան.
—Ես կամենում եմ ձեզ մի բարերարութիւն անել ե-

թէ չէք ցանկանում, ևս գնում եմ, զործ ունիմ. — և
նա ձեւացրեց, իբր թէ հեռանում է:

— Ախար ոչինչ չենք տեսնում, ո՞նց զրենք, — ասաց
կինը:

— Այ, եթէ չէք հաւտառում, ևս մի փոքր լոյս կը-
բերեմ, որ տեսնէք, ստորագրէք և յետոյ խոստումն ըո-
լորովին կատարեմ:

Արդարեւ, արեկելեան կողմից մի կապտագոյն ցոլ
մունք սփռուեց մարմարինի վերայ, տառերը պարզ ե-
րևեցան:

— Ինչ զալու է, թող դայ. ջուրն ընկնողն անձ-
րեից չի վախիլ, այ մարդ, — ասաց Եւան, — ստորագրի՞ր,
թէ չէ ևս վախենում եմ, էն ի՞նչ մութն էր մի բոպէ
յառաջ. տեսնում ես, զազանների ձայնն էլ պակասեց:

— Այ կնիկ, ով է իմանում, էլ ի՞նչ դայ զինե-
րիս, — զժուարանում էր Աղամը:

— Ուրիմն դու ինձ չես սիրում, — թնդժնդալով լս-
ցախառն ասաց Եւան և պինդ կպաւ Աղամի կրծքին
ու սկսեց համբոյրներ տալ և արտասուել:

— Ճօ չես ամաչում, դու ի՞նչ երիտասարդ ես, որ
էդ աննման աղջկայ սիրու կուրում ես, խաթրին դիպ-
չում ես, մի մտիկ տուր դորա գեղեցկութեանը: Այ,
թէ լաւ չես տեսնում, լոյսն աւելի շատացնեմ, որ քո
բարի աչքով տեսնես, թէ ի՞նչ հուրի մալաք է
քեզ փաթաթուած:

Արեկելի կապտութիւնն աւելացաւ:

Եւան ասառածուհու էր նման. սուտ է, ոչնչէ
չենք կարող նմանեցել, աշխարհքի ստեղծագործութիւ-
նից մինչև այս տողերս գրելու բոպէն զեռ մեր նախա-
մօր պէս չքնազագեղ աղջեկ չե ծնել:

Աղամը ցնդեց, խելքը կորցրեց, մի ջերմ համբոյր
զրոշմեց իւր լժակցի ճակատին ու ասաց.

—Քո խաթեր ջուրն էլ կ'ընկնեմ՝ հուրն էլ, զը-
լուիս ոտիդ տակին մատաղ կ'անեմ, հոգիս էլ կըսեւ-
ցնեմ ու քո միրտը չեմ կոտրիլ:

Այն ինչ շողոմքոր (շողոքորթ) ժպիտ էր, որ սի-
րուն Եւայի նրբափայլ շրմունքների վերայ խաղացին:
Երջանիկ նախահայր, ինքն էլ չհասկացաւ, թէ
մնց ձեռքը անգիտակցաբար աարաւ դէպի մարմինը, մնց
պարզեց ցուցամատը, մնց գեղահրաշ կինը մի ձեռքով
փարուած իւր գլխի տիրոջ մերկ վզով, միւս ձեռքով
թեթև զարկ տուեց Աղամի կռանքը, Եղունգի սուր ծայ-
րը պողովատի կարծրութեամբ իւր զօրութիւնը ցոյց
տուեց:

«Աղամ» բառը չորս տառից էր. մի տկնթարթում
մեր կնոջ գերի պապի եղունգով փորուեցաւ քարի ո-
գորկութեան վերայ և սատանան հետեւապատառ (հա-
պըշտապ) յափշտակեց ու դէպի արևմուտք սլացաւ:

Աղամն ու Եւան բերանաբաց անգայաբար նայում
էին դէպի փորձիչն անհետանալու կողմբ:

—Էս ի՞նչ ջրի չըպաց էր,—զարզանգած վեր
թռաւ Եւան. —մի բարձր տեղեց ջրի մեջ մի ծանր բան
ընկաւ, ոչ ոք հօ չինդուեցան:

Մի խուլ և մանշալից քրքիջ պատասխան եղաւ
նախամօր խօսքերին երկրի խորութիւնից.

—Խաբեցի, դուք այսուհետեւ յաւխեանս իմ ձան-
գերումն էք, ևս իմ փափազին հասայ, ինձ անգունդ
գլուողին յաղթեցի, նորա սիրելի մարդու ձեռագիրը
Յորդանան գեաը շպրտեցի:

Առաջնաստեղծ մարդկանց աչքերը բացուեցան. նը-
րանք ձանաչեցին իւրիանց երկրորդ սխալմունքը, երեսի
վերայ ընկած անմիտթար հեկեկում էին:

Իրանք էլ չիմացան, թէ որբան ժամանակ տեսից
իւրիանց յուսահատ դրութիւնը. լուսոյ շառաւիղը շատ

չքաշեց, նրանց աչքերը բացեց, թանձը մուլժն արդէն անց էր կացել. երկրի լուսաւորի ոսկեփայլ տէգերը սևեռի էին իւրեանց ծայրերը դէպի հայսատանի բարձրաբերձ լեռների արծաթափայլ կատարները:

Պայծառ արեի բոլորակից երեկցաւ Տէրը. Նա ձայն տուեց.—մի՛ վհատէք, Աղամ, խաւարի որդու յաղթութիւնը կարճատեւ է, Յորդանանու հունը իւր խորութեամբ չի կարող յաւիտեանս պահպանել քո անհեռատեսութեան ձեռացագիրը, իմ զաւակս իւր գարշապարի ներբանով կըջնջէ, կըյզկէ փորագրութիւնը, նա կըփրկէ քեզ և քո սերունդը:

—Թող յաւիտեանս յիշուի մեր երկրորդ յիմարութիւնը, սիրելի Եւա, —ասաց առաջեկայ երեկոյեան Աղամը, երբ հաւասարիացաւ բնութեան անփոխարինելի կարգադրութիւնը՝ տիւ ու գիշեր շարունակ միմեանց յաջորդելուն.—Թող արշալուսից յառաջ թանձրացած սարսափելի կաճրատեւ խաւարը կոչուի իմ անունովս «Աղամայ մութը» *):

—Իսկ մեր սերնդից այն աղզը, որ այս աւանդութիւնը չի մոռանալ և «Աղամայ մութը» միշտ կըյիշի, թող նա էլ արժանանայ մեզ նման երկնային կրկնակի այցելութեան:

ՊԵՐՃ ՊՌՈՇԵԱՆՑ.

*) Աղամէս է կոչուում առաւտեան արշալուսից յառաջ կարծատեանձնը մութը, որից յետոյ լոյսն սկսվում է բացումը:

Հայ գիւղացուն անձանօթ չեն «Աղամայ մութը» բառերը: Աղամայ մթին գիւղացի հօտաղը կերակրած վերջացրած է իւր սիրելի եղներին և սպասում է բռպէական խաւարի անցնելուն, որ լծի նրանց գումանին:

Առաւտեան Աղամայ մութն և երեկոյեան ժանդառքը երկու սկզբնակէտեր են գիշերային շարունակութեան. այդ երկու բռպէական մթի թանձրութիւնը առաւել է գիշերուան մթութիւնից, ինչպէս ասած է. մատդ մարդի աչքը կոխես, տեսնիլ չի:

ՃՅԱՐՏՈՒԹԻՒՆ.

Մարդ, իմացիր դու աշխարհը,
Ունայն են քո հոգսերը.
Մի՛ տառապիլ զուր բեռի տակ,
Մի՛ չարչարիլ քո անձը:
Մի լաւ նայիր դու կաղմութեան
Հողագնդի շրջանին,
Կտեսնես այն տեղ անտարակոյս
Եւ քո պատկերն առանձին:

Անցաւոր է ամենայն ինչ
Այս աշխարհը քում մեղ յայտնի,
Մեզնից ոչ ոք և մի խեցի
Իւրեան հետը չի տանի:
Շատ թագակիրք, շատ մեծատունք,
Անբաւ գանձի տէր-իշխանք
Մութ ստորեկրեայ օթեանում
Ունին կտաւ լոկ պատանք:

Երանի՛ թէ նոցա համար
Այս գէթ լինէր մշտական.
Զէ՛, կըփըթի և այդ պատանք—
Դա օրէնք է բնութեան:
Այն, որ աշխարհի երեսին
Անտուն, անտէր ու մերկէր,
Հաւասար է մեծատան հետ,
Որ գիպայ շոր հագնում էր:

Երկուսի էլ չոր կմախքը
Խաւար ու գեղ հողի մեջ
Պիտի փըթեն մի օրինակ,
Պիտի ուտեն որդ ու ցեց:
Այս բանը մենք միշտ տեսնում ենք,
Բայց չենք ուզում ճանաչել,
Որ մեծատան գոհարները
Մահուն չեն լինիլ արգել:

Նա ամենուն կըհանդիպի
Մի օրինակ, անխըսիր
Ե՛ւ հանգչողին պալատներում,
Ե՛ւ գործողին միշտ երկիր:
Զարմանալի է այս բանը.
Մի մահ է, նոյն ամենին
Զար ու բարի համարվում է
Նա իւր ընդունողներին:

Մահը նոյն է, բայց տեսնողի
Ճանալան է վիճակը.
Մինը չունի հագին շապիկ,
Միւսինն ակնով մուճակը,
Խեչու համար պիտի ցանկայ
Աղքատ մարդը այս կեանքին,
Չունի ապրուատ, տուն ու հանգիստ,
Չունի սակաւ դիւր անձին:

Նորա կեանքը միշտ լեղի է,
Դառն է նորա աշխարհը.
Նա անդադար սպասում է
Նըւիրական վայրկենին:
Չուրախացուց ոչ ոք նորա
Տիրագիտակ երեսը.
Ճանկանում է կեանքից պրծնել
Ու հետևել օրհասին:

Նորան այն էլ դիւր է սրտին,
Որ անտրտում, անվրդով
Քընի Խաղաղ Հողի տակին
Մահու յաւէժ Խոր քընով:
Խրա ընտանին և իւր կեանքում
Չունէր ապրուստ, շոր կամ տուն,
Կ'ապրի նոյնպէս այնուհետեւ
Սղերսելով գթութիւն:

Այսպէս մահը հանդիպում է
Աղքատ, պանդուխտ, խեղճ մարդի,
Ինչպէս վաղուց ըստեսնուած
Կարօտակէզ սիրելի:
Զի վրդովիլ նորա գալը
Երբէք սիրոը աղքատի,
Մահը միայն նորա տանջուած
Մարմին հանդիստ կըբերի:

Բայց նա որ միշտ թաւիշ, կերպաս
Շոր կտրում է իւր անձին,
Որ խորտիկներ համազամեալ
Կուտէ հաւուց փորոտին,
Որ սովոր է հըրամնյել
Մառայից շատ բազմութեան,
Այն հարուստն է, որոյ համար
Մահ է՝ գալուստ մահըվան:

Աշխարհքումն նա չի տեսել
Ո՛չ նեղութիւն և ո՛չ ցաւ,
Նորա օրը, տարիները
Ինչպէս բոպէ մի անցաւ,
Իւրեան պատող ծանօթներից
Նա կեղծ կերպով միշտ սիրուեց,
Միշտ գոլութեան, միշտ հլութեան
Հպատակի ձայն լսեց:

Նա չի ուզում երբէք լսել,
Որ այս աշխարհը երկու
Ունի գոներ. պէտք եղածին
Մտնելու և դուրս գալու.
Նա չի ուզում անունն լսել
Այն երջանիկ էակին,
Որին յանձնած է ընդունել
Առ հասարակ մեր հոգին:


Ինչքան քընքոյշ էլ որ նայես,
Բընութիւնը կ'կատարէ
Կանոնաւոր միշտ իւր գործը.
Ամենիս վայր կըդլորէ:
Այսպէս հարուստն վերջին անդամ
Անօրինակ յուսահատ
Տառապում է մահիճի մէջ,
Թափում մահու քիրա առատ:

Նորա աչքը խոժոռվում է,
Երբ տեսնում է իւր տունը,
Փայտանում է զգայութիւնքը,
Երբ յիշում է իւր գանձը,
Երբ յիշում է, որ թողնում է
Ու ինքը զուրկ ամենից
Պիտի մտնի սև հողի ծոց,
Խաւար ու զուրկ պարզ լուսից:

Մահը եկաւ, բացեց դուռը,
Մեծատունը ըսկըսաւ
Անզօր ձայներ բերնից թողնել,
Երբ մահու դէմքը տեսաւ,
Զուր է, չի լսիլ քո ձայնը,
Հետեկիր դու կոչողին,
Նա աւելի խլանում է,
Երբ տեսնում է վախսոտին:

Վերջին զյժը թափել ուզեց
Հնդգիմանալ բոպէին,
Ծնօտները սաստիկ սեղմեց
Ատամները ձռացին,
Թափուած ուժից ցընորամիտ:
Մահն իւր գործը կատարած
Մեծատան գէմքն այլանդակեց
Երկու աչքն էլ թողեց բաց:

Անձն իմ, օրչնէ այն Աստուածը,
Որ փրկել է քեզ մահի
Երկիւղեցը, որ հարուստին
Զարչուրելի կըթւի,
Քեզ համար միշտ նոյն է եղել,
Նոյն կըմինի յաւիտեան,—
Ապրել արևու երեսին
Կամ քնել խաղաղ քուն մահուան:



ՈՒՍԵՆՈՂ ԵՒ ՄԵԺԱՏՈՒՆ.

Ուսանողաց վրայ առնել դատաստան
չեշո չէ շատ, ունի անհամար պայման.
Նայելով նորա դուրսի ընթացքին
Ուղեղ բան ասել է անհնարին:

Շատերը մինչև այսօր ասած են,
Թէ ուսանողներն դատարկ մարդիկ են,
Նոցա պատասխան ես կ'ասեմ այսօր,—
Այդ կարծեաց տէրը չէ մեր դատաւոր:

Այդ դատաւորը իւր մահճում հանգիստ
Երբ արշալուսոյ քընով նընջում է,
Ուսանողն զգաստ թափելով քունը՝
Գնում է շուտով համալսարանը:

Երբ ուսանողը դադրած-վաստակած
Տուն է յետ դառնում (հարկ է թէ քաղցած),
Դեռ իմ դատաւորն տեղերում նստած
Ձերմ-ջերմ փորում է գըլուխը փըթած:

« Աղջի՛, — գոռում է նա իւր աղախնին, —
« Ժամը քանի՞ն է, մօտ է կէսօրին»:
— չըամել էք, կ'ուղե ուղեղ մի քառորդ:
— Ուժ, ժամանակ է վեր կենալ՝ ուղորդ:

Վեր կացաւ-հագաւ շորերը սիրուն,
Թէյ ու հացեղէն մատուցին խակոյն.
Ի հարկէ կ'ուտէր, նորա պէս թէ կուշտ
Ես էլ քնէի՝ կ'ուտէի անշուշտ:

Մեծատան համար միայն թէյ ու հաց
Թէ լոկ պատրաստեն՝ կըմնայ քաղցած.
Այդ պատճառով էլ բերին և ձըկներ,
Պանիր ու խաւեար և այլ շատ բաներ,

Ոսկի բաժակով օղին կարապետ,
—Ե՞րբ մաղերայից նա կըմնայ յետ,—
Փառաւոր կերպով կերաւ, Ճաշակեց
Ու սիրուն գինին վերայից խմեց:

Երբ այս աւարտած՝ տընից էր դուրս գալի
Ուսանողն ճաշած՝ դիպչում՝ էր օդի:
«Ի՞նչ փուչ մարդիկ են», —ասաց իւր մաքում,—
«Բան ու գործ չունին, վաղում՝ փողոցում»:

Քանի որ իւր գործն մեր ուսանողը
Սկսաւ, աւարտեց, քնած էր մեծատունն,
Այդ պատճառով էլ ուսանողները
Դատարկ մարդիկ են նոցա աչքում:



Մ Տ Ե Ֆ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

(Նուէր Կ. և Բ.)

Գալնան վարդը ինձի պէտք չէ,
Եթէ անուշ հոտ չունի.
Սոխակի փետրով զարդարած
Ճընճղուկըն իսկ յարգ չունի:

Ինչի՞ս է պէտք մանկութիւնը,
Եթէ միայն հազար ցաւ
Կըպատրաստէ սըբտիս համար.
Հոգիս, կեանքըս մաշեցաւ:

Մի՞թէ ես ել որ լինեի
Մի ալեոր ծերունի,
Գերի գառած կըհալուէի
Խաբուած անարդ երեսի:

Մանկութիւնը գեղեցիկ էր,
Եթէ ես գործ դընէի,
Իմ գործերին պարապելով՝
Ինձ ձանապարհ բանայի:

Իմ ձնողքըս ու բարեկամք
Տըխուր նըստած միայնակ,
Ես բարում եմ աղջկայ հետ
Ու համարում ինձ այդ փառք:

Ինչ ժամանակ օտար եղիքը
Իմ ծերունի ծնողքը
Ուղարկեցին ինձ միայնակ,
Տուին իւրեանց խըրատը.

«Որդեակ, գործիդ եղիք արի,
«Տես, չըմատնես քեզ սէրի.
«Երեկոյացեալ մեր օրը
«Թող՝ քեզանով սփոփուի»:

ԱՇԽ, կատաղի գու մանկութիւն,
ԱՇԽ, կատաղի գու արիւն,
Ինչու շուտով գուք մոռցաք
Զեր սուրբ պարտաւորութիւն:



Զ Ե Բ Ք Լ Զ Ե Ե Բ Ք.

(Պուշկինից)

Գետը վազում է կատաղած
Ու խըռոված յորձանքով.
Սարերի մէջ ահա յոգնած
Քնեց զինուորը գիշերով,
Թեկն տուեց նա պողպատէ
Իւր նիղակին պսպղուն.
Զինուոր, մի՛ քնիլ դու մութ ժամին,
Մօտըդ չեչէն կայ զարթուն,

Լող է տալիս նա մակոյկով՝
Ուսկան ձգած գետի տակ.
Զինուոր, գետի մէջ խեղդուելու
Քեզ էլ սպառնում է վոսանգ.
Ինչպէս խեղդվում են երեխայր,
Ծոդ օրերին լողալիս,
Էն կողմումը քո թշնամի
Տես, չեչէնն է ման գալիս,

Նուիրական ջրի ափին
Ծաղկում են ձոխ աւաններ.
Թէ զինուորն է նոցա պաշտպան,
Կան այն տեղ խաղ պար, երգեր.
Ապա թէ նա չեռացած է,
Փախէք, ընտիր երգիչներ,
Սիրուն կոյսեր, տուն շոտպեցէք
Ման են գալիս չեչէններ.



ՄՈՒՍԱՅԻՑ ՄՈՒՍԱՅԻՆ.

Մուսա՛, գողտրիկ, շարժի՛ր անդյշ,
Հա՛ր եօմնաղի քնարը,
Հնչէ՛, ինչպէս հնչում էիր
Ապողնի ձեռումը,

Հայր Աստուածը երբ լարկացած
Նորան քըշեց շանթահար,
Դու Պառնասի աստուածները
Ցած բերեցիր հովուաց պար:

Մի՛ մոռանար, ինչպէս անդյշ
Տիրմուերեայ դու ձեռին
Անապատում դու հընչեցիր,
Երբ յուսահատն առանձին

Մահ էր խընդրում ձարակըտուր,
Սփոփեցիր դու նորան,
Ծառ ու անտառ, լերինք, գաղանք
Քու ձայնով թունդ թըմրեցան:

Դու հնչեցիր Պառնասումը,
Երբ Արամազդ յաղթական
Տիրաններին երկնքիցը
Քշեց անդունդ անսահման:

Զեմ մոռացել և չոմերը,
Որ քեզ առած իւր ձեռին
Երգեց Յունաց հերոսները
Ու քանդուիլն Եղիոնին:

Բա՛ւ է, որբան Արարատը
Մնաց զրկուած քու ձայնից.
Յիշի՛ր, քանի՛ գեպի Պառնաս
Իոիս հասաւ նորանից:

Խնդրեց Մուսայիդ քընարը,
Խնդրեց Մուսայից պարը,
Հիւր ընդունել իւր ծոցում;
Ուր սառուցնէ միշտ ձնշում. . .

Շարժի՛ր, Մուսա՛, Արարատի
Որդւոյ ձեռի քընարը,
Քեզի կ'օրհնէ միշտ անմնաց
Արարատի ծընունդը:

Եթէ կորուց թագն ու սուրը,
Գանձ, գաւաղան, Աթոռը,
Թո՛ղ սիոփէ անոյշ ձայնդ
Նորա վիշտն ու սե օրը:

Միթէ անիփողձ ես դու այնքան
Կամ՝ կեղծաւոր, երկերես,
Որ ողջ աշխարհ սփոփելով
Թողուս չայաստանն անտես.

Հայաստանի եթէ նախնի
Ծնունդերը քեզ մեղան,
Ի՞նչ է մեղքը այժմեանների,
Որ քեզանից զուրկ մընան:

Հնչի՛ր, Մուսա, եռանդով հա՛ր
Աստուածային քո քնար.
Թո՛ղ մի իննդա մայն հայաստան,
Թո՛ղ մի լսէ նա քո ձայն:

Թո՛ղ սրբէ նա արտասուքը
Բազմագարեան երեսից,
Սատուռնոսի անխիղճ գործը
Թո՛ղ հեռացնէ իւր մարդից . . .

Գոնէ տեղիք տուր ասելու՝
«Երջանիկ եմ; իմ զաւակք,
«Մուսաները ինձ սիրում են
«Իմ կարօտի փոխանակ» . . .

Հնչեց աշա քնար քաղցրախօս,
Շարժեց երկինք ու գետին,
Արարատից գէպ Արագած
Բիւր արձագանք իսաղին:

—Զո՞ւր ես ինդրում,—ասաց Մուսան,—
Որ բնակիմ Արարատ.
Սորա որդիք իմ քընարիս
Թշնամի են միշտ անչաշտ:

Ամեն մինը դանակ ձեռին
Աշխատում է անչանգիստ
Իմ քընարի թելը կտրել.
Ես փախչում եմ նոցանից:

Արարատը սառուցապատ
Զըրկըւած է կանաչից . . .
Սոխակները հալածուած են
Ագռաւների սև գնդից:

Ես անխիղճ չեմ, ոչ երկերես,
Կըստամ բաժին ամենքին.
Միայն քնարս հնչեն նոքա
Իւրեանց հոգուն առանձին:

Արարատի շուրջ բոլորած
Թո՛ղ ագռաւներ թրթուան.
Անուշ սոխակների փոխան
Թո՛ղ բուերը միշտ վայ տան:

—Անարժան է իմ քնարին,
Դեռ հայաստանի, լսիր ինձ,
Նորան չի լինիլ իւնայել,
Քանի փախչում է լուսից:

Լսեցէլը ինձ, Արարատի
Որդիք, որնց հիւր եկայ,
Միայն ձեր մէջ դոք հնչեցէլը
Իմ քընարը եօթնաղեայ:



Գ Ե Ր Ն Ա Ն Մ Ո Ւ Տ.

Առուզահասակ,
Զըւարթուն գարուն,
Քեզ է բիւր ողջոյն
Տալիս չայոց տուն.
Անուշաւանը
Սօսի տերեւով,
Անմիւ ծիտերը
Իւրեանց ձռվըզով
Կ'օրհնեն քո գալը,
Ո՛վ երկնից դեսպան,
Դու ես մեր կեանքի
Պաշար ու պաշտպան.

Հայաստան երկար
Գալուդ սպասեց,
Մաղկեցաւ ալեօք,—
Շատ լացեց, կոծեց:
Մասեաց գագաթը
Չմեռը գժնդակ
Թաղեց անինաց
Մեռցնող ձընի տակ.
Կարօտ շատ նստաւ
Դալար արօտի,
Ծով գարձաւ թափած
Արցունքըն աչքի:

Երբ հեզ մօտեցար
Մասսի դաշտերին,
Բքածին ամներն
Տարագիր գնացին.
Իւր թաւուտ կուրծքը
Հին լեռը բացեց,
Քեզ կանաչ դիպայ
Հովիտը փոեց,
Սիրահար սոխակն
Իւր վարդի յետքից
Արարատ վաղեց,
Իւր բունը շինեց:

Քո գալն իմնացաւ
Մասիսի վուկան,
Կրկին սկսաւ
Իւր հին գործն ու բան.
Վառեց շատ սրտում
Անշէջ կըրակներ,
Դարբնից հըրացայտ
Երկաթի շանմեր.
Ի՞նչ արժեն նորան
Գընուակ ու վառօդ,
Նիզակ, հրացան,
Աչեղ թնդանօժ.

| | |
|---------------------|---------------------|
| Թէ այսքան քո գալն | Հայաստան երկրի |
| Բերեց ծեր Մասեաց | Արժանի որդիք, |
| Ցնծութիւն, իրախղյս, | Չեն մեռած հայեր, |
| Վչատ զաւակաց | Կան արթուն ոգիք. |
| Միւս անգամ գալուս | Միւս անգամ հողմու |
| Բեր մեզ մի հսկայ, | Խըփէ գրօշակին |
| Որ մեր ցաւերը | Մասեաց գաշտերում |
| Տեղեակ հասկանայ, | Հայոց աշխարհին, |
| Թնդայ, թնդացնէ | Էլ յետ թող չըպայ |
| Հողագունդ ամեն. | Զըմեռ անըզզայ, |
| Թող պատկառանօք | Զերմութիւնդ թող |
| Մեզ վերայ ասեն. | Մեր մեջ միշտ մընայ: |

Անբաղդ Հայկածին
Քաջելն յանձնեցին
Ասել խօսքերըս
Ասկճի Գասպարին.
Հայաստան աշխարհ,
Նա անյագ սիրեց,
Գտնել մի հնար
Խիստ շատ աշխատեց,
Որ իւր աղօթքը
Լինի գիւրալուր,
Տեմել քո արև,
Շնչէ քո զեփիւռ:

Ա Ե Ա Ն Ք.

Կեանք երջանիկ, քեզ ամեն մարդ
Չի ճանաշել պարզ աչքով,
Միշտ շարաչար կըգործածէ
Սիրտը լցուած արիւնով.
Բայց ես, երկինք թող վկայ գայ,
Ես քեզ միայն սիրում եմ:
Հոգիս ազատ, ճաշըս առատ,
Հոգս, աշխատանք չգիտեմ:

Ամենայն օր իմ սեղանում
Բաքոսն ազատ խնդումով
Իմ բաժակը միշտ լըցնում է
Անմահարար նեկտարով.
Երբ տակառի վերայ նստած
Նա բաժակն է ինձ տալիս,
Գլխից բռնած մինչի ոտըս
Երակներս գողում է:

Ամենայն օր ես ու Բաքոս,
Աշխատում ենք ժիր ջանքով,
Որ իմ փորիս հաստութիւնը
Զափուի նորա տակառով.
Շարան ով է, Թոյլը ի՞նչ է
Մէկ խօսքով իմ առաջին.
Երկու ժունկի օրը չըխմել
Մեծ ամօթ է ինձ պէսին:

Գոված իմ կեանք, իմ աղնիւ կեանք,
 Զեմ կարող քեզ ուրանալ,
 Ինչպէս շատերն ուրացել են,
 Որոնց անունն չուզեմ տալ.
 Բայց որ գո՞նէ մի գաղափար
 Դու ունենաս նոցա վրան,
 (Թէ և այս տեղ իւր տեղը չէ)
 Բայց ես կասեմ քեզ կարճ բան.

Կեանք ուրացողներից մինը
 Փորիս վերայ նայելով
 Հարցրեց յանկարծ.—գաղաններից
 Մարդը ջոկվում է ի՞նչով.
 Ես ուղելով նախ և առաջ
 Նորա խելքը լաւ չափել,
 Ասի.—Բայց դու ի՞նչ ես կարծում:
 Նա սկսաւ այս խօսել.

« Մարդը կարող է մոռածել,
 « Դատել կը ել և չափել
 « Վասութիւնից հեռանալով
 « Բարիին՝ միշտ մօտ լինել»:

Ծիծաղլցայ նորա վերան,
 Փորս վեր-վեր ցատկեցաւ.
 Գինու մառան կոկորդիցըս
 Յանկարծ խօսքս դուրս թըսաւ.
 « Մարդը ջոկվում է գաղանից,
 « Որ ձեռք ունի, ձեռք՝ լսիր.
 « Խելք, միաք, խօսել ու մոռածել,—
 « Յիմար բաներ մի՛ խօսիլ»:

Կեանք ուրացողը հեռացաւ
 Անբաւական իմ խօսից.
 Ես ու Բաքսու մենակ մնալով
 Սեղան նստանկ մենք նորից,

Յանկարծ Աստղիկը իւր որդւով
Աչքիս առաջ կանգնեցաւ.
Սրտէս կարծես փոքրափորիս
Նոր զօրութիւն ոյժ հասաւ,

Զիլ չըմնաց՝ որ չըջլուեց
Քանի զօր կար մարմնում.
Այս միջոցին լարը ձեռին
Բաքոս փորս էր չափում,
Փորս անցաւ տակառիցը
· · · · ·
Վեր կացանք մենք սեղանիցը
Գնացինք · · · ·

Այնտեղ տեսանք Ափրոդիտեայ,
Որի գալը մեղ զուր չէր.
Կիթերայից և Կրէտէից
Նա երկու . . . բերել էր:
Ո՞վ կարող է սահման գնել
Կեանկի այս երջանկութեան,
Երբ ամեն օր կրկնվում է
Իմ տանը պյս տեսարան:

Ահա այսպէս քեղ պաշտում եմ,
Իմ կեանք, իմ փոր, իմ Բաքոս,
Բաժակումն փըրփըրում է
Առատ գինին երկնահոս:
Թէ հոգի է՝ այն իմ փորն է.
Թէ Աստուած է՝ միշտ նոյն է,
Նորա համար կեանքս առատ
Ողակէզ է միշտ պատրաստ:

« Այսպէս ապրեն թէ ապրում են,—
« Ասում է փորն իմ ճարագոտ,—
« Բաքոս, Աստղիկ ու Կուպիդոն
« Հիւր ունենան իրենց մօտ».

Մ. ՆԱԼԻԱՆԴԵԱՆ.

ԴՈՆ ՔԻՇՈՏԻ ԻՄԱՍՏԸ

(Ն. Ստօրօժէնկօ).

Համաշխարհային գրականութեան շատ քիչ աշխատութիւններն ունին այն յատկութիւնը, որ կարողանան զրաւել քննադատների ուշն ու միջքը շատ քիչ աշխատութիւն է ենթարկուել այնպիսի եռանդուն ու բազմակուլմանի վերլուծութեան, ինչպէս Սերվանտէսի «Գոն Քիշոտը» բառու (Bowle), Պլիխասէր, Կլէմէնտին և ուրիշներն ուսումնասիրել են նորան այնպէս, ինչպէս ուսումնասիրում են գասական գրուածները. ամենաճշգրտ կերպով կազմել են բնագիրը, որուել են աղբիւրները, ըմբռնել են, ըստ չափու կարողութեան, նորա մէջ պարունակուող ժամանակակից ցուցմունքերը: «Գոն Քիշոտի» քննադատների շարքում մենք պատահ հում ենք այնպիսի յարգելի ուսումնականների, ինչպէս Բուտերմէկ, Սիմոնդի, Ամագոր գէ-լուս-թիոս, Հալլամ, Որեսկօտատ, Տիկնօր և այլն. այնպիսի մասածողների, ինչպէս Շելինգ և Հեգել, և այնպիսի բանաստեղծների, ինչպէս Լորդ Բայըլն, Գութե, Աւորդսվորտ, Հայնէ, Վիկտոր Հեգո և Տորգեննեվ: Եթէ յիշեալ մատենագիրները հասնէին մի ընդհանուր եղանացութեան Սելվանտէսի հանճարեղ գործի գրւ խաւոր մաքի և նորա հերոսի բնաւորութեան վերաբերմանը, այն ժամանակ այդպիսի հեղինակութիւն ունեցող մատենագիրների միահամառ կարծիքին հականաս ելլ՝ առանց հիմնուելու նոր նիւթերի վերայ, կարող է անպատուզ լինել և մինչեւ անդամ յանդուզն. առկայն իրօք վերջիշեալ հաղինակների հայեացքը Գոն Քիշոտի վերայ այնքան արբեր են, որ՝ եթէ ոչ միմեանց հետ նոցա հաշտեցնելու, գոնէ այդ հակառակթիւնների պատճառն որոշելը ապարգիւն չէ: Քննադատութեան պատմութեան էջերում հետաքրքրական տեղ պիտի բռնէ Գոն Քիշոտի մասին ներկայ գարումն յայտնած կարծիքների համարատուութիւնը: Սերվանտէսի գործի մասին XVII և XVIII դարերում (Ս. Էվլէմն, Բոդմէր և ուրիշները) գատում էին իւրեանց անմիջական ապաւորութեան ներքոյ և նորա հերոսին հա-

մակրելի, բայց և այնպէս բացասական տիպ էին համարում ։ Նոքա
շատ բարձր էին գնահատում հեղինակի ճարտարութիւնը, որ կա-
րողացել է մի անձի մէջ միացնել այդքան իմաստութիւնն և ան-
մութիւն, զմայլում էին դռն Քիշօտի և իւր հռչակաւոր զինակի
բնաւորութիւնների հմաւալից նկարագրութիւնից, որոնցից մէկը գե-
ղեցիկ կերպով ստուեր է ծգում միւսի վրայ: Կոքա սրտանց ծիծա-
զում էին հերոսի և զինակի զուարձալիք արկածների ու ողերգական,
մի և նոյն ժամանակ կօկիքական անյա ջողութիւնների վերայ, բայց
նոքա չեն էլ մոտած էլ Սերվանտէսի աշխատառութեան մէջ թագորած
իմաստը ըմբռնել և զայրյոյթ յայտնել հեղինակին, որ նա իւր հե-
րոսներին ծիծալելիք գրութեան մէջ է դնում: XIX-դ դարու սկզբից՝
զլիսաւորապէս կանտի ազգեցութեան ներքյ, քննադատութեան
մէջ մանում է փիլիսոփայութեան տարրը, և այդ ժամանակուանից
քննադատութեան գիտաւոր խնդիրը գեղարտեստական գրուածի
հիմնական աէնդէնցիան որոշելն է լինում: Գաղափարի բացարու-
թիւնը, որ իւրաքանչիւր բնաւորութեան հիմն է և ոյլն: Կանտի
հետեւողը, բուտերվէկ, եթէ չենք սիստմում, առ աջին եղաւ, որ
նկատեց, թէ զոյն Քիշօտի, հեղինակի նպատակը չէ սահմանա-
փակվում նորանով, որ ասպետական բօմնները ծաղրէ, այլ՝ Սեր-
վանտէսը, որպէս մի ճշմարիտ բանաստեղծ, աւելի բարձր նպատակի
է հետամուտ լինում, այն է գրաւուած կերպով՝ նա կամենում է
պատկերացնել մի հերոսի, ոգէզմայլածի տիպ, մարդկութեան բարի
կամեցողի տիպ, որ անհօն սէր ունի դէպի ազնուագոյնն ու վաեմք,
որ իւր իգէալական ձգումները կամենում է իրագործել Փանտաս-
տիկական ծրագրով, որպէս զի վերականգնէ արգէն ընկած, թափա-
ռաշընիկ ասպետութիւնը: Գրեթէ այդ իսկ միջոցին, թերեւ Բու-
տերվէկի ազդեցութեան ներքյ, Ա. Վ. Շլէզիկը յայտնեց այն միտոքը,
թէ բանաստեղծական ոգէզմայլութեան (enthousiasme), որ նկա-
տելի է դռն Քիշօտի մէջ, և կենսական պրօզայի՛ որ մարմնացած է
Սանչօ Պանսայի մէջ, հակագրութիւնը Սերվանտէսի զործի էու-
թիւնն է կազմաւ: Այդ միտոքը արծարածում է և մանրամասնորէն
զարգացնում Միամնդին իւր «De la littérature du midi de l'Eu-
rope» նշանաւոր շարագրութեան մէջ: Միամնդիի կարծիքով «Դռն
Քիշօտի» զլիսաւոր նպատակն է ցոյց տալ բանաստեղծականի: և
պրոզայիկականի հակապատկերը մարդկային կեանքի մէջ: Ասեմ
հոգու տէր մարդիկ ընդունակ են իրենց կեանքի նպատակը որոշել՝
ծիմարտութեան ջատագով և թղյերի ու թշուառների պաշտպանը
իինել Այսպէս հերոսաբար անձնաւոր լինել մի մեծ գաղափարի
ամենալաւան ու սրտաւուչն է այն բոլորից, ինչ որ մարդկային պատ-
մութիւնը մեզ ներկայացնում է: Այսկայն մի հերոսի բնաւորութիւ-
նը, որ մեզ վսեմ է թւում, երբ նայում ենք բարձր տեսակէաից,
կարող է ծիծալելիք թուել երբ նայենք նորա վերայ լուրջ խոհա-
կանութեան և կենսական պրօզայի տեսակէաից: Այդպէս էլ նայել
է նորա վերայ Սերվանտէսը, ցոյց տալով մել իւր աշխատառութեան
մէջ հոգու վեհութեան և հերոսականութեան մտապատրանքի ու-

նայնութիւնը։ Սերվանտէսի հերոսը, լինելով և մեծահոգի, և աղնի, և անշահասկը, իւր քաջութեամբ գերազանցով այն առատպելական հերոսներից, որոնց նա նմանում է, հաւատարիմ ու մեծարող սիրահար և շատերից լաւ լինելով հանդերձ իւրաքանչիւր քայլափախոմ անյաջողութեան է հանդիպում և իւր ըոլոր սիրագործութիւնները դժբախտութիւն են պատրաստում ուրիշների համար, իսկ իրեն համար միայն խայտառակութիւն։ «Այս է պատճառը, — վերջացնում է իւր խօսքը Ախմանուդին, — որ շատերը ամենատխոր գիրքն են համարում օրոն Քիշոտը, որովհետեւ նորա բարոյական իմաստը սասարկ տիրալի է։ Բաւերթէկի, Շէքէլի և Սիսմնդիի կարծիքները մեծ ազդեցութիւն ունեցան յետագայ քննադատութեան վերաբ։ Այս աղբիւրին պէտք է միացնել և Հեգէլի հայացքը, իրբեք թէ օրոն Քիշոտի մեջ ծաղրած է ասպետութեան զաղափարը իւր վաևմագոյն արտայատութիւններով հանդերձ։ դա է եղել Հայինէի հայեցղութեան հիմնաբարը, պնդելով, թէ օրոն Քիշոտը հաշակաւոր երգիծաբանութիւն է, առ հասարակ մարդկային ոգեզմայլութեան մասին։ նոյնպէս է և Շէքէլինդի յայտնի կարծիքը, թէ Սերվանտէսի բօմննի մեջ միացրած են իդէալսկանութիւնն ու իրականութիւնը, և դա ոչ ոյլ ինչ է, եթէ ոչ Ախմանուդիի և Շէքէլի հայեացքների թարգմանութիւնը փիլտոփայական լեզուով։ Նշանաւոր է այն, որ փիլտոփայութիւն անող քննագատների կարծիքը, որոնք Սերվանտէսի դործը մի այլաբանութիւն շինեցին, արձագանդ գտաւ զլիսաւորապէս բանասաւեղների արտօւմ։ Մեր դարի համարեա բոլոր նշանաւոր բանասաւեղները, զայցէ միայն գեօթէն և բացառութիւն կազմում, իսոն Քիշոտին դրական աիսպէին համարում և ջերմ կերպով պաշտպանում էին նրան, յարձակուելով հեղինակի վերայ, որ իրեք թէ ի գէմն իւր հերոսի կամեցել և ծալլել ճշմարտութեան ոգեզմայլութիւնը և կեանքի մեջ իւր իդէալները ներմուծելու հերոսականութիւնը։ Այսպիսի նպատակի հետամուտ եղող մարդուն ես ոչ թէ կարելիցում էի, — ասում է Աւորդսվորտը, — այլ մեծարում և մասածում էի, որ նորա կոյրու ոգեզմայլ անմուռթեան նորքում խորին իմաստութիւն կայ։ Այդ իսկ տեսակէսից էր նայում «Գոն Քիշոտը» վերայ և լորդ Բայրընը և իւր բնաւորութեան յատուկ յարձակմանքերով նա խիստ կշտամբում է Սերվանտէսին, որ թոյլ և առել ծաղրական հայեցքով նայել իւր հերոսի վերայ։ «Փմ կարդացած բոլոր բօմններից, — ասում է նա, — «Գոն Քիշոտը» ամենացաւալին է և աւելի ցաւալի նորա համար, որ նա մեր ծիծացն է շարժում։ Նորա հերոսը բոլորովին իրաւացի է, նա ձկառում է ճշմարտութեան, նորա նպատակն է պատժել չարերին և մուբանել ուժեղների գէմ թոյլերի համար։ Կոյրա անմուռթիւնը կայտնում է իւր առաքինութեան մեջ, այնու ամենայնին նորա արկածները տիսոր եկը ունին և առաւել տիրարի է այն բարդացան գասը, որ տալիս է այդ իսկապէս վիպական պօյլման։ Բառգրել անիրաւութեան դէմ, օգնել թոյլերին, վրէժնդիր լինել նոցա զրկանքների փոխարէն և անամօթներին պատ-

ժել,—մի՛թէ այս բոլոր աղնիւ ձգտումները՝ հին հեքիաթների պէս պէտք է հաւասարեցնենք երկախյութեան ունայն ցնորդներին։ Մի՛թէ բոլոր խոչընդուների միջեց փառքի ձկափլս կարող է կասակի առարկայ գառնալ։ Եւ ինքը Սոկրատէսը ի՞նչ բան է, եթէ ոչ իմաստոն դոն քիշոս։ Սերվանտէսը իւր ծաղը ու ծանակով վերջացրեց ասպետականութիւնը Սպանիայում։ մի տապահագրով նա կըտրեց իւր հայրենիքի աջ ձեռք «Գոն Քիշոսից հրատարակութիւնից յետոյ Սպանիան քիչ հերոս և ստեղծել Ահաւասիկ Սերվանտէսի գործի վատ ազգեցութիւնը։ Նորա յաջողութիւնը գնուեցաւ հայրենիքի բարոյական անկման մեծաբանակ գնով («Թոն Ժուան», երգ XIII)։ Կերկայ գարուս միւս մեծ բանաստեղծը՝ Վիկառը Հիւգօն, թէպէտ և համաձայն է, որ Սերվանտէսը ծաղուել է իդէալն և նորան իրացնելս անկարելի է ներկայացրել մեզ, բայց կարծում է, որ նորա ծիծաղի տակ արտասուք կայ և հեղինակը հոգով Գոն Քիշոտին կողմնակից է, ինչպէս Մոլիէրը Ալցեսաի կողմնակիցն է։ Վերջապէս Տուրգաննելը իւր յայտնի Համելտ և Գոն Քիշոտ յօդուածում Գոն Քիշոտին գրական տիպ, գալաֆարի ողերուած ու գրաւած ծառայ է համարում։ «Թոն Քիշոտը, —ասում է նա, —լիսին անձնատուր է իդէալին, նորա համար պատրաստ է նա ենթարկուել ամենայն տեսակ զրկանքների, զնհել կեանքը։ Կա այնքան է գնահատում կեանքը, որքան այդ կեանքը կարող է միջոց տալ իդէալն իրագործելու, մարմնացնելու և երկրիս վերայ ճշմարտութիւն և արդարութիւն հաստատելու։ Գոն Քիշոտը ամոթալի կը համարէր ապրել միայն իրեն համար, մասած ել միայն իւր անձի մասին։ Կա ամբողջապէս ապրում է (եթէ կարելի է այսպէս ասել) իրենից գուրս, այսինքն՝ ուրիշների համար, իւր եղբարց համար, մարդկութեան վընասակար ուժերին, կախարդական դիցազներին, այսինքն՝ նեղիներին դիմագրելու համար։»

Ահաւասիկ այս ժ ժամանակակից քննադատութեան մէջ տարածուած հայեացքը Գոն Քիշոտի մասին, որ ընդհանրացած է և ուսու գրականութեան մէջ շնորհիւ Տուրգաննելին։ Արդարե, Հալլար, Տիկնօրը, Սէն-Բեովը և ուրիշներն այլ կարծիք են յայտնել նորին կերպով ուսումնասիրելով (թէ Սերվանտէսին և թէ իւր գարը, սակայն այդ հայեացքները արժանի կեպիւ չեն ազգել «Թոն Քիշոտի քննադատութեան վերայ, և քննադատաները շարունակում են Հիմնել իրենց եղբակացութիւնները վերացական-փիլիսոփայական դատողութիւնների վերայ։ Քննադատութեան օրինական և անխղելի իրաւունքն է զանազան կողմից զննել զնահատել արուեստագելափառ ստեղծած տիպերը, մերկացնել գեղարուեստական գործի ընդհանուր իմաստը և այս կամ այն բարոյական եղբակացութիւնները գուրս բերել Բայց այս իրաւունքը սկսեցին ի չարը դործ զնել այն ժամանակից, երբ քննադատաները գիտակցաբար թէ անգիտակցաբար վերացրեցին քննադատութեան ենթարկուած հեղինակին իրենց սեպական համարմնները և նորա համար պատասխանատու գարձին հեղինակին։ Այս դիպուածում այդպէս ել եղաւ Հեռանաւով պատ-

մական տեսութիւնից և գործի վերայ նայելով վիլխոսփայական տեսակէտից, քննադատութիւնը Սերվանտէսի գործի մէջ այլաբանութիւն տեսաւ, իսկ նորս ստեղծած ախպարում—գաղափարականի ու իրականի, բանաստեղծականի և պրօզայիկականի կոիւ և այլն: Վրդովուած այն մեծահոգի և անմիտ մարդու ծաղը ու ծանակից, որ խորհում է բնակեցնել աշխարհում մարդկութեան ոչնչացրած իդէաներն, վերացական հայեացակէտից նայած այդ քննադատութիւնը բնականաբար կարող էր գտն համեմել այն եղբակացութեան, թէ ծաղրելով Դոն Քիշոտին, ծաղըում են առ հասարակ ոգէզմայլութիւնը և հաւատը գէպի իդէալը: այդ պատճառով քննադատութիւնը Սերվանտէսի գիրքը աշխարհիս ամենատարալի գիրքը հոչակեց և իրեն հեղինակին շարեց, անդ առուեց ամենայն իդէալական ու վեհ բան հերքողների շընանում: իսկ Բայրընը մինչև անգամ առանց յապազելու մեղարդեց նորան, որ Սպանիայում հերոսական ոգին և իդէալական ձգտումներն ընկած են: Մեր նպաստակն է նորից մի ակնարի ձգել արուեստագէտի իւր մեկնողների հետ ունեցած գործի հետաքրքրական ընթացքի վերայ, բացարեկ Դոն Քիշոտի ճշգրիտ իմաստը և որոշել այն թելերը, որոնք կապում են Սերվանտէսի երևակայութեան այս փայփայած արգասիքը հեղինակի անձնական կեանքի, գաղափարների ու հայեացքների հետ:

Սերվանտէսի գործի հիմնական ինտիրը լիովին կարելի է բացարել իւր ժամանակուայ վիպական գրականութեան վիճակով: Աս անձին պատմական պայմանների շնորհի՝ մաւրների գէմ՝ երկար դարեր պատերազմելով, որ երկիրը մի պատերազմական բանակ էր գարձել, նոյնպէս և Պրալմասի արուեստուրների շատանալու պատճառով, որոնցից շատերը Ալիքիզորի սասպատակութիւնից յետոյ Սպանիա փախան և այն անդ գտան իրենց երկրորդ հայրենիքը,—ոչ մի տեղ ասպետական բարքերն ու աւանդութիւններն այնպիսի խոր արմատներ չեն ձգել, ինչպէս Պիրենեան թերակզնում: Կանանց, առ հասարակ իշտական սեռին ծառայելու գաղափարով ոչ միայն լի են հնագոյն երգերն ու քրոնիկոնները, ոյլ և օրէնտութեան մէջ կայ: Այսպէս, իմաստուն Ալֆօնսի օրէնսգիրքը (Las Siete Partidas), որ պատկանում է XIII դարու կիսին, այն գլուխում, ուր միշտ են ասպետների պարտականութիւնները, ի միջի այլոց ասած է, թէ ասպետը կառուց առ աջ պիտի տայ իւր ընտրածի (գեղեցիկ սեռից) անունն. դա արած էր այն նպատակով՝ որ քաջալերուի և շանէ այնպիսի բաներ, ինչ որ չէ կարող համապատասխանել իւր բարձր կոշման: Խական սեռին ծառայելու գաղափարով անմարզէն յափրշտակուածների մասին խօսելիս, իբրև օրինակ սովորաբար միշտ են գերմանացի միննէզինգեր Ուլիսի Փոն-Լիխտենշտեյնին և արուբագոր Պիեռ Ալեքալին, որոնցից առաջինը՝ հագնելով շատառածի շորերը, թափառում է Բահեմիլայից մինչև Վենետիկ, մրցելու և հրաիրում իւրաքանչիւրին, ով չէր կամենում նորա ընտրածին աշխարհիս առաջին գեղեցիկը համարել իսկ երկրորդը՝ սիրահարուած լինելով Լօբա գլ-Պենանաթէին (Loba նշանակում է մատակ գայլ)

և կամենալով հաճոյանաւ իւր սրտի ընտրածին, ինքը գառնում է նորա նշանաբանը, հաղնում է գայլի մորթի, և քիչ է մնում՝ որ կոմուհու շնորհը նորան պատու պատառ անեն, չիմանալով, ի հարկէ, ասպետի այդ խորհրդաւոր նշանաբանը: Արիշ երկիրներում՝ սակաւապատեհ են այս տեսակ անմաս թիւներն և մի առ մի կարելի է թուել իսկ Սպանիայում՝ տասնեակներով: Խ դարու սպանիական մի քրոնիկոնում կայ մի պատմութիւն մի ուն Վաւենիո գէ Կինիոնէսս ասպետի մասին, որ բաւականին տարօրինակ միջոց է գտել իւր ընտրածին սերն արաւյայտերու, — շաբաթը մի անդամ նա պատ էր պահում՝ կեսը ի պատիւ նորան, կեսը ի պատիւ Ամենասուրբ Կուսանին: իսկ հինգաշրթի օրերը բացի այդ վզն կրում էր հասա երկաթե շղթայ ի նշան սորկութեան: Զգուելով այդ բանից և կամենալով ազատուել այդ կեղծ սարկութիւնից նա կապեց Օքբից Գրեատու գէ-Կոմզուտելլա տանող ձանապարհը իւր նման ինն անմիտների հետ և 30 օր շարունակ կռիւ էր հբաւիրում այն ասպետին, որ գնում էր ու Յակովի դադաղին երկրպագութիւն տալու: Նշանաւոր է և այն, որ այս ճիւղական կռուի ժամանակ, որ երկրատե էր և պատճառը անհեթեթ, ներկայ էր խուան II թագաւորը իւր մարդկանցով սա ոչ միայն չէ աշխատում՝ այդ անմիտներին խելքի բերել, այլ և իւր ներկայութեամբ ոզեւորում էր նոյտա: Այդ գարու մերժումն է պատահել կաստելիայի մի որիշ ասպետի պատմութիւնը, որ գիտմանը գնում է Անգլիա՝ Հենրիկոս VI-ի արքունիքը, որպէս զի առաջարկէ անգլիացի ասպետներին կռիւ զորս դալ իւր ընտրածի համար: Այսպիսի անմասութիւնները պահպանվում էին Սպանիայում՝ ասպետական րօմանների բնդարձակ զրականութեան շնորին, որ զլասուոր ներկայուցուցիչն էր Փորթուգալիայի րօմանը՝ Ամիլիս Գալի մասին: սա զրուած է այն ուղղութեամբ, ինչպէս Ալոր Սեղանի րօմանները և իսպանական փափոխութեամբ ըլյու է տեսնում՝ տառաջն անգամ Խ դարու վերջում: Այս րօմանը մեծ յաջողութիւն ուեցաւ, նորան կարելի էր տեսնել Սպանիայի իւրաքանչիւր կարդուցրել՝ իմացողի սեղանի վերայ, և ըստ տեսան բազմաթիւ աշխատութիւններ թէ նմանողութեամբ զրած և թէ որպէս նորա շարունակութիւնը: Սերվանտէսի ժամանակ Ամազիս րօմանի սղզութեամբ զրած րօմանները այնքան շատ էին և այնպիսի անհաւատալի արկածներով լի, որ այն ժամանակի զրականութիւնը միայն այդպիսի րօմաններից էր բազկացած և երիտասարդութեան վերաց շատ վատ աղդեցութիւն էր անում: Անտեսի գէ-Գիվարա մատենազիրը, որ ասպաւմ էր XVI-դ դարու սկզբում, նկատում է, թէ հասարակութիւնը այդ ժամանակ ոչինչ չէր կարդամ, բացի Անգլիաի, Ֆրանսանի, Պրիմունինի և այլոց զազրալի րօմանները, պատմութիւնները: իսկ նորան ժամանակակից Վարդէսր ցաւով խսուտովանում է, որ իւր կեանքի ամենալաւ տասը արքին կորցըել է ասպետական զբքերի ընթերցանութեան վերաց և այնքան է փչացրել իւր ճաշակը այդ անառաջ կերակրով, որ մի ժամանակ անընդունակ էր արժէք ունեցող պատմական զրաւածները գնահա-

տելու։ Երեակայութիւն բորբոքով այս աշխատութիւնների ազգեցութիւնը՝ մանաւանդ երիտասարդութեան վերայ, այնքան վնասակար էր, որ շատ բարեմիտ մարդկի զիմում էին կառավարութեան, որպէս զի առ միջոցներ գործ գնէ այս բօմնատիկական ժանտախտի առաջն առնելու։ 1553 թ. Կարլոս Ն-ը հրամայում է, որ առաջետական բօմնները չտանեն Սպանիային պատկանող Ամերիկական կոլոնիաները. իսկ երկու տարուց յետոյ կօրտէաները խնդիրը տուին կայսրին, որ այդ իսկ միջոցը գործ ազրուի Սպանիայում եւ արգելու ապագարուած բոլոր առաջետական բօմնները այլուն, նորերը չժայռաբերն ըստ ընծայել մինչև որ չտանան իրաւունքը մի առանձին իշխանութիւնից։ Աւկային ինչ որ կարելի էր անել կօլոնիաների վերաբերմանը, նոյնը չէր կարելի գործ ազրել Ապանիայում, որ կարգադրել իմացողի սիրած բանը առաջետական բօմններ կարգան էր, մանաւանդ որ ինը կայսրը խիստ շատ էր կարգում այդ բօմններից. իսկ որդին՝ ինքանու Փիլիպոս II-ը, պալատական հանդէաներին միշտ ներփակ էր լինում թափառաշրջեկ ասպետի հագուստով և—եթէ հաւատանք Կաստիլիայն—ամս անանալով Պարիս Տիւդորի հետ, խոստացել էր անխօս տալ անզիթական դահը, եթէ Արտոր թագաւորը յայտնուէր։

Մեր առաջներից ակներե է, որ առաջետական բօմնների դէմ մարտա ելլ աներիից ու վեհ հայրենասիրական մի գործ է, որ լիտպէս արժանի է այնպիսի մասենազրի, որպիսին Արվանտուն է։ Որ Վրոն Քիշուտի նպատակը այդ է եղել, երեւմ է առաջին հատութից, որ հեղինակը տա աջ է բերում իր խօսակցութիւնը բարեկածներից մէկի հետ, որ համազում է Արվանտունին հրատարակել «Գոն Քիշուտ» և յաջոցութիւն է գուշակում։ «Ավայն աշխատեցէր, որ մերամսդու մարդն էլ ծիծադի, կարգալով ձեր զրածը, իսկ ուրախը աւելի եւս ուրախանայ։ Զեր նպատակից չհետացնէր զինաւորապէս այն հանգումնը, որ վերջապէս կործ անելը ասպետական բօմնների խարխուլ չինուածքը, այն բօմնների, որոնց շատերը պարստում են, իսկ աւելի խոշոր մեծամասութիւնը երկինը է բարձրացնում։ Խմէ գուք յաջոցութիւն անենաք այս նպատակին հասնելու, ձեր արած սխրագործութիւնն անշան չի լինիլ։ Այս խօսքերը զրել է Արվանտունը 1605 թ. տասը տարուց յետոյ լցու տեսաւ Վրոն Քիշուտի երկրորդ մասը։ Այդ տասը տարուայ լոթացքում Արվանտակի համար շատ բան փոխացաւ, շատ հարցի վերաբերմանը նա արգելու փոխել էր իր հայեացըն, սակայն չփոխուեցաւ իր գործի ու նպատակի վերայ ունեցած հայեացըն, և նա վերջացնում է իր աշխատութիւնը այնպիսի բառերով որ պարզ ի պարզոյ լսելի է իր նպատակին հասած հեղինակի բարոյական բաւականութիւնը։ Խմ միակ նպատակն էր—զգուանքը հարուցանել գէպի անմիտ ու ստահակ ասպետական գործ երթ, որոնք՝ յազդթուած լինելով իմ Վրոն Քիշուտի ճշգրիտ պատմութիւնից, աստանվում են, շուտով կը տապարաւն և երբէք չեն վերականգնիլ։ Այսպէս, երբ բոլոր բորեկիս մարդկանց, կօրտէաների ու ձայրագոյն իշխանութեան ձիզն

անզօր էր ամրութի ճաշճեկի դեմ մաքրութու , Աերվանտական արշաւանք սկսեց, չունենալով մի որիշ զէնք բացի հեղնութիւնն ու լուրջ գատաղութիւնն . այդ զէնքից յաղթածած թափառական ասպետների, հսկաների, ֆէաների ու թովիչների խոռմը փախչում է պատերազմ մի գաշարից, տեղի տալով որիշ տիպերի, որիշ հսկաների: Աերվանտէսու իրմինքն իրաւոնք ունի հպարտանալու իւր տարած յաղթաթիւնով, որովհետև 1605 թ. յետոյ, երբ հրատարակուեցաւ գրոն Քիշոտիր առաջին մասը, այլ ևս ոչ մի ասպետական րօման չէ գտնվում, հներն եւ չեն շարժում հասարակութեան հետաքրքր քըրութիւնը և վերստինն չեին տպագրվում, բացի մի երկու բացառութիւնից: Որպէս մի իսկական զօրավար, Աերվանտէսը նախ քան վերջնական հարուած տալը՝ եւ անդով ուսումնասիրում է թշնամու զօրութիւնը, ոյժը, նորս գործ երու միջնոցներն ու հմտութիւնն: Պէտիսերի, Կէմենսինին և որիշ քննադասների ու մեկնաբանների կարծիքով Շիշոտիր մէջ իւրաքանչիւր քայլից երեւում է, որ հեղինակը շատ մօտ ծանօթ է եղել ասպետական րօմանների ընդառակ գրականութեան հետ: Նա ծաղկում է ոչ միայն նոյսա ոգին, այլ գրելու բարձրաթօնիշ ձեն, փրուն ու պոտոս ոծը, որոնց երեսն յաջող կերպով նմանում է Սերվանտէսը: Յետոյ, որպէս զի ակներն կերպով ցոյց առյ կենդանի օրինակով ասպետական րօմաննը վարդապետ վիասակար հետև անքը, Սերվանտէսը իւր հերոսը ընտրում է ոչ թէ գեղջուկ միամիտներից ու տգէտներից, այլ մի խելացի, կարդացած, վաեմ ձգումների տէր մարդու: Հիւանդու փանտագիտի և մարդկանց վշտին կարեկցող մարդ էր նա: Գիւղում առանձնացած ժամանակի կարդացած ասպետական րօմաններն այնքան են ազգել նորու բնաւորութեան այդ կողմի վերայ, որ իրականն ու մասացածինն նորս աշքում միամիտնվում էին: Նա սկսում է տանջուիլ գալի կիւնացիայով, սկսում է չեղած բաներ տեսնել և յամառութեամբ հերպել այն, ինչ որ աշքի տաւաջ է: Կա սկսեց իրօք իրեն թափառող ասպետ համարել և զինակիր ընտրելով իրեն համար, գնաց պատերազմելու մարդկութեան նեղիչների դեմ: Հիացմունքից պիհնցէսներ ազատելու, մի խօսքով այն բոլոր սիրագործութիւններն իրագործելու, ինչ որ կարդացել էր ասպետական րօմանների մէջ: Գոն Քիշոտը՝ Ամազիսն է, որ իւր մի սիրագործութիւնից յետոյ քնել է մի քանի դար, չէ տեսել աւատականութեան անկումը, նոր տէրութեան կանոնների հաստատուիլ և գիտութիւնների Աերածնութեան դարու գալը: Արթնանալուց յետոյ նա շարունակում է այն գործը, երբ քունը տարաւ: Նա չէ նկատում, որ ժամանակը փոխուել է, որ արկածալինդրութեան և կանանց ասպետօքն պաշտելու դարը անդառնալի կերպով անցել գնացել է, որ կանանց ու ասպետներին գերի տանող ֆէյերն ու կախարդներն անհետացել են, որ կեանքը մարդուս ուրիշ խնդիրներ է ներկայացնում, որ բարոյականութեան կանոններն ուրիշ սկզբունքների վերայ են հիմնաւած, որ թոյլերի ու հարստահարուածների իրաւունքները պաշտպանում են ոչ թէ ասպետներն, այլ օրէնքն ու հաստատու-

Թիւները: Արովհնեան. Գառն Քիշոտը անցեալով էր ապրում իսկ կեանքը նորանից բաւականին առաջ էր զնացել միմանց չերն հասկանում. այդ անհասկացողոթիւնից Սերվանտը սը բաւականին նիւթքաղեց անթիւ ու անհամար ծիծաղելի տարածայնութիւններ գորս բերելու համար, ցոյց տարազ, որ Գառն Քիշոտի իդեաներն էլ այն քան հնացած են, որքան և իւր զէնքը, որ իւր քաջութիւնն ու անձնացնհամար բարձրութիւնը բարսրիւն են XVL-դ գարում, մանաւանդ այն ձեռվ ինչպէս նա է առաջարկում աշխարհիս, որ գորս հետեւ անքն այն է, որ մասադիր լինելով բարութիւն անել և ճշմորտութիւնը պաշտպանել, նա իւրաքանչեւր քայլում անարդարութիւն է անում և վերջ ի վերջոյ վնասում նոցա, որոնց օգուտ էր կամենում տալ Պատմելով, թէ ինչպէս Գոն Քիշոտը ազտառում է մանուկ իստչնարածին տիրոջ հարուածներից, որ Գոն Քիշոտի հեռանալուն պէս կրկնապատիկ է ծեծում նորան, հեղինակը նոր հրդաւոր կերպով նկատում է. «Այսպէս մեր տապետն արմատախիլ արու աշխարհին երեսից մի չարիք: Գոն Քիշոտը յետոյ պատահում է իւր պատած տղային, որ չնորհակալաւթեան փոխարէն հետեւալ կծու խօսքերն է տառմ: «Պարսն թափառական ասպետ, եթէ երբ և իցէ էլի մի տեղ պատահելու լինինք, ի ոէր Աստուծոյ, չպաշտպանէք ինձ, եթէ տեսնելիս լինիք մինչեւ անդամ, որ ինձ պատառ պատառ են անում; այլ թողէք ինձ իմ թշուառութեան մէջ որովհետեւ ձեր օգնութիւնից, Ճշմարիտն ասած, տեկի վատթար թշուառութիւն ես երբէք չպիտի սպասեմ, և Աստուծոյ թող պատահակ և բնացնիջ անէ ձեր գժութիւնը բոլոր տապետների հետ, որոնք երբ և իցէ ծնուել են: Գոն Քիշոտի մի ուրիշ սիրագործութիւնը աւելի ցաւալի հետեւ անեցաւ: Մի անգամ Գոն Քիշոտը պատահելով թաղման հանգիսի, կարծում է, թէ չսրագործների խումբ է այդ և Ենթագրում, թէ գործ մի տապետ սպանած պիտի լինին և մարմինը ատառում թաղելու. նա նիդակով յարձակվում է նոցա վերայ, ջրուց վզը և ձգում մի լիցէնցիատի, որ և ոտը կոտրում է վըք ընկնելուց: Բայց եթ գորանից յետոյ նա, այդ անզէն մարդկանց յազմողը, յայտնեց նոցա, թէ ինքը մի թափառական տապետ է, իւր անձը նուիրել է բարութեան ծառայելու, Ճշմարտութիւնը վերականգնելու, չարիքն ստնակոխ անելու, այն ժամանակ լիցէնցիար հաւաչելով պատասխանեց նորան. «Ճշմարիտ, ես չեմ հասկանում, թէ գործ ինչպէս էք ոտնակոխ անում չարիքը. գիտեմ միայն, որ ինձ, ոչ մի բանի գէմ չմեղանչածիս, կոտրած ոտով թողիք. իսկ ձեր Ճշմարտութիւնից ես յաւիտեան չեմ բժշկուիլ: Կտրող եմ հաւատացնել ձեզ որ ամենումն չարիքն ու անարդարութիւնն, որ ես կարող էի ունենալ կեանքսման,—այդ ձեզ պատահելս է: Վըքի առաջին մասում Գոն Քիշոտի երրորդ սիրագործութիւնը— պատորեալներին ազատելն—իւրեն ազատողի զիմին ընկաւ, որովհետեւ Գոն Քիշոտի պատահաներն յարձակուեցան նորա վլրայ և կողոպտեցին: Քանի որ Գոն Քիշոտի սիրագործութիւններն այս տեսակ էին, իսկ ուրիշ կերպ չեր կարող անել որովհետեւ չեր հասկանում:

թէ ինչ է անում, մի՛թէ այդ սխրագործութիւններն իրաւունք եկն տալիս նորան իրեն հերոս, եղբայրասիրութեան գաղափարով ներ- շնչուած, ընդհանուրի օգափի համար մարմնացած անձնագոհութիւն համարել Այսպէս կարծել նշանակում է, որ իրականութիւնն չհա- կանը և գաղթեսիւնամիններին հակումը միապին հերոսականու- թեան գիտաւոր պայմաններն են կազմում: Ես կարծում եմ, որ Գոն Քիշոտի մէջ տեսնելով անձնացոյնութեան գաղափարի մարմնառու- թիւն և յառաջ բերելով գորա այն կողմը, թէ նա այդ բոլորը ա- նում է ուրիշների համար, փիթիսովայսկան քննադատութիւնը մո- ռանում է նախ՝ որ գործնական կեանքում հերոսականութիւնը գնահատում են ոչ միայն ինկատի առնելով բարդյական շարժա- ռիթմներն և հոգու ոյժը, որ մի յայտնի անձնառութեան գործը որոշում է, այլև պարզ հասկանալով այն խելացի միջոցներն ու սխրագործութեան նպատակը և խորհելով այն օգուարը, որ նրանից հանում է մարդկութեան երկրորդ՝ որ Գոն Քիշոտը անկախ գործիչ չէ, այլ արձագանգ ասպետական րօմանների, որ նա, ինչպէս մի թա- փառաշրջեկ ասպետ, իւր սխրագործութիւնները կատարելու ժամանակ առաջնորդվում է ոչ թէ մարդասիրական և ընկերների օգափի համար անձնացոհ լինելու գաղափարով, այլ փառքի ոնայն ծարաւով և իւր սրտի ընտրածի առաջ ուրիշներից գանձանուելու փափազով, և այս վերջին շարժառախթը յաճախանիկ և գերակշռող հանդիսանում նորա մէջ, քան թէ առաջինը: Այսպէս, մի անգամ Գոն Քիշոտը՝ ի զուր իւր անձն ու շրջակայ բնակութիւնը ենթարկելով վտանգի ու եր- կիղի, մենամարտութեան և կանչում առի ծներին, որոնց Օրանի իշխանը ընծայ եր սղարկում Ապանիացոյ թագաւորին: իսկ երբ նորա չափահանցեցին գորս գոլ վանդակից, որ բայց եին արել Գոն Քիշոտի հրամանով, նաև միայնագիր պահանջեց նոցա վերակացուից, թէ նա իւր պարագը կատարեց, սակայն մենամարտութիւնը չկայա- ցաւ, թէ զորա պատճառը, մեղքը Գոն Քիշոտինը չէ: Մի ուրիշ անգամ Գոն Քիշոտը չէ կամենում օգնել այն կապելոնատիրոջ, որին լուից ծեծ ել եին իւր վարձաբնակները, որովհետեւ այդ սխրա- գործութեան համար նա չէր ստոցել իւր երեւակայած պիրիցէս Միկօմիկոնի թոյլուութիւնը, իսկ երբ նա ստանում է այդ իրաւուն- քը, իրկին ոչ մի բանով չէ օգնում ծեծուող կապելոնատիրոջ, որովհետեւ ասպետական կանոնների հիման վերայ, նա իւր արժա- նառութիւնից սառը է համարում մարգառել հասարակ մարդկանց գեմ: Ես կը յիշեմ այստեղ մի այլ գեպը, երբ թափառական աս- պետոր բոլորովին ստուեր է ձգում Գոն Քիշոտի վերայ, ծածկում է նորա բարի ու հումանական անձնառութիւնը Երբ Գոն Քիշոտը և Սանչօն գտնվում են հերցոգի պալատում կարծեցեալ Անդրլինը, որ ինչպէս երեւեցաւ, հերցոգի շորերը փոխած մաժորդոմ էր, ասաց ասպետին, թէ կախարդապմայլ Գուլբինէան միայն այն ժամանակ կը նույնի իւր իսկական տեսքը, ելլը Սանչօն իւր ձեռքով 3300 ան- գամ կը գանահարէ իրեն: իսկ երբ Սանչօն տաքացած բողոքում է այդ անհեթեթ ինքնամրակութեան գլմ: Գոն Քիշոտը զայրանում

է և սպասնում կապել իւր զինակցին ծառից և ոչ թէ 3300, այլ 6600 դան տալ կարծեմ, բերած օրինակներս լիովին բաւական են համոզելու համար, թէ որքան իրաւացի են այն քըն-նագատներն, որոնք պնդում են, թէ Գոն Քիշոտը ներկայացնում է հաւաս գեղի իդեալը, բարութեամբ ու ծշմարտութեամբ ոգեգմայ-լուիլը, բնդհանուրի օգտի համար անձնազոհ իննելու գաղափարը, և թէ Երվանաւակը իւր րօմանի մէջ ծաղում է մարդկացին բնութեան այս թանկագին յատկութիւններն, ամեն մի ազատութեան ու յա-սաջիմութեան այս ազբիրները: Ոչ, Գոն Քիշոտից, հեղինակը ծաղըել է ոչ թէ բարութեամբ ու ծշմարտութեամբ ոգեգմայլուին, այլ այն ձեն, որով արտայայտվում է այդ ոգեգմայլութիւնը, նորա ծաղըականը (կարբիկաստորան), որ առել են, ստեղծել են ասպե-տական րօմանները, անհամապատասխան ժամանակի սպառն: Գեօ-թէն իրաւացի է նկատում, թէ մի որ և իցէ գաղափար՝ ստանալով ֆանտաստիկական բնաւորութիւն, հենց դորանով կորցնում է իւր նշանակութիւնը: ահա թէ ինչու երեւակայականը՝ շփուելով իրակա-նութեան, ջարդ ու վշուր է լնում և կարեկցութեան փոխարէն մեր ծիծաղն է արծարածում, որովհետեւ աեզի է տալիս բազմատեսակ ծիծաղելի արականակըների: Մեր տատճին կարելի է կցել և այն, որ եթէ Գոն Քիշոտը ընդունակ է շարժել ոչ միայն մեր ծիծաղը՝ չնայելով նորա բոլոր անհեթեթութիւններին, այլև կարեկցութիւնն այդ կարելի է բացատրել նորանով որ նու երկու մարդ է: Գոն Քի-շոտը ոչ միայն ցանցար ու թափառական ատպեան է, այլև խե-լոցի ու աղնիւ մարդ: Մերվանական գեղարուեստական տաղան-տր լիովին փայլում է Գոն Քիշոտի այս կրկին բնաւորութեան նկարագրութեան մէջ, որ ատքած է րօմանի սկզբից մինչև վերջը: Որքան Գոն Քիշոտը թափառաշընի սասպեան է, նպյնքան էլ վա-երեւակայութեան տէր է և մօնուման, և երբ նա կարողանում է դուր պրծնիր իւր իծե հիշե-ի կամարդային շրջանից, նա իսկուպէս իմաս-տուն է գաւանում և իւր շրմունքներից ոսկե խօսքեր է թափում, որոնց մէջ մենք աւելի արամազիր ենք լնում հեղինակի հայեացք-ները տեսներու: Կայ մի հանգամանք ևս, որ սահպում է մեզ աւելի ներողազանքութեամբ վերաբերուիլ Գոն Քիշոտի պակասութիւններին և նորա բնաւորութեան մէջ նկատելի հակասութիւններին, և այդ հանգամանքը զարաւում է քննադասի միաբը յօդուա Գոն Քիշոտի: Մեր ժամանակներն, երբ տիրապետում է եսականութիւն և իդէար-ների աղքատութիւն է, ուրախալի և մինչեւ անգամ հոգով կանգ-առնել մեծահոգի անմար կերպարանքի առաջ, որ այլ ևս չէ ձգտում յառաջդիմութիւն անելու կեանքի հրապարակում, իւր գործերում իդէալական մօտիվներն առաջնորդ անի և ամեն մի բայէ պատրաստ է զոհել իւր կեանքը այն բանի համար, ինչ որ իւր խան-գարուած երեւակայութիւնը փառը, ծշմարտութիւն ու բարութիւն է համարում:

Գոն Քիշոտի լուսաւորուած խելքը, նորա մոքերի զսեմ գա-սաւորութիւնը, այս բոլոր յատկութիւններն, որ ևս առաւել աչքի

են ընկնում՝ գրքի երկրորդ մասում, երբ հերոսի աշխից յած է սկըսում իջնել վարագպղը, և երեսում են նորա հայեացքներն գրականական, բարպարական և աօցիալական հարցերի մասին, բօմանի գրական մասն են կազմում այսինքն՝ այն, ինչ որ ամենայն իրաւամբ կարելի է անուանել նորա փիբսովայութիւնը։ Այս աել մենք պատահում ենք մի որիշ, չափազանց հետաքրքրական հարցի, թէ որքան «Դան Քիշոտը» ինքնակենսագրութեան նշանակութիւն ունի, որքան նորա մէջ երեսում են ստեղծագործի աշխարահայեցողութիւններն։

«Դան Քիշոտի» զանազան տեղերում Մերլանտէսը մի քանի անգամ ակնարկում է ինքնակենսագրութեան նշանակութեան վերայ։ «Այս գիրքը, — ասում է նա մի տեղ, — իմ կեանքի նշանաւոր գործն է»։ «Միակ ինձ համար է, — ասում է նա բօմանի վերջում, — ձնուել Գոն Քիշոտը, ինչպէս և ես նորա համար։ Կա գործել գիտեր, իսկ ես զրել։ Մենք միասին մի անձն ու մի հոգի ենք կադմում։ Մերվանտէսի կարծէքով գիտակցաբար թէ անգիտակցաբար, հեղինակը պիտի յայտնուի իւր գործում։ Գրիշը հոգու լեզուն է, ինչ որ մտածում է առաջինն, նոյնն էլ արտազրում է երկրորդը։ Աթէ բանաստեղծը անազունելի է իւր կեսնելում, նա անարասու էլ կրենի իւր գործերում։ Յայտնի լինելու ցանկութիւնն (որ կատարուած է անիմիզ կերպով Գոն Քիշոտին նմանելով) այնքան սաստիկ էր Մերվանտէսի մէջ, որ երկրորդ մասում նա մի տեղ Գիշոտի երեակայական մարդիտանցի պատմադրի բերանով յայտնում է դժոգհութիւն թէ բովանդակութիւնը կաշկանդում է նորան, նա ստիպուած է խօսել բացառապես Գոն Քիշոտի և Վանչօ Պահոսոյի մասին և այդ շատ ծանր աշխատանք է, որ ոչ բաւական է և ոչ էլ կարող է վարձարել Հեղինակի թափած ճիգը։ «Պատմաբանը բաւականին խելք, զիտութիւն և արւեստի հմառութիւն ունենալով աշխարհիս գործերի մասին խօսելու համար, միշտ ստիպուած է լինում գուրչ չգալու իւր պատմութեան սու զ շըջանից։ Այս բոլորից յետոյ մենք իրաւունք ունինք աւեսնելու Գոն Քիշոտի մէջ ոչ միայն ասպետական բօմանների երգիծաբանութիւնը, ոչ միայն XVI դ. վերջիրի և XVII դ. սկզբի սպանական կեանքի գեղարուեսորէն կերպով գուրս բերած նկարագիրը, այլ և Մերվանտէսի փայփայած, հոգեկցի հայեացքներն, Հեղինակի խօսավանանքը, նորա Աշելաթիւններն ու Մատածմունքը։ Այս աել են նորա կենսական փորձառութիւններն ու ձախորդութիւններն, յիշողութիւններն, Ալժիրումքերի եղած ժամանակի, Հայրենիքում կրած թշուաւութիւնների մասին և այլն։ Ինչպէս զրականական երգիծաբանութիւնը Մերվանտէսի ձեռքի տակ անդգալի կերպով գառնում է սպանական կեանքի լիաման նկարագիրը, այնպէս և այս վերջինը մի գանձարան է դառնում, ուր գըրած են նորա գրականական ու աօցիալական հայեացքներն, նորա ցնորդները կեանքի և մարդկանց բարօրութեան, երջանկութեան մասին։

Մի կողմ տանելով Մերլանտէսի բօմանի ինքնակենսագրու-

կան տարրները, մենք նախ և առաջ պիտի խօսենք հեղինակի գրականական հայեացքների մասին։ Սերվանտէսը, ինչպէս մատենազիր, երկար պիտի մոտած էր իւր գրականական գործունէութեան նիւթի և խնդիրների մասին, և եթէ համեմատենք միմեանց լիրիքական բանաստեղծութեան, գրամայի և բօմնինի մասին յայտնած նկատողութիւններն, որոնք ցրուած են «Պան Քիշոտի» զանազան տեղերում, այն ժամանակ կը ըստանանք զրականութեան մէօրիայի պէս մի բան։ Այդ թէօրիայի հիմնական կէտն այն է, որ նա ճշմարտութիւն ու բնաշանութիւն է պահանջում, մանաւանդ գրամատիկական բանաստեղծութիւնից։ Սերվանտէսի ժամանակ Սպանիայում՝ գրամատիկական արհեստը զեւ նոր էր ոտքի կանգնում, և նպատակն էր, ինչ ուզում է թող լինի, միայն որ գուր դայ հասարակութեան, ամբոխին։ Այն ժամանակուայ հաշակաւոր գրամա զրող Լոպէ գև վէզան պարզ ի պարզոյ ասում է, թէ որ և է թատերզութիւն զրել սկսելիս, հրամայում է սենեակից գուրս տանել գասական հեղինակներին, որպէս զի նոքա չմկայն, թէ նա իւր թատերզական գործունեան ժամանակ ոչ թէ արուեստ սկզբունքն է աշքի առաջ ունեցել այլ ամբոխի ճաշակն, որի անմասութիւնը պէտք է խրախուսել, որովհետեւ գորս համար նա փող է վճարում։ Այսպիսի վաճառանական հաշիներից Սերվանտէսը հետու էր, իւր հոգու խորըում նա վաեմ հայեացք ուներ արուեստի վերայ և կարծում էր, թէ բանաստեղծութիւն, իւր մէջ իրականութիւն ցոլացնելով և կենասական ճշմարտութեան ծառայելով, մի և նոյն ժամանակ պիտի ծառայէ վեհ նպատակների, ամբոխին քարշէ-ատան իդէաների աշխարհը և ոչ թէ միմասութիւն անէ հրապարակում։ Սերվանտէսը կրթուած յինելով Արիստոտէլի «Պօտոմիկէ» և Հորացիասի «Ար Պօտետիկա» գործերի ուսումնասիրութեամբ՝ իւր «Պան Քիշոտի» առաջին մասում շերմ ջատագով է հանդիսանում գասական գրամայի թէօրիային և այդ տեսակետից էլ քննազատում է ժամանակակից դլրաման։ «Դրաման, — ասում է նա քահանայի բերանով, — հայելի պիտի լինի, ուր պիտի արտափայլ մարդկային կետնը» նա մարմնացած ճշմարտութիւն պիտի լինի և վարը ու բարքի օրինակ։ Սեր գրամաները միայն անհեթեթութիւն ու ցովութիւն են պատկերացնում և թերեւ յիմարութեան օրինակ ներկայացնում։ Եւ իրաւ, եթէ առաջին արարուածում երեխային օրորոցում մեզ ներկայացնեն, իսկ երկրորդում չափահաս և մօրուաւոր, կարծ ևմ զսրանից խոշոր միմարութիւն չի կարելի հնարել։ Ար լինի աւելի մեծ անհեթեթութիւն ծերւունուն խիզախ ու անմիհել ներկայացնելոց, իսկ երիասաւրդին վախկու ու թուլասիրա, սպասաւորին մեծ հետեաւոր, մանկւակին խորհրդատու, թագաւորին բեռնակիր և արքայագաւորերը—աման լուացող։ Վերջապէս ինչ կարելի է ասել մեր գրամաների մասին ժամանակի և աեղի պայմանները պահպանելու վերաբերմանը։ Մի՞թէ մենք չենք տեսած պիտիսի թատերական գրամաներ, ուր գործողութիւնը սկսում է Կուրովայում, շաբանակիվում է Ասիայում և վերջանում Աֆրիկէում, իսկ եթէ շորս գործողութիւննց լիներ

զրուածքը, չորսորդը անշուշտ Ամերիկայում կը կատարուեր, այնպէս
որ աշխարհիս չորս մասերում՝ կը լինէր գրամայի գործողութիւնը։
Չատ հետաքրքրական է այն, որ այդ ժամանակի սպանական դրա-
մայի առաջ բերած պակասութիւններն արծ արածեցին Աերլանտէսի
մէջ այն միաբը, թէ պէտք է հիմնել էսթէտիկական քննադրատի
մի առանձին պաշտօն, որին պիտի ուղարկուին այն բոլոր թատերա-
կան գրուածներն, որ կամենում են ներկայացնել և առանց այդ
քննադրատի ստորագրութեան տեղական վարչութիւնն իրաւուք
չպիտի տայ ներկայացնելու *): Աւելի մեծ նշանակութիւն ունին
«Գոն Քիշուաթ» առաջին մասում զետեղուած նորա նկատողութիւն-
ներն րօմանի մասին։ Այստեղ էլ գլխաւոր պահանջը ճշմարտու-
թիւնն ու բարոյականութիւնն են, և այս տեսակէտից նայելով, հե-
ղինակը ժամանակակից վիպական դրականութիւնն ենթարկում է
ոչնչացնող քննադրատութեան։ Թուելով այն բոլոր անյարմարու-
թիւններն, որոնցով լի են ասպետական րօմաններն, Աերլանտէսը
նկատում է. «Եթէ ինձ ասեն, թէ դոցա հեղինակները չեղածն ու
անկարելին հնարելով, ունին մի նպատակ, այն ժամանակ ես կը պա-
տասխանեմ, որ մասած ածինը աւելի գեղեցիկ է այն ժամանակ, երբ
քիչ է նմանում երեւ ակայականին, հնարած նն։ Ընթերցողին միայն
այն ժամանակ զուր կը գտնան աստաղելաբանական պատմութիւններ,
երբ գրքա այնպէս են գրաւած լինում են, որ անհաւատին հաւատալի
է թւում, երբ հեղինակը փոփոխաբար լինում է ընթերցողի սիրառ
զարմանքով սպասել է տալիս, սրատառչ զգացմանքներ է արծա-
րածում։ Ոչ մի համարման բան չէ կարելի գտնել այն հեղինակի
շարադրութեան մէջ, որ զիտման խոյս է տալիս ճշմարտութիւնից
ու բնութիւնից, եթէ որիշ խօսքերով խօսելու լինինք, այն բանից,
ինչ որ գեղարուեստական զործի զիտաւոր ոյժն է կազմում։ Հեր-
քելով ժամանակակից զեղարսւեստական դրականութիւնը, Աեր-
լանտէսը լիովին կարողացել է գնահատել այն օգուար, որ ինքը
տարիս է հեղինակին կամ մատենագրին իր րօմանի, նոր ժամա-
նակի այդ եղողէի, ձեւ, րօմանի, որ աւելի, քան մի այլ տեղ, կա-
րող է փայլել մարդկային հեանքն այն բազմուզան հարցերի հետ
միասին, որոնք ալեկում են այդ կեանքը։ «Անոլով կերպով պար-
սուելով այդ գրքերը, ես միայն դոցա մի լու կողմն եմ տեսնում։
որ և այս է. նորա լիակատար պատութիւն են տալիս մատենա-
զրին, լոյնատարած գտշա են ներկայացնում, որ կատարելապէս
կարող է զարգանալ նորա սապանար, պատկանացնելով փոթորիկ-
ներ, նուարեկութիւններ, նկարագրելով մեծ զօրապետի ընտա-

*.) Աերջերքում Աերլանտէսը նիւթական կողմից ծանր ու
սուզ հանգամանքներում լինելով, կը կիմ անձնատուր է լինում վա-
ղոց թողած իր բնին և իր Իռլան Շառիան Բիլիան և իր Ռիան Ժամանակու-
հան գրուածի մէջ՝ սիրու առնելով և իրքն իրեն ծաղրելով, սկսում
է յարմարուիլ ամբոխի ճաշակին և պաշտպանել այն հայեացքներն,
որոնց գեմ նա այնպէս սաստիկ բողոքում է «Գոն Քիշուաթ», առա-
ջին մասում։

բոթիւնն եայլն... Այդպիսի շարտըրութեան մէջ մատենագիրը կարող է մերթ ասաղաբաշխ ու աշխարհագէտ հանդիսանալ, մերթ երաժշատքէտ ու տէրութեան մարդ, թերես և կախարդ, եթէ դորա համար յարմար գէսքը լինի: Բացի այդ, ազատութիւնն, որ արվում է մատենագրին այդպիսի գործեր ստեղծելու համար, միջոց է տալիս նորան լիրիքական բանաստեղծ, վիպասան, ողբերգու, միմու լինելու իր գործերում, պէրճախօսութեան և բանաստեղծութեան իւրաքանչեւր տեսակի մէջ իր գերազանցութիւնն ցոյց տալու: Այսպէս լայն կերպով էր ըմբռնել նա րօմանի խնդիրներն, ասես, գուշակում լինէր այն գերը, որ նա պյժմ է կատարում: և ԽVII դարում ոչ մի հեղինակ այնպէս լաւ չէ հասկացել րօմանի նշանակութիւնը, ինչպէս նա: Ես գիտմամբ բերի այս կտորը, որ ցոյց տամ, թէ Աերվանդաց որբան էր առաջ գնացել եւր ժամանակից:

Աերվանտէսի գրականական հայեացքներից այժմ գառնանք իր կրօնական ու սցիբալ-քաղաքական հայեացքներին: Թէպէտ շրջանն ու ժամանակը չեն կարող չզնել Սերվանտէսի վերայ մի ուրշ կնիք, այնու ամենայնին նորա հայեացքներն զերծ են ֆանատիկութիւնից և կրօնական մոլեսանդութիւնից, որմնից աղաս չեն այն ժամանակայ լաւագոյն մատենագիրներն, ինչպէս Լուպէ գէ-Վէդա և Կալդերոն: Կոյն իսկ մատեների հարցի վերաբերմամբ նա ոչ թէ կրօնական, այլ քաղաքական զատողութիւնով: Էր զեկավարվում: Ժամանակակիցներից շատերի պէս՝ նա էլ մատեներին ներքին թշնամի էր համարում, որոնք երբէք չեն ներիլ իրենց անարդարը, երբէք Սպանիսիցի քաղաքացին չեն գտանալ և յափառեան գաշնակից կը ինին արտաքին թշնամիներին: Հիմնուելով այդ կարծիքին, նա մշարներին հալած ելն ինքնապաշտպանութեան համար խելացի և օրինաւոր միջոց էր համարում: Կրօնական հարցերի վերաբերմամբ Սերվանտէս, որ իր հայեացքներով նմնում էր վերածնութեան դարի առաջնակարգ մարդկանց—Լերազմին, Յօրիէին և այլոց: Ոչ մի տեղ նա չէ ձգտում ցոյց առա իր կրօնամոլութիւնն, ոչ մի տեղ նա չէ աշխատում իր կողմը գրաւել իր ժամանակուայ ամենահզօր եկեղեցւոյ բարեհամութիւնը: Վոն Ֆիշուի մէջ կարելի է նետը տեսնել, որ նա արձակել է ժամանակակիցից հոգե որականութեան անհամակերի ու արատուոր կողմերի վերայ: Այսպէս, մի տեղ նա ներկայացնում է քահանայի սէրը գէս իշխանութիւնը: «Միթէ գուք կարծում եք,—բայցականչում է նա,—որ աշխարհում է անելու բան չկայ և մնում է միայն ուրիշի աներն և նոյս աերերին ձեռքը ձգել: Վոն Ֆիշուի երկրորդ մասում նա բողոքում է արեղաների գէմ: «Ինձ թւում է, —ասում է Յորատարիա կզզու հիւրանոցանէրը Սանչո նահանգապետին, որ ճաշի սեղանի մօտ է նստած, —թէ գուք ոչինչ չպիտի ուտէիք, ինչ որ սեղանի վերայ կայ: Այս կերակորների մէծ մասը կայսերն են բերել իսկ խաչի յետեռում: ասում են, աստանայ է թագ կացած»: Սերվանտէսը մի քանի անգամ է ծաղսի ննթարկել արտաքին կրօնակրութիւնն ու մնապաշտութիւնը: «Կորա «Rinconete y Cortadillo» սրամիու

վէպից երեսում է, որ բոլոր գողենն ու խարդախներն ամենատաստուածապաշտ մարդկէն են, ամենախիստ կերպով կատարում են կաթօղիկական ծէսերն և ամեն մի բոպէ դիմում են Աստուծուն ու որբերին, որպէս զի ազատեն նոյա մարդկանց արդարագատութիւնից: Յառախամիք նոյնպէս և «Թոն Քիշոսի» մէջ երեսում են ցոյցեր ամեն տեսակ մնապաշտութեան դէմ: Թէպէտ բօմանի հերոսը, որպէս մի թափառական ասպետ, պիտի հաւատար զանազան թովիչներին, Քէաներին և ամեն մի սատանայութիւններին, բայց որպէս նոր ժամանակի մարդ, նա մի քանի անդամ տարակուսանք է յայտնում, թէ կախարդութեան միջոցով հազիւթէ կարելի է մարդկային կամքն այս կամ այն կողմն ուղղել: Թոն Քիշոսը սորս առ թիւ մի նշանաւոր նկատողութիւն է անում; որից ակներեւ է, թէ Սերվանտէսը անհարելի է համարում մնապաշտութեան և ճշմարիտ կրօնասիրութեան միասնական լինելը: «Այս բոլոր պատահմոննքը, որ ամբոխը սովորաբար նախազգուշութիւն է անուանում, խելացի մարդու աշքում ոչ այլ ենչ պիտի լինի, եթէ ոչ՝ միայն բարեբաստիկ պատահմոնքը: Մինչդեռ մնապաշտներից մելք՝ առաւօտեան գորս գալով տանից և պատահէլով մի քրանսիսցի արեղայի, շտապում է տուն վերագունալ ասես, թէ մի հրէշտառ կոսմի պատահած լինի: Միւսը աղ է ցանում սեղանի վերայ, մուպյուզլում է և մայլում, կարծես, թէ բնութիւնը պարաւարուած է նախազգուշացնել մարդու գտարիք ձախորդութիւններն ու թշուառութիւններն: Բարեմիտ ու քրիստոնեայ մարդը այդ չնչին բաներով պիտի չդատէ երկնքի գիտառութիւններն: Երբ Սանչօն եկաւ Բրատարիս կդդին նահանգապետի պաշտօն վարերու համար, նա իսկոյն հրաման տուեց, որ ոզրմութիւն ննդրող մուրայկաններն հրաշըների մասին չերգեն, քանի որ չեն կարող տպացուցանել նոյա ճշգրիտ լինելը: Հաւանական է, որ այդ բացիսնալիստիկական ցոյցերի պատճառով, որ յատուկ են Սերվանտութեան դարձն, Աերվանտէսի գիրքն էլ լնիկաւ արգելուած գրքերի ցուցակը ինկվիզիսի կոզմից (Index expugnatoris).

Երբ Սերվանտէսը դառնում է քաղաքական ու սօցիալական հարցերին (բացառութիւն է կաղմում մաւրների հարցը), ցոյց է տալիս գաղափարների վաեմութիւն, արդարամտութեան ու ճշմարտութեան դացմունք և զարմանալի վարչական իմաստութիւն: Վերածնութեան դարձն մարդկանց պէս Սերվանտէսն, ինքն հերոս Աւանատոն, որ հպարտանում էր իւր բօմաններով, պատերազմի և նուռանելու քաղաքականութեան թշնամի է հանգիսանում: Կա պախարակում է ամեն մի պատերազմ, բայց պաշտպանողականից, որի նպատակն է պաշտպանել հաւատն, հպարենիքն ու թագաւորին: Մարդու բարոյական արժեքն թանկ գնահատեալով, Սերվանտէսն ոչինչ նախապատռութիւն չէ տափս ցեղին և առհմին: «Հպարտացիր, Սանչօն, քո համեստ ծագումնվ նորանից մի ամաչեր, այն ժամանակ քեզ էլ ոչ որ չի ամաչացնիլ նրանով: Գու աւելի հպարտացիր որ թէպէտ անոտիչմ, բայց արդար մարդ ես և ոչ թէ նորանով, որ տոհմանոր ես, բայց մեղաւոր: Եթէ գործ երիդ համար առաջնորդ ընտրես

առաքենութիւնն և փառքգ հիմնես բարի գործերի վերայ, այն ժամանակ դու առիթ չես ունենալ ուրիշներին նախանձելու, որոնք պրինցների ու զանազան մարդկանց են իրենց նախնիքը համարում Արիւնը ժառանգված է, իսկ առաքենութիւնը ձեռք է բերվում, և այնպէս ժամանել է գնահատվում՝ ինչպէս արիւնը երրեք չէ կարող գնահատուիր: Ցայտաներով այն ժամանակիներն այսպիսի գաղափարներ, այնու ամենայնիւ Արվանտեսէր Համահաւասարութեան կուսակից չեր, չեր բոլըքում մարդկանց բաժանող գոյութիւն ունեցող դասերի գեր, ոյլ ենթագրում էր ու կարծում, որ ծագման ու հարստութեան արտօնութեան փոխարեն նորա ինքնուժար կամքով հոգս պիտի քաշեն հասարակութեան սարո դասի պիտոյքների վերայ, ուրոնք զուրկ են բարեկեցութիւնից: Ցայտանի է, որ Սերվանտէսը ամբողջ կեանքը մաքառում էր աղքատութեան գէմ և, իւր հայրենիքում չկարողանալով ապրուստի միջոցներ հայթհայթել նա կամենում է Ամբրիկա գաղթել զոհելով իւր անձնական արժանաւոթիւններն, դիմում էր զիրք ունեցող մեծատուն հովանաւորողներին, և սորա աղատում էին նորան սովալուկ մահից: Այս բոլորն ինկատ առնելով, անտարակոյս, կենսադարական մեծ նշանակութիւն են ստանում այն խօսքերն, որ նա գնում է գոյն Քիշոտի բերանում: Խօսելով աղատութեան ու բարյական անկախութեան մասին, «Ազատութիւնը, Պանչօ, ամենաթանկարգն ըարիքն է, որ երկինքը շոնորհել է մարդուս: Ոչ մի բան չէ կարելի համեմատել նորա հետ, ոչ երկրիս խօսքում, ոչ ել ծովի անդունդում ծածկած գանձերը: Ազատութեան ու պատուի համար մարդ պիտի զոհէ իւր անձն, որովհետեւ սարիկաթիւնն աշխարհիս ամենամեծ շարիքն է: Ընկերի իմ, դու տեսար հերցոգի ամրոցում մեզ պատած առատութիւնն ու շքեղութիւնը: Եւ ի՞նչ օգուտ զորանից: Այդ բնաիր խորսափեն ու պազ խմբաներն անուշ անելիս ես քաղցած էի զգամ ինձ, որովհետեւ այնպէս աղատորէն չէի օդալում, ինչպէս ես կ'օգտուեի իմ սեպհականութիւնից: Ողորմութեան համար իրեն պարագան զգան մի և նոյնն է, թէ հոգին կապանքի մէջ գնելի Նըջանիկ է նա, ում որ երկինքը մի կառը հաց է պարգել, և զորա համար նա միշտ գոյն պիտի լինի երկնըց»: Արվանտէսն ոչ մի տեղ չէ հանում այնպիսի բարյական վեհանթեան ու քաղաքական իմաստութեան, ինչպէս խօսաներ առողջութեան ու գործութիւններ առալու ժամանակի, որ դան Քիշոտը առաջի է Պանջոին, երբ առ պատրաստվում է գնալ նահանգագետի պաշտօն վարելու: Այս աեղ մեր առաջ պատիկերանում է իմաստուն, արդար, հասաւա, մի և նոյն ժամանակ խորին սիրով ու գթութեամբ գէտի մարդիկը առզորուած կառափարութեան գաղափարը *): Եւ այս բարյական ուժի աղքեցութիւնն այնքան

*.) Չենք կարող զրկել բաւականութիւնից և յառաջ չըերել այդ խորհներից մի քանիսը, որոնք երրեք չեն կողցնիլ իրենց արժեքը՝ Աշխատիր ամեն բանում՝ ձշմարտութիւնը մերկացնել, աշխատիր տեսնել նորան խոսամունքների ու հարուստ պարգևների

մեծ էր, որ Սահնչօն, թէպէս սկզբում նահանգապետի պաշտօնը հարսաւանալու միջոց էր համարում, բայց Գոն Քիշատի աղդեցութեան ներքոյ բոլորովին վերածնում է, իսկական իմաստուն կառավարիչ է գաւնում, բաւականաչափ օճառործութիւններն ոչնչացնում է, աղքատների վեճակի մասին հոգա է քաշում և վերջ ի վերջոյ ինքն էլ այնպէս աղքատ է հեռանում այն կողուց, ինչպէս որ եկել էր:

Ես տակաւին չքաղեցի այն բոլոր մարդասիրուկան ու իմաստուն գոհարներն, որ գտնվում են Գոն Քիշատի գատողութիւններում, և այդ գատողութիւններն են այն գլխաւոր պատճառը, որ քննադատները, մոռանալով Գոն Քիշատի բնաւորութեան կրկնակի լինելը, նայում էին նորա վերայ որպէս բացառապէս բարութեան գաղափարով ոգէզմայլածի վերայ, և զայրանում էին Աերլանտէսի վերայ, որ պարպիսի իրեւալական մարդուն ծիծավել դրութեան մէջ է ձգում: Միւս կողմից ես ուզում էր ուշագրութիւն գարձնել Սերվանտէսի գործի վերայ, որ համարեա մեծ ամսանութիւնից աննկատելի է մնացել, նոյնպէս և ուշագրութիւն գարձնել այն վեմ գաղափարների վերայ, որնցով աւելի առատ է «Գոն Քիշատի» երկորդ մասը, երբ հերոսի բնաւորութիւնն աւելի է լուսաւորվում, երբ վարագոյրը սկսում է կամաց կամաց ցած իշնել նորա աշքից: Այս մասից, որ Սերվանտէսը գրել է մահից մի տարի առաջ, այնպիսի մի անգործութիւն և հոգեկան պարզաթիւն է բերում, այնպիսի մի զուտրթ հատառ է երեսում դէպի բարին ու ճշմարիան, որ մեզ թրում է, թէ գա մեծ բօննիսարի բանաստեղծական կտակն է, որ լուսաւորուած է իր կեանքի խաւարման հետքոյը ու մահցող լուսով:

«ՎԵՍՏ. Ե.» 1885 № 9.



մէջ, ինչպէս և աղքատների քործի և հասանքերի մէջ: Եւ երբ արգարագատութիւնը գոհ պահանջէ, գամբան օրէնքի բայրո պատահժը գումի թափիլ մէկի գլխին, անողոք գատառուոն աւել չի գովուիլ, քան թէ կարեկիցը: Խակայն մեղմացներով օրէնքն, մեղմացրու նորան ու թէ բնծաների, ոյլ կարեկցութեան ճշշման ներքոյ: Եւ եմեւ գու բններու լինիս մի այնպիսի գործ, որի մէջ խառնուած կրկնի քո թշնամին, նոյն բոպէին մոռացիր քո անձնական թշնամութիւնն և յիշեր միայն արգարութիւնը Աւմ որ ստիպուած կրկնիս գործով պատժել, խօսքով մի վերաւորի նորան: Ի՞նչ կարիք կայ սասակայցնել նոյն պատիժը և խօսքերով: Երբ որ դատելու լինիս մեղապարակն, նայիր նորան, ինչպէս մի թոյլ ու թշուառ մարգու վերայ: Հակառակ կողմին էլ արգար կերպով վերաբերուերով, ցոյց տուր, որքան այդ քերանից կախուած կրկնի, գթասրտութիւնն մեղաւորին, որովհետու, թէ եւ բոյոր աստուածանման յատկութիւններն հաւասար են, այնու ամենայնիւ զիթարատութիւնն աւելի է փայտամ մեր աշքում, քան թէ ճշմարտութիւնն և այլն...».

Տ Ա Պ Ա Ւ Տ.

Մըտաւ արեւ. Աւարայրին մութ պատեց,
Սև ամկերով երկնից գեմքը քողարկուեց.
Բընութիւնը մի քուն մըտած հեշտասէր
Վայելում է անուշութեան վառ ժամեր.

Զէ նըւագում քաղցըր սրինգն հովուական,
Թուչունների քնքուշ տաղեր լսեցան.
Ծաղիկները նիշրած փափուկ մարդերում
Երբեմն մեղմիկ հովի հետ են համբուրվում:

Բայց սյդ քունը մօտ չէ գալիս հեշտագին
Ծեր Տղմուտի արիւնակոխ աչքերին.
Սյն սե օրից, երբ որ կուրճքը կուսական
Առօգուեցաւ արիւնովը հայութեան,

Անցան գարեր, գեռ Տղմուտը հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Աւարայրի անուշ քունը, և չունի
Մինչև այսօր նա ողբակից իւր վշտի.

Եւ ծերունին հառաջում է սրգաւոր.
Արիւն գարձած կոհակները ալեոր
Գընում գալիս, զարնըում են արիերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին.

«Զեր նախնեացը էլ չէք նըման դուք, հայե՛ր,
Չունիք այլ ևս հայրենասէր այն ողին.
Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արեամը բուսած անմահ վարդեր պսակեցին:

Նոքա գըլում չըտըւեցին բոնութեան,
Չըծախւեցին նոքա խիզճը և ամօթ,
Ազատութեան երկրպագու կանգնեցան,
Հաւատալով փառքի լուսոյն անազօտ:

Եւ անթառամ զարդարուեցան պըսակով,
Անմահացաւ այն վեհ հոգին արութեան.
Եւ հայրենեաց կեանք տըւեցին արիւնով
Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսան:

Դուք ի՞նչ արիք, դուք ի առաւոր նախորդաց
Սարուկ ծընած, անփառք ոլնած զաւակներ.
Հայ սար, հայ զետ, հայ դաշտօրայք շունչ առած
Պիտ' ամօթով այրեն ձեր սե երեսներ:

Ազատութեան սուրբ պատկերը կործանած,
Դուք ծալըռում էք աղասասէր ըզգացմունք:
Նոր Յազկերտի անարդ բագին էք կանգնած
Եւ խայտառակ կատարում էք պաշտամոնք:

Ո՞՛չ, եթէ ելնէր կորած մոռցուած դամբանից
Վարդանների առխճական այն հոգին,
Եւ երկաթի խարազանը թունալից
Տար ձեր ժաղիրհ ամօթապարտ ճակատին.

Եւ արցունքով համբուրէիք սուրբ շիրիմ;
Ուխտ կապէիք նորից նաչով ու սըսով
Կանգնեցընել նոր Սրտաշատ, Խոխոցիմ
Վերջ տալ անարդ այս վիճակին արիւնով»...

Եւ Տղմոտը հառաջում է սըգաւոր,
 Արիւն դարձած կոհակները ալեսոր
 Գընում զալիս, զարնըւում են ափերին,
 Անցած փառքը յիշեցնում են հայերին;

Անցան դարեր. դեռ ծերունին հեծելով
 Գիշերները խանգարում է անվօգով
 Աւարայրի անուշ քունը, բայց չունի
 Նա ոյժ քունը խանգարելու հայերի . . .

1887, 7 փետր.



ԶԻՆՈՒԱՐԻ ՄԱՀՔ.

Ես մեռնում եմ, ով մայր հայրենիք,
Կարմիր արիւնով անվեհեր կուրծքիս,
Ներկելով սուրբ հողդ, և թող քո որդեկ
Զողբան իմ մահը, երբ քաջ զինուարիս
Թափած արեան տեղ պիտի բուսանին
Ո՛չ փուշ ու տատասկ, այլ կարմիր վարդեր,
Եւ այդ վարդերից վնաշեր պիտ' հիւսուին
Պսակելու զոհուած՝ ազնիւ զըստիներ։

Եւ թող ես գրկած կուրծքը մայրենի,
Քո ազատ կուրծքը, սիրուն հայրենիք,
Քընանամ մինչեւ ականջիս համի
Քո ազատութեան քաղցրօ աւետիք.
Ես այն ժամանակ կ'ենեմ և պայծառ
Արեւդ տեսած, իմ բաղդը կ'օրչնեմ
Որ, իմ հայրենիք, միայն քեզ համար,
Քեզ համար միայն կեանկըս զոհել եմ. . .

* *

Տեսնում եմ աչա—ազգեր են մեռնում,
Սպակեր են ծնվում, և արմաւենին
Սուրբ աղատութեան գողգոջուն ձեռքում՝
Բաղդն է մօտենում մատաղ ազգերին.
Եւ նախնեաց փառքը նոր արշալուսով
Ցոլում է նոյա պայծառ Ճակատին,
Եւ աչեղ կոռում արին քրտինքով
Կաստակած անմահ աճում է դափնին.

Եւ միայն գու ես, իմ խեղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձեալ
Եւ պատան պատան կուրծքըդ գեղեցիկ—
Ընկած ես որպէս կենդանի մեռեալ. . .
Եւ անցած փառքիդ աւերակներից
Փրկութեան սստը գեռ չէ կանաչում,
Կրծքիցըդ հոսած արեան շիմերից
Քո տանջանքների փունջըն է ցողվում:

Բայց, իմ հայրենիք, դու պիտի չմռնիս,
Ես հաւատում եմ յարութեան օրիդ,—
Մօտ է ժամանակ, զարթիք, սիրելիս,
Փրկութեան աստղը վառվում է Ճակուդ,
Ոտքի ել հոգիս, շղթադ թօթափիք,
Բաց արա՛ աչքըդ այդ մահուան քրնից.
Թէ մահամերձ, դու մի ձայն հանիք . . .
Որդիքդ օգնութեան կըգան չորս կողմից:

Յ. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ.

1887, 5 փետր.

ԱՌԱԽՈՏԵԱՆ ԺԱՄԻՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԶՐՈՅՑ

(Լ. Կ. Լազարեակիցից).

Այս ժամանակ, ինչպէս ասում են, ես ինը տարեկան էի բոլոր եղելութիւնը մանրամասնաբար չեմ յիշում, բայց կը պատմեմ, որքան միտս է, իմ մեծ քոյրը շատ բան է յիշում, իսկ փոքրիկ եղբայրս—ոչինչ։ Բայց ես գեռ չեմ գժուել, որ պատմեմ նորան այդ ժամանակուայ բաները։

Մայրս էլ ինձ շատ բան էր պատմում, երբ մեծացած ժամանակս հարց ու փորձ էի անում նորան։ Հայրս երբէք մի խօսք էլ չէր ասում։

Հայրս, ի հարկէ, տաճկական շոր էր հագնում։ Ասես թէ ես այժմ եմ նայում նորան, ինչպէս նա զարդարվում է. նորա ջէմաղանը¹ կարմիր թաւշից էր, որի վերայ ոսկէ ժապաւէններ էին կարած մի քանի կարգ. դորա վերայից—կանաչ մահուդէ Թիւրչէ²: Սիլայը³ ոսկէհուռ էր, ուր զետեղուած էր խարբիան⁴, որի ծայրը փղոսկր էր, և արծաթէ պատեանում դանակը, որի ծայրը սպիտակ ոսկրից էր. Սիլայի վրայից կապած էր լայն ապրեշումէ գօտի, ծայրերը փնջերուլ զարդարուած, որոնք ձախ կողքից կախ էին

¹ Ժիլէտի պէս հազուստ է. կոճկվում է կողքից։

² Բաճկոն, տակը մորթի։

³ Սիլայ—մի տեսակ գօտի է, անպատճառ կաշուց շինուած. առջեից այնքան լայն է, որ ծած կում է լանջի մի մասը. յարմարեցրած է զէնք կրելու. համար, ինչպէս ատրճանակ, դանակ և այլն։

⁴ Երկաթէ ծող տարճանակը մաքրելու համար։

ընկած։ Զակշիրէ՞ն ⁵ արծաթմէ ու ապրեշումէ ժապաւէններով, լայն փայտալուցիները ծածկում՝ էին կիսով չափ սպիտակ զանգապանների ու կիսակօշիկների մէջ գոնուող ոսները, Երբեմն գըւ իին ֆէս էր դնում, մի փաքր էլ դէպի ձախ կողմը թէքում, ձեռքին ծխամորճ, որի ծայրն էլ սամից էր, իսկ աջ կողմից, գոտիի տակ, ծխախոտի քսակը, ուլուկներով ու սկով զարդարած։

Նորա բնութիւնը,—մէպէտ և նա իմ հայրս է, բայց քանի որ սկսեցի պատմել պէտք չէ ծածկել,—նորա բնութիւնը տարօրինակ էր, Զափաղանց լուրջ ու խստահայեաց, միայն հրամայել գիտէր, և եթէ մի բան ասէր, գու էլ խկայն չկատարէիր—Սատուած հեռի տանէր, Սաստիկ բարկացկոտ էր—ամեն բան էլ ուզում էր իւր ասածին պէս անել, և ոչ ոք չէր իշխում ապացուցանել նորան հակառակը, Բարկացած ժամանակ անխնապ հայհում էր, Կուռելիս գիտէր միայն ապատակ տալ, բայց այնպէս ապատակ կըտար, որ ուտողի աչքերից կրակ կըթափուէր, Սմէն մի շնչին բանի համար նա բարկանում էր, բարկանալուց նա կըծում էր ներքին պոչը, ողբում էր աջ կողմի բեխուր, վեր էր տանում նորան, յօնքերը կիսում, իսկ աչքերը կրակվամ վառվում էին, Վայ, եթէ այդ ժամանակ մեղանից մէկը գար և ասէր նորան, թէ դասը չգիտէ, Զգիտեմ, թէ ինչից էի ես այդպէս վախենում, Է՛՛, եթէ վերջապէս խիի էլ մի անգամ, ի՞նչ մեծ բան, Բայց ես վախենում էի այդ աչքերից՝ որ աչքերն ողբում էր, մարդ տերեւի նման գողում էր, ինքն էլ չէր խնանում, թէ ինչու,

Երբէք նա չէր ծիծաղում, գոնէ ոչ այնպէս, ինչպէս ուրիշներն են ծիծաղում, Յիշում եմ, մի օր նա նստեցրել էր ծընկներին փաքրիկ եղքօրս, Տուեց նորան խաղալու ժամացայցը, իսկ Գրիշան հօրս բերանն է կոխում ժամացայցը, Ես ու քոյրս ծիծաղից մեռնում էինք, հօրս էլ սա ծիծաղելի թուեց, իսկ նա միայն երկարեցնում էր բերանի աջ կողմը, և աջ աչքի մօտ կաշին ծալվում էր, Բայց այդ էլ հաղուադէպ բան էր, և նա միայն այդպէս էր ծիծաղում, երբ մի այնպիսի ծիծաղելի բան էր պատահում, որ ուրիշը ծիծաղից կըթուլանար, կընկնէր, և ծիծաղը սար ու ձոր կըպատէր։

⁵ Ապատիկ, որ ունի իւր առանձին ձեր, վերեր լույսն և միանգամայն աղատ, ծիծէ նա ողպների վերայ, կոճակվում է կողքից, ուրդի վերերից մինչև յած, ոտների կոճի մօտ այլ ես չէ կոճակվում։

Ցիշում եմ, երբ մեռաւ հօրեղայրս, որի հետ հայրս ընկերովի էր բան անում և որին նա այնպէս սաստիկ սիրում էր, նորա կինը, մայրս, մենք, երեխաներս անընդհատ լալիս էինք և հեծկըտում. միայն ախ ու վախ էր լսվում: Իսկ իմ հայրը—ոչինչ. ոչ մի կաթիլ արտասուրք վայր չձգեց, ոչ էլ ախ քաշեց: Միայն երբ որ բոլորեքեան իրենց վերջին հրաժեշտը տուին ննջեցելցն, և երբ նորան տանից գուրս հանեցին, հօրս ներքին պոջը գողդողաց, և նա գունատ որպէս քաման, յենուել էր պատին:

Բայց երբեմն՝ եթէ մի բան ասում էր,—երբէք յետոյ իւր խօսքից յետ չէր կանգնիլ, թէպէտ և սրտում զլջացած լինէր: Յիշում եմ, մի անգամ նա զրկեց պաշտօնից իւր Պրոկայ ծառային: Տեսնում եմ, որ ինքն էլ զզջում և մեղքանում է նորան, բայց էլի չի ուզում թողնել: Բոլոր ծառաներից նորան ամենաշատն էր սիրում: Գիտեմ, որ նա միայն մի անգամ խիել էր նորան, որովհետև արազը քամելուց յետոյ լաւ չէր պնդացրել տակառի ծորակը, և մի քանի դոյլ արաղ էր թափուել: Աւել նա նորան ձեռ չէ տուել: Նա ամեն բան հաւատում էր նորան ուղարկում էր գիւղեր պարտքերը ժողովելու և այլն: Բայց գիտէք, թէ ինչու համար նա հանեց նորան պաշտօնից: Զնչին բանի համար Տեսնում է մի անգամ, ինչպէս նա փող է խաղում. . Զարմանալի՞ է:

Սա պատահեց ս. Գէորգին: Գալիս է Պրոկան խանութ, որ վերանորոգեն իրենց պայմանը, բայց հայրս հանում է 90 զըուշ և ասում: —Աչա՛, ստացի՛ր ոռօճիկդ: Այլ ևս ինձ պէտք չես. գնա՛, որոնի՛ր քեզ համար այնպիսի տեղ, որ կարողանաս փող խաղալ:

Ծածկեց Պրօկան աչքերը ֆէտով, արտասուրքը անձրեկի պէս թափում էր նորա աչքերից, և նա սկսեց ինդրել հօրս: Նարժուեց հօրս գումը, այդ ես տեսայ, —բայց կարծում էր, նա նորան թողֆց: Ասոււած աղատի: Նա միայն հանեց էլի մի գուկատ (12 ֆրանկ) և տուեց նորան: —Ա՛ռ, հեռացի՛ր! —Գնաց Պրօկան, իսկ հայրս ստրջանում է, որ ի վուր տեղը գուրս արեց իւր ամենալաւ ծառային:

Նա երբէք կատակ չէր անում ոչ մեղ՝ երեխաներիս հետ, ոչ մօրս, ոչ էլ մի ուրիշի հետ: Տարօրինակ կերպով էր նա ապրում մօրս հետ: Զէ կարելի ասել թէ նա, Աստուած չտայ, ինչպէս ուրիշ մարդիկ, ուզում էր խիել նորան կամ մի որ և է

այդպիսի բան անել, բայց միշտ մի ուրիշ կերպ էր վարվում: միշտ սառը, բարկացած, աւելի կարճ, օտարից վատ, իսկ նա, խեղճը, բարի է, որպէս հրեշտակ, և միշտ իւր մարդու աչքերին էր նպջում: Հօրս բարկացած ժամանակ խեղճ մօրս հոգին, ասես, դուրս էր գալիս, բայց դորանից նա իւր արտասուկն էլ պիտի ծածկէր թէ՛ հօրից և թէ՛ մեղանից, երբէք հայրս նորա հետ մի տեղ չէր գնում, և մայրս չէր համարձակվում ասել նորան, որ մի տեղ տանէ: Նա դիմանալ, համրերել չէր կարող, երբ մայրս խառնվում էր նորա վաճառ ականական գործերի մէջ, երբեմն մայրս ասում էր նորան:

—Դմիտրի, ի՞նչ կըլինի, եթէ Ստուանին արաղ տաս, Զէ որ շուտով նորը կըլինի, ինչ պիտի անես այդքանը,

Այս տեղ նա յարձակվում էր մօրս վերայ.

—Ի՞նչ է, քաղցած ես, թէ մի բան պական է, Փողերը ձեռքումդ են, երբ կըպակասի, այն ժամանակ ասա՛: Իսկ իմ գործերիս մէջ մի խառնուիլ:

Մայրս կուչ կըգար և կըլուէր:

Ուրիշների հետ էլ նա քիչ էր խօսում: Սրճարանում նա իրեն համար առանձին ընկերներ ուներ, և թերեւս միայն նոյսա հետ մի երկու խօսք ասէր կամ՝ ոչ, իւր քաւոր Եղիային նա ամենից շատ էր յարգում, և զա միակ մարդն էր, որ իշխում էր իւր ուղածն ասել նորան և որից հայրս կարծես թէ վախենում էր:

Թէ՛ մեղ, և թէ՛ մօրս նա սիրում էր,—պէսք չէ ի զուր խօսել — այդ ակներե էր, բայց սաստիկ խխատ էր պահում մեղ, ես չեմ յիշում նորա կողմից քնքշութեան մի որ և է նշան, Սրդարե, գիշերը նա մեղ ծածկում էր, երբ մենք բաց էինք լինում, թոյլ էր տալիս ջրհօրի վերայ կռանալ և թթի ծառը բարձրանալ, — բայց ի՞նչ օգուտ մեղ գորանից, Ուրիշների հայրերն էլ են այդ անում, բայց նոքա իրենց որդոց համար բաներ էլ են գնում, ոսկէ թուղթ, բէտինի գնդակ, որոնք համարեա խնձորենուց էլ են բարձր թռչում:

Եկեղեցի միայն մի անգամ էր գնում, այն էլ ս. Գէորգի տօնին, իսկ պանդոկ — ամեն երեկոյ, Յաճախակի ընթրիքից յետոյ նա իւր ծխամորճը կըդնէր ձափի ձեռի տակ, ծխախոտի քըսակն էլ գոտիի տակ — և կըդնար. Ամառը ինը ժամին էր վերադառնում, իսկ ձմեռը գորանից էլ շուտ, բայց երբեմն կէս գիշերն

Էլ կ'անցներ, և նա չկայ ու չկայ: Այդ բանը շատ էր վշտաց-
նում իմ խեղճ մօրս ու քրոջս, — ես այն ժամանակ գաղափար
Էլ չունեի քէֆի մասին, Երբէք նորա չէին պարկիլ քնելու, մին-
չե որ նա գար, թէպէտե արշալու սին վերագառնար: Նստում
են նորա անկողնի վերայ, չեն էլ համարձակվում մինչեւ անգամ
Ճրագը վառել: Հայրս բարկանում էր, երբ տեսնում էր, որ Ճրագը
վառ է: Մի անգամ, երբ նա ուշ վերադարձաւ, ես լսեցի ինչ
պէս միթմիթում էր.

— Ի՞նչու համար է Ճրագը վառ մինչեւ այժմ:

— Որ լոյս լինի քեզ շորերդ հանելիս, Դմիտրի, — ասաց
մայրս:

— Բայց միթէ ես չեմ կարող վառել, կամ թէ կարծում
ես, ես հարբած եմ՝ չեմ կարողանալ գտնել:

— Զէ, Դմիտրի, — արդարանում էր մայրս, — բայց ես ասում
եմ՝ չլինի թէ... .

— Ի՞նչ ես ասում: Երեկի ուղում ես, որ դրացները կար-
ծեն, թէ մենք ննջեցեալ ունկնը:

Ի՞նչ ննջեցեալ: Եւ դուք կարծում էր, որ նա լուրջ կեր-
պով է այդ ասում: Ի՞նչ են նորա համար դրացիները... . Նա
չէր ուղում, որ մայրս իմանար, երբ է նա գալիս ու գնում, իսկ
բարկութիւնից չէր իմանում, ինչ ասէ: Նա ուղում էր, որ մայրս
քնէր, թէպէտ նորա քունը չէր տանում, և միայն ինքը կարողանար
անհոգ քէֆ անել: Երեսում էր, որ պատ նորան գուր չէր գալիս:

Նա շատ քիչ էր իմանում, այն էլ միայն կինի: Օղի նա չէր
գործ ածում: Եմէ գնելու ժամանակ համը տեսնէր, իսկոյն կը-
թքէր և դէմքը կըծումէր: Սուրճ էլ այնքան շատ չէր սիրում...
Բայց ի՞նչ էր նա անում պատքան ժամանակ սրճարանում: — Կը-
հարցնէր դուք:

Անբաղդութիւն, ուրիշ ոչինչ: Բայց կըտեսնէք յետոյ:

Այդ բանը մօրս կեանքը խլեց: Անտանելի կերպով նա լաց
էր լինում: և ոչ ոքի չէր գանգատում:

Մի անգամ հայրս շատ ուշ տուն վերագարձաւ... Ոչինչ...
Հետեւեալ օրը նոյնպէս — գարձեալ ոչինչ... . Յանկարծ մայրս նը-
կատում է, որ հօրս ժամացոյցը չկայ: Վախեցած հարցնում է
նորան:

— Բայց ուր է, Դմիտրի, քո ժամացոյցը:

Նա յօնքերը կիտեց, նայեց մի կողմը և ասաց.

—Ուղարկեցի Բէլգորադ, որ շնո՞ւն,
—Զէ՞ս որ նա լաւ էր գնում, Դմիտրի:
—Ես ոչ կզյու եմ, ոչ էլ յիմար, երեխ, գիտեմ, թէ երբ
է ժամացցը լաւ գնում, երբ վաստ:

Ի՞նչ անէր մայրս, պիտի սուս կենար:

Միայն յետոյ քրոջ հետ ախ էր քաշում: «Աշխ, մեր բանը
վատ է, Ունեցած-չունեցածներս կըտայ, և ծերութեան ժամա-
նակ ստիպուած կըլինիկը ուրիշների շորերը լուանալ»:

Մի օր—կըլինէր տասը ժամը, գուցէ մի բան աւել կամ
պակաս,—գալիս է նա սրճարանից, հաշտարիսանի մորթուց կա-
րած գլխարկը մի կողմը ծուած, կրծքին մի մատի հաստութեամբ
ոսկէ շղթայ կախ արած, գօտիի մէջ մի արծաթապատ, ոսկէզօծ ու
ականակուռ ատրճանակ, Ներս է մնուում և ասես, թէ ձախ աչքի
մօտ կաշին հաւաքուած է, ինչ որ է, տրամադրութիւնը լաւ է.

Մտած-չմտած հանեց գօտիից ժամացցը, իբրև թէ պէտք
է տեսնել, թէ որ ժամն է:

—Արդէն վերադարձեց, —հարցրեց մայրս, —միթէ արդէն
չինել է:

—Այո՛, —պատասխանեց հայրս,

—Իսկ այդ ինչ շղթայ է:

—Ինչպէս ամեն մի շղթայ, այնպէս և սա, —պատասխանեց
նա, բայց մի տեսակ մեղմութեամբ և առանց զայրանալու:

—Գիտեմ, —ասում է մայրս, —բայց դու ի՞նչ տեղից ճա-
րեցիր:

—Գնեցի:

—Իսկ այդ մորթէ գլխարկը, Զէ որ այդպիսի գլխարկ միայն
Միտիա գանձապաշն ունի:

—Այդ էլ գնեցի:

—Մախեց նա քեղ:

—Մախեց:

—Բայց որքան. . . :

Սակայն այս տեղ հայրս ծուռ-ծուռ նայեց մօրս վերայ,
և սա լուց:

Նա սկսեց իւր շորերը հանել, իսկ ես վերմակի տակից շա-
րունակ նպյում էի, Թօտիի միջից նա հանեց բոռնցքի մեծու-
թեամբ մի ծրար և ձգեց սեղանի վերայ, այնպէս որ ձայնը դուրս
եկաւ. ոսկի էր բոլորը:

—Ա՛ն, ասաց նա, պահի՛ր,—իսկ ինքը գնաց խոհանոց:

Մայրս վեր առաւ երկու մատով այդ ծրաբը, ասեա, թէ երեխայի կեղտոտ խանձարութք լինի բռնում:

—Բայց ես ի՞նչ անեմ այս փողերը,—ասաց նա քրոջս:— Նորա նզովուած են... Նորա սատանայակա՞ն են... Սատանան էլ կըտանէ նոցա, ինչպէս և բերեց. . .

Ինչպէս տեսնում էք, այստեղ ո՛չ երջանկութիւն կայ, ոչ էլ կեանք:

Եւ այսպէս, անրախտ էր իմ մայրս. անրախտ էինք մենք նորա հետ միասին. . .

—Առաջ,—պատմում էր ինձ մայրս,—նա ուրիշ մարդ էր: Ես էլ երաղի պէս յիշում եմ; ինչպէս նա յաճախակի նստեցնում էր ինձ ծնկների վերայ, երբ ես բալրութին փոքրիկ էի. ինձ չամար շուի էր շինում; նստեցնում էր իրեն հետ սայլը և տանում արտը: Բայց այն ժամանակուանից, երբ նա ծանօթացաւ գանձագահ Միտեայի և Մակովա փողոցի Քրիստափորի, գեղավաճառ Ալբերտի և մի քանի ուրիշների հետ, ամեն բան փոխուեցաւ, շուր եկաւ և—Աստուած գիտէ, ինչպէս գործը գնաց:

Մըթմրթում՝ է: Զէ սիրում, երբ հարց ու փորձ եմ անում: իսկոյն խօսքը կտրում է զայրացած, ասելով. «Միթէ գու ուրիշ հոգս չունի՞ս»:

Ի՞նչ ասել կուզի, ինքն էլ տեսնում էր, որ վատ է անում, մի անգամ նորան իւր ճանկն է ձգել նա, էլ բաց չէ ժողնում:

Բայց կրկն, ծիծաղելի է ասելը, կրկն նա բարի մարդ է: Այո՛, Աստուած մկայ: Այդպէս է երեսում. . .

Մի օր նա տուն է վերագարնում, չգիտեմ որ ժամին, մեկի հետ միասին. Զարմանում է մայրս: Անցնում է զրան մօտից էլի մի ուրիշի հետ, մի ինչ որ բան են խօսում կամացուկ: Գնում են բակը, Մի փոքր ժամանակից մենք լսում ենք ձիու տրոփիւն և իրինցիւն: Զեմ հասկանում, թէ այս ինչ է նշանակում:

Երբ նա սենեակ եկաւ, ես սկսեցի խոմիացնել և քոյրս սուտ քուն եղաւ: Բարեեց նա և լոեց: Լուռ էր նա, լուռ էր մայրս, իսկ ես սպասում էի:

Առաջինը սկսեց մայրս. խօսում էր նա բոլորովին թոյլ ձայնով.

—Տարա՛ն սև ձին:

—Տարան, —պատասխանեց Հայրս,

Կրկեն լուցին, բայց մայրս անդաղար ինչում էր. ես զգում էի, որ նա լաց է լինում:

—Դմիտրի, ի սէր Աստուծոյ, ի սէր մեր որդւոց. կտրիք քո բարեկամութիւնը սատանայի հետ. Նորա հետ ծանօթութիւն ունեցողը կորցնում թէ այս և թէ հանդերձեալ կեանքը. Ահա քեզ օրինակ թուղթ խաղացոլ իվանը, նայիր նորան. Որպիսի կարողութեան տէր էր, իսկ այժմ բանը այն տեղն է հասել, որ ուխչների գիտոյն է չորացնում և կաշի է գնում ջշուդների համար գիւղերում. Միմէջ գու չես մեղքանալ, եթէ ծերութեան ժամանակ ես ստիպուած լինիմ մեկից մի կտօր չոր հաց սպասել, և եթէ մեր որդիկը ուրիշներին ծառայեն. . . ես սկսեցի աղի արտասուբք թափել:

Սյս տեղ հենց յարձակու եց.

—Եւ ինչո՞ւ համար գու սկսեցիր երդուեցնել ինձ որդիներովս ու լաց լինել ինձ վերայ, քանի ես կենդանի եմ. Եւ ինչո՞ւ համար ձայնի վեր ես բարձրացրել մի քսոտ ձիու համար. Ես եմ նորան ձեռք բերել և ոչ նա ինձ. Ուզում ես, վազը տասն գնեմ:

Մայրս աւելի սասամիկ լաց եղաւ.

—Գիտեմ, Դմիտրի, —ասում է մայրս քնիքութեամիք, — բայց թշնամիները բոլորը կրտանեն. Թողլ աղաչում եմ մեր որդւոց անունով, թողլ այդ անիծեալ թղթերը. Դու ինքդ գիտես, որ բան անելով, մէջը կուելով. քրտիկը թափելով ինք մենք ձեռք բերել այս փորբիկ անկիւնը, և այժմ որ և է պորտարդներ դուրս պիտի անեն ինձ իմ տանից...

—Իսկ ով է քեզ դուրս քշում:

—Ինձ ոչ ոք չէ դուրս քշում, բայց կը քշեն, եթէ էլի պյդպէս անես. Զէ որ այդ պարապմունքը Աստուած անիծել է:

—Հարիւր անգամ արդէն ասել եմ քեզ որ չհամարձակուիս գլխիս քարոզ կարդալ և անտեղի խօսել. Խելքս հօ չեմ կորցրել, որ հարկաւոր լինի ինձ մի խնամակալուհի:

Զիսուց մայրս, այդ ազնիւ հոգին. Զավեց նա իւր հեծկըւտանքը. Այլ ևս ոչ մի արցունք չէ թափում; Նոքա թափում են կրծքի մէջ և քարի պէս ծանրանում են սրաի վերայ:

Օրերը անցնում էին, բայց նա կրկն առաջուայ պէս շարունակում էր. Յաճախ նա ըերում էր ծրարով փող, նոյնպէս

և կորյնում էր. Շատ անգամ նա գալիս էր առանց մատանու, առանց ժամացուցի, առանց ոսկէ սիլայի. Ուրիշ անգամ՝ նա բերում էր հետը երկու-երեք ժամացոյց, մի քանի մատանի. Մի օր էլ բերեց կօշիկներ և անթե վերարկու. մի ուրիշ օր-թամբ. յետոյ—12 արծաթէ դանակ, իսկ մի օր էլ մի ոստրէ տակառ և տեսակ-տեսակ բաներ. Մի օր էլ երեկոյեան բերեց մեր սե ձին:

Հետեւալ օրը լծեց նորան սայլակը, ամֆոռը գրեց խանութի առաջ, որ ոչ ոք չմննէ, և քաղաքի միջով քշեց այնպէս սաստիկ, որ քիչ էր մնում սալայտակը քանդուէր:

Մենք, կարծես, սովորել ընտելացել էինք, միայն մայրս էր լաց լինում և անհանգստանում: Եւ ինչպէս չանչանգստանար, Առուտուրը կտրուել էր, Ծառաները մէկը միւսի հետեփ հեռանում էին. Ամեն բան այնպէս էր գնում, ինչպէս մի նզովեալ տան մէջ, իսկ փող անհամար փող էր գուրս գնում:

Նորա այդ բարեկամները սկսեցին մեր տունն էլ գալ ու գնալ: Փակվում էին մեծ սենեակում, վառում էին մի քանի ճրագ, լսվում էր ոսկիների ձայնը, նայնպէս և թղթերի, բարձրանում էր ծխախոտի մնախը, իսկ մեր Ստուեան ծառան միայն և եթ սուրճ էր պատրաստում նոցա համար (իսկ հետեւալ օրը ցոյց էր տալիս մի քանի ոսկի, որ ստացել էր «արաղի համար»). բայց մեր մայրը նստում էր մեղ հետ միւս սենեակում: աչքերը կարմիր էին, երեսը գունատ, ձեռքերը այրվում էին, և անդադար կրնում էր. «Տէր Աստուած, Դու եղիր մեր պահապանը»:

Այսպէս նա բոլորովին անջատուած էր տանից: Միշտ լուս էր, Երբէք չէր նայում մօրս աչքերին: Մեղ՝ երեխաներիս չէր փաղաքում, ոչ կրբարկանար, ոչ էլ սիրելի խօսք կ'ասէր, Միշտ փախչում էր տանից: Միայն փող ինչքան առևս՝ միշտ տալիս էր, Եթէ երբեմն խնդրէինք փող քարեգրիչ գնելու համար, մի ալէտա (20 կոպ.) կըտար: Ուտեղու համար կըգնէր ամենալաւ բաները, ինչ որ կար քաղաքում: Ուսումնաբանում իմ շորերը ամենից լաւն էին: Կրկին իմ զրուժիւնս վատ էր լինում, երբ նայում էի մօրս ու քրոջս վերայ. Նոքա կարծես, թէ ծերացել էին, գունատուել էին, տիսոր ու լուրջ էին: Ոչ մի տեղ չէին գնում, գուցէ տօներին մէկին գնային, այն ևս ականայ. Նոցա մօտ կանանցից շատ քիչ եկող—էր լինում, միայն տղամարդիկ էին գալիս, այն էլ «անպիտաններ» և «անգործներ», ինչպէս մայրս էր նոցա անուանում: Խանութում՝ համարեա առեւտուր չկար:

Միջնէ ես,—ասում էր հայրս,—ստիպուած կը լինիմ՝ մէկին ժառայութիւն անել. Ոչ, դորա համար ջչուղներ կան. —Մայրս էլ իրաւոնք չունէր բերանից մի խօսք թողնելու. Մի օր, պատմում էր մայրս, հայրս ասում է մօրս.

—Լսում ես, մի անգամ ընդ միշտ հասկացիր, քեզ սերբերէն եմ ասում. եթէ մի անգամ էլ գու դորա մասին մի խօսք արտասանես, ես ինձ համար բնակարան կը գտնեմ և կը տեղափոխուեմ այնտեղ իսկ գու այստեղ խրատ կարդա, ո՞ւ որ ուղում ես. Լաւ, յի-ի-շիր:

Խեղճ մայրս քարի պէս լուռ ու մունջ է մնում: Ճմլում է սիրու, օրէ ցօր մաշվում է, բայց կրկն աղօթում է Աստուծուն. «Աստուած իմ, մի՛ թողնիր ինձ»:

Ե՛ջ, երեկի, դուք ինքներդ արդէն նախագուշակում էք, թէ ինչ պիտի լինի:

Մի օր երեկոյեան նորա բոլորերեան եկան: Նոցա հետ եկաւ և մի ոմն Պետոր Զելենրաչչ որ խողավաճառ էր և իրրե թէ «Պեշսի հետ գործ ունէր»: Նորա բեխերը ցցուած էին, մազերը յետ սանրած, քունքի մազերը երկայն, Նորա երեսը հաստ էր, ինքը գէր. գլխին ծուռ դրել էր մի ինչ որ գլխարկ: Մատին այնպիսի մի մատանի էր փայլում, որ նայել մինչև անգամ չէր կարելի: Ման էր գալիս՝ մի կողքից միւս կողքի վերայ ընկնելով: Ճայնը խոպոտ էր ու կոպիտ, և անդադար ծիծաղում էր իւր փոքրիկ, արօտի պէս կանաչ, աչքերով: Դորան տեմնելուց մարդ այնպէս վախենում էր, որ կարծես, թէ գայլ է տեսել:

Այսպէս, դոքա եկան: Ստուանն իսկդն մօտեցաւ կրակին սուրճ պատրաստելու:

Չորս ճրագ վառեցին, Ծխելով այնպէս մուխ բարձրացրին, ասես, ծիննելուզլց լինի մուխ բարձրանում: Տաճկի պէս լուս սուրճ էին խմում, և թղթերի շշիւնն էր լսկում և ոսկիների զեզզնկոցը:

Դա սարսափելի գիշեր էր:

Մօրս հետ փակուեցանիք միւս սենեակում: Նա պյլ ևս լաց չէր լինում: Քոյլը նշյապէս: Նոցա զէկիերը մաշտած էին, աշքերը խոր ընկած, նայում էին այնպէս, ասես, թէ մի բանից սաստիկ վախեցած լինէին: Համեմատած հօրեղքօրս մահին—այս աւելի սարսափելի էր:

Հայրս մի քանի անգամ ներս մոտա մեր սենեակը, Նա բոլորովին քրտնած էր, Քակել էր իւր ցէմաղանի ու շապկի կօ-

Ճակները, երեսում էին կրծքի խիտ սև մաղերը, թուրքի պէս
յօնքերը կիտել էր:

—Տուր էլի, —ասաց նա մօրս,

Ճմշեցաւ մօրս սիրտը, Քարի պէս յուռ՝ բաց է անում սըն-
դուկը և բուռն բուռն փող է տալիս հօրս, իսկ սա կապում է
թաշկինակի մէջ:

Կատաղած նա նայում էր դէս ու դէն, Շտապ-շտապ գը-
նում՝ էր միւս սենեակը, իսկը այնպէս, ինչպէս և ես, երբ ինձ
սպասում էին բակում ընկերներս, իսկ ես կանգնած սպասում
եմ, երբ քզրս ինձ համար հաց կըկտրէ, հայրս առնում էր փո-
ղը, գլուխը թեքում էր դէպի միւս կողմը և գնալու ժամանակ,
ասես, ինքն իրեն շշնչում էր. «Միայն այսքան» և իսկոյն փախ-
չում էր սենեակից:

Բայց «միայն այս»... Այսպէս, կարծեմ; Հինգ անգամ մտաւ
մեր սենեակը, և հինգերորդ անգամ՝ զիշերուայ երեք ժամին մօտ,

—Տուր, —ասում է մօրս, իսկ մօրս դէմքը հողի գոյն էր
ստացել:

Մայրս հազիւ հաղ ոտները քարշելով և թուլացած մօ-
տենում է սնդուկին:

Անցեալ անգամ ես նկատեցի, ինչպէս իմ հայրը, այդ մեծ
մարդը, տատանուեց և հնոցին յենու եցաւ:

—Շուտ, —ասում է նա մօրս, անդադար շարժուելով և
երեսի քրտինքը սրբելով:

Մայրս տալիս է:

—Տուր րոլորը, —ասում է նա:

—Վերջին տասը օսկին է, —պատասխանում է մայրս. Մօրս
ձայնը ոչ ձայնի էր նման, ոչ էլ շշունջի, այլ ճգնաժամի ճիչ
էր յիշեցնում:

Այդ փողն էլ նա առաւ և իսկապէս փախաւ սենեակից:

Մայրս ուշամասի ընկաւ մնիուկի մօտ, Քզրս աղաղակեց,
ես վեր թռայ անկողմիցս. վեր թռաւ և Գրիշան, Նսոսնիք մենք
յատակի վլրայ մեր մօր մօտ, համրուրում էինք նորա ձեռները,
«Մայրիկ, մայրիկ» բացականշելով:

Նա ձեռը գլխին գրեց և մի բան շնչեց. Յետոյ վեր թը-
ռաւ տեղից, վառեց մոմը և լուսաւորեց ո. Գէորգի առաջ կա-
խած կանթեղը:

—Գնացէք, որդիքս, աղօթեցէք Աստուծուն, որ նա փրկէ

Ճեղ փորձանքից, —ասաց նա. Նորա ձայնը հնչում՝ էր, որպէս մի զանգակ, խակ աչքերը փայլում էին, ինչպէս երեկոյեան աստղ երկնքում:

Մենք ամենքս ծնկաչոք պատկերի առաջ աղօթում էինք, իսկ Գրիշան մօրս առաջ, երեսը նորան դարձրած, խաչակնքում՝ էր երեսը և կիսաճայն ասում «Հայր մեր»ը, որ արդէն սովորել էր. Յետոյ էլի խաչակնքում էր և համբուրում մօրս ձեռները, և կրկին նայում էր նորան. Մօրս աչքերից յորդառաս արցունք էր թափում: Նա աչքերը սեռուել էր սրբի և երկնքի վերայ, Այնտեղ երկնքում մի բան կար, որ նա տեսնում էր. այնտեղ նորա Աստուածն էր, որի վերայ նայում էր մայրս և նա—մօրս վերայ: Եւ այն ժամանակ մօրս երեսին երեսում էր մի տեսակ երջանկութիւն. ինձ թւում էր, թէ Աստուած շվեց նորան ձեռքով, թէ ժապաց սուրբը, և թէ նորա նիզակի տակին վիշապը բացեց իւր բերանել. Յետոյ աչքերս մղնեցան, և ես երեսի վերայ ընկայ նորա ձախ ձեռքի և շորի վերայ, որով նա բռնում էր ինձ, և ես աղօթում էի, հարիւրերորդ անգամ կրկնելով: «Աստուած, Դու տեսնում ես իմ մօրը. Աստուած, աղօթում եմ Քեղ Հօրս համար!» և յետոյ, չգիտեմ, թէ ինչու, շարունակում էի. «Աստուած, սպանիր այդ Զելէնբաշին»:

Երկար ժամանակ մենք այդպէս աղօթում էինք:

Յետոյ մայրս վեր կացաւ, րարձրացաւ աթոռի վերայ և համբուրեց ս. Գէորգի պատկերը: Մի և նոյնը արաւ և քսրս, իսկ յետոյ բարձրացրեց ինձ և ապա Գրիշային, և մենք նոյնպէս համբուրեցինք, Յետոյ մայրս առաւ պատկերի յետեւում զըրած ու հանի փունջը և օրհնած ջրի շեշը, որ պատկերի տակ կախ էր արած, թրջեց այդ ջրով ու հանը և մի բան միմնջելով՝ սրսկեց սենեակը: Յետոյ կանացուկ դուռը բաց արաւ, ոսի ծայրերով մատեցաւ մեծ սենեակին և սրսկեց նորա գռները:

Ա՞ն, որքան լաւ էի ես այն ժամանակ, որպիսի երջանկութիւն էի զգում՝ ես այն ժամանակ, ասես թէ, բոլոր վշտերից աղատուած լինէի: Ինչու համար ես այժմ այդ տեսակ բան չեմ կարողանում զգալ?!

Հէնց որ մայրս սրսկեց մեծ սենեակի դռները, ներսում աղաղակ բարձրացաւ, Ոչինչ չէր կարելի որոշել միայն լսվում էր, ինչպէս Զելէնբաշը գոշում էր.

—Եւ ՞վ է կարող ստիպել ինձ, որ երկար խաղամ: Ո՞վ:

Էլի անորոշ աղմուկ ու կոխ բարձրացաւ, Յետոյ մենք լսեցինք բացուող գոնի ճռնչննը, մրժմրժոց և քայլերի ձայն:

Բայց հպարտ ներս չմտաւ մեր սենեակը, Մենք ի զուր էինք սպասում: Արդէն լուսացել էր, որ ես ու Գրիշան քննցինք, իսկ հպարտ չկար:

Երբ ես զարթեցայ, արեգակը արդէն բաւականին բարձր էր, ես սաստիկ յօփնած ու ջարդուած էի, բայց կրկին աչքերս խփել չէի կարողանում—ես վեր կացայ:

Ամեն բան ինձ հանդիսաւոր էր մեռում և տիտուր: Դուրսը հանդարտ էր: Արեգակի պայծառ ճառագայթները պատուհանից ներս էին թափանցում: բայց կանթեղի բոյը դեռ տատանվում էր պատկերի առաջ: Մպյրս ու քայրս բոլորովին գունատ էին, աչքերը թաց, գէմքերը մոմի պէս գեղին. ձեռքերը կոտրատում էին, կամաց-կամաց ման էին գալիս, չէին խօսում, և միայն աղօմքներ էին մրմնջում: Այդ օրը մենք շնախաճաշեցինք, չհարցին էլ քաղցած ինք, թէ ոչ, մինչեւ անգամ՝ մայրս ինձ ուսումնարան էլ չուղարկեց:

—Այս ի՞նչ է նշանակում,—հարցնում էի ինքս ինձ: —Կամ՝ մեր տանը ննջեցեալ կայ, կամ՝ իմ հանգուցեալ հօրեղբայրս վերադարձել է և այժմ՝ նորից պիտի թաղենք:

Ես բոլորովին սարսում էի. Երբ յիշում էի գիշերուայ եղածը, և բոլորովին մեքենայաբար մրմնջում էի. «Աստուած, փրկէ հօրս»: Եւ կրկին. «Աստուած, սպանիր այդ Զելնկաաչին»:

Առանց մոտածելու ես հագայ շորերս և գուրս եկայ սենեակից: Ակամայ ես քայլերս ուղղեցի դէպի մեծ սենեակը, բայց խկոյն կանգ առայ, որովհետև զբացի, որ մայրս ձեռքից բռնել է:

Ես յետ նայեցի, բայց նա ոչ մի խօսք չասաց, և միայն մատը շըմունքին դրեց, յետոյ տարաւ ինձ մինչ գուրս գալու գուռը և թողեց. Նա վերադարձաւ դէպի սենեակը, ևսկ ես կանգնած էի գուան մօտ: Նայում եմ նորա յետելց, բայց ինքս չեմ իմանում: Թէ ինչ մտածեմ:

Յետոյ ես կամաց-կամաց մօտեցայ մեծ սենեակին և ձեղքից նայեցի:

Սենեակի մէջ տեղում դրած է մի սեղան: Նորա մօտ դըրած են աթոռներ, որոնցից երկու-երեքը վայր էին ընկած: Թա-

տակի վերայ անթիւ թղթեր էին ցիր ու ցան եղած, ծխախոտի կտորտանկը ու մնացորդներ, սրճի մի կոտրած թաս, իսկ մի թղթի տակից երեսում է մի ոսկի: Սփռոցը կիսով չափ սեղանի վրայից քաշուած էր, Սեղանի վերայ թղթերը ցիր ու ցան էին, թասերը շուռ տուած, ամեն տեղ կտորտանկը և ծխախոտի աճիւն: Մի քանի ափսէ էլ կար, որոնցից մէկում թափել էին ծխամորճից ծխախոտ: Չորս գատարկ աշտանակ կար. մէկի վերայ վառվում էր մոնի մնացորդը հաստ թղթի հետ, և մուբ ծուխը զէպի առաստանը էր բարձրանում:

Սեղանի մօտ, աթոռի վերայ նասած էր հայրս՝ մէջքը գէպի գուռը գարձրած: Նա երկու ձեռը զրել էր սեղանի վերայ, զլուխն էլ նոյա վերայ և չէր շարժվում:

Երկար նայեցի ես, բայց նա բոլորովին չէր շարժվում: Միայն նկատեցի ես, ինչպէս նորա կողքերը վեր-վեր էին բարձրանում և ցածանում: Մի տարօրինակ և մոայլ միտք ծագեց զընիում: Ինձ թւում էր, օրինակի համար, -բայց, Ճշնարիան ասեմ, ինքս էլ չգիտեմ: թէ ինչու, —թէ նա մեռել է, և ես զարմանում էի, ինչպէս մեռեալը կարող է շունչ քաշել: Յետպէ ինձ թւում էր, թէ պայդ ուժեղ ձեռքը, ասես, փափուկ թղթից լինէր շինած, և թէ նա այլ ևս անկարող էր խփել նորանով—և ուրիշ շատ բաներ էի մոտածում ես:

Նաստած զիտէ, թէ որպան միջոյ ես պիտի նայէի, եթէ կրկին մօրս ձեռքը ինձ չկպչէր: Առանց մի խօսք ասելու, մայրս իւր բարի աչքերով ցոյց տուեց ինձ գուռը:

Զգիտեմ, թէ ինչու, բայց ես գլխարկս հանեցի, համբուրեցի նորա ձեռը և գնացի բակը:

Նարած օր էր:

Երբ ես փողոց դուրս եկայ, մարդիկ անց ու գարձ էին անում: ինչպէս և միշտ,—իւրաքանչիւրը իւր գործով զբաղուած, Բազմաթիւ գիւղացիներ բերել էին շուկայ վաճառելու ամեն տեսակ բան: Ուստիկանները բարձրածայն ցոյց էին տալիս իւրաքանչիւրին սայլ կանգնեցնելու տեղը: Երեխանները կեռաս էին գոզանում: Մրէտա գրագիրը թմրկահարի հետ միասին ման էր գալիս քաղաքում և կարգում այն կարգագրութիւնը, որ արգելում էր խողերին բաց թողնել փողոցներում: Տրիշկան փոնից հանել էր տապակած գառը և կանչում ամբոխը. «Համեցէք, տաք գառը», իսկ հարբած Օսիպը կոխտում էր տիվլը:

— Իսկ ինչու ձեր խանութը փակ է, — Հարցրեց ինձ
դերձակ իգնատը, մօտիցս անցնելիս:

— Այնպէս, — պատասխանեցի ես:

— Հո հիւնդ չէ՞ Դմիտրին:

— Զէ:

— Երեկի, տեղ է գնացել:

— Գիւղ, — պատասխանեցի ես և վաղեցի բակը:

Դորանից յետոյ խեղյն եկան իմ երկու ընկերներս, որոնց
ուզարկել էր մեր վարժապետը իմանալու, թէ ինչու ես չեմ
գնացել ուսումնարան:

Միայն պրյա ժամանակ ես յիշեցի, որ պէտք էր գնացած
ուսումնարան, Առայ մի կտոր հայ, գրքերս, և սկսեց նայել մերթ
մօրս, մերթ ընկերներիս:

— Ասացէք պ. վարժապետին, տղաք, որ Միշան այսօր ա-
ւելի վաղ չէր կարող գալ, որովհետև զբաղուած էր:

Թէ ինչ անց կացաւ այն միջոցին, երբ ես ուսումնարա-
նումն էի — չգիտեմ: Այսինքն գիտեմ, որովհետև ուսումնարանից
վերադառնալուց ամեն բան ես տեսայ պյաղէս, ինչպէս և թողի.
մայրս ու քըրս՝ ձեռքերը ծնկան վերայ դրած, նատած էին. Ճաշ
չէին պատրաստում, ուզի ծայրով անցնում էին մեծ գոնի մօ-
տից և անդադար ախ էին քաշում; — իսկ և իսկ պյաղէս, ինչպէս
հօրեղբօրս մեռած օրը: Գրիշան բակում կապում էր կատուի
ողոչից պղնձի կտոր և այդպէս զուարձանում: Աշակերտները բաճ-
կոն էին կարում իրենց բաժնում, իսկ Ստօեանը ընկել էր արօ-
տի վերայ և մրափում էր, ասես, թէ կէս գիշեր լինէր:

Հայրս զարձեալ նատած էր անշարժ:

Երեկոյեան ժամերը վաղուց արդէն տուել էին: Մթնելու
ժամանակը մօտենում էր, իսկ մեր հօգու մուայլ զրութիւնը ան-
փոփոխ էր և մատակապատ ամպերն աւելի և աւելի թանձրա-
նում էին և չէր երեւում գոյա սահմանը:

Աւելի և աւելի անտանելի, երկիւզալի ու յուսահատ դը-
րութիւն էր ստանում, ամենայն ինչ . . Տէ՛ր, Դու միայն կարող
ես բարին յաջողել . .

Ես նատած էի մեր տան շեմքում: Ձեռիս բռնած ունեի մի
զասագիրք, բայց ես չէի կարդում, Պատուհանի մօտ մօրս գու-
նատ դէմքը ես նկատեցի, նա յենուել էր իւր նիշար ձեռքին:
Ականջիս ձայն լսուեց: Ես չէի կարողանում մտածել:

Յանկարծ սենեակի դուռը բացուեցաւ, Մայրս պատուհանից չեռացաւ, Ես բոլորովին սառեցայ:

Մեծ սենեակի դուռը բացուեցաւ, Շէմքում կանգնած էր նա, իմ հայրը:

Տէ՛ր Աստուած, միմէ սա իմ հայրն է:

Ֆէսը փոքր ինչ յետ էր տարել, մազերը ընկել էին ձա կատի և երեսի վերայ: Բեխերը առաջուայ պէս սրած չէին, դէմքը ծերացած, մժագնած էր: Իսկ աչքերը, աչքերը, բոլորովին նման չէին առաջուայ աչքերին: Նորա աղօտ էին, խոր ընկած, կկոցուած, շարժվում էին դանդաղ հայեացքը անմիտ և անշարժ, ոչինչ չէին որոնում այդ աչքերը և չէին արտայայտում մոտածողութիւն: Նորա երեսին երեւում էր մի տիրամած, բայց փալպառուշ ծիծաղ, —առաջ այդ երբէք չէր լինում: Այդպէս էր նայում հօրեղբայր մահուան ճգնաժամին, երբ խնդրեց, որ իրեն հաղորդեն:

Դանդաղօրէն նա անցաւ նախասենեակի միջով, բացեց մեր սենեակի դուռը, ներս մայրեց միայն դուռիո և, առանց բան ասելու, իսկոյն յետ գարձաւ, ծածկեց դուռը, դուրս եկաւ փողոց և կամաց-կամաց քայլերը ուղղեց դէպի քաւոր Եղիսայի տունը:

Քաւոր Եղիսայի որդին, Թովմանը, յետոյ ինձ պատմեց, թէ իս հայրս և նորու հայրը փակուել էին մի սենեակում, երկար ու կամաց խօսում էին մի բանի մասին, թէ յետոյ նոցա թուզթ ու թանգ տարան, բաներ էին գրում, կնքում և այլն: Իսկ թէ ինչ եղաւ, ինչ էին անում, գա անցայտ է, և երբէք ոչ ոք չի խնայալ:

Երեկոյեան ջ ու կէս ժամն էր. մենք պարկած էինք անկողնում, բայց մեր մայրը նստած էր ձեռքերը ծնկների վերայ դրած և անմիտ հայեացքով նայում ճրադի վերայ: Յանկարծ դրսի դուռը ճռառաց, Մայրս ճրադը հանգըրեց և պարկեց:

Սիրոս այնպէս էր բարախում, ասես, թէ մէկը միջով խփում լինէր կրծքիս:

Դուռը բացուեցաւ, և հպիրս ներս մնաւ, Մի երկու անգամ անց ու զարձ արաւ սենեակի մէջ, առանց վառելու ճրագը, շորերը հանեց և պարկեց, Երկար միջոց ես լսում էի, ինչպէս նա անկողնի մէջ մէկ կողքից միւսի վերայ էր ընկնում, և վերջապէս ինքս էլ քնեցի:

Զդիտեմ, որքան ժամանակ ես քնեցի. բայց յանկարծ ըդգացի, որ ճակատիս մի թաց բան կայ, Բայց եմ անում աչքերս

և նպյում։ լիալուսինը լրւսաւորում էր սենեակը, իսկ նորա գումատ ճառագայթները ընկել էին ուղղակի մօրս երեսին, նորա աչքերը փակ էին, երեսը, ասես, թէ մի ծանր հիւանդի երես լինէր, իսկ կուրծքը ծանր ծանր էր վեր բարձրանում։

Նորա մօտ կանգնած էր հայրս, Աչքերը յառել էր նորա վերայ և չէր շարժվում։

Փոքր ժամանակից նա մօտեցաւ մեր անկողնին, նպյում էր մեզ վերայ, նպյում էր քրոջ վերայ, նորից կանգնեց սենեակի մէջ տեղում, նորից չորս կողմը նայեց և շշնջեց.

—Քնա՛ծ են,—նա ինքը սարսուռ զգաց իւր խօսքերից և բարացած մնաց սենեակի մէջ տեղում, Այսպէս անշարժ նա երկար մնաց, միայն երբեմն նկատելի էր լինում, ինչպէս են փայլում՝ նորա աչքերը, նայելով մերթ մեզ վերայ, մերթ մօրս։

Սակայն մեզանից և ոչ մէկը չկոցեց։

Յետոյ նա կամացուկ մօտեցաւ պատին, աչքը մեզանից չհեռացնելով զգուշութեամբ վեր առաւ արծաթալակատ ատրճանակը, դրեց բաճկոնի տակը, ֆէսը աչքերի վերայ բերեց և շտապով դուրս եկաւ տանից։

Հէնց որ դուռը փակուեցաւ, մայրս իսկոյն վեր կացաւ, վեր կացաւ նոյնպէս և քոյրս, Ուրուականների էին նման։

Մայրս արագ, բայց զգուշութեամբ տեղից վեր կացաւ և մօտեցաւ դուռն, իսկ նորա յետելից և քոյրս։

—Դու մնա՛ երեխայոց հետ, —ասաց նորան մայրս և դուրս եկաւ բակից։

Ես էլ վեր թռայ և գնացի դէպի դուռը, Քոյրս բռնեց ձեռքիցս, բայց դուրս պլիծայ և ասացի։

—Դու մնա՛ երեխայոց հետ։

Բակը որ դուրս եկայ, ես վաղեցի մինչեւ ցանկը և նորա մօտից գնալով՝ բալի ծառերի ստուերի տակ, ես հասայ մինչեւ ջրհորը և նստայ։

Հիանալի գիշեր էր, Պայծառ երկնքում փայլում էր լուսինը, օդը զով էր, ամենայն ինչ անշարժ էր, չէր տատանվում, ես տեսայ, ինչպէս հայրս նայեց ծառաների սենեակի պատուհանը, և իսկոյն շարունակեց իւր ճանապարհը։ Վերջապէս նա կանգնեց ամրարի մօտ և հանեց ատրճանակը։

Սակայն այդ իսկ վայրէեանին, չգիտեմ, ինչ տեղից, նորա մօտ յանկարծակի երեւեցաւ մայրս։

Թալկացաւ հայրս, բւեռել և աչքերը մօրս վերայ և բերանը բաց մնացել:

—Դմիտրի՛, ընկերս, տէ՛րս, այդ ի՞նչ ես անում,

հայրս գողգողաց. Փայտի պէս անշարժ կանգնել էր, անմիտ ու ապուշ հայեացքով նայում էր մօրս վերայ, իսկ ձայնը կոտրած զանգակի ձայնի էր նման.

—Գնա՛, Մարիա, թող ինձ... Ես կորել եմ:

—Ինչպէս թէ կորել ես, սիրելիա, Տէ՛րը քեզ հետ, ի՞նչ ես ասում:

—Ամեն բան տուի, —ասաց նա ձեռքերը տարածելով:

—Դէ՛, թող տանեն, ընկեր իմ, հօ գու էիր նոցա ձեռք բերել:

հայրս մի քայլ յետ գնաց և նայեց մօրս վերայ:

—Ամեն բան, ամեն բան, —ասաց նա, —ամեն բան տուի:

—Դէ՛չ, թող տանեն, —պատասխանեց մայրս:

—Եւ ձի՞ն, —ասում է հայրս:

—Են քոսուը, —պատասխանում է մայրս:

—Եւ մարդ:

—Աստուած նորա հետ:

Նա մօտեցաւ մօրս, նայեց նորա աչքերին, իսկ մայրս սրբի պէս կանգնած էր:

—Եւ տունը, —ասում է նա, աչքերը չուելով:

—Թո՞ղ, —պատասխանում է մայրս, —միայն թէ գու ողջ ու առողջ մնաս:

—Մարիա:

—Դմիտրի՛:

—Ի՞նչ ես ասում, Մարիա:

—Ասում եմ. թող Աստուած պահէ քեզ և մեր որդիերանց. Ոչ տունն, ոչ էլ մարդն էր կերակրում մեզ այլ դու: Մեզանից ոչ գր սոված չի մնալ, քանի դու մեզ հետ կըլինիս: Հայրս, կարծես թէ մոռացութեան մէջ ընկնելով, կրթնեց մօրս ուսին:

—Մարիա, —սկսեց նա, —միթէ դո՞ւ ես... —Արտասուբը խեղդում էին նորան, նա չէր կարողանում խօսել, և նա ծածկելով աչքերը թևերովը, լռեց:

Մայրս բռնեց նորա ձեռփյ:

—Երբ մենք պասկուեցանք, ոչինչ չունեինք, բացի այն վեր-

մակը, մի ամսնը, երկու-երեք տաշտը, իսկ այժմ՝ փառք Աստուծոյ, առևնը լիբն է:

Ես տեսայ, ինչպէս հօրս թեկի տակից վայր ընկաւ արտասուրի մի կաթիլ և փայլեց լուսի ճառագայթների տակ:

—Բայց միթէ դու մոռացել ես վերնատունը, որ լի է գընտորով:

—Եյո՛, այո՛,—ասաց հայրս քնքութեամբ, —թեւրով սրբեց աչքերը և ձեռները ցած թողեց:

—Իսկ իմ գլխի ոսկիները, ինչո՞ւ են հարկաւոր այդ դուկատները, վեր առ առետուրի համար:

—Մենք այդ գործ կ'ածենք ապրելու համար:

—Միթէ մենք այնքան ծեր ենք, Փառք Աստուծոյ, մենք առողջ ենք, առողջ են նոյնպէս և մեր երեխայքը, Աստուծուն աղօթք կ'անենք և կ'աշխատենք:

—Որպիսի աղնիւ մարդիկ են,

—Եւ դու ուրիշների պէս դանդաղկոտ չես, Միայն քո ձեռները ես չեմ փոխիլ Պարանոսովի փողի հետ, թէպէտ նա երկու անգամ էլ շատ լինի:

—Եւ կրկի՞ն մենք ձեռք կըբերենք մի տուն,

—Մեր որդոց համար էլ ճանապարհ կըբանանք, —ասաց մայրս:

—Եւ մեռնելիս նորա չեն անիծիլ ինձ... Քանի՛ ժամանակ է, որ ես նոցա չեմ տեսել:

—Գնա՛, տե՛ս նոցա, —ասաց մայրս և նորան տարաւ ձեռքից բռնած, ինչպէս մի երեխայի: Իսկ ես վազէ-վազ տուն եկայ: Հաղիւ թէ կարողացաց շշնչել քրոջս. —«Մտիր» —և վերմակով ծածկեցի գլուխ:

Նորա ոտ գրին տան շեմքը թէ չէ, եկեղեցու առաւօտեան զանգերը տուին, Գիշերային լուսթեան մէջ բարձրաձայն լսվում էր այդ զանգահարութիւնը և դղոգեցնում էր մարդու հոգին...

—Վեր կաց, թանգագին որդիս, —ասաց մայրս, գնա՛նք ժամ՝ . . .

Երբ ես անցեալ տարի գնացի Բէլգրադ ապրանք գնելու, տեսայ թօփիշիդերում Պեօտր Զելենաւաչին յանցաւորի շորերով. — նա խճուղի էր շինում:



ԳՈՂ ԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ.

Հսմափուեցէք դագաղներից Խըմբովին,
Նուրական Գողթան օրհնեալ երգիշներ,
Եւ մատներով տուէք լեզու լարերին—
Ինչպէս աղքիւր, թո՛ղ կարկաջեն նուագներ:
Կենդանացրէք ձեր համերգով կորովի
Մեր անցեալի փառք ու պարծանք, մեծութիւն.
Մեր առաջև թո՛ղ ժողովուի վաղեմի
Մեր սընրագործ դիւցաղների բազմութիւն:

Օրհներգեցէք նոյա անուն սըրբաղան,
Հայրենիքի անանձնուէր նոյա սէր—
Սրագանայ թո՛ղ հոսանքը մեր արեան,
Հըրգեհի պէս թո՛ղ բորբոքուին մեր սըրտեր:
Վաղուց լըոած ու պապանձուած ձեր քընար
Գէթ մի անգամ էլ չէ հընչել ոգելից,
Եւ անցնում է ձեր համբաւը դարէ-դար—
Մենք զըրկված ենք, անջատուած ենք ձեզանից:

Ուր բամբըոան երբեմըն ձայն էր թընդում,
Ուր որոտում էր և խըրիստ ձեր նուազ,—
Այժըմ այն տեղ մետաղի ձայն է շաշում,
Այն տեղ մեռած է ձեր օրհնեալ յիշատակ.
Եւ անըզգայ և ապառած սըրտերում
Վաղուց հանգած, ցըրտացած է սուրբ կըրակ:

Զեր անցեալիցն այն փառաւոր, թանկազին,
Մեղ միմիայն մընաց չնշին մի ըստուեր . . .
Ո՛չ, յըղեցէք մեղ մի սերունդ նորածին,
Որ մեր մաշված հոգին երգով նորոգէր,
Կամ ինքներըդ ըսթափուեցէք խըմբովին,
Նուիրական Գողթան օրհնեալ երգիչներ:

I. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ.

1888, ԳԵՂՉ. 29.

ՄԱՍԿՈՒՅ.



ՓԻՒՍՈՓԱՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՆ

Ը Ս Տ

Լ Ի Ն Դ Ն Ե Բ Ի.

1. ԱՆՀԱՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ.

Մարդս, ինչպէս միւս զգայարանական էութիւններն, գտնվում է իւր ամբողջ կեանքի ընթացքում բնական զարգացման մէջ, Մարդկային զարգացումն չունի վերջ. այն, ինչ որ վերջ ենք անուանում, զարգացման մի պարբերութեան միւսի փոխադրուելն է, չետեւարար զարգացումն մի անընդհատ փոփոխութիւն, մի յառաջդիմութիւն է, որ տեղի է ունենում աստիճանաբար, ուր առաջին աստիճանը բովանդակում է իւր մէջ երկրորդի սաղմն և սկզբնապատճառն, Չնայելով այդ աստիճանաբար զարգացմանը, ոչ մի անհատ բնութեան ընդհանուր զարգացումից չէ անջատուած, ըստ որում՝ ամրող բնութիւնն իւր բոլոր բովանդակութեամբ, բռնուած է մի ընդհանուր զարգացմանը, այնպէս որ իւրաքանչիւր անհատի զարգացումն ստորագրուած է բնութեան ընդհանուր զարգացման, իւրաքանչիւր անհատի աստիճանաբար զարգացումն կարող է ընդհանուր էլեմենտ պահպանուել, եթէ այդ վերջինը ընդհանուրին չստորագրուեր և նորա հետ փոխադարձ յարաբերութեան մէջ չգտնուէր:

Ընդհանրութեան ազդեցութիւնն անհատի վերայ, այսինքն այն օգնութիւնն և ազդեցութիւնն, որ անհատը իւր շուրջից ստանում է, որպէս զի իւր որոշման կարողանայ հանել, կոչվում է կրկմութիւն (խօսքի ընդարձակ նշանակութեամբ), չիշելով թէ դա կամքի ազդեցութեան ներքոյ է տեղի ունեցել թէ ոչ: Ուրեմն այս տեսակէտից նպյած կրկմութիւնն է անհատի զարգացման ամրող զացումն:

Հ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Բնական զարգացումն ենթարկվում է երկու օրէնքի:

Առաջին՝ տևողութեան օրէնքը. Իւրաքանչիւր կենդանի էակ նախ աշքի առաջ ունի իւր սեփական էռութեան և սեռի յարատեռութիւնը. Սուաջնը պարզ է, երկրորդն արտայայտում է իւր յարատեռութիւնը ժառանգութեան ձեռով այսինքն մի սեռի բնաւորական յատկութիւնների նախորդներից յաջորդներին փոխարինելը:

Երկրորդ՝ փոփիխութեան օրէնքը. Ոչ մի կենդանի էակ չէ կարող իւր չըջակայ ազգեցութեան հաստատ կերպով գիմադրել, որովհետեւ կեանքը մի անընդհատ փոփիխականութիւն է և անհատն իւր էռութիւնն սպաշտապանելով ենթարկվում է գորան. Ըստ այդ օրէնքի չկան աշխարհում երկու համանման առարկաներ:

Եյտ երկու օրէնքն էլ աշխատում են իրար նսեմացնել իւրաքանչիւրի գործունէութիւնը սահմանափակել Եթէ առաջնը լինէր անսահման իշխողն, այն ժամանակ կըտիրէր ընդհանուր անգործունէութիւն, սակայն եթէ երկրորդն առնէր լուծն իւր ձեռք, այն ժամանակ տեղի չէր կարող ունենալ ներդաշնակութիւն և կարգ, մի խօսքով այդ օրէնքն կըստեղծէր ընդհանուր շփոթ (քառու):

3. ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ.

Եյն ամբողջութիւնն, որի մէջ մարդը միւս կենդանի էակների հետ զարգանում է, կոչվում է բնութիւն. Բնութիւն առելով՝ պէտք է հասկանանք այն գործող զյժերի միութիւնը, որ իւր մէջ պարունակում է կարողութիւն զանազան ժամանակի տարածութեան մէջ և զանազան տեղերում տարբեր հետեանքներ ցոյց տալու. Բնութիւնը մի պարզ միութիւն է, չնայելով որ զանազան ժամանակներում և զանազան տեղերում տարբեր ձեռով է իւր բնաւորթիւնն արտայայտում: Նա ազգում է մարդու անհատական զարգացման վերայ, ասել է, թէ կրթում է նորան, Բյուների և անասունների կրթութիւնը կայանում է այս բնական ազգեցութեան մէջ, իսկ մարդկանց կրթութեան գործի մէջ բընութեան այդ ազգեցութիւնը կազմում է այն հիմնաքարեն, որի վերայ կրթութիւնը (խօսքի սահմանափակ մաքով) նախ չի-

նութիւնն է կայացնում և ապա բնութեան ազդեցութիւնը սահմանափակում: Բնութիւնը կրթում է անհատներին համաձայն բնական զարգացման վերսիշեալ երկու օրէնքներին: Բայ առաջինի՝ ժառանգվում են սեռական յատկութիւնները սերնդից սերունդ, ըստ երկրորդի՝ երեան են դալիս նոյն սերնդի շրջանում այլ անհատական յատկութիւններ:

Բնութիւնը ոչ թէ կրթում է միայն իւր անհատներին, այլ և այդ վերջինների տեսակների ամրող շարքերն, ինչպէս ապացուցանում է Դարվինը: Ոչ թէ Դարվինն է զարգացման թէորեայի (Entwickelungslehre, տեսութիւն) և գլխաւորապէս այդ վերսիշեալի այն մասի ստեղծովն, որ կոչվում է Descendenz theorie, այլ նորա նախորդ Լամարկն, որի կարծիքով օրդանիզմների տեսակներն և սեռներն ոչ թէ զանազան ծնողներից են ծագել, այլ մէկը միւսից է յառաջացել: Ի սկզբանէ պէտք է միայն բոլորովն հասարակ բցյսեր և անասուններ եղած լինին: Կհանքի պայմանների զանազանութիւնը և գլխաւորապէս անդամների գործունէութիւնն է եղել այն սկզբնապատճառն, որ զանազան օրդանիզմներ փոփոխութիւնների են ենթարկուել, Լամարկն արդէն ապացուցանում է օրդանիզմների աստիճանաբար զարգացումն երկու հակառակ օրէնքների աղդեցութեամբ: Համաձայնութիւնը կայանեում է նորա մէջ որ արտաքին աշխարհի անընդհատ և աստիճանաբար փոփոխութիւնը յառաջացնում է օրդանիզմների գործունէութեան և ձեռքի մէջ նման փոփոխութիւններ: Այս գեղքում պէտք է շեշտել սովորութիւնը: Օրինակի համար ընձուղտի երկար վեզը նորանից է յառաջացել որ նա միշտ բարձր ծառերի տակ ապրելով խը գլուխը ու զղել է միշտ գէպի վեր ճիւղեր պոկելու: Ապա տարբերուող յատկութիւնները ժառանգութեան պառուղ են: Մինչեւ անգամ այն համարձակ ուսմունքն, թէ մարգս կապից է յառաջացել, Լամարկի տրանսգրանութեան արդինքն է: Այդ ուսմունքը նորանից է յառաջացել, որ կապկի դունչը դուրս չէ պրճնում, ինչպէս միւս անասուններինն է և հետեւի երկու ձեռքերն աւելի հատարելագործուած են և զարգացած ոտների տեղ են տալիս: Նորա ուղիղ գնացքը ոչ թէ միայն հեշտացնում է իւր շրջակայքի վերայ մի ընդհանուր հայեցք ձգել, այլ նաև գիտել այդ տարածութեան վերայ գրտնուող իրերն: Այդպիսով սկզբնական մարդս պէտք է իւր շրջի իրերի և միւս օրդանիզմների վերայ իշխանութիւն ձեռք բերելու

Համար իւր նմանների հետ մի ընկերութեան առիթ տուած լինի, որի միջոցով պէտք է սկսած լինի լեզուի, մարդկային ճշմարիտ զարգացման շարժառթի զարգացումն:

Դարվինի արժեքն այն է, որ նա Լամարկի գրեթէ անհիմ «Evolutionstheorie» նորից հետազոտում՝ և աւելի զօրեղ փաստերի վերայ հիմնում: Դարվինի անասունների և բոյսերի վերայ արած գիտողութիւններն և փորձերն առիթ եղան, որ գիտնական աշխարհն այդ թէորիան աւելի լուրջ ուսումնասիրութեան ենթարկեց, որի հետեամբն այն եղաւ, որ բնական գիտութեանց ու փիլիսոփայութեան մէջ մի տեսակ կերպարանափոխութիւն և ձևակերպութիւն տեղի ունեցաւ:

Ժառանգականութեան միջոցով բնութիւնը փոխադրում՝ ծնողաց բոլոր յատկութիւններն յաջորդներին, ի հարկէ յորպիս այսինքն սաղմի ձևով: Այդ սաղմը զարգանում՝ որպէս յատկութիւն, կամ՝ մնում է անվարգացած զրութեան մէջ և ոչ մի աչքի ընկնող յատկութիւնների առիթ չէ տալիս: Այդ անզարգացող գրութիւնը կարող է մինչև անգամ սերնդից սերունդ տևել և ապա մի քանի սերունդից յետոյ երևան գալ: Այս գործողութիւնը կոչվում է Atavismus.

Մի և նոյն տեսակի զանազան անհատներն այս ձևով կարող են շատ անհատական յատկութիւններ իրենց ժառանգների մէջ յառաջացնել: Այսպիսով տեսակներն կարող են կրկին տեսակների բաժաննել և ամենովզ մի նոր տեսակների շարքի ծրնունդ տալ: Միայն այն ժամանակ է ստանում իւրաքանչիւր անհատ գոյութեան կոռու համար որոշ յարմարութիւններ, երբ փոփոխութիւնը կեանքի փոփոխութեանց համաձայնում է: Դուրսնից յետոյ յաճախ է տեղի ունենում, որ մի որ և իցէ տեսակի բաժանմունքներից մէկն միւսների վերայ յաղթող է հանգիսանում և դորա մէջ սկսվում է անհատական սկզբնական բնաւորութիւնը նշանաւուել: Որն և մի և նոյն ժամանակ դառնում է տեսակի բնաւորութիւն:

Չնայելով որ բնութեան կրթութիւնը անդիտակցարար է տեղի ունենում, նա այնպէս յարատե է և քաջ ծանօթ իւր հետեանքներին, որ դորան ենթարկուող բոլոր օրգանիզմներն անսկատելի կերպով գարերի ընթացքում շեղվում են իրենց բնական յատկութիւններից: Այդ բնական կրթութիւնը զանազան վում է միւս կրթութիւնից (իուզի սահմանադրակ նշանակու-

թեամբ) նորանով, որ առաջինը տևում է անհատի ամրող կեանքի ընթացքում, մինչդեռ երկրորդը հաղիւ անհատի կեանքի կէսը:

4. ԲՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷ՛Ս Է ԿՐԹՈՒՄ.

Բնութիւնը կրթում է իւրաքանչըսր անհատին մասամբ այն ներքին յատկութիւնների միջոցով, որ ինքն ի սկզբանէ նորան շնորհել է, մասամբ արտաքին գրգիտների միջնորդութեամբ, որոնք այդ ներքին յատկութիւններին գոհունակութիւն են տալիս:

Ներքին յատկութիւններ ասելով, հասկանում ենք մենք այն բոլորն, ինչ որ երեխան իւր հետ աշխարհը է բերել հետեարար իւր ծնողներից ժառանգել: Դոքա զարգացած ոյժեր չեն, պյու զանազան սաղմեր, որոնք բնական օրդանների միջոցաւ արտաքին գրգիտներից գրգուած սակաւ առ սակաւ հոգեկան ոյժերի են ձևակերպվում: Դոքա արտայայտում են իրենց գործունեութիւնը մարմնական կազմակերպութեան միջոցով: Օրինակի համար յիշենք ձկների և թռչունների թերերն, հասարակ օրդանիզմների զգայութեանց եղջիւրները, շարժողութեան ներգերը, ձեռքերն և այլն և գլխաւորապէս ուղեղն, որ մի տեսակ կենտրոնական գործիք է զանազան տպաւորութիւնների մշակման համար: Այս բոլոր գործիքներն նոյնպէս ժառանգում են ծնողներից:

Բնութեան ազգեցութիւնը անհատի վերայ կայանում է այն մոտապատճերների միջոցով, որ մարդ իրեն շրջապատող բը նութիւնից ստանում է և այդ վերջները կազմում են մարդկային հոգու, կեանքի էական տարրներն: Ահաւասիկ այս տեսակտից նայած բնութիւնն մի մեծ թանգարան, մի մեծ բնակերպական սեննեակ և բնալուծական գործավայր է:

Բնութիւնը ամենայն տեղ միանման չէ ազգում: Սառնամանիք հիւսիսի միակողմանի բնութիւնից ստանում է մարդ այլ տպաւորութիւններ, քան իւր բնական հարստութեամբ տաք երկրներից՝ հանդերձ բաղմանեռ, տեսակ-տեսակ անասուններով և բայսերով: Նոյն զանազանութիւնը կարող է մարդ նկատել հիւսիսպին և հարաւային ազգերի բանաստեղծութեանց մէջ, օրինակ Օսմանն ու Դանտէն:

Բնութեան գեղեցիկ փորձերն տեղի չեն ունենում սիստեմատիկաբար, բնութեան «հաւաքածուի» մէջ չկայ սիստեմատիկական դասաւորութիւն, հետեարար բաւականին աշխատանք է

հարկաւոր, եթէ մենք կամենանք բնութեան մատակարարած նիւթեն իշխել, այսինքն մեր հոգու մէջ սիստեմատիկաբար գասաւորել ի՞նչպիսի մեծ նշանակութիւն ունի այդ անմիջական աղբւըներից քաղած մնունքն, թող յիշէ մարդ միայն Ալեքսանդր Ֆ. Հումբողյին և Դարյունին, որոնց ամենամեծ ուսուցիչն ինքը բնութիւնն է եղել:

Բնութեան կրթութեան նպատակը չէ միմեայն կարողութեան ոյժի, այլ մարդու խոչականութեան զարգացումն, որի արտայայտութիւնն է գատողութիւնն ու վիճաբանութիւնը: Բը նութիւնը ոչ մի ժամանակ գոչականութիւն չէ տալիս մարդկային ըղձերին ու զգացումներին, այլ մարդու շատ արդելքներ ու գժուարութիւններ է պատճառում, — նա պահանջում է մարդկային ոյժերի անընդհատ լարումն և զօրեղ պատերազմ: Այս պատերազմը մնում է մարդ բնութեան գեմ իւր խոչունակութեան զէնքով:

Մեծ նշանակութիւն ունի բնութեան զարգացուցիչ ոյժը կամքի համար բարոյական տեսակետոց, որովհետեւ նա ցցց է տալիս մարդու, թէ ինչպէս պէտք է իմաստութեան որոշ օրէնքները գործադրել: Այդ վերջինը տեղի է ունենում բնական վարձատրութիւնների և պատիժների միջոցով, այսինքն մարդկային վարմունքների ձևի բնական հետեւանքների միջնորդութեամբ: Ով չափաւորութեան սահմանը չէ ճանաչում, նորան բնութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է չափաւոր լինել: Ով գոյութեան կարևոր միջոցներն անենպատակ շռայլում է, բնութիւնը նորան նկատում է հրամայողական եղանակով իւր «ես» իշխել սովորել կամ քրտինք թափելով իւր հայր հայթայիթել: Երկուսն էլ բարոյական ազգեցութիւն ունեն մարդու վերայ: Այդ բնական վարձատրութիւնն ու պատիժը այնպէս աղյու և ուժեղ են, որ Ռուսան ու Սպենսերն այս տարրների մէջ են գտնում բարոյական կրթութեան նախատիպը:

Բնութեան կրթութիւնը ոչ թէ միայն իւր ոյժն տարածում է անհատի վերայ, այլ նաև նորա ամրող սեռի վերայ: Այդ տեղի է ունենում գոյութեան կոռու միջնորդութեամբ: Բնութեան կրթութիւնը երեան է գալիս այստեղ անխուսափելի և խիստ կերպով նորա պատիժները վիրաւորով են, որովհետեւ ոչնչացնում, խորտակում են այն ամենը, ինչ որ բնութեան կրթութեան հակառակ է:

Աշաւասիկ բնութեան զարդացոցից ու կրթիչ պյտն, որ գլխաւորապէս փորձնականութեան լայն շըջանի՝ բնութեան իրերի և երեսյթների, նոցա յատկութիւնների և բաղադրութիւնների, նոցա զրավկան և տրամաբանական կապերի, նոցա բարոյական արժողութեանց մէջ է կայանում:

Բնութեան կրթութիւնը աւելի որոշ ու արժանի կողմերունի, քան գաստիարակի բարցական փաստերի վերայ հիմնուած դաստիարակութիւնը: Նախ նա յարատուէ, իւր հետեւանքին տեղեակ, անսաշառ, չէ ճանաչում բացառութիւններ: Ապա նա չէ ծանրաբեռնում սանիկին դրդիոններով և միւս կողմից բոլորովին չէ հետացնում այդ վերջինների ըմբռնումն և իւրացուցումն, այլ նա զարթեցնում է նորա մէջ ինքնագործունէութիւն, որ և մանկալարժաման տեսակէտից նայած՝ աչագին նշանակութիւն ունի: Դժուարութեամբ, բայց ինքնուրցնութեամբ ձեռք բերած փորձերն աւելի խոր արմատ են ձգում մարդուս հոգու մէջ, քան սիստեմատիկաբար մատակարարածք:

Սակայն պէտք չէ մոռանալ, որ բնութեան կրթութիւնը միակողմանի և գաղաքեցնող է, նա շատ զանգաղ է յառաջ քայլում և սանիկին շուտով հոգնեցնում է, եթէ նորա բնական շըջանն արհեստական միջոցով չլայնացնենք, մեծացնենք: Բնութեան կրթութիւնը բաւական չէ մարդուս կրթութեան վերջին և ամենաբարձր աստիճանին հասցնելու համար. այդ վերջինը կարող է վեսասակար լինել, եթէ այն դրդիոններն, որոնք այլևս իրանց մէջ կրթիչ ոյժեր չեն պարունակում, շարունակեն աղդել սանիկի վերայ: Եթէ գպրօցն թողնէր, որ միայն բնութիւնը կրթէր, այն ժամանակ մարդ չէր կարող բարձր զարդացման համեմել այլ կընմաններ նույն լներին ու գնչուներին և այն լուրջ ժողովրդների զաւակներին, որոնք այս կամ այն հանգամանկների ներքոյ բնական դրութեան մէջ այնպէս ամրացնել են, որ նոցա վերայ լուսաւորութեան ճառագայթներն ոչ մի ազդեցութիւն չեն կարողանում անել:

Յ. ԲՆՈՒԹԻՒՆ. ԵՒ ԿԵՆՑԱՂԱԿՐԹՈՒԹԻՒՆ.

Բնական ենք անուանում այն, ինչ որ համապատասխանում է ներկայ հանգամանկներին և կարծես, թէ դորա անշրա-

Ժեշտ հետևանքը լինի, Բնութիւնն է in concreto բոլոր էութիւնների «Հաւաքածու»ն նոցա յատկութիւններով և ձևերով հանգերձ, Բնութիւնն է in abstracto հետևանքների և նպատակների «Հաւաքածու»ն. այն, ինչ որ բնութեան մէջ կայ և պատահում է, պէտք է որոշ նպատակների համապատասխանէ, իսկ պյտք վերջիններն միասին մի այլ՝ աւելի բարձր նպատակի և այլն:

Վերսիշեալ նպատակներն և ամենավերջին նպատակն ենթադրում են մի որոշ գիտակից գործունէութիւն, այդ վերջինը նաև մի գիտակից կամք, որովհետև այդ գործունէութիւնը պէտք է գիտակից լինի մէկ դէպի ինչ բանի է ուղղած, ապա թէ ոչ նպատակայարմար չէր լինիլ.

Եթէ բնութիւնն, որպէս էութիւնների «Հաւաքածու», կազմում է տեսական աշխարհն, ապա այն, ինչ որ երևոյթ է և պէտք է գեռ իրականութիւն ստանայ՝ փորձնական աշխարհը միմիայն կամքի զարգացմանը կարող է իրականութիւն ստանալ, ուստի գա պէտք է կոչուի փորձնական կրթութիւն կամ՝ կենցաղակրթութիւն (kultur), Հետեւարար այն բոլորն, ինչ որ բնական չէ, արհետականն, կենցաղակրթականն է. Կենցաղակրթականը նորանով է բնականից զանազանվում, որ առաջինը նպատակներ ունի, վերջնական նպատակն է ձանաչում, մինչդեռ երկրորդը՝ լոկ պատճառներ. Ահաւասիկ ինչպէս տեսնում ենք կենցաղակրթութեան աշխարհը բոլանդակում է իւր մէջ գիտակից էութիւնների գործունէութիւնն, որոնց կամքն ու գործը հետևում են որոշ նպատակների, աշխարհում գիտակից էակը մարդն է և զլխաւորապէս ընկերական շըշանի մարդը:

Կենցաղակրթութեան ներքոյ in concreto հասկանում ենք այն ամենը, ինչ որ ընկերական մարդուս օրինաւոր գործունէութիւնիցն է յառաջացել ինչպէս օր. բարիքներ, այսինքն մարդկային աշխատանքով ձեռք բերած բնական արդիւնքներ, երկաժուղի, շոգենաւ, զանազան մէքենաներ, զէնք, մնունգ, մարդկային կենակը ապահովեցնելու համար միջոցներ և այլն.

Իսկ իn abstracto կենցաղակրթութեան ներքոյ հասկանում ենք այն բոլոր հոգեկան կարողութիւնը, որով ընկերական զարգացում միջնորդել և արտայայտել կարելի է, օր. համար. լեզու, գործիք, իրաւունք, ազգութիւնք, կառավարութիւն, պետութիւն:

Սորանով՝ պէտք է մենք բաւ ականանք, որովհետև կենցաղակրթութեան և բնութեան մնացեալ որոշմունքները չեն պատկանում մանկավարժութեան, այլ զուտ փիլիսոփայութեան սահմանի մէջ են գտնվում:

6. ԿԵՆՑԱՂԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

Որքան աւելի խոր ենք թափանցում բնութեան էութեան մէջ՝ նոյնքան աւելի ենք նշմարում այդ վերջնի մէջ կարևորութեան սկզբունքը, այն բոլորն, ինչ որ տեղի է ունենում, զանազան պատճառների անհրաժեշտ հետևանքն է: Այս բոլորի վերայ պատասխանատում թիւնը գտնվում է բնութեան ստեղծողի, այսինքն Աստուծոյ ձեռքին: Օրինակի համար, կարծես թէ ամեն ինչ բնութեան մէջ զիտակցաբար է պատահում, անասունները գործում են այնպէս, ինչպէս նորա ներքին բնազդն և արտաքին գրգիռներն են զրդում և ոչ ըստ իւր զիտակցութեան: Նորա չունին իրանց հոգու մէջ գործունելութեան մտապատճեր, չնայելով որ նորա քիչ թէ շատ մտածողական ոյժ ունին:

Ամենառաջն արարածութեան և յարմարագցն ճանապարհն, թէ կեակի և թէ արուեստի մէջ, բնութեան հետ ներդաշնակութեան մէջ գտնուելն է, նորան հետևելն է: «Naturam sequi» խօսքի հետ համաձայն են զանազան փիլիսոփայական գարոցներ՝ ստոիկներից և էպիկուրէններից սկսած մինչև Ռուսան և նոր մատերիալիստներն: Իւրաքանչիւր արուեստաւոր իւր աշակերտին նախ զգուշացնում է բնութեան հաւատարիմ մնալ, հանրածանօթ ճշմարտութիւն է, որ Կոմենտոնն իւր մանկավարժութեան հիմքն է համարում բնականութիւնը:

Բնութեան ամենամեծ նշանակութիւն տուողն Ռուսան է, որ մարդուս միակ ու իսկական կրթիչ միջոցն բնութիւնն է համարում և հէնց այդ հիման վերայ նա պատերազմ է մղում բոլոր կենցաղակրթութեան դէմ: Ի հարկէ ում սիրտը քրիստոնէական սկզբունքներով է մնուել և կրթուել, նա չէ կարող բնութեան կատարեալ հաւատ ընծայել, մարդուս առաջին յանցանքը ինքնուրացութիւնն և այլն ուղղակի փաստեր են բնութեան դէմ պատերազմելու համար: Բայց այդ՝ քրիստոնէական բարոյական փիլիսոփայութիւնը «սիրիք մերձաւորիդ» սկզբունքով

գտնում է մարդուս սրտի մէջ բնութիւնից աւելի վեճմ տարր և որով մարդուս բնութիւնից աւելի վերադասում է,

Ժամանակակից ընկերական գիտութիւնը մի երրորդ ուղղով է չամում՝ նոյն եզրակացութեան.

Մարդկային աշխատութեան և խոհականութեան բոլոր արդիւնքներն՝ երկաթուղի, հեռագիր, նաւ, շոպի, համալսարան և գպրոց և այլն ոչ թէ բնութեան, այլ կենցաղակրթութեան գործերն են, որի վերայ ընկերութիւնը առանց հոգնելու շարունակ աշխատում է, Կենցաղակրթութեան գիրքը նորանով է բարձր, որ նա աշխատութեամբ բնութիւնը յաղթում և իրան ծառայեցնում է, Նորա հետևանքը կատարելագործման տեսակետից գերազանց է և մեր այժմեան ժամանակը հպարտ է գորանով հետեւարար չենք կարող Ռուսացին հետևել և ամրող կենցաղակրթութիւնն ոտնակոխ անել և կրկնեն մարդկային սկզբնական բնական վիճակն ընդունել Մենք չենք կարող այդ անել այն հիման վերայ, որ բարոյական փիլիսոփայութիւնն ըստ կատարելագործման մեղ գաղափարի ընկերութիւնն է մատնացցյ անում,

Բայց և այնպէս չենք կարող կուրօրէն ժամանակակից կենցաղակրթութեան հետևել եթէ կատարելագործման գաղափարը բարոյականութեան ամենով բովանդակութիւնը իւր մէջ պարունակէր, այն ժամանակ կարելի կը լինէր:

Սակայն բարոյական փիլիսոփայութիւնը սովորեցնում է մեղ, որ կատարելագործումն օ փորձնական գաղափարներից մէկն է և այդ օ գաղափարները միասին կազմում են բարոյականութեան բովանդակութիւնը:

7. ՄԱՐԴՈՒՄ ԴԻՐՔԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՒ ՆՈՐԱ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ.

Մարդս զանազանվում է չասարակ կենդանիներից նորանով, որ նա մի օրոշ աստիճան ազատութիւն է վայելում։ Պարզ է, որ անասունը ի սկիզբանէ հետևում է բնականութեան, այսինքն այն բնազդման, որ բնութիւնը նորան շնորհել է, Այդ ներքին զօրութեան յաջորդում է անմիջապէս և անհրաժեշտ, մի և նոյն ժամանակ անդիտակցարար, արտաքին շարժում, որ կամքի արտայայտութիւնն է։ Այսպիսի շարժողութիւններ պատահում են նաև մարդկանց հետ, օր. չամար, մարդ իւր ձեռքն

առանց մոտածելու, անդիտակցարար մեկնում՝ և քշում՝ է, երբ մի ժամանակ նորա երեսին ման է գալիս, Անապատների մէջ տեղի չէ ունենում մոտապատկերների զիտակցութիւնը. Այլ տեսակ է մարդկային հոգեկան կեանքը. Այդ վերջինի մէջ երկու ակընթարթ են նկատելի. առաջին՝ իդեալական՝ այն է մոտապատկերն, որ կամքի նպատակն, առարկան, բովանդակութիւնն է կազմում, և երկրորդ՝ իրական՝ այսինքն այն բանը, որ մենք կամենում ենք. Մարդ այդ երկու տարրների մէջ գտնուող ժամանակի տարածութեանը գիտակից է և միացնում է մի ուրիշ տարրով, որ կոչվում է մոտածողութիւն, խոհականութիւն. Մարդ կարող է իւր կամքի նպատակն իրան ներկայացնել, նորանից պարզ մոտապատկեր ունենալ, ուստի և նորա կամքն այս գէպքում պէտք է աղատ կամք անուանենք, որովհետեւ մեր մոտածողական ոյժի զօրութեամբ այն եղրակացութեան ենք համոււմ, որ իւրաքանչիւր զրգիս կամք չէ կարող գտնալ. Մի խօսքով՝ այն կամքն, որ մարդու ինքնագիտակցութիւնից է յառաջնում, կոչվում է աղատ կամք. Կոյր է այն կամքն, որ ինքնագիտակցութիւնից չէ յառաջնական ոյժի քննադատութեան չէ ենթարկուել. Կամքի աղատութիւնն այն կարողութիւնն է, որով մարդ կարողանում է նպատակներից և վերջնական նպատակից մոտապատկեր ստանալ:

8. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆ, ԸՆԿԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԼ.

Կենցալակրթութիւնը մարդկային աղատութեան հետեւանքն է, որովհետեւ եթէ այդ վերջինը չլինէր, մարդ բոլորովին կըստորադրուէր բնութեան:

Նախ մարդ աշխարհ է գալիս բոլորովին անընդունակ և թոյլ, թէ հոգէպէս և թէ ֆիզիկապէս, ինչպէս ծնուած երեխային տեսնում ենք. Ի հարկէ եթէ մանդս ընդհանուր մարդկութեան կեանքի առաջին պարբերութիւնից սկսած բոլորովին բնութեան աղդեցութեան ներքոյ մնար, ինչպէս միւս կենդանի էութիւններն, անտարակոյս կըսկսէր բնութեան հետ յարմարուել և ծնուելուն պէս մի որոշ աստիճան ինքնուրպյնութիւն կունենար. Երեխայի անընդունակութիւնից հետեւում է, որ նա կարօտ է կրթութեան (խօսքի սահմանափակ մոդով), նա անշուշտ կը-

կորչէր, Վանհետանար, եթէ կրթութիւնը նորան իւր գիրկը չընդունէր, այսինքն դեռ զարգացման մէջ ըմբոնուած մի չկազմակերպուած, ոյժ բնութեան բավլաթիւ ազգեցութիւները չսահմանափակէր կամ ոտնակոն չանէր: Այդ զարգացման մէջ ըմբունուած, կաղմակերպուած ոյժն է ընկերութիւնը:

Ընկերութեան կաղմակերպութեամբ ստանում ենք մենք մի նոր կրթական կարողութիւն, որ մի որոշ աստիճան բնութեան տեղն է բոնում: Մարդ կցվում է ընկերութեան, որով քիչ թէ շատ բնութիւնից օտարանում է: Ընկերական կրթութիւնը նորանով է նմանում բնականին, որ նա ևս անգիտակցաբար է տեղի ունենում: Ընկերութիւնը սկսվում է աւելի ամրանալ և զարգանալ, որի շնորհիւ մարդուս զարգացումն էլ այլ ուղղութիւն է ստանում, քան միւս կենդանի էակներինը:

9. ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ.

Ընկերութիւնը կրթում է իւր անհատներին նորանով, որ նորան ենթարկում է իւր կենցաղակրթութեան աղղեցութեան:

Կենցաղակրթութիւնն է ընկերական կրթութեան ձևակերպութիւնը ըստ սովորութեանց և դիտողութեանց, ըստ քաղաքական, կրօնական, կառավարչական կեանքի: Այսպիսի մի ձևակերպութիւն ոչ թէ միակ մարդու և միակ սերնդի, այլ իրար յաջորդող սերունդների ընդհանուր և աստիճանաբար աճող գործն է: Կենցաղակրթութիւնն այս մորով ներկայանում է ընկերութեան իւր ամբողջ կեանքի ընթացքում ստացած կրթութեան պատկերն: Որպէս զի կենցաղակրթութիւնը սերնդից սերունդ իւր գործունէութիւնը շարունակէ, պէտք է իւր հաստատու որոշ ձևերն ունենայ: Ընկերութեան իւրաքանչիւր անդամը կեցաղակրթական տարրների օգնութեամբ յարմարվում է այդ վերջների հետ ակամայ և անգիտակցաբար:

Ընկերութիւնը կրթում է իւր անդամներին երկու ձանապարհով. առաջին՝ ընկերական կաղմակերպութեամբ և երկրորդ՝ ընկերական յարաբերութեամբ:

Առաջին՝ իւրաքանչիւր անդամ ենթարկվում է ընկերական ձևակերպութեան, ըստ որում նա ազդում է առաջին անդամի վերայ իւր արտաքին ձևերով, երկրորդ՝ տալիս է շատ օգնութիւններու երրորդ՝ ներկայանում է որպէս օրինակելի և այդպիսով ազդում

անդամի կամքի վերայ. Զորբարդ՝ երբեմն միջնորդում՝ և երբեմն խանգարում է զանազան ձեակերպութիւններ.

Երկրորդ՝ անդամները սեփականում են իրարից ընկերական ոգին՝ իրար հետ փոխազարձ յարաբերութեան մէջ գտնուելով. Յարաբերութեան ամենառոժեղ միջոցն է լեզուն, որ և ընկերութեան մէջ է իւր սկիզբն առնում, զարգանում, տաշվում, կոկվում. Մենք սովորում ենք խօսել ոչ թէ ուսումնարանում, այլ ընկերական շրջանում և գլխաւորապէս երեխայական հասակում, այյն էլ շատ հեշտութեամբ. Խօսելով սեփականայնում ենք ահազին քանակութեամբ ընկերական գաղափարներ, այդպիսով և կենցաղակրթութիւնը ժառանգում ենք.

10. ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Խօսքի սահմանափակ նշանակութեամբ).

Ինչպէս վերել տեսանք, մարդ աշխարհ է գալիս բոլորովին անօգնական և հասակն առածի աղդեցութեան ներքյ սկսվում են նորա մէջ զանազան ոյժեր զարգանալ:

Մարդկային այսպիսի վիճակն զարգացրել է բոլոր աղքերի և ժողովուրդների մէջ մի տեսակ մանկավարժական փորձնականութիւն, Բայց այդ վերջինը սկզբից հէնց գիտակցարար չէ եղել այլ բնապահական, որը յառաջացել է ծնողների և զաւակների մտերմութիւնից, ուսուցչի և աշակերտի յարաբերութիւնից. Շատ ուշ են սկսում կրթութեան գործի վերայ մտածել. Մանկավարժութեան գործունէութեան հետ սկսում է սակաւ առ սակաւ ընկերանալ մանկավարժութեան տեսական մասը, որն և զբաղվում է կրթութեան նպատակով և միջոցներով. Այդ վերջինը սկզբից շատ գանդաղ քայլեր է անում և տեսում է երկար ժամանակ, մինչև որ գիտակից է լինում, որ կրթութիւնը ինքնուրսյն և ընդհանուր մարդկային պէտք է լինի. Սորանով գառնում է մանկավարժական գործունէութիւնը գիտակցական և նպատակառոշ:

Կրթութիւնն է (խօսքի նեղ մաքով) շափահաս մարդու աղքեցութիւնն անչափահասի վերայ, որպէս զի նորան մի որոշ ընկերական շրջանի մէջ այնպիսի զարգացումն տայ, ինչպիսին պահանջում է ընդհանուր որոշումն.

Կրթութիւնը, ինչպէս վերել նկատեցինք, նոյնքան հին է, որքան կենցաղակրթութիւնը. առաջինի կարողութիւնը զգացու ել

է երկրորդի միջոցաւ։ Հասակն առած անձնաւորութեան ազդեցութիւնն անչափահասների վերայ սկզբում մարմնի մասին է եղել, մինչդեռ հոգու վերայ ազդելն բնութեան գործն էր։ Նոյն իսկ «կրթութիւն» բառն ցցց է տալիս մեզ պարզ, որ դա շատ հին է և մարմնի վերաբերեալ է եղել։ Սակայն սկսում է կրթական գործունէութիւնը իւր ուշադրութիւնը սանիկի ներքինի վերայ դարձնել։ Իսկ այդ գործունէութեան հիմնաքարն է կրթել այն չափահասին այնպէս, ինչպէս հասակն առածն է, ուրիշ խօսքով՝ դաստիարակի մտաւոր և հոգեկան զարգացումը սանիկին տալ ի հարկէ այդ ծնողների գործն է, որոնք օրինակով և յարաբերութեամբ կրթում են իրանց զաւակներին, ինչպէս իրանք են։ Նոյնը կարելի է և այսօր տեսնել, կրթութեան ձեռվ տալիս են ծնողներն իրանց զաւակներին իրանց փորձերը, սովորութիւնները, սկզբունքներն, իրանց յոյսերն ու ձգտումներն։ Այս տեսակէտից նայած կրթութիւնը նմանում է ժառանգութեան, որն ի հարկէ քիչ թէ շատ նաև յառաջդիմութիւն է անում, ըստ որում իրաքանչիւր սերունդ իւր նախորդներից ժառանգածին աւելացնում է այն, ինչ որ իւր սեփական փորձով ձեռք է բերել կամ կատարելագործում է հինը։ Մի խօսքով՝ մարդկութեան այդ պարբերութեան նպատակն է սանիկին զարգացման այն աստիճանին հասցնել ուր ներկայումն դաստիարակն է։ Եթէ կրթութեան նպատակի այս վերջուժումն քննադատութեան ենթարկենք, կըտեսնենք, որ բաւարար չէ, որովհետեւ այդ եղանակով ոչ թէ միմիպայն ծնողաց առաւելութիւններն և առաքինութիւններն կըտառանդեն որդիքն, այլ նաև նոցա թերութիւններն և սիսալմունքներն, այդպիսով՝ փոխանակ այդ վերջիններն ոչընչացնելու, կարող են սերնդից սերունդ տևելով ամուր արմատներ ձգել։ Բացի դրան պէտք է աչքի առաջ ունենալ, որ ուսուցիչն անկարող է իւր սանիկին այս կարճ ժամանակամիջոցում այն մտաւոր աստիճանին հասցնել, որն ինքն աւելի երկար ժամանակի ընթացքում է ձեռք բերել։ Այս բնական կրթութիւնը կարող էր հին ժամանակներում բաւականութիւն տալ, երբ կրթութիւնը և զարգացումն ներ հորիզոն ունէր և սահմանափակվում էր զիտութեանց կոպիտ սկզբնական տարրներով։ Ներկայումն, երբ ընկերական կրթութիւնն անթիւ էութիւններ ընդհանուրի սեփականութիւնն է դարձրել պարզ է որ բնական կրթութեան սկզբնական ձեն այլ ևս չէ կարող բաւականութիւն տալ։ Հե-

տեարար ճշմարիտ կրթութիւնը պէտք է գիտակցական, նպատակարուց գործողութիւն լինի. Այդ վերջինի նպատակն ոչ դաստիարակի անձնաւորութիւնն և ոչ էլ ժամանակակից կամ աղգային կրթութեան ընդհանուր բնաւորութիւնը կարող է լինել որովհետև սանիկը պէտք չէ լինի ուսուցչի պատկերն և իւր ժամանակի պատճեն, չնայելով որ նա իւր ժամանակի ոգւով և իւր ազգի շահէրի համար պէտք է կրթուի. Մարդկային կրթութեան հիմնաքարը չէ կարող այն լինել, ինչ որ ժամանակից և տեղական հայեացակէտից կախումն ունի, այլ այն, ինչ որ մարդուս ընութեան և նորա ընկերական շրջանի մէջ բռնած դիրքի մէջ հիմնուած է: Թէ ինչումն է կայանում այդ հիմնաքարն, կրթութեան վարդապետութիւնը չէ կարող որոշել, այդ վերջինը պէտք է ուրիշ գիտութեան մէջ որոնել, որն և զբաղվում է մարդուս որոշման հետազոտութեամբ. դա է փիլիսոփայութիւնը:

11. ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾԱՀԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ.

Կրթութիւնը (խօսքի սահմանափակնշանակութեամբ) գտընվում է բնականի և կեցաղակրթականի շարբում, որպէս երրորդ ընդհանուր գաղափար: Ի՞նչպիսի ազգեցութիւն կարող է նա սանիկի վերայ ունենալ, ի հարկէ շատ չնչին, եթէ միւս երկու կրթական գաղափարների, այն է՝ ընութեան և կենցաղակրթութեան գէմ պատերազմէր, ըստ որում վերոյիշեալ երկու գաղափարներն ունին բաւականին զօրեղ մանկավարժական պայմաններ և ազգեցութիւններ: Դոցանից իւրաքանչիւրն շրջապատում է անընդհատ սանիկն, մինչդեռ կրթութիւնը (խօսքի սահմանափակ մաքով) յաճախ ընդհատվում է և տեղի ու ժամանակի պայմաններին է ենթարկուած: Կարծ նա չէ կարող բան պլուխ բերել եթէ նա բնութեան և ընկերութեան գէմ գործելու լինի: Բայց պյնուամենային փորձը մեզ ցոյց է տալիս, որ կրթութիւնը շատ բան է կատարում: Վասն զի երեխանները զարգանում են ոչ թէ միմիայն ըստ բնութեան՝ այսինքն ըստ ծնողների, որոնցից նորա յառաջացել են և ըստ շրջակայքի, որտեղ նոքա ապրում են, ոչ թէ ըստ ընկերական շրջանի, այսինքն ըստ կենցաղակրթական տարրների, որոնք փոխագրվում են և ըստ այն մարդկանց, որոնց հետ նոքա յարաբերութեան մէջ են գտնվում, այլ նաև ըստ կրթութեան, որ նորա ստանում են:

Այս երեւցող հակասութիւնն անհետանում է, երբ մենք մոտածում ենք, որ գիտակցութեամբ գործող գաստիարակն այն անգիտակցաբար ազդող կրթական տարրներն, որոնց բնութիւն և կենցաղակրթութիւն ենք անուանում, մինչև մի որոշ աստիճան իշխում, գրեթէ այնպէս մշակում և դոցա կրթութեան նպատակի համար գործադրում է, ինչպէս հմուտ նաւավարն ծովի վերայ առագաստի, կողմնացոյցի և շատ անհրաժեշտ գործիքների միջոցով ստիպում է քամուն, որ նաւին իւր ծառայութիւնը մատուցանէ.

12. ԿՐԹՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԻՑ.

Զկան աշխարհում երկու պյնափիսի անհատներ, որոնք միեւնյն կրթութիւնը ստացած լինեն, որովհետև նախ՝ չունենալով նորա մի և նոյն մարմնական կաղմակերպութիւնը պէտք է իրարից ընդունակութեամբ տարրերուին. Երկրորդ՝ նորա չունենալով թէ բնութեան և թէ ընկերական ըրջանի մէջ մի և նոյն զիրքն ակամայ պէտք է տարրեր տպաւորութիւններ և գրգիւններ իրանց ըրջանից ստանան. Եթէ մինչև անգամ այն ընդհանուր տպաւորութիւններն, որ արտօքին աշխարհից ստանում ենք, միանման լինէին (թէև այդպիսի բան տեղի չէ կարող ունենալ), այնուամենայնիւ պյդ տպաւորութիւնների ըմբռնողութեան ոյժն իւրաքանչյուրի մէջ տարրեր կըլինէր. Մի և նոյն առարկաներն, նայելով թէ մեր գիտակցութեան մէջ ինչ մոտապատկերներ, զգայութիւններ, իղձեր են ներկայ, բոլորովին տարրեր ազդեցութիւն են անում մեզ վերայ. Այս գէպքում թող յիշէ մարդ ըմբռնողութեան ընդունակութեան դանդաղութիւնը, երբ մարդու հոգին խաղաղ է և երբ նա կըքի մէջ է՝ գտնվում. Արտօքին տպաւորութիւնները երբեմն գտնում են մեր գիտակցութեան գոներն բաց և ներս մտնելով միանում են հին մոտապատկերների հետ և այդպիսով տպաւորութիւններն ընդունելով անհետանում են առանց հետքեր թողնելու. Դա կախումն ունի նորանից, թէ որպիսի մոտապատկերներով է մեր գիտակցութիւնը լի, ինչ պիսի զգայութիւններով և ձգտումներով է նա զբաղուած. Անտունը և մինչև մի որոշ աստիճան նաև անդարգացած մարդը իւր մարմնական զգայութիւններից այնպէս է ճնշուած, որ մոտածե-

լու անընդունակ են: Կրթութեան ամենամեծ արուեստականութիւնը նորա մէջն է կայանում, որ մանկան հոգին դաստիարակի մատակարարած նիւթը մատչելի դարձնել:

Նաև պատահական դէպքը սիստեմատիկական դասառութիւնից տարրեր է ազդում: Ժամանակին նկատած մի խօսքն անգամ յաճախ աւելի խոր է թափանցում մարդուս հոգու մէջ, քան մի երկար բարոյական քարող, Սորանից կարելի է եղակացնել պատահական դիպուածքի բարձր նշանակութիւնը կրթութեան դործի մէջ: Մարդկային կեանքը լիբն է այդպիսի դիպուածքներով, որոնք կարող են յաճախ շատ խիստ ներգործել: Առնենք մի քանի օրինակներ: Նելուեցիոսն ապացուցանում է, որ հանձարն յաճախ պատահական դիպուածի միջոցով է երեան եկել: Եթէ այսօր մարդկութիւնն ունի մի Նէքսպիր, դա այն պատահականութեան շնորհչւ է, որ Նէքսպիրը Լորդ Դամիչիրի կենդանաբանակիւթեան այդում հրացանաձգութեան համար ստիպուած էր մի Կոմենդիատի մօտ փախչել, որից և նա շատ բան սովորեց: Առանց այս դէպքի գուցէ մար Նէքսպիրն իւր ամրող կեանքի ընթացքում բրդավաճառ և չդառնար ամենամեծ զրամատիկական բանաստեղծն: Սորա նման անդէմ, սակայն մանկավարժական բարձր նշանակութիւնն ունեցող պատահած դիպուածներն իւրաքանչիւր մարդ իւր կեանքից կարող է յիշել:

13. ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ, ՆՈՐԱ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ.

Սիստեմատիկական կրթութիւնը (խօսքի նեղ մոքով) սկըսվում է կեանքի առաջին պարբերութիւնից և տեսում է մինչեւ երիտասարդութիւնը:

Կրթութեան գործունեութիւնը սկսում է սակաւ առ սակաւ նուազել ինչպէս մարմնական աճումն. երեխան քիչ տարիներից յետոյ հասնում է իւր ապագայ հասակի կէսին և ապա սկսում է դանդաղ աճել: Հոգու զարգացումն տեղի է ունենում կեանքի սկզբում աւելի արագ, և աւելի մեծ նշանակութիւն ունի նորա կեանքի ապագայ զարգացման համար: Սիսալ չէ ասում այս դէպքում Ժան Պաուլ, «որ մարդ իւր կեանքի առաջին երեք տարիներում աւելի է սովորում», քան իւր երեք ձեմարանական տարիներում»: Հետեւաբար քանի վաղ սկսենք կրթել

մեր մանուկներին, նոյնքան աւելի ազգու կըլինի նա, կրթութեան ներգործութիւնը առաջն տարիներում այնպէս խոր արմատներ է ձգում, որ դոքա վերջ ի վերջոյ երեան են գալիս որպէս անհատի բնաւորութեան էական յատկութիւնները, կըթութեան գործունէութիւնը կարելի է տարբեր պարբերութեանց բաժանել, սակայն դոքա պէտք է բնական լինին, Այդպիսի պարբերութիւններն են, օրինակի համար, երեխայի ծննդեան օրից մինչև ատամներ փոխելն ևայլն, Այդպիսի բնական պարբերութիւններ կարելի է մարդկային կեանքի մէջ երեքը գտնել:

Առաջին երեխայական հասակն՝ ծնուած օրից մինչև 7 տարին, երկրորդ մանկական հասակն՝ մինչև 14 տարին և երրորդ պատանեկան հասակն մինչև 21 տարին,

Հոգելրանութեան տեսակէտից մարդկային կեանքի այդ երեք պարբերութեանց համապատասխանում են երեք հեգեկան երեսոյթեամբ:

1. Հայեցողութիւն կամ Perception զգայարանքների միջնորդութեամբ:

2. Հում նիւթի հաւաքուիլն և դասաւորուիլն յիշողութեան միջոցով:

3. Այդ վերջիշեալ նիւթի մշակումն խոհականութեան օժանդակութեամբ:

Հոգեկան զարգացման և մանկավարժական գործութեան երեք պարբերութեանց համապատասխանում են կրթութեան երեք գլխաւոր ձևերը.

1. Ընտանեկան կրթութիւն.

2. Դպրոցական կրթութիւն.

3. Կեանքի կրթութիւն:

Ընտանեկան կրթութեան սկզբում սանիկի զիտակցութիւնը ներկայանում է մի անկարգ շիփոթ և սնյայտ է, թէ ինչպիսի ձեւ պէտք է ստանայ իւր զարգացման ընթացքում, որովհետեւ նա իւր թուլութեան պատճառով կատարելապէս ստորագրվում է արտաքին տպաւորութիւններին, Սակայն սակաւ առ սակաւ նորանով է սկսվում մանկան գիտակցութիւնը ձևակերպուել, որ ըմբռնում է աստիճանաբար ոչ թէ միմիայն իւր մերձակայ շուրջը, այլ նաև ընդհանուր յարաբերութեան ամրողջութիւնը, որի ներքոյ է սանիկն աճում, Այդ տեղի է ունենում իւրացուցման, այսինքն այն հոգեկան գործողութեան միջոցով որը յարաբերութեան միջո-

ցով հին մոտապատկերներն նորերի հետ միացնում, կցում է: Որպէս զի այդ վերջինը կատարեալ, այսինքն բազմակողմանի լինի, պէտք է որ հիմնուի նախ սանիկի կեանքի առաջն պարբերութեան մէջ ձեռք բերած փորձերի ու երկրորդ պարբերութեան դպրոցից ստացած մուաւոր հարստութեան վերայ, որ և յիշողութեան միջոցով պահպանվում է: Գործնական մանկավարժութեան համար մեծ նշանակութիւն ունի ուսողական պարբերութիւնը: Այս վերջինում հոգին ըմբռնում է ամեն ինչ հեշտ և ակամայ, ըստ որում նորա ուշադրութիւնը զարթուն է և յիշողութիւնը գտնվում է իւր գործունէութեան ընդունակութեան գագաթնակէտին:

Հայեցողութեան պարբերութեան փորձնական նիւթը մեծ փոփոխութեանց չէ ենթարկվում, բովանդակութեամբ շատ չէ մեծանում, ըստ որում նա իւր շուրջը շատ քիչ նոր առարկաներ է գտնում: Մինչև անգամ այն ամենն, ինչ որ դպրոցն իւր հաւաքածուներով և օժանդակիչ միջոցներով աշակերտներին մատակարարում է, կամ ինչ նոր բան նա ճանապարհորդելիս է տեսնում, այնպիսի բարձր նշանակութիւն չէ կարելի տալ և այնպիսի զօրեղ ներգործութիւն չունի, ինչ որ սանիկն առաջն պարբերութիւնից իւր հետ գպրոց է բերել:

Երկրորդ պարբերութիւնն այն է, որ հաւաքած մտաւոր նիւթն նայէ, կեղտերն մաքրէ, անպէտքն դէն ձգէ, դասաւորէ, որպէս զի ապագայում հոգեկան զարգացման համար գործադրելի լինի: Հոգու բարձրագոյն ոյժերի, զիխաւորապէս խոհականութեան սաղմերն արդէն այս պարբերութեան մէջ սկսում են երեան դալ չնայելով, որ այս աստիճանի վերայ մոտածողական աշխատութիւնը ոչ թէ աշակերտի, այլ ուսուցչի գործն է: Այդ վերջինն ըմբռնում է թէ տրամարտանական և թէ գորան հակասող տարրերը: Նա պահում է իւր հոգու մէջ մոտապատկերների շաբթերն այնպէս, ինչպէս ինքը ստացել է: Ուստի ուսուցչի գըշի խաւոր գործը այն է, որ մասամբ հայեցողութեան նիւթը աշակերտների առաջ գնէ, մասամբ միջանկեալ հարցերով աշակերտի հոգու մէջ մերենայարարը զարգացած մոտապատկերների շաբթերն իրարից անջատէ և սովորածի նշանակութիւնը հաղորդէ: Դորանով զարգանում է աշակերտի ինքնուրոյն դատողութիւնը: ի հարկէ, պէտք է աչքի առաջ ունենալ, որ խօսք պարզ և հասրակ դատողութեանց մասին է, որովհետեւ նա բարդ մտքի

յարաբերութիւններն այս պարբերութեան մէջ մանկարող է ըմբռոնել և առ հասարակ նա գեռ ուրիշ օգնութեան կարօտ է: Այս պարբերութեան մէջ աշակերտը սովորում է և ոչ ուսանում: Որովհետու աշակերտի յիշողութիւնը թարմ և ուժեղ է, ուստի նորա համար հեշտ կը լինի մի երկրորդ լեզու սովորել անթիւ բայսերի և անսառնների անուններն և ձևերն յիշողութեան մէջ պահել, զանազան պատմութիւններ իւրացնել, ամբողջ գիրք անդիր անել և իւր մտաւոր պաշարն օգտաւէտ գիտելիքներով հարստացնել:

Իւրացուցողական մտապատճերների կատարեալ զարգացումը ընաւորութեան ձեռվ երեան է գալիս կրթութեան երրորդ պարբերութեան վերջին: Իւրացուցողական մտապատճերների կատարեալ զարգացման հետևանքն այն է, որ սանիկի ներքինը ձեակերպվում է և զառնում հաստատ ու ինքնուրոյն:

14. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ, ՆՈՐԱ ԱՂԲԻՒՄՆԵՐՆ ԵՒ ԲՆԺԱՆՄՈՒՆՔՆ.

Կրթութիւն վարդապետութիւնը կամ մանկավարժութիւնը մի և նյոն ժամանակ գիտութիւն է և արուեստ (արՏ):

Մանկավարժութիւնը, որպէս արուեստ, նյոնքան հին է, որքան կենցաղակրթութիւնը. ինչպէս վերև յիշեցինք, կրթութիւնը մարդկութեան սկզբնական կեանքի մէջ անգիտակցական գործունեութիւն է եղել: Ուշ է սկսում՝ նա տեսական ընաւորութիւն ստանալ, Առաջին քայլը զանազան մանկավարժական օրէնքների յառաջանալն է, ըստ այդ վերջինների գառնում է մանկավարժական գործունեութիւնը գիտակցական և գորա արդիւնքնեն դպրոցների կաղմակերպութիւնները. Այս պարբերութեան մէջ գործնական մանկավարժութիւնը կայանում է ոչ թէ բացառապէս կրթութեան փորձերի մէջ, այլ հիմնվում է որոշ փորձնականութեան վերայ հիմնուած մի տեսութեան վերայ:

Կրթութիւնն այն աստիճան բաղադրեալ և արտաքին ու ներքին հանգանանքներից կախուած գործ է, որ նորա գիտեական հետազոտութեան համար գործնականութիւնը միայն չէ կարող բաւականութիւն տալ. Մանկավարժական կարիքների համար կարեղ է հիմնաւոր մշակուած գաղափարների մի սիստեմ, որի վերայ պէտք է հիմնուի: Մի այդպիսի սիստեմ գիտութիւնն է: Ա-

հաւասիկ սորանով՝ յառաջանում է գիտնական մանկավարժութիւնը. Մանկավարժութեան գիտութիւն լինելն կամ չլինելն շատերին է զբաղել և զբաղեցնում է մինչև այսօր. Ումանք մանկավարժական բնախոյզ (Naturalist) լինելով, նշանակութիւն չեն տալիս մանկավարժական գործունելութեան և մանկավարժութիւնը տեսականապէս սովորել և սովորեցնել չեն ուզում. Կողան, պարեն, «բիլիարդ» խաղան միմիայն վարժուելով և ոչ տեսականապէս կարելի է սովորել. Նոյնը վերաբերում է նաև մանկավարժութեան.

Այդ վերջիշեալ ուղղութեան ընկերանում է մի պյլ ուղղութիւն, որ թէեւ չէ ուրանում, որ մանկավարժութիւնը պէտք է սովորել և սովորեցնել սակայն չէ ուղղում այդ վերջինը հետեւալ փաստերի հիման վերայ նկանուրոյն համարել. Կրթութեան վարդապետութեան բովանդակութիւնն երկու հարցի է պատասխանում. «Ինչու համար» և «ինչպէս» պէտք է մանկան կրթել. Առաջին հարցի պատասխանը կարելի է բարայական փիլիսոփութեան, իսկ երկրորդին—հոգեբանութեան մէջ գտնելու ուրեմն մանկավարժութեան համար այլ ևս գործ չէ մնում կատարելու. Բացի այդ երկուսը՝ կայ և մի երրորդ ուղղութիւն, որ մանկավարժութեան գիտութիւն լինելը բարորոշին ուրանում է կրթութիւնը մարդկային բնական զարգացման հոսանքի դէմ անզօր համարելով.

Այդ երեք կարծիքներից իւրաքանչիւրը պարունակում է իւր մէջ և ձշմարտութիւն:

Առաջին հայեացքը միպյն այն տեսակէտից է ձշմարիտ, որ մանկավարժութեան մէջ տեսականութիւնը գործնականութեան է հետեւում և կրթութիւնը բաւականութիւն է ստանում անգիտակից և աստիճանաբար կատարելագործուած գործունէութեամբ. Մակայն այս հանգամնիքն չէ ապացուցանում, որ մանկավարժութիւնը աւելորդ է և կարիք չկայ ընդունելու. Հստերկորդի ծիշտ է, որ բարոյական փիլիսոփայութիւնը և հոգեբանութիւնը մանկավարժութեան օժանդակիչ գիտութիւններն են, սակայն չէ ապացուցանում, որ այլ գիտելիքներ չկամ, որ մանկավարժութիւնը գորանով զբաղուէր. Երրորդ ուղղութիւնը իւր մէջ ձշմարտութիւն է պարունակում միպյն այնքան, որ մարդկային զարգացումն առ հասարակ բնական է և մանկավարժութիւնն այդ բնական զարգացումն չէ կարող ոտնակղիս անել:

Մանկավարժութեան գիտութիւն լինելն այն գէպքից կարելի է եղակացնել, որ նորան մատչելի են գիտնական շարժման ենթադրութիւններն, այսինքն սկզբունք և մեթոգ. Թէ արդեօք այդ վերջիններն ինքնուրութեան արդինք են կամ թէ ուրիշ գիտութիւններից են առնուած, այս գէպքում չեն կարող մի ծանրակշիռ նշանակութիւն ունենալ, հակառակ գէպքում ընագիտութիւնը (Փիզիկան օրինակի համար) ևս գիտութիւն չպէտք է համարուէր, ըստ որում նա (մաթեմատիկայի) ուսողութեան վերայ է հիմնվում: Բայց դորան՝ համեմատելով ուրիշ գիտութիւնների հետ պէտք է նաև մանկավարժութեան գիտնական բնաւորութիւն տալ: Եթէ մենք խորհենք կրթութեան նպատակի, միջոցների և պայմանների վերայ, կըմտնենք այլ գիտութիւնների սահմանների մէջ, որոնք վաղուց արդէն ենթարկուել են գիտնական վերլուծման և մանկավարժութեան օժանդակիչ գիտութիւններն են, կրթութեան գործի մէջ պէտք է աչքի առաջ ունենալ մարդուս և նորա որոշումն, իսկ այդ սովորեցնում են մեզ մարդաբանութիւնը խօսքի ընդարձակ նշանակութեամբ և բարոյական փիլիսոփայութիւնը: Բայց դոցա կայ և երրորդ գիտութիւն, որի օժանդակութիւնն ես քիչ չէ, գա է պատմութիւնը (մանկավարժական): Այն էական ձևերն, որի վերայ հիմնվում են գործնական մանկավարժութիւնը, չեն սահմանափակվում ներկայ դրութիւններից, այլ նաև վերաբերում են անցեալ դրութիւններին, ըստ որում առաջինը ուղիղ հասկանալու համար պէտք է երկրորդի հետ համեմատենք: Ներկայի հետազօտութիւնը տանում է մեզ գէպի անցեալը, իսկ այդ վերջինը լիքն է դարերի ընթացքում զանազան հանգամանքների ներքոյ անլինդհատ փոփոխութեան ենթարկուած փորձառութիւններով, որոնք ի միասին կազմում են պատմութիւնը:

Մանկավարժութիւնն որպէս գիտութիւն մարդուս չէ կարող գաստիարակ դարձնել, վասն զի կրթութեան հիմնական գաղափարների գործադրութիւնը այն հանգամանքների ներքոյ, որի մէջ թէ ուսուցիչն և թէ դպրոցն է գանվում, միմիայն գործնականապէս կարելի է ձևոք ըերել: Սակայն գիտնական մանկավարժութիւնը գործնական գաստիարակին շատ անհրաժեշտ է, որովհետեւ նա ուսուցիչն առիթ է տալիս առանց երկար մթութեան մէջ թափառելու իւր սեփական փորձառութիւններն հեշտութեամբ ձևակերպել, հաստատել:

15. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՄԱՍԵՐՆ ԵՒ ԴԻԴԱԿՑԻԿԱ.

Մանկավարժութիւնը ըստ կրթութեան տեսակների՝ կարող ենք մասերի բաժանել: Կրթութիւնը ձգտում է սանիկի ներքինը կրթել և որի ճշմարիտ արտայայտութիւնը կամքն է, սակայն ոչ թէ այն բոպէական անհետացող կամքը, այլ նորա հաստատ տիպը՝ բնաւորութիւնը. Կամքի վերայ ազգեցութիւնը տեղի է ունենում երկու ձանապարհով, անմիջապէս և միջնորդապէս. Անմիջապէս ենք ազգում կամքի վերայ, երբ նորա ուղղութիւնը ջանք ենք գործ գնում զանազան կրթական միջոցներով որոշել ինչպիսիք են վարձատրութիւն, պատիժ և այլն. Իսկ միջնորդութեամբ ենք ազգում սանիկի վերայ այն ժամանակ, երբ աշխատում ենք սանիկի հոգու մէջ ահագին քանակութեամբ մտապատկեներ հաւաքել, որոնց փոխադարձ յարաբերութեանց արդինքը կամքն է:

Մանիկը ձեռք է բերում մոտապատկերներ դասատութեան միջոցով, որ սանիկին ուղղակի չէ կրթում, այլ նախապատրաստում է. Ամեն մի գասատութիւն չէ հառայում կրթութեան, երբ մի գասատութիւն նորանով է սահմանափակուած, որ աշակերտին պատահական նպատակների համար գիտելիքներ և խորհուրդներ տայ, նա չէ կարող կրթիչ ազգեցութիւն ունենալ, որովհետեւ այս տեսակ գասատութիւնը չէ որոշում կամք, ուրիշ խօսքերով, սանիկի անձնաւորութեան վերայ այնպէս չէ ազգում, որ այդ վերջինն իւր ամրոջ գիտակցութեամբ, իւր մտապատկերների բոլոր շաբթերով դասատութեան ենթարկուէր. Դասատութիւնը ազգում է կամքի վերայ այն ժամանակ, երբ սանիկին մատակարարուած նիւթը պարունակում է որոշ կամքի գրգիռներ, Մատապատկերների իւրաքանչիւր շաբթ, որ կազմում է որոշ կամքի շարժառիթը, կոչվում է հարցասիրութիւն (Interesse). Ուրեմն գասատութեան միջոցով կրթում ենք, երբ դասատութեան նիւթի միջոցով սանիկի մէջ հարցասիրութիւն ենք յառաջացնում. Ահաւասիկ ըստ հերբարի սա է կրթական դասատութեան ուսմունքի հիմնաբարը, հետևաբար մանկավարժութեան մասերն են՝ մանկավարժութիւն (խօսքի սահմանափակ մորով) կամ գասատիարակութիւն և դիդակտիկա և դասատութիւն:

Դաստիարակութիւնը գտնվում է գէպի Didaktika-ն նոյն

յարաբերութեան մէջ, ինչպէս կրթութիւնը դէպի դասատուութիւնը: Կրթութեան նպատակներին կարելի է բազմազան ձանապարհներով և միջոցներով հասնել: Երեխային կարելի է կըթել ոչ թէ միմիայն դասատուութեամբ, այլ նաև օրինակով, խորհուրդով՝ վարձատրութեամբ և պատժով, աշխատութեամբ, յարաբերութեամբ և կառավարութեամբ: Դասատուութիւնն էլ վերջիշեալների պէս մի միջոց է, ի հարկէ ամենայարմար և ամենաազդու միջոցն: Թողլ յիշէ մարդ կատարեալ կազմակերպուած գպրոցներն, որովհետև դասատուութեան տաճարն է գպրոցն և կրթութեան գաշտն կեանքը, որի մէջ ընտանիքն և գպրոցն փոքրիկ կղզիների են նմանում: Սանիկը կրթուելով ընտանեկան նեղ շրջանում և գպրոցում, վերջ ի վերջոյ պէտք է փորձնական գործունէութեան անսահման ծովն ընկնի, որպէս զի իւր հոգւոյ մկանուները զօրեղ կեանկի տարրական ոյժերի դէմ կռուելով ամրանեան, Միմիայն այսպիսի պատերազմի միջոցով կարող է սանիկը բնաւորութիւն դառնալ, որի զարգացումը կազմում է կրթութեան ամենապիսաւոր և վերջնական նպատակը: Այժմ պարզ է կրթութեան և դասատուութեան զանազանութիւնը:

Դասատուութեան գործողութիւնը տեղի ունի խիստ որոշ սահմանների մէջ. զանգակն է որոշում նորա ժամի սկիզբն ու վերջը, որն առանց շեղուելու որոշուած կարգապահութիւնից կանոնաւոր կերպիւ կատարվում է: Բոլորովին այլ տեսակ է դաստիարակութեան ընթացքը: Թէև սա սիրով է կցվո մ գպկողի և ընտանեկան կրթութեան, սակայն նա պէտք չէ և չի էլ կարող որոշ սահմանի մէջ մտնել, որովհետև ոչ ընտանիքն, ոչ էլ գպրոցն է սանիկի ապագայ ինքնուրցյն գործունէութեան ասպարէզն, այլ մարդկային ընկերական շրջանի լայնատարած կեանքը: Այս ընկերական շրջանի մէջ պէտք է սանիկն ապագայում իւր ամբողջ գործունէութիւնը նույիքէ, իւր հոգու յաջողութիւնը չափէ, որպէս զի այն միութեան կցուի, որի վերայ ընկերական շրջանի կազմակերպութիւնն է:

Ճշմարիտ մանկավարժութիւնը պէտք է իրական ընկերական շրջանի հանգամանքների հետ ձեռք ձեռքի տուած գնայ, որի մէջ ապագայում սանիկը պէտք է բնաւորութիւն դառնայ և իւր ինքնուրոյն գործունէութեան ծաւալն որոշէ:

16. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ.

Կրթութեան վերլուծումից կարող ենք ստանալ նորա ծրագիրը.—

1. Անհատ, որ պէտք է կրթուի. 2. Նպատակ, որով կը թութիւնը պէտք է տեղի ունենայ. 3. Զե, ինչպէս պէտք է անհատը կրթուի. 4. Տեղական և անձնական յարաբերութիւններ, որոնց ներքյ կրթութիւնը պէտք է գործէ. Այդ հիման վերայ մանկավարժութիւնը բաղկացած է հետևեալ զլուխներից.

I. Հոգեբանութիւն՝ անհատի հոգու կրթիչ վարդապետութիւնը. Սանիկը մի առարկայ չէ, որ լուռ ու մունջ սպասէ, թէ դաստիարակը նորանից ինչ որ ուզում է շննէ, այլ մի անձնաւորութիւն, որ ինքն ըստ ինքնան արդէն ըմբռնուած է բնական և ընկերական շրջանների հանգամանկների և ազգեցութիւնների ներքյ մի որոշ զարգացմամբ, որի վերայ կրթութիւնը պէտք է իւր հիմքը գննէ:

II. Կրթութեան նպատակի վարդապետութիւն, Կրթութեան նպատակը մի կողմից ընդհանուր մարդկային է, միւս կողմից անհատական. Որովհետեւ սանիկն մարդ է և չէ կարող մարդ չլինել նա մի և նյոն ժամանակ մի անհատ է, որ իւր անձնաւորութեան պէտք է տեղական և ժամանակակից որոշ հանգամանկների մի իրական ձևակերպութիւն տայ:

III. Կրթութեան միջոցների վարդապետութիւն. Այդ վերջինը զբաղվում է կրթութեան սկզբունքներով և միջոցներով որոնց Methode ենք անուանում:

IV. Կրթութեան գաղափարների իրականութեան վարդապետութիւնը. Այդ վերջինն աշխատում է կրթութիւնը իրականապէս, տեղային հանգամանքների հիման վերայ, ձևակերպել Որովհետեւ կրթութիւնը մեքենայութիւն չէ, դեղատուն չէ, ուստի նա պէտք է իւր միջոցներն անհատականութեան յարմարեցնէ, որն և կազմում է նորա դժուարութիւնը.

Յ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ.

ԵՐԿՈՒ ՎԱՐԴ.

(Մաքս Վալդաուից.)

Տիոներ, գունատ երկու վարդեր աշա ընկած չոր գետին,
Վշտատոչոր լուռ նայում են գարնան չքնաղ արևին.
Իսկ արել մայր մտնելով, ոսկե ժավիար դէմքին,
Վերջին անգամ փաղաքշում է խղճուկ, թոշնած վարդերին:

—Ինձ մատաղչաս չքնաղ հարսը փայփայում էր իւր կրծքին,
Երբ երջանիկ և անսահման սիրով լի էր նրա հոգին:

—Ինձ խեղճ փեսան պոկեց լալով գառն անջատման րոպէին
Հարսի կրծքից, երբ նա արդէն փշել էր մատաղ իւր հոգին:

Տիոներ, գունատ երկու վարդեր աշա ընկած չոր գետին,
Վշտատոչոր լուռ նայում են գարնան չքնաղ արևին.
Իսկ արել մայր է մտնում. . . խաւար պատում աշխարհին.
Խաւար մահուան պատում է և խղճուկ, թոշնած վարդերին...

Մոսկուա.



ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ.

(Հօբերտ Պրուտցից).

Երբ վաղորդեան մեղմիկ քամին օդն է տատանում,
Զքնաղ, մատղաշ ձկնորսուհին ծովափն է վազում.
Եւ տեսնում է ալիքներից այնտեղ դուրս նետուած
Փայլուն ակներ, մարգարիտներ տապում թափուած.

Նա հրճվում է որպէս մանուկ և լի բերկանքով
Զարդարում է իւր հագուստը գըտած գանձերով.
Մարգարտաշար օղակներով մազեր է հիւսում
Եւ իւր ընկեր աղջիկների նախանձը շարժում։

Եւ նա անհոգ՝ չի մոտածում թէ այդ ըուպէին,
Երբ գանձեր էր նորան բաշխում կատաղի քամին,
Որքան մատաղ նա էակներ կենդանի կլանեց,
Որքան նաւեր յուզուած ծովի յատակն ուղարկեց...

Հնդունիր, ով նազելիդ իմ, և դու սրտաբաց
Սյորուած երգչիս ջերմ երգերը—քեզ նուէր րերան.
Եւ որպէս այն ձկնորսուհին, մոռացի՛ դու էլ
Որ մըրիկն է սրտիս խորքից նոցա դուրս իվել...

19 օգոստ. 1889.
ՄՈԽԿՈՒՄ.



Ե Ւ Գ Ե Ւ .

(Հայնէից).

I.

Ահա նա—անկոչ կաթիլն արցունքիս
Դարձեալ յայտնուեցաւ նա աչքիս միջում...
ՈՇ, միայն նա է Ճնշում խեղճ հոգիս,
Եւ վառ հայեացքս նորից պղտորում:

Նա անտես մընաց իւր ընկերներին—
Նորա չքացան անդարձ, յաւիտեան...
Չքացան որպէս վշտեր դառնագին—
Նոցա չորացրեց քամին գիշերուան:

Եւ այն աստղերը այնքան վառ, չքնաղ՝
Որ այնպէս սիրով այնպէս քաղցրաւէտ
Ինձ բաշխում էին և վիշտ, և ծիծաղ՝
Աւաղ, նորա էլ չքացան անհետ:

Եւ սէրըն անգամ—սէրըս կենսատու
Վաղուց հանգել է իմ սառած պատում.
ՕՇ, շտապի՞ր կաթիլ, շուտ արա և գու
Ընկերներիդ պէս չքացի՞ր օդում...

II.

Պայծառ շողում էր այս մռայլ կեանքում
Խնձ նազելիս պատկերն աննման.
Բայց նա չքացաւ—և խօլ խաւարում
Ես մնացի գարձեալ խեղճ թափառական:

Որպէս մանուկը մուժը տեղ ընկած,
Բարձր երգում է, գոռում է ուժգին,
Որ գոնէ երգով՝ իրեն պաշարած
Ցրուէ երկիւղը, հանգիստ տայ սրտին:

Ո՞չ, այսպէս և ես—մանուկ խղճայի—
Անվերջ երգում եմ խաւարի միջում.
Գուցէ և երգը չէ զուարձալի,
Սակայն նա սրտիս թափիծն է ցրմում:

28 նոյեմբ. 1888.

III.

Գետափին բուսած շուշանը հեղիկ
Քաղցր հայեացքով նայում է երկինք.
Իսկ վառ լուսինը՝ սիրահար, տրտում
Նորան իւր պայծառ համբոյրն է դրկում...

Բայց ահա՛ նորից շուշան—նազելին
Ամօժով աչքը գըցում է ջօրին.
Սակայն և՛ այնտեղ լուսինը նորան
Տիսուր ժըպտում է, որպէս ուրուական...

8 սեպտեմբ. 1889.

ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՑ.

(Ռօբերտ Պրուտցից).

Դու շան տանջեցիր ինձ քո նենդ խաղով,
Օ՛, չար փոթորիկ դառնալէտ կեանքի...
Բայց ահա ոյժըդ ես խորտակելով,
Արդէն պատրաստ կամ նոր պատերազմի.
Ահա փոռում եմ թևերըս յոգնած,
Թոնդեցնում գարձեալ հին երգս ուժգին.
Այո՛, իմ սիրաը դեռ չէ փըշուած,
Դեռ քաջ, արթուն են ոյժերըս նախկին:

Ես չեմ ափսոսում, որ ցաւեր անվերջ
Գլոխս պատեցին ձերմակ մաղերով.
Ի՛նչ փոյթ... Միայն թէ երակներիս մէջ
Հոսէ՛ տաք արիւն, հոսէ՛ եռալով.
Ե՛ւ ես երգեմն զլուխ եմ խոնարհած,
Բայց երբէք հոգով ես չեմ ստրկացել.
Ո՛չ դեռ բազուկիս ոյժը չէ հասած,
Դեռ նա կարող է սուր, զէնք խաղացնել.

Տարիքն անզօր են հայեացքըս պայծառ
Պղտորել վշտի դառն արտասուքով...
Զահիլ է նա միշտ, զուարթ ու կայտառ,
Ով մի վեհ գործի ձգտում է հոգով.
Բայց թէ նորից բաղդն ինձ դաւաճանէ,
Խըլէ ձեռքիցս պլսակն յաղթութեան,
Թող մարտի դաշտում ես ընկնեմ, փոյթ չէ,
Միայն թէ ձեռքիս լինի հրացան... .

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԻՆՉՈՒ ԱՇԽԱՐՀ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԱԾ ԶԵ

(Կօտ-Մուռլիկայից).

Շատ հին ժամանակներում ապրում էր մի անբաղդ մարդ, որին ամենքն էլ «անհանգիստ» էին անուանում:

Եւ իսկապէս նա իւր ամբողջ կեանքում մէկ ըոպէ հանգստութիւն չունէր. միշտ աշխատում էր, կամենալով հանգստութեան և երջանկութեան հասցնել միւս բոլոր մարդկանց:

Վերջապէս նա հասկացաւ, որ զորա համար զիռ բաւական չէ բարի ցանկութիւնն ու անխոնջ աշխատանքը. այլ պէտք է զրանց հետ միասին մարդ ունենայ և ոյժ:

Բայց որովհետեւ այն յիմար ժամանակներում ամեն մի ոյժի աղբիւր համարվում էր առասպելական Արամազդն, այդ պատճառով «անհանգիստ» մարդը դիմեց և այն ոչ թէ ուղղակի նորան, այլ խորամանկնենդաւոր չերմեսին. խնդրեց նորանից, որ թոյլառուութիւն խնդրի Արամազդից ամբողջ աշխարհը բարեկարգելու

բոլոր մարդկանց ընդհանուր բարօրութեան համար: Ի հարկէ, նա ըմսուացաւ կցել իւր խնդրքին վայելուչ հաստատութիւն:

Հերմեսի Արամապղին ներկայանալն այն աստիճանի աջող էր կազմած, որ վերջինս յարգեց խնդիրքը և ստորագրեց. «Հաստատում եմ»:

Անհանգիստ մարդն իսկոյն սկսեց բարեկարգութեան գործը: Նա խորհեց, կշռադատեց և վերջապէս նախատեսեց ամեն բան. ի հարկէ, բացի այն բաներից՝ ինչ անկարելի էր նախատեսնել:

— Ամենքն, — ասաց նա, — կըսկսեն աշխատել իրանց ընդունակութիւնների և հակումների համաձայն:

— Շատ լաւ, — բացականչեց ամբողջ մարդկութիւնը:

Եւ փոքրիկ մարդը պատրաստեց բոլոր պաշտօնների և բոլոր պարապմռնքների կատարեալ ցուցակ. ի հարկէ, այնպիսինների միայն, որոնք կարող են գոյութիւն ունենալ աշխարհում՝ մարդկութեան բարօրութեան. համար: Ամեն մարդ պէտք է գտնէր իւր համար պատշաճ գործուէնութիւն:

Բայց մի պաշտօնի վերայ նա երկար մտածեց:

Այդ պաշտօնը բոլորից ամենակարեօրն էր. և մի ենոյն ժամանակ չափազանց անհամար լին:

Բանը նրանումն է, որ մարդկութիւնը շարունակ ապրում և ապահուում է երկիրը: Առանց գորան նա չի կարող ապրել. բայց որպէս զե երկիրն ու օդը չապականուին, անհրաժեշտ է նոյնպէս նրանց շարունակ մաքրել: Եւ ահա հէնց այդ ամաքրողից պաշտօնի վերայ փոքրիկ մարդը երկար մտածեց:

«Հաւանական է, որ ոչ ոք յանձն չի առնիլ այդ պաշտօնը»: — մտածեց նա և ամբողջ երեք օր՝ խորհեց գործադրանքը: Վերջապէս նա գոչեց. — «Է հէ» և գրեց այսպիսի մի օրէնք.

«Իւրաքանչիւր մարդ, ով կընդունի ամբողջ մարդկութեան համար բոլոր վնասակար բաներ «մաքրողի» պաշտօնը՝ նաև կըվայելի ամենքից կատարեալ յարգանք ու պատիւ և կ'անոււանուի «մարդկութիւնից ընտրուած պիտ» ու «բարեկամ» բոլոր մարդկանց»:

— Ինչպէս, — տեսնելով այդպիսի օրէնք, գոչեցին շատերը, — եթէ բոլոր տխմարներն իրանց յիմար ինքնասիրութիւնն յագեցնելու համար ընդունեն այդ պաշտօնն, այն ժամանակ մենք պէտք է զոհէնք նրանց մեր սեպհական խելացի ինքնասիրութիւնը։ Միթէ դու չգիտես, որ այդ ինքնասիրութեան մէջ կայ մի ահազին ոյժ, որն ուղղութիւն է տալիս բոլոր յառաջդիմութիւններին։

— Ես այդ գիտեմ։ շատ լաւ։ — պատասխանեց «անհանգիստ» մարդը, — բայց ևս կարծեցի, որ ձեր խելացի ինքնասիրութիւնը ներողամտութիւնով կըվերաբերուի գէպի յիմարների ինքնասիրութիւնը։

Այդ բանին ոչ ոք չպատասխանեց։ Ամենքը լեզուները կծեցին ու ցրուեցին։

Անհանգիստ մարդու ուրախութեան չափ չկար։ Տէնց միւս օրը նա սկսեց ամբողջ աշխարհի բարեկարգութեան գործը։ Բոլորին տեղեկութիւն էր տուել այն ամենի մասին՝ ինչ հարկաւոր էր յայտնել և աշխարհի ամեն կողմերից հաւաքուեցին բոլոր մարդիկ աշխարհը բարեկարգելու համար։ Բոլորին էլ առաջարկուեցին սառարագրութեան թղթեր սիւնակներով, որոնց մէջ նշանակուած էին ամեն տիսակ պաշտօններ։ «Բոլոր մարդկութիւնը մաքրողի» պաշտօնը գրուած էր առաջին սիւնեակում։

Եւ հէնց այդ սիւնեակի մէջ ստորագրուեցին ամենքը — բոլորիքեան առանց բացառութեան։

Մի քանիսները նորա համար, որ այդ սիւնեակն

առաջինն էր. կարիք չկար աշխատել ուրիշ սիւնեակ որոնելու: Միւսներն այնտեղ ստորագրուեցին այն պատճառով, որ ցանկանում էին իսկապէս օգտակար լինել: Երբորդը—այն պատճառով, որ սասափկ ցանկանում էր «մարդկութիւնից ընարուած պետ» լինել: Զորբողն—այն պատճառով, որ չէր կամենում յետ մնալ երբորդից: Ճինգերորդը—նմանողութեան և իներցիայի օրէնքով: Վեցերորդը—որովհետեւ այդպէս էր ցանկանում նորա կինը, մօրաքօյրը, զոքանչը և այլն եւ ամենքն էլ այսպիսի պատճառներով...»

Երբ ամենքն ստորագրեցին, այն ժամանակ զարմանքից բերանները բացած՝ միմեանց երեսին նայեցին: Յետոյ սկսեցին ամենքն էլ «զորս զու պատուիրեցեր» հայհոյել փոքրիկ մարդուն: «Թէ ի՞նչու համար նա այսպիսի յիմար պաշտօն է հնարել»:

Ապա ամենքն էլ հայհոյեցին միմեանց, կոուեցին ու ցըռուեցին:

Արամազզը տեսնելով այդ՝ ծիծաղեց թուլացաւ:

Փոքրիկ մարդը խելագարուեց:

Ինկ աշխարհս այնպէս էլ մնաց—մինչև այսօր չըարեկարգուած:

Մ. Տէ՛ր-ԶԱՔԱՐԵԱՆՑ.

Մ Ա Շ Ա Ն.

Մաշան 16 տարեկան էր. նա աւարտել էր օրիորդական գիմնազիոնը և, իբրև հարսափ աղջիկ, ուներ իւր շքչանը: Մաշան շատ գեղեցիկ չէր, բայց համակրելի, մինչեւ անգամ խիստ ախորժելի գէմք ուներ. հայեցքը քաղցր, իսկ աչքերում շարունակ փայլում էր ուրախութիւն. հասակը վայելչակազմ էր, կուրծքը զարգարուած նորահաս ծծելով: Նորան շքչապատում էին ջահիլ երիտասարդները, ինչ տեղ էլ որ լիներ Մաշան, գրաւում էր բոլորի ուշադրութիւնը. նորա առաջ երիտասարդները կոտրավում էին, և ամեն ոք աշխատում էր գիւրեկան հաճոյախօսութեամբ Մաշյի ուշադրութիւնը իւր վերայ գարձնել: Բայց Մաշան, երւում էր, ամենքի գլխի վերայով թաշկինակ էր սողացնում. նոցա սիրաը չկոտրելու համար, իսկ Արտուշին նա սիրում էր սրտանց: Արտուշը այս հասկանում էր, նա, արդէն Մաշյի իւր հետ յաւիտեան կապուելու գրաւականը ստացել էր, նա օրիորդի հաստատամտութեան վերայ այնքան բարձր հաւատ, ուներ, որ ելքէք նորա առաջ կոտրատուղ երիտասարդների՝ Մաշյին հաճոյանալու արած ձեւերի վերայ չէր վերաւորվում: Նա

հասկանում էր, որ Մաշան մի բարակ մաղ ամենքի քթից անցնելով, ծայրին կպցը էր իւր մատը՝ միայն նոցա շարժելու համար: Նա Արտուշին այնքան բարձր սիրով էր սիրում, որին չափ-սահման դնել չէր կարելի:

* * *

Սիմէոն Իլիչ տանը խնջոյք կայ: Հասարակութեան առաջին կարգի մարդիկ հրաւիրուած են այնտեղ: Ժամի 6-ն է, կառքերի անիւների դզրդոցը մայր եկեղեցու փողոցը բռնել է: Սիմէոն Իլիչ տան դրան իջնում և մոխում են ներս: Նախասնեակի մէջ ծառաներ կանգնած հիւրերի մուշտակներն են վերցնում, կրկնակօշեկները տեղաւորում: Հիւրասէր տանտէրը շուտ շուտ տեղեց վեր թռչելով՝ նորից հիւրերի առաջն է վազում՝ ողջունելու ու «բարով եկար» ասելու: Հարուստ կահաւորուած դահլիճը արտաքոյ կարգի լուսաւորուած է: Դահլիճի երկու կարգ քսան և հինգ ճրագեան ջահը իւր լցուը չորս կողմն է սփռել: Մեղանների վերայ վառվում են լապահերներ և աշտանակներ: Դահլիճին կից սենեակներն էլ նոյն կերպ պատրաստ են:

Սիմէոն Իլիչը հարուստ էր. Նա, ինչպէս ժողովը գական առածն է ասում, ոսկին չափով էր. շուր տալսիս, էլ ինչու համար իւր պատրաստին վայել պատրաստութիւն պիտի չափանիք: Մի գործ շարժելով, մի օրուայ մէջ չորս այսպէս խնջոյքի պատրաստութեան արձաթ կարող էր վաստակել: Այսպիսի օրը պիտի փայլէր նա, այսպիսի օրը պիտի ցոյց տար իւր աղայութիւնը, որ մի շաբաթ շարունակ խօսք ու զբիցի նիւթ դառնար. ապա թէ ոչ այլապէս չէր կարելի, շատ պէտքն էր, թէ իւր հարեան Մարտին Լազրիչը ճաշին սովոր է քնում, կամ իւր ընկած չորբաջին իւր ընտանիքով:

լուսնի լուսով է հաց ուստում ճրագ չվառելու համար. իսկ ցուրտ եղանակին, մի ժամանակ իւր նման փայլուն օրեր ունեցողը, թեզակի կամ ուրիշների հնոցի քարածուխի մնացածով է տան ցրառ թիւնը կոտրում ու իրան երիսաներին հաւաքելով միմեանց կողքի միմեանց տաքութիւն հաղորդիլու միջոցին են դիմում։ Կօրտե ը հիմե! հիմա էլ ես պիտի երևիմ այնպէս, ինչպէս մի ժամանակ նոքա էին։ Սիմէոն իլիչը այս ամենը մի բընական բան էր համարում, ձակատագրի պատրաստած, ուրեմն նոցա համար զառաֆետ քաշել որյա յիմարութիւն էր։ Սիմէոն իլիչը հասարակութեան մէջ նոր յայտնուած անձնաւորութիւն էր, նորան հարկաւոր էր երեւել, բայց ի՞նչպէս. խնջոյքներ տալով, մեծածախս սեղաններ պատրաստելով, նա այսպիսի միջոցներով ինքն իրան կարող էր շուտով յայտնի անել և մի օր կարող էր քաղաքային խորհրդի ձայնաւոր ընարուել, մի օր՝ անդում Խորհրդարանի, ուրեմն մի քայլ մնացած կը լինէր քաղաքավիսի պաշտօնին հասնելու։ Այս էլ գժուար բան չէր, բաղզը իրան ժպտում էր, գործերը յաջող էին, օրէ օր հարստանում էր և արգէն նա ընդհանուր ակնածելի աղայ անունը ստացել էր։

Սիմէոն իլիչը գեռ երիտասարդ էր և ուրեմն ինչու համար չպիտի այս բաններն էլ իրազէր, մանաւանդ շատ մեծ ցանկութիւն ունէր իւր պաշտօն վարելովը երեւել քաղաքի մէջ։ Նա հէնց սկիզբը դրել էր. որաեղ նա լինէր, ակմբանոցում, փողոցում, խնջոյքներում իւր կարծիքները յայտնում էր, և ամեն կիրապ ինքն իրան քաղաքի սրտացաւ ու բարիք ցանկացողներից մինն էր ցոյց տալիս։ Նա իւր ժամանակի քաղաքավլիսի գործունէութիւնը պահտարակում էր, ու սորանով կուսակիցներ վաստակում։ Սիմէոն իլիչը խելացի մարդ էր, բաւական էլ ուսումն ստացած, նա հարստանալու

միջոցը գտնելուց յիսոյ, պաշտօների բարձրանալու միջոց գտնելը շատ հեշտ էր համարում, այն ևս ն. քաղաքի մէջ: Նա տեղեց վեր թռաւ, վազեց դէպի դահլիճի դուռը, երկու ձեռքով բռնած եազոր Պաւլօվիչը ձեռքը, ներս հրաւիրեց և առաջին տեղը նստեցրեց: Ծառաները Փրակ հագած՝ չայ էին մասակարարում հրաւիրեալներին, մաքուր հագնուած աղախիները—սուխարի, լիմոն և այլն:

Կհանքը եռում էր, հրաւիրեալների գրեթէ մեծ մասը արդէն եկած էին: Նորեկներին իսկոյն հասցնում էին չայը ամեն պատրաստութիւնով: Սիմէռն իլիչը կինը, Դարիա Նիկիտովնան, իւր կարգին ընդունում էր կին ու աղջեկ և աղջկապատկեր կանանց և երեխն երեռում էր մարդոց մէջ, համեստութեամբ ժպիաը երեխն բարեռում էր այդ մարդոց, ջահիներին ձեռք տալով, իսկ հասակաւորներին՝ որոնց կամենում էր ի հարկէ, ձեռքը համբուրելով: Այսպէս էլ Սիմէռն իլիչը երեխն մտնում էր կանանց բաժինը, քաղցը ժպիտով բարեռում և ամենքի սիրտը՝ շահում: Նա լաւ էր հասկացել կանանց գուր գալու ձեք, և վայ իրան, եթէ ընկնէր կանանց լեզուի տակ, ասու թէ ոչ ցեխը կըկոխէին կըհանէին. բայց նա զիտէր թէ ինչ պիտի անէր:

—Գօսպօձ! թարուրիտի չնախնաք,—ձայն տուեց Պիօսը իվանիչը:

—Հաձէ, վինան աղէկ է, հայտոս բաշլայինք, ինչ ասպէսնակ նստիլ ինք:

—Սիմէռն իլիչ կարտի թղթերը:

—Զանս, շինդի, —ասաց և մի քանի կապ բաց արեց, սեղանները շըջապատողներին բաժանեց, իսկ ինքն անդադար այս սենեակից այն սենեակն էր պտտում, և երբեմն սորանորա կողքին նստում կամ սէյրը անում, և կամ ակլանջայ: Սիմէռն իլիչը երբեմն անցնում էր

կարտ չխաղացողների մօաից, որոնք թւով շատ քիչ էին, 7—10 հոգի։ իսկ միւսները խիստ կերպով խորա-սուլուած էին։ Սիմէոն իլիչը անցաւ կանանց բաժինը, ուր նոքա էլ ընկեր ընկեր եղած, բոլորած էին սեղան-ների շուրջը՝ լուռ ու մունջ նստած, սեղանի վերայ շպրտում կարտի թղթերը և երբեմն սփալուողի վերայ ծիծաղում, թուղթը կարողի վերայ բարկանում, բայց ոչ աղմկալի շնորկ բարձրացնում։ Այստեղ էլ սկսել էին մի տեղ վինտ, մի տեղ թարուրլէտ, մի տեղ ռամս և այլն։ Եթէ դրսեվից նկատող լինէր տան կեանքի և նըս-տողների անշարժութեան վերայ, անշուշտ կըկարծէր թէ մեռելատուն է, քան թէ խնջոյք. բայց ծառանների նպիտակ փողապահներից և նոցա սարգ ու կարգից կա-րելի եր շուտով կարծիքը փոխել և ասել, թէ խնջոյք է և ոչ մեռելատուն։ Զայր խմել էին, կարտը շարունա-կել և մինչեւ անզամ տաքանալու մօաիկացել, և ահա Սիմէոն իլիչը ձայն տուեց.

—Գոսպոда, պүհութեա!—և բօմի շեշը բաց արեց ու բաժակները լցնել տուեց։

Մէկ, երկու, երեք, չորս և մինչեւ ութին պյուհութեան երեսներ և գեռ աւելի ևս եղան։ Սիմէոն իլիչով յա-փշշատկուած՝ մոռացայ ասել, որ Մաշան էլ կար խըն-ջոյքում։ Մաշան, Սիմէոն իլիչը կինը՝ Դարիա նիկի-տովնան, Վարփարայ Սերգէենան, Սիմէոն իլիչի կմջէի հարսը և երկու ուրիշ այլես գեղանիներ, մի սեղան բոլորած՝ ռամս էին խաղում։

Սիմէոն իլիչը շարունակ պատում է Մաշայի շուրջը և երբեմն երբեկան զիւրեկան կատակներով օրի-որդի ծիծաղը շարժում։ Այս անում էր ի հարկէ նպա-տակով։ Իմ նպատակս չէր Սիմէոն իլիչի խնջոյքով հրապուրուած երկար ու բարակ խօսել, որովհետեւ այս-պիսի աննպատակ խնջոյքներ արդէն ն։ Քաղաքի աւան-

դական սովորութիւններից մինը և զլիսաւորն է. իսկ կարախ նստել և ամբողջ գիշերը սեղանի շուրջը նստած լուսացնելը ն. քաղաքացիների միակ զուարձութիւնն է: Նոքա ոչ մի խնջոյքում ուրիշ ոչ մի առարկայի վերայ խօսելու սովորութիւն չունին, բացի թեթև բամբասանքներից. միմիայն կարան է, որ ամենքի ուշադրութիւնը իւր վերայ է դարձնում, լինի դա հարուստ, աղքատ, որ կարգի մարդու համար ասես: Բամբասանքն էլ մի անմեղ զուարձութիւն է, ոչնչ վնասակար հետեանք չունեցող: Սրա նրա ընաաննեկան գրութեան վերայ խօսել. մէկին ինազու պաշտօնից խայտառակաբար զլորել, մի ուրիշն պաշտօնի հասցնելու համար կուսակիցներ գտնել և այլն, և ուրիշ սոցա նման անմեղ բամբասանքներ: Ինչպէս վերել յիշեցինք Սիմէոն իլիշն էլ այս նպատակով էր, որ արտաքոյ խնջոյք էր տալիս, որովհետեւ այդ օրուայ մեծածախս խնջոյքը ոչ մի յիշտակի հետ կապուած չէր:

Բայց ինչու նա էլ Մաշային այդքան մօտիկ-մօտիկ էր անում,—զա ևս իւր առանձին նպատակն ունէր: Մաշայի հայրը—Քառփ Սիմեօնիչը խիստ հարուստ և ազգեցիկ մարդ է, որի միակ ժառանգը համակրելի Մաշան էր: Սորա ձեռքը մի քանի անգամ խնդրել էր իվան Մաթվէիչը, բայց բացասութիւն էր ընդունել, սա էլ պահաս զօրեղ մարդ չէր: Երկուսն էլ Սիմէոն իլիշն հարկաւոր էր. բայց ինչպէս պիտի իրան կուսակից անէր. այդ երկուսին միացնող օգակ Մաշային էր գտել: Իվան Մաթվէիչը հոգով - մարմնով Սիմուշական կրթառնար, եթէ յաջողէր Մաշայի ձեռքին արժանանալու, և հետեւաբար փեսայի միջոցով աներն ևս Սիմուշն էր հակուէր և այդ երկու զօրեղ մարգիկը իւր կոնակին ունենալով՝ քաղաքի մեծամասնութիւնը իւր կողմը կըլինէր, և ուրեմն յաղթանակը տարած կըլինէր: Ահա

թէ Սիմուշի նպատակը ուր էր համսում: Ի հարկէ այս մարդոց իւր կուսակեց լինելը մի ժամանակ էր հարկաւոր, այնուհետև իրան բան պէտք չէր, որովհետև ինքն ևս կըզօրեղանար, և դորանից յետոյ ուրիշները կըկարօտէնն իւր օգնութեանը: Ահա խնջոյքի բուն նպատակը, բայց ես անցնեմ այսուհետև օրիորդին որ երբէք չէր սիրում իվան Մաթվէիչն, որին՝ միայն անքաղաքավարութիւն արած չլինելով, պատահած ժամանակ պատասխանում էր:

Արառուշը բարձրահասակ, սև ունիք ու աչքերով, ոլորած ընչացքներով, կարմրաթուշ երիտասարդ էր, գովուած իւր համեստ կենցաղավարութեամբ և սիրելի ընթացքով, որի նմանը ն. քաղաքի մէջ հազուագիւտ էր: Արառուշը փախչում էր զեղիսութիւնից, առ հասարակ խնջոյքներում շատ քիչ էր երեսում, զլուխը քաշ իւր գործը և իւր գործը տանում էր անխարդախ կերպով, ոչ շատ վաստակածի համար խիստ ուրախանում էր, ոչ էլ քչի համար խիստ տիրում: Նա միշտ առում էր, յաջողութիւնն ու անյաջողութիւնն երկուսն էլ եզրայրներ են, առեւտուրական կեանքի մէջ յաճախ պատահող: Իւր նիստ ու կացը երբէք իւր կարողութիւնից չէր ուզում անցնել իսկ իրանից պատկառելի անձինքներին պատկանած յարգանքը տալուց էլ երբէք չէր հրաժարվում: Այդ էր պատճառը, որ Արառուշին շատերը սիրում էին, իսկ իւր հասակակիցները տառւմ էին, առաջին նորա համար, որ սրաով չէր մասնակցում իրանց հետ թէ թղթախաղութեան և թէ զանազան զուարձութիւնների, որոնք աւելի շուտ կարելի էր կեանք մաշող միջոց համարել, քան թէ զուարձութիւն: Միւս կողմից նորան ստիպում էին, որովհետև Մաշան սիրում էր նորան, այդ հասկացել էին: Մաշայի նման հարուստ աղջիկ Արառուշի ճանկը ընկնի, այդ նրանց

խիստ կերպով նեղացնում էր. պատահած ժամանակ ասում էին.

—Քարփուշի Մաշան Արտուշը տանէ, խիստ փեռատ բան է:

Սիմեոն իլիչ տանը Արտուշը չկար, այդ շատ բնական էր, որովհետև Սիմեոն իլիչը երբէք լսյաղ չէր անիլ Արտուշի հաւասար մորդ երեել, Արտուշի նման նա լսկեցնէր կարող էր պահել, ինչպէս շատ անգամ նա ասում էր իվան Մաթվէիչի հետ խօսելիս. թերեւ կ'ուզէր սորանով սիրու տալ իվան Մատվէիչին: Բայց ով գիտէ, Մաշայի մայրը կը համաձայնէր իւր աղջեկը իւր տարիների ընթացքում զիզած հարստութեան հետ տալ Արտուշի նման մի համեստ և պարզ կեանք վարող, ոչ շատ հարուստ երիտասարդի, որ միայն հոգով հարուստ էր: Իվան Մաթվէիչին էլ յօյոը հարստութեան վիրայ էր զրած, բայց իւր մի քանի անգամ ստացած մերժումն էլ խիստ վհատեցրել էին իրան, իսկ Սիմեոն իլիչը, չեմ իմանում ինչ բանի վիրայ հաստատ յոյս զրած, հաւատացնում էր իվան Մաթվէիչին, թէ կարող է յաջողիցնել:

—Սիմեոն իլիչ,—յանկարծ ձայն է տալիս իվան Մաթվէիչը:—Սիմեոն իլիչը կանգնած է նորա առաջ:

—Պարի ժամանակ չէ:

—Ինչպէս կամենաս, կը նայիս, —ասաց իվան Մաթվէիչը:

Կարտ չուղինք, չսկսինք պարել. կաւալերներս պատրաստ ինք, գամաներն էլ պատրաստ ին, նայինք.—ասաց և հուացաւ:

Զահիլ կանայք և օրիորդներ զրեթէ պատրաստ էին պարելու, սպասում էին հրաւերքին, որից անմիջապէս յիտոյ զահիճի աթոռները բռնեցին: Գրեթէ այդ օրը Սիմեոն իլիչը տունը մի տեսակ աղջեկ տեսնելու,

Հաւանելու և հարս ընտրելու ձեւ էլ ունեցաւ, որով հետեւ կային երիտասարդներ, որոնք յաճախ պատահում էին իրանց պատուակիցների խնջոքներին միմիայն աղջեկ տեսնելու համար։ Եատ մայրեր էլ, իրանց աղջեկը հաւանելի անելու համար, շքեղ կերպով զարդարել էին նոցաւ այդպիսիների մայրերը նստառեցին աթոռների վերայ միմիայն հանգիստաես լինելու, իրանց հաստին առած աղջեկների համար փեսայ ընտրելու։ Նուագարանի մօտ նստեց մի ուօւս, որին այդ օրը յատուկ փարձել էր Սիմեոն իլեչը, և իւր մատների արագ շարժումով մի ինչ որ պարի եղանակ հնչեցրեց։ Իվան Մաթվեիչը կանգնեցաւ Մաշայի առաջ և խնդրեց իւր հետ պարելու։ օրիորդը ևս անքաղաքավարութիւն չանելու համար յօժարեց ընդունել նորա հրաւերքը, սակայն իփսա դժոնչ եղաւ իւր կաւալերից։ Սերգէյ Տարասիչը Սոնային հրաւերեց, երկու զոյգիր յարմարուեցին իրար։ Սոնայի մայրը մոքումը ուրախանում էր, որ Սերգէյ Տարասիչը իւր աղջկանը ընտրեց, աւելի ուրախ կըլինէր, որ մի օր Սերգէյ Տարասիչը իւր փեսան էլ գառնար, բայց ի հարկէ դա ժամանակի խնդիր էր։ Մաշան իվան Մաթվեիչը հետ մի քանի շրջան արեց, բայց ամենախիստ կերպով վերաւորեց նորա իւր հետ պարի ժամանակ արած խաղերեց, փոքր էր մնացել հենց պարի ժամանակ պիտի թքնէր և թողնէր կիսատ, բայց լոկց, սակայն սրտումը կրակ էր եռ գալիս, ուզում էր մի կերպ իւր վրէժը լուծել հենց այդ երեխյան և այդ բազմութեամբ լլցուած միայն քաշ էր գալիս իվան Մաթվեիչի հետ։ Պարողները թողին, նուագածուն իւր մատներին ուզեց հանգստառթիւն տալ բայց գահլիճից ոչ ոք չհեռացաւ.

մի նշանի էին սպասում, որ այնուհետև նորից սկսեն:
Իվան Մաթվեիչը մօտեցաւ Մաշային և ասաց.

—Կարծիմ, օրիորդ, այս անգամ էլ հետո պարելու
պատիւը կ'անեք ինձ, այնպէս չէ:

Օրիորդը կրակ կարած աչքերը ձգեց նորա երեսին
և կոշտութեամբ պատասխանեց.

—Ոչ երբէք, պարոն, զուք ձեզ պարակից գոտէք.
Խո չեմ կարող ձեր թեր մանել:

Իվան Մաթվեիչը կարմրեցաւ: Ինքն իրա արածը
գիտէր, բայց կոտրուել էլ չէր ուզում: Պարելու նշան
արուեցաւ, ամեն մի կաւալեր իւր գտնայի առաջ կանգ-
նեց, իվան Մաթվեիչն էլ Մաշայի առաջ:

—Իվան Մաթվեիչ, Խո ձեզ ասացի, որ ձեզ համար
գտնայ գտէք. Խո ձեզ չեմ պարիլ: —Այս խօսքերը
այնպիսի շշտահարութեամբ հնչեց, որ իվան Մաթվեիչը
մինչեւ ականջներ կարմրեց ամօթահարութիւնից, իսկ
օրիորդը մասւ միւս սենեակը, բարկացած գարձաւ մօրը,
որ նստած գեռ ևս կարա էր խաղում:

—Մամա, —ասաց նա, —Խո հոս շուզիմ մնալ, խիստ
բեթեր գողուս կըցաւի, առուն էրթանկք:

Իվան Մաթվեիչը աւելի լաւ էր մեռնէր, քան այս-
պիսի անպատութեան հանդիպէր. բայց Ճարն ինչ, այդ
անողը Մաշան էր, որին ակրելու համար հազար մի հը-
նարք պիտի գործ գնէր. մէջ տեղը Մաշայի պէս աղջեկ
կար 10,000 լուրջ կարողութիւնով. փոքր բան չէր,
նա այդ վրէժը կըլրւծէր, երբ արդէն նորան ակրած լի-
նէր: Այժմ իվան Մաթվեիչի մէջ երկու կիլք էր Խո
գալիս, հարստութեան վերայ հարստութիւն զիզելու՝
Մաշայի հետ ամուսնանալով՝ և հասարակութեան մէջ
ծիծաղատեղ չլինելու՝ Մաշայից անգատեւ լինելու հա-
մար, որի միակ դեղ ու ճարը գարձեալ համակրիլի Մա-
շան էր:

Սիմեոն Իլիչը կինը՝ Դարիա Նիկիտովսան, օձի լեզու հանեց. Մաշային պահելու համար, բայց անհնարին եղաւ:

—Գոլոխս խիստ բէթեր կըցաւի, — ասաց նա և այլես նստել երբէք չկամեցաւ, մինչեւ որ խեղճ մօրն տեղից հանեց և շատապաւ կտոք նստեցին և հեռացան:

Սիմեոն Իլիչը հնարքների շէնքի մի մասը փլեց. Իվան Մաթվէիչը մէջքը կտրուեց, կարծեա, թէ այնուհետեւ ինչ որ արեց Իվան Մաթվէիչը, արհեստական ձեռվ էր: Մինչեւ ժամի երեքը Սիմեոն Իլիչը տանը ժամանակ անց կացրին ու ընթրիքից յիտոյ բազմութիւնը հետզետէ քաշուեց:

Ամբողջ գիշերը Սիմեոն Իլիչը և Դարիա Նիկիտովսան անջվում էին Մաշայի և Իվան Մաթվէիչի հետ պատահած անախորժ գէպքի համար. բայց եղածն եղած էր:

—Наконецъ, Դարիա, Մաշան խիստ բէթեր կапризный աղջիկ է, ըստ ուտիտ ունի անձնագիր. Իվան Մաթվէիչը ալ ասկարբիթսա եղաւ - ու, տեսնինք ինչ կը լսայ:

* * *

Հետեւալ օրը ծակ ըերան չմնաց, որ Իվան Մաթվէիչի և Մաշայի վերայ չխօսէր. Իվան Մաթվէիչի զիմաց խիստ կերպով յարձակվում էին խեղճ Մաշայի վերայ. բայց նորա եակեց ասում. —Հաձէ, շունին ցգնածին ինչպէս աղէկ արիլ է. մէմը քիթը թող կոտուի տա: Մաշան տանից հեւ չելաւ:

Արտուշի ականջին էլ հասաւ, բայց նու բոլորովին անախարքիր վիրաբերուեց և երբէք դատողութիւն անողներին չմասնակցեց: Նու Մաշային շատ լսւ հասկացել

էր. նա միայն մոջումը ուրսախանում էր, որ իւր ապագայց հարսնացուն ցոյց է տուել իւր կամքի զօրեղութիւնը կոտրելով Սիմէոն Իլիչն և անպատճելով իվան Մաթվէիչին։ Մի շաբաթ շարունակ ն. քաղաքի կանանց և մարդկերանց խօսակցութիւնը իվան Մաթվէիչն էր և Մաշան։ Պէտք էր մի նոր գէպք հինք մոռանալ տալու. գա էլ շատ գժուար չէր, եթէ իսկական գէպքը չլինէր, հնարովին ոտքերդ լիզում են, որ շատ յաճախ է պատահում, բայց գժբաղբաբար իսկականի նման երկարատեւ չի լինում, ծնելն ու մեռնելն երկու օրուայ մէջ է կատարվում։ Այնու ամենայնիւ զբաղմունքի միջոցը պակաս չի։ Ակմբանոցի մէջ շատ բան սալքվում ու լոյս աշխարհ է ընկնում և այն տեղեց էլ մեռելութեան վկայականը դուրս գալիս։ Եթէ ուրիշ բան չունենան, քաղաքաղլուխ, տեսուչ վարժապես, քահանայ, արդէն այս անձնաւորութիւնները բաւական զբաղմունքի միջոց են տալիս հասարակութեան առ հասարակ և այսպիսի անմեղ բամբասանքով օրերը անց կացնում։ Ուրիշ ինչ պիտի լինի, խեղճերը խօմ գլուխ չպիտի տրաքացնեն։ ամբողջ օրը առ և առ ըստ մէջ յոգնելով՝ մի փոքր պիտի հանդսատանան անմեղ զուարձութեամբ։

* * *

Սիմէոն Իլիչի խնջոյքից անցել էր մի քանի օր, բայց նա գեռ ևս չէր տեսել իվան Մաթվէիչին, կարծես, թէ աս էլ երեւել չէր ուզում։ Իվան Մաթվէիչը ինքն իրան հաշեւ չէր կարողանում տալ երբ այդ երեկոյեան պատահմունքը յիշում էր, նա շատ անդամ Սիմէոն Իլիչին մեղաւոր էր համարում, որովհետեւ ինքն որոշել էր վաղ գալ այդ աղջկանից, բայց նա նորից նորան զլսի հանեց, և իվան Մաթվէիչին հազար

յոյսիլով նորից նոյն մաքին դարձրեց։ Առաջ իվան Մաթվէիչը սովորական աղջիկ ուզելու պէս էր, բայց այժմ նորանում կրակ է եռ գալիս, նա մի ինչ որ ներքին տագնատպ է զգում, բայց չէ կարողանում որոշել— այդ տագնատպը առելութեան տագնատպ է թէ սիրոյ։ Նա թէ ինքն իրան բարկանում էր օրիորդի վերայ և թէ խոնարհում նորա առաջ աղաչելու կերպարանք ստանում։ Նա այժմ անորոշ զրութեան մէջ է։ Նա որքան Սիմէռն իլիչն այս գործում մեզաւոր էր համարում, այնու ամենայնիւ, ինքն իրան հաշիւ տալուց յետոյ, դարձեալ նորան էր գանում ճար անող։ Լաւ է ընկնել Սիմէռնի թափարդը, այժմ նորան այդպիսի մարդիկ խիստ հարկաւոր են իւր գործը զլուխ տանելու, իսկ այնուհետեւ ոչին։

Բուլվարի նստարանի վերայ նստած, գեղեցիկ փըղոսկրեայ դաստակով ձեռնափայտը ձեռքին, խորասուզուած իվան Մաթվէիչը գետնի վերայ զանազան գըծեր էր անում։ Թէպէտ եղանակը բաւական սառն էր, բայց իվան Մաթվէիչի համար ոչինչ, որովհետեւ նորա ներքին հնոցը խիստ կերպով վառվում էր։ Եւ այս առաջին անգամն էր, որ Սիմէռն իլիչը խնջոյքից յետոյ նա առանից դուրս ելած, բուլվարի մէջ որպէս թէ զբունում էր, բայց առանց այս և այն կողմը շրջագայելու, ուզակի մաել էր բուլվար և մի նստարանի վերայ նստելու խորասուզուած Մաշայի վերայ մտածում։ Իվան Մաթվէիչը, որ ոչ մի զժուարութեան առաջ երբէք նեղութիւն չէր կրել և ինքն իրան խիստ զօրել էր զգացել այժմ բացարձակ կերպով խոստովանում էր իւր թուլութիւնը, այն ևս մի աղջիայ առաջ, որի պէսը ով գիտէ, իթէ երբեմն խօսակցութիւն լինէր, կ'ասէր հաղարաւորները մէյզան կըհանեմ։

—Բարեւ, իվան Մաթվէիչ, —թեթև կերպով զար-

կեց նորա ուստին Սիմէոն Իլիչը։ Նա բարեն առաւ, աեղցից թեթև շարժում անելով, և նորից ձեռնափայտով գետնի վիրայ սկսեց աննպատակ գծեր քաշել։
— Իվան Մաթվէիչ, հէջ չիս երենալ, աս մը իս, ախպար, ինչ էզել է քեզ։

— Կառը մը քէֆսզ էի, առւնէն չէի էլներ։

Բայց սորանով խարել Սիմէոն Իլիչին այդ շատ դժուար բան էր. նա հասկանում էր իվան Մաթվէիչի փորացաւը. գիտէր էլ, որ նա այնքան ամբարտաւան մարդ է, որ այդքան շուտով մարդու օգնութեան չէր դիմիլ։

— Զանս, հէջ կալաջի չիս անիլ։

— Ի՞նչ անիմ, ախպար, փեռացիլ իմ, ասես քի օտքելս բէզմիշ էլած՝ քալիլ չուզին, գոլոսս վերաս չի կայնիլ, խիստ բէթէր կնեղիմ. ասպէս կենալէն հարամիշ չլլար, կուզիմ Մոսքով էրթալ, հոնի աղէկ հէքիմներուն տեմնուիլ, նայինք մի բան կանին, չէնէ ստակ խարջելնիս մեղ պիտի մնայ։

«Մոսքով պիտի գնայ», — մատածեց Սիմէոն Իլիչը, — այս վատ ժամանակ է, այսպիսի ժամանակ սորան չպիտի թողնիլ հեռանալ քաղաքից, սա մեղ համար մեծ գործեր ունի անելու։ Ես կուզիմ այսպիսի մարդկերանց թիւը աւելացնիլ, իսկ թիւը ինքն իրան պակասում է. այս էլ մի ահասակ անբազգութիւն ու գործի անյաջողութիւն է, բայց առանց վհատելու մենք մեր գործը, ինչպէս սկսել ենք, առաջ առնենք, կամ առակ կը լինենք, կամ գլուխ։»

Իվան Մաթվէիչը երկար լոռութիւնից յետոյ վերցապէս վճռեց յայտնել Սիմէոն Իլիչին իւր վատ զըրութեան պատճառը, և այդ նեղ զըրութիւնից ելնելու կարօտ է Սիմէոն Իլիչը օգնութեան։ Սիմէոն Իլիչը ժալտաց. — բանս յաջող է, այժմ իվան Մաթվէիչը կա-

րօտ է իմ օգնութեան, ահա թէ ինչ է աղջկայ թելից
կախուելը: Իվան Մաթվէիչը այս զրութեան մէջ էր:

— Սիմէռն իլիչ, ևս խիստ բէթէր կսիրիմ Մաշային,
Հնարք ունիս՝ տես, էկէր ևս ադ աղջկանը չառնիմ,
հէջ ալ ապրիլ չու զիմ:

Սիմէռն իլիչը իւր սովորութեան համաձայն սիրտ
տուեց նորան, և խոստացաւ հետեւալ օրը ինքն ան-
ձամբ Քառփ Սիմէռնիչին գնալ, ու այնպէս ման ածելու
նորան, որ ինքն իվան Մաթվէիչին մարդ զքկի իւր աղջիկն
ուղելու. — «Արդեօք հաւատամ այս խօսքերին», — ինքն
իրան ասում է իվան Մաթվէիչը, — «Թէ ուղիս տակը
ձմերուկի կճեպ դրածի պէս է անելու»:

Սիմէռն իլիչը յուսագրից իվան Մաթվէիչին, նա
էլ յոյսերով լցուած թոյլ թոյլ հեռացաւ: Խեղճ մար-
դը նոյն իսկ իւր գործակատարներին նայելու չէր ու-
զում, այն աստիճան վհատած էր, բայց էլի փառք Սի-
մէռն իլիչին, որ կարողանում էր նորան յոյսերով խա-
րել սիրտ տալ, և իւր գործերից չովանալ: Սիմէռն
իլիչը մտածում էր, եթէ կարողացայ գլուխ բերել, խիստ
լու, իսկ եթէ չկարողացայ գլուխ բերել, մինչեւ այդ
գործի գլուխ գալ ու չգալ յայտնուելը, իմ բանս էլ
կամ կը շնուրի կամ կը քանդուի: Թէ կը շնուրի, գլուխ
չգալով չի քանդուիլ այլևս, իսկ եթէ չի շնուրիլ գլ-
լուխ գալն էլ օգուտ չի ունենալ. — Ժամանակը անցած
կը լինի և ուրիշ մինը քաղաքագլխի աթոռի վերայ նըս-
տած կը լինի: Նոքա հեռացան ամեն մինը իւր նպատակը
աշքի առաջ ունենալով, իւր շահերով զբաղուելով:

* * *

Քարփ Սիմէռնիչը 50 տարեկան հասակ ունեցող,
վայելակազմ այր մարդ էր: Նա հարուստ էր խիստ,

որի միակ ժառանգը Մաշան էր։ Կարծիք չկայ, Քարփ
Սիմեօնիչը ամենայն աշխատանք գործ էր գնում իւր
աղջիկը այնպիսի մինին տալու, որ հարուստ լինէր և
քաղաքի մէջ նշանակութիւն ունեցող անձն։ Նա երբէք
Արտօւշի պէս տղաներին մոքով չէր անց կացնիլ, եթէ
իրան հասնէր բանը, բայց Մաշան իւր կեանքի ընկերն
ընտրել էր արդէն։ Քարփ Սիմեօնիչը մի հասիկ զա-
ւակ ունենալուն համար խիստ սիրում էր Մաշային։
Նորա չուզեցած բանը չկար որ չանէր, նա ամեն կերպ
աշխատում էր գոհացնել իւր սիրելի զաւակին։ Կինը
նոյնպէս շատ քնիքութեամբ էր վարփում Մաշայի հետ։
Հէնց այս վարմունքի պատճառով էր, որ Մաշան իւր
լաւ յատիկութիւնների հետ իրա ասածի աղջիկ էր դար-
ձել։ Պատահում էր, որ Մաշայի ասածին հակառակ մի
բան էին անում հայրը կամ մայրը, նա լաւ հնալը էր
գտել նոցա իսկ զղջման բերելու։

— Մամա, հիւանդ իմ, — կ'ասէր ու կըպարկէր։

Խեղծ ողորմելի ծնողները նորա շուրջը կըպատէին
և կըսկսէին վաղաքշել, իրանց հակառակ արած բա-
նից ետ կենալ։ Եյսպիսով սիրով ծնողական սրակը
իրանց անգիտութեամբ Մաշային շինել էին մի կողքա-
վէր, իւր ասածի աղջիկ, որի ոչ մի խօսքը չէր մնում
անկառար բաւական էր, որ նորա բերանից դուրս գար
մի խօսք, երբէք անկառար չէր մնալ։ Բայց այսու ա-
մենայնիւ Մաշան խիստ բարի ու գթոս աղջիկ էր, նա-
իւր բարեսրտութեամբ յայտնի էր հէնց իւր աշակեր-
տուհի եղած քամանակ։ Նա ամենայն առատութեամբ
տալիս էր իւր չքաւոր ընկերուհիներին դասական բոլոր
առարկաները սկսած դասագրքերից։ Նա շատ անգամ էլ
խնդրում էր իւր սիրելի ծնողներին այս ինչ կամ այն
ինչ չքաւոր աշակերտուհուն շորեր կարել և կարել էր
տալիս։ Նա իւր հետ ճաշի էր տանում շատ աղքատ

աղջիկների, այսպէս և իւր ընկերական յարաբերութիւնները աւելի յաճախ աղքատ աղջիկների հետ էր, քան հարուստ վերուածների։ Մի տեսակ ինքն իրան մխիթարուած էր համարում, երբ իւր մի աղքատ ընկերուհու պէտքը կարողանում էր լցնել։ Այս էր պատճառը, որ ուսումնաբանի մէջ եղած աղջիկների մեծ մասը սիրում ու պաշտում էր Մաշային։ նորա աւարտելու տարին, որքան ինքն ուրախ էր, որ գուրս է գալիս դպրոցական կեանքից, նոյնքան նորա ժամանակակից ընկերուհիները տիսուր էին, որ զքիվում էին այդպիսի մի առաքինի, բարի մանուկ բարերարից, որ հոգում էր իրանց հարկաւոր եղածները։ Բայց շատերը ասում էին, թէ Մաշան այնքան բարի է, որ ուսումնաբանից գուրս գալուց յետոյ էլ չի մոռանալ մեզ չքաւորներիս, եթէ մենք զիմնք նորան, —նա ամենայն սիրով կրկատարի մեր խընդիրը։ Այդպէս էլ էր։ նա պատրաստ էր ամեն ժամանակ օգնել իրան դիմածներին, նա այդ անում էր նոյնպէս իւր ուսումնաբանից գուրս գալուց յետոյ էլ։ Մաշան կեանքի մէջ աւելի կարօտեալներ տեսաւ, քան ուսումնաբանի մէջ։ Նա նոյնպէս մօտիկ յարաբերութիւն հաստատեց քաղաքի աղքատ դասակարգի աղջիկների հետ, որոնց, ինչպէս գթոս քոյր, ինամք էր տանում ձեռքից եկածի չափ։ Նա յաճախ պախարակում էր հարուստների ամբարտաւանութիւնը քիթը վեր քաշելը, որոնք աղքատին, խեղջին ոչ թէ համարում էին մարդկիկներ, այլև կենդանիներ, որոնք ստեղծուած են մեմեյն հարուստների պէտքերին ծառայելու, ամեն երջանկութիւն, զուարծութիւն և կեանք այդ միայն վայել է հարստին։ աղքատն ինչ, որ ու բարի տեսնելն ինչ Բայց օրիորդը սորան խիստ հակառակ էր, և չնայելով որ հայրը մեծ կարողութեան աէր էր, ահապէն զրամազլուխ ունեցող էր, այնու ամենայնիւ նա սիրում էր

աղքատներին, և նոցա օգնութեան հասնելով՝ իրան մսիթարուած էր տեսնում: Աշա Մաշան իւր տաածին լինելով հանգերձ, գեղեցիկ յատկութիւններ էլ ուներ: Ծնողներին տանջում էր այս իւր տաածին յատկութիւն ունենալը. շատ լաւ հասկացել էին, որ Մաշան ինքն իւր հաւանած աղին միայն կերթայ, ծնողների ընալութեան երբէք նայելու չէ: Իվան Մաթվէիչին ամենայն ուրախութեամբ կըտար իւր աղջիկը Քարփ Սիմեօնիչը, եմէկ Մաշան համաձայնէր, բայց նա Իվան Մաթվէիչի երիսն անգամ չէր ուզում տեսնելու, և հէնց բացանելու պատճառն էլ Մաշան էր: Ծնողների ականջն էր ընկել, որպէս թէ Մաշան Արտուշին սիրում է, և մինչեւ անգամ աղջիկ և տղայ խօսք են տուած իրանց կեանքը իրար հետ կապելու: Քարփ Սիմեօնիչը մտածում էր ինքն իրան, ինչպէս թոյլ ապ, որ Արտուշի պէս աղքատը քաղաքի մէջ աչքի ընկնող մէկի փեսան գտանայ և իւր ահագին կարողութեան տէր լինի. նու ինքն իրան նեղանում էր, երբեմն մտածում էր փշտել և աղջկայ կամքը, անել այն, ինչ ինքն էր կամենում: սակայն իւր աչքի լցա Մաշայի սիրաը ինչպէս կոտրէր: Ծնողական գութը, իւր ունեցած ամբարտաւանութիւնը խորտակում էր և ասել աալիս.—զաւակիս քէֆովս լինի, ունիմ-չունիմ հալալ է իրան: թէք Մաշայիս սիրաը ուրախ լինի, վատ օր չտեսնի, իմ կարողութիւնս էլ բաւական է: Մակայն Քարփ Սիմեօնիչին պիտի թողնէին իւր կամքին, թէ նորա հսականութիւնը գրուելով՝ ձանապարհից պիտի հանէին աղջկայ բաղդին քար ձգելու և սահպելու նորան գիմել այնպիսի միջոցների, որոնք նոյնպէս պատուաթեր չեն կարող լինել:

Արտուշը խանութապան էր. նորա խանութումն ամեն տեսակ ուտելեղէններ էին գանվում: Նա թէեւ մեծ զբամազլիսի տէր չէր, բայց յաջող էր իւր առեւտուրի մէջ. յարաբերութիւն ունէր Մոսկուայի հետ, և տարին մի քանի անգամ գնում էր Մոսկուայ, այնպէս որ ն. քաղաքի բոլոր առաջին դասակարգի ընտանիքնելլը նորանից էին առեւտուր անում, և ուրեմն ունէր հարուսա մուշտարիններ, որոնցից ամսէ ամիս բաւական գումար էր ստանում: Արտուշը, երեւում էր, օրէցօր ընդարձակում էր իւր առեւտուրի շրջանը, բայց չէր դուրս գալիս համեստութիւնից: Բացի այն որ խանութ ունէր, նա խիստ հետաքրքրվում էր հայերէն զլքերով, ստանում էր հայոց բոլոր լրագիրները և սաստիկ ընթերցասէր էր. հայերէն գիրք չէր հրատարակուել, որ նա չստանար: Արտուշը հակառակ ն. քաղաքացիներին՝ խիստ մաքուր խօսում էր հայերէն, առանց իւր խօսակցութեանը այլազգական բառեր խառնելու: Սորա խանութիցն էր վերցնում օրտկան կենսական պիտոյքը Քարփ Սիմեօնիչը, և ամեն ամիս Արտուշը գնալով նորա տունը՝ վերջանում էր իւր հաշիւլ: Ուղիղ երկու տարի էր, որ նա յարաբերութիւն ունէր այդ տան հետ, և Սիմեօնչը արդարեւ սիրում էր Արտուշին: Գուցէ մաքովն անցնէր Արտուշին բարիքներ անելու, բայց երբէք չէր մտածիլ նորան աղջիկ տալ, որովհիտեւ առ շատ անհաւատալի բան կը լինէր: Մաշան ամեն ժամանակ տեսնում էր Արտուշին և շտա անգամ նորա հետ երկար ու բարակ զրիցներ էր տուել և մինչեւ անգամ վիճել: Երբ մի անգամ էլ ամսուայ վերջին նա եկաւ հաշիւները ուղղելու, Մաշան նստած մի ինչ որ լրագիր էր կարգում: Քարփ Սիմեօնիչը տանը չէր, Մաշան էր և իւր մայրը: Արտուշին պահպանին, ասելով՝ որ հիմայ կըգայ Սիմեօնիչը: Երիտասարդը նստած էր

օրիորդի հանդէս, որ արդէն ձգել էր լըադիրը, խօսում
էր նորա հետ, աչքերը առանց հեռացնելու նորանից:
Արտուշը մի տեսակ հաճոյք էր զգում օրիորդի հետ
խօսելուց. նա հազար երանի կըտար, եթէ Սիմեօնիչը
մի քանի ժամ ուշանար, որ երկար խօսէր իւր համակ-
րած աղջկայ հետ: Նա դարձաւ Մաշային.

—Օրիորդ, ներեցէք ինձ հարցնել Ձեզ՝ այդ ի՞նչ
լըադիր էիք կարդում:

—Խուսնակ, «Русскія Вѣдомости», —պատաս-
խանեց օրիորդը:

—Դուք չեք կարդում հայերէն, —շարունակեց ե-
րիտասարդը:

—Հայնակ կարդալու բան կայ ո՞ւ:

—Ի՞նչ կըհրամայէք, օրիորդ: Խիստ լաւ բաներ,
մենք էլ ունինք՝ լըադիրներ, ամսագիր ևայլու եթէ ու-
զենաք նոցանում էլ կըդանէք հետաքրքիր կարդալու
բաներ:

—Հապա, որ հայանկ լաւ կարդալ չգիտիմ, —ընդ-
հատեց Մաշան:

—Ներեցէք, օրիորդ, այդ շատ լաւ բան չէ: Ի՞նչ է
նշանակում: մենք մեզ չհանաչենք, մոռանանք մեզ, մեր
գոյութիւնը, իսկ ուրիշն ճանաչելու համար ահագին
ծախսե՞ն անենք:

—Զիմ սորված, ի՞նչ անիմ, հայնակ կըկարդամ,
ամա չիմ հասկնալ, —պատասխանեց օրիորդը, —այ,
օրինակ, ես Ձեր գալաջին չիմ հասկնալ: Եատ անգամ
կուզիմ չհասկացած բառերս հարցնել բայց չիմ կրնալ,
անպէս ալ չհասկացածս կըմնայ չհասկացած:

—Դուք այս տարի տւարտելու էք գիմնազիան, ե-
թէ ուզենաք, կարող էք մի լաւ վարժապետ վարձել
հայերէն սովորելու համար, —շարունակեց իւր խօսքը
երիտասարդը:

— Ագ շատ աղեկ է, հապա որին կըքնանք վարձել — հարցրից Մաշան:

— Եթէ ուզենաք, շատ կան:

— Օրինակ, եթէ Զեղ առաջարկելու լինի հայրս, կուզեք:

— Ես վարժապես լինել չեմ կարող, բայց լաւ վարժապետի տեղ կարող եմ ասել, — պատասխանեց երիտասարդը:

— Ագ ես կանիմ և կըսորվիմ անպատճառ հայնակ: Սիմեօնիչը ներս մտաւ, գլուխ տուեց Արտուշին, Արտուշը վիր կացաւ և միայն Սիմեօնիչի հրաւելքով նստեց իւր տեղը:

— Բեր, նայիմ, հաձե, աս ամիս ինչ խաղար ստակ պիտի տամ:

Հաշուեցին, 120 բուբլի 67 կ. եղաւ գումարը, որ ստացաւ Արտուշը և մի բաժակ թէյ իմելուց հեռացաւ: Մաշան երկար նայեց Արտուշին, նորա մէջ մի առանձին զգացումն եռ եկաւ, նա կարծես թէ տիրեց Արտուշը հեռանալուց: Իրաւ է, Մաշան մի առանձին համակրութիւն էր տածում գէպի Արտուշը, սիրում էր նորա հետ երկար խօսել, սիրում էր գեղեցիկ երիտասարդի երեսին շատ նայել, բայց ոչ մի օր այս օրուայ պէս չէր եղել: Քանի քանի անգամ Մաշան ինքն անձամբ գնացել էր Արտուշի խանութը, իւր համար զանազան քաղցրեղէններ և անուշահոս իւղեր գնելու, ոչ մի անգամ էլ այս զրութեան մէջ չէր ընկել: Նա կարծես ցանկանում էր նորից ահսնել Արտուշին, նորից նորա հետ զըսյց տալ խօսել, որ մի քիչ բաւականութիւն ստանար, բայց Արտուշը արդէն հեռացել էր: Արտուշի սըրտում վաղուց սիրոյ կրակը գաղանի վառվում բորբոքվում էր, բայց չէր վստահանում ցոյցեր անելու: Ինքն ուր, Քարտի Սիմեօնիչը ուր: Այդ արդէն չլինելու բաներ

Էին և Արտուշի կողմից յանդուզն վատահութիւն կըլենէր։ Այժմ Մաշան է սիրում, սորա առաջն ինչով կարելի է առնել ոչինչով, որովհեաւ Մաշան իւր ասածի աղջիկ է, իւր ասածն էլ զլուխ կըտանի, թէկուզ մեռնելու գուռը հասած լինի. ծնողները նորան այսպէս էին պատրաստել։

Միւս առաւօտեան, երբ ուսումնարան էր գնում Մաշան, նախ հանդիպեց Արտուշի խանութը, որ իւր ձանապարհի վերայ էր, մի քիչ ուտելիք առնելու նախածաշի համար. ի հարկէ այս անգամ դա միայն պատրուակ էր,—նա ամբողջ զիշերը Արտուշի վերաբերութեամբ ցնոլքների մէջ էր, նա ուզեց աեսնել նորան և մտաւ խանութ։ Արտուշը ամենայն յարգանօք ողջունեց Մաշային, հարցրեց թէ ինչ կըկամենար։ Մաշան զողում էր խօսելիս. նորա ձայնը կարգում էր, և հազիւմի քանի խօսքը արտասանեց և կարմրելով ցածրութիւն ասաց, հեռացաւ։ Արտուշին նա մի հայեացք ձգեց. լոփկ-մնջեկ նոքա կարդացին իրար սարում մի խորին գաղանիք, որ երկուսին էլ մաշում էր, երկուսի սիրտն էլ կրծում էր։ Մինչեւ ուսումնարան Մաշան կառքի մէջ մտածի կերպով խօսում էր Արտուշի հետ. նա ամեն ինչ հնարաւոր էր համարում իւր առաջ և յուսադրում Արտուշին։ Նա իջաւ ուսումնարանի գրան. մտաւ ուսումնարան, բայց այդ օրը նորա գասելիք անցան շատ ձանձրալի կերպով։ Մաշան այնուհետեւ Արտուշին աեսնելու, նորա հետ խօսելու պատճառների էր ման գալիս. սրտի տնհամբերութեամբ սպասում էր ամսուայ վերջին, ինչ ժամանակ Արտուշը պիտի գտր ամսական հաշիւը վերջացնելու։ Մաշան այդ ամիս աւելի ծանր նատեց իւր հօրը իւր համար զանազան՝ թէ և ամենեին ոչ հարկաւոր բաներ առնելով Արտուշի խանութից։

Քարտի Սիմեոնիչը հարուսա էր, առանց արտօնչնջել կը հատուցանի այն ամեն իրերի գինը, ինչ որ իւր սիրելի դուսարը վերցրել էր, բայց վերցնելու գաղտնիքը ամենևին յայտնի չէր նորան: Ինչքան դժուար էր այդ ամիս անցնելը, չնայելով, որ օրը մի անգամ նա տեսնում էր Արտօնշեն, բայց էլի անհամբերութեամբ սպասում էր ամսուայ վերջին, նա պիտի այս անգամ երկար, շատ երկար խօսէր Արտօնշի հետ և իւր բոլոր խօսելեքը համարեա թէ պատրաստում էր: Երիտասարդին աւելի դուր գալըւ համար նա սափեց հօրը և երկու հայոց լրազիր ստանալու, թէ սկզբում հայրը չէր ուզում այդ աւելորդ ծախսը անելու, որովհետև իրանց տանը ամենեին հայերէն կարգացող չկար, բայց իւր սիրելի զաւակի ի աթրը չկարողացաւ կոտրել ու կատարեց նորա ցանկութիւնը: Մաշան այժմ հայ լրազրամնը էր զարձել, քան հայ լրազրամէր: Նա անյագութեամբ կարգում էր, նա սկզբում մեծ դժուարութեանց հանդիպեց, սակայն այնուհետեւ ոչինչ դժուարութիւն նորան չպատահեց: Նա սկսեց նոյնպէս հայերէն գլքեր էլ կարգալ պահանջեց հօրից մի հայ վարժապետ էլ: Որքան Քարտի Սիմեոնիչը աշխատում էր համոզել Մաշային, թէ հայերէն կարգալուց ոչինչ օգուտ չի կարող ստանալ, աւելի լաւ էր աշխատել ուրիշ լեզուներ սովորելու, օրինակ՝ Փրանսերէն, գերմաներէն, բայց չկարողացաւ իւր աղջկայ յամառ կամքը կոտրել: Մաշան լաց լինելով վաթաթվում էր իւր հօր վզեց, ինչդրում աղաւում էր, որ նա անպատճառ իւր համար հայ վարժապետ վարձէ, որովհետեւ խիստ շատ վափագում է իւր մայրենի լեզուն լաւ իմանալու, լաւ խօսելու: Նա ամօթ էր համարում իւր մայրենի լեզուի մէջ թոյլ լինելուն համար:

Մաշան այս խօսքերովն էր ուզում համոզել հօրը, բայց նորա գաղտնիքը միմիայն Արտօնշին դուր գալու

միջումն էր, որովհետև նա ուզում էր նորա հետ խօսել
մաքուր լեզուով. այդ սիրում էր Արտուշը: Օրիորդը ու-
զում էր զօրեղ կերպով տիրել Արտուշին, որի մի մի-
ջոցն էլ այդ էր համարում: Քարփ Սիմեոնիչը կնոջ
յորդորանքով կատարեց աղջկայ ցանկութիւնը, վարձեց
ապ. Խարաբաշխանին, որ պարտաւորուած էր շաբաթա-
կան երեք գաս խօսել Մաշայի հետ հայերէնից: Պ. Խա-
րաբաշխանը ամուսնացած և երկու զաւակների տէր էր,
ինքն ևս վաստակած ն. քաղաքի շատ շատերի, մանա-
ւանդ առաջաւոր մարդիկների համակրութիւնը, և նա
երկար աարիներից հետէ արդէն այդ պաշտօնով էր պա-
րապում նոյն իսկ այդ քաղաքում և իւր պաշտօնը
կատարում էր շատ բարեխղճութեամբ: Խարաբաշխանը
սկսեց իւր գործը ու ստանում էր Քարփ Սիմեոնիչից
ամեն մի գասի համար 2 րուբլի 50 կուպէկ: Վարձը խօ-
սեցին գասի վերայ և ոչ ամսուայ: Մաշան մեծ եռան-
գով աշխատում էր, զգալի առաջդիմութիւն էր անում,
այնպէս որ, նոյն իսկ պ. Խարաբաշխանն էլ զարմանում
էր նորա եռանգի վերայ, որովհետեւ այդ մի առաջին
օրինակն էր իւր մի քանի տարի ունեցած մասնաւոր
աշակերտների մէջ, որոնցից շատ էլ գոհ չէր, բայց կա-
մենալով գոնէ շատ քիչ իրանց մայրենի լեզուից փախ-
չողներին փոքր ինչ ծանօթացնել մայրենի լեզուի հետ,
գժուարութիւնների առաջ չէր ընկծվում: Մաշան Խա-
րաբաշխանի սրտին մեծ միսիթարութիւն էր պատճա-
ռում և նա միշտ գտար վերջացնելիս ամենայն յար-
գանօք գովում էր օրիորդին ծնողաց առաջ, մի քա-
նի «ապրիսներ» ասում նորան և ուրախ հեռանում:
Խեղճ քարժապետն էլ չէր հատկանում իւր աշակերտու-
հուն. գաղանիքը վարագուրծուած էր, այդ միայն իրան
էր յայտնի: Արտուշն էր զարթեցրել նորա մէջ այդ
եռանգն, նա էր բորբոքել նորանում հայերէն սովորելու

սէրը. նորան կրտկ սէրն էր օրիորդին ոտով գլխով դատապարտել հայերէն պարապելուն։ Մաշան միշտ ասում էր. «Եթէ ես այս տարի աւարտեցի, դասերից պրծայ, այնուշեաւ բոլոր ազատ ժամանակս պիտի զոհիմ հայերէն սովորելու, մինչեւ որ ամեն կարգացածս լաւ հասկանամ, ինչպէս ռուսերէնը։ ես պիտի զբարառ էլ կարդամ, զբարառ էլ հասկանամ և այնուշեաւ միայն հայերէն պիտի կարգամ։ ես սիրում եմ հայերէնը»։

Մաշան աւարտեց իւր ուսումն։ Թէ որքան յաջող՝ զորս համար ոչինչ ակնարկ չեմ ուզում ձգել։ Նա այժմ այլես ուսումնարանի կանոնների տակ չէ, նա ազատ աղջկ է, նա զարդարվում է ն. քաղաքի հարուստ աղջեկների նման թանգարին զարդելով։ Մաշան այժմ աւելի յաճախ է գտնվում ինչօքներում, քան թէ առաջ այժմ նորս ձեռք ինդրունիքը շատացել են, ամեն մի հարուստ երիտասարդ աշխատում է զուր գալ նորան, աշխատում է ուրիշ ազգեցիկ մարդիկների միջնորդութեամբ տիրել օրիորդի հարսառութեան, նորս հետ ամուսնական կապ հաստատելով։

Իվան Մաթվէիչը Սիմէռն իլիչ խորհրդով երբէք ետ չի կենում Մաշայի ձեռք ինդրուց, չնայելով որ արդէն նա երկու - երեք անգամ ստացել էր մերժում օրիորդից և սորա ցանկութեան համաձայն Քարփի Սիմէռնիչից։

* *

Սեպտեմբեր ամսի վերջերումն էր։

Տարաս Քարփիչը գտնվում էր Եակուլ Մարտինիչի մօտ։ Հետաքրքիր էր, թէ ինչպէս էր նկարագրում իւր խիստ սիրահարութիւնը Մաշայի հետ։ Թէ ինչպէս խեղջը օր ու գիշեր հանգստութիւն չունի, տանջվում է Մա-

շայի սիրով՝ դադարել է ամեն բան ու գործից, սիրտը
չի տալիս ոչ մի գործի կպչելու:

—Ա՞ս, չես իմանում Եակուլ Մարտինիչ, այդ աղ-
ջեկն մի անգամ տեսնելիս, սիրտս կպաւ նորան, ջանս
դողն առաւ, ձեռքերս թուլացան, ոտքերս թուլացան,
այլես առաջ գնալ չէի կարողանում: Բուլվարի նստա-
րանների վերայ քշուածի նման երկար ժամեր նըս-
տեցի. վերև Աստուած, ներքեւ գու, Եակուլ Մարտինիչ,
իմ ցաւերիս մի գեղ ու ճար արա, ևս ոչ մի մօտիկ
մարդ չունիմ, որին իմ դարդերս ասեմ, որից օգնութեան
յոյս ունենամ: գու ևս միայն, զու, կամ մեռցրու ինձ,
կամ Քարփ Սիմեօնիչին մի խօսք հասկացուր: Ակմբա-
նոցում պարահանդէս կար, տեսայ այնտեղ անցեալ օրը,
ախ, կարծես հրեշտակ լինէր, խելքս գլխիցս գնաց, այն
ինչ տեսօք, հրաշալի արարած է: Հաւատան, նորա մի
կոպէկը չուզեմ, թէք նա իմ կինս լինի, —այսպիսի սըր-
անմաշ խօսքերով՝ արտայայտեց նա իւր սէրը:

Ի հարկէ Տարաս Քարփիչը մի տեսակ ստութիւնով
ուզում էր քողարկել իւր սրտինը, Մաշայից շատ սի-
րունները կային, բայց որովհեաւ Մաշայի հարսաու-
թիւնը չունէին, և հետեւաբար նորա չափ էլ գեղեցիկ
չէին երեկը: Օձի լեզու էր հանում Տարաս Քարփիչը.
փոքր էր մնացել, որ պիտի արտասուէր էլ:

Եակուլ Մարտինիչը հանգարտացրեց նորան խօսք
տալով, թէ որքան կարող է, կ'աշխատի համոզել Քարփ
Սիմեօնիչին, իւր աղջիկը Տարաս Քարփիչին տալու:

—Զգիտիմ, մի ճար պիտի անես ինձ, կամ մեռ-
ցրու ինձ, կամ գլուխ բիր:

Երկու օրից յետոյ Եակուլ Մարտինիչը՝ գալով
Քարփ Սիմեօնիչի տունը, էլ խօսք չմնաց, թափից նորա
առաջ, էլ գովասանք չմնաց, որ արեց Տարաս Քարփիչի
համար: Բայց Քարփ Սիմեօնիչը միշտ այս էր կրկնում,

թէ այդ աղջկանս բանն է, կըխօսիմ, թէ համաձայնի, ինքս
էլ կըյօժարիմ:—Սակայն պէտք է խոսառվանել Քարփ
Սիմեօնիչը աւելի տրամադրութիւն ունէր իվան Մաթ-
վէիչին տալու, քան մի ուրիշն: Սիմեօն իլիչը աւելի
ներգործութիւն ունէր նորա վերայ, քան մի ուրիշը.
սակայն աղջկանը չէր կարողանում բան հասկացնել
որովհետեւ հենց իվան Մաթվէիչին անունը տալիս էր թէ
չէ, միշտ կրկնում էր:

—Բարա, ինձ Դօնը կըձգիմ,—և հայրը լռում էր,
այս խօսքիրը լսելիս գողում էր, սաստիկ վախճառում, չլինի
թէ աղջիկը իրաւ անի, ինչ որ ասում էր:

Եակուլ Մարտինիչը չկարողացաւ իւր նպատակին
հանել. իւր բանակցութեան մասին յայտնեց Տարաս
Քարփիչն, մի և նոյն ժամանակ յուսագրեց, թէ էլի
կ'աշխատի, որքան կարող է, թերեւս այն օրը բարի սա-
հաթի չէր հանդիպել, կամ Քարփ Սիմեօնիչն էլ բար-
կացած էր մի բանի վերայ, զորա համար ոչինչ խօսք
չտուեց:

—Դու մի տանջուիլ, Աստուած ողորմած է:

Տարաս Քարփիչը նոյն աղաշական ձեռվ կրկնեց.

—Դու ևս միակ օգնականս Եակուլ Մարտինիչ,
ձեռս քու փէշն եմ ձգել, մահս և կեանքս քեզանից է
կախուած:

Քարփ Սիմեօնիչը գուռը ուխտի գուռ էր գարձել,
ամեն մի պսակուող հարուստ երիտասարդ իւր միջնորդն
էր ուղարկում նորա մօտ, բայց ոչ ոք էլ գոհ չէր վե-
րադառնում, որովհետեւ օրիորդը չէր համաձայնում ոչ
ոքին տալ իւր ձեռքը, իսկ իւր սրտի սիրածի անունը
գեռ չէր տուել, գեռ իւր հօրը չէր յայտնել որ ինքն
արդէն սիրում է Արտուշին, և նորանից ոչինչով չէ
կարող սաժանուել: Մաշան օրէօր սպասում էր ամսուայ
վերջին, որ Արտուշը պիտի գտր իւր հաշիւը ստանա-

լու. բայց նա մտածում էր, ինչպէս անէր, որ Արտօւշը այնպիսի ժամանակ գալի, որ հայրը տանը չլինէր, նոյն իսկ քաղաքում չլինէր: Եյդ էլ շատ հեշտ էր. մի քանի օրից յետոյ հայրը գործով պիտի գնար թ. քաղաքը, ու այն տեղ մնալու էր մի քանի օր, գուցէ մի շարաթ: Կաւ ժամանակ է, ինքն էլ խոմ ամեն օր Արտօւշի խանութից բան առնելու է գնում, կիմացնի, Արտօւշն էլ հաշեւը մահանայ արած, ամեն երեկոյ կըգնայ, իւր հաշեւը օրիորդի հետ վերջացնելու, —երկուսի էլ ցանկացած բանն է:

Քարփ Սիմեօնիչը տանը չէր. օրիորդը արդէն յայտնել էր այդ Արտօւշին: Շարաթ երեկոյեան Արտօւշը իւր հետ առած Քարփ Սիմեօնիչի հաշուատերը, գնաց նորա հետ հաշեւները վերջացնելու՝ սուտ չզիտեցող ձեանալով: Օրիորդը սպասում էր Արտօւշին: Քաշեց զանգակը, աղախինը ելաւ, յայտնեց Քարփ Սիմեօնիչի կնոջը Արտօւշի գալը: Մաշան ժամանակ չտուեց մօրը խօսելու, հրամայեց աղախնուուն հրաւիրել ներս: Արտօւշը մինչեւ ականջերը կարմրած մօտեցաւ, բարեւեց Քարփ Սիմեօնիչի կնոջը, օրիորդին ու նստեց զիվանի վերայ:

— Աղան տանը չի, — եղաւ Արտօւշի առաջին հարցում:

— Զէ, ջանիկս, — պատասխանեց Մաշայի մայրը, — աս երկու օր է գնացիլ է թ. քաղաքը, մի երկու օրէն պիտ գայ:

— Հապա ի՞նչ անենք, մամա, ստակի կարօտութիւն ունիմ, գուք չիք կրնալ հաշեւները վերջացնել:

— Արտօւշ, ջանիկս, ադ աղային բանն է, մեզի այդ պէս հրաման չունի արած, գահա մի քանի օր համբերէ, պէտք էլած բանիրս էլ տուր, կուգայ, կըվերջացնի:

— Ի՞չ, զարար չունի, — ասաց Արտօւշը, և սուտ շարժում արեց, որպէս թէ ուզում է գնալ:

Մաշան նորան չթողեց.—նիստ, չայ լսմիր, յետոյ
կերթաս:

Արտուշը թոյլ պատճառաբանութիւն արեց. այդ
էլ Մաշայի մօր աչքերին մի տեսակ թող փչել էր:
Մաշան և Արտուշը տաք խօսակցութեան էին բռնուած,
բայց մայրը նոցա խօսակցութիւնից բան չէր հասկանում,
որովհեակ նոքա խօսում էին ֆրանսերէն, թէև ջարդ ու
փշուր անելով: Մաշայի մայրը ուրախանում էր, որ իւր
աղջեկը Փրասնակ էր խօսում, բայց նոցա սիրան ու
հոգին չէր հասկանում: Պարզ բան է, թէ երկու սիրա-
հարների խօսակցութիւնը բնչ կը լինէր, միայն հետեան-
քը այն եղաւ, որ օրիորդի մօր բացակայութեան միջո-
ցին քաղեցին մի երկու երկիւղալի, բայց սիրով լիքը
համբոյրներ միմեանց շըմունքից, իսկ Մաշան իւր թան-
գագին մատանին սողացրեց Արտուշի մատը:

Բաւական անցել էր, Արտուշը այլես մեալ չէր
կարող բայց հեռանալ սիրաը չէր տալիս, նա յաղթեց
սրտի ցանկութեան, բարի զիշեր ասաց և դուրս գնաց:
Մաշան ձանապարհ էր գնում խօսելով տաք տաք, նա-
խասենեակում բաժան համբոյր տալիս, որ և տեսաւ
աղախինը: Արտուշը հեռացաւ, օրիորդը մի աչք ձգեց
աղախինու վերայ և ներս մտաւ:

Առաւօտը արեն երեւելուց առաջ խանութների մէջ
համբոյրի խօսք ու զրիցը աւելագրութեամբ կը լինէր,
բայց աղախինը Մաշայի հայիացքից շատ բան հասկա-
ցաւ ու մաքումը զրից օգուտ քաղիլ հանգամանքից:
Այնուհեակ աղախինը գերի էր իւր բարիշնային, իսկ
բարիշնան աղախինու հզօր պաշտպանը: Այժմ եթէ ա-
ռանց ռոճկի էլ պահէին աղախինուն, նա ամենայն յօժա-
րութեամբ կը մնար, որովհեակ հէնց այդ ժամանակ էլ
երկու ռոճկի չափ բան ունէր:

Այդ երեկոյից անցել էր մի քանի օր: Զգիտեմ, ինչ

մի գործի համար Մաշան բարկացել էր իրանց աղախնունու վերայ. ոռւս աղախնունու երեսին ծիծաղելը կամ նորա հետ խաթրով խօսելը, թէ տան կառավարիչ նշանակելը, — նոցա հետ պիտի միշտ հրամայելով խօսել: Մաշան այս զէպքում խիստ սխալվում էր, ոռւս աղախնունու բերնի փակ բալանիք չկայ, նորան հաւատ ընծայելը խիստ յիմարութիւն էր, Մաշան արդէն յիմարացել էր այդ մասում: Աղախնը վրէմբը լուծելու համար Արտուշի համբուրելը պատմել էր մի ուրիշ աղախնուն, այս բաւական էր, այդ նշանակում է ամբողջ քաղաքին յայտարարել Այժմ ամեն ծակ բերան Մաշայի և Արտուշի վերայ էր բացվում: Քարփ Սիմեօնիչը վերջացնելով իւր հաշեւը այլես Արտուշի խանութից ոչինչ չէր վերցնում: Նորա կատաղութիւնը տւելի բորբոքում էր Սիմեօն Իլիչը: Լաւ պատճառ էր Իվան Մաթվէիչին գործը գլուխ բերելու: Սատանի պէս նորա դամարն էր մտել, թող չհամաձայնի:

— Քարփ Սիմեօնիչ, դու նշանը վերցուր, այնուհետեւ աղջիկդ ոչինչ չի կարող անել, սպառնացիր զրկել նորան ժառանգութիւնից. Մաշան էլ կամայ ակամայ կը հնազանդի քեզ: Հենց նշանը վերցրիր, նու կը մոռանայ Արտուշին, այնուհետեւ կըսիրի Իվան Մաթվէիչին, հէտ էլ բան չի լինիլ:

Քարփ Սիմեօնիչը կակզել էր, նա մերժեց Եակուլ Մարտինիչին, խօսք տուեց Սիմեօն Իլիչին, բայց ասաց որ մի քանի օր էլ համբերի, ինքն աղջկանը կ'աշխատի համոզել եթէ չլաց, իւր ասածը կ'անի: Մաշան այս խօսք ու զօիցից յետոյ արդէն հօրն էլ, մօրն էլ յայտնել էր, որ սպանեն էլ, Արտուշից ձեռք չի վերցնիլ, զուր տեղը չնեղին իրան:

Սիմէոն հլեզը իվան Մաթվէիչի և Քարփ Սիմեօնիչի
ձեռնտուութեամբ քաղաքի մեծ մասը իւր կողմը դար-
ձրեց ու այսպիսի խառն ու աղմկալի ժամանակ յաջո-
ղեցրեց քաղաքազլիսի աթոռի վերայ նստելու. այս մա-
սին ես լոռում եմ: Սիմէոն հլեզը հասաւ իւր նոպատակին:

Մաշան խիստ տագնապի մէջ էր: Արտուշը արգէն
իւր խանութի բոլոր բարին ծախել ու երկու շաբաթի
չափ էր, որ ելած էր խանութից, չէր կամենում ոչ մի
գործ բռնել: Նոյեմբեր ամսին բերնէ բերան խօսում էին
Մաշայի և Արտուշի վերայ. Մաշան չկար, Արտուշի
հետ անյայտացել էր. Քարփ Սիմեօնիչը խիստ տիտուր
էր, կինը արին-արտասուք էր թափում: Մաշան չկար,
չկար Քարփ Սիմեօնիչը աչքի լցու սիրական զաւակը:

ՍՈՒԼԹԱՆ.



I.

ՄԱՐՏՈՎԵՑ.

(Նուէր մօրս—Ե. Բ.)

«Ни красотой, ни роскошью парядъ
Ты не прельстишь, отчизна, никого...»

Մարտոս.

Դու չես գրաւիլ, իմ հայրենիք, գեղեցկութեամբ ոչ ոքին,
Տընուր դէմքով սև շոր հազիդ—դու օտար ես ամենքին,
Քո արցունքը թէպէտ խորիժ են որախազգաց շըրջանում,
Բայց գարձեալ իմ սիրտը միայն քո սուրբ անուամբ է տրոփում:
Դու կեանքիդ մէջ ո՛չ մայր էիր, ո՛չ երջանիկ ամուսին...
Քաղցած օրեր, ըստըրկութիւն—ահա այդ էր քո բաժին...
Անբազդ որդիքդ կամ պիտ լըռեն, բուժ հեզութեամբ համբերեն,
Կամ զայրանան և դաշտ ելնեն, մահը լըծից վեր դասեն...



II.

ՕՏԱՐ ՊՈԵՏԻՆ.

Դու, օտար պօէտ, մի՞ հըպարտանար,
Ազգիդ փառքովը դու մի՞ պարծենար.
Զըկարծես թէ ես մի օր կնախանձեմ,
Քո տեղ մի վայրկեան ես լինել կ'ուզեմ,
Ո՛չ դու սխալվում ես, չարաշար սխալվում.
Փառաւոր զրութիւնդ ինձ չէ հրապուրում...
Քո գըլինին գարսած ուկէ պըսակներ
Երբէք իմ սըրտիս նախանձ չեն ծըներ,
Ասենք, թէ ազգըդ—ազատ, երջանիկ—
Բերկրութեան մէջ է իր անկախ երկրում...
Թող քո ազգայինք աղնիւ են սաստիկ,
Ունին մեծ հըռչակ ամբողջ աշխարհում.
Թող քո երկիրը ունի թընդանօժ,
Մեծ-մեծ պահեստներ—գընդակ ու վառօդ.—
Եւ քո քաջ ազգը դէմ դընէ անթիւ
Բիւր լէգիոններ թընամու առջև.
Թող լինի ծաղկած ազգիդ գիտութիւն,
Ունենայ լայն ու ճոխ գրականութիւն,
Թող քո գիւղացին կարդայ լըրագիր
Ու քըննադատէ Բիսմարկի ճառեր:
Թող ազգըդ կանգնէ քեզ համար արձան—
Աչեղ մեծութեամբ, ապրող յաւիտեան...
Քեզի «ովսաննա» կանչելով տանէ...
Իրա ուսերի վերայ նըստացնէ:

Թող ազգըս ինձի արձանի տեղը
 Փորէ մի նեղլիկ, անշուք գերեղման...
 Թող ինձ քարկոծէ անմիտ ամրոխը—
 Նա կցը է, անկիրթ—առանց իւրարութեան.
 Թող նա չուզենայ ոչ սուր, ոչ նիզակ,
 Թող ըստրուկ լինի տաճիկ իշխանի,
 Չունենայ ազատ գըրիչ ու «զանգակ»,
 Անյայտ է, մոռցած, առանց «երանի»:
 Բայց էլի ես քեզ չեմ նախանձելու,
 Բաղդաւոր պօչտ օտար ազգութեան...
 Դու զարկիր քնարիդ—ուրախ երգելու...
 Ես պիտի սըգամ բաղդը հայութեան:
 Դու երգիր ուրախ զալուստը գարնան,
 Ես պիտի նուագեմ «ողբ առ չայաստան»...
 Փառքով՝ պարծանքով դու վազիր դիմաց,
 Գովիր յաղթութիւնք քո ազգի քաջաց.
 Ես պիտի ծածուկ գիշերով գընամ,
 Մեռած Վարդանի շերիմը սըգամ...
 Մըթութեան միջին գուցէ չոգրանեմ,
 Սակայն բիւր հանգած հերոսներ կ'տեսնեմ:
 Խոցա ստուերները մըուայլ խաւարում
 Շըրջում են, գիտեմ, Աւարպյր գաշտում...
 Ես այն ձեռքերը—գեռ արնաթաթախ—
 Պիտի համբուրեմ վառուած ու անվախ...
 Թէպէտ ես պիտի տլխուր քընարիս
 Հընչեմ միշտ երգեր, ձայներ սըգալից...
 Սակայն քեզ օտար, չեմ նախանձելու...
 Պատճառ մեր աստղը շուտէ փայլելու.



III.

* *

(Սուկունակից)։

Ինչու, մուզայդ իմ՝ աչքերիս կըրկին
Յպյանուեցար քո այդ շըլացնող փայլով.
Ինչու, ո՛չ, ինչու դիւթիւ ձայներով
Շըլացնում ես իմ թըմբած ականջին,
Ես վաղուց կորցրի հաւատ փըրկութեան,
Վաղուց կապուեցաւ իմ անզուսպ լեզուս...
Կասկածոց, ճընշման տակը ծանրութեան
Մընջուեցին քնարիս լալերը անյօյս:
Ես ոյժից ընկած—չեմ այլ բողոքում,
Քարշ տալով շըլթան, կարծես, թէ քընած...
Սակայն ինչու դու դարձեալ իմ սըրտում
Ցանեցիր շըփոթ—վաղուց հանդարտած:
Երկնային կրակը քո վառ աչերի
Փայլեց իմ մուլթը, իմ խոնաւ բանտում...
Եւ դա ցըսուեցաւ, նրման կպյծերի,
Թափուեց շըլթայիս ժանգոստ օղերում:
Նայիր քընկուշիկ, իւր սուրբ ձեռքերով
Թափանցիկ դարձեց ամուր պարիսպներ...
Նա ինձ հարկադրեց նայել բաց աչքով
Վեհ աղատութեան լսել գոչիւններ։

Եւ հըպարտ սիրտըս առաջուան ոյժով—
 Թրոած օրերի գոռող յատկութեամբ—
 Հսկսեց տրոփել անմեղ յոյսերով...
 Մըլել ինձ առաջ լոլօր դօրութեամբ:
 Ես շոփոթուեցայ, կարմիեցի սաստիկ
 Երկաթի խլուպոտ ձայնի պատճառով...
 Ես ամաչեցի ինչքա՞ն, իմ՝ քաղցրիկ,
 Երբ անցար ինձ մօտ փակ դըռան ձեղքով:
 Բայց, ա՞և, անզօր եմ երկաթը փըշոել,
 Բանտիս պատերը չեմ կարող ջարդել...
 Մուզայդ իմ՝ անգութ, ինչո՞ւ յայտնուեցիր,
 Ինչո՞ւ ըստըկին քընից զարթեցրիր:

IV.

ՆՈՐ ԼՈՒՐԵՐ ՏԱՅԿԱՇԱՅԱՏԱՆԻՑ.

Ասում են, հայը վերջապէս յոգնեց
Ուզում է դառնալ մայրենի երկիր.
Մեծ-մեծ գանձերով քըսակը լոցրեց.
Հայրենիքում միշտ մընալ է մոտադիր:
Ես չեմ հասկանում. բաս ի՞նչ են գոռում
Լրագերը ամեն օր. «Հայ էսպէս... էնպէս...
«Հայը խումբերով գաղթում է... փախչում,
«Տուն ու տեղ թողած, երեխերքն լայիս...»
Լուր է տարածուել թէ իբրև հայերն
Հաւաքուելու են իրենց աշխարհում.
Մեծ քանակութեամբ վառօգ, հրացաններ
Առած գլնում՝ են—լնակուել Արմենիում:
Ասում են, էլ նրանք չեն ուզում լինել
Ստրոկ ու հրապատակ տաճիկ իշխանի...
Վառված, կատաղած վազում են կանգնել
Կորուսած փառքը հին Հայաստանի,
Դարձեալ հանելուկ... ինչո՞ւ Եւրոպում
Այդ քաղաքական անցքը չեն լըսել...
Ինչո՞ւ են լըոել, չեն քըննադատում...
Երեի, փոստը շատ են ուշացրել...
Մի բան եմ էլի լըսել մօտերումն.
Հայը, վերջապէս, ուզում է ստեղծել
Գրադարաններ և համալսարան...
Մասնագիտական դըպրոցներ հիմնել,
Ամեն քաղաքում մի մի տըպարան:

«Զարչիութիւնը» թողնել է ուղում —
 Դա անազնիւ են այժըմ համարում...
 Արհեստ ու հողը իրա բընարան
 Ուղում է գարձնել այժմեան կըրութեան:
 Հիմայ հայերը ըսկսում են մըտցնել
 Ընտանիքներում մայրենի լեզուն,
 Տաճիկ բարբառով զըզվում են խօսել,
 Հայու հոգւով են կըրթում տըղերուն:
 Հէնց դորա համար, ինչպէս լըսեցի,
 Կամեցան ստեղծել բոն հայ գըսպրոցներ,
 Արտասահմանում ուսանողք պահել,
 Որ միշտ ունենան լաւ վարժապետներ:
 Վերջապէս, լսեցի զօրք են հաւաքել
 Եւ Թիւրքիային պատերազմ յայտնել...
 Եւ այդ զօրքերը յանձնել են իրանց
 Զէնքի մէջ վարժուած նորուս տըղերանց:
 Պօլսում կըտիրէ մեծ իրարանցում.
 Սուլթանը աշից Բերլին է փախել...
 Խեղձը ըսդիտէ — թէ ինչպէս և ում
 Զեռքը օգնութեան խընդիքով մեկնել:
 Ամբողջ Թիւրքիան գեղնել է վախից...
 Հայերը զինուած սարսափ են ձրգում...
 Սուլթանը ցնորուած արցունք է թափում —
 Ել նա յոյս չունի փըրկուել կորըստից:
 Հայու բանակը, ասում են, արդէն
 Նա ուղարկել է մի խումբ գեսպաններ,
 Որոնք Հայերին պիտի աղաչեն —
 Թիւրքաց սահմանից դուրս բերել զօրքերն,
 Իբրև թէ նորա համաձայնուել են
 Տալ Արմենեային ինքնավարութիւն,
 Միայն թէ շուտով Արդուլ - համիտին
 Խըղճան... թողնեն այս խայտառակութիւնն...
 Վըկայ է՛ երկինք, ես չեմ հաւատում...
 Մանաւանդ այս նոր վերջին «իսաբարին»...
 Պատճառ մի հայ մարդ օրը-կէսօրին
 Տեսել է հրացան... ու... փըշել հոգին:

Ուրիշը պատմեմ. մի լուսնեակ գիշեր
 Փողոցում մի հայ զէնքումը մըտած—
 Երկար սուր խենջալ, երկու բէվօլվէր—
 Մի խօսքով «իգիթ»—բեխերը սըրած,
 Թէպէտ կոնծած էր, բայց էլի անվախ
 Զքոսնում էր մենակ և երգում ուրախ.,.
 Յանկարծ... իր ստուերը աչքովն է ընկում...
 Զէնք-բան թողնում է ու «մի բաշ» կորչում.
 Խեղճը իր ստուերը տաճիկ է կարծել...
 Այ, թէ գիտենար, որ ստուեր է եղել...
 Իսկոյն բէվօլվէր վերան կ'արձակէր
 Եւ իր «կէռ-թըրով» շանսատակ կ'անէր...



V.

կ օ լ.

(Ե ո ա կ.)

Հին ժամանակում մի մարդ էր ապրում...
Սա մի էշ ունէր—կապած ախոռում...
Մի օր խղճում է իր աւանակին,
Վղճում է վերցնել փալանը մէջքէն:

Նատ գրժուար է հաւատալ—
Խօսք ու զբուցին մեծ գին տալ...
Բայց պատմողը պընդում էր,
Որ տէրը խիստ բարի էր:
Նա տեսնում էր իր էշին
Միշտ քրդանելիս, տանջուելիս...
Վերջը վղճուեց անասնին
Հանել ծանըթ վիճակից:
Հասաւ օրը ազատութեան...
Մարդը գիմեց իր էշին,
Զըգեց մի կողմ սանձ ու փալան,
Հանեց նորան ախոռէն:

«Գընա՛, իմ էշ եղիր աղատ.
«Ազատ գաշտում արածիր.
«Զուրը խըմիր գետուց առատ
«Եւ քո տիրոջն միշտ օրչնիր»:

էշը, լըսելով այսպիսի խօսքեր
 Եւ հասկանալով բանի էռթիւնն,
 Սըսում է երկար իր ձիգ ականջներ
 Եւ յայտնում բարձրը զարմանք, ապշութիւն.

«Զէի ըսպասում, որ բարի տէրըս
 «Փալան կըրելը ինձ ամօթ հաշուեր... .
 «Զէի երազում, որ ականջներըս
 «Կըլըսեն մի օր այսպիսի խօսքեր:
 «Եւ ինչո՞ւ է ինձ տէրըս նախատում,
 «Անոյշ պաշտօնից ինձ զըրկել ուզում...
 «Միթէ՞ դարձել եմ անպէտք, անարժան,
 «Միթէ՞ իմ ոյժըս պակսեցաւ այդքան,
 «Իմ նախահարքը—առանց խըտրութեան—
 «Ծառայում էին հըլու, ժըրաջան...
 «Յիշու մ' եմ, պապըս փալանը մէջքին
 «Միշտ ոստոստում էր սիրոջ առաջին,
 «Ես էլ համաձայն նախնեաց աւանդին
 «Կըրում եմ փալան իմ ծընուած օրից...
 «Կարծեմ, որ տէրըս գոչ է ինձանից—
 «Միշտ պատրաստ էի մեռնել իր օգտին,
 «Բայց երեսում է, երկինքը արդար
 «Բարկացաւ վլերաս իմ մեղքիս համար...
 «Ինձ նա խըրկում է, փալանից զըրկում...
 «Տէրըս ինձ արժան չէ այլ համարում,
 «Ոչ... Խըղճա՛, ով տէր, Խըղճա՛ ու ների՛,
 «Ինձ մի բաժանիր սիրուն փալանից...
 «Ինձ, կուղես, այստեղ՝ ախոռում սպանիր...
 «Բայց մի շեղիր ինձ աւանդած ճամբից...»:

VI.

* * *

Եթէ դու մի օր լըսես չառաշանկք—
Դաւըն, սըրտառուչ— մի անյայտ տեղից...
Եթէ քո ուշքը գրաւէ հեկեկանք—
Խեղդուած ու ծածկուած մի մուժ անկիւնից.
Եթէ դու տեսնես բարձը ամրոխից
Երկու վառվըսուն աչքեր դիտելիս...
Եթէ նըկատես խըրոխո պատանուն,
Կուրծքը դէմ արած առաջ գընալիս.
Եթէ դու կեանքի ահեղ ովկեանում
Տեսնես մի նաւակ արագ լողալիս...
Եթէ նաւորդը կատաղած ծովում
Տեսնես ալիքներ անզուսպ ջարդելիս,—
Գիտցիր, մարդկային նա մարդարէն է.
Նա ուղարկուած է խաւարը ցըրել.
Լոյսի, արդարի գրօշակը պարզել.
Սըտութեան զիմում քաջութեամի կըսուել.
Եթէ դու տեսնես, խուժանի միջում
Գոչում է բարձը մի երիտասարդ.
Եթէ նա ձեռքը կըսճքին է սեղմում,
Որը կըսճում է թարախտի չար որդ.
Եթէ լայրացած խուժանը, տեսնես,
Ուզում է պատոել կործանել նորան...—
Վաղիր, յառաջիր—օգնութիւն հասցնես...
Նայիր, քարերը թըռչում են վերան.
Եթէ դու ազդի խաւարած բեմում
Տեսնես այն նիշար, մաշուած պատանուն,
Լաստերը ձեռքին, արինը բերնում,
Քաշացած ձայնով տալիս մի անուն,—

Գընա՛, մօտեցի՛ր, նրա ձեռքը սեղմի՛ր.
 Բայց կարեկցութիւն չփալուես յայտնել.
 Նա խիստ հըպարտ է. նա այդ չի տանիլ.
 Դու միայն նայիր ու լուս հեռացի՛ր:
 Իսկ երբ կըգըսնես նորան վերջապէս
 Մի մութը, անշուք սենեակում ընկած,
 Հիւանդ, շընչասպառ չոր գետնին պառկած
 Բերանից արեան լերդեր թափելիս...
 Երբ որ զարմացմամբ զու տեսնես նորան
 Իր մաշուած կըճքին սեղմած է քնարը...
 Զարկում է զարդուած, կըտրած լարերին
 Մի վերջին աղօթք... մի հրաւեր վերջին...
 Ա, խ, երբ կըտեսնես, որ նա յառել է
 Կիսամար աչքելն անրոշ կէտին—
 Միայնակ, անտէր մահուան ձանկերին—
 Վերջին րոպէն ել մօտ է... հասել է,...—
 Դիտացի՛ր, որ այդ վաղահաս մեսնոզն
 Քարկոծած, զարդուած այն մարդարէն է,
 Բըռնութեան, մըմնի դէմ առ գէմ կըռուողն,
 Սուրբ իդէալի ընտրեալ զինուորն է:
 Նա քաջ էր, անվախ—բայց միայնակ էր—
 Ամրոխը կօյր էր, նըրան խա՛չ հանեց...
 Վերջին անգամն է... նա մի երգ նուազեց—
 Դառնագին երգը զեռ կիսաս մարեց...
 Հանգաւ... չճառենաս... հեռուից զարմացիր.
 Փովիր... չըխըղճաս... ովսաննա կանչիր...
 Նա մարտիրոսուեց ճըմարտի համար,
 Նա տարաւ տանջա՞նք, տանջա՞նք անհամար...
 Սակայն զու նորա անշունչ զիակին
 Զըշամարձակուես լացել արտասուել...
 Նա այդ կըլըսէ... ատում է թզյլին...
 Նորա դէվիլն էր—միշտ հըպարտ տանջուել

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆ.



ՀԱՆՍ ՇԻԼԴԲԵՐԴԵՐԻ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՇԱՆԱՊԱՐՃՈՐԴՈՒԹԵԱՆ

Մ Ա Ս Ի Ն.

Իւր կենսագրութեան մասին հանս Շիլդբերդերը մեղ շատ փոքր տեղեկութիւններ է տալիս. իւր պատմածով, նա Ֆրայզենդի մօտ (Բավարիայ) է ընակել. յետոյ, իրուեւ փոքրաւոր, ծառացել է. մի բավարացի ազնուականի մօտ և Հունգարիոյ Սիգմոնդ թագաւորի հետ թուրքերի գէմ գնացել. մասնակցել է Նիկոպոլսոյ պատերազմում (սեպտ. 28, 1396) և այդ պատերազմում գերի է ընկել թուրքաց մօտ՝ այդ գէպքից մի քիչ առաջ, տամնելվեց տարեկան չեղած. Մի քանի ուրիշ գերինների հետ կամենալով աղատուել արիւնահեղ ջարդոցից, որ տեղի է ունեցել պատերազմից յետոյ, համնում է նա Բրուսսայ, որտեղ սկզբում Սուլթան Բայազիտի հետեւակ և յետոյ ձիաւոր ծառան է դառնում. Այդ տեղից արդէն նա մի փորձ է փորձում իւր վիճակակիցների հետ փախչելու, որ և նկարագրում է իւր գրքի մէջ (գլուխ 6). Այդ միջոցում սկսվում է մի կռիւ և յարձակումն Սեբասի վերայ, որին և նա մասնակցում է (գլ. 9). Նզն բանն էլ արել է նա, երբ գտնուել է Բայազիտի օգնական գեղում, որ ուղարկուած էր Եգիպտոսի Սուլթան Ֆարածին ընկճելու մի ապատմբութեան համար (գլ. 12. 43).

Անգորայի պատերազմում (1402) թուրքաց ոյժը Լէնգլէ-մուրի շնորհիւ ընկնում է և Բայազիտն ինքն էլ գերի է ընկ-

նում։ Շիլդբէրգէրը նմանապէս զերի է ընկնում և ստիպուած է լինում իւր նոր տիրոջ հետ միասին աւելի խորը գէպի արևելք գնալ (գլ. 14)։ Դորանից ոչ շատ ուշ (1405), միանում է Լէնգմէմուրը և նա անցնում է նորա որդուն Շահ Ռոհին (իւր մօտ Շարոս), որ Տէրատի տէրն էր և յետոյ այդ երկիրը իւր եղքօր Միրան Շահին թողեց։ Բայց այստեղ էլ Շիլդբէրգէրը պիտի երկար չմնար. գահի վերայ աչք ունեցող Զէքուէն (Tschekkere), որ Միրան շահի որդուն, Արու-Բէկրի մօտ Թաւրիզում լաւ ընդունելումիւն էր ունեցել, առաջ ընկաւ մի փարբէկ գնդով իւր ոսկի ամրուսի (goldene Horde) վերայ ունեցած իշխանութիւնը, որ Միրան շահը իւել էր, կրկին ձեռք բերելու գիտաւորութեամբ։ Շիլդբէրգէրը այդ գէպօւմն էլ ուղեկցում է թաթարական իշխանին (գլ. 27), որ երեսի թէ նորան ուրիշ գերիների հետ միասին Միրան շահից ընծայ էր ստացել։

Նորա նոր տէրը գարձաւ իւր մրձանաւորի հպատակը և պատերազմում մեռաւ. Նորա գունդը, ուր և Շիլդբէրգէրն էր գտնվում, փախաւ իւր ընկերների հետ օսադ երկիր, բայց և այստեղ, թաթարների խանի սպառնալիքներից ստիպուած, տեղից տեղ էին թափառում։ Այդ կերպ Շիլդբէրգէրը ամենից առաջ Խրիմ հասաւ և այնակեղից Կոմիսարի Սև ծովի վերայ գըտնուող զանազան երկիրները։ Մինդրէլիայում՝ վճռեց նա մի քանի ուրիշ արևմտեան քրիստոնեաների հետ միասին փախչել մահմէգական երկրից։ Համարեա թէ հրաշքով համնում է Կ. Պոլիս, որտեղից Յունաց կայսրի օգնութեամբ յաջողակ կերպով հանում է Հայրենիք։

Դորանից յետոյ էլ մեղ համար պակասում է հետաքրքրութիւնը, թէ յետոյ ինչ վիճակ է ունեցել իւր հայրենիքում, մանաւանդ որ տեղի պակասութեան պատճառով չենք էլ կարող խօսել դորա մասին։

Հրատարակիչը ասում է թէ Շիլդբէրգէրի ճանապարհորդութիւն գիպքը ամբողջապէս իւր սեպհական աշխատութիւնը չէ։ Շատ գլուխներ, օրոնք աշխարհագրական բովանդակութիւն ունին, Յոհաննես Մոնտևիլլա (Johann Montevilla) են առնուած և համառօտիւ արտադրուած. մի քանի տեղերն էլ Մարկո Պոլոյից (Marco Polo) և Կլավիլիսոյից (Clavijo) և շա-

ւանական է, որ ուրիշ մի քանի աղբիւրներ էլ գործ ածած լինի, Այդ տեսակ ճանապարհորդական գրքեր գրելը (այսինքն պատրաստ աշխարհագրական տեղեկութիւններ պարունակելով), երեսում է, որ միջին գարերում շատ ընդունուած բան է եղել Վերոյիշեալ Մանտէվիլան էլ նմանապէս շատ տեղեր իւր գըռքում Օդորիկ Ֆրիաւուլից (Odorico Friaul) և արտագրել, և Լուգովի Փոն Սուգհայմը (Ludolf von Sudheim) նշյապէս խրճանապարհորդական գրքի յառաջաբանում խոստովանում է, որ ուրիշ գրքերից շատ տեղեկութիւններ է քաղել Նմանապէս և մեր հեղինակը անշուշտ իւր առաջը ունեցել է հին գրուածքներ աշխարհագրական և պատմական լուլանդակութեամբ Բայց գորա փոխարէն իւր տեղում տեսածն ու լածը ամենայն միամնութեամբ և ճշուաթեամբ է պատմում: ուստի և Շիդդերգերի աշխատասկիրութիւնը կարելի է ամենայն հաստատութեամբ սեպհական ճանաչել, մանաւանդ այն կտօրները, ուր նա նկարագրում է իւր վիճակը գերութեան ժամանակ և կամ պատմում է երկիրների ու ազգերի մասին, որոնց լաւ է ճանաչել:

Գիրը սկսվում է հետեւեալ յառաջաբանով.

«Ես հանս Շիդդերգերս հեռացել եմ իմ հայրենի աշխարհից՝ իմ ծնած քաղաքից, այն է Միւնիէն, որ Բավարիայումն է գտնվում: հեռացել եմ այն ժամանակ, երբ Քրիստոսի ծննդից յետոյ. Հաղար երեք հարիւր իննուուն և չորս տարի էր անցել և այդ եղաւ այն ժամանակ, երբ Հունգարացւոց Սիկմունդ թագաւորը շուեց դէպի հեթանոսների երկիրը. Ես ևս չուեցի նորա հետ վերայիշեալ քաղաքից իբրև հեծելազօր: Եւ հեթանոսների երկրիցը վերադարձայ կրկին հպարենիք, երբ արդէն Քրիստոսի ծննդից հաղար չօրս հարիւր քսան և եօմը տարի էին հաշնում:»

«Եւ ինչ որ հեթանոսութեան մէջ քաշել ու տեսել եմ գրած և այս գրքի մէջ. և սակայն ամեն բան չեմ կարողացել գրել որովհետեւ չեմ յիշում: Եւ երբ ես հեթանոսների երկրումն էի, չէի կարող ամեն բան տեսնել ու լսել հիմնար կերպիւ. քաղաքներում ու երկիրներում, որտեղ ես եղած եմ, որովհետեւ ես մի գերի էի, իմ՝ անձս ինձ չէր պատկանում: Ուստի և համառօտ կերպով գրի անցուցի այն բոլոր երկիրները, մայրաքաղաքները և ջրերը, որ ես այնտեղ եղած ժամանակս տեսել եմ. այդ բոլորը այս գրքի մէջ գրած է և ես երկիր-

ներն ու քաղաքները այնպէս եմ անուանել, ինչպէս որ նա կայ և տեղական լեզոներն են անուանում»:

Այս յառաջարանից յետոյ հետզիետէ պատմում է այն դէպքերը, որոնց մասին արդէն խօսել ենք, և հետեւալ գասակարգութեամբ. Սիդմունդ Շագաւորը չըւում է դէպի Թուրքաստան, Բայազէտը հրամայում է գերիների մի մասը սպանել, իսկ միւսը Գալլեպոլիս տանել: Բայազէտը յարձակվում է Հունդարիայի և Շատայէրմարկի վերայ, գերիներին Բրուսսայ են տանում. Բայազէտը յաղթում է Կարամանին, յետոյ ուղարկում է Եղիպտական Սուլթանին մի օգնական գունդ և այն, ինչպէս որ վերեւում պատմուած է: Յետոյ պատմում է Լէնգթէմուրի Սպահան առնելը և Զինաստան չուելը, նկարագրում է Խոլամի օրէնքները, խօսում է Մահմէդի, մահմէդականների պասերի և տօների մասին, նկարագրում է այն ծիսակատարութիւնը, որոնք գործ են դնում մի քրիստոնեայի մահմէդական գարճներիս. Խօսում է յունաց և վրաց մի քանի սովորութեանց մասին, նոյնպէս օսկրի մասին ամենամեծ համառօտութեամբ և վերջապէս Հայաստանի մասին, որ և ամբողջապէս թարգմանուած է այսուղ:

Հայաստանից նա իսկոյն վերագաւունում է Կ. Պօլիս, որտեղ ապա Հայրենիք:

62. Շիլդբէրդէրի Հայաստանում մնալը և ալդ երկրի նկարագրութիւնը.

Հայաստանում (Armenia և Երբեմն Ermenia) ես շատ եմ եղել Երբ Լէնգթէմուրը (Themurlin) մեռաւ, ես անցայ նորա որդուն. Այն ժամանակ երկու Հայաստանն էլ Լէնգթէմուրին էր պատկանում, իսկ Երբ ես այնտեղ էի, երկուսն էլ Լէնգթէմուրի որդուն էին պատկանում. Նորա անունը Շարոխ էր, և նա Հայաստանը շատ էր սիրում, որովհետեւ այդ երկիրը գեղեցիկ դաշտեր ունի: Նա մի ձմեռ այնտեղ անց կացրեց իւր Ճորտերով. Նորա գեղեցիկ ագարակների միջով մի մեծ ջուր է անց կենում Կուրման (Kurmam) անունով, Տիգրիս էլ են անուանում նորան. Եւ այդ երկրի ամենալաւ մասը ջրի մօտինն է. Հեթանոսները (այսինքն մահմէդականները) անուանում են նորան Հեթանոսաց Լեզուով Ղարաբաղ (Karahag). Հայաստանի քաղաքներում միայն Հեթանոսներ են բնակվում, իսկ գիւղերում միմիայն Հայեր և

Հարկ են վճարում հեթանոսներին: Ես միշտ հայերի հետ եի բնակվում, որովհետև նոքա գերմանացւոց հետ շատ սիրով էին, ուստի և ինձ հետ շատ լաւ էին և իրենց լեզուն էլ էին ինձ սովորեցնում: Նոքա գերմանացուն Նիմից (Nimitzsch) են անուանում: Հայաստանը երեք թագաւորութիւններից է բաղկացած. մէկը անուանվում է Թիֆլիս (Tiflis). Երկրորդը Սիս (Siss) և Երրորդը Երզնկայ (Ersingen): Հայերը անուանում են նորան Զէվինսկան (Zesinkan) և այդ է Փոքր Հայաստանը. Բարելնն էլ երկար ժամանակ նոցա պատկանել. այժմ նոքա ոչինչ չունին. Թիֆլիսն ու Երզնկան էլ Լէնգմէմուրի որդուն էին պատկանում, երբ ես հեթանոսների երկրումն էի. իսկ Սիս անուանեալ մասը սուլթան (söldan) թագաւորին էր պատկանում և նուածուած էր այն ժամանակ, երբ Քրիստոսի ծննդից արդէն երկու հարիւր և վախսուն եօթք տարի էր անցել: Ահա երբ էր սուլթան թագաւորը նորան նուածել:

63. Ինչպէս Գրիգոր Լուսաւորիչը հիմնում է Հայաստանեաց
եկեղեցին.

Հայերը (Die Armenigen) հաւատում են սուրբ Երրորդութեան. ես նոցա քարոզները շատ յաճախ էի լսում, ես շատ եմ նոցա եկեղեցում պատարագին ներկայ գտնուել, որովհետև Հաւատոներս մէկ է. և սուրբ Բարդուղիմէոսն ու սուրբ Թագէոսն (Sant Thatee) էին, որոնք տասներկու առաքեալներից բաժանուեցան և հայերին քրիստոնեայ գարձրին. բայց և այնպէս նոքա քանից անգամ կրկին Հաւատոները փոխել են:

Մի մարդ է եղել որի անունը սուրբ Գրիգոր էր, հայոց թագաւորն էլ նորա ազգականն էր, և այդ այն ժամանակ էր, երբ սուրբ Սեղմեստրիոս Հռովմում պապ էր: Եւ Հայոց թագաւորը մեռաւ, որ մի բարի քրիստոնեայ էր. յետոյ թագաւոր դարձաւ նորա որդին, որի անունը Տրդատ (Derthat) էր. սա շատ ուժեղ մարդ էր և քառասուն եղի ոյժ ունէր, և այն ինչ որ քառասուն եղ միասին քաշում կամ բարձրացնում էին, նա մենակ էր անում: Այդ իսկ թագաւորը շինել է Բէթղէչէմի մօտի մեծ եկեղեցին*), ինչպէս որ դորա մասին արդէն պատմել

*) Բէթղէչէմի բաղկիկան, որ Կոստանդին կայսեր շինածն է, դորա մասին չէ յիշվում նախընթաց գլուխներից ոչ մէկում:

եմ, Երբ նա իւր հօրից յետոյ թագաւոր եղաւ, իսկոյն փոխեց հաւատը, հեթանոս դարձաւ և քրիստոնէութեան ամենաշար ատիշը. Նա կալանաւորեց իւր ազգական Գրիգորին և հրամայեց նորան, որ նա իւր կուռքերին հաւատայ, Բայց երանելի մարդը չկամեցաւ այդ անել և այն ժամանակ թագաւորը նորան ձգեց մի վիրապ, ուր անթիւ օճեր ու զանազան չար սովորներ կային և նորան պիտի ուտէին, բայց նորան ամենեին չգիպան, և նա այնտեղ տասներկու տարի մնաց:

Այդ միջոցին սուրբ կուսանք էին եկել օտար աշխարհներից հայաստան և քարոզում էին քրիստոնէական հաւատը. և Երբ թագաւորը այդ բանը լսեց, հրամայեց որ նոցա իւր մօտ բերեն. Նոցա մէջ կար մէկը, որի անունը Շուշան (Susanna) էր, որ սաստիկ գեղեցիկ էր. հրամայեց թագաւորը, որ իւր պալատը տանեն և ուղում էր նորա կուսութիւնը ուժով խախտել բայց որչափ էլ նա ուժեղ լինէր, չէր կարող այդ կուսին յաղթել, քանի որ Աստուած հետն էր. Եւ երբ այդ բանը սուրբ Գրիգորին պատմեցին, նա վիրապից ասաց. «Ով չար խոզ» և նոյն իսկ րոպէն թագաւորը խոզ դարձաւ, իւր գահեցը վայր գլորուեցաւ և վազեց դէպի անտառ. Եւ իսկոյն բոլոր երկրում մի մեծ սարսափի տիրապետեց և երկրի իշխանները հանեցին Գրիգորին վիրապից և աղաւում էին, որ նա թագաւորին օգնէ. Այն ժամանակ նա պատասխանեց, թէ Կօղնէ Աստուծոյ օգնութեամբ, եթէ նա իւր զօրքի հետ միասին քրիստոնէական հաւատը ընդունէ. Եւ երբ իշխանները թագաւորի փոխարէն պատասխանեցին, թէ համաձայն են, Գրիգորը ասաց. «Վաղեցէք և գնացէք նորան փնտուելու, որոնեցէք նորան անտառում, գտէք և բերէք». Եւ այն ժամանակ վաղեցին նորա, որոնեցին անտառում, գտան և բերին նորան սուրբ Գրիգորի մօտ. և Երբ նա Գրիգորին տեսաւ, վաղեց խկոյն և նորա սոները համբուրեց. Այն ժամանակ Գրիգորը չափեց իւր ծնկների վերայ և աղաւեց Ամենակարող Աստուծոն, որ նա իւր ողբոմութիւնը այդ մարդու վերայ ցցց տայ և նորան բժշկէ. Այդպէս էլ եղաւ. Թագաւորը կրկին մարդ դարձաւ.

Եւ դորանից յետոյ մկրտունցաւ թագաւորը իւր բոլոր երկրի հետ միասին և դարձան բարի քրիստոնեաներ. յետոյ չուեց նա դէպի բարելսնացի հեթանոսները, առաւ Բաբելոնը և բոլոր երկիրն ու երեք թագաւորութիւններն էլ քրիստոնեայ դարձրեց,

և ընտրեց Գրիգորին բոլոր քահանայապետների գլուխ, և իշխան բոլոր հոգեորական կարգին. Այս թէ ինչպէս նոցա հաւատը հաստատուեցաւ Տրդատ թագաւորի ու սուրբ Գրիգորի շնորհիւ և ինչպէս շատ հեթանոս երկիրներ բռնի կերպով քրիստոնէութիւն ընդունեցին սրով։ Այժմ՝ նոքա իրանց թագաւորութիւնները բոլորը կորցրել են. նոքա շատ կոռուսէր և վիճող մարդիկ են. Շատ ժամանակ չէ, որ նոքա իրանց թագաւորութիւնը կորցրել են և չետն էլ Սիս մայրաքաղաքը, որ այժմ՝ Սուլթան թագաւորին է պատշաճում. Այնտեղ է և նոցա պատրիարքի նիստը և այդ պատրիարքը սուլթանին մեծ հարկ է վճարում. Կիպրոսի թագաւորը իւր պալատում շատ պաշտօնեաներ ունի հայերից, որովհետեւ այդ կզզին հայաստանին մօտ է:

Եւ պատմեցին յետոյ Գրիգորին այն հրաշքների մասին, որ ս. Սեղեստրիոսը գործել է Կոստանդինի վերայ, որ այն միջոցում կայսր էր և բժշկուել էր րորոտութիւնից և փրկել բոլոր մանկանց, որոնց բերում էին սպանելու, որովհետև բժիշկները խորհուրդ էին տուել կայսեր մանկանը արեան մէջ լուացուել առողջանալու համար։

(64) Եւ այդ լսելուց յետոյ երանելին Գրիգորը գնաց թագաւորի մօտ և ասաց նորան. «Այն վրութիւնը, որ դու ինձ տուել ես, ոյժ չընի, ես նորան միայն հոռվի աթոռից՝ սուրբ Սեղեստրիոս հօրից կարող եմ ստանալ»։ Եւ պատմեց այն հրաշքների մասին, որ սուրբ հայր Սեղեստրիոսը գործել է Կոստանդին կայսեր վերայ. և թագաւորը այդտեղ պատասխանեց նորան, թէ ինքն էլ կըցանկար նորան անձամբ տեսնել և պատրաստ է նորա հետո միասին ճանապարհ ընկնել Եւ գնում՝ է իւր բոլոր երկրը, քննում, հոգ տանում ամենայն պիտոյքի մասին, քառասուն հազար քաջ ասպետներ ու ճորտեր հետը հաւաքում, անթիւ թանկագին քարեր առնում ու ճանապարհ ընկնում սուրբ Սեղեստրիոսին յարգելու. Եւ Գրիգորն էլ առաւ հետը ամենագիտուն և ամենաիմաստուն մարդիկը, որոնք այն ժամանակ կային. և ճանապարհ ընկան նոքա Բարելոնից Պարսկաստանով, մեծ հայաստանով և շատ ուրիշ երկիրներով, անցան երկաթէ գոները, որ երկու ծովերի մէջ է գտնվում, եկան մեծ թամարտանը՝ դէպի Խուսաստան (Reussen) և Վալախիայ և Բուլգարիայ ու Հունգարիայ և Ֆիրգաւուլ (Firgaul և երբեմն Friaul) *) և

*) Աենեարիկ դաւառի հետօնաւորի ելեւոն մասը։

Լամպարդիայ (Lamparten) և Դուշան (Duschlan) **), և այդ բոլոր երկիրներից նոքա անցնում էին ցամաքով, Բարելընից հոռվմ գնալով որպէս զի ծովից չանցնեն: Եւ երբ նոքա հոռվմին մօտեցան, սուրբ Սեղբեստրիոսը ուղարկեց բոլոր կոյրերին, կաղերին և հիւանդներին Գրիգորի հանդէպ, և օւզում էր այդ կերպ նորա սուրբ լինելը քննել: Եւ երբ Տրդատ թագաւորը տեսաւ այդ ամիսինը, բարկացաւ, և զայրացաւ, թէ ինչու Սեղբեստրիոս պապը իրան այդպէս ծաղրում է. այն ժամանակ Գրիգորը ասաց թագաւորին. «Մի՛ բարկանալ, ես լսաւ գիտեմ, թէ նորա ցանկութիւնը ինչ է»: Յետզ ինդիեց որ ջուր բերեն, չոքեց և գոչեց Ամենակարող Սաստուծոն, և ամենքը որոնց վերայ նա այդ ջրից սրսկում էր, իսկցն բժշկվում ու առողջանում էին: Եւ երբ նա իւր աղօմքը վերջացրեց, առաւ մի սպոնկ և մի փայտ (կապեց նորան), մնաւ հիւանդների մէջ ու նոցա վերայ սրսկեց այդ ջրից և ում որ ջուրը դիպչում էր, իսկցն առողջանում էր, նոյն իսկ եթէ նա կոյր և կաղ լինէր: Եւ երբ սուրբ Սեղբեստրիոս այդ լսեց իսկցն առաջ ընկաւ իւր բոլոր քահանաների հետ նոցա հանդէպ ենենելու և բոլոր հոռվմի հետ նոցա պատուելու համար: Ուշադրութեան արժանի է, որ նոքա մի ամեռողջ տարի և մի օր ճանապարհորդում էին Բարելընից մինչև հոռվմ ցամաքով: Եւ այստեղ ինդիեց Գրիգորը սուրբ Սեղբեստրիոս պապից, որ նա իրաւունք տայ քահանայապետ լինելու իւր բոլոր ազգի վերայ և, եթէ կարելի է, թոյլութեան տայ, որ նա, նմանապէս և իւր ժողովուրդը միշտ չքան սուրբ աթոռը: Այն ժամանակ նա տուեց նորան պատրիարքի աստիճան ու իրաւունք և ասաց որ, եթէ մի որիշն էլ ցանկանայ սոտանալ այդ աստիճանը և իրաւունքը, պիտի ուրիշ տեղ նորան չփնտուէ, եթէ ոչ հոռվմում և իւրաքանչիւր երեք տարին մի ժամ պիտի մի մունետիկ ուղարկէ գէպի հոռվմայ սուրբ աթոռը: Այդ բանը նա սուրբ հօր խոստացաւ և աւելացրեց, որ ամենքը, որոնք նորա հետ մի հաւատի են՝ թէ՛ հոգեորականք և թէ՛ աշխարհականք պիտի հոռվմի աթոռուին հպատակ գառնան, և ով որ իւր երկրում այդ չանէ, նա պապի շնորհից կըզբկուի, լինի նա թագաւոր կամ եպիսկոպոս, հարուստ կամ աղքատ, և թագաւորը իւր բոլոր ասպետների հետ երդուեց այդ պատուէրը կատարելու:

**) Տոսկանայ:

Երեք հարիւր տարի անցաւ այն օրից, երբ Գրիգորը և Հայերը հռովմի աթոռին հպատակեցան, դորանից յետոյ նոքա էլ չեն դալիս գեպի հռովմի աթոռը և իրանք են ընտրում իրանց պատրիարքին և անուանում են Կամողիկոս (Kathagae), իսկ թագաւորին անուանում են թագաւոր (takechavr):

65. Տրդատ Թագաւորը փրկում է հոռմայեցիներին վիշապից և մինչերուից: Հայատանեալց եկեղեցւոյ Հռովմից բաժանուելը.

Այդ իսկ միջոցում հռովմի մօտ սարերի մէջ մի վիշապ և միեղջերու էին գտնվում: Նոքա ժողովսրբն ճանապարհներին մեծ վիշաներ էին տալիս և ոչ ոք չէր կարող նոցա ոչնչացնել: Այն ժամանակ սուրբ Սեղեսարիոսը խնդրեց Հայոց թագաւորին և ասաց, որ նա այնպէս ուժեղ մարդ է, կարող է նստուծոյ կամ քովը փորձել՝ արդեզք չէ կարող ոչնչացնել այդ վիշապին ու միեղջերուին: Եւ գնաց թագաւոր մենակ գեպի այն սարերը, որպէս զի նայէ, թէ նոքա որտեղ են բնակում: Նա հասաւ այն ժամին, երբ նոքա իրարու կծում էին և կանգնեց ու սկսեց գիտել: Այնուհետև վիշապը փախաւ, և միեղջերուն նորան մի այրի մէջ քշեց, որ մի ժայռի վերայ էր, և յետոյ վիշապը գնաց այրի մէջ և պաշտպանուեց: այն ժամանակ միեղջերուն յեզուով զարկեց վիշապին և ուզում էր այդ կերպ նորան այրից գուրս հանել: այդ տեղ վիշապը բոնեց միեղջերուի լեզուից և երկուսն էլ փամաթուեցան: Ահա այսպէս հանեց միեղջերուն վիշապին իւր այրից, մինչև վիզը գուրս բերելով այնպէս որ մէկը միւսին բաց չէր թողնում: Այդ իսկ միջոցին վազեց թագաւորը նոցա վերայ և վիշապի գլուխը կարեց, և որովհետև միեղջերուն մեծ ցժուվ նորան քաշում էր, նա մարմին հետ միասին ընկաւ անդունդը ժայռի վերայից: Թագաւորը կրկն վրայ հասաւ և միեղջերուին էլ տեղն ու տեղը սպանեց: Յետոյ գնաց նա կրկն հռովմ քաղը և հրամայեց, որ գլուխները բերեն: վիշապի գլուխը մի սայլի վերայ հազիւ էր տեղաւորփում: ահա թէ ինչպէս փրկեց Տրդատ թագաւորը հռովմայեցիներին այդ վիշապից և միեղջերուից: և այդտեղ սուրբ Սեղեսարիոս պապը թագաւորին ու նորա ժողովը եանը մեծ պատիւներ տուեց:

Յետոյ գնաց Գրիգորը սուրբ Սեղեսարիոսի մօտ և ինդրեց նորանից քրիստոնէական հաւատոյ յօդուածները, և պապը նո-

րան տուաւ. Դորանկից յետոյ Գրիգորը և թագաւորը վերադարձան իրանց հայրենիքը. այնուհետև Գրիգորը սովորեցնում էր քրիստոնէից հաւատը իւր ազգին, այսինքն Հայոց, այնպէս, ինչպէս որ նորան սուրբ Սեղեստրիոնն էր սովորեցրել. Եւ երբ երեք հարիւր տարի անցաւ այդ սուրբ Գրիգորից յետոյ, նոքա բաժանուեցան Հռովմայ սուրբ աթոսից և իրանք իրանց համար պատրիարք ընտրեցին. Արժանի է ուշագրութեան որ, երբ մի պատրիարք ձեռնադրվում է, պիտի տաններկու և պիտի արքեպիսկոպոս ներկայ գտնուին. Նոյնպէս արժանի է ուշագրութեան, որ նոքա այն յօդուածները շատ են փոփոխել որոնք Գրիգորը սուրբ Սեղեստրիոսից բերել էր. Աչա թէ ինչպէս նոքա Հռովմի սուրբ եկեղեցուց բաժանուեցին.

65. Հայոց պատրիարքը և Եկեղեցական պատուիրանքները.

Նոցա քահանաները պատարագ են անում չբարձրացրած հացով. և այդ հացը ոչ ոք չէ պատրաստում՝ բացի քահանայից, որ պատարագը պիտի անէ և մէկից աւելի չէ կարող անել. Եւ մինչեւ պատրաստելը միւս քահանաները պիտի նորան բոլոր սաղմուը կարդան և եմէ որիշ կարգացող չկայ, պիտի սաղմուը ինքը կարդայ. Նոքա ասում են, թէ մեծ մեղք կըգործէ մի աշխարհական, լինի նա կին կամ տղամարդ, եմէ նշխարք պատրաստէ, որ յետոյ Աստուծոյ մարմինը պիտի դառնայ. Նոյնպէս ասում են, թէ այդ խմորը միւս խմորների պէս շաղախելը մեծ անարգարութիւն է. Նոքա պատարագի համար միայն գինի են գործ ածում՝ և զուր ամեննեին չեն խառնում հետև. Բոլոր քահանաները, որոնք պատարագի ներկայ են ուղարկում գտնուել, միասին կանգնած են լինում և մէկը միւսին երեսը չէ կարող դարձնել, առաջ քան եղեղեցւոյ գլխաւոր խորանին գարձնելը.

Նոքա աւետարանը կարգում են արեւ ծագելու ժամանակ, եւ այն քահանան, որ պատարագ պիտի անէ, իրաւունք չունի այդ օրուան մէջ տեղը քննելու. Նոյնպէս եմէ նա պատարագ անել կամենայ, պիտի երեք գիշեր իւր կնոջիցն հեռու լինի և մի գիշեր էլ պատարագից յետոյ. Նոքա ոչ մի սարկաւագի և ոչ մի պաշտօնեայի չեն թողնում խորանին մօտենալ մինչեւ քահանայ ձեռնադրուելը. Նմանապէս պատարագի ներկայ գտնուելու իրաւունք չունի այն մարդը կամ կինը, որ խոսսովանուած չէ.

Նմանապէս կանայք իրաւունք չունին եկեղեցի գնալու ամսական մաքրութեանց միջոցում: Եւ ով որ իւր մերձաւորին նախանձէ, ատէ և կամ՝ թշնամի դառնայ, նցնպէս եկեղեցի գնալու իրաւունք չունի, նա կարող է միայն եկեղեցու առաջ կանգնել նորան ներս չեն թողնիլ, մինչև որ նա իւր թշնամու հետ չհաշտուի: Մարտիկ և կանայք միասին երգում են «Հայր մեր» և «Հաւատամիքը» պատարագիչ քահանային հետ: Նոքա փարքիկ մանկանցն ել տալիս են սրբութիւն: Նոցա քահանաները ոչ մորուքները և ոչ մազերն են կտրում: Նոքա բալասանը սուրբ իւղին են խառնում (մեռոն), այդ բալասանի համար պատրիարքը մեծ տուրք է տալիս մեծ սուլթանին և յետոյ ուղարկում է նորան վիճակները:

Եւ երբ մինը քահանայ է ձեռնադրվում, պիտի ձեռնադրուելուց յետոյ քառասուն օր և քառասուն գիշեր եկեղեցում անց կացնէ և երբ այդ քառասունին անցնի, այն ժամանակ նա իւր առաջնին պատարագն է անում: Պատարագիցն յետոյ տանում են նորան իւր տունը, առանց պատարագի զգեստը վերայից հանելու, այդտեղ գալիս է նորա կինը, առաջը չըքում է և ստանում է նորա օրհնութիւնը. յետոյ գալիս են քահանայի բոլոր ծանօթներն ու ազգականները, մատաղ են բերում և հրաւիրում են բոլորին: Քահանան այդտեղ աւելի մեծ հարսանիք է կատարում, քան թէ իւր պատառած օրը. և նա իւր կնոջից հեռու է մնում, մինչև որ քառասուն օր իրարու վերայ պատարագ շանէ, Դորանից յետոյ կարող է նորա հետ պառկել:

Երբ երեխայ են մլրտում, կնքահայրը պիտի անպատճառ տղամարդ լինի և ոչ կին. մի կնոջ կնքամայր դառնալը մեծ մեղք է համարվում: մեր Փրկչին էլ, ասում են, մի մարդ է մլրտել և ոչ կին: Նոքա մլրտութիւնը մեծ հանդէսով են կատարում, և որտեղ էլ որ կնքահայրը պատահում են, չըքում են նորա առաջը, հռանում են մինչև գետին ի պատիւ նորա. և ազգականութիւնը պահում են մինչև չըքրորդ սերունդը. դորանից շուտ չեն պսակվում իրար հետ: Նոքա մեր հաւատը ունեցողներիցն էլ շատ կնքահայրեր են ընտրում: Նոքա ուրախութեամբ մեր եկեղեցին գնում են պատարագին, յշները այդ չեն անում: Նոքա ասում են, թէ մեր հաւատի և նոցա հաւատի մէջ զանազանութիւնը մի մաղ է միայն, մինչդեռ յունաց հաւատի և իրանց հաւատի միջի զանազանութիւնը մի ահապին սար է:

Նոքա շաբաթուան մէջ չորեքշաբթի և ուրբաթ օրերը պաս են պահում: Ճննդեան մեծ պասը չեն պահում: Զատկի պասը նոքա յիսուն օր են պահում և բացի ձէթից ոչ մի իւղ չեն գործ ածում: բայց նոքա կարող են, որչափ ուղեն, ուտել օրուայ ընթացքում: նոքա սուրբ Գէորգի պասը մի շաբաթ են պահում և մի սուրբ ունին անունը Դաւեքսենցիոս (Դավեքսենցիոս) է, և նա բժիշկ է եղել: նոքա պասն էլ մի շաբաթ են պահում: նոյնակս պահում են նոքա սուրբ Խաչի պասը մի շաբաթ, որ սեպտեմբերի մէջ է գալիս, նոյնպէս Մեծին սուրբ Յակովայ պասը մի շաբաթ են պահում: նոյնպէս Աստուածածնայ տօնը, որ օգոստոսի 15-ին է գալիս, պասը մի շաբաթ են պահում: նոյնպէս և երեք Մոգաց պասը *) մի շաբաթ են պահում: նոքա մի սուրբ էլ ունին, անունը Սարգիս (Sergchis) է, որ մի քաջ զինուոր էր: Նոքա միշտ այդ սուրբին են կոչում: երբ նեղ դրութեան մէջ են լինում, և նոքա տօնն էլ մի շաբաթ: պաս ունի: Առ հասարակ շատ աղնիւ մարդիկ ու ասպետներ կան, որոնք երեք օր շարունակ ծոմ են պահում և ոչինչ չեն ուսում: կամ խմամ, որովհետեւ այդ սուրբը շատ մեծ օգնութիւն է տալիս նեղութեան մէջ, և նոքա պասը փետրուարին է գալիս: նոքա սրբերին տօնում են շաբաթ օրերը: սուրբ Զատկի շաբաթ օրը իրիկնապաշին նոքա պատարագ են անում և այն միջոցին, երբ Երուսաղէմում սուրբ գերեզմանից լոյս է բարձրանում: նոքա միայն Զատկիը, սուրբ Երրորդութեան տօնը և Վերափոխումն մեզ հետ են առնում: իսկ միւս սրբերի տօները տօնում են առանձին օրեր: Ծընունդը նոքա կատարում են Քրիստոսի Յայտնութեան (Εριφανία Domini, յունվ. 6) օրը և նոյն երեկոյին պատարագ են կատարում: նոքա ասում են թէ այն օրը, երբ Քրիստոս ծնաւ, այդիսկ օրը երեսուն տարի յետոյ մլրտուեցաւ, ուստի և նոքա Ծընունդն ու Մկրտութիւնը մի և նոյն օրն են կատարում յունվարի 6-ին: նոքա տասներկու առաքելոց տօնը մի շաբաթ պաս պահէլուց յետոյ են տօնում և այդ տօնը գալիս է մի շաբաթ օր: նոքա «Առ Մարի» միայն մի օր են տարուայ մէջ աղօթում և այդ անում են մեր Աստուածածնայ օրը պասին:

նոցա պասկը մերի պէս չէ կատարվում: եթէ նոցա մօտ երկուսը իրար հետ կուռեն և իրար աւել չուզենան, նոցա ան-

*) Այսինքն մեր Ճննդեան, յունվ. 6-ին:

կողմները ու սեղանները բաժանում են, իսկ եթէ նոքա իրար ամենեին չկամենան, այն ժամանակ նոցա իրարուց բոլորպին բաժանում են և նոքա կարող են մի ուրիշ տեղ կրկին պահուել, եթէ տղաքը էլ ունին նոցա հօրն են տալիս, նոցա եկեղեցիները բոլորն էլ ազատ են, ոչ ոք նոցա չէ կարող ժառանգել և ոչ ձեռք բերել: Եթէ մի քահանայ իւր հողի վերայ մի եկեղեցի շինել կամենայ, պիտի այդ հողը ժողովրդեան ընծայէ, որպէս զի ոչ ոք նորա ժառանգներից այդ երկրի վերայ իրաւունք չունենալ նորա մահուանից յետոյ, թէ չէ՝ չեն թողնիլ, որ նա եկեղեցին շինէ, նմանապէս եթէ մի պարոն կամ մի քաղաքացի այդ անել ուղենայ, նոյնպէս պիտի վարուի: Առաջ նոքա մի սովորութիւն ունէին, որ եթէ մի քահանայ կամ աշխարհական եկեղեցի շինէր, նորա մահուանից յետոյ ազգականները նոյնպէս այդ եկեղեցու տէր էին դառնում, ինչպէս և միւս բոլոր ժառանգած կայքերի և յետոյ այդ եկեղեցին վարձով էին տալիս կամ ծախում ժողովրդեան, նոյնպէս ինչպէս մնացեալ կայքերը, Այդ սովորութեան այժմ վերջ են տուել և էլ չէ կարելի այդ անել որովհետեւ ասում են թէ ամեն եկեղեցի Աստուծոյ տունն է, ուստի և ազատ պիտի լինի:

Նոցա քահանաները ամեն գիշեր Եկեսցէ (Mette) են երգում, մինչդեռ յունաց քահանաները այդ չեն անում: Եւ հարուստ մարդիկ իրանց կենդանի ժամանակ երգ են ասել տալիս, որովհետեւ, ինչպէս ասում են, աւելի լաւ է, որ մարդ իւր լցուը իւր ձեռքով վառէ, քան թէ ուրիշն այդ անէ: Դորանով ուղում են ասել, թէ ով որ իւր հոգու մասին կենդանի ժամանակ հոգս չտանէ, մեռնելուց յետոյ դժուար թէ իւր բարեկամները հոգս տանեն նորա հոգու մասին, որովհետեւ նորա կայքերը կըստանան ու հոգու վերայ էլ ուշադրութիւն չեն դարձնիլ: Բացի զորանից ասում են, թէ այն, ինչ որ մարդ իւր հոգուն անձամբ է բարի զործում: Աստուծուն աւելի հաճելի է: Եթէ մի հայ մեռնի հաղորդուած կամ խոստովանուած ժամանակ, նա թաղվում է եպիսկոպոսական և կամ փոխանորդի գերեզմանում: և յետոյ մի մեծ և բարձր քար են զնում գերեզմանի վերայ և նորա վերայ զրում են Աստուծոյ անունը, քարի տակը պառկած հանգուցեալի անունը և նշանակվում է վերան, թէ այսպէս և այնպէս է մեռել: Եթէ մեռնի մի եպիսկոպոս կամ քահանայ, նորան պառկեցնում են այնպէս, ինչպէս նա պատարագի ժամանակ

զգեստաւորուած պիտի կանգնի խորանի առաջ և մի աթոռի վերայ նստեցրած իջեցնում են գերեզման։ Առաջին օրը նորան մինչեւ գօտին են թաղում։ ամեն օր գնում են գերեզմանի մօտ, սաղմոս են կարգում և ամեն մի քահանայ մի բուռ հող է ձըգում նորա վերայ և այդ անում են նոքա մինչեւ ութերորդ օրը. յետոյ արգէն բոլորովին թաղում են, իսկ երբ մի երիտասարդ կամ մի կոյս օրիորդ է մեւնում, նորան հազցնում են ամենալաւ մետաքսէ կամ՝ թաւիշէ զգեստներ, ոսկի մատանիներ են անցնում մատներին և ականջներին թանգագին օղեր. ահա այդպէս են թաղում նորա երիտասարդներին, որոնք գեռ պատկուած չեն։

Եւ եթէ մէկը մի կին առնէ, որ անպատճառ կըս պիտի լինի, բայց կըս չէ լինում, նա կրկին նորան ուղարկում է իւր հօր և մօր մօտ և չէ առնում նորան. իսկ եթէ աւելացնեն խոստացած օժիտը, այն ժամանեակ գուցէ առնէ. և կ'առնէ, եթէ կամնայ, իսկ եթէ չկամնայ, կարող է մի որիշ կին առնել և նորան թողնել։

Նորա եկեղեցում մի խաչ են միայն կանգնեցնում և ասում են, թէ մեծ մեղք է մեր Փրկչին մի անգամց աւել չարշարած տեսնել եկեղեցում։ Նորա խորանների վերայ պատկերներ չունին. Նոցա պատրիարքը կամ եպիսկոպոսը մեղքերի թողութիւն չէ տալիս. նորա ասում են, թէ ողորմութիւնն ու շնորհքը Ամենակարող Աստուծոյ մօտ է, եթէ մէկը քաւելով և պաշխարելով եկեղեցի գնայ, Աստուծած ողորմաբար նորա մեղքերին թողութիւն է տալիս. Քահանան պատրապից յետոյ օրհնութիւն չէ տալիս. այլ իջնում է սեղանից և արք ու կանայք մօտենում են նորան և նա ձեռը գնում է նոցա գլխին և մէկին միւսի յետուից ասում է. «Աստուծած թողը քու մեղք» (Assuatz togu chu miegk). Նորա պատրապն էլ են բարձրաձայն ասում, այնպէս որ ամենայն մարդ կարող է լսել Երբ նորա «Եղիցի պատրապս» են ասում և անոււանում թէ հոգեորական և թէ աշխարհական իշխաններին, Հռովենայ կայսեր և բոլոր թագաւորներին ու իշխաններին, զօրավարներին ու ասպետներին, որոնք նոցա ծառայում են, բոլոր ժողովուրդը ծունկ է չոքում, որովհետեւ ինդիրը ունին առ Աստուծած, բարձրացնում են ձեռքերը առ Աստուծած և ասում են ողորմեա՛ (օգօրմիա)։ Եւ քահանայի աղօթած միջոցին ասում են այդ խօսքերը թէ՛ արք և թէ՛ կանայք. Նորա պատրապի ժամանակ մեծ ջերմեռանդութեամբ

կանգնած են լինում եկեղեցում, աջ և ձախ չեն նայում և իրար հետ չեն խօսակցում, քանի որ պատարագը շարունակվում է, նոքա իրանց եկեղեցիները շատ գեղեցիկ զարդարում են և նոցա զգեստներն ել շատ գեղեցիկ և հարուստ են. թաւիշ, մետաքս և թանգագին կտորներ բոլորն ել գոյնզգոյն:

Ոչ մի աշխարհական իրաւունք չունի աւետարան կարդալու, ինչպէս որ մեր գիտուն աշխարհականներն են անում. ինչ գիրք որ գտնեն, իսկըն կարդում են ամեն բան, ինչ որ նորամեջ գրած է, և այդ լաւ չէ. այն աշխարհականը, որ աւետարան է կարդում, թէպէտե պիտի չկարդայ, բայց և այնպէս կարդում է, նա պատրիարքի կալանաւորն է. նոքա ասում են, թէ աւետարանը քահանասից ջոկ ոչ ոք պիտի չկարդայ, նոքա ամեն շարաթ օր իրանց տների մեջ խունկ են ծխում և ամեն կիրակնամուտ նմանապէս, և խունկն ել Արարիայումն է բունում. նա բունում է նմանապէս և Հնդկաստանում: Նոքա ուտում են գետնի վերայ, ինչպէս և հեթանոսներն են անում, թէ աշխարհականք և թէ հոգեռորականք: Նոքա շատ քարոզեներ չունին և ամեն մի քահանայ իրաւունք ունի քարոզելու, միայն քարոզող քահանան սուրբ գիրքը շատ լաւ պիտի իմանայ և պատրիարքից իրաւունք պիտի ունենայ քարոզելու. և երբ նա այդ իրաւունքը ունի, ունի իրաւունք նոյն իսկ մի եպիսկոպոսի պատժելու, Քարոզեները անուանվում են վարդապետ (warthabiet) և այդ նշանակում է ուղարկուած. նոքա մի տեղից միւս տեղն են թափառում և քարոզում: Եւ երբ մի եպիսկոպոս կամ քահանայ անարդարութիւն է անում, նոքա նոցա ել պատժում են դորահամար: Նոքա ասում են, թէ մեղք է մի քահանայի, որ Աստուծոյ բանն է քարոզում, չհասկանալ սուրբ Գիրքը:

66) Հայերի և յոյների թշնամութեան պատճառը.

Յոյները (Kriechen) և Հայերը վաղուց է որ միշտ թշնամի են իրար հետ, և պատճառը ես ձեզ համառա կըպատմեմ, ինչպէս և ես Հայերից ինքս լսել եմ: Եկել են Թաթարները (Tat-taen) Յունաստան քառասուն Հազար մարդով և մեծ վնասներ են տուել երկրին և Կոստանդնուպոլսոյ առաջ կանգնել են մեծ ցժով: Եւ Կոստանդնուպոլսոյ Հայորը ուղարկում է Հայոց թագաւորից՝ օգնութիւն ինդրելու, Հայոց թագաւորը հարցնում է,

թէ հեթանոսների թիւը որչափ է, Պատամանում է նորան սուրհանդակը, թէ նորա միայն 40 հազար հոգի են, այդ տեղ հայոց թագաւորը ընտրում է 40 հոգի իւր երկրի ամենալաւ ասպեսներից, և ասում է սուրհանդակին, «Աչա ուղարկում՝ եմ կայսրին 40 ասպետ, և նորա Աստուծոյ օգնութեամբ կը ջարդեն 15 հազար հեթանոսներին և բոնի կերպով նոցա գուրս կ'անեն ձեր երկրից», Եւ երբ ասպետները հասան Կոստանդնուպոլիս կայսեր մօտ, սուրհանդակը ասաց այն, ինչ որ թագաւորը հրամացել էր ասելու, իսկ կայսրն էլ այդ ծազը համարելով՝ կարծում էր, թէ հայոց թագաւորը իրան ծազը ում է դորանով: Եւ երրորդ օրը գնացին ասպետները և խնդրեցին կայսեր, որ նա նոցա թշնամու մօտ թողնէ: Այն ժամանակ ասաց կայսրը, թէ միթէ նորա կարող են 15 հազար մարդ յաղթել, և նորա կը կին անդամ խնդրեցին, որ նա նոցա գուրս թողնէ և քաղաքի դռները կրկին անդամ նոցա յետեկց գոցել տայ, նորա ուղում՝ էին Ամենակարող Աստուծոյ առաջնորդութեամբ կառել քրիստոնէական հաւատի համար, որովհետեւ դորա համար են եկած և դորա համար էլ պիտի մեռնեն: Այդտեղ կայսրը թոյլտուութիւն տուաւ և գուրս թողեց նոցա թշնամիների մէջ. նորա կոռուցան թշնամիների հետ և հազար հարդի հոգի ջարդեցին, երբ կայսրը այդ լսեց, վախեցաւ, Եւ նորա եկան քաղաքի դռնը գերինեղի հետ, որոնց այդ միջոցումն էին գերի վառել և կայսրը չէր ուզում նոցա ներս թողնել. նորա այն ժամանակ սպանեցին գերիներին, նորա այդ արին, կայսրը զարհութեցաւ և մեծ հոգս սկսաւ տանել նոցա համար և լաւ էր վարմաւմ հետները: Այդ անում էին նորա ամենայն օր, թշնամուն մեծ վնասներ պատճառելով կարճ միջոցում վանեցին նոցա քաղաքից և գուրս արին երկրից: Եւ երբ ասպետները Թաթարներին յաղթելուց յետոյ գնացին կայսեր մօտ թոյլտուութիւն խնդրեցին իրանց երկիրը վերադառնալու իրանց տիրոջ մօտ, կայսրը մոտածում էր զանազան միջոցներ նոցա սպանել տալու համար և խնդրեց, որ նորա իրան մօտ երեք օր մնան, իբրև թէ ուզում է մեծ պատիւ ու յարգանք ցոյց տալ նոցա, Եւ այդտեղ կայսրը կոչեց իւր ամբողջ պալատը երեք օրուան: ով որ ուտել, խմել ու վայելուչ ժամանակ անցնել էր ուզում, պիտի գար կայսեր պալատը: Երբ ըոլոր պալատը ժողովուած էր, նա շնորհեց ամեն մի ասպետի մի.մի գեղեցիկ կոյս աղջիկ և ամեն մէկին մի

առանձին սենեակ, և այդ նա արաւ, որպէս զի այդ ասպետների սերմը իւր երկրում թողնի. նա ուզում էր պատվաները հաւաքել, իսկ ծառերը ջարդել որովհետև կայսրը մտածում էր թէ, եթէ նա ասպետներին սպանէ, հայոց թագաւորը իրան կը հպատակի; Եւ երրորդ օրը հրամայեց կայսրը, որ բոլոր ասպետներին սպանեն. և այդ կատարուեցաւ. Միայն մէկը մնաց, որին իւր աղջիկը զգուշացրել էր, այսինքն այն աղջիկը, որ նորա մօսն էր. և գնաց հեռացաւ ասպետը, եկաւ իւր տիրոջ՝ իւր թագաւորի մօտ և գանգատուեցաւ ու պատեց թէ ինչպէս նորա ընկերներին ջարդել են կայսեր հրամանով:

Եւ երբ թագաւորը այդ լսեց, սաստիկ տիրեցաւ. և սկի մէջ ընկաւ իւր առաքինի ասպետների կորստեան համար, և զրեց Կոստանդնուպոլսոյ կայսեր, թէ ինչպէս նորան քառասուն ասպետ է ուղարկել, որոնք քառասուն հազար մարդ արժէին. ուստի թող խմանայ նա որ պիտի գայ և քառասուն հազար մարդ մի հարուածով ջարդէ. Եւ հայոց թագաւորը ուղարկում է Բաբելոն Խալիֆայի մօտ (Kalipha) և խնդրում է, որ օգնէ նորան՝ գնալ Կոստանդնուպոլսոյ կայսեր վերայ. և իսկոյն անձամբ եկաւ Խալիֆան օգնութեան մի մեծ զօրքով. Եւ գնացին հայոց թագաւորն և Խալիֆան չորս հարիւր հազար հոգով Կոստանդնուպոլսոյ կայսեր վերայ. և երբ այդ լսեց կայսրը, գնաց նոցա հանդէպ մեծ զօրքով և կոռւեց նոցա հետ. Բայց կոհւը երկար չուեց և կայսրը փախաւ գէպի Կոստանդնուպոլիս ուղղակի քաղաքի մէջ. և նոքա գնացին նորա յետեկից մինչեւ Կոստանդնուպոլսոյ ծովը, մնացին այնտեղ պաշարելու և թագաւորը խնդրեց Խալիֆայից բոլոր նորա առաջ գերիներին, և փոխարէնը առաջարկեց բոլոր աւարը, որ յօներից ստացել էր. Եւ Խալիֆան այդ արաւ և տուեց նորան բոլոր իւր առաջ գերիներին. թագաւորը տարաւ նոցա քաղաքի մօտ և բոլորին ջարդեց, քառասուն ժամուայ մէջ քառասուն հազար հոգի սպանեց և ծովի ծոցը կարմիր ներկեց, ինչպէս և երդուել էր, թէ ծովի ջուրը պիտի արիւն դարձնէ. Սյդ՝ անելուց յետոյ էլի նա այնչափ գերի ունէր առաջ, որ երեսուն յօն մի սոխով էին փոխում, և նա այդ անում էր, որպէս զի կայսրը տեսնի, որ երեսուն յօն մի սոխի գնով են ծախվում. Եւ ահա այդ պատճառաւ յօները հայերին թշնամի են և ամեն տարի աւագ չորեքշաբթի օրը յունաց պատրիարքը սուրբ Սոփիայի եկեղեցում.

բարձր ամբիոնի վերայ կանգնած, անէծք է կարդում հայերին և լողը պյն ազգերին, որոնց հաւատը իւր աթոռին ու հաւատին հակառակ է։ Այս թէ ինչպէս հանեց իւր վոէժը հայոց թագաւորը իւր ասպետների համար և կրկն իւր երկիրը վերադարձաւ, Խալիֆան էլ նորա հետ։

Շատ հաւատարիմ ազգ են հայերը. լինին նոքա քրիստոնեաների կամ հեթանոսների հետ, միշտ նոցա հետ սիրով են և նոցա կողմն են պահպանում. նոքա շատ խելօք մարդիկ են և շատ աշխատասէր. գեղեցիկ կտաւներ են գործում թաւշից, ծիրանիից և մետաքսից, նմանապէս աւելի շքեղ և թանգագին ոսկէզօծ կտաւներ են գործում, քան հեթանոսները։

Վ. ՍՈՒՐԵՆՏԱՆՅ.



I.

ՊԱՒՍՏԻՆԻՆ.

Փագիշահին ապաւինած՝
Խոնարհեցիր քո ճակատ
Եւ մատնեցիր դու, ազգուրաց,
Քո եղբօրը հարազատ,

Քո եղբօրը, որ իւր ազգին
Մասաղ կեանքը նըւիրեց,
Գընդակահար ընկաւ գետին,
Քաջի անուն վաստակեց:

Թողլ մեծարէ քել մեծ վաշան,
Կըրծքիդ կապէ ժապաւէն,—
Դաւաձանի անարդ անուան
Արժանացար դու արդէն:

Այսուհետեւ դու մեղ օտար,
Դու մի գիակ զարշահոտ,
Դու մեղ համար, ազգիդ համար,
Նըզովք, անարդ և ամեթ:

1889. 23 Աեպաեմ։
Մոսկովա.



II.

* * *

Իմ հայրենիքն ունի լեռներ՝
Մինչև երկինք բարձրացած
Եւ այն լեռներն ունին հանքեր՝
Մեր աշքերից թագնըւած:

Ապառաժո՞տ իմ հայրենիք՝
Ծածկուած անթիւ լեռներով,
Բացիր, բացիր անդին քո սիրու,
Լիքը ոսկով արծաթով

L. ՄԱՆՈՒԿԵԱՆՑ.

Մոսկովա, 1889.



Կ Ա Բ Ա Բ Ա.

(Մօրիս Մոնտէգիւ)

I.

Այս կես տարի է, որ Անտուան Պէկոնտալը, չնայելով, որ երիտասարդ է, հարուստ և ֆիզիկապէս ուժեղ, զլուխը քաշ արած է ման զալիս: Նորա զրացինելը, —զիւզացինելն, —որոնք հօր լաւ բարեկամներն էին, որ նոր էր միայն մեռել, և որոնք մինչեւ այժմ էլ Անտուանի հետ խօսելիս «գուռ», են ասում նորան, թէպէս և հարուստ է և կրթուած, —զարմանում էին, թէ ինչու է այսպէս տիսուր և արառում: Կարծես, թէ ամեն բան յաջողում էր նորան, կարծես, թէ նա տարբներին հրամայելու ընդունակութիւն ուներ: Երբէք նորա մի եզր չէր հիւանդանալ, մի ձին չէր վերաւորուիլ, հունձը միշտ առատ էր լինում, իւր ժամանակին կըհաւաքէին և անձրել չէր վնասիլ, իսկ ողկոյզները այնպէս էին փայլում, ասիս, թէ ուզում էին տուքուել և իրենց անուշահոտ հիւթը թափել: Անսպասելի պաղաքերութիւն էր շրջապատում նորան: Գիւղում նա երկք գեղեցիկ Փէրմա ունէր, քաղաքում մի սիրուն քարէ առւն, որ նա պատրաստ փողով էր ձեռք բերել: Մնում էր միայն, որ

նա ապրի անկախ և վայելէ իւր հարստութիւնը... Բայց
չ. նա ման էր գալիս մոտառանջութեան մէջ, որպէս մի
թշուառ մարդ, որ ոչ պատառ հաց ունի, ոչ էլ տուն
ու տեղ:

Յաճախակի տեսնում էին, ինչպէս նա առաձնացած
նստում էր նոր հնձած արաի մօտ՝ մի բարձր տեղ, եր-
կայն ոտներն էլ կախ արած: Այսպէս նա ժամեր էր
նստում գլխակոր, ուշազրութեամբ ականջ զնելով ճր-
պուռների զել ճռփոներին: Բայց երկրային մեծ բերկ-
րութիւնն, ուրախութիւնն օտար էին նորան: Այլ ևս
նա այդ չէր հասկանում, նա սիրուց տանջվում էր, նա
միայն իւր սիրով էր ապրում: Իւր շրջակայքի հոգին
նա չէր ըմբռնում և ամենակարող արեգակի յաղթա-
կան զօրութեան ներքոյ նորա միաքը միշտ խաւար էր,
սիրով պազ, ձմեռնային ասրսուռը պատում էր նորա
ամբողջ էութիւնը, և նա անտարբերութեամբ նայում
էր բնութեան ընդհանուր զուարձութեան:

Միթէ նա այնքան տգի՞լ էր, որ՝ չնայելով երիտա-
սարգութեան, հարստութեան և ուժին, սիրում էր, չէր
վստահանում յայտնել այդ և սիրել չէր: Երբէք:

Անտարակոյս, չէ կարելի ասել թէ նա գեղեցիկ էր
այն մոքով, ինչպէս այդ ընդունուած է քաղաքներում,
այսինք՝ բոլորովին մաքուր, անուշահոս իւղերով օ-
ծուած ու քսուած, հոգս տանելով, որ միշտ նա ամեն-
քին դուր գայ: Ոչ երբէք: Նա բարձրահասակ էր և
ուժիլ, թիհնաւէա, իսկը բնութեան վաւակ, որին մինչեւ
անգամ ուսումնաբանական երկար ու միակերպ տարի-
ները չեն կարողացել ծռել: Նորա ձեռները երկայն էին,
ոտքերն էլ ամուր էին կանգնում այն հողի վերայ, ուս-
կից գուրս էին եկել իւր նախահայրերը. բայց նորա
հայեացքում, որ սիրում էր թափառել գաշտերի ան-
սահման տարածութեան մէջ, սասաիկ շատ աղնուու-

թիւն, սաստիկ շատ պարզ հիացմունք կար: Իրաւ է,
նորա ձեռները շատ էին երկայն, բայց աղքատներն ամեն
օր ուրախանում էին, որովհետեւ այդ ձեռները միշտ լի
էին ողբրմութիւնով աղքատների համար: Եւ մուրաց-
կանները, ծերերը, կանայք և երեխայք բաղիսում էին նո-
րա գուռը, առանց երկիւղ կրելու, թէ կըվերաւորուին
ծառաների կամ շների կողմից...

Անտուան Պէկոնտալը բնութիւնով բարի մարդ էր:

Այն որ անսիրա աղջկին էր, որ չէր ուզում սիրել
նորան: Սակայն առաջուց պէտք է հարցնել գիտէր
արդեօք օրիորդը նորա սիրոյ մասին: Զէ, նա չգիտէր
այդ: Նորան սահպում էր լոել այն երկիւղը, այն ար-
դարացի և արժանաւոր մարդկանց վայել ամօթիածու-
թիւնն օրիորդների ներկայութեան ժամանակ, որոնց նոյն
իսկ թուլութիւնը շփոմում է, բերկրութիւն է պատ-
ճառում նոցա և ասես թէ բռնում է... Բայց ով էր
այդ օրիորդը:

Նա քաղաքումն էր ապրում, աղքատ էր, բայց
հպարտ, չին առհմից և գեղեցկուհի: Նորա հայրեն ու
պապերն ամբողջ կեանքը աքիսի լոգիկներով ծածկուած
ամենաքարձր գատարաններում էին նախագահում: Նորա
անունն եղիսարէթ դէ-ֆրէն էր և նա քսան ատրեկան
էր: Անտուանը չէր մոռանում, որ ինքը մի գիւղացու
որդի է, որ քրտինք թափելով գնում էր արօրի յե-
տեից, մքելով իւր կոշտացած ձեռների մէջ. յիշում
էր, ինչպէս նա ամեն օր առևն էր վերագառնում յոգ-
նած, թէպէտ և գոհ իւր. ստրկական վիճակից, որ օրէ
ցօր հարստացնում էր նորան և միջոց տալիս որդուն
կրթելու: Սակայն զա ելջանկութիւն չէր երիտասարդի
համար, որովհետեւ նա ուսումնարանի կիսամսւթ պա-
տերի մէջ գառնաղէտ կերպով ողբում էր իւր ամենա-
սիրելի ընկերին—արեգակին, և պարզում էր ձեռները

դէպի հեռաւոր դաշտորայքը, ուր կեանքը սահում էր ջրմ ու կանոնաւոր կերպով, ուր քամին զբօնում էր անհուն տարածութեան մէջ, ուր ոստոստում էին ազատօրէն թռչունները:

Պէկոնտալի և Եղիսաբէթի տները դէմ ու դէմ էին, և այդպէս Անտուանը ճանաչեց և սիրեց երիտասարդ աղջկան:

Անտուանն առաջին անգամ տեսաւ նորան մի աշնանային առաւօտ: Յորդառաս անձրեկց յետոյ երեկց արեգակը իւր բոլոր զօրութեամբ և սկսեց փայլել թաց խեցիների ու մայթերի վերայ: Յանկարծ եկեղեցու յետեկց լսուեց ուրախ զինուորական երաժշաութիւն, դորանից յետոյ անմիջապէս երեկց մի ամբողջ գունդ՝ կարմիր ու կապոյտ նշանազգիսաներով, կարգով անցնելով փողոցը, որ շուտով լցուեցաւ ամբոխով: Մի և նոյն ժամանակ այդ երկու տներում բացուեցան առաջին յարկի պատուհանները: Անտուան Պէկոնտալը տեսաւ Եղիսաբէթ դէ-Ֆրէնին: Օրիորդը հետաքրքրութեամբ գլուխը դուրս հանեց, ժպանելով զէնքերի ձայնից, գոյնրզ դոյն նշանազգիսաներից, որոնք արեգակի տակ պսպղում էին: Նորա բարձր սանտրած ու մազերը արեգակի տակ փայլում էին, որպէս ոսկի. առաջից, ինչպէս ցիր ու ցան եղած արօս, նոքա ծածկում էին օրիորդի ճոկաաը: Նորա սեորակ աչերը հանգիստ ծիծաղում էին, արտայայտելով հօգեկան ատպնապ: Նա ամբողջապէս մարմինը ներս ցցեց իւր պատուհանի քարէ շրջանակից: Ելր օրիսրզը երեկց, փայլելով արեգակի ճառագայթների մէջ, ամբողջ գունդը ուղղուեց, ինչպէս զօրահանդիսի ժամանակ, սպաները կամաց հանգարտեցրին իրենց ձիաններին, որոնք կրծուառւմ էին սանձը, մի փոքր թռչկուացին, արոփեցին, գեղեցիկ կերպով վզերը ծռելով... ինքը գնդապետը՝ սորա հետ էլ բոլոր կապիտանները

մերկացրած թրերով պատիւ տուին օրիորդին։ Եղիսաբէթը մինչև անգամ չնկատեց Անտուանին։ Գունզը կարգով անցնում էր՝ մետաղի շառաչիւն բարձրացնելով և, երբ անհնացաւ, Անտուանի զիմաց պատուհանը փակուեց։ Սա զեռ մենակ մնացել էր և չէր կարողանում ինքն իրեն բացատրել թէ ինչու իրեն այնպէս թուեց, թէ մի առանձին բան պատահեց, թէ իւր շրջակայքի բոլոր բաները փոխուեցան. մինչև անգամ նա ափսոսաց, թէ ինչու ինքն էլ զինուորական չէ։

Նորա կեանքը արդարեւ փոխուեց. նա, որ մինչև այժմ քաղաքներ չէր սիրում, թողեց իւր գիւղական շնչնքելը քաղաքի քարէ տան հւար, փոխեց իւր լայնածաւալ, ազատ դաշտերը քաղաքի լզ փողոցների հետ։ Վերջապէս մի օր երեկոյեան նա ծանր կերպով ընկաւ աթոռի վերայ և, զլուխը շատ ցած կախելով, ասաց ինքն իրեն. «Ես սիրում եմ նորան»։ Նա ոչ հայր ունէր, ոչ էլ մայր, նորա միակ բարեկամները աղքատներն էին. ոչ ոք չունէր, որին յայտնէր իւր գաղանիքը և ոչ ոք էլ չիմացաւ այդ։

Ինչ տեղեկութիւն որ կարող էր, նա հաւաքեց օրիորդի մասին, որովհետեւ անհրաժեշտութիւն էր ըգում նորանով զբաղուելու, նորա մասին խօսելու, նորա անունը լսելու։ Ինչ որ էլ նա իմացաւ, սպանեց նորա յոյսերը։ Մանաւանդ վախեցրեց նորան ժառանգական հապատութիւնը։ Չնայելով, որ նա կրթուած մարդ էր, բայց խորին յարգանք էր տածում գէպի տիաղոսաւոր և բարձրաստիճան մարդիկը. այդ յատկութիւնը նա հօրից էր ժառանգել։ Մի սերունդի հայեացքներն իսկոյն չեն կարող փոխուիլ միւս սերունգում։ Ի զուր էր նա ինքն իրեն տառմ, թէ օրիորդը և այրին, նորա մայրը, ստիպուած էին աւելի քան համեստ ապրել որ շատ ծանր էր նոցա բաժին հապատութեան համար, թէ

փողը աշխարհումն շատ բանի տեղ է բռնում և շատ
խոչընդոտներ է հետացնում: Ի զուր էր նա ինքն իրեն
ասում, թէ նոքա փոքր քարէ տնակի մէջ են ապրում,
իսկ ինքը սեպհական մեծ տուն ունի ի զուր էր նա մի
առ մի թւում իւր բոլոր գումարները, որ գանվում էին
զանազան նօտարների մօտ, իւր հոգերը, մարդագետները,
պատկառելի հարստութիւնը, որ շաղկապուած էր հողե
հետ, և այդ ժամանակ նա աւելացրեց. «Բայց հագիս հօ^մ
միայն մի շապիկ է», և չնայելով այս բոլոր առարկու-
թիւններին, նա չէր վստահանում կարծել, որ այսպիսի
չքնաղ և հպարտ աղջիկ կրվճոր մի օր մեկնել իւր
ձեռքը մի կոպիտ գիւղացու, ինչպէս ինքն էր իրեն հա-
մարում, չնայելով, որ ուսում ստացած մարդ էր,

Յուսալու վստահութիւն չունենալով, նա յուսա-
հատուեց և անձնատուր եղաւ պլատոնական սիրոյ ա-
ռանց մտածելու, թէ զորանից ինչ հետեւանք կրլինի և
ինչ կարող է լինել: Գիշեր-ցերեկ նա ժամանակը անց էր
կացնում տիսուր ցնորդներում: Երազում էր և այն ժամա-
նակ, երբ պայծառ արեգակը վայլում էր, երազում էր
և գիշերային անգորութեան ժամանակ: Նորա միակ
զուարծութիւնն այն էր, որ նա երկար կանգնում էր
իւր պատուհանի առաջ, որի վարագոյրը ձգած էր լե-
նում այսպէս նա կարողանում էր հետեւել իւր զրացուհու-
ամենափոքրիկ շարժման, իմանում էր նա սովորութիւն-
ները, եղիսաբէթի բոլոր կիսնքը, որ այդ բոլորը չէր ել
ենթագրում: Օրիորդը մինչեւ անգամ չգիտէր, արդեօք
մէկը ասգրում է զէմ ու զէմ, թէ ոչ: Երբեմն միայն ե-
րիտասարդը կարողանում էր տեսնել օրիորդի սպիտակ,
փափլիկ ձեռները, երբ սա պատուհանը բաց էր անում:
այդ տեսնելն ունէր իւր հիանալիք, բայց նոյնպէս և վր-
տանգաւոր կողմը: Դորանից յետոյ Պէկոնտալի տրամու-

թիւնը սաստկանում էր և օրը վշանում էր։ Սակայն
երբ օրիորդը չէր երևում և պատուհանները ծածկուած
էին լինում—օրը անվերջ էր թւում երիտասարդին,
տիտուր ու գատարիկ։ Երեկոններին բաւականանում էր՝ երբ
տիսնում օրիորդի ստուերը զիմացի լուսաւորուած սե-
նեակում և ամբողջ գիշերն ընկզմում էր ցնորքների մէջ
և հետեւեալ օրուայ համար անթիւ ու համարձակ ծը-
րագիրներ կազմում, որոնք ջարդ ու փշուր էին լինում
հէնց այն բոպէին, երբ երևում էին արեգակի առաջին
շաւաւիղները։ Սյսպէս անցնում էին ամիսները, ա-
մառնային ամիսները, երբ բոլոր պատուհանները բաց-
վում են և երևան են գալիս բոլոր գաղտնիքները։ Մօ-
տենում էր ձմեռը, այն ձմեռը, երբ ամենքը պատսպար-
վում են և ժագ կենում։ Սյդ միջոցին մի գէպք, որ
ոչինչ նշանակութիւն չէր կարող ունենալ ուրիշների
համար, բոլորին յեղաշրջեց նորա կեանքը և առելի բոր-
բոքեց նորա արամութիւնը։ Դէ-ֆրէնի տունը, որ մինչեւ
այդ ժամանակ խաղաղ էր և դաները փակ, մի անգա-
մից փոխուեց, ասես, թէ տօն լինէր։ զոները բաց էին և
երեկոյիան պայծառ կերպով լուսավառուած ընդունա-
րանում հիւրեր էին խմբվում։ մեղմ երաժշտութիւնը
տարածվում էր զիշերուայ լուսութեան մէջ և երեմն էլ
համնում էր համեստ սիրահարուածի ականջին, որ
սկզբում զարմացաւ, իսկ յետոյ տրամաբանօրէն եղբա-
կացրեց։ Նա մարդու է գնում։ Նա ենթագրում էր, բայց
հաւատալուց հետի չէր։ Համարեա ամեն երեկոյ, մօտա-
ւորապէս Յ ժամին, մի երիտասարդ, որ շատ սիրուն
հագնուած էր, եղիսաբէթի դռան առջև կանգնած՝ զան-
գահարում էր։ Նա ճաշում էր նոցա մօտ և գնում շատ
ուշ։ Սակայն դորա մասին արդէն ամենքը խօսում էին
քաղաքում, — եղիսաբէթ դէ-ֆրէնը կիւսիէն Սօրմաննի
նշանածն է, մի փաստաբանի, որ, ինչպէս ասում էին,

մեծ ապագայ ունէր, բայց չունէր և ոչ մի կոպէկ. չար լեզուներն աւելացնում էին, «այդ քաղցածութիւնն է որ պսակվում է ծարաւութեան հետ»: Երիտասարդների ընտանիքը վաղօց ծանօթ էին միմեանց, և ի հարկէ երիտասարդներն էլ սիրում էին մէկզմէկու:

Միայն Անտուանն էր, որ չէր ընդունում այս կարծիքը: Նա տեսել էր փաստաբան Սօրմանիին և մասամբ ձանաշում էլ էր նորան, ինչպէս ձանաշում են միմեանց փոքրիկ գաւառական քաղաքներում: Առաջ էլ նա այդ փաստաբանի մասին լաւ կարծիք չունէր, բայց երբ իմացաւ, որ նա Եղիսաբէթի փեսացուն է, սկսեց նորան բոլորովին անպիտան մարդ համարել այն մարդը, որ գրապանում կոպէկ չունի, նա չպիտի պսակուի այն օրիորդի հետ, որի գեղեցկութեան համար հարսաւութիւնն ու շքեղութիւնն անհրաժեշտ շրջանակներ են: Օրիորդը երջանիկ պիտի լինի, խեղճ: Նո չէր կարող սիրել այս սնապարծ, անմիտ շիկահերին, նո չէր կարող սիրել նորան, հետեւաբար մարդու էլ պիտի չգնար նորան... Նա ինքը չի թողնիլ, որ այդ լինի: Կատաղութեան և զայրոյթի այսպիսի բոպէներին Անտուանը սովորաբար զզուանք էր զգում, նայում էր լուսաւորուած պատուհաններին, լսում երածշառութիւնը և ցանկանում էր մեռնել:

Եթէ կիւսիէն Սօրմանին իրօք անպիտան մարդ էլ չէր, կրկին հետաքրքրական կողմ շատ քիչ ունէր. եթէ նա բարեհաճում էր պսակուիլ առանց օժիտի Եղիսաբէթի հետ, զորա պատճառը այն էր, որ նա յոյս էր գնում օրիորդի հօր նախկին բարեկամների ու պաշտոնակիցների վերայ. նորա կարող էին հեռացնել նորա համար ամեն մի խոչընդոտ և ապագայում փայլուն ասպարէզ պատրաստել: Բացի այդ նա շատ էր կարգացել Բալլակի գրուածները և դիւրաւ հաւատում էր, որ սի-

բուն կին ունենալով՝ կարելի է ամեն բանի համակել,
եթէ միայն ինքը մարդը կարողանայ օգուտ քաղել հան-
գամանկներից և հեռու մնալ նսխապաշարմունքներից:
Եղիսաբէթն էլ մարդու էր գնում միայն նորս համար,
որ արդէն 20 տարեկան էր, իսկ մարդու չգնացած աղ-
ջկայ դերը, մինչեւ անգամ հեռու ապագայում, նորան
անհամակրելի և ծիծաղելի էր թւում: Լիւսիէն Սօրմա-
մանին կը լինէր, թէ մի ուրիշը, — դա օրիորդի համար մի
և նոյն բանն էր, միայն որ իրենց հասարակութեան
մարդ լինի: բայց Սօրմանին էլ նոցա հասարակութեան
էր պատկանում, լու կրթուած էր, գեղեցիկ էր և հա-
ւատացնում էր, թէ պաշտում է օրիորդին: Աղքատու-
թիւնը այնքան էլ չէր վախեցնում օրիորդին, նա ըն-
տելացել էր բացի այդ նա յոյս ունէր իւր մօրաքրոջ
վիրայ, որ և օրիորդի կնքամայրն էր: Մօրաքրոջ, այդ
հարուստ կնկան, անուանում էին տիկին Պասկիէ: Նա
բնակում էր Փարիզում, միշտ սորտ-նորտ մօտ էր լինում
և ամեն աել էլ լաւ ընդունուած էր: Եւ ահա այդ
կինը խոստացել էր գալ քրոջ մօտ, ծանօթանալ ա-
պագայ փեսայի հետ և յայտնել իւր կարծիքը այդ պը-
սակի մասին: Նորա անցելութիւնն և կամենում էին և
ոչ որովհետեւ թէպէտ նա 60 տարեկան էր, բայց ահսո-
ղութիւնը շատ լու էր, խօսքի տակ չէր մնալ, խելօք էր
և բարի:

Մի օր առաւօտեան՝ իւր գիտողութիւնների ժա-
մանակ Անտուանը ահսաւ, որ հարեւանի գուան առջե-
կանգնած է մի ծածկակառք, կապոցներով լի, և այն
աեղեց գուրս եկաւ մի պատկառելի տիկին, մասւ նոցա
մօտ և զրկաբաց ընդունուեցաւ: Ինքն էլ չիմանալով
թէ ինչու, Անտուանը յանկարծ ուրախացաւ, նորեկին
սիրեց և կարծես, թէ իմացաւ, որ իւր ապագայ դաշ-
նակիցը պիտի լինի: Եւ նա չսխալուեց, որովհետեւ աի-

կինը նոյն իսկ առաջին երեկոյեան և Սօրմանիի առաջին խօսքերի հիման վերայ, գատապարտեց նորան և ինքն իրեն վճռեց. առ յիմար է: Սակայն նա չյայտնեց իւր ստացած տպաւորութիւնը՝ սպասելով, որ աւելի մօտ կը ծանօթանայ փեսացուի հետ և անսուրակոյս այն ժամանակ այսպէս թէ այնպէս նա պարզ ու որոշակի պիտի յայտնէր իւր կարծիքը:

Ինչպէս արդէն մենք գիտենք, տիկին դէ-ֆրէնի առւնը մեծ չէր. Եղիսաբէթը ստիպուած էր իւր սենեակը առաջ մօրաքրոջ, իսկ ինքը մի հարկ վեր գնալ: Աստուանը այդ նկատեց միայն հետեւեալ օրը, իսկ այդ միջոցին տիկին Պատիկիչն արգէն կարողացաւ նայել իւր շուրջը, տեսաւ իւր գրացուն և այնպիսի բաներ նկատեց, որ առաջ զարմացնում էին պառաւին, իսկ յետոյ՝ միայն զուարձացնում էին:

Ինչ որ խոյս էր տալիս անտարբեր օրիորդի ուշագրութիւնից, չէր կարող խոյս տալ հետաքրքրուող պառաւի թափանցիկ հայեացքից, որ սովոր էր ամեն մի բանի վերայ ուշադրութիւն դարձնել և ասել, թէ կեանքում ամեն մի աննշան բան ունի իւր նշանակութիւնը: Առաջին երեկոյեան նա միայն նկատեց հարեւան տան պատուհանում մի ստուեր: Նա մտաքերեց, որ վերջին անգամ, երբ եկաւ, այդ առւնը դատարկ էր և ծախվում էր. այս տեղ նա ինքն իրեն հարցրեց, թէ ովքեր են իւր քրոջ հարեւանները և իւր հարցին չպատասխանած, հանգըրեց ձրագը և անհոգ քննեց: Հետեւեալ առաւօտեան նա շուտով բաց արեց իւր պատուհանը, իսկոյն էլ քաշուեցաւ հարեւան պատուհանի վարագոյրը և դուրս ցցուեց մի տղամարդու դէմք. տեսնելով տիկնոջ, երիտասարդը սաստիկ զարմացաւ և դէմքը ծռեց:

—Նա ինձ չէր սպասում,—մտածեց պառաւը: Յետոյ նա շարունակեց.—«Երեսուն տարի առաջ ինձ այդ-

պէս չեին բարեկիլ, և այս պարոնն էլ այնքան դիղեցիկ չէ, որ իրաւունք ունենայ ուրիշներին ծաղըելու»:— Խորհելով լուրջ կերպով, պառաւը հասաւ այն եզրակացութեան, որ «այդ պարոնը» սիրահարուած է իւր քրոջ աղջկան, և նա վճռեց իմանալ, նախ, օրիորդը ենթագրում է, որ մի այդպիսի օդային ախտ կայ, իսկ ապա՝ իմանալ, թէ ով է այդ պարոնը, որ հեռուից է հառաչում: Շուտով նա համոզուեցաւ, որ Եղիսարէթը ոչինչ չէ կասկածում: Աս ոչ նորա անունը զիտէր, ոչ էլ համարեա նորա զցոյութիւնը: Այն ժամանակ տիկին Պասկիէն վճռեց ուրիշ աղքիւրներից տեղեկութիւն հաւաքիլ նորա մասին և նա սկսեց այդ նոյն իսկ օրը:

Նա գնաց ծանօթներին և իմացաւ նոցանից բոլորն, ինչ որ կամենում էր: Նա իմացաւ, որ հարեւանի անունը Անտուան Պէկոնտալ է: «Ծիծաղելի անուն»: Թէ նորա անշարժ կայքը գնահատել են մի միլլիոն ֆրանկ: «Է՛տ, չէ՛»: Եւ ամենքը անպայման պնդում էին, թէ նա ազնիւ և բարի սիրտ ունի: Մասմիկները նորան բուրժուա էին համարում, իսկ բուրժուաները — ռամիկ, յիշելով նորա հօր կապոյա շապիկը: Նոքա գեռ չեին մոռացել, ինչպէս նա տաւար էր ծախում շուկաներում: Ի հարկէ, Անտուանը լուսաւորուած էր, բայց ինչ վերաբերում էր հասարակական կրթութեան, — ո՛չ, իսկը մի արջ:

— Եինում են և լաւ արջեր, — մաածեց տիկին Պասկիէն:

Դանդաղօրէն տուն վերադառնալով, նա մաածում էր: «Այդ մարդը խելք էլ ունի, սիրտ էլ որովհետե նա սիրում է և չէ վստահանում ասել այդ: Ի հարկէ, նորա լուսութիւնը բացարվում է նորանով որ նա ինքն իրեն չէ հաւատում՝ աչքի առաջ ունենալով իւր ծագումը և չունենալով լաւ ձեւեր: Մի ուրիշ աղամարդ

կասէր ինքն իրեն. «Փօղով ամեն բան կարելի է գնել»:
Բայց նա այդպիսի բան չի առում և թագ է կհնում...
վարագուրի հուե: Դա քաղաքավարի է: Նա այնքան էլ
գեղեցիկ չէ, բայց լաւ կազմուածք ունի, այդ էլ ունի
իւր գինը: Այդպիսի տղամարդի հետ կինը համարձակ
կարող է թե առաջ գնալ: Ես հաւատում իմ այդպիսի
մարդկանց... Դիցուք, թէ ինձ ահանելով՝ նա ռեխը սաս-
ափկ ծոեց, բայց դա միայն ինձ է վերաբերում, իսկ ես
նորան ներում եմ: Ամեն բան լաւ կշռելով, նա երեք
Սօրմանի արժէ, մինչեւ անգամ չորսը, հինգը, որովհե-
տեւ նա բարի է, ուժեղ և հարուստ: Կըշարունակենք
մեր գիտողութիւնները: Լիզեթման էլ սաեղծուած է
հարուստ և պաշտելի լինելու համար...»

Լիզեթ, այսպէս էր անուանում օրիորդին մօրա-
քոյրը գեռ մանկութեան ժամանակից. իսկ երբ բարկա-
նում էր նորա վերայ, կոչում էր «բէթ» (յիմար):

Երբ երեկոյեան տիկին Պասկիէն տուն վերադար-
ձաւ, առաջին գործն եղաւ նայել գէմ ու գէմ... Այն-
տեղ տիրում էր խօլ խաւար: Նա վճռեց սպասել, յու-
սալով, որ մի նոր բան կըլինի: Շօրը փօխելով, նա հան-
գիստ նստաւ բազկաթոռի վերայ, գնելով մի բարձ գըլ-
խաւակին, մինչեւ անգամ ձրագն էլ հանգցըրեց, որպէս
զի հարեւանը չչփոթուի և... ինքը քնեց: Երբ նա զար-
թեց, արդէն տասն և երկուսից անց էր: Նա խկոյն մօ-
տեցաւ պատուհանին, կամաց քաշեց վարագոյրը, սուս
ու փուս բաց արեց պատուհանը և սկսեց նայել: Պա-
ռաւը չխալուեց:

Թէւ հոկտեմբեր ամիսն էր և բաւականին էլ ցուլս
էր, բայց Անտուանը կանգնել էր բաց պատուհանի առաջ:
Նա կարծում էր, թէ ինքը մենակ է, որովհետեւ բոլոր
հարեւան աները մութ էին: Նա սենեակում յետ ու
ռաաջ էր գնում, ձեռքերը յետեին դրած, զըռենը քաշ

արած, լիովին խորասուղուած տիսուր ցնորքների մէջ:

— Այդպէս էլ կայ, — շնչից տիկին Պասկիէն, ուշադրութեամբ զիտելով նորան. պէտք է աւելացրած, որ այս րօմանտիկական լրտեսութիւնը զուարձութիւն էր պատճառում պառաւին: — « Այդպէս էլ կայ... , կրկնեց նա, — նա տանջվում է, իսեղճ... : Երևի, նորան յայտնի է, որ օրիորդը մարզու է գնում... Դեռ բոլորովին էլ չէ... Զէ, զաւակու... Ի զուր չենք մենք այստեղ... »

Սյու գիշեր, աւելի քան երբ և իցէ, Անտուանի սիրալ ասպիսապի մէջ էր, հոգին ճմում էր: Կաթիւկաթիւ հաւաքել և մի ամբողջ մեծ վեշտ էր շնորհ բոլոր իւր անթիւ հիասթափութիւնները: Սյզ մշտական մենակութիւնը տանջում, սարսափեցնում էր նորան, և մի և նոյն ցնորքը հանգիստ չէր տալիս. գէթ մի անգամ ինձ հասկանային, գոնէ միայն թոյլ տային օրիորդի մօտ լինել (ի հարկէ նա չէր վստահանում ասել թէ սիրուած լինել) և վերջին անգամ ողբամ իմ անցեալ վշտերը, զլուխս զբած եղեսաբէթի ծնկներին... Յետոյ նա համեմատեց իւր ներկայ դառն վեճակը նորա հետ, թէ ինչպէս կարող էր լինել նա աեսնում էր արդէն իրեն մենակ, տիսուր, լքեալ ծերունի. և նա միայն ուսերը վեր էր բարձրացնում, մոտածելով իւր անօգուտ հարստութեան մասին, որի օգուտը միայն այն էր, որ նախանձողներն էին շատաննում: Այդպէս մոտածելով այն համեմատութիւնների մասին, որոնք բնականաբար ծագում էին նորա մոքում, նա մատքերեց մի հին, չորացած ծառ, որ առանձնացած է մացառների մէջ և որի բունը գոսացել է, անձոռնի է դարձել և անօգուտ. այդպէս էլ կը լինի նա:

Բայց եթէ օրիորդը միայն կամենար...

Սյու, եթէ միայն կամենար... Եւ իսկոյն նորա առւնը լեքը կը լինի թէ մարդկանցով, թէ ուրախութեամբ:

Եւ կեանքը նպատակ կ'ունենար, նպատակ—նորան բախտաւորեցնել, տեսնել նորա ժպիաը և զգալ նորա կեանքը: Ինչ բախտաւորութիւն որ կարող է առաջ փողը՝ առանց օրիորդին անմիտ է, նորա հիա նա կըստանար և իւր իմսսաը—պաշտել նորան, ծառայել նորան փայլուն շըջանակով: Տիրել այդ աղջկան միշտ, միշտ, ո՛հ, Տէր Աստուած, որպիսի երջանկութիւն է... Նա լռեց, նստեց աթոռի վերայ, ձեռքերին յենեց իւր զլուխը:

Տիրել նորան... Միրելի լինել... Գէթ սակաւիկ... Բայց յետոյ... Յետոյ կարող է լինել և երեխայ... երեխայք... Ո՛հ, այն ժամանակ նա նման կըլինի մեծ ծառի, որի իւրաքանչիւր ոսար ծաղկում է յուսով...»

Հրճուանքով նա վեր կայաւ, փայլելով բերկրութիւնից ձեռքերը մեկնեց, ասես, թէ կամենում լինի գրկել... յետոյ նորից զլուխը քաշ արեց, ասելով. «Զէ, զա անկարելի է»: Իրականութեան և ցնորքների այս սարսափելի կոռուի ժամանակ նորա խեղճ, ազնիւ սիրաը ձմվում էր: Ձեռքը ցած թողնելով, առանց որ և է կեանքի նա առաջ էր նայում, և արտասուքը, ջերմ արտասուքը յորդառատ թափվում էին:

Տիկին Պասկիէն տեսնելով այս արտասուքը, ինքը ևս արտասուեց, և այն ձեռը, որով նա բռնել էր վտրապոյլը, դողաց:

«Ո՛հ, յիմար, յիմար. Տէր Աստուած, մի այգպիսի տղամարդ և արտասուք... Բայց ևս սիրում եմ քեզ, որ այգպէս ես....» Յետոյ նա լըջութեամբ շարունակեց. «Ճիշդ է, այդ քեզ համար քիչ է»:

Անտուանը մօանեցաւ պատուհանին. յուսալի տեսիները կրկին ուրախացրին նորա հոգին, կրկին նոր ցնորք և նոր ցանկութիւններ: Նա նայում էր զիշերային մթութեան լայն բաց արած, ցնորքների մէջ խորասուզուած հայեացքով... Եւ այդ բոլոր ցնորքը, բոլոր

երջանկութիւնը—այն տեղ էր, փողոցի միւս կողմում:
Այդ մասձելիս, նա մի կարծ, խուլ հառաջանք արձա-
կեց... Մի համարձակ, բերկրալից շարժուածքով ձեռը
մեկնեց այդ լուռ ու խռար տան, ուր անդորր կերպով
հանգստանում էր նորա սէրը: Եւ նա այդպէս մնաց...

«Այս, նա, այդ արջը, այժմ հիմնալի է... Գեղե-
ցիկ է... նա...»—շշնջեց պառաւը, յուզմունքից բազկա-
թոռի վերայ նստելով: Եւ աշա յանկարծ նա, իրեն
յատուկ տպաւորութիւնների արագ փոփոխութեամբ,
շուտով բոլորովին անցաւ այդ ուժեղ տղամարդու կող-
մը, որ միայնակ լսաց էր լինում գիշերուայ մթութեան
մէջ,—երեխայի ոկտ էր լսաց լինում... Նա համակրում
էր նորա սէրին, նորա համեստ, խորազգաց և ասստիկ
սէրին... և այդ անսպասելի համակրանքը նա արտացայտեց
հետեւալ կերպով.

«Յամաքեցրու շուտով արցունքներդ, յիմոր, քեզ
հովանաւորում է Կարաբաստ Ֆէնան»...

II.

Հոկտեմբեր ամիսն էր:

Մի խաղաղ, տաք առաւօտ, որ յիշեցնում էր ա-
մառնային օրերից մէկը, Անտուանը անցնում էր զինուո-
րական հրապարակը:

—Պարսն Պեկոնտալ:

Նա յանկարծ կանգնեց զարմացած, մտածմունքը
ընդհատած, մինչեւ անդամ մի փոքր էլ վախեցած: Տի-
կին Պասկիէն կանգնած էր նորա առաջ և առանց քա-
շուելու սկսեց խօսել նորա հետ.

—Դուք ինձ տեսել էք, պարո՞ն: Զհերքէք այդ, դուք
խարած կը լինիք, իսկ սուտ ասելը մեծ արատ է, և ես
չեմ սիրել ձեզ,—բայց միթէ ես ձեզ սիրում եմ:—

Թէ՛, որ ասացի, ուրիմն ձիշդ է: Կրկնում եմ, դուք
ինձ տեսել էք, որովհետև դուք շատ գիտեք, թէ
ձեր տան զէմ ու գէմ ովքեր են ապրում: Այս, յար-
գելի պարոն,—և մարդկանց և կենդանիներին: Ես կար-
ծում եմ, որ դուք մինչև անգամ փակ աչքերով կա-
րող էիք գնալ այդ տունը, եթէ միայն թոյլ տային.
Հէնց բանն էլ այդ է: Բայց գիտեք, որ առաջին ան-
գամ, երբ դուք ինձ տեսաք, ծռմռեցիք ձեր զէմքը: Բայց
մի անչափահանաք, ես միշտ ներողամիտ եմ, և ապա-
ցուցանելու համար—ձեր ագեղ վարմունքի փոխարէն
գեղեցիկ խորհուրդ եմ կամենում տալ ձեզ: Պ. Պէկոն-
տալ, կարեցէք ձեր մաղերը:

Եռարած Անտուանը նայում էր պառաւին և մաս-
ծում: երեխ, խելազար է:

Պառաւը խօսելիս զանազան շարժմունքներ էր ա-
նում: և մի ըսպէ դադար չէր առնում: «Դուք կարող
էիք փակ աչքերով գնալ»—ասում էր նա և այդ մի-
ջոցին արգարե նա փակում էր աչքերը և մի քանի
քայլ առաջ գնում:—«Դուք ստատիկ ծռմռեցիք ձեր
զէմքը»,—նա արտայայտում էր իւր զէմքին անսպասելի
հիամափութիւն: Խօսելով գեղեցիկ խորհրդի մասին,
նա լուրջ կերպարանք շինեց, մօտեցաւ և ձայնը մեղ-
մացրեց: Վերջին խօսքը արտասանելիս: «Կարեցէք ձեր
մաղերը»,—նա իւր ձեռնոցները հագին ձեռը տարաւ
զէպի գլուխը և աներեւոյթ վարտավիրայի մլրատի շարժ-
մունքը արաւ:

Թետոյ պառաւը շարունակեց. «Դուք զարմացած էք,
այնպէս չէ: Ես ձեզ շփոթեցրի, զա բնական է: Ես այդ
սպասում էի, բայց ինձ համար զա նշանակութիւն չու-
նի: Ես միշտ առաջին անգամ պատահելիս՝ մարդկանց
շփոթեցնում եմ: Երկրորդ անգամ—ես ծառայութիւն
եմ մատուցանում: Երրորդ անգամ—ես զզուեցնում եմ

և նորա փախչում են ինձանից։ Այդպէս ուրեմն, դուք
խուզեցէք ձեր մազերը, այդ ձեղ աւելի կըվայելի, —
դուք զինուորականի նման կըլլնիք, կանայք սիրում են
այդ, իմ քրոջս աղջեկը — նոյնպէս։

Անտուանը սարսափեց. — Սա հօ ինքը սատանան
է, — մտածեց նա։

— Բայց եթէ դուք նորան այդպէս սաստիկ էք սի-
րում և, կարծիմ, բաւականին վազուց, ինչու չէք ա-
սում նորան այդ։ Միթէ դուք ինձ էիք սպասում։

Վերջապէս Անտուանը վճռեց ասել հետեւալը.

— Ո՞վ էր կարող ասել ձեզ։ Կարող եմ ձեզ հա-
ւատացնել, որ ես երբէք...

— Ինչպէս ես այդ գիտեմ։ Ինձանից չէք թագցնիլ։
Իսկ ինչ վերաբերում է ձեր «երբէք»-ին, հէնց դորա-
նում է սիսալը... Սակայն մեզ վերսոյ նայում են և զար-
մանում... Եյս փոքրիկ քաղաքը սաստիկ բամբասասէր
է։ Դուք ինձ անպատվում էք. ապա առաջ գնանք։ Երկու
տարի առաջ դուք Փարիզում էիք։

— Արդարե։

— Ոլքան ժամանակ։

— Մի ձմեռ։

— Դէ, այդպէս ուրեմն, երկու տարի սորանից ա-
ռաջ, Փարիզում, մի ձմեռ, — լաւ լսեցէք հա՛, — դուք
յաճախակի պատահում էիք ինձ նախադահուհի Շալոնի
մօտ, — նա իմ ամենալաւ բարեկամն է։ Այժմ մենք ան-
սպասելի կերպով պատահեցինք միմեանց և նորոգեցինք
մեր ծանօթութիւնը, այնպէս չէ։ Այսպէս դուք արդէն
ինձ ներկայացրուած էք. այժմ դուք իրաւունք ունիք
ինձ բարեկամ ամեն տեղ, մինչև անգամ պատուհանիս
մօտ — այդ ես թոյլ եմ առաջիս, — իսկ ես էլ ձեզ կըներ-
կայացնեմ ուրիշներին։ Հասկացաք։

Զէ, Անտուանը չէր հասկանում։ Կամ նա կար-

ծում էր, թէ այս տարօրինակ պառաւը վրան ծիծա-
ղում է, կամ նա կարծում էր, թէ անկեղծ է խօ-
սում, կ'ազատէ իրեն այս անբաղդութիւնից,—բայց ի՞նչ
է պատճառը:

Պառաւը շարունակեց.

— Անտարակոյս, գուք հարցնում էք ձեզ, թէ ինչու
եմ այսքան ուշադիր գէպի ձեզ, ինքս եմ ամեն բան
ասում ձեզ և կարծես, թէ որգեզրում եմ ձեզ: Խելացին
կըմտածէր. «Նորա համար է, որ գիտէ հարուստ եղածս,
յոյս է զնում հարսառութեանս վերայ իւր ընտանիքի
համար»: Յիմարը կամ Փատը (որ համարեա մի և նոյն
բանն է) կ'ասէր ինքն իրեն. «Եղջեկը սիրահարուած է
ինձ և գործը գլուխ բերելու համար ուղարկել է այս
պառաւ միջնորդին»: Բայց, ես գիտեմ, գուք աղնիւ
սիրո ունիք. գուք Փատ չէք, և հս գիտեմ այդ: Դուք
հիացած էք, ձեզ յաղթել են. իսկ բանը նորանում է,
երիտասարդ պարոն, որ պառաւս յիշում եմ, որ ինքս
էլ ջահիլ եմ եղել, և եթէ ես մտքումն զրել եմ օգնել
ձեզ, պատճառը այն է, որ անցեալ գիշեր, — ո՛չ, չէք
հասկանում, — ես կանգնած էի վարագուրի յիշել և
անսայ:

—Միթէ:

— Ես տեսայ, ինչպէս դուք մեկնում էիք ձեր ձեռ-
ները. տեսայ, ինչպէս դուք լաց էիք լինում, յիմար կեր-
պով էիք լաց լինում, ներկցէք պառաւիս: Մի կարմրէք,
այդ շատ գեղեցիկ էր, ես էլ ձեղ հետ լավս էի: Ահա
բոլորը, որդիս:

Պատահմամբ նոքա մտան քաղաքային պարտէզը:
Ծառերից թափվում էին կարմրագոյն աերեները, ծա-
ռուզբեները դատարկ էին, — ոչ ոք չկար:

Այն ժամանակ Անտուանը կռացաւ, իւր ձեռքերի
մէջ առաւ վայելչակազմ Փեյայի փոքրիկ ձեռները, որ

բաւականութիւնից փայլում էր, և համբուրեց նոցա:

—Պայմանը կապած է, գաշնակցութիւնը ստորագրած, —ասաց պառաւը ուրախ ուրախ, —իսկ այժմ բոլոր ինձ թողեք: Շուտով դուք ընդունուած կըլենիք: Բայց Սօրմանին, —կ'ասեք դուք: Նա անտանելի է, մի տեսակ խաղալիկ է, ևս յանձն եմ առնում նորան վոնդելու: Իսկ գլխաւորը՝ մի մոռանաք Շալոն նախագահուհուն, Saint-Dominiique փողոցում: Սակայն ըստ երեսութիւն դուք ինձ ճանաչում էք, իսկ անունս —հազեւ թէ. ես աիկին Պասկիէն եմ, իմ ամուսինս ծառայում է աւստրիական գեսապահատանը, բայց իմ մարդը արդեկք լինել չէ կարող, ևս նորա մասին երբեք չեմ խօսում: Այսպէս ուրեմն, առ այժմ ցտեսութիւն: Խուզեցէք ձեր մազերը:

Եւ աիկին Պասկիէն թռաւ-գնաց:

Երբ քաղաքում իմացան, թէ աիկին Պասկիէն ծանօթ է եղել Պէկոնտալին Փարիզում, այն էլ նախագահուհուն մօտ, —իսկոյն հաստրակական կարծիքը նորա մասին փոխուեցաւ, իսկոյն նա էլ մարդոց շարքը ընկաւ:

Երիտասարդը կարծում էր, թէ ինքը ուզակի զառանցանքի մէջ է գտնվում: Տուն վերադառնալիս նա զանազան շարժմունքներ էր անում, ինքն իրեն խօսում, ասես, մի տեսակ առշութեան մէջ. սկսեց քաշել զանգակը, և երբ նորա զարմացած ծառաները հաւաքուեցան, նա յայտնեց նոցա, թէ այսպէս այլ ես չէ կարող շարունակուիլ: «Այս ի՞նչ է, —աղաղակեց նա: — Տունը լւաւ չէ, ոչ կարգ կայ, ոչ կանոն, ոչ շքեղութիւն կայ, ոչ տեսք»: Այդ լուպէից նա ցանկանում էր, որ իւր տանը ամեն բան փայլէր, շողշողէր, —ոսկի, արծաթ ու պղնիած: Մեծ ընդունաբանը երբեք չէր բացվում, —բայց արեք մեծ ընդունաբանը: Դաշնամուրը փըշացուած է, —գտ անտանելի է: Իրաւ է, նա ինքը չէր

նուագում, բայց կարող էին գտն ուրիշները և նուագել: Ուրիշները: Նա երջանկութիւն էր զգում, իսկ յետոյ աշխատեց հանգստանալ, խելօք, մինչեւ անգամ խորամանկ լինել: Ուրիշները: Այս, նորա ընկերները, Փարիզե մտերիմները. ի հարկէ նոքա, որոնց հետ ծանօթացել էր նախագահուհու մօտ:

Նորա հին ծառաները, որոնք կային գեռ հօր ժամանակ, միայն թափ էին տալիս իրենց ձեռները, չհաւատալով իրենց լսածին: Ամբողջ տունը շարժմունքի մէջ էր. գուներն ու պատուհանները բաց էին, թափ էին տալիս գորգերը, կահ-կարասիքը. սրբում էին յատակը, յղկում հայելիները,—ամեն աեղ թողը լի էր: Անտուանը նոր-նոր բաններ էր առնում: Սկզանատան ժամացոյցը փոխեց. շատ էր հին, շուկայ հանելու բան էր. և ինչպէս առաջ նա չէր նկատում այդ: Նա սկսեց պատկերներ ու բրոնզա գնել բայց որովհետեւ նա ուզում էր, որ իւր բաղդաւորութիւնը բաղդաւորեցնէ և ուրիշներին, առատօրէն փող էր տալիս խնդրողներին: Նա մազերը կտրել առւեց, զանազան գոյնի ու տարսով շորեր կարել առւեց, իսկ երեկոներին մենակ պարում էր:

Յետոյ նա ձիով ման եկաւ իւր քոլոր կայքը: Նա պահանջում էր, որ ինչպէս առւնը, այնպէս էլ գետինը գեղեցիկ լինի. շատ բան փոխեց, շատ բան լաւացրեց: Նոր կառք գնեց իւր բոլոր պարագաներով և չիմանալով, թէ էլ ինչ անէ, աւելացրեց մշակների վարձը:

Գիշերները առւն վերագառնալուց նա այլ ևս չէր համարձակվում բանալ իւր պատուհանը, երկիւղ կրելով, որ այն տեղ գիտում են. իսկ ինքը կրկին գիտում էր հարեան տունը, ուրախ-ուրախ ձեռքերը արորելով: Սօրմանի փաստաբանը այլ ևս նորան չէր վախեցնում,— նա խղճում էր նորան:

Անցաւ մի շաբաթ։ Նա օր ըստ օրէ աճող անհամբերութեամբ սպասում էր, մի րոպէ անգամ չկասկածելով, որ իւր նոր բարեկամը աշխատում է։ Մի օր առաւտեան նա ստացաւ մի այցետում հիտեեալ տողերով։

«Տիկին Պատկիէն այսօր կըսպասի պ. Պէկոնտալին Յ ժամին իւր քրոջ մօա, ափին դէ-Ֆրէն»։

Նա հագնուեց։ Նա, որ այսքան ժամանակ հայելին մտիկ չէր տալիս, համարեա կէս ժամ՝ պատվում էր նորա առաջ։ Եւ տեսնելով հայելու մէջ իւր կարծ կըտրած մազերը, երկայն շեկագոյն բեխերը, իւր ամբողջ տեսքը, իւր մինչև վեր կոճկած նեղ ու սե զգեստը, նա ինքը զարմացաւ, որ այդքան վայելուչ է և նըման զինուորականի։ Եւ իսկոյն նա մեքենայաբար յիշեց այն զօրագունդը, որ վարժվում էր փողոցում, երբ նա առաջին անգամ տեսաւ եղիսաբէթին։ Բոլոր բանը այդ օրուանից սկսեց։ «Քնում ենք», — ասաց նա վճռողական կերպով և գնաց։ Բայց երբ նա ձգուած անցնում էր փողոցը, եթէ երկիւզը չլինէր, թէ իրեն զիտում են, ապատճառ կըփախէր։ Նորա ոտները դողում էին, սիրտը սաստիկ բարախում էր, երբ նա քաշեց զանդը, բայց երբ գուռը բացուեցաւ և բուրեց իրեն համար թանկագին այդ տան այն առանձին խորհրդաւոր անուշահուութիւնը, քիչ էր մնացել, որ նա ուշաթափ ընկ նէր այդ ախորժելի թմրութիւնից։

Նորան տարան փոքրիկ գաւառական ընդունարանը, ուր հին կահ-կարասիք էր և գոյնը տուած վարագոյրներ։ Տիկին Պատկիէն նորան սպասում էր, — նա մենակ էր, նա կամենում էր խօսել երիտասարդի հետ, քաջալերել նորան, որ անզէն չմնայ, երբ հակառակորդը կըգոյ։ — Դէ, զաւակս, զուք էլ այս տեղ էք, այժմ մի վախենաք։ Գիտէք — ոչ շատ շատ, ոչ էլ շատ քիչ, ոչ պէտք է ուժից վեր բան բռնել, ոչ էլ չափազանց հա-

սարսակ,—այնպէս եղէք, ինչպէս կաք, բնականաբար. դա
ամենից լաւն է:

Անտուանը լուրջ կերպով պատասխանեց նորան,
թէ շնորհակալ է և իրեն համար մեծ երջանկութիւն
է ծծել այդ տան օդը:

—Եցգպէս է, այդպէս, վաս չէ,—ընդհանեց նորան
պառաւը:—Բայց զիտէք, ես իրաւացի էի. կարծ մազե-
րը ձեզ աւելի են վայելում, դուք այսօր շատ լաւ էք,
բարեկամն: Եցդ նշանակում է, որ զուք այսօր այնքան
սարսափելի չէք:—Եւ պառաւը ծիծաղեց:

Երիտասարդը նոյնպէս ծիծաղեց՝ յուզուած պա-
ռաւի սիրալիք համակրութիւնից, որ զուարձացնում և
ուրախացնում էր նորան: Դուռը բացուեց: Անտուանը
իսկոյն վեր թռաւ տեղից, ասես, թէ վախեցած լինէր մի
բանից:

—Իմ քոյրս, Նատալի դէ-Ֆրէն: Պատիւ ունիմ
ներկայացնելու քեզ իմ երիտասարդ բարեկամիս՝ պ.
Անտուան Պէկոնտալին, ձեր հարեւանին, որի հետ ես ծա-
նօթացել եմ Փարիզում, իսկ թէ ինչ տեղ և ինչպէս—
և քեզ ասացի:—Մի և նոյն ժամանակ նա աչքով էր
անում, զուարձանալով իւր հնարածով, այս կոմեղիա-
յով, որի հեղինակը ինքն էր:

Մի փոքր հանգստանալուց Անտուանը շատ ցած
զլուխ տուեց,—բայց սա գեռ միայն մայրն էր: Սորա
դէմքը հասարակ, ախրող պառաւի դէմք էր. քոյրերը
միմեանց բոլորովին նման չէին: Տիկին դէ-Ֆրէնը պա-
տասխանեց. «Նասի ուրախ եմ, տեսնելով իմ անը
պ. Պէկոնտալին. իմ Օգիւստինա քրոջս բարեկամները,
իրք իրենք այդ կամենում են, շատ շուտով և մեր բա-
րեկամն են զառնում: Ես շատ գոհ եմ, որ նա պատա-
հել է ձեզ այս տեղ, ուր մեր պատճառով տիրում է, և
կարող է յիշել Փարիզը, որին, երեխ, արդէն կարօտելէ»:

— Թէ, դէ, դէ... եթէ ևս կամենայի, հօ կայարանը հեռու չէ, և ևս կարծեմ շատ էլ քաշուողներից չեմ և չեմ սիրում, երբ ինձ իբրև մի զոհ են ներկայացնում: ևս միայն այնտեղ եմ լինում, ուր ինձ հաճելի է:

— Նոյնպէս և ուրիշներին է հաճելի: ի՞նչ արած, այս տեղ ուրախ չէ, այնպէս չէ, պ. Պէկոնտալ: Եւ յայտնի շրջանի մարդիկ այս տեղ կարող են վատ սալքուել:

Սկսեցին խօսել քաղաքի մասին առ. հասարակ, իրենք էլ չիմանալով, թէ ինչու համար, սարսափելի կերպով նորան նկարագրեցին:

Վերջապէս գուրս եկաւ և Եղիսաբէթը, որպէս մի դերասանուհի, որ շատ թանգ է ծախում գուրս գալը: Թուռը բացուեց նորա առաջ առանց որ և է ծիչ հանելու և նորա շեմքում կանգնեց մատաղահաս, վայեշակազմ օրիորդը, աչքերը ցած արած, ասես, թէ չէ վրատահանում առաջ գալ: Հեռուից, ինչպէս և մօալից, նա շատ սիրուն էր. փոքրիկ գլուխ, բարձր հասակ, նազուք էր, շատ նազուք, հայեացքը խրոխտ. նորա ձեռներն ու ուները չնաշխարհիկ էին:

Երբ Անտուանին նորից ներկայացրին, նա բոլորովին շփոթուեց, մի բան մըթմըթաց, այնպէս արագ վերթուաւ աթոռից, որ վայր ձգեց նորան. մի խօսքով հազար տեսակ անյարմարութիւններ արաւ, ինքն էլ լսուհասկանալով, թէ ոլքան ծիծաղելի է, — վախից պաղեցաւ նորա սիրութ և նա կամեցաւ մեռնել: Օրիորդի անխիզք ժպիաը, կարծես, ակնարկում լինէր նորա ամեն մի անյարմարութեան վերայ:

— Ասելը աւելորդ է, հասարակութեան մէջ պարտուողներից չէ, և ինչտեղ է նախագահուհի Շալոնը գտնելուրան: Դէս, մի անգամ կարելի է սիրալիր լինել: Բացի այդ՝ նա տեսնում էր, թէ ինչպէս շփոթվում էր, իսկ

այդ միշտ զուարձալի է: — Տեսնենք — մտածեց Եղիսաբէթը:

Madame Պասկիէն յօնքելը կիտեց, տեսնելով նորա անյաջողութիւնը: «Արջ»: Եւ իսկոյն նա խօսակցութիւնը շարունակեց քաղաքի բամբասանքների մասին: Օրիորդը արհամարհական հայեացք շնչեց. գաւառական կեանքը զզուեցը էր նորան: «Բայց դուք հօ մասամբ փարիզեցի եք, մօրաքոյրս մեզ ասաց թէ...»

Եւ աշա սկսեց նա համարձակ հարցեր առաջարկել Պէկոնտալին Փարիզի մասին, որ ինքը երբէք չէր տեսել: Տարաբազարար միշտ էլ չե կարելի անել այն, ինչ որ ուզում ես: Ծնորհիւ այն հանգամանքի, որ օրիորդը բաւականին շատ ամսագրեր և տարագների թերթեր էր կարգացել, նա գիտեր թատրոնական դրուածների և գրքերի անուններ: Խորամանկութեամբ նա հարց ու փորձ էր անում անձնաւորութիւնների ու նոցա գործերի մասին, կարծես, թէ Անտուանը հասարակութեան մէջ միշտ պատուղներից լինէր, նոր թատրոնական ներկայացութեան, ակմբանոցներն և գեղարուեստական տօներն անհրաժեշտ յաճախողներից մէկը լինէր:

Յուսահատ կերպով Անտուանը նայեց տիկին Պասկիէն: Խեղձը բոլորովին թակարդի մէջ էր ընկել: Նա ոչ միայն զբամաների ու գլուխերի անունները չգիտեր, այլ և արուեստագէտներինը: Կարծ միջոց Փարիզում մնալով, Ճիշդ է, նա մի երեք անգամ թատրոն գնաց, բայց այն տեղ նա միայն ախրում էր: Պատահմամբ Եղիսաբէթը մի օպերայի անուն առւեց, որ նա տեսել էր և նիրշել: Անտուանը բռնեց դորանից, մի քանի բան մտաբերեց և մեծ ոգեսրութեամբ սկսեց խօսել նորա մասին, միայն յիմար ու անտաշ կերպով, և ինքն էլ մտածում էր: «Ի՞՞ր ինչ բանն է այդ բոլորը...»

Տիկին Պատկիէն աչքերը վայր ուղղած, ներգոտ կերպով ոտը խփում էր յատակին. տիկին դէ-ֆրէնը մի ինչ որ կողմանակի բանի վերայ էր մտածում: Ասատիկ տիրութիւն էր ճնշում պատահաբար հաւաքուած այդ չորս անձնաւորութիւններին:

— Դուք, ի հարկէ, գերազասում էք գիւղը,—համարեա յանդգնաբար ընդհատեց Եղիսաբէթը: «Գիւղ» խօսքը լսելով, Անտուանը սթափեց: Մի վայրկենում նա երեակայեց իւր լայնատարած, բացարձակ գաշտերը և նա հասկացաւ այդ կանանց մանրակրկիտ լինելը, որոնք ապրում են քաղաքի խեղդուկ սենեակներում, նա հասկացաւ այդ լաւ ձեւերի ամբողջ կեղտոտութիւնը:

Այդ գեղեցիուհին ծիծաղում էր նորա վերայ: Նա նորան յիմար էր համարում: Սակայն նա սխալվում էր: Անտուանը արժէր օրիորդին: Նա բարեսիրտ էր, ներողամիտ, անկեղծ և գիտէր սիրել:

— Այն,—ասաց նա վճռողական կերպով,—գաշտերը, մարգագետինները, գետերը, անտառները,—այս բոլորը գեղեցիկ են: Այս բոլորը Ճշմարտութիւն է:

Դերերը մի անգամից փոխւեցան: Այժմ նա խօսելու նիւթ ունէր: Նորա երեք խօսակիցները զարմացած նայում էին: Նա շարունակեց.

— Դիաէք, mademoiselle, մինչև անգամ և դուք, mesdames, գիտէք ինչ բան է գիւղը, իսկական, ազատ գիւղը և ոչ այն, որ դուք տեսնում էք քաղաքի ծայրից,—դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ արուարձան,—բայց այն, ուր օդը ազատ խաղում է, ուր կեանքը եռ է գալիս, ուր ամեն ինչ ազատ է շնչում: Ո՛չ, այն տեղ շատ լաւ է:

— Արդարեւ ես գիւղ ասած բանդ չեմ հասկանում, ես նորան տեսել եմ հարեանցի կերպով,—խոստվանեց Եղիսաբէթը, սթափուելով իւր հաղարտ անտարբերութիւնից:

— Ուրեմն պատմեցէք մեզ, գիւղաբնակ պարոն, թէ ինչպէս են այն աեղ ապրում, — զիմեց տիկին Պատկիչն, ահսնելով, որ նա վերջապէս գտել է իւր խօսելու նիւթը և կամենալով միջոց տալ նորան, որ մի փոքր բացուի: — Պատմեցէք, պատմեցէք:

— Ճշմարիան և առում, ես չեմ կարող պատմել, ես ոչինչ չգիտեմ: Թող բանաստեղծները երգեն զիւղը ևս միայն սասափիկ զգում եմ ինձ շրջապատող բնութիւնը, այդ զգացմունքը, երևի, Փիզիքական է: Քաղաքը ինձ ճնշում է, խեղդում: Բնական է այդ: Այս աեղ ամենքը այնպէս տիսուր են առաւօտեանից մինչև երեկոյ. արածներն էլ միայն լրտեսութիւն է և բամբաստնը: Մէկը միւսին է պատմում և չարամտութեամբ աւելացնում: Ամեն մի քայլափոխում նախանձ և չկամութիւն: Երբ գնում էք, յեաևից լսվում է մատնիչի փափոցը, և արժէ միայն յեա դառնալ, զուք կըտեսնէք ժապառ մի անձն... Մենք խօսում էինք Փարիզի մասին: Աւելի լաւ է նա, թէ վատ: Այն աեղ մարդիկ ժամանակ չունին ապրելու, այն աեղ նոքա ժամանակ չունին այնպէս լինելու, ինչպէս որ կան, որովհեաւ նոքա պատկանում են բոլորին և իւրաքանչիւրին: Փարիզում ինձ հազար հարուստ մարդ են ցոյց տուել, կամ գոնէ հարուստ երկեցող, հազար նշանաւոր մարդ են ցոյց տուել, բայց ոչ մի բախտաւոր մարդ: Այն ժամանակ ես թողի Փարիզը, որ աւելի ազատ շունչ քաշեմ, և օրհնում եմ հօրս, որ նա ինձ արտերի տէր շինեց, և աւել ոչինչ չեմ ուզում: Անոււանեցէք ինձ ռամփի, — զուք չէք սիալուիլ: Ազատ ու պաղաքեր երկիր է, ոչ թէ ձեր քարայատակ փողոցները, մաքուր օդ և ոչ թէ բոլորի արտաշնչութեան խառնուրզը, ազատութիւն, և ոչ թէ ձեր նեղ փողոցները, ուր արել քիչ է ընկնում: Լաւ է տիսնել կեանքը, տիսնել, թէ ինչպէս ամեն բան ծնվում է,

բուռնում, մեծանում, լայնանում։ Լսել ջրի կարկաջիւնը, որ միշտ միտահսակ է, միշտ խազագոց ցանել, զիտնալով, որ կը հնձիս։ Հաւատացեք, կենդանիները, ծառերը, բայսերը, բոլոր բաները։ ունին իրենց հոգին, իրենց բարձրինաերեալ։ Վայ այն մարդուն, որ չի ուզում տեսնել այդ, բայց ուզում է տեսնել և լսել միայն մարդկանց բաները, մարդկանց խօսքերը... Քանի անգամ տեսնելով անըմբոնելին և բնութիւնն զանազան կողմերը, ևս ինքու ինձ ասում էի, —ի՞նչ են անսում ուսումնականները և մեծ խելքերը իրենց քաղաքի սառւերներում։ Որքան կը հիանան, երբ ծովեր, տարեր, հովիաներ, անտառներ, համայն բնութիւնը տեսնեն իւր անթիւ ու տնհամար արտադրութիւններով, որովհեաւ մինչեւ անգամ ևս, անուսս, իմ սահմանափակ շրջահայեցալութեամբ հանդերձ այդքան բերկրանք եմ զգում։

—Bravo! —բացականչեց տիկին Պասկիէն, —այ հիանալի ձառ։

—Եւ դուք ինձ համարեա ձեր հաւատի դարձրիք, —լըջօրէն աւելացրեց Եղիսարէթը։ —Դուք շտագեցցիկ էք քարոզում։ Նա զեւ ժպառում էր, բայց առաջուան ժպիտը չէր այդ։

Անտուանը հասկացաւ այդ և ոգեռորուած իւր յաջողութիւնից շարունակեց։

—Այն ժամանակ միայն դուք լիովին ընդունած կը լինիք իմ հաւատքը, երբ անձամբ տեսնէք այն բոլորը, որի մասին ևս շատ թոյլ խօսեցի։ Եթէ միայն դուք կամենայիք, եթէ միայն ևս վստահանայի... Դէ, ես համարձակվում եմ... Հօ ես ձեր մօրտքը բաւական հին բարեկամն եմ (այս ասելիս, նա աչքի տակով նայեց տիկին Պասկիէին, որ մտածեց. «Ճես, ինչպէս է։ Կարծես, նա է հիմա ինձ վերայ ծիծաղում, հրէշ»)։ այս, բաւականին հին, այնպէս որ իրաւունք ունիմ ձեզ

հրաւիրելու։ Ներկայ հոկտեմբերը այնպէս էլ տաք է, ինչպէս և մայիսը. ինքեանքդ օրը նշանակեցէք, — իմ կառքը կըգայ ձեզ տանելու, և իս ձեզ երեքիդ էլ յափշտակում եմ... Ես կըծանօթացնեմ ձեզ բնութեան հետ, մենք կընախաճաշենք Սէն-Պրիա, իսկ կը ճաշենք գիւ-Մօն գիւղում և վիրագառնալիս դուք ինձ կ'ասէք ձեր կարծիքը։ Սակայն մի՛ մոռանաք, որ դուք պիտի դատէք Սասուծոյ սուեղծազործութիւնը։ Կամենում էք։

— Այս, — պատասխանեց Եղիսաբէթը։

— Ե՞րբ։

— Հինգշաբթի օր։

— Իսկ մեր կարծիքի մասին մտածել անգամ մոռացել են, — ասաց զէ-Ֆրէնը իւր քրոջ։

— Ա՛յս, — պատասխանեց տիկին Պասկիին, — մենք այդ տեղ երկրորդական ենք։

— Պարոն Սօրմանին, — յայտնեց ծառան։

— Թոյլ տուէք, հեռանամ ես այս տեղից, mesdames, mademoiselle. Հետոս տանում եմ ձեր խօստմունքը։

Անցնելով փաստաբանի մօտից, Պէկոնտալը ուղղուեց. նա ամբողջ զլիսով նորանից բարձր էր և զընշում էր նորան իւր զօրութեամբ։

Այն ժամանակ Լիգբէթան սկսեց համեմատել նոցա և եղբակացրեց. — Ա՛յս, ափսոս. երկուսից միասին թերես մի կարգինը դուրս գար։

III.

Կարծեմ, արեգակը երբէք այնպէս ուրախ չէր փայլը հոկտեմբեր ամսին, ինչպէս այդ նշանակած հինգշաբթի օրը առաւօտեան։ Գիտնից բարձրանում էր տաք գոլորշի, և այդ աշնանային մեղմութիւնը, այդ անցո-

զական եղանակի քնքշութիւնը, ասես, մի տեսակ մելառ-
մազգական ստուեր էր ձգում բոլոր արարածների վիրայ:

Առաւօտեան ինը ժամինը մի կառք կանգնեց տիկին
դէ-Փրէնի տան տուաջ. պատուհաններն այս տեղ ու այն
տեղ բացվում էին, իսկ հետաքրքրուողները դուրս էին
գալիս:

Տեսնելով, ինչպէս տիկին Պատկիէն, նորա քոյրը,
եղիսարէթն և Անտուանը նստան կառքը, որպէս հին
բարեկամներ, հարեանները ծիծազում էին:

Բարձր գզբիւնով կառքը սլացաւ: Յետեի նստա-
րանի վիրայ աեզաւորուեց պատաւը՝ փաթաթուած մոր-
թիներով: Առաջից Անտուանի կողքին, նստել էր վայել-
չակազմ և ճկուն եղիսարէթն, ամբողջապէս ծածկուած
երկար գորշ վիրարկուով, ամսւը սեղմելով իրանը և
զինուորականի պէս մինչև վեր կոճկած: Նա աշքի տա-
կով նայում էր իւր հարեանին, հասկանալով նորա
զիտաւորութիւնը: Օրիորդը օգուտ քաղելով մօրաքրոջ
շատախօսութիւնից, աեղեկութիւն էր հաւաքել նորա
մասին, և այժմ նորան շատ լաւ յայտնի էր Անտուանի
հարստութիւնը, ծագումը, բարութիւնը և սաստիկ սէ-
րը: Նա ուսումնասիրել էր երիտասարդին: Եւ աս ար-
ժանի էր այդ բանին, եթէ ոչ ինքը անձամբ, գոնէ միւ-
լինները: Օրիորդը երկար խորհրդածութիւնից յետոյ
հասաւ այն հետեանքին, որ սկսեց արհամարհել Սօր-
մանիին, որ մի գրոշ էլ չունէր: Երբ կառքը գզբիւ-
նով անցնում էր քաղաքի խրամը, պատուհանները
ծածկած էին:

Սկզբում հարթ ու հաւասար գետինը մի առանձին
բան չէր ներկայացնում: Երեսում էին խրճիթներ իրար
ետեից, աղքի կոյտեր, հոտած ծահիճներ, նուազ ծա-
ռեր և բան անող գործարանների միասիատ ծխնելոյզ-
ները: Բայց շուտով հորիզոնը անհուն կելազով տարա-

ծուեցաւ։ Ճանապարհը ոլոր-մոլոր գնում էր յանած դաշտերի և հնձած արաերի միջով։

Այն ժամանակ Անտուեանը մի ազատ շունչ քաշեց։
«Այ, այժմ գիւղ է»,—ասաց նա։

Ճանապարհին մի տեղ յանկարծ երեկո խաչելութիւնը առաջածած ձեռքերով, յեսոյ գարձեալ դաշտեր, անվիրջ գաշտեր։ այն տեղ թեթև գոլորշի էր բարձրանում և թափառում էին մասմոլոր, ծոյլ, հեղ և ուժեղ եղներ։ Բայց ամենից շատ զգալի էր երկիր կենացտու անուշահոտթիւնը, որ թափանցում էր ամեն մի ապրող էակի մէջ և, ախորժութեամբ լցնելով թռքերը, կենդանութիւն էր տալիս սրտին։ Երեք կանայքն ել անգիտակցաբար հրճուելով՝ նոյնպէս ազատ էին շունչ քաշում։ Երկարառեւ, բայց ախորժելի լռութիւնից յետոյ, երբ ճանապարհը անտառիցն էր անցնում, տիկին Պասկիէն հարցրեց, զմայլուած լինելով անտառի գեղեցկութիւնից։

—Ո՞ւմ են պատկանում այս անտառները։

—Այս իմ անտառներս են, — պատասխանեց Պէկոնառը։

—Հա՞—բացականչեց տիկին զէ-ֆրէնը և գլուխը գուրս հանեց, կարծես, թէ կամենում էր գնահատել նոցա։

Լիզեթան էլ, կարծես, թէ ոչինչ չէր լսել։ Երբ նոքա կրկին դաշտը գուրս եկան, մայրը նկատեց։

—Խնդրեմ, վրաս չիծաղէք, ևս այդ բաներից ոչինչ չեմ հասկանում, —ինչ է յանած այս տեղ։ Հաճար է, չէ։

—Այս, այս տեղ հաճար է, իսկ այն տեղ, փոքրին հնչ հեռու՝ դարի. մինչեւ հնձելը կանաչ ու գեղին է. հիսնալի է։

—Իսկ այս արաերը ումն են։

— իմբ:

Երբորդ անգամ նոյն իսկ Լիզեկթան յայտնեց իւր հրճուանքը. «Ան, այդ հողմաղաց է այն տեղ՝ բլակի վերայ: Տեսէք, որքան բանաստեղծական է»:

— Այն, զա մի լաւ հողմաղաց էր: Քառասուն տարի նա բան է արել, իսկ այժմ աւերուած է, ընկած. շատ է հնացել և նոր մեքենաներն էլ աւելի շուտ, գուցէ և աւելի լաւ են բան անում: Թիրես ես նորան վերանորոգեմ:

— Նոյնպէն ձերն է, — բացականչեց տիկին գէ. Ֆրէնը:

— Դէպի այս կողմը՝ բոլորն էլ իմն է, — ասաց Պէ. կոնտալը հասարակ կերպով, ձեռքը լայն տարածելով և ցոյց տալով հօրիզոնի մի մեծ տարածութիւնը:

— Դուք կատարեալ մարկիզ Կարաբասն էք, — բացականչեց տիկին Պասկիէն, և ամենքը ծիծաղեցին: — Սյապէս ուրեմն վճռուած է, բարեկամն. և ձեղ նորից մկրտում իմ և այսույշտ ձեր անունը կը լինի Կարաբաս:

Երկու ժամ էր, որ նոքա ճանապարհ էին գնում:

— Բայց ես ուտելու ախորժակ ունիմ արդէն, — խոստովանեց Լիզեկթան:

— Սեղանը արդէն պատրաստ է, ու-լե, և գուք այս տեղեց կարող էք տեսնել, ինչպէս ծուխը բարձրանում է ծխնելուզեց:

Լիզեկթան պատուհանից զլուխը դուրս հանեց: Ճանապարհը ծուռմ էր. կառքը մնառ իսկա շաղանակենիների ծառուզին: Նորա ծայռում սասափի փայլում էին և աչքի ընկնում. արեգակից լուսաւորուած կարմիր ու սպիտակ շինութիւններն, որոնք կառուցուած էին համաշափութեամբ և մի ուղղութեամբ, կազմելով կանոնաւոր քառանկիւն:

— Սա Սէն-Պրիան է, — բացատրեց Պէկոնտալը:

Սյս խօսքերն արտասանելիս երեքն էլ դլուխները

գուրս հանկցին կառքից հետաքրքրուած ու վրդովուած, մի շատ հայեացք ձգեցին ընդհանուր ահսալանին և յաղթուեցան:

Ամեն աեղ կեանքը եռ էր գալիս, մարդիկ և կենդանիները անընդհատ գործում էին: Ծանր սայլերը, որոնց լծուած էին ուժեղ ձիան, խոտով բեռնաւորուած, գարպասից ներս էին մտնում և կանգնում խոտանոցի կորի տակ: Պահապան շները, շղթաների շառաչեւն բարձրացնելով, հաշում էին նոցա վերայ: Բաց պատուհաններից ու գուներից երեսում էր սենեակների ներսը, երեսում էր գոմը, ախոռը, որտեղից սաստիկ գուրս էր գալիս տաք գոլուշի, երեսում էր կաթնատան ներսը փայլուն ամաններով և մաքուր սեղաններով, լուացարանը, չորացնելու տեղը՝ լի սպիտակեղբներով մառանը՝ լի պաշարով: Ամեն աեղ շարժումն կար և առատութիւն:

Այն ժամանակ Լիպեթան տկամայ մոտածեց, թէ ամառը այս տեղ ապրելը լաւ կը լինէր—աիրուհի լինել... Նա արդէն ահսնում էր, ինչպէս ինքը գնում է մի բակից միւսը, ձգելով իւր հպարտ ստուերը սպիտակ պատերի վերայ: ահսնում էր, որ ինքն է այդ շինութիւնների հոգին, հովիտների ու անտառների թագուհին, և ամեն տեղ իրեն խօնարհ կերպով գլուխ են տալիս: Իսկ յետոյ՝ ձմեռը քաղաքում—տօներ, աղմուկ, փայլ, երկրպագուներ: Այս, վերջապէս նա ծնուել է հարմատ լինելու:

Բայց նախաճաշելիս՝ զիտելով Պէկոնտալին, օրիորդի աչքը ընկան նորա մեծ ձեռները, ծածկուած զեղին մազերով և պիտակներով, լայն թիկունքներն և ուժեղ ծնօտները սարսափեցնում էին օրիորդին: Մասածելով, որ այս վայրենի մարդու հետ կապուած պիտի լինի, նա սարսում էր և օրիորդի ներդերը վախենում էին Ան-

տուանի մկանունքներից։ Նա ընկաւ մատածմունքի մէջ և յաւով խոստովանեց ինքն իրեն։ «Զէ, երբէք, երբէք ես չիմ համաձայնիլ»։

Սակայն բոլոր շրջապատող բաները հրճուանք էին պատճառում նորան և աղաղակում։ «Միան։ Երկմառութիւնը տանջում էր նորան։ Նա լուրջ էր, մատխոհ, քանի որ նա մի վճռողական քայլ էր մնացել որ անի կեանքը մանելու համար։

—Եւ ինչն համար մարդկանց վիճակը այզքան անկատար է և ծաղքող, —մատածում էր օրիորդը։ —Կարծես, թէ շատ հասարակ կերպով այս մարդը կարող էր գեղեցիկ, նշանաւոր ու նուրբ ծնուել։ և ինչպէս այն ժամանակ օրիորդը կըսիրէր նորան և որպիսի շնորհակալութիւնմբ անձնատուուր կըլինէր նորան։

—Ա, ի՞ս, սոքա միայն ցնորք են, միայն ցնորք։

Երկարատև նախաճաշեց յետոյ կրկին սկսեցին զքունել։ Ամեն բան տեսան։ աղմկալեց ոչխարանոցը, ընտիր կովանոցը, առանձին-առանձին կանգնած ահազին զոմեշները վախեցրին նոցա։ Եկեղեցու պէս բարձր շաեմարանը զարմացրեց նոցա։ մանաւանդ դուր եկաւ նոցա աղաւնեատունը, ուր աղաւնիները անընդհատ թափ էին տալիս իրենց թեւերը։ Բայց Պէկոնտալը աւելի հըպարտացաւ, երբ ցոյց առեց իւր ապատ մեծացած ձիերը։

Յետոյ Անտուանի հրամանով ախոռից դուրս հանեցին երեք զօյգ երկու և երեք տարեկան մատակախապներին զէս ու զէն նայելով՝ նոքա մի կողքով առաջ էին գնում, ուզում էին դուրս պլրծնել, բայց իսկոյն զավեցին։ Մարակը ձեռին Պէկոնտալը կանգնեց զետնի մէջ խրած ցցի մօա, որից հերթով հապում էին ամեն մէկին։ Հնազանդելով աիրոջ ձայնին կամ մորակին, նոքա կամ հանգիստ քայլելով էին ման գալիս, կամ ոստու-

ահլով, անելով մեծ շրջան, կամ կանգնում էին, կամ յետ էին գնում, կամ պտավում էին մի և նոյն աեղում: Այս անսահման մարգագեանում, մաքուր ու թափանցիկ օգում, ուժեղ և վայելչակազմ Անտուանը, հանդարտ ձայնով հրաման տալով և հմուտ կերպով մըտրակը շարժելով, այնպէս ուժեղ և խիզախ էր երկում, որ Լիզբէթան նորից յաղթուեցաւ և ծափահարեց:

— Երաւ, նա հեռուից կարող է գուր գտ:

Բայց երբ Անտուանը վիրջին հրամանն տուեց արեաւ, կոպիտ զիւղացուն, պատասխան ստոցաւ.

— Հանգիստ եղիր, մենք սիրում ենք մեր ձիերին...

Այս ինչ է: Լիզբէթան ականջնելը սրեց, այս անպիտանը իւր տիրոջ «գու» է ասում: Այս, սա էլ, միւսներն էլ: Օրիորդը զարմացել էր:

Մանկութեան ժամնեակ այս բոլոր մշակները Պէկոնտալի ընկերներն էին: Յետոյ՝ սովորելիս, երբ արձակուրդներին նա վիրագառնում էր տուն, ուրախութեամբ ընդունում էր և խաղում էր նոցա հետ, ինչպէս իւր մասերիմների հետ: Երբ տասն և հօթ արեկան հասակում նա դուրս եկաւ կօլէժից, նոքա կրկին խօսելիս նորան «գու» էին ասում, որովհետեւ ամենքն էլ ազնիւ էին, սրաով անձնատուր էին նորան, և սոցա հայրերը երեխն հերկել են հողը նորա հօր հետ միասին: Այդ ժամանակից էլ մնացել է այդ սովորութիւնը: Պէկոնտալի առւնը պահպաննել էր հին լստինական հօմանակութիւնը, որ նոյնպէս ընտանիք էր նշանակում: Ծայրագոյն դատաւորի գուսար Լիզբէթան չէր կարող հասկանալ այդ ռամկական բարբերը: Նա այժմ սառնասիրտ էր, հպարտ և լուռ: Այս յանկարճական փոփոխութեան պատճառը Անտուանը չկարողացաւ հասկանալ բայց զգաց և գառնօրէն հարցրեց ինքն իրին. «Այս ինչ է նշանակում»:

Նոքա շարունակեցին իրենց ճանապարհը, ինչպէս
պայմանաւորուել էին, զիւ-Մօն գիւղում ճաշելու: Դա
միջակ զիւղ էր, քաղաքից էլ ոչ հեռու: Նորա մրակ
գեղեցկութիւնը զիրքն էր: Բլբակի զագաթից, ուր կային
չին շենութիւններ, սփովում էր անսահման հօրիզոնը:
Որ կողմն էլ որ նայէիք, ձեր հայեացքը չեր հանդիպիլ
արգելքի: Ծառերի յետեից երեսում էին շեներ. պար-
զագծիտ գետակը սահում էր թփերի մէջ սեղմուած,
իսկ գաշտերի մէջ—լայնատարած կերպով տեսակ տե-
սակ ծառերը ներգաշնակ տարբերութեամբ խայտարդէ-
տութիւն էին տալիս երկրին: Այդ բոլորը հիանալի էր:
Բայց այս տեղ էլ թէ փոքրիկները և թէ ծերերը իրենց
տիրոջ հետ խօսելիս դու էին ասում: Կեղանա լակոտ-
ները բանում էին նորա շորի փեշերից և զիրկն էին
մանում նա ժպտում էր նոցա տեսնելիս և չեր կարծում,
ի հարկէ, որ այդ տեղ մի վատ բան կարող է լինել, և
սրտի բարութեամբ բոլորին էլ ձեռք էր տալիս:

—Հ՞, ինչպէս է բնութիւնը:

—Ինչպէս և բոլոր երկրայինը, նա ունի իւր վեհ
և խղճալի կողմերը,—պատասխանից օրիորդը առանց
գէթ սակաւիկ ոգեսորուելու:

Երեկոյեան նա իւր սենեակում այսպէս էր խորհում:

—Սօրմանին պէսաք չէ, Անտուանը հօ վաղուց. թոն
երբորդը դուրս գայ:

IV.

Զմեուուայ վեց ամիսը մի կերպ անցաւ փոքրիկ քա-
ղաքում, որ թաղուած էր ձիւնի մէջ: Հիւանդոտ, տըր-
տում կեղբէթան աննպատակ մի սենեակից միւսն էր
թափառում: Առե Պատկիէն վաղուց էր վերադարձել
Փարիզ: Մի նոր զժբախտութիւն պատահեց նոցա: Մաս-

նաւոր մարդկանց պահու տուած նոցա մի մեծ գումարը կորաւ անյաջող ձեռնարկութեան պատճառով։ Նոքա բոլորովին աղքատացան։ Փաստաբան Սօրմանին այս լուրը լսելուց յետոյ սկսեց քիչ գնալ, իսկ ասպա՝ բոլորովին կարեց իւր այցելութիւնները։ Միայն Պէկոնատալը չփոխեց իւր յարաբերութիւնը։ Նորա սիրալը առաջուայ պէս էր գարձեսլ բարախում։ Նա տանջվում էր, որ միջոց չունէր նոցա օգնելու։ Գնալուց առաջ տիկին Պասկիէն պարզ առաց նոցա, թէ պէտք է մեծ համբերութիւն ունենալ, թէ Լիզբէթան մինչև անգամ եթէ մարդու էլ գնալու լինի նորան, այդ գեռ շուտ չի լինիլ։ Գնալով՝ նա թողեց իւր քրոջը որպէս հաւատարիմ գաշնակից Անտուանի։ Եյդ ժամանակուանից մօր և աղջկայ մէջ տեղի էին ունենում անընդհատ ու սաստիկ կորիւներ։ Տիկին գէ-ֆրէնը խիստ ագահ պառաւ էր. Լիզբէթան—անսիրա գեղեցիուհի։ Երկուսն էլ խստացան, անհաշտ թշնամիներ գարձան, անվերջ վիճում և նախատինքներ էին ասում իրարու։

Սովորաբար այս վէճերը վերջանում էին նորանով, որ երկուսն էլ սկսում էին լալ. ներգոտ Լիզբէթան բոլորովին քայքայուել էր. նորա տանջուած կազմուածքը խախուտ դարձաւ, հիւանդոտ դրութիւնը աւելի ևս սաստկացաւ։ Ամբողջ ժամեր. նա նստած էր սպանուածի պէս անշարժ. երբ մայլը մի թեթև նկատողութիւն էր անում, նա բարձր ձայնով, պղտոր աշերով մեկը միւսի յետեկց կոպիտ բաներ էր ասում, զայրացած շարժմուք. ներ էր անում,—այնպէս որ Անտուանը երկու կերպ էր ընդունվում այն տեղ. տիկին գէ-ֆրէնը ժապում էր, ձեռը սեղմում, պարզ խօսում, մինչ գեռ Լիզբէթան փախչում էր, ասում էր, թէ հիւանդ է, —յաճախակի այդ Ճիշդ էր լինում, —կամ թէ նստում էր ընդունարանում փոկ աչքերով։

Բայց Անտուանը չէր յուսահատվում:

Նա բնական էր համարում այդ բանը, որ օրիորդին գուր չէր գալիս, և հնարք էր որոնում, ինչպէս անի, որ ախորժելի մարդ գառնայ:

Նա պաշտում էր օրիորդին: Նա իրեն երջանիկ էր համարում, որ կարողացաւ տեսնել նորան, յաճախ լեռնել նոցա մօտ, մի և նոյն օդը ծծել: Նա սարսափելով էր յիշում այն ժամանակները, երբ հեռուից էր հրաժանք սահնում օրիորդից: «Ի՞նչ է պակաս, գանդատելու բան չունիմ»:

Երբեմն, շատ հազիւ, Լիզբէթան հանգստառւթեան երջանիկ օրիրին, խղճալուց թէ մաշուելուց, մեկնում էր նորան իւր ձեռը... Այդ օրերը Անտուանը խելքը կորցնում էր:

Պէտքնաալը միոյն օրիորդի համար էր ապրում: Նա զգում էր, որ իւր կրթութիւնն այնքան էլ բաւարար չէ: Եւ նա սկսեց կարդալ: Գլքերից նա ձանձրանում էր, որ պէս զի կարդալիս տողերը բաց չմողնի, մեծ աշխատութիւն էր հարկաւորում: Երբէք նա չէր բարկանում հեղինակի վերայ խրթին մեկնութեան համար: Նա բարկանում էր իւր անհասկացողութեան համար և ինքն իրեն խօսք տուեց հասնել նոգատակին ճգնաթափ աշխատութեամբ: Նա զիաէր, որ զէ-Ֆրէնների միջոցները սպառուել են: Իւր սեպհական հարստութիւնը Ճնշում էր նորան: Նա մտածում էր ապրել այնպէս, ինչպէս նոքա են ապրում, հասարակ, համարեա աղքատ կերպով, զրկելով իրեն ամեն աեսակ բաւականութիւնից, մինչեւ ազնամ յաճախակի և անհրաժեշտից: Նա անշեթեթ էր համարում այն նախապաշտմունքը, որ թոյլ չէ տալիս քիչ ունեցողներին օգնութիւն ստանալ չափազանց շատ ունեցողներից: Նա կ'ուզենար տալ օրիորդին իւր բոլոր հարստութիւնը և աշխատել նորա համար:

Նորան թոյլ էին տալիս միայն տանել ափկին գէ-ֆրէ-նին իւր հողի ամենահասուն մրգեղբէները, ամենալաւարտավրութիւնները:

—Վերջապէս նա է մեզ կերտակրում, —ազադակում էր զրգուած օրիորդը, երբ Անտուանը մի բան էր ուղարկում:

—Սա կարելի է ընդունել, —կարուկ կերպով պատասխանում էր մայրը: —Նա մեզ համար փող չէ մըսիում: Այս բոլորը նորանն է... նորանն է, որ կարող էր քոնը լինել... Ա. Խ, Աստուած իմ, —բացականչում էր նա:

Հենց որ Պէկոնտաւալը գալիս էր, ափկին գէ-ֆրէնը սկսում էր յայտնել իւր շնորհակալութիւնը, իսկ Լիզբէթան արհամարհական ձեռվ միայն ուսերն էր վերքաշում և ինքնակոչ թագուհու կերպարանք շինում:

Վերջապէս օրիորդը վճռեց վերջացնել այդ, և միակ անհրաժեշտ միջոցն էր համարում ուղղակի իրեն Պէկոնտաւլին դիմել: Նա երկար սպասեց յարմար դէպքի: Մի անգամ Պէկոնտաւալը եկաւ այն ժամանակ, երբ օրիորդը մենակ էր: Նախընթաց օրը մայրը, աւելի քան երբ և իցէ, կարել էր նորան, օրիորդի հիւանդու ներգերը սասակի զրգուած էին: Գիշերը նա ուշաթափ եղաւ, բայց նա ծածկեց այդ, ոչ ոքի չասաց, փակուեց իւր սենեակում, ասելով: «Վրաս կըծիծագեն»:

Լիզբէթան ընդունաբանումն էր Անտուանի հետ: Պատից կախ արած նորա պապերի պատկերները, կարծես, հարցնում լինէին, թէ ինչ է անում այս տեղ այդ ռամփկը:

Վաղուց եռ եկող ներքին բարկութիւնից Լիզբէթան անհանգիստ էր շունչ քաշում: Զեռքի արագ շարժումով նա ինպրեց նորան նստել և խստասիրտ բերկութեամբ ու տենդով նա սկսեց իւր յարձակմունքը: —Յարդելի պարոն, տառմ են, թէ դուք ազնիւ-

մարդ էք. ահա այդ իսկ ազնուութեան գիմնում եմ ևս
այժմ: Ամեն անգամ, երբ դուք գտվես էք այս տեղ, գտ-
վես էք հակառակ իմ կամքիս:

Սնառուանը գունասուեց, ներդային խղճալի ցնցիւնը
շարժեց նորա շրթունքները, բայց բան չպատասխանեց:
Օրիորդը սպասում էր: Տեսնելով որ նա լոռմէ, կիզ-
րէթան նորից սկսեց, յուզուելով և վրդովուելով աւելի
ևս իւր ձայնից, յափշտակուելով իւր կատաղի յորդա-
ռառ խօսքերից.

— Այն, հակառակ իմ կամքիս, որովհետեւ դուք
գտվես էք այս տեղ, որպէս... ինչպէս են ասում, — թեկ-
նածու, փեսացու... Բայց դուք ի զուր էք յոյս աս-
ծում, ևս ձեր նշանածը լինել չեմ կարող: Զգիտեմ,
ձշմարիա, թէ դուք ինչ հնալքով սկսաք մեզ մօս գալ,
բայց ևս կատկածում եմ, որ այս տեղ բաւականին սառու-
թիւն և ձարպիկութիւն կայ: Զեզ օգնեց իմ շատախօս
մօրաքոյրս, որ ամեն մի բանով գիտէ յափշտակուել:
Ճանաչում էիք դուք նորան Փարիզում մինչեւ այդ ժա-
մանակ, — այդ իմ գործը չէ: Բայց գալով մեր տունը,
դուք սկսեցիք գայթակղեցուցիչ հին գերը կատարել: Դուք
կառքով տարաք մեզ ման ածելու, ինչպէս առասպելա-
կան կալաբտար, անատառներով, գաշաերով, ֆերմաննե-
րով, և ամեն տեղ, ուսկից անցնում էինք, ամեն բան
ձերն էր, նոյն իսկ արձագանքը, որին դուք կաշտուել էք,
ձեր անունն էր կրինում: Դուք ցոյց տուիք մեզ ձեր
հարստութիւնը, կուրացրիք, յաղթեցիք մի անգամից
երկու կնոջ: տարաբազդաբար այդ երկուսն էլ ձեր նպա-
տակի գլխաւոր առարկան չեն: Իսկ ևս չփոխեցի իմ
կարծիքը: Եթէ դուք... ինչպէս ասած... եթէ դուք մի
անգամից դուր գայլիք ինձ, ևս կարօտ չէի լինիլ ձեր
հարստութիւնը անսնելու, որ սիրեմ ձեզ և ձեռս ձեզ

մեկնեմ: իսկ հակառակ՝ զէպքում, մինչև անգամ եթէ գուք տասնապատիկ հարսառւթիւն ցոյց տայիք և ձեր ըլքի գագաթից տաէիք ինձ. «Եյս բոլորը ձերն է», — հետեւանքը նոյնը կրլինէր: Ոչ մի գումարով ինձ գեղը չէ կարելի: Ես ինձ չեմ ծախում, իսկ գուք տնապատճառ կամենում էք գնել:

— Լիզեթա:

— Նեղութիւն կրէք աւելացնելու՝ mademoiselle (օրիորդ):

Անտուանի բացականչութիւնը աւելի ևս զայրացրեց օրիորդին: Նա շարունակեց պատմել թէ ինչպէս տմեն օր կոիւ է միում մօր զէմ, որ երազում է ծերութեան հասակում խաղաղ, փարթամ աղասաւարանում ժամանակը անց կացնել: Անտուանն էր նորասոսկալի դրութեան, նորա ամենօրեայ տանջանքների պատճառը. մինչև նորա հետ ծանօթանալը նա հանգիստ էր ապրում, եթէ ոչ բախտաւոր: Ի՞նչ իրաւունքով նա մէջ մտաւ և պղասորեց նորա կեանքը: Օրիորդը պահանջում էր նորանից, որ վերջնականապէս տմեն բան կարուի, պահանջում էր, որ երդում ուտի, որ այլ ևս աչքին չի երեիլ, մինչև անգամ կըգնայ քաղաքից, ուր թշուառ բաղդը նոցա հարեան էր շինել:

Անտուանը վեր կացաւ: Տարօրինակ կըթուի, բայց նա ժպտեց:

— Զեր հասմանը, mademoiselle, իսկոյն և եթ կըկատարուի: Ես կըգնամ: Ետո ինդրում եմ, ներէք իս սիսալը: Ես յոյս ունէի, որ քնքոյշ հոգատարութեամբ, անձնազրհութեամբ, անձնատուր սրառվ կարող կըլինիմ մոռանալ տալ իմ ծագումը, իմ բնական և բարոյական պակասութիւնները: Սակայն հակառակը եղաւ: Զէ, ես երբէք չէի կամենում գնել ձեզ, — ձեր մօրաքոյրը զիտէ այդ: Նա իսկոյն հասկացաւ ինձ, որովհետեւ սիրու

ունի, իսկ այդ էլ մի գանձ է, որ գնել չէ կարելի: Ես
միայն երազում էի, որ բոլոր կանանցից ձեզ երջան-
կացնեմ, ձեզ պատեմ անհուն և անսահման սիրով...
Խոստովանում եմ, դա չափազանց փառասիրական ցնորք
էր, որովհետեւ իմ ձեռներս երկայն են, ուներս՝ նոյն-
պէս, ևս կեղծ եմ երգում և պարում—առանց հետեւ-
լու տակախն: Ձեզ պէս օրիորդը, ձեր շըջանի և ձեր
բնաւորութեան օրիորդը չէ կարող թեյլատրել այդպիսի
արհաւիլք, որոնցից, ակներև է, կախուած է ձեր երկ-
րային երջանկութիւնը: Ես կը հեռանամ: Դուք ինձ
չհասկացաք, և այդ կը լինի իմ մսիթարութիւնը. մի
բանով միայն ես չեմ մսիթարութիւնը ոյլ ևս ձեզ չեմ
կարողանալ տեսնելու: Որովհետեւ ևս ձեզ սիրում եմ,
մինչեւ անգամ այնպէս, ինչպէս դուք ցոյց տուիք ձեզ—
հպարտ, սնափառ, գատարկ, և ես միշտ կը սիրեմ ձեզ:
Եյդ բանը, օրիորդը, դուք ինձ չէք կարող արգելու:

Նա զլուխ տուեց և հպարտութեամբ զլուխը վեր
բարձրացնելով դուրս եկաւ առանց յետ նայելու:

Կիզբէթան ընկաւ բազկաթոռի վերայ անբացատ-
րելի խղճահարութեամբ և սկսեց սաստիկ հեծկատալ:

—Կարծեմ, նա արհամարհում է ինձ այժմ... Ու-
րեմն ես ի՞նչ եմ... Այս, այս ինչ կեանք է:

Ցնցողաբար նա մեկնեց ձեռը և սարսափելի գող
անցաւ նորա մարմնով... զլուխը սկսեց պտոյտ գալ: Նա
սարսափեց և զանգահարեց...

Երկու օր նա անց կացրեց առանց յիշողութեան
և զառանցանքների մէջ: Մայրը սարսափելով նսաւած էր
նորա մօտ: Երկրորդ օրը երեկոյեան նա խոր քուն մը-
տաւ: Նա գունատ, մեռելի պէս գունատ պառկած էր:

Մօր յորդուանքով Պէկոնատալը մնաց: Դէպքելը
սարբեցին նորան մոռ անալ խօսքերը:

V.

Սուաւօտեան վազ՝ լուսաբացին, լսուեցաւ մի զարհուրելի ազաղակ, որ հասաւ և Անտուանի ականջին։ Շուառվ բացուեցաւ պատուհանը։ Երեւց Լիզբէթան արձակած մազերով, մեռելսյին գունատութեամբ, լայն բացած աչքիրով, անսասելի զարհուրանք զէմքի արտայայտութեան մէջ և երկրորդ սրտամաշ աղաղակը պատեց շրջակայքը։ Խելսգարի պէս նա ձեռները տուած էր մեկնում, կարծես, ուզում լինէր բռնել դատարկութիւնը, շօշափելով օղը։ Յեայ նա ձեռներով ծածկեց զէմքը, նորից աղաղակեց, բայց այս տնգամ խուլ խեղպուկ ձայնով, և շանթահար եղածի պէս երեսի վերայ փըռուեցաւ։

Սյդ ժամանակ տունը լցուեց ուրիշ կանանց լաց ու կոծով։ Ահա այդ ինչպէս եղաւ։ Լիզբէթան զարթնեց երկարատես ծանր քնից։ Չորս կողմը խաւար էր... «Թեռ գիշեր է,—ասաց նա ինքն իրեն,—ես կարծեցի, թէ աւելի հմ քնիլ...» Նա կանչեց, բայց ոչ ոքից պատասխան չստացաւ։ Նորու տանջուած մայրը գնացել էր իւր սենեակը քնիլու, իսկ նամիշտը քնած էր այդ աեղ բազ կաթոռի վերայ։ Մի կերպ օրիորդը որոնեց իւր մօտ ճըրագն ու լուցկիները։ Բայց որքան էլ աշխատում էր վառել լուցկին—բոցը չէր անսնում և գրգռուած միմեանց յետեկց զէն էր ձգում լուցկիները։ Յանկարծ նա՝ այրեց իրեն... Բոցը չտեսաւ, իսկ զգաց, որ իրեն այրեց։

Իսկօյն նորա գլխում ծագեց մի սարսափելի զըռքաղզութիւն։ Սյդ միջոցին նամիշտը զարթնեց... «Արդէն լուսացել է, օրինակ»։ Հէնց այդ բոպէին Լիզբէթան աղաղակեց, վազեց զէպի պատուհանը, բաց արեց, ա-

մեն բան հասկացաւ և նորից աղաղակեց։ Նա կոյր էր զարթնել։

Մի ամբողջ ժամ Պէկոնտալը յետ ու առաջ էր զնում նոցա տան մօտ և չէր վստահանում ներս մանել։ Այն տեղից իւրաքանչիւր դուրս եկողին նա հարց ու փորձ էր անում, իսկ տեսնելով բժշկին, նա կանգնեցրեց նորան, ասելով. «Ի՞նչ է, պ. բժշկ, ի՞նչ է եղել։ Բժիշկը կարծ պատասխանեց. «Կուրացել է»։

—Կուրացել է. այդ ինչպէս յանկարծակի։ Դա անկարելի է։

—Զէ, դա յաճախ է պատահում, մանաւանդ կանանց։ —Եւ սասանասրառ թեամբ, ասես թէ հիւանդանոցում ուսանողների առաջ կանգնած՝ նա սկսեց բացարել. «Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամօրօսա»։

Ուշ ու միտքը կորցրած Անտուանը բան չհասկացու այդ խօսքից. Amorosa, այդ ինչ բան է... Նա չէ կարող բժշկուել։

—Թոյլ տուէք, ձեզ բացարեմ, որ ամօրօսան լինում է երեք տիսակ կամ, աւելի ծիշդ, երեք աստաձան է ունենում, իսկ ամօրօսա միայն ընդհանուր անունն է։ Առաջին աստիճանը ամօր ոզային ամբլեպիան է, երբ գեռ լուսի որակական զանազանութիւնը տեղի ունի, —այսինքն զուք հասկանում էք ինձ, —երբ հիւանդը կարողանում է զանազանել առարկաները, աչքին շատ մօաւեցնելով։

—Այդ է նորա հիւանդութիւնը։

—Զէ։ Երկրորդ աստիճանը. մենք ասում ենք հասրակ ամօրոզա, երբ կայ քանակական զանազանութիւն, այսինքն, երբ հիւանդը այլ ևս չձանաչելով առարկաները, կարող է զանազանել լըյու խարից։

Շշմած Անտուանը լսում էր բժշկին առանց ընդհատելու, աշխատելով իրեն համար անհասկանալի այս խօսքերի մէջ յոյսի նշոյլ գտնել...

—Միթէ այդ է նորա հիւանդութիւնը:

—Զէ, իսկական ամօրողայի ժամանակ տեսողութեան հետքն էլ չել լինում: Ահա այս տեսակիցն է օրիորդ զէ-ֆրէնի հիւանդութիւնը:

—Բայց ի՞նչ է պատճառը, պատճառը:

—Ո՞չ, հազարաւոր պատճառներ են լինում... Սովորաբար դա պատահում է ներդերի խանգարումից, արեան փշանալուց, ընդհանուր արեան անկանոն շրջանառութիւնից... սասահիկ յուղմունքներից... հիստերիայից... Կան օրիորդներ, որոնց վաղ պէտք է մարդու տուած... հասկանում էր: Բարի գիշեր, պ. Պէկոնտալ:

Թող ինչ ուզում են՝ ասեն, — Անտուանը ներս կը մտնի: Բոլը գոները բաց էին, ինչպէս սովորաբար լինում է մի որ և է անբախտութեան ժամանակ: Նա ուզգակի գնաց Լիզբէթայի սենեակը: Նա պարկած էր անկողնում, անշարժ էր և լուս, աչքերը բաց, — նոյնպէս գեղեցիկ, ինչպէս և միշտ, առանց արտասուքի: Մայրը և մի քանի ուրիշ կանայք դարձած նորան՝ խօսում էին հիտը, անունն էին տալիս: Օրիորդը, կարծես, բան չէր լսում, ընկղմած զարհուրելի և տանջող ցնողքների մէջ, համարեա ինելագարութեան մօտ:

—Ա՞խ, պ. Պէկոնտալ, — բացականչեց մայրը և հեծկլաց:

Այս անունը լսելով՝ Լիզբէթան ձեռը մեկնեց: Անտուանը իսկոյն իրեն նեանց օրիորդի կողմը, խեղզուելով արտասուքից, չոքեց և բռնեց նորա ձեռը: Այն ժամանակ Լիզբէթան կամաց, շատ կամաց շնչեց. «Մի գնաք, ներեցէք ինձ, մի գնաք: Ինձ այժմ պէտք են նոքա, որոնք ինձ սիրում են, — մնացէք»:

Խելակորոյսի պէս էր հեծկլում Անտուանը, զեռ
ևս չհաւատալով օրիորդի անբաղդութեան և անկա-
րող լինելով մի խօսք անգամ արտասանելու... Այդ
մարդու աղէտի առաջ, որ մահու չափ տանջում էր
իրեն օրիորդի համար, Լիզեթթայի խաւարած աշերից
ցայտեցին արտասուքի շեթերը և երկար, շատ երկար
նոքա թափվում էին...

Զ. Պ.

Ա Բ Ծ Ւ Խ.

Դո՛ւ, որ խոյացած թռչում ես հպարտ,
Մէգ-դումնն աչել ճեղքելով ազատ
Եւ մինչև եթեր՝ երկնից պարզ կամար
Քո սաւառնելուդ ասպարէզ արած,
Կարող ե՞ս դու ինձ բերել պատասխան,
Իմ հայրենիքից թշուառ, անպաշտպան:
Դո՛ւ, որ բարձունքից նայես շեշտակի
Դէպի քոհի պատես աչքերով,
Եւ մի քիչ թեժել պտոյտ անելով
Ճիրաններիդ մէջ խորտակես սաստիկ,
Կարող ես սլանալ դէպ իմ հայրենիք,
Պանդխափ բերել մի բարի խաբրիկ:
Բայց չէ... անգութ ես, անխիղջ, անօրէն,
Դու բարեացակամ երբէք սիրտ չունես,
Ի՞նչ է խղճութիւն—այդ դու չպիտես,
Խեղճ թռչունների մատաղ ձագերի
Դու անմեղ արեան ես միշտ ծարաւի:
Զէ՛, ես, պանդուխտը, քեզնից յոյս չունիմ
Եւ ո՛չ մի բարիք քեզնից կըսպասեմ,
Դու դոռ ծովերի պատոիր ալիքներ.
Սուր ճիրաններումդ ձնշիր քո զոհեր,
Թող ես աստ տանջուիմ հազար ցաւերով,—
Դու կըյագենաս քո անմեղ զոհերով:
Մի օր էլ յանկարծ որսորդի գնդակ
Հպարտ թոհչքիդ արած ժամանակ
Կըզարկէ կրծքիդ և դու վայր կընկնես,
Թողնելով եթեր անգունդ կըկորչես.
Փոքրիկ թռչուններ մի քիչ շունչ կառնեն,
Խեղճ պանդուխտներիս կըմսիթարեն:

ԱԷԹ.

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ.

(Տուրքենեղից).

«Мигъ одинъ... и нѣтъ волшебной сказки—
И душа опять полна возможнѣй».

А. Фетъ.

I.

Երկար ժամանակ չէի կարողանում քնել և ան-
դադար մէկ կողքից միւսի վերայ էի ընկնում: «Թող
կորչեն այս յիմարութիւններն էլ, պտտուող սեղաններն
էլ»—մասածում էի ինքս ինձ—ան մի օգուտ չկայ,
միայն ներդերս են գրգռում:... Կամաց կամաց սկսայ ես
նիրշել...

Յանկարծ թուեցաւ ինձ, որպէս թէ սենեակումն
լսրի մեզմ և աղէտալի հնչեւն է լսվում:

Գլուխս բարձրացրի: Լուսինը երկնքի վերայ լո-
ղում էր, ինչպէս մի սիրուն հարս, և նայում էր ուղ-
ղակի ինձ վերայ: Նորա լրյուր, որպէս կաւիճ, սփռուած
էր յատակի վերայ... Մի և նոյն տարօրինակ ձայնը ա-
ռաւել պարզ կերպով կրկնուեցաւ:

Թէք ընկայ: Փոքր ինչ սկսեցի վախենալ:—Անցաւ
մի վայրկեան, ահա և երկրորդը... Հեռուից լուեցաւ

աքաղաղի ձայն։ առաւել հեռու տեղից լսուեցաւ երկ-
լորդինը։

Գլուխս դրի բարձի վերայ։ «Ան, մարդ ի՞նչ վե-
ճակի կարող է հասցնել իրեն,»—առում էի ինքս ինձ,—
առկանջիս զանազան ձայներ են հասնում։

Քիչ ժամանակից քննեցի — գոնէ ինձ այնպէս էր
թռում, թէ ես քնած եմ։ Մի տարօրինակ երազ աեսայ։
Տիսայ, որպէս թէ պարկած եմ ննջարասնումն, անկող-
նիս վերայ—քնած չեմ, անգամ աչքերս փակել չեմ
կարողանում։ Ահա նորից լսվում է մի ձայն... Յետ եմ
նայում... Յատակի վերայ ընկած լուսնի լոյսը սակաւ
առ սակաւ վեր էր բարձրանում, ծգավում էր և վերևից
սկսած, քանի գնում էր, գնգածե էր ստանում... Իմ
տռաջ, որպէս ամպ, կանգնած է մի սպիտակ կին։

— Ո՞վ ես գու, — հարցնում եմ ես զմուարանալով։
Լսում եմ պատասխան։ ձայնը տերեների խըշխը-
շոցի էր նաևն։ — Ես եմ... Ես... ես... եմ։ Ես եկել եմ
քեզ տանելու։

— Ինձ տանելո՞ւ։ Բայց գու ո՞վ ես։
— Գիշերս զնա անտառի այն ծայրը, ուր հին կաղ-
նին է։ Ես այն տեղ կը լինիմ։

Ես ուզում էի լսւ նշմարել այդ խորհրդաւոր կնոջ
գէմքի գծագրութիւնը—բայց յանկարծ տեղիցս վեր եմ
թռչում։ Ես սարսուռ էի զգում։ Եւ ահա այլ ես պար-
կած չեմ, այլ նստած եմ իմ մահճակալիս վերայ—և
այն տեղ յատակի վերայ, ուր կանգնած էր այդ կախարդ
էակը, լուսնի շողքն էր ընկած։

II.

Այդ օրը մի կերպ անցաւ։ Յիշում եմ, ուզում էի
կարգալ, գործել... Բան չէր դուրս գալիս։ Եկաւ և դի-

շերը։ Սիրաս բարախում էր, ասիս, թէ մի բանի սպասում լինէի։ Պարկեցայ քնիլու և երիսս դարձրի դէպի պատը։

— Թու ինչո՞ւ համար չեկար, — լսուեցաւ սենեակումն մի ձայն։

Շուտով յետ նայեցայ։

Պարձեալ նա... դարձեալ նոյն խորհրդաւոր ուրուականը։ Սեեռած էին նորա աշերը, անշարժ էր երեսը — և դէմքը տիրութեան մէջ էր ընկղմած։

— Ե՛կ, — լսվում է կրկին մի շշնջիւն։

— Կըգամ, — պատասխանում եմ ևս վախկոտ ձայնով։ Ուրուականը կամաց յառաջ գնալով ճօճվում էր, և որպէս ծուխ, պաոյտ-պաոյտ գալով ու խառնուելով, վեր բարձրացաւ — կրկին լուսնի շողքը ընկաւ հարթ յատակի վերայ։

III.

Օրը անց կացրի շատ վրդովուած։ Ընթրիքի ժամանակ ևս համարեա մի շեշ զինի խմեցի, դուրս եկայ պատշգամբ փոքր ինչ զովանալու, բայց վերադարձայ և ընկայ մահմակալիս վելայ։ Արիւնս զժուարութեամբ էր հոսում երակներիս մէջ։

Պարձեալ լսուեցաւ նորա ձայնը... Ես վախեցայ, բայց յետ չնայեցայ։ Յանկարծ, տեսնում եմ, մէկը զըրկեց ինձ յետելիցս և ականջիս փափաց. «Ե՛կ, եկ, եկ»... Սրտածաք եղած՝ ես հազիւ արտասանեցի։

— Կըգամ, — և սկսեցի կամաց-կամաց ուշքի գալ։

Այդ կինը փոքր ինչ կուացած կանգնած էր գլխիս մօտ։ Նա ժաղաց և անհետացաւ։ Բայց ես կարողացայ նշմարել նորա դէմքը։ Ինձ թվում էր, թէ նորան մի անգամ տեսել եմ։ — բայց ինչտեղ, երբ։ Ուշ վեր կացայ

և ողջ օրը թափառում էի գաշտերում, գալխս էի հին կաղնու մօտ, որ անառառի ծայրումն էր գտնվում, և ուշադրութեամբ նայում էի չորս կողմա:

Իրիկնապահին նստած էի առանձին սենեակումն պատուհանի առաջ: Պառաւ աղախինս զրեց առջևս մի թաս թէյ—բայց ևս գեռ չէի սկսել խմել: Դեռ երկմտութեան մէջ էի և ինքս ինձ հարց էի առաջարկում: «Ես հօ չեմ գժվում»: Արել նոր էր մայր մասել—ոչ միայն երկինքն էր կարմրել—անգամ օդը փայլում էր մի անբնական կարմիր գոյնով: տերեւները և խոար, ասես, վէռնիճով նոր ծածկուած լինելով, չէին շարժվում: Նոցա անշարժութիւնը, նոցա քարանալը, այդ խորին լուս-թիւնը, բնութիւնը, բոլորը, բոլորը ինձ համար մի տարօրինակ բան էր, հանելուկ էր, որի նշանակութիւնն ևս չէի կարողանում հասկանալ: Մի մեծ միխրագոյն թըռ-չուն յանկարծ առանց կըրկռուալու, ձայներ հանելու եկաւ և նստաւ պատուհանիս առաջ... Նայեցայ նորա վերայ—նա էլ ինձ վերայ նայեցաւ, իւր բոլորակ և մըթ-նագոյն աչերը ինձ վերայ ձգելով: «Զլինի, թէ քեզ ու-զարկել են, որ իմ միտս ձգես», —իսկոյն մոքովս անցաւ:

Թուչունը իսկոյն շարժեց իւր փետրալից թեկերը և առանց բան անելու՝ սուս ու փուս առաջուայ պէս վեր թռաւ: Դեռ երկար ժամանակ նստած էի պատուհանիս առաջ—սակայն այնքան էլ չէի տարակուսում: ևս, կար-ծես, ընկել էր մի կախարդական շըջանի մէջ—և մի ան-յաղթելի, թէպէսեւ հանգարս զօրութիւն քաշում էր ինձ, ինչպէս զոր օրինակ գետի ընթացքը առաջ է տա-նում նաւակը: Վերջապէս ևս վեր թռայ: Օզի կարմրու-թիւնը վաղուց անհետացել էր, այժմ առաւել մնւթ էր և կախարդական լուսթիւնը ընդհատուել էր: Հողմը փչեց, լուսինը առաւել ևս սկսեց փայլել կապուտակ երկնքում—շուտով ծառերի արծաթապատ տերեւները

սկսեցին ծածանուել: Իմ պատաւս ներս մտաւ ձեսին վառած մոմ, բայց պատառէհանից քամին փշեց և ճրագը հանգըլից: Ես չկարողացայ այլ ևս համբերել, վեր կացայ, առանց զինարկի ու զնացի անտառի ծայրը, դէպէ հին կաղնին:

IV.

Քանի քանի տարի սորանից առաջ կայծակը խփել էր այդ կաղնուն: Գագաթը կոտրուել էր և չորացել, բայց էլք մի քանի տարուայ կեանք մնացել էր նորանուն: Երբ ես սկսեցի մօտենալ նորան մի ամսկ, որպէս վարագոյր ծածկեց լուսնի դէմքը մեզանից, ուսաի շատ մութ էր կաղնու հասա ծիւղերի տակ, հայեացքս դարձրի դէպի, մի կողմը—բոլորովին սրտաճաք եղայ: Այն սպիտակ ուրուականը կանգնած էր մի մեծ թփի մօտ, որ գանվում էր անտառի և կաղնու մէջ տեղը: Քամին մազերս փըրփըրացնում էր. բայց ես անվախ քայլերս ուղղեցի դէպի անտառը:

Այս, սա նա է, իմ զիշերային բարեկամուհիս: Երբ ես մօտեցայ նորան, լուսինը նորից ու նորից սկսեց փայլել: Նո, կարծես, գործուած էր կիսաթափանցիկ ծիր կամինից — նորա դէմքի միջեց նշմարում: Էի քամուց սակաւ ինչ տատանուող ծիւղերը — միայն նորա մազերը և աշերը սև էին և ծալած ձեռքի մասների մէկի վիրաց փայլում էր բարսկ, նեղ ոսկէ մասանին: Կանգնեցայ նորա առաջ և կամենում էի սկսել խօսակցութիւն: սակայն ճայնս կարուեցաւ, թէպէտե ախ ու վախ չէի զգում: Նա իւր աշքերը ինձ վիրայ ձգեց: նոքանչ ուրախութիւն էին արտայայտում, ոչ էլ ախութիւն, այլ մի աննպատակ զիտողութիւն, որի մէջ բոլորովին կենդանութիւն չկար: Ես սպասում էի, զուցէ, նա մի

բան ասէ. ասկայն նա էլ անշարժ և լուս ու մունջ էր, և կրկին ու կրկին նայնում էր ինձ ակնապիշտ աչերով, ձգելով վրաս մեռհալ հայեացք: Ես ինձ փոքր ինչ վատ էի զգում:

—Ես եկել եմ,—վերջապէս բացագանչեցի դժուարանալով: Զարմանալի էր իմ ձայն:

—Ես քեզ սիրում եմ,—լսուեցաւ մի ձայն:

—Դու ինձ սիրում ես,—կրկնեցի ես զարմացած:

—Անձնատուր եղիր ինձ,—լսուեցաւ պատասխան:

—Քեզ անձնատուր լինիմ: Բայց դու ուրուական ես—դու մարմին էլ չօւնիս: — Սաստիկ քաջալերուեցայ: — Դու ի՞նչ ես, ծռևս ես, ո՞դ թէ շոգի: Քեզ անձնատուր լինիմ: Առաջ դու ինձ պատասխանիր: Ապրել ես դու այս աշխարհում: Ինչտեղից ես եկել:

—Անձնատուր եղիր ինձ: Ես քեզ վեսս չեմ տալ: Արտասանիր միայն երկու խօսք. «Առ ինձ»:

Նայեցայ նորա վերայ: «Այս ի՞նչ է ասում», — մըտածում էի ինքս ինձ: «Այդ ի՞նչ է նշանակում: Ինչպէս նա ինձ կառնէ: Կամ թէ փորձեմ»:

— Թէհ լսու, — ասացի իս լսելի ձայնով և շատ բարձր, ասես, յետելցս մէկը ինձ խփում լինէր. — Առ ինձ:

Թեռ չէի արտասանել այս խօսքերը, այդ կախարդ էակը ներքին քմծիծաղով, որից և նորա գէմքը մի վայրկեան գողում էր, առաջ գնաց, ձեռքերը բարձրացրեց և տարածեց... Ես ուղում էի յետ գնալ նորանից. բայց արդէն նորա ձեռքի տակ էի: Նա գրկեց ինձ, բարձրացրեց կէս արշին—և մենք երկոքեանս սկսեցինք սահելով բարձրանալ անշարժ ու խոնաւ արօոից, բայց ոչ այնքան էլ արագ:

V.

Սկզբում գլուխս փոքր ինչ պայտա էր գալիս—
ուստի ակամայ աչքերս փակեցի... Մի բոպեց նորից
բացեցի: Առաջուայ պէս մենք թռչում էինք: Անտառը
բոլորովին չէր երևում: մեր տակը հովես էր տարած-
վում, որ ծածկուած էր սեսեւ բծերով: Ես սարսափ
զգալով համոզուեցայ, որ շատ ենք վեր բարձրացել:
«Ես կորել եմ, ես սատանայի ձեռքն եմ ընկել»—
կայծակի արագութեամբ այս միաքը ծագեցաւ զլնումն:
Մինչ այդ բոպէն մաքովս չէր ել անց կենում, որ շար
զօրութիւնը կարող է խաբել, վնասել: Մենք անգամար
թռչում էինք և թվում էր, որ քանի գնում է, այնքան
էլ վեր ենք բարձրանում:

—Ո՞ւր ես տանում ինձ, — հաղեւ կարողացայ
հարցնել:

—Ուր, ուզում ես, — պատասխանեց ինձ ընկե-
րուհիս:

Նա բոլորովին կամած էր ինձ. նորա երեսը կամած
էր երեսիս: Այնու ամենայնիւ ես այդ բոլորովին չի զգում:
—Ցած իջեցրու ինձ, այս բարձր տեղում ես ինձ
վաս եմ զգում...

—Լան, միայն աչքերդ փակիր և շունչ մի քաշեր:
Լսեցի նորա խօսքերին—և իսկոյն զգացի, որ ցած
եմ իջնում, որպէս մի ձգած քար... օդը շրվշրվում էր
մազերիս մէջ: Երբ ես ուշքի եկայ, տեսայ, որ սահեղով
թռչում ենք երկրիս վերայ և համարես կազում էինք
խոտի ծայրերին:

—Ոտքի կանգնեցրու ինձ,—ասացի ես.—ի՞նչ օ-
գուտ այսքան թռչելուց: Ես թռչուն չեմ:

—Ես կարծում էի, թէ քեզ շատ հաճելի կըլինի:
Մենք ուրիշ գործ չունինք:

— Դուք, ուրիշ գործ չունիք: Ասացեք, գուք մվ էք:
Պատասխան չստացայ:

— Զես համարձակվում ասել ինձ այդ:

Մի աղեկուռը ձայն, որպիսին և զարթեցրեց ինձ
առաջին գիշերը, ականջիս հասաւ: Սակայն մենք շա-
րունակեցինք կամաց-կամաց մեր գործը, — սաւառնել գիշե-
րային խոնաւ օդի մէջ:

— Թող ինձ, — շարունակեցի ես: Ընկերս մի քիչ
ծռուեցաւ — և ահա ես ոսի վերայ եմ կանգնած: Նա
դարձեալ կանգնեցաւ իմ առաջ և նորից ծալեց ձեռ-
քերը: Հանգստացայ և նայեցի նորս դէմքին: առաջուայ
նման նա արտայայտում էր համեստ ախուժթիւն:

— Այս ինչտեղ ենք, — հարցրի ես: Ես չկարողացայ
ճանաչել մեր շրջակայ տեղերը:

— Քո տանից շատ հեռու, բայց, եթէ կամենաս,
կարող ես գնալ այնաեղ մի բոպէում:

— Այդ ինչպէս, կրկին քեզ անձնատուր լինիմ:

— Ես քեզ վնաս չտուի, չեմ էլ տալ: Մինչեւ ա-
ռաւօտ թռչնը միասին: Ես կարող եմ քեզ առնել
ամեն տեղ, ուր կամենաս — աշխարհիս բոլոր ծայրերը:
Անձնատուր եղեր ինձ: Ասա կրկին. «Ա՛ռ ինձ»:

— Քէհ... առ ինձ:

Նա կրկին գրկեց ինձ, բարձրացրեց երկրից և ահա
մենք երկուսս թռչում ենք:

VII.

— Ո՞ւր գնանք, — հարցրեց ինձ ուրուականը:

— Ուղեղ գնանք, ուղեղ:

— Բայց այստեղ անտառ է:

— Անտառի վրայից թռիր — միայն կամաց ու հան-
դարս:

Մենք վեր բարձրացանք այնպէս, որպէս մի վալդ-
շնէպ, որ թռչում է և նստում ցարասու վերայ—և
ապա կրկին առաջ գնացինք ուղեղ մեր ճանապար-
հուզ: Մառերի գազաթները խոտի նմանն էին երեսում մեր
ուների տակ: Վիրելից անտառի վերայ նայելը շտտ գե-
ղեցիկ է, նորա ձիւղեր, լուսաւորուած լուսնի լուսով,
վեր էին ցցուած, որպէս խոզի մազեր: Նա նման էր մի
մեծ, մրափած գազանի, և ուղեկցում էր մեզ իւր ան-
ընդհատ շրշենով, որ նման էր մի անմիտ բարբանջ-
մունքի: Մի քանի տեղ երեսում էին ձորեր ու գաշտեր.
գեղեցիկ էր այդ տեղերում անտառի ընկած ստուերը:
Նապաստակը երթեմն-երթեմն ողօրմելի ձայներ էր հանում:
ծառերի վրայից շրվացնում էր նոյնպէս ողօրմելի ձայ-
նով թռչունը: Սունկի և զանազան արօների հօտ էր տա-
րածուած օդի մէջ. լուսինը իւր լոյսը ամեն տեղ սըփ-
ռել էր — տեղ կար՝ որ շատ, տեղ կար՝ որ նուազ
աստղելը պսպղում էին կապոյտ երկնքում: Ահա և ան-
տառը ծածկուեցաւ. գաշտում մէկ սե շերտ կար,—
այդ գետն էր: Մենք թռչում էինք գետի մի ափովը
թփերի վերայից, որոնք խոնաւութիւնից ծանրացած և
անշարժ էին մնացել: Գետի ալիքները մերթ փայլում
էին կապոյտ գոյնով, մերթ կատաղած վեր էին բարձ-
րանում և փրսփռուալով առաջ գնում: Տեղ-տեղ գետի
վերայ գոլորշե էր բարձրանում—իսկ ջրային շուշանների
սպիտակ տերեւներն ու թերթերը գոռ ու հասրա սը-
փռուած էին ջրի վերայ, կարծես, թէ հաստատ գի-
տէին, որ ոչ ոք իրաւունք չունի նոցա մօտենալու:
Կամեցայ մէկ ծաղիկ պոկել—և ահա մէնք գետի վերայ
ենք... Գետի խոնաւութիւնը երեսիս կպաւ, երբ ևս կա-
մեցայ պոկել ծաղիկը: Մենք մի ափից միւսն էինք թռչ-
ում, ինչպէս գետնաբնակ խլուրաներ, որոնց յետեից
մէնք ընկել էինք և անհանգստացնում էինք: Շատ ան-

գամ մենք պատահում էինք վայրենի բաղերի, որոնք
եղէզների մէջ մի մաքուր տեղ շըջան կազմած՝ նստած
էին—նոքա բոլորվին չէին շարժվում. միայն երթիմն եր-
թիմն մէկը հանում էր վեզը թեւերի տակից, նայում էր
նայում, կրկին իւր կտուցը թազցնում թաւամաղլ թեփ
տակ, միւսը կամաց ձայն էր հանում և իրեն թափ
տալիս: Մենք վախեցրինք մի արագիլի, նա վեր կացաւ
թփի տակից, ոանելը շարժեց և դանդաղօրէն և այլան-
դակ թափ տուեց թեւերը. այդ բռուէին, արգարե, նա
նման էր գերմանացու: Զուկ ոչ մի տեղ չէր երեւում—
նոյնպէս քնած էին: Ես արգէն սովորեցայ թռչել, այլ
ևս ինձ վաս չէի զում, այլ ընդհակառակ—զուար-
ծութիւն. իմ խօսքերս կըհասկանայ ամեն մէկը, ով որ
երազումը թռչել է: Հետաքրքրութեամբ սկսեցի քննել այն
արարածը, որ ինձ ցոյց տուեց այսքան անբնական բաներ:

VII.

Նա մի փոքրիկ կին էր, ոռւսի գէմք չունէր: Նորա
փոքր ինչ սպիտակ ու մոխրագոյն կիսաթափանցիկ գէմ-
քը, որի վերայ համարեա չէին նշմարվում ստուերներ,
յիշեցնում էր ինձ ալեբաստրից շինած վազ: որի վերայ
լինում են նկարներ, նամանաւանդ երբ լուսաւորում են
այդ վաղերը ներսից:

—Կարո՞ղ եմ քեզ հետ խօսել,—հարցըի եա:

—Խօսի՞ւ:

—Ես տեսնում եմ, որ քեզ մօտ մատանի կայ-
ուրիմն գու այս աշխարհումն ապրել ես—գու մարդու
ես գնացել:

Ես վերջացրի... բայց պատասխան չստացայ,

—Ի՞նչ է քո անունդ, կամ գոնէ ինչպէս էին ա-
նու անում: Քեզ:

—իմ անունս ելլիս է:
 —ելլիս: Սա անգլիացու անուն է: Դու անգլիացին
 ես: Դու ինձ ճանաչում էիր առաջ:
 —Ոչ:
 —ինչո՞ւ համար դու անպատճառ ինձ երևեցար:
 —ես քեզ սիրում եմ:
 —եւ գու բաւակա՞ն ես ինձանից:
 —Այս բայց այժմ քեզ հետ մենք թռչում ենք,
 պայուս ենք գալիս եթերի մէջ:
 —ելլիս,—ասացի ես միանգամից,—դու, կարող է
 լինել, յանցաւոր, մեղաւոր կամ չար ոգի՞ ես:
 Ընկերս գլուխը ցած ձգեց:—Ես քեզ չեմ հասկա-
 նում,—հազիւ լսելի ձայնով արտասանեց նա:
 —Երգում եմ տալիս քեզ Աստուծոյ անունով,—
 սկսեցի ես...
 —Ի՞նչ ես ասում, —ասաց նա փոքր ինչ տարա-
 կուսելով: Ես չեմ հասկանում: —Ինձ թվում էր, որ-
 պէս թէ նա շարժեց իւր ձեռքելը, որ իբրև սառը գօտի
 բռնել էին իրանս...
 —Մի վախենար, —ասաց ելլիս,—մի վախենար, սի-
 րականս:
 Նա երեսը շուռ տուեց և գարձրեց գէպի իմ կողմա...
 Զգացի, որ ըթունքներիս մի բան կպաւ, ասես, կակուղ
 և նուրբ երակ լիներ... Ճեզ ազըուկներն էլ այդպէս են
 կծում...

VIII.

Գլուխս ցած ձգեցի: Կրկին մենք սասարիկ վեր բարձ-
 րացանք: Մենք թռչում էինք ինձ անձանօթ գաւառա-
 կան քաղաքի վրայից, որ զետեղուած էր բլբակի լայն
 ստորոտի վերայ: Եկեղեցիների գմբէթները փայլում էին
 բազմոթիւ փայտեայ տների ու պարտէզների մէջ: Երկար

կամուրջը սեխն էր տալիս այն տեղ, ուր գետը ծռում
էր իւր հոսանքը. ամենայն ինչ լուս էր և խոր քնի մէջ
էր թաղուած: Գմբեթները և խաչերը միշտ, կարծես,
պսպղում էին անխօս փայլով: Ջրհորի մօտ բարձր ցցերը
լոիկ-մնջիկ շարուած էին կլորածեւ թփերի մօտ: Նեղ ու
ձիգ խճուղին նեղ աղեղի պէս մտնում էր քաղաքը և
միւս կողմից սուս ու փուս դուրս էր գալիս միատեսակ
դաշտերի աղջամդջային տարածութիւն:

—Այս ի՞նչ քաղաք է,—հարցրի ես:

—...սով:

—...սով, որ ...եան նահանգութիւն է:

—Եյ՞ս:

—Մեր տանից բաւականին արդէն հեռացել եմ:

—Մեկ համար հեռաւ որութիւն չկայ:

—Ճշմարիթու:—Միանգամից քաջալերուեցայ:—Դէ՛ս,
գնանք ուրեմն չարաւային Ամերիկա:

—Ամերիկա գնալ չեմ կարող: Այն տեղ այժմ
ցերեկ է:

—Բայց մենք գիշերային թռչուններ ենք: Դէ՛ս,
ուրեմն մի ուրիշ տեղ, ինչանց կարել է, միան հե-
ռու, հեռու:

—Փակիր աչքերդ և շունչդ կտրիր,—պատասխանեց
էլլիսը,—իսկոյն հողմի արագութեամբ սլացանք գէպի վեր:
Քամին զըժվըժում էր ականջներում:

Մենք կանգնեցինք, բայց այդ աղմուկը չվերջացա-
դեմ: Ընդհակառակն այժմ նա սարսափելի էր որո-
տում...

—Այժմ կարող ես բանալ աչքերդ, —ասաց էլլիսը:

IX.

Ասածը կատարեցի... Տէ՛ր իմ Ասաուած, այս ի՞նչ
տեղ եմ:

Մեր գլխին սփռուած էին մեծ-մեծ, մռայլ ամպեր. նոքա խռնվում էին, վազվզում էին, որպէս սոսկալի ճիւաղների մի խումբ... բայց ցածը մի ուրիշ ճիւաղ էր. կատաղի, այժ կատաղի ծովը... Սպիտակ փրփուռը տատանուելով փայլում էր այս տեղ ու այն տեղ ծովի մակերեսոյթի վերայ—և կոհակները բարձրանալով, ահարկու ձայն էին հանում, խփուելով եղերքին գտնուող ժայռին, որ այնքան սև էր, ասես, թէ կուպրից էր շենած։ Փոթորկի ճիչը, ալեաց գանչեւնը, ջրի սաստիկ ծփոցը, ուր երեխն լաց ու կոծի ձայն, հեռուում արձակուող թնդանօթների թնդիւն, զանգակների ձայն էր լսվում—սիրա պատռող Ճիչն ու ատամների կրծառումը մերձակայ տմայի տեղից, աննկատելի որորի յանկարձակի աղաղակը, մութ երկնակամօրում նաւի խախուտ կմոխքը—ամեն տեղ մահ և սարսափ էր տարածուած... Գլուխս պայտ եկաւ—բոլորովին անզգայ փակեցի աշքերս...»

—Այս ինչ է, այս ինչտեղ ենք։

—Ուստի կղզու հարաւային ափում, Բլակգանգ ժայռի առջե, ինչտեղ յաճախակի ջարդ ու փշուր են լինում նաւերը,—ասաց Ելլիսը այս անդամ շատ պարզ ու որոշակի և, ինչքան ես նկատեցի, ոչ առանց չարախնդութեամբ արտասանեց այս խօսքերը...»

—Ինձ այս տեղուց տար, տար այս տեղուց... տան զնանք, տուն...»

Բոլորովին կուչ եկայ, զէմքս ծածկեցի ձեռքերովս... ես զգում էի, որ առաջուանից արագ էինք թռչում. այժմ քամին ոչ զբժվութում էր, ոչ էլ շըվշըվում—նա միայն փոքր ինչ զգալի էր մազերիս և շորերիս մէջ... շունչս կտրփում էր...»

—Կանգնիր ոտքիդ վերայ,—լսուեցաւ Ելլիսի ձայնը։ ես աշխատաւմ էի բանել ինձ, խելքս հաւաքել...»

Ես զգում էի, որ կանգնած եմ գետնի վերայ, բայց ո-
չինչ չէի լսում, ասես, թէ ամեն բան մեր չորս կողմում
մեռած լինէր... միայն քունքերիս երակներում արիւնը
սաստիկ. Էր զարկում և մի և նոյն անհանգստութեան
մէջ էի,—դեռ զլուխա պաոյտ էր գալիս: Հանգստացայ
և աչքերս բաց արի... .

X.

Մենք կանգնած էինք իմ լճի ամբարտակի մօտ:
Թփերի տերենների միջից երեսում էր մակերևոյթը և այս
տեղ ու այն տեղ ասբաժուած էր թաւուտ մէզը: Դէմ
ու դէմ երեսում էր հաճարով ցանած դաշար. ձախ կող-
մում անշարժ կանգնած էին պարտիզի բարձրաբերձ ու
անշարժ և, ասես, փոքր ինչ խոնաւ ծառերը: Առաւոտը
մօտ էր: Պարզ երկնքում մի երկու տեղ, որպէս ծուխ,
սփռուած էին ամպերը, նորա առաւել զեղնագոյն էին—
բայց դա արշալուսիցն էր, Աստուած զիտէ թէ ինչտե-
ղուց. աչքը դեռ չէր կարողանում որոշել, թէ գունատ
երկնակամարում ինչտեղ պիտի լինի արշալոյսը: Ասա-
զերը մայր մատն: Ոչ մի բան չէր շարժվում, թէպէտ
այդ վաղ լուսածագի հրաշալի խաղաղութեան ժամա-
նակ ամեն բան զարթնել էր:

—Առաւոտ է, առաւոտ—ահա,—բացականչեց ել-
լիսը ականջիս...—Մնան բարեաւ: Վաղը կըտեսնուենք:
Յետ նայեցի... Երկրից թեթև կերպով վեր բարձ-
րանալով, նա թուաւ-գնաց—և ձեռքերը զլիսի վերայ բարձ-
րացրեց: Նորա գլուխը և ուսերը մի վայրկեանում մար-
մի գոյն ստացան: Խուար աչերումը վառ կայծեր երեւ-
ցան: այդ կախարդքնքոյշ էակի կարմրագոյն շըթունք-
ների վերայ ժաղիտ երեւց... Զքնաղ կինը յանկարծ ե-
րեւց իմ առաջ... Բայց, կարծես, ուշաթափ յիներով,

մի քիչ յետ գնաց և որպէս շոզի աներեւոյժացաւ։
Անշարժ մնացի քանի մի վայրկեան։

Երբ ես ուշքի եկայ և նայեցի չորս կողմո, ինձ
թւում էր, թէ այն մարմնաւոր բաց-կարմիր գոյնը, որ
երեեցաւ ուրուականիս կերպարանքով, դեռ բոլորովին
չէ անհետացել, այլ ատրածուել է այն տեղ օդի մէջ,
անգամ ինձ էլ պատել է... Այս արշալոյն էր ծագում։
Ես ինձ շատ հոգնած էի զգում, ուստի ուղեղ տուն զը-
նացի։ Անցենալով թռչնոցի մօախց, լսեցի բագերի առա-
ւոտեան կծկծոցը (գոցանից առաջ ոչ մի թռչուն չէ
զարթնում)։ կարի վերայ երկար շարքով նստոտած էին
ագուաներ—բոլորն էլ եռանդով և սուս ու փուս մաք-
րում էին իրենց։ Երբեմն նոքա միասին վեր էին թռչ-
ում—և մի քիչ գնալուց յետայ՝ առանց ձայն հանելու,
աղաղակ բարձրոցնելու, կրկին կարգով նստոտում էին...
Մերձակայ անտառից երկու անգամ լսուեցաւ սոխա-
կի զուարթ քաղցր ձայնը... Սարսուռը պատել էր մար-
մինս, ես հազեւ տուն եկայ, պարկեցի և խոր քնի մէջ
ընկղմեցի։

XI.

Հետեւեալ զիշերը, երբ ես մօաենում էի հին կաղնուն,
էլլեսը դուրս եկաւ իմ առաջ, կարծես, իւր հին բարե-
կամին էր ուզում։ Հանդիպել։ Ես բոլորովին չվախեցայ
նորանից, ընդհակառակը—շատ ուրախացայ։ Ես չէի կա-
մենում հետաքրքրուել իմանալ, թէ ինչ էր կատար-
վում, —ես ուզում էի թռչել, գնալ հեռու և հետաքր-
քրաշարժ տեղեր։

Էլլեսը ձեռքերը իրանովս վաթաթեց—երկուսն էլ
վեր բարձրացանք։

—Գնաներ իտալիս, —ստացի նորա ականջին։

— Ինչ տեղ ուզում ես, — պատասխանեց նա հանդարտ, բայց երօխտ ձայնով — և կամաց ու հանգիստուր կերպով իմ կողմն գարձրեց իւր երեսը: Նորա դէմքը այնքան թափանցիկ չէր, ինչքան թվում էր ինձ նախընթաց օրը: առաւել կանացի, առաւել պատկառելի լենելով, նա ինձ յիշեցրեց այն գեղեցիկ արարածը, որ փայլեց իմ առաջ արշալուսին, երբ միմեանց թողինք:

— Այս գիշերը խորհրդաւոր գիշեր է, — շարունակեց էլլեսը. — Այդպիսի զիշեր քիչ է լինում — երբ եօթն անգամ տասներկ է անցնում...

Այդ ժամանակ ևս չկարողացայ լսել նորա մի քանի խօսքերը:

— Այժմ կարելի է ահսնել ամեն բան, ինչ ուրիշ ժամանակ անմատչելի է լինում...

— Էլլիս, — հառաջեցի ես, — ով ևս գու, առա վիրապէա:

Նա անխօս բարձրացրեց իւր երկար սպիտակ ձեռը:

Այն տեղ՝ մութ երկնքում, ինչտեղ ցոյց էր տալիս նորա մատը, փոքրիկ աստղեկների մէջ փայլում էր կարմրաշերտ մի գիսաւոր աստղ:

— Ի՞նչ ես ուզում ասել, — հարցրի ես: — Կամ դու էլ — ի՞նչպէս այս գիսաւոր աստղն է շըջում արեգակի և մոլորակների մէջ տեղ — շըջում ես մարդկանց և ինչի բանի մէջ տեղ...

Սակայն էլլեսը յանկարծակի ձեռը աչքերիս առաջ բռնեց... Կարծես, թէ իսոնաւ հովակից դէմքիս գորշ մառախուռ կպաւ...

— Դէպի իտալիա, դէպի իտալիա, — լսուեց նորա ձայնը: — Այս գիշերը խորհրդաւոր գիշեր է:

XII.

Մառախուղը ցրուեց աչքիս առաջ, և ևս տեսայ առջես փռուած մի լայնատարած հովիտ։ Խսկոյն իմացայ, որ մենք Ռուսաստանում չենք, որովհետեւ այտերս զգացին տաք և մեղմ օդը. անգամ հովիտը նման է քրմեր Ռուսաստանի հովիտներին։ Սա մի մեծ աղօտ տարածութիւն էր, ուր, ինչպէս երեսում էր, չկար բայս—բալրովին ամայի էր։ Այս տեղ, այն տեղ ողջ այդ տարածութեան վերայ, որպէս հոյելի բեկորներ, փայլում էին լճակները։ Մեղանից շատ հեռու երեսում էր իուլ ու անշարժ ծովը։ Մի քանի մեծ ասազեր փայլում էին խոշոր ու գեղեցիկ ամապերի մէջ տեղելքում։ Հազար ու մի տեսակ գայլայլիկ էր լսվում ամեն կողմից—և հիանալի էր այդ զել գիշերուայ աղմուկը, անտապատի այդ այդ գիշերային ձայնը…

—Պոնախնեան Ճահիճները (Pontinae paludes),—ասաց էլլիսը։—Լսում ես դորտերի ձայնը, զգո՞ւմ ես ծըծմբի հոաը։

—Պոնախնեան Ճահիճները…—կրկնեցի ես, և վեհ վհատութեան զգացմունքը տիրեց ինձ։ — Բայց ինչո՞ւ համար բերիր դու ինձ այս տիսուր, անմարդարնակ տեղը։ Դնանք, լսւ է, գէպի հոռմ։

—Հոռմը մօտ է, —պատասխանից էլլիսը…—Պատրաստուիր։

Քիչ ցած իջնելով՝ թռանք լստինացւոց հին Ճանապարհի վրայից։ Գոմեշը հանեց տղմից իւր մազոտ, հրէշաւոր գլուխը, որի վերայ երկու յետ գնացած ծուռ պողերի մէջ մի փունջ մազ էր թողած։ Նա իւր անմիտ աչքերը մի կողմ տարաւ և թաց ռուգներով խանչեց, կարծես, զգաց, որ մենք մօտենում ենք։

—Հռոմը, Հռոմը շատ մօտ է... —ՀՀՆՁեց կլիսը: —
Նայիր, նայիր առաջդ...

Աչքերս վեր բարձրացրի:

Այդ ի՞նչ սև բան է երկնակամարի տակ: Մեծ կա-
մուրջի կամարներն են; Այդ ի՞նչ է գետի վերայ շե-
նած: Զէ, սա կամուրջ չէ, սա մի հին ջրանցք է: Զորս
կողմը Կամպանիայի սրբազն տեղերն են, իսկ այն տեղ
հեռու՝ Ալբանեան լեռները՝ նոցա գագաթները և հին
ջրանցքի արիզարդ մէջքը նուազ փայլում էին գեռ նոր
ծագած լուսնի լուսովը...

Մենք անսպասելի կերպով պառյա էին գալիս, սա-
ւառնում օդի մէջ և կանգնեցանք մի առանձնացած
աւերակի առաջ: Ու ոք չէր կարող ասել, թէ նա ինչ
է եղել առաջ: գամբարան, ապարանք թէ աշտարակ: ...
Մե բաղեղը բոլորովին պատել էր նորան իւր մեռելա-
կան ուժով — իսկ ներքեւում, ինչպէս բաց բերան, բա-
ցուած էր կիսաբանդ կամարը: Այդ մանր-մունը, մի-
մեանց հետ ամուր կերպով պնդացրած քարերի կոյտերից
մառանի սաստիկ հոտ էր փչում: .. որոնցից արգէն վա-
ղուց էր ընկել որձաքարից շինած պատի երեսը:

— Այս տեղ, — արտասանեց կլիսը և ձեռը բարձրա-
ցրեց. Այս տեղ: — Երկը անգամ արտասանիր իւրարու յե-
տեխից հռչակաւոր հռովմայեցու անունը:

— Ի՞նչ կըլինի:

— Դու կըտեսնես:

— Մատածմունքի մէջ ընկայ: — Divus Caius Julius
Caesar! յանկարծ բացականչեցի ես: Divus Caius Julius
Caesar! — կըկնեցի ես երկարացնելով խօսքելը: — Caesar!

XIII.

Դեռ իմ խօսքելիս արձագանգը չէր անհետացել,
երբ ես լսեցի...

Բայց թէ ինչ լսեցի, այդ զժուար է ինձ ասել: Առաջ ես լսեցի մի շփոթալից, հապիւ հասկանալի, բայց անընդհատ կրկնուող փողերի ձայն և ծափահարութիւններ: Կարծես, մի տեղ, սարսափելի չեռու, մի անհուն տեղ, ահագին բազմութիւն անսպասելի կերպով շարժուել էր—և բարձրանում էր ու բարձրանում, երբեմն վրդովուելով և հաղիւ լսելի ձայնով միմեանց կանչելով. բողոքի նշան էին տալիս, ասես, քնի, խոր, ճնշող և գարեւոր քնի մէջ լինի: Յեայց աւերակների վերայ օգը թանձրացաւ և մթնեցաւ... Աչքիս սկսեցին եեւել ուրուականներ, միլիոնուոր խօլականներ, հազարաւոր կերպարանքներ, կար՝ որ նման էր սաղաւարտի, կար՝ որ նման էր ցցած նիզակի: Լուսնի արծաթադոյն ճառազայթները կապոյտին էին տալիս՝ ընկնելով այդ նիզակներին, սաղաւարտաններին ու զրահներին—և այս գունդը, քանի գնում էր, մօտենում, շատանում և մեծանում էր... Անսանելի ձգտումն էր նշմարվում նորանում, ձգտում, որ բաւական էր համայն աշխարհը շարժելու. բայց դոցանից ոչ մի դէմք, ոչ մի կերպարանք ուրոշակի չէր երեւում... Բայց յանկարծ ինձ այնպէս թւուեց, թէ սարսափ պատեց մեր չորս կողմը, կարծես ամենի և ահագին ալեքներ բարձրացան և կրկնի յետ թափուեցան... «Caesar, Caesar venit», —լսուեցան զանազն ձայններ, կարծես, թէ անտառի տերեւներ լինեին, ուր յանկարծ փոթորիկ է բարձրանում... անցաւ մի հարուած—և մի գունատ, դժնահայեց դէմք, կախ արած արտեանունքներով, իմակերատօրի զլուխը՝ զարդարուած զավինեայ պսակով, կամաց-կամաց սկսեց երեխիւ աւերակների հաեից...

Մարդկային լեզուում ոչ մի խօսք չկայ, որ կարողանար արտայայտել այն սարսափն ու վախը, որ բռնեց իմ սիրաը: Ես հաւատացած էի, եթէ այդ մարդը իւր

աչքերը և շըթունքները բաց անէր—իսկոյն և եթ ևս
պիտի մեռնէի: — Էլլիս,—վախկոտ ձայնով հառաջեցի
ես,—չեմ կամենում, ես չեմ կարող, չեմ ուզում գնալ
չուոմ, կոպիտ ու սարսափիլի հռոմը... հեռանանք, գնանք
ուրիշ տեղ:

—Վախկոտ,—ասաց նա ինձ, և մենք կրկին թը-
ռանք: Ես գեռ լսում էի լէգէռնների երկաթէ, որոտա-
նման ձայները... իսկ յետոյ ամենոյն ինչ մթնեցաւ:

XIV.

—Յհա նայիր,—ասաց ինձ էլլիսը,—և հանգստացիլի:
Հնազանդեցայ նորան—և, յիշում եմ, իմ առաջին
տպաւորութիւնը այնքան քաղցրալի էր, որ ես կարո-
ղացայ միայն յոցւոց հանել: Ինձ շըջապատեց մութ-
կապտագոյն և կակուղ-արծաթափայլ մի բան, որ ոչ
լոյս էր, ոչ ամպ: Առաջ ես ոչինչ չէի նշմարում: Ինձ
ապշեցրեց այդ փայլուն երեսյթը—բայց ահա սակաւ առ
սակաւ սկսան երեսել զեղեցիկ սարեր, անտառներ: Իմ
տակս փռուած էր համեստ ծփացող լճակը, ուր փայ-
լում էին աստղերը. նարինջների հոտը ալեքի տէս քր-
թիս կպաւ—նորա հետ միասին նոյնպէս ալեքի նման
հասաւ ականջիս զել, մաքուր մատաղ կնկայ ձայնը: Այս
անոյշ հոաը, այս ձայնը մազնիսի նման ինձ ցած քա-
շեցին—և ես արդէն իջնում էի... իջնում էի զարմա-
նաշէն մարմարիօնեայ տպարանքի տռաջ, որ զուարժ
սպիտակին էր տալիս նօծիների անտառի մէջ: Նորա բա-
ցած պատուհաններից էր լսվում այդ քաղցր ձայնը: Լծի
ալեքները, որ ծածկուած էր ծալիկների փոշեով, ծփում
էին նորա պատուհանին—և ուզեղ զէմ ու զէմ ջրի
մէջ երեսում էր մի բարձր և կլոր կզզի, որ ամբողջա-
պէս ծակծուած էր նարնջի կանաչագեղ ծառ երով և

գափնիներով, պատաճ էր մեղմ հոտով և ախորժելի օդով, ուր ամեն աեղ կանգնած էին անդրիներ ու արձաններ, կոթողներ ու տաճարների սրահակներ...

—Isola Bella!—ասաց Էլլիսը...—Lago maggiore...

Ես միայն արտասանեցի,—ա, և շարունակեցի ցած իջնել: Կնկայ ձայնը քանի գնում էր աւելի բարձր, աւելի պարզ էր լսվում ապարանքից. ինձ մի բան էր գրաւում, մի բան էր քաշում գէպի այդ կողմը... և ուզում էի ահսնել երգչուհու գէմքը, որ իւր ձայնով ընդհատում էր գիշերային այդ լուսութիւնը: Կանգնեցինք պատուհանի առաջ:

Սինեակի մէջ աեղ, որ զարդարուած էր պոմպէական ձաշակով և առաւել նման էր հին բնակարանի, քան նոր գահլիճի, որ պատաճ էր ամեն կողմից յունական ձեռագործութիւններով, հարուսիհան վազերով, հազուագիւտ բոյսերով, թանկագին կերպասներով, լուսաւորուած էր վերեից կախ արած երկու լսադտերի քընքոյշ լուսով, որոնք ծածկուած էին խրուսալի լուսամփոփ գնդերով—գաշնամուրի առաջ նստած էր մի մատաղահաս կին: Փոքր ինչ գլուխը կախ արած և կիսաբաց աշերով նա երգում էր իտալական մի արիա. նո երգում էր և ժպառում, բայց մի և նոյն ժամանակ նորագէպի գծագրութիւնը մի խորհրդաւոր բան էր արաւյայտում, անգամ խստութիւն... նշան արգէն եղած, կատարուած փայելչութեան: Նա ժպառում էր... և Պըրլաքսիտելոսի Ֆաւընը ծոյլ, նորա պէս էլ ջահիլ քընքշացած, հեշտասէր, կարծես, նոյնպէս ժպառում էր նորան, միւս անկիւնից, ալէանդրի ճիւղերի յետեից, նոսր ծխի միջեց, որ բարձրանում էր փայտէ եռոտանի աթոռի վերայ զրած բրօնզէ մոխրանոցից: Գեղեցիկ կինը միայն էր: Հիացած նորա ձայնից, գեղեցկութիւնից, գիշերուայ անուշահոտ բուրումից և փայլից, սրտաշարժ

եղած այս մատաղ, խաղաղ և պայծառ երջանկութիւնը տեսնելուց, ևս բոլորովին մոռացայ իմ ընկերիս, մռացայ, թէ ինչպէս կարողացայ ականատես լինել մի այսպիսի հիռաւոր, այսպիսի ինձ համար խորթ կեանքի—և ևս ուզում էի պատռհանից ներս մանել, ուզում էի խօսել...

Ողջ մարմինս գողաց ուժգին հարուածից—ասես, թէ ևս կպայ Լէյդէնեան բանկաներին: Յետ ևմ նայում... Էլլիսի գէմքը—թէպէտև շատ թափանցիկ—մռայլ էր և գմնդակ. նորա բաց աչքերում երեսում էր, որ խանդի կրակ էր վառվում...

—Թող, — կատաղի շշնջեց նա, —և գարձեալ տիրից հողմ ու փոթորիկ, խաւար և գլխի պտոյտը... Բայց այս անգամ ականջումս ֆնաց ո՛չ թէ լէգէոնների, այլ երգչուհու ձայնը, որ բարձր նօտայի վերայ ընդհատուեցաւ...

Մենք կանգ առանք: Նոյն բարձր ձայնը գեռ. լըսվում էր ականջիս մէջ և չէր գաղարում, թէպէտև այժմ ուրիշ օդ, ուրիշ հոտ էի զգում... Խսկոյն զգացի կազդուրիչ թարմութիւն, ասես, թէ մի մեծ գետից փչում լինէր—և գալիս էր խոտի, արօտի, ծիսի, կանեփի հոտ: Այդ բարձր ու երկար ձայնից յետոյ նա շարունակեց երկրորդը, ապա երրորդը, բայց այնպիսի ծանօթ եղանակով, այնպիսի դայլայլեկներով, որ ևս խսկոյն ասացիր. «Սա ռռւս է և ռռւսաց երգ է երգում»—և նոյն վայրկեանում ըրջակայքիս ամեն բանը ինձ համար պարզ ու ծանօթ էր:

XV.

Մենք գտնվում էինք հարթ եղելքում: Զախ կողմում երեսում էին և անսահման տարածութեան մէջ

կորչում հնձած մարդագետիներ, ուր զիզուած էին ա-
հագին խուրձեր։ Աջ կողմում նոյնպէս անսահման տա-
րածվում էր և մեծ, յորդահոս գեաի մակերեւոյթը։ Ափի
մօտ գտնվում էին ահագին, անձոռնի նաւակներ, որոնք
հանում բարձրացնում էին խարիսխը, կամաց-կամաց շար-
ժում էին առագաստների սուր ծայրերը, որոնք, կարծես,
ցուցամտներ լինին։ Այդպիսի մի նաւակից հասնում էր
ինձ մի կլկալի ձայն և նորա վերայ ճրագ էր վառվում,
որ շարժվում ու ճօճվում էր՝ ձգելով ջրի վերայ եր-
կար ու կարմիր շողք։ Մի քանի աեղ և գետի և գաշ-
տերի վիրայ, ոչ շատ հեռու, ոչ շատ մօտ—զժուար էր
որոշելով—նոյնպէս կային ճրագներ։ Նոքա նըրեմն ան-
հետանում էին, իսկ երբեմն աչքի էին ընկնում, որպէս
ճառագայթաւոր խոշոր կէտեր։ Ճպուաներ անդադար
ճռվողում էին, որոնք Պօնտինեան գորտերից պակաս
չէին—և պարզ երկնքի տակ, թէպէտե մութ էր, երբեմ-
նակի ձայներ էին հանում թռչունները, որոնց մենք
չէինք նշմարում։

—Մինք Ռուսաստանն մն ենք,—հարցրի ևս էլլիսից։

—Աս Վօլգան է, —եղաւ պատասխանը։

Մինք թռչում էինք ափի մօտով։ —Ինչն համար
զու ինձ այն աեղից, այն գեղատեսիլ երկրից հեռաց-
րիր, —հարցրի ևս։ —Ի՞նչ է, նախանձեցիր։ Զլինի թէ
քեզանում խանդ յզացաւ։

Էլլիսի շրթունքները հաղիւ հազ շարժուեցին և
աշերի մէջ երեկաւ բարկութեան նշյլ... Բայց զէմքը
նորից կաշկանդուեց։

—Ուզում եմ զնալ տուն, —ասացի ևս։

—Ապասիր, սպասիր—պատասխանեց էլլիսը։ —Եյս
գիշերը խորհրդաւոր զիշեր է։ Սա շուշով չի կրնուիլ։
Քու կարող ես ականատես լինել... Սպասիր։

Եւ մենք թռանք ոլորտապայտ Վօլգայի ջրի վրա-

յից, երբեմն ցածանալով, երբեմն բարձրանալով, ինչպէս ծիծեռակները, երբ նոքա զգում ին, որ վատ եղանակ պիտի լինի: Մհեմ կոհակները ՓըշՓըշում էին մեր տակ, գետի բաւականին ցուրտ քամին խփում էր մեզ ...աջակողմեան բարձր ափը սկսաւ փրփրել ու բարձրանալ: Երեսում էին բարձրաթերձ սարեր ահազին ձեղքերով: Մենք մօտենում էին այդ սարերին:

—Բարձր ձայնով աս': Սարն ու կիշկու! —~~շշն-~~
~~ջեց~~ ականջես էլլեար:

Յիշեցի այն արհաւելքը, որ ես զգացի, երբ հռովմէական ուրուականները երեկցին. և յոդնած էի, և ձանձրացած էի, մի բան ընկճում էր սիրտս—և ցանկութիւն չունէի արտասանել այդ ահարկու խօսքերը, որովհետեւ շատ լաւ գիտէի, որ այդ խօսքերին որպէս պատասխան՝ ինչպէս Ֆրեյշեցի Քայլե Զորում, պիտի երեի մի հրէշ—սակայն ակամայ շրթունքներս բաժանուեցան և և բացականչեցի, նոյնպէս ակամայ ու երկար ձայնով. «Սարն ու կիշկու!».

XVI.

Առաջ ամենայն ինչ լռութեան մէջ խորասուզուած էր, ինչպէս և հռովմէական աւերակների մօտ — բայց յանկարծ ականջես հասաւ նաւաստիների կողիս ծիծաղը — և մի բան վերելց ընկաւ ջրի մէջ և ջուրը ցայտեց չորս կողմը... Յիշ եմ նայում: ոչ մի մարդ չէ երեսում—բայց ափից լսուեց արձագանդ—և անսպասելի կերպով ամեն կողմից խլացուցիչ ձայն բարձրացաւ: Եւ ինչեր չկային ձայների այս քասում: աղաղակ և ծիչ ծիծաղ ու կատաղի յիշոցներ, աւելի սաստիկ ծիծաղ, թիակների ու տապարների հարուածներ, ձաճոոց, ասես, թէ դոներ ու գղրոցներ կոտրասում լինէին, դոր-

ծիքների թրիկոցներ, անիւների ճռոցներ, ձիերի տրոփիւն, շղթաների շառաչիւն, ասես, թէ ապստամբութեան նշան էին տալիս, գոռում էին ու գոչում, ինչպէս հրդեհի ժամանակ, արբեցողների երգեր, արագախօսութիւններ, անմլիթար լաց ու կոծ, աղաշանք և պազատանք, յուսակառուր - և հրամայողական բացականչութիւններ, մահամերձ մարդոց խրխոց, շըվշըվոցներ, ծըվծըվոցներ, պարեր, պար-երգեր... «Խփիր, կախիր, ունակոխ արա՛, կարիր, լաւ է, լաւ. այդպէս է, այդպէս, մի մեղքանար»—պարզ լսվում էր—լսվում էին նոյնպէս հեւացող մարդկանց ընդհատուող շնչառութիւնը—իսկ մեր չորս կողմը, ինչքան կտրող էր մարդուս աչքը տեսնել, ոչինչ չէր երեսում, ոչ մի փոփոխութիւն չկարգեալ հոսում էր մեզ մօտ խորհրդաւոր, բայց և զըժնահայեաց կերպով։ Ափերը բոլորովին ամայի ու անապատ տեղեր էին։

Ես զիմեցի ելլիսին, բայց նա մատը շըթունքիս վերայ զրեց...

—Ստեպան Տիմօֆէիչը, Ստեպան Տիմօֆէիչը գալիս է,—լսուեցաւ չորս կողմից,—զալիս է մեր տէրը, մեր իշխանը, մեր խնամատարը;—Ես կրկին ոչինչ չէի նկատում, բայց մի անգամից աչքիս երեկոց, իբրև թէ մի ահագին, ահագին մարդ է գալիս ուղեղ դէպի ինձ... Ֆրոլիկա, ինչտեղ ես, այ շուն, — լսուեց մի սարսափելի ձայն... Կրակ տուեք ամեն կողմից—ջարդ ու փշուր արեք դոցա, այդ քնիոյշ արարածներին։

Մօտակայ բոցի տաքութիւնը, թանձը մուխի հետ խառնուած, երեսիս կպաւ—և մի և նոյն ժամանակ մի տուք բան, տաես, արիւն լինէր, սրսկիցին երեսիս և ձեռքերիս... Վայրենի ծիծաղ լսուեց չորս կողմից...

Ուշաթափ եղայ—և երբ ես ուշքի եկայ, էլլիսի
հետ միասին սաւառնում էինք մեզ ծանօթ անտառի
մօտից՝ ուղղակի դէպի հին կազնին...

—Տեսնեմ ես այն շաւիղը,—հարցրեց էլլիսը...—
այն տեղ, ինչ տեղ նուազ լուսաւորում է լուսինը և
երկու ցարասիներ են կանգնած... ուզմամ ես, գնանք
այն տեղ:

Բայց ես այնքան ջարդուած էի և հոգնած, որ կա-
րողացայ այսքանս միայն պատասխանել. «Ճուն... տուն
գնանք»...

—Դու տանն ես,—պատասխանեց էլլիսը:
Արդարեւ, ես կանգնած էի իմ տան դասն առջեւ—
այն էլ միայն: Էլլիսը անհետացաւ: Մեր շունը մօտե-
ցաւ ինձ, կասկածաւոր հայեացք ձգեց վերաս—և կընծ-
կընծալով յետ գնաց:

Մի կերպ հասայ մինչ անկողինս և քնիցի՝ շորերս
էլ չհանած:

XVII.

Հետեւալ օրը առաւօտեան զլուխս ցաւում էր, և
հազիւ կարողանում էի ոտքերս շարժել: Այսու ամենայ-
նիւ ես ուշագութիւն չէի դարձնում մարմնական թու-
լութեանս. խոստովանելը ինձ սպանում էր, բարկու-
թիւնս տանջում էր:

Ինքս ինձանից անբաւական էի. «Վախկոտ—անդա-
դար կրկնում էի ես. այս—էլլիսը ճշմարիտ ասաց: Ին-
չնւ ես վախեցայ, ինչո՞ւ համար օգուտ չքաղեցի յար-
մար զիպուածից... Ես կարող էի տեսնել իրեն թեզա-
րին—բայց ես վախից գողգողում էի, ես ծրւծըւում
էի, ես փախչում էի այդ բանից, ինչպէս երեխան, երբ
կամենում են նորան գանահարել: Դէ, Բագինը—այդ ար-

դէն ուրիշ բան է: Որպէս աղնուական և հողատէր մարդ... Բայց և այս տեղ ինչից ես վախեցայ: Վախսկոտ, վախսկոտ...»

«Զինի, թէ սա երազումն եմ տեսնում, — վերջապէս հարց տուի ինքս ինձ: Կոչեցի աղախնիս:

— Մարթա, միադ չէ, երէկ ես որ ժամին պարկեցայ քնիլու:

— Ե՛շ, ավ է իմանում քո բանդ... Կարծեմ, շատ ուշ: Իրիկնապահին դու տանից դուրս եկար, իսկ քայլերիդ ձայնը լսուեցաւ ննջարանում կէս գիշերին: Լուսաբացին, հէնց լրւսաբացին քնիցիր: Ահա և երէկ չէ, անցեալ օրն էլ այդպէս էր: Ինչպէս երեսում է այժմ շատ հոգս ունիս:

— Բէհը, մտածեցի ես: — Թէ որ ևս թռչում եմ, այդ տեղ կասկած չկայ: Բայց իմ դէմքի գօյնը ինչպէս է, — հարցը ես աղախնից:

— Դէմքիդ գոյնը: Արա, թռող, ահսնեմ: Մի քիչ գունատուել ես, պարոն. համարեա երեսիդ կարմրութիւն չկայ:

Այդ խօսքերը ինձ սակաւ ինչ վրդովեցին... Թողի Մարթային:

«Այսպէս մատածութեան մէջ ընկղմած պատուհանի առաջ նստել ողջ ժամանակը՝ մարդ կամ կրմեռնի, կամ կը լսելադարուի: Սյո բոլորը պէտք է թողնել: Դա վասնգաւոր բան է: Այ, սիրաս ինչպէս է բարախում: Իսկ երբ ես թռչում եմ ինձ այնպէս է թռչում, իբրև թէ մէկը ծծում լինի, կամ ինձանից մի հիւթ է թափառում — ինչպէս գարնանը ցարասուց հիւթ է թափառում, ելր ասպարով հարուածում են: Դարձեալ մեղքանալի է: Այս և ելլիսար... նա ինձ հետ այնպէս է խաղում, ինչպէս կատուն մկան հետ... Բայց հազեւ թէ նա ինձ վատ կամենում լինի: Վերջին անգամ անձնատուր

կը լինիմ նորան—լուսից ամեն բան կը տեսնեմ— իսկ յետոյ... Իսկ եթէ նա իմ արինս է ծծում: Դա սարսափելի բան է: Բացի գորանից, ասում են, յաճախ աեղափոխութիւնը վնասակար է: Ասում են նոյնողէս, իբրև թէ Անգլիայում երկաթուղով արգելուած է ժամը 120 վերստից աւել անհելք...»

Այսպէս ինքս ինձ դատում էի—բայց արգէն ինը ժամին հին կաղնու մօս էի:

XVIII.

Դիշերը ցուրտ էր, մութ և խռար, անձրեի հոտ էր օգում: Զարմացայ, երբ տեսայ, որ կանգու մօս ոչ ոք չկայ: Մի քիչ ման եկայ, գնացի անտառի այն ծայրը, ուր առաւել բաց էր, վերադարձայ և սկսեցի որոնել այն խռար աեղում, չլինի... Ոչ ոք չկար: Մի քիչ էլ սպասեցի, յետոյ երկք անգամ իրարու յետեից աւելի և աւելի բարձր արտասանեցի—էլլիս... իսկ նա կրկին չերեւց: Ես շատ ախրեցի, անգամ ցաւեցի: Առաջուայ պէս այլ ես ես չէի վախենում: ես չէի կարողանում հաւատալ, որ իմ ընկերս չե վերադառնալ:

— էլլիս, էլլիս, եկ վերջապէս: Միթէ դու չես գալ, — վերջին անգամ աղաղակեցի ես:

Ազռաւը, որին զարթեցրեց իմ ձայնս, թըրթուաց ծառի գագաթին և ճիւղերի մէջ շփոթուելով, թե երը թափ տուեց... Բայց էլլիսը կրկին չեկաւ:

Գլխակոր ես տուն վերադարձայ: Լծի ամբարտակի մօս երեսում էին թփեր, և սենեակիս պատուհանից լոյսը ընկել էր պարտիզե խնձորենիների մէջտեղը: դա էլ նկատուեցաւ, բայց և իսկոյն կորաւ, ասես, թէ մի մարդ, որ ինձ էր սպասում—իսկ յանկարծակի ետեիցս լսուեց արտգութեամբ կարուեող օդի բարակ սուլոցը, և մի ինչ

որ բան խսկոյն գըկեց ինձ և վեր բարձրացրեց... Թաղէն
էլ այսպէս է բոնում իւր ճիրաններով և տանում
զանազան թռչնակներին: Այդ էլլիսը թռաւ ինձ վերայ:
Ես զգացի, ինչպէս նորա թռւշը թշիս կպաւ, իսկ ձեռ-
քի մաստանին իրանիս—և որպէս մի ցուրտ քամի ա-
կանջիս մէջ մտան նորա խօսքերը. «Ահա և ես»: Մի և
նոյն ժամանակ ես և վախեցայ և ուրախացայ... Մենք
թռչում էինք արգէն, բայց գետնից ոչ այնքան էլ բարձր:
—Այսօր զու չէիր ուզում գալ—հարցըի նորան:
—Իսկ զու ախրեցի՞ր, ինչ է: Դու սիրո՞ւմ ես ինձ:
Ո՛չ, իմ...

էլլիսի վերջին խօսքերը ինձ շփոթեցին... Զգիտէի,
ինչ պատասխան տամ նորան:

—Ինձ չթողեցին,—շարունակեց նա,—Ճանապարհին
ինձ սպասում էին:

—Քեզ ով է կարող բռնել:

—Ո՞ւր ես որ ուզում, գնանք,—հարցըց էլլիսը,
չպատասխաններով հարցիս, ինչպէս սովորութիւն ունէր:

—Տար ինձ իտալիա, գէպի այն լիճը—յիշո՞ւմ ես:

էլլիսը փոքր ինչ ծռեց իւր ընթացքը և մերժո-
ղական շարժում արաւ գլխով: Այս տեղ ես առաջին
անգամ միայն նկատեցի, որ նա թափանցիկ չէ: Նորա
երեսը գոյն էր ստացել նորա սպիտակ երեսի վերայ նըշ-
մարվում էին կարմրութեան հետքեր: Նայեցայ նորա աշ-
քերին... Բաւականին սարսեցի և այդ աշքերում մի
ինչ որ բան էր շարժվում—կծկուած ու սառած օձի,
որին արեգակը տաքացնում է, հանդարտ, անընդհատ, շա-
րագուշակ շարժողութեամբ:

—Էլլիս, —բացականչեցի ես,—ով ես գու: Ասա
ինձ, զու ով ես:

էլլիսը միայն ուսերը վեր քաշեց:

Բարկացայ—ես ուզում էի վրէժս հանել,—բայց

միտքս ընկառ, առամ նորան, որ ինձ Փարիզ տանէ:
«Այ ինչանեղ գու կարող ես խանդ զգալը, — մտա-
ծեցի հու: — Էլլիս, — ասացի ես լսելի ձայնով, — գու մեծ
քաղաքներից, զոր օրինակ Փարիզից, չե՞ս վախճառում, եր-
կիւղ չե՞ս կրում:

— Ո՞չ:

— Ո՞չ: Անգամ այն տեղերից, որ Ճեմելիքների պէս
լուսաւրուած են:

— Եյդ ցերեկուայ լոյս չէ:

— Շատ լաւ. գէհ, ուրեմն տար ինձ այժմ «Իտա-
լական Ճեմելիքը»:

Էլլիսը զիսիս վերայ ձգեց իւր երկայն թևերի ծայ-
րերը: Իսկոյն ինձ պատեց մի տեսակ սպիտակ մէգ, որից
խաշլաշի թմբեցուցիս հոտ էր բուրում: Ամեն բան մի
անգամից աներեւութացաւ, թէ լոյս, թէ ձայն—և մին-
չե անգամ իմացականութիւնը: Միայն ես զգում էի, որ
ապրում եմ—և այդ ինձ շատ հածելի էր:

Իսկոյն մէջը ցրուեցաւ. Էլլիսը բարձրացրեց գլխիս
ձգած թևերը, և ես աեսայ աչքիս առաջ ահագին բազ-
մութիւն խմբուած շինութիւնների, հրաշալի կերառուած-
ներ, շարժմունք, թնդիւն... ես աեսայ Փարիզը:

XIX.

Առաջ էլ ես եղել էի Փարիզում, գորա համար
իսկոյն ճանաչեցի այն տեղերը, ուր զիմում էր էլ-
լիսը: Դա ծիւլըրի պարտէզն էր իւր հին շագանակի
ծառերով, երկաթէ վանդակապատով՝ դարպասով, ամրո-
ցական խրամատով՝ և պահապան կանգնեցրած գաղանա-
նան զուազներով: Անցնելով պալատը, անցնելով ս-
թօնի տաճարը, որի տափականների վերայ առաջին նա-
պօլէոնը առաջին անգամ թափեց Փրանսիացիների ա-

րիւնը, բարձր կանգնեցանք Խտալական Ճեմելեքի վերայ, ուր երկրորդ Նապօլէսնը արաւ նոյնը և մի և նոյն յաջողութեամբ: Խռւմբ-խումբ մարզիկ, թէ պճնասէր երիտասարդներ, թէ ծերեր, կանայք պերճապաճոյժ շորեր հագած՝ զըժվըժում էին փայտաշէն մայթերի վերայ. ոսկեզարդ ու էստօրաններն ու սրճարանները խիստ լրւսաւորուած էին: Հանրակառքերը, տեսակ-աեսակ կառքերը խռնուած էին Ճեմելեքի մօտ: Այսպէս ամեն բան եռ էր գալիս, ամեն բան փայլում էր, ամեն բան, ինչ որ աչքս տհնուամ էր... Բայց տարօրինսակ բան. ես ցանկութիւն չունէի թողնել մեր մաքուր, մութ օգային բարձրութիւնը, ցանկութիւն չունէի ցած իջնել, մօտենալ այդ մարդկային մրջնանոցին: Այն տեղեց վեր էր բարձրանուամ տաք, ծանր, կարմիր գոլորշի, որ ոչ անուշահու էր, ոչ էլ գարշահու. և պետպէս կեսնը էր համախմբուած այդ տեղ: Ես գեռ աստանվում էի. . .

Բայց ահա, որպէս երկաթի շառաչիւն, լսուեց փողոցային լորեանների ձայնը. այդ ձայնը, որպէս լեռբ լեզու, գուրս ցցուեց, նա խայթեց ինձ, որպէս սողունի խայթ: Ես խկոյն երեակայեցի Փարիզի կարծր ու կոշտ, ագահ, ժլաա ու տափակ կերպարանքը, վաշխառուի աչքերը, Ճիրմակ ու կարմիր ներկերը, խճճուած մազերը և շինծու գեղեցիկ ծաղեկների փունջը սրածայր զիսարկի տակ, Ճիլանի պէս սրած եղունգները, անձոռնի կրինոլինը . . . Երեակայեցի նոյնպէս և մեր ռուսին, որ անլուգար այս կողմը, այն կողմն է վազվըզում իրեն ծախող խաղալեկի յետեից... Երեակայեցի նոյնպէս, թէ ինչպէս նա սաստիկ ամասելով և կակազելով, աշխատում է իւր շարժմունքներով Վաֆուրի գարսոններին նմանել, ճշում է, ծառայութիւն է անում, քսվում է—բայց զզուանք տիրեց ինձ... «Զէ», —մտածեցի ես,— այս տեղ էլլիսը խանդ չի զգալ:

Այդ ժամանակ մենք սկսեցինք կամաց-կամաց ցած իջ-
նել... Փարփղը մեր պուածն էր գալիս իւր ազմով և հոտով...
—կանգնիր, —գիմեցի ևս էլլիսին: —Միթէ այս տեղ
քեզ վատ չես զգում, միթէ օղը քեզ համար ծանր չէ:
—ենքդ խնդրեցիր, որ ես քեզ բերեմ այս տեղ:
—Մեղաւոր եմ, ես իմ խօսքս յետ եմ տռնում:
Տար ինձ, էլլիս, խնդրեմ, տար ինձ այս տեղից: Հենց
այսպէս էլ կայ. ահա իշխան Կուլմամետովը քաշ է
գալիս Ճեմելիքում և նորա մոերիմը, Սերժ Վարաքսինը
ձեռքով է անում նորան և կանչում: Իվան Ստեպանիչ,
ալօն սուպէ, շնւա, զէ, անգանմէ իրեն Ռիգօլքօշին: Հե-
ռացրու ինձ այս մարիլէյ-ներից և մեզոն-դօրէ-ներից,
գանգենօն-ներից և աշտարակներից, Ֆիգարոյից, Ժոկէ-
կլուբից, Հեռացրու զինուորների թրաշած ճակատներից
և պսպղուն զորանոցներից, սէրժանդէվիլ-ներից և պրդ-
տոր աբսինթի բաժակներից, սրճարաններում դոմինօ և
բոլայում Խալացողներից, վերարկուների և նշանազ-
դեսաների կարմիր ժապաւէններից, պարոն զէ. Ֆուայից,
որ Հնարել է ամուսնութեան մասնագիտութիւնը» և
բժ. Շարլ Ալեքրախ ձրի խորհրդառութիւնից, ազա-
տամիտ դասախոսութիւններից և պետական գլուխինե-
րից, Փարփղ Կոմեգիաներից և օպերայից, Փարփղ սրա-
խօսութիւններից և անգազաքավարութիւնից... Հեռու,
հեռու, հեռու գնանք:

—Ցած նայիր, —պատասխանեց ինձ էլլիսը—զու-
արկէն Փարփղի վերայ չես:

Աչքերս ցած ձգեցի... Արդարեւ: Մթնագոյն հովիար,
ուր տեղ-տեղ սպիտակ շերտերով անցնում էին զանազան
ճանապարհներ, վազում էր մեր տակը, և միայն յե-
տեռում, երկնակամարում, որպէս մեծ հրդեհի բոցից, վեր
էր բարձրանում համաշխարհային մայրաքաղաքի հազա-
րաւոր ճրագների արտացոլութիւնը:

XX.

Դարձեալ աչքերս ծածկուեցան քողով... կրկին ևս
մռացայ ինձ: Բայց շուտով ցրուեց այդ:

Սյս ի՞նչ է ցածը: Այս ինչ անտառ է կրտած կակ-
զիների ծառուղիներով, առանձին եղեիններով, որպէս
ամպհովանիներ, սրահակներով, տաճարներով՝ պօմպա-
գուր ծաշակով, երգիծաբանական քանդակներով և յա-
ւերժաշարաններով, թերենիի ծաշակով, բօհօկօ-տրիտոննե-
րով ոլորապայտ լճակների մէջ տեղում, որ պատած էն
սևացած մարմարինից շնչած վանդակապատով: Զինի,
թէ սա Վերսալն է: Զէ, սա Վերսալը չէ: Ոչ մեծ պա-
լատը, նոյնպէս բօհօկօ ծաշակով, երեսում է տերեւախիա
կաղնիների միջեց: Լուսինը աղօտ կիրպով է լուսաւո-
րում և, կարծես, թէ գոլորշեով է պատած. իսկ երկրի
վերայ, կարծես, փոռւած լինէր նօսր մուխ: Աչքը չէր
կարողանում որոշել, թէ ինչ էր այս, լուսնի լոյն էր,
թէ մէգ: Ահա և լջի վերայ քնած է պորը. նորա՝ եր-
կար մէջքը նման էր սառնամանի անապատում: եկած
ձիւնի:

—Մենք Մանհէյմի մօտ ենք, —ասաց Ելլիոր, —այս
Շվեյցինգինի այզին է:

—Ուրիմն մենք Գերմանիայումն ենք, —մտածեցի ևս
և սկսայ ականջ դնել: Ամեն տեղ լրութիւն էր տի-
րում: միայն մի քանի տեղ առանձնակի և աննկատելի
ծփում էր և կարկաչում թափուող ջուրը: Ինձ այն-
պէս թուեց, որպէս թէ ծառուղիներից մէկում, կրտած
ծառերի մէջ տեղ՝ դուրս եկաւ մի երիտասարդ, կարմիք-
կրունկներով ոսկեհուռ բաճկոնով, անկուտածային թե-
ղանիքներով, և թեթև պողպատէ սուրն էլ կողքից կախ
արած, ձեռը մեկնեց մի խայտաբղէտ լորրօն հագած

տիկնոց... Տարօրինակ, գունատ դէմքեր էին... Ես ու-
զում էի նայել նոցա վերայ... Բայց բոլորովին անհե-
տացան, իսկ ջուրը կրկին շարունակում էր իւր ձայնը:
—Այս քունն է թափառում,—փափրսաց ելլիսը,—
երեկ աւելի շատ բան կարելի էր տեսնել... Այսօր անդամ
քունն էլ փախչում է մարդու աչքից: Առաջ, առաջ:

Մենք վեր բարձրացանք և շարունակեցինք առաջ
գնալ: Այնպէս անհուն և հաւասար էր մեր թոիշքը,
որ, կարծես, թէ մենք չէնք թաջում, այլ ընդհակա-
ռակը ամեն բան մեր առաջն էր գալիս: Երևեցան մը-
ռայլապատ, բարձրաբերձ և անտառապատ սարեր... Ա-
հա նոքա սահում են մեր աակից իրենց օձապտղանե-
րով, խոռոշներով, անգունդներով, նեղատարած մարգա-
գետիներով, հովառում քնի մէջ թազօւած գիւղի լր-
սավառ կէտերով՝ իսկ առաջեց կրկին նոր սարեր են ե-
րեան գալիս և սահելով անցնում: Մենք Շվարցվալդի
լեռների վերայ էինք:

Սարեր, դարձեալ սարեր էին երեսում... Ահա և
անտառ, գեղեցիկ, դարաեոր ու պատկառելի անտառ:
Գիշերուայ երկինքը պայծառ է, ևս կարող եմ որոշել
ծառերի տեսակները, նամանաւանդ չիանալի են բարձ-
րահասակ բարդիները իրենց սպիտակ բնով: Մացա-
ների կողմօւմ տեղտեղ այծեամներ են երեսում զգաստ
և նազելի կերպով կանգնած են նոքա իրենց քնքոյշ
ուների վերայ և լսում են, գեղեցիկ կերպով գլուխները
ծռած և խողովակաձև ականջները ցցած: Աշտարակի
աւերակը ախուր ու կուրօրէն ցոյց է տալիս ամայի ա-
պառաժից իւր կիսաւեր պատերը. այդ մոռացութեան
տուած հին քարերի վերայ պայծառ ասաղեկ էր փայ-
լում: Փոքրիկ, համարեա ու լճակից լսվում էր, որպէս
խորհրդաւոր գանգատ, գորտերի ձայնը, որ նման էր
հառաջանքի: Ես այժմ լսում եմ ուրիշ երկարատե-

ձայն, նման էօլիան քնարի հնչեններին... Աշաւ նա, առասպելների աշխարհը: Նոյն իսկ ծուխը, որ զարմացրեց ինձ Շվեյցինգէնում, այս տեղ էլ ամենուրեկ փառւած է և ինչքան սարերը միմեանցից հեռու են, այնքան էլ թանձրանում է այդ ծուխը: Ես չեմ հաշվում այն հինգ, վեց, տասը տեսակ-տեսակ սառւերները, որ ընկել էին սարերի ստորոտների վերայ, և այդ բոլոր լուս ու մունջ խայտարդէտութեան վերայ թագաւորում էր մատիուհ լուսինը: Օդը շատ մեղմ ու թեթև է: Ինքս էլ լուս եմ և մի տեսակ վեհ անդորրութիւն ու տրամութիւն էի զգում..

— Էլլս, դու պէտք է սիրես այս երկիրը:

— Ես ոչինչ չեմ սիրում:

— Ինչպէս, տպա ի՞նձ:

— Հա... քեզ, — պատասխանեց նա սառնասիրակիրպով:

Սյժմ, գոնէ ինձ այնպէս էր մվում, թէ նորա ձեռքերը առաւել պինդ էին փարել իրանս:

— Առաջ, առաջ, — ասաց էլլիսը մի տեսակ սառն յափշտակութեամբ:

— Առաջ, — կրկնեցի ես:

XXI.

Յանկարծ վերեից լոււց մի ուժեղ, կլիլոլի և զել ձայն և իսկոյն կրկնուեց, միայն փոքր առաջ:

— Այս յետ մնացած կոռունկներ են, որոնք թըռչում են զէպի հիւսիս, զէպի ձեր աշխարհը, — ասաց էլլիսը, — ուզում ես միանալ նոցա:

— Այն, այն, վեր անը ինձ նոցա մօտ:

Մենք վեր բարձրացանք և մի բոպէից արդէն նոցամօտ էինք: Այս մեծ-մեծ, գեղեցիկ թռչունները (թը-

ւով նոքա տասն և երեք էին) եռամնկիւնածել շարուած թռչում էին, երբեմնապէս միայն շարժելով իրենց դուրս ցցած թերթը: Դլուխը, ոտներն ու լանջը դուրս ցցած՝ նոքա այնպէս արագ և այնպիսի եռանգով էին թռչում, որ օզք չորս կողմում սուլում էր: Հրաշալի, էր գեղեցիկ էր տեսնել այդ բարձրութիւնից և այդ հեռաւորութիւնից, թէ որպիսի վառ, սասարիկ կեանք էր, որպիսի անյոզգոզգ կամք էր երեսում: Անընդհատ ճեղքելով օդեղէն տարածութիւնը, դիմում էին իրենց առաջնորդ ընկերներին, և մի ինչ որ վեհ, հպարտ, անզըրդելի-անձնապաստան բան կար այդ թռչոց բարձր գոչեւնների, այդ երկնային խօսակցութեան մէջ: «Մենք տեղ կըհասնենք, թէպէտե դժուար է», —կարծես, ասում լինէին նոքա, միմեանց խրախուսելով: Եւ այդ ժամանակ մնարովս անցաւ, որ այդ թռչունների պէս մարդիկ— Ռուսաստանում— ի՞նչ միայն Ռուսաստանում, այլ և ողջ աշխարհում շատ չեն:

—Մենք այժմ Ռուսաստան ենք գնում,—ասաց ինձ էլլուսը...

Ես առաջին անգամը չէր, որ նկատում էի, թէ նա միշտ իմանում էր, ինչ բանի վերայ եմ մտածում— Ուզմամ ես վերագառնալ:

—Վերագառնանք... թէ չէ: Ես Փարիզումն էի: Տար ինձ այժմ Պետերբուրգ:

—Այժմ:

—Այս, այժմ... Միայն գլուխս ծածկիր շորովդ, թէ չէ վատ եմ զգում ինձ:

Էլլուսը ձեռը բարձրացրեց... բայց դեռ ինձ չէր սկատել մեղը, ես զգացի, որ շրթունքիս կպաւ նորա նուրբ, բութ խայթը...

XXII.

«Լսի-ի-ի-ի-ի-իր», ականջիս հասաւ մի ձայ»։ «Լը-սի-ի-ի-ի-ի-իր», լսուեց հեռությ կրկին մի և նոյն յունա-հատ ձայնը։ «Լսի-ի-ի-ի-ի-իր», լսուեց ու կորաւ աշխար-հիս միւս ծայրում։ Ես սարսկցայ։ Երկար ոսկէ սրածայր ձողն աչքիս ընկաւ։ իսկոյն ձանաչեցի Պետրօպանլո-սեան բերդը։

Դժգոյն հիւսիսային գիշեր էր։ Արգեօք դա գիշեր է։ Գունատ, հիւանդ օր չէ հօ։ Երբէք ևս չեմ սիրել Պետրուրդի գիշերները, բայց այս անդամ բաւականին վախեցայ։ Էլլեսի զէմքի գծագրութիւնը համարես ան-հետանում էր, ոչընչանում էր, ինչպէս յուլիս ամ-սուայ մէզը արեդակը ծագելու ժամանակ, և ես պարզ տեսնում էի, ինչպէս իմ մարմինս կախուած էր Ալէք-սանդրեան կոթողի հետ հաւասար։ Ահա ուրիմն և Պե-տրուրդը։ Այս, ծշմարիս է, աս նա է։ Այս լայն, գա-տարկ, գորշ փողոցները՝ այս գորշ-սպիտակագոյն, գորշ-գիղնագոյն, գորշ-շուշանագոյն, սուաղած և ծեփծեփած աները, իրենց ներս ընկած պատուհաններով, խանութ-ների պէս-պէս և փայլուն վերնագլերը, երկաթէ ծած-կոցներով պատշգամբների և կանաչեղէն ծախող անպի-տան խանութների վիրայ։ այս Փրօնառներն և արձա-նագրութիւնները, պահակներն ու կոճղները, ս։ Խսա-հակի ոսկէ գմբէթը, անպէտք և խայտածամուկ բոր-տան, բերդի որձաքարէ պատերը և տախտակաշէն փո-ղոցը։ այս խոտաբարձ և փայտաբարձ նաւերը, փոշու, կաղամբի, խսիրի և ախոռի հոտը, այս փետացած դըռ-նապաններն մուշտակները հագին՝ դարպասի մօտ նըս-տած, այս կուշ եկած և մեռելական քնի մէջ ընկղմած կառապանները։ այն, աս նա է, մեր հիւսիսային Պալ-միրան։ Ամենայն ինչ երեսում է մեր չորս կողմում։ ա-

մեն բան պարզ երևում է, անգամ այնքան պարզ, որ
մարդ զգածվում է. ամեն ինչ տիսուր քնի մեջ է ըն-
կղմած. վերջալուսի կարմրութիւնը — թոքախտի կար-
մրութիւնը — դեռ երկնքից չէր հեռացել, չի էլ հեռա-
նալ սպիտակ, անաստղ երկնքից: Նա շերտերով ընկ-
նում է նեվայի մետաքսեայ մակերևոյթի վերայ. իսկ սա
հազիւ կարկաջում է և երերվում, շատապով առաջ մը-
զելով իւր սառնորակ կապոյտ ջուրը...

— Հեռանանք, — իննդրեց էլլիսը:

Եւ չսպասելով իմ պատասխանին, նա անց կացրեց
ինձ նեվայի պալատի առաջ գտնուող հրապարակի վր-
րայից, գէտի Լիտէյնահա փողոցը: Լսուեցին ներքեմից
քայլեր ու ձայներ. փողոցով գնում էր մի խումբ հար-
բած երիտասարդների, որ խօսում էին պարի դասերի
մասին: «Պօդպօրուչիկ Ստոլպակով Խօթներորդ», — յան-
կարծ գոչեց քնաթաթախ պահապան վենուորը, որ կանգ-
նած էր բրգաձեւ դարսած ու ժանգոտած գնդակների
մօտ. իսկ փոքր հեռու՝ մեծ տան բաց պատուհանի ա-
ռաջ ևս նկատեցի մի աղջիկ ճմռտած ապրեշումէ շո-
րով, առանց թեզանիքների, մարդարտազարդ վարսակալը
գլխին և ծխախոտը բերանին: Նա ուշի ուշով գիրք էր
կարդում: գա նոր իւղինալներից մէկի շարադրութիւն-
ների մի հատորն էր:

— Թուչենք, — ասացի ևս էլլիսին:

Էլ մի վայրկեան — արդէն մեր տակից վազվզում
էին փթած եղենի անտառները և մամռապատ ճա-
հիճները, որոնցով լի է Պետերբուրգի շրջակայքը: Մեր
ճանապարհը ուղղեցինք գէտի հարաւ. թէ երկինքն և
թէ երկիրը կամաց-կամաց մթնում էր: Հիւանդ ցերեկն էլ,
հիւանդ գիշերն էլ, հիւանդ քաղաքն էլ — բոլորը մնա-
ցին յետեւ:

XXIII.

Մենք այժմ սովորականից հանդարտ էինք թըռա-
չում, և իս միջոց ունեի աչքովս տեսնելու, թէ ինչպէս
էր սփռվում իմ առաջ մայրենի երկրիս անսահման տա-
րածութիւնը։ Ահա երեսում ին անտառներ, թփեր, մա-
ցառներ, գաշտեր, ձորեր, գետեր—երբեմն գիւղեր, եկե-
ղեցիներ—և գարձեալ գաշտեր, անտառներ, թփեր ու
ձորեր... Ծխուր տպաւորութիւն և մի տեսակ անտար-
բեր արտամութիւն զգացի ես։ Եւ իս ոչ թէ նորա հա-
մար տիրեցի ու արտմեցի, որ Ռուսասանի վրայից էի
թռչում։ Ո՞չ գորա պատճառը ինքը երկիրն էր, այդ
հարթ ապահութիւնը, որ սփռուած էր մեր տոկ, հա-
մայն երկրագունաը իւր բնակիչներով, բազէական, ան-
զօր, Ճնշուած կարիքով, վշտով ու հիւանդութիւննե-
ներով, այս անարդ հողին բնւեռուած։ այս խախուա,
անհարթ կեղեը, այս մեր մալորակի հրադայն աւազուաի
վերայ բուսածը, որ ծածկուած է մամուռով։ որին մենք
օրդանական ենք համարում և բուսական թագաւորու-
թիւն, այս մարդիկը, որ հազար անգամ ճանձից սառը
են, նոցա ցեխից շինած բնակարանները, նոցա փոքրիկ
ու նոյնատեսակ գործերի և անփոփոխելի ու անխու-
սափելի զէմ մղած ծիծաղարժ մաքաւումի ։ Ճնշն
հետքերը—և այդ բոլորը ինչպէս միանգամից զզուեցրեց
ինձ։ Սիրաս կամաց-կամաց բոլորովին փոխուեց և այլ
ևս իս ամեննեին ցանկութիւն չունեի նայել այդ ան-
հան պատկերի, այդ ձանձրալի տեսարանի վերայ... Ար-
դարեւ, իս տխուր էի—աւելիք քան ախուր էի։ Անգամ
ամեննեին իս չկարեկցեցի իմ եղբայրակիցներին։ իմ բո-
լոր զգացմանընթերս մի տեղ էին կենարոնացած, որ իս
յիշել չեմ համարձակվում։ իս զզուանք էի զգում, և
ամենից շատ, ամենից սասարիկ ինձանից էի զզվում։

— Բաւական է, — ասաց Էլլիսը, — բաւական, թէ չէ
ես քեզ չեմ տանիլ: Դու, քանի գնում է, ծանրա-
նում ես:

— Տուն դնա՛, — ասացի նորան այնպիսի ձայնով, ինչ-
պէս ես սովորաբար առում էի իմ կառապանիս, երբ
երեք կամ չորս ժամին գուրս էի գալիս Մոսկուայի իմ
բարեկամներից, որոնց հետ ճաշեց յետոյ նստած զրու-
ցում էինք Խուսաստանի ապագայի և համայնքի նշա-
նակութեան վերայ: — Տուն գնա՛, — կրկնեցի ես, և աչ-
քերս փակեցի:

XXIV.

Սակայն շուտ ես բացեցի աչքերս: Էլլիսը տարօ-
րինակ կերպով էր կպել ինձ: նա համարեա ինձ առաջ
էր քշում: Նայեցի նորա վերայ՝ արիւնս տառաւ: Ով որ
տեսել, նկատել է ուրիշ գէմքին յանկարծակի վախի
արտայացառւթիւն, որ նա չէր էլ կոսկածում: նա ինձ
կը հանկանայ: Սարսափը, ձնչող սարսափը ծռմռում,
այլանդակում էր Էլլիսի գունատ, համարեա կորած զր-
ծագրութիւնը: Այդպիսի բան չեմ էլ ահօն անգամ
կենդանի մարդու գէմքի վերայ: Կեանք չունեցող, ամսի
նման ուրուականը, ստուերը... և այդ թմրեցուցիչ եր-
կիւղը...

— Էլլիս, ի՞նչ է պատահել, Հալցըրի ես վերջապէս:
Նա է... նա... — պատասխանեց զժուարութեամբ, —
այս նա է:

— Նա՞ է: Այդ ով է:

— Նորա անունը մի տար, մի յիշեր, — շուտով
խօսքս կարեց Էլլիսը: — Պէտք է պրծնել գորս ձեռքից,
ապա թէ ոչ վերջ կըլինի ամեն բանի — ես բոլորովին...
Տես, ահա այն տեղ է:

Դէմքս այն կողմը գարձրի, ինչտեղ ցոյց տուեց նորա գողղոջուն ձեռքը—և նկատեցի մի բան... արդարեւ սարսափելի բան:

Այս բանը աւելի զարհուրելի էր այն պատճառով, որ մի որոշ պատկեր չունէր: Դա մի ծանր, մոայլ, մութ-դեղնագոյն, խայտաճամուկ բան էր, որպէս խլէզի փորը—և ոչ ամպ էր, ոչ էլ ծուխ, հանդարտ ու ծանր, օձի պէս սողում էր գետնի վերայ: Նա վերեկց ցած էր տատանվում հաւասար ու լայն կերպով, և նոյնպէս ցածից վեր բարձրանում: այդ տատանումը նման էր սովալլուկ գիշակեր թռչունի պտոյտի, որ թեւերը շարժելով որսի ետեկից է ընկնում: Ժամանակ-ժամանակ անրացարելի, զզուելի կերպով նա գետնին էր կպչում,—սարդն էլ այգպէս է կպչում բռնած ճանձին... Ո՞վ ես դու, կամ ի՞նչ ես դու, ահարկու արարած: Նորա ազգեցութեան ներքոյ—ես այդ տեսնում էի, ես այդ զզում էի—ամեն բան ոչնչանում էր, ամենայն ինչ պապանձվում էր... Փթած, մահաբեր սառնութիւն էր գալիս նորանից—այդ սառնութիւնից պղառըվում էր սիրտս, սեանում էին աչքերս և մազերս ցցվում էին: Այդ զօրութիւնն էր անցնում: այն զօրութիւնը, որին հակառակը չկայ, որին ամենայն բան հպատակ է, որ առանց տեսնելու, առանց կերպարանքի, առանց իմաստի, ամեն բան տեսնում է, իմանում և, որպէս վայրենի, գիշակեր թռչուն ընտրում է իւր զոհերը և օձի պէս նոցա իւրզում է և լիզում իւր գէշ խայթով...

— էլլիս, էլլիս,—աղաղակեցի ես մոլեգնած:— Դա մահն է, ինքը մահը:

Աղէկոտոր ձայնը, որ ես առաջ լսեցի, աւելի պարզ կերպով լսուեց էլլիսի բերանից—բայց այս անգամ նա աւելի մարդկային, յուսահատ լաց ու կոծի էր նման—իսկ մենք կրկին թռչում էինք: Բայց մեր թռիչքը այժմ

աւելի տարօրինակ և սասարիկ անհաւասար էր. Ելլիսը պտավում էր օդի մէջ, նա ցած էր իջնում, մի կողմից միւս կողմն էր ընկնուս, որպէս մերձ ի մահ վերաւորուած կամ իւր ձագուկներին չնից պահպանող կաքաւ: Բայց որպէս թէ մեր յետեկից, բաժանուած այդ ահարկու-անտանելի էակից, ձզվում էին երկայն բողբոշներ, կարծես, մեկնած ձեռքեր, մագիլներ լինէին... Փաթաթուած էակի ահաղին պատկերը սպիտակ նժոյգի վերայ շուառվ շարժուեց և դէպի երկինք սլացաւ... Սւելի անհանգիստ, աւելի յուսահատ սկսեց պայտաներ անել Ելլիսը: «Նա տեսն: Պրծաւ: Ես կորայ...», — լսուեցին նորա ընդհատ արտասանած խօսքեր: «Ո՛չ, թշուառ եմ ես: Ես կարող էի օգուտ քաղել կեանքից, ապրել... Իսկ այժմ... Ունայնութիւն, ունայնութիւն:» Զափազանց անտանելի էր... Բոլորովին կորցրի ըզգացմունքներս:

XXV.

Երբ ես ուշքի եկայ—խոտի վերայ պարկած էի և ողջ մարմնիս մէջ մի տեսակ խուլ ցաւ էի զգում: Երկնքում սկսում էր երեկը արշալոյս. ես կարողանում էի պարզ տեսնել բոլոր առարկաները: Ոչ շատ հեռու՝ ցարսի պուրակի մօտ, գնում էր մի ճանապարհ երկու կողմից թփերով պատաժ. այս տեղը ինձ ծանօթ էր: Սկսեցի մտաքերել զլիսովս անցածը բոլորովին սարսկցայ, երբ յիշեցի վերջին անձոռնի երեսյթը...»

«Բայց ինչից վախեցաւ Ելլիսը», — մոտածեցի ես: — «Միթէ նա էլ հպատակ է նորա իշխանութեանը: Միթէ նա էլ անմահ չէ: Միթէ նա էլ ենթարկուած է ունայնութեան, քայքայման: Այդ ինչպէս կարելի է:» Մօտից լսուեց մի կամաց ձիչ: Գլուխս յետ դար-

ձրի: Մի երկու քայլ ինձանից չեռու պարկած էր մի մատաղ կին սպիտակ շոր հագին, արձակած խիտ մազերով, մերկ ուսերով։ Մի ձեռը գլխի յետեն էր ընկած, իսկ միւսը լանջի վերայ։ Աչքը փակ էին և սեղմած շրթունքներին երևում էր թեթև ալ փրփուռ։ Միթէ սա ելլիսն է։ Բայց ելլիսը ուրուական է, իսկ ես իմ առաջ կենդանի կին եմ տհնում։ Սողալով մօտեցայ նորան, կռացայ։

— Ելին, այս գու ես, — բացականչեցի ես։ — Մի անգամից շարժեց ու բացեց աչքը. մնայլ ներթափանցիկ աչքը վրաս նետեց — մի և նոյն ժամանակ նորա տաք, խոնաւ, արիւնահոտ շրթունքները կպան ինձ, փափուկ ձեռները ամուր փաթաթեցին վիզս, նորա լի և քնքոյշ կուրծքը կրծքիս կպաւ։ — Մնաս բարեաւ, մնաս բարեաւ — յաւիտեան — պարզ արտասանեց նա այս խօսքերը — և ամեն բան անհետացաւ։

Վեր կացայ, հազիւ ոտներիս վերայ բռնուելով, որպէս մի հարբած — մի քանի անգամ էլ ձեռքը երեսիս քսելով, նայեց շուրջս ուշադրութեամբ։ Ես գանվում էի ... եան մեծ ձանապարհի մօտ, իմ բնակարանիցս երկու վերստ հեռու։ Արեգակը արդէն գուրս էր նկել երբ ես առւն հասայ։

Հետեւեալ զիշերները միշտ սպասում էի ես — և, խոստովանում եմ, թէպէս մի քիչ էլ վախենում էի — իմ ուրուականիս, իսկ նա աւել չէր այցելում ինձ։ Մինչև անգամ մի օր գնացի հին կաղնու մօտ, բայց և այն տեղ ոչինչ անբնական բան չեղաւ։ Սակայն ես այնքան էլ չէի ցաւում, որ ընդհատուեցաւ մեր այս սարօրինակ ծանօթութիւնը։ Երկար ժամանակ ես մտածում էի այս անհասկանալի, համարեա անբացարեկի անցքի

վերայ—և ես վերջապէս համոզուեցայ, որ ոչ միայն գիտութիւնները կարող չեն բացատրել այդ անցքը, այլ և անգամ առակների, աւանդութիւնների մէջ սորա նման բաներ չեն լինում: Ի՞նչ բան է ելլիսը: Տեսիլ էր, երեխիթ էր, թափառաշըջեկ չար ոգի՞ էր, սիլֆեզա թէ վերջապէս յարալէզ էր: Երբեմն ինձ թւում էր, թէ ելլիսը կին է, որին ես մի ժամանակ ճանաչում էի—և ես ծիգն էի ժամփում յիշել թէ ինչտեղ եմ տեսել նորան... Այ, այ, երբեմն թւում էր—այ, այ այս բողեիս կը յիշեմ... Բայց ի զուր: Կրկին ամեն բան ոչնչանում էր, որպէս երազ: Այո, ես շատ էի մտածում և ըստ սովորականին ոչ մի հետեանքի չհասայ: Աւրիշների խորհուրդը և կարծիքը հարցնել ես չեի վստահանում, որովհետեւ վախենում էի, որ ինձ խելագար համարեն: Վերջապէս ես թողեցի այդ մտածմանը. Ճշմարիան առեմ, ես ժամանակ չունեի... Երեսս զեղին էր, որպէս մեռեալի երես: Բժիշկը հաւատացնում էր, թէ արիւնաքիչ է, ինչ հիւանդութեանս յունական անուն էր տալիս. առնեմիառ—և խորհուրդ էր տալիս ինձ գնալ Գառատէյն: Իսկ միջնորդը երգում է, թէ առանց ինձ ուամիկների հետ «բան չես շնիլ»...

«Գնա այժմ բան շնիր»:

Բայց ինչ են նշանակում այս զել-թափանցիկ և սուր ձայները, հարմօնիի հնչիւնները, որ ես լսում ես, երբ ինձ յայտնում են մէկի մահը: Այդ ձայները աւելի լսելի, աւելի բարձր են լինում... Եւ ինչն համար ես այդպէս սարսափում եմ: Երբ միտքս է ընկնում ունայնութիւնը:

ԾԵՐ ԺԱՄԿՈՉՔ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԻԴԻԼԼԻԱ.

(Վ. Կօրուէնկոյից).

Միջնեց:

Փոքրիկ շէնը, որ գետակուած էր գետափին, պուրակում, խորասուզվում էր այն սովորական աղջամանզիթի մէջ, որ յաճախ տեղի է ունենում գարնանային աստեղալից զիշերներին, երբ նօսր մշուշը՝ գետնից բարձրանալով, թանհձրացնում է անտառների ստուերը և բաց տեղերը պատում է գորշ-կապատդոյն մխով.։ Ամեն բան խալզաղ է, մռայլ և մտածութեան մէջ ընկզմուած:

Գիւղը հանգիստ կերպով նիրհում է:

Աղքատիկ խրճիթները հավել-հազ նշմարվում են. տեղատեղ աղօտ կերպով առկայժում են ճրագները. երբեմն-երբեմն ճռուում են գարպասները, հաշում է զգաստ շունը և լուսմ. երբեմն էլ հանդարտ կերպով խշացնող մուժ անառուած երեսում են մարդկանց կերպարներն, անցնում է մի որ և է ձիւոր, ճրճռում է սայլակը: Առանհձնացած անտառաբնակ զիւղերի մալդիկն են զոքա, որ եկեղեցի են զնում գարնանային տօնը զիւմաւորելու:

Գիւղի մէջ տեղում, բլրակի վերայ է եկեղեցին: Նորա պատուհանները լուսաւորուած են ներսը վասուող

մոմերից։ Հանգակատունը հին է, բարձր — և գմբէթը
աներեւութանում է բաց-կապոյտ օդում։

Սանդուղքի ասաիծանները ճրճռում են... ծեր ժամ-
կոչ Միկուչը զանգակատուն է բարձրանում, և շու-
տով նորա լսապանը, որպէս օդի մէջ թուչող մի ասակ,
կը կախուի ասրածութեան մէջ։

Դժուար է, շատ զժուար է ծեր ժամկոչի համար
վիր բարձրանալ որորապասոյտ սանդուղքներով։ Մերացած
ոտները էլ չեն կամենում ծառայել, ինքն էլ մաշուել
է, աչքերն էլ լաւ չեն տեսնում... Ժամանակ է, ժա-
մանակ է արգէն ծեր ժամկոչին հանգստանալու, բայց
Աստուած մահ չէ առլիս։ Թաղեց նա որդիկերանց, թա-
ղեց թոռներին, ճանապարհ դրեց ծերերին, ճանապարհ
զրեց և երիտասարդներին, բայց ինքը գեռ ևս ապրում
է... Դժուար է... Նատ է նա տեսել գարնանային այդ
տօնը, մինչեւ անգամ հաշիւը կորցրել է, թէ քանի ան-
գամ այդ խոկ զանգակատանը նա սպասել է որոշ ժա-
մանակին։ Եւ ահա Աստուած կրկին նորան արժանա-
ցրել է . . .

Մերունին մօտեցաւ զանգակատան գմբէթին և թէկն
տուեց վանգակապատին։ Ներքեւում, եկեղեցու չորս կող-
մում, մժութեան, մէջ նշմարվում էին զիւղական հան-
գըստարանի գերեզմանները։ Իին խաչերը, կարծես, թէ
բազկատարած պաշապանում էին նոցա։ Տեղակեղ ցա-
րասիները, որ գեռ չէին ծածկուած աերեներով, խոնար-
հել էին նոցա վերայ իրենց կատարները... Այն տեղեց,
նելքեկից, վիր էր բարձրանում դէպի Միկուչը թարմ
կոկոնների անուշահոտութիւնը, և բուրում էր յաւիտե-
նական քնի տիտուր անգորբութիւն...
Ի՞նչ կրկնի նա մի ասրուց։ Կրբարձրանայ ար-

գեօք դէպի պղնձէ զանգակները, որ զղբոցնող զանգերի ձայնով արթեացնէ զգաստ կերպով՝ նիւհող զիշերը, թէ պարկած կըլենի. . . այ, այն տեղ, գերեզմանատան մութ անկիւնում, խաչի տակ: Աստուած գիտէ... Նա պատրաստ է՝ բայց Աստուած դեռ արժանացրել է՝ էլլ հանգիպելու տօնը: «Փառք քեզ, Աստուած», — շնչիցին ծերունու շրմունքը այդ սովորական նախազասութիւնը, և Միխէիչը նայում էր դէպի վեր, միլլիոնաւոր ձրագներով վառուած տատեղազարդ երկնքին և խաչակնքում երեսը...»

— Միխէիչ, այ Միխէիչ, — լսվում է ներքեից նոյնպէս ծերունու դողլոջուն ձայնը: Տարիքներով ծեր աիրացուն նայում է վեր դէպի զանգակատունը, մինչև անգամ ձեռը դնում է կկոցող ու արատառաթօր աչքերին, բայց կրկին չէ տեսնում Միխէիչին:

— Ի՞նչ ես ուզում: Այս տեղ եմ, — պատասխանում է ժամհարը, ցած նայելով իւր զանգակատնից: — Ի՞նչ է, չի՞ն տեսնում:

— Չիմ տեսնում... ժամնատկ չէ զանգերը տալու: Ի՞նչ ես կարծում...

Երկուսն էլ նայում են տատղերին: Անհուն բարձրութիւնից հաղարաւոր տատղերը աչքով են անում նոցա: Միխէիչը մոտածում է...»

— Չէ դեռ, մի փոքր էլ սպասիր... ես բանս հօգիտեմ...

Նա գիտէ: Նորան այէոք չէ ժամացոյց, Աստուծոյ տատղերն իմաց կըտան, երբ ժամնակը զայ... Երկինքն ու երկիրը և աղիտակ ամեզը, որ հանգարաօրէն սա-

Հում է կրկնակամաբաւմ, և մութ պռւրակը, և ներքեւում խուլ կերպով շշնջող անտառը, և խաւարի մէջ աննկատելի գետակի կարկաջիւնը, — այս բոլորը նորան ծանօթ են, այս բոլորը ընտանի են նորան. . . ի զուրտեղը չէ նա այս տեղ իւր կեանքը անց կացրել...

Վաղուց անցած-զնացածը կենդանանում է նորա առաջ... նա յիշում է, ինչպէս առաջին անգամ զանգակատունը բարձրացաւ հօր հետ... Տէր Աստուած, որքան ժամանակ է անցել... և որքան նոր է այդ... նա մտաբերում է իրեն, ինչպէս մի շեկահեր աղայ էր, աչքերը վառվում էին. քամին, — բայց ոչ այն քամին, որ բարձրացնում է փողօցների փուշին, այլ մի առանձին, որից, որ թափ է տալիս իւր թեկերը երկրի վերայ՝ առանց ազմուկ հանելու, — ծածանում էր նորա մազերը... Ներքեւում, հեռու, շատ հեռու, ինչ որ փոքրիկ մարդիկ են ման գալիս, և գիւղական աներն էլ փոքրիկ են, անտառն էլ յետ է քաշուել, և կլոր հովիարը, ուր շենն էր գտնվում, շատ մեծ էր երեսում, համարես անսահման . . .

Այ, այս տեղ է, ամեն բան այս տեղ է, — ժըպտեց ալէզարդ ծերունին, նայելով փոքրիկ դաշտին:

Ահա — այսպէս է և կեանքը... Երիտասարդ ժամանակ ծայրը չիս ահսնում, չիս ահսնում և սահմանը... Այ, բոլորը ահսնում ես աչքի առաջ, ինչպէս ափումկ, սկզբից այ մինչև այն գերեզմանը, ուր նա սիրած տեղը գտել է գերեզմանատան անկիւնում. . . Եւ ինչ, փառքքեղ Աստուած, — ժամանակ է հանդսատանալու: Դժուար ճանապարհը անցայ աղնիւ կերպով, և խօնաւ գեաբնը թող լինի պահապան... Շուտով, շուտով կըլինի...

Սակայն ժամանակ է։ Մի անգամ էլ նայելով աստղերին, Միխեիչը բարձրացաւ, հանեց գլխարկը, երեսը խաչակնքից և սկսեց զանգակների թռկը ջոկել.. Մի ըստէից զիշերային օգը գլուխաց թնդեցնող հարուածներից... հետեւեց երկրորդը, երրորդը, չորրորդը... մեկը միւսի յետեւից լցնելով զգաստ կերպով նիրհող նախատօն զիշերը, թափուեցան տարածուող զել և երգեցիկ եղանակներ...

Զանգահարութիւնը լրեց։ Ժամասացութիւնը բակուեց եկեղեցում։ Առաջուայ տարիները Միխեիչը սանդուղներից ցած էր զալս և կանգնում անկիւնում, զուան մօս, որ աղօթէ և լոէ երգեցողութիւնը։ Բայց այս անգամ նա մնաց այդ բարձր տեղը։ Դժուար է նորան։ բացի այդ՝ նա մի տիսակ յոպնածութիւն էր ըզդում։ Նա նստաւ նստարանի վերայ և, ականջ դնելով տաքացած պղնձի հանդարառուղ խուլ ձայնին, խոր միտածմունքի մէջ ընկաւ։ Ինչո՞ւ համար։ Հազիւ թէ նա ինքն էլ կարողանար պատասխանել այդ հարցին. . . Զանգակատան վերին մասը աղօս կերպով լուսաւօրուած էր նորա լապտերով։ Խուլ թնդեցնող զանգակները ընկղմած էին մըծութեան մէջ. ցածից եկեղեցուց, երբեմն երեմն ծերունու ականջին թոյլ կերպով հանեում էր երգեցողութիւնը, և զիշերային քամին տաստանում էր զանգակների թռկը, որ կապած էր նոցա երկաթէ լեզուակներից...

Ծերունին կախ արեց իւր ալէզարդ զլուիը լանջի վերայ, ուր անկատ երեղիթներ էին հետեւում մէկզմէկու։ Երգում են «Աստուածին ամենօրհնեալ», —մտածում է նա և երեւակայում, թէ ինքն էլ և եկեղեցումն է. ծերունի քահանան, հանգուցեալ հայր նառումը, գողղոջուն ձայնով

բացականչում է. զատում տասնեակ մանուկների ձայնն է լովում, հարիւրաւոր ռատկական գլուխներ, ինչպէս հասուն հասկերք քամուց, կռանում և վեր են բարձրանում... Դիւղացիները խաչակնքում են երեսները... Բոլորը ծանօթ դէմքեր են և բոլորն էլ հանգուցեալը... Աշաւասիկ հօր խառահայեաց դէմքը, ահա մեծ եղբայրը ջերմեգանդ կերպով խաչակնքում է երեսը և հառաչում, կանգնած լինելով հօր կողքին: Ահա և ինքը, առոյգ, ուժեղ, լի անգիտակցական յոյսերով բախափ և կեանքի բերկրութիւնների վերաբերմամբ... Ուր է նա, այդ բախառաւորութիւնը... Ծերունու միաքը բորբոքվում է, որպէս մարտզ բոց, արձակելով մի պայծառ, արագինթաց շառաւեխոյ որ լուսաւորում է անցած գնացած կեանքի բոլոր անկիւնները... Ուժից վեր աշխատանք, վեշա, հոգսերը... Ո՞ւ ի է նա, այդ երջանկութիւնը... ծանր վիճակը կըպատէ երիտասարդ դէմքը կնծիոներով կըկուցնէ ուժեղ մէջքը, կըսովորեցնէ հառաչել, ինչպէս և մեծ եղբօրը...

Բայց ահա և ձախ կողմում, գեղջուկ կանանց մէջ, հեղութեամբ գլուխը խոնարհած, կանգնել է իւր «կողակիցը»: Լաւ, բարի կին էր. Աստուած հոգին լուսաւորէ: Եւ շատ տանջանք կրեց նա, սրտակիցս... Աշխատանքն ու պիտոյքը, և անխուսափելի կանոցի տանջանքը կըչորացնեն գեղեցիկ կնոջ. կըմարեն աչքերը և մշտական անմիտ երկիւղի արտայայտութիւնը՝ կեանքի անսպասելի հարուածների վերաբերմամբ, կըփոխի ջահիլի խրսխ գեղեցկութիւնը... Սյո, ուր է նորա երջանկութիւնը... Մի որդի մնաց, նոցա միակ յոյսն ու բերկրութիւնն, նորան էլ մարդկային անիբաւութիւնը յազթեց...

Բայց ահա և նա, հարուսաը, ծունը է զընում, աղօթելով որբերի արիւնախառն արցունքների համար. շուտաշուտ նա խաչակնքում է երեսը և չքում,

Ճակատը գետնին կպցնում... Եւ այրվում - խորովում է Միխէիչիչք սիրոը, իսկ սրբերի մաւթ գէմքերը գաժան կիրակով նայում են պատից մարդկային վշտին և մարդկային անիրաւութեան...

Սցդ բոլորը անցել է, այդ բոլորը այն աեղ է, չեռու... Իսկ այժմ նորա համար ողջ աշխարհը մի խաւար բարձրութիւն է, ուր մմութեան մէջ զժվժում է քամին, տատանելով զանգակի թոկիրը... «Աստուած ձեզ դատէ, Աստուած դատէ»—շշնջում է ծերունին և կախում է ալէզարդ զլուխը և արաւասուքը հանգարա կերպով թափվում է ծերունու զառամեալ այտերի վերայ. . .

—Միխէիչ, այ Միխէիչ: Ի՞նչ է, չլինի թէ քնել հս,—կանչում են ցածից:

—Հը, —ձայն առւեց ծերունին և շուտով ոսպի կանգնեց: —Տէր Աստուած: Միթէ իրօք ես քնել իմ: Դեռ այսպիսի խայտառակչութիւն չէր եղել...

Եւ Միխէիչը շատպով, ընտելացած ձեռքով բռնում է թոկիրը: Նեկքեռում, ինչպէս մըջնաբունի մէջ, զժվժում է գեղջուկ ամբոխը: Խաչվառները ծածանվում են օդի մէջ և փայլում է ոսկէ զիազակը... Ահա թափոր են անում եկեղեցու չորս կողմում և Միխէիչի տկանջին հասնում է բերկրալից ձայն.

—«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եւ այդ ձայնը ալեքի պէս գնում է զալիս ծերունու պրառում... Եւ Միխէիչին թվում է, թէ մոմերը աւելի պայծառ վառուեցան մմութեան մէջ, և աւելի ուժեղ կերպով տատանուեց ամբոխը, և խաչվառները ծածանուեցան, և նոր արթնացած քամին բռնեց ձայների ալեքը և լսյն հարուածներով վեր բարձրացրից միախառնելով բարձր, հանդիսաւոր զանգահարութեան հետ...

Մերունի Միլեկիչը երբէք զեռ այսպէս չէր զանգահարել:

Կարծես, թէ նորա լցուած պառաւ սիրաը մեռած պղինձ դարձաւ. և ձայները իբրու երգում էին և գողդողում, ծիծագում էին և լալիս և, սքանչելի կարգով հիւսուելով, վեր էին սլանում գէպի աստեղազարդ երկնաքը: Եւ սասազերը աւելի վառ էին փայլում, վառվառմ իսկ ձայները գողում էին և թափվում և վերտան գետին էին ընկնում սիրոյ փազաքշանքով...

Մեծ բասը բարձր կերպով գոչում էր և արձակում հզօր և ուժեղ եղանակներ, որ խլացնում էին երկիրն ու երկինքը. «Քրիստոս յարեաւ»:

Եւ երկու տէնօր, թարթափուելով՝ հերթով միմեանց հեաւեռղ երկաթէ սրտի հարուածներից, ձայնակցում էին նորան զիլ և ուրախ կերպով. «Քրիստոս յարեաւ»:

Իսկ երկու առենափոքր զիսկանաները՝ կարծես թէ շտագելով, որպէս զի յետ չմնան, հիւսվում էին մեծերի հետ և բերկութեամբ, որպէս փոքր երեխայ, երգում էին, աշխատելով միմեանցից անցնել. «Քրիստոս յարեաւ»:

Եւ կարծես, թէ հին զանգակատունը գողում էր և տատանվում, և ժամկոչի երեսին զարնուող քամին թափ է տալիս հզօր թեւերը և կրկնում. «Քրիստոս յարեաւ»:

Եւ ծեր սիրաը մոռացաւ հոգսերով և վերաւորանքներով լի նախկին կեանքը... Մոռացաւ ծեր ժամկոչը, որ իւր կեանքը ամփոփուած է զժնեայ և նեղլիկ բարձրութեան մէջ, որ նա աշխարհումն այժմ մենակ է, ինչպէս մի կոճղ, որին ջարգել, կոտրել է կատաղի մրբիկը... Նա լսում է այն երգեցիկ և լալիան ձայները, որ սաւառնում են գէպի լեռնային երկինքը և

ցած իջնում աղքատ երկրի վերայ, և թւում է նորան, թէ շրջապատռւած է որդիկերանցով և թուներով, թէ այս նոցա բերկրալից ձայներն են, թէ մ.ծերի և թէ փոքրների ձայները, միախառնվում են և բաղդ ու բերկրութիւն են երգում, որ նա իւր կեանքում չէ աեսել... Եւ ծեր ժամկոչը քաշում է թոկերը, և արտասուրը թափվում է նորա երեսից, և սիրալ սասարիկ կերպով բարախում է բաղդի մտապատրանքից...

Իսկ ներքեում մարդիկ լսում էին և ասում մի-
մեանց, թէ երբէք ծեր Միխեիչը այդպէս հրաշալի կեր-
պով չէ զանգահարել...

Բայց յանկարծ մեծ զանդը անհաւասարի կերպով
գլորաց և լսեց... Երկրորդական ձայները շփոթուած
կերպով հնչեցին կիսատ զայլայլիկներ և նոյնպէս կարեցին
նորան, կարծես, թէ ականջ գներով ախրազին հնչող
բարձր նօտին, որ գողզողում է և թափվում, և լալիս,
կամաց-կամաց հանդարառելով օդում... Ծեր ժամկոչը
ուժասպառ ընկաւ աթոռի վերայ, և վերջին երկու ար-
ցունը հանդարարէն ցած են իջնում թօշնած այ-
տերից... .

ԷՇ, վոխարինող մարդ ուղարկեցէք: Ծեր ժամկոչը
իւր գերը կատարեց...



ԹԻՓՈՐ ԱԿԱԴ. ԱԿՐԵՍԹ. ԵՐԵԿԱՅԵԱՆ.

Ի ծունք, ի ծունք խոնարհեցէք, պետք, մեծատոնք և տրնանկը,
Երկինք գուարմունք ահա կրկնեն՝ օրմնութեանց սուրբ արծագանգ.
Ահա պայծառ և լուսափալ՝ Քրիստոս փառաց Թագաւոր,
Անուամբ Տեառն, օրհնեալ եկեալ ի հաշ զոհուիլ կամաւոր:

Ի հրապարակ մեծ քաղաքին՝ խոնի ամրոխն երկիրդած,
Ահա թափորն յառաջ խաղալ՝ երգօք մանկանց և դպրաց,
Արեգն, իբրև ակն Աստուծոյ, ցոլանայ բիւր ձածանչներ,
Փառօք պսակէ մարդկանց Փրկչին, խոցեալ ձակատն լուսահեր:
Ինչոց բուրումն անուշահու՝ հառաջանաց և զեֆիւր,
Յօդս ամրանան ժողովրդից, ի ծունք իշեալ բիւրուց բիւրը:

Եւ ալեոր քահանայից սրբապաշտօն լուռ խմբեակ՝
Առաջնորդէ առ մեզ Քրիստոս, խաղաղութեան զՍուրհանդակ.
Բոլորերեանք լուրջ են, խոնարհ, և գունատեալ դէմքներնին
Ալեաց նման սպիտակած են, խորհրդաւոր՝ դալկագին:

Գետինն իբրև կապերտ ձածկեն տերեք զափնոյն, մրտենեաց՝
Փշրանք պսակաց յաղմականին ի պատերազմ մարդատեաց.
Եւ զորս առած այժմ առամուր Աստուծորդին գայ ի մեզ,
Բերել զօրէնս խաղաղութեան, մահուամբ՝ մահուն կոխել դէզ:

Մասնատուպին մէջ ոսկէզանգ, նշխարք մարմնոյն կենսաշադ
Վերամբարձիկ ահա բերէ, Քահանայն լուռ և զանդադ,
Եւ ջահակիրք մունջ անբարրառ շրջապատեն դողալով
Ամպհովանին ականակուռ, ոսկէծածան ի հոլով,
Ընդ որում չուէ վերացգողն երկնից Աստուծ մարդացեալ,
Անուամբ Տեառն օրհնեալ եկեալ, ի Գողգոթա խաչ ելեալ:

Նման խաչակիր Սիմեօնի, սուրբ նշխարօք վերամբարձ,
Դողան շրմունք Քահանային, ջերմ աղօմքով սիրաբարձ:

ի ծննդը, ի ծննդը — հնչեն գանգիւն, ձայնք զանգակաց օղահերձ, —
Բարձէք, իշխանք, զղունըս ձեր, արքայն փառաց զայ մեզ մերձ:
Ուրախացիր, ով ժողովուրդ, ծայնէ, գոչէ ովսաննա...
Սիրոյ, զթոյ, խաղաղութեան Աստուած-մարդն է ահա սա,
Որ ի սէր բնդ, արինազանդ, սուրբ տաճարիդ զայ փեսալ.
Ցնծա, ով ժարդ, մի վհատիր, սիրէ նորան և յուան:

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆՑ

1888. 27 Ապրիլ.
ՄՈՍԿՈՒԱ.



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԵՒ

ՀԵՏԵԻ ԱՆՔՆԵՐԸ.

«Զի Թէպէտ և նմք ածու փոքր, և
թուով լոյժ ընդ փոքրու սահմանեալ,
և զօրումեամբ տկար և ընդ այլով
լորով անգամ նուածեալ թագաւորու-
թեամբ, սական բազում գործք արու-
թեան գտանին գործեալ և 'ի մերում
աշխարհիս, և արժանի գրոց լիշա-
տակի...»:

ԽՈՐԵՆԱՅԻ, ԳԼՈՒԽ Գ.

I.

ՄԵՐ մեծանուն քերթողահօր այս երկոռողի մէջ յիշած
արիութեան գործերից մէկը, գուցէ, ամենակարևորը, համարվում
է մեր պատմութեան մէջ Վարդանանց պատերազմը, որի սուրբ
յիշատակը մինչև ցայսօր գեռ կատարում է հայոց եկեղեցին,
Այս պատերազմը, բայց նորանից, որ գլխաւոր հերոսի—Վարդանի
անունով կոչվում է «Վարդանանց», կոչվում է այլ ևս «Սուրբ»,
«Կրօնական», «Հաւատքի» պատերազմ, որովհետեւ նորա մէջ
գործով գլխաւոր ներկայացուցիչները՝ Ասովմեանք, Ղեղանդեանք
և Վարդանանք իրենց սուրբ արիւնը թակեցին, նահատակուե-
ցան իրենց լըս հաւատքը պաշտպանելու համար մոգական—
զրադաշտական խաւար գենի դէմ: Հայաստանեայց եկեղեցին, իր-
ըւ ներկայացուցիչ, իրու իւր մէջ ամփոփող հայի դաւանութեան

Հիմունքը, եկեղեցական տօն հաստատելով՝ այդ պատերազմին և դորա մեջ ընկած վկաներին սրբերի շալքը դասելով՝ երախտահատոյց է եղել իւր նահատակ որդիներին և սրբագործել է այդպիսով մեղ համար այդ պատերազմը. Ընդարձակ մոքով առնելով՝ կրօնական կարելի է անուանել հայերի օտարների դէմ մղած պատերազմներից մեծամասնութիւնը, նամանաւանդ հայերի օտարների իշխանութեան ներքոյ եղած ժամանակների պատերազմները. իսկ անձուկ մոքով—պէտք է և ընդունուած է իսկ կրօնական կոչել միայն Վարդանանց պատերազմը. Սակայն Վարդանանց պատերազմը իւր բոլոր սկզբնապատճառներով և հետևանքներով այնպէս կարձառօս չէ, ինչպէս մինչև ցայսօր սովորութիւն է եղել գրել և պատմել մեր մէջ. նա չէ սահմանափակվում միայն այն փաստերի, իրողութիւնների և անցքերի պատմութիւնով, որոնց վերայ մինչև ցայսօր կենտրոնացրել են իրենց ուշադրութիւնը մեր պատմաբանները. նա, ընդհակառակն, շատ ընդարձակ է և կազմուած է երեք շրջաններից, որոնցից գլխաւորը համարվում է բուն Վարդանանց պատերազմը, որ կազմում է մի տեսակ այդ ընդարձակ կրօնական պատերազմի կենտրոնը. իսկ մնացած երկու շրջաններից առաջինը—Զիրաւի պատերազմը, կազմում է նորա նախերգանքը կամ յառաջարանը. երկրորդը—Վահանանց պատերազմը—նորա վերջարանը. Մի զարմանալի երկոյթ. ոչ մի իրողութիւն, ոչ մի գէսք մեր փառաւոր անցեալից, ոչ մի էջ մեր երկար գարերի պատմութիւնից այնքան չէ գրաւել հայի ուշադրութիւնը, այնքան չէ ազգել նորա սրտի վերայ, որքան Վարդանանց ժամանակամիջոցի հանգամանքները. Այդ երեսոյթի պատճառը պէտք է որոնել նորա ժողովովականութեան, նորա, այսպէս ասած, ընդհանրութեան մէջ. Եւ իրաւի, ոչ մի քաղաքական հանգամանքում, ոչ մի արիւնաշեղ պատերազմում հայ ժողովուրդը այնպիսի մեծ մասնակցութիւն չէ ունեցել ինչպէս այդ պատերազմում. Կռուել են նախարարութիւնները, կռուել է իւր զօրքով թագաւորը, կռուել է, վերջապէս, և ժողովոդի մի մասն, բայց որ բոլոր երկրի ժողովուրդը ոսքի կանգնի, աղնուական դասակարգի հետ ձեռք ձեռքի տուած ընթանայ, կրօնական և քաղաքական զօրութիւնները միանան ընդհանուր ոյժերով մի և նոյն նպատակի համար աշխատեն—այսպիսի միակ օրինակ ներկայացնում է մեղ մեր պատմութիւնը միայն Վարդանանց պատերազմը. Ահա. ինչու, համար հետաքրքրական, վերին

աստիճանի կարեւոր և ուշադրութեան արժանի է իմանալու նորա խսկական պատճառները և նորան հայոց ազգի համար յառաջ եկած գլխաւոր հետևանքները, որոնց վերայ մինչեւ ցայսօր դեռ արժանի ուշադրութիւն դարձրած չէ մեր պատմաբանների կողմից, ուստի և այդ պատճառներն ու հետևանքները մինչեւ ցայսօր դեռ մեր պատմութեան մէջ լաւ ուսումնասիրուած և որոշուած չեն:

II.

Հայոց պատմութեան այդ նշանաւոր պատերազմի բուն պատճառները ճշտիւ գտնելու և պարզպանելու համար բաւական չէ միայն դպին իսկ պատերազմի կամ դորա մօտակայ ժամանակամիջոցի պատմութեան մանրամասն ուսումնասիրութիւնը, այլ պէտք է այդ ժամանակից շատ առաջ դառնալ և որոնել նոյսա հայոց պատմութեան հին, մինչեւ անդամ ցՔրիստոսեան շրջաններում, հայաստանի գէպի դրացի երկիրները ՚ի հնուց ունեցած յարաբերութեան և նոյն իսկ Արշակունեաց հարստութեան, սկզբնաւորութեան և նորա բռնած քաղաքականութեան մէջ:

Հայաստանը, ինչպէս յայտնի է, հենց իւր քաղաքական գոյութեան սկզբնաւորութիւնից, թէ իւր աշխարհագրական դրբութեան և թէ իւր երկրի մակերեւոյթի կազմութեան շնորհիւ չկարողացաւ մի անկախ, հզօր տէրութիւն կազմել և ապրեց, համարեա՛, միշտ կախումն ունենալով դրացի հզօր երկրներից, Առաջին ժամանակներում իշխնեցին հայաստանի վերայ իրենց նախագահութեան պատուավ Ասորեստանցիք, յետոյ Բարելացիք և, վերջապէս, Մարաստանցիք, որոնցից Ասիայի նախագահութեան պատուի հետ միասին ժառանգեցին հայաստանի գլխաւորութեան իրաւունքը պարսիկները, Պարսից թագաւորութիւնը Կիւրոսից դրուած հաստատ հիմունքի վերայ, ինչպէս յայտնի է, քանի գնաց, յառաջադեց և նորա արժանաւոր ժառանգ Դարեհ Վը նասպի ժամանակ կազմեց մի այնպիսի հզօր և ընդարձակ տէրութիւն, որ բռնեց, համարեա՛, բոլոր Ասիան, և արդէն չբաւականանալով իւր նախագահութեան պատուավ, ուղղակի հնագանդեցից և հարկատու արեց իրեն Ասիայի երկրորդական տէրութիւնները, Այդ պարսից ընդհանուր աշխարհականութեան ժամանակամիջոցում հայաստանը, իրու դրացի երկիր, յայտնի բան է,

Հպէտք է կարողանար պաշտպանել իւր անկախ գրութիւնը և, յառաջ, քան թէ ուրիշ երկրորդական տէրութիւններ մինչեւ անգամ՝ պէտք է փորձէր իւր վերայ պարսից աշխարհակալութեան ոյժը, հպատակ և հարկատու լինելով նոցաւ Եւ միացաւ Հայաստանը Պարսկաստանի հետ և կազմեց նորա անբաժան մասերից մէկը, և այդ գրութեան մէջ շարունակեց ապրել երկար տարիներ—մինչեւ Աղէքսանդր Մակեդոնացու արշաւանքը, երբ բոլոր Ասիայի հետ և Հայաստանը ընկաւ յայների իշխանութեան ներքոյ: Ճիշտ է, Հայաստանը, միանալով Պարսկաստանի հետ, պահեց իւր ներքին անկախութեան հետ և իւր սեփական թագաւորներին հայկաղեան հարստութիւնից, որոնք հզօր Տիգրանի և նորա որդի Վահագնի մահից յետոյ շարունակեցին թագաւորել Հայոց հպատակ գահի վերայ որդէ ցրդի միմեանց յաջորդելով մինչեւ վերջը, և դորանով զանազանուեց ուրիշ հպատակ երկը ներից, բայց և այնպէս նա համարուեց պարսից թագաւորութեան մի մասն, կազմելով նորա 21 սատրապութիւններից մէկը և իւրագանչիւր տարի հատուցանելով 30 հազար նժայգ-երիվար և 400 քանքար հարկ: Պարսիկները երկար տարիների ընթացքում տիրելով Հայաստանին, օգտուելով նորա թէ բարոյական և թէ նիւթական զօրութիւնից, նորա թագաւորներին իրենց սատրապ համարելով և այդպէս իսկ անուանելով նոցաւ, սովորեցան իրենցը համարել նորան, և ընտելացնելով իրենց հայերին, սերտ կապերով կապեցին նոցաւ իրենց հետ, Հայաստանը պարսից տէրութեան անբաժան մասերից մէկը համարուելու և հայերի պարսից հետ այդպէս ընտելացնելու և սերտ կապերով կապուելու գործողութիւնը առաւել որոշ կերպով կըպարզուի, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ հայերը թէ՛ արեան և թէ լեզուի ազգակցութեամբ, իրրեւ Հնդիկ-Իրանի ժողովուրդ, շատ մօտ էին պարսիկներին: Այս բոլորի վերայ պէտք է աւելացնել և այն, որ հայերը, ապրելով պարսից մօտ, սահմանակից երկրում, մշտական յարաբերութեան մէջ գտնուելով նոցաւ հետ և ենթարկուելով նոցաւ ազգեցութեան, իբրև իշխող ժողովուրդ, շատ նմանում էին պարսից իրենց սովորութիւններով, կեանքի տարագով և, նամանաւանդ, կրօնական ծէսերով և համոզմոնքով: Այս այսպէս լինելով, պէտք է կարծել, որ Հայաստանին շատ գժուար կըլինէր վերջոյ ի վերջոյ պահպանել իւր ներքին անկախութիւնը և հայերին իրենց ազգային առանձնայատկութիւնները, և առաջ,

թէ յետոյ կըմիանար, կըձուլուէր Պարսկաստանի և պարսից հետ, կըանուելով հզօրից և բաղմութիւնից, եթէ միայն երկար շարունակուէր երկրի այսպիսի գրութիւնը և չխանգարուէր պարսից ահագին տէրութիւնը Աղեքամնդր Մակեդոնացու հզօր բաղկից, Մակեդոնացու, որ, նուածելով Սսիան, կաղմեց մի ընդարձակ յունական մակեդոնական տէրութիւն, որի մէջ մտաւ Պասկաստանի հետ և Հայաստանի:

Սակայն պարսիկները, կորցնելով իրենց քաղաքական անկախութիւնը և հպատակելով Մակեդոնացու իշխանութեան, երբէք չկորցրին իրենց յոյսը, նորից յարմար հանգամանքներում վերականգնելու իրենց նախկին գրութիւնը, երբէք չմոռացան պին իշխանութեան մասին, որ նոքա երբեմն ունեին Սսիայի ուրիշ երկրների վերայ և, նամանաւանդ, Հայաստանի վերայ, որ թէ իւր աշխարհական զիրքով և թէ ժողովրդի ազգակցութեամբ, ինչպէս մի փոքր առաջ ևս նկատեցինք, ամենամօտն էր Պարսկաստանին: Այդ ապագայ վերականգնման յոյսը, այդ անցեալ իշխանութեան օտարների վերայ փառաւոր և քաղցր յիշատակը, պարսիկները չկորցրին և պին ժամանակ, երբ Մակեդոնացու իշխանութիւնը տեղի տուեց Պարթևների աշխարհակալութեան և Սսիայում՝ թագաւորեց Արշակունեաց հարստութիւնը: Պարսիկները Արշակունի թագաւորների իշխանութեան ներքոյ չկորցրին իրենց ազգայնութիւնը, չենթարկուեցան Պարթևների ազգեցութեան, այլ ընդհակառակն, ամուր պահեցին իրենց ազգային աւանդութիւնները, լեզուն և կրօնը, միով բանիւ, այն բոլոր առանձնայատկութիւնները, որոնք զանազանում են մէկ ազգութիւն միւսից: Եւ այս բոլորը նոքա անխախտ պահեցին իրենց անիոնց մոգական հոգեորականների շնորհիւ, որոնք, տեսնելով պարսից իշխանութիւնը խանգարուած, նոցա ազգայնութիւնը վասնդի մէջ օտար աշխարհականների երեսից, իրենց իշխանութիւնը, փառքը ևս, որ հիմնուած էր պարսից ազգի անկախ իշխանութեան վերայ, ընկած և օտնակոխ եղած, չէին դադարում քարոզելու, ուսուցանելու ժողովուրդը, յիշեցնելու նորա անցեալ փառքը, ներկայ աշխարհականների տուած նեղութիւնները, չէին դադարում ներշնչելու ժողովրդի մէջ զրադաշտական կրօնքի պատուէրները, միշտ և հանապազ վառ պահելով նոցա մէջ սէր գէպի իրենց ազգայնութիւնը, և հրաւիրելով նոցա յարմար հանգամանքներում զէնք վեր առնել:

նեղիների դէմ և վերականգնել իրենց նախկին իշխանութիւնը։ Աչա այսպիսի հանգամանքներում պարսիկների առաջ պարզ կերպով հենց սկզբից գծվում է երկու ձանապարհ, կամ, լաւ է ասել, երկու խնդիր, որոնցից մէկը յարևար կը լինի կոչել քաղաքական անկախ իշխանութիւն ձեռք բերելու խնդիրը կամ ներքին Արշակունեաց խնդիր, իսկ միւսը—արտօպքին Արշակունեաց խնդիր, որ, առաջնի հետեանք լինելով, սերտ կապերով կապուած էր նորա հետ։ Այս երկու խնդիրները աչքի առաջ ունենալով, այս երկու ձանապարհով յառաջ գնալով պարսիկները մտածում էին հեշտ հասնել իրենց նպաստակին։ Եւ նորա չեն սիսալվում իրենց հաշիւներում։ Ինքը Արշակունեաց հարստութիւնը ևս, կարծես, նպաստում է պարսիկներին իրենց այդ նպատակներին աջողութեամբ հասնելու։ Արշակունիները, ունենալով այնքան ոյժ և զօրութիւն, որ կարողացան կործանել Մակեդոնացու աշակին տէրութիւնը և կազմել մեծ Պարթեաց թագաւորութիւնը, ունենալով այնքան արտօպքին քաղաքական ընդունակութիւն, որ կարողացան երկար տարիների ընթացքում մաքառել Հռովմանցւոց հզօր իշխանութեան դէմ և Ասիայի բազդը երկար ժամանակ իրենց ձեռքում՝ պահել, չունեին, ընդհակառակն, ներքին կառավարչական ընդունակութիւն, որ, ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր թագաւորական հարստութեան ամենազլաւոր արժանաւորութիւններից մէկն է համարվում։ Իրեւ ապացոյ Արշակունեաց հարստութեան արտօպքին քաղաքական ընդունակութեան, կարելի է համարել այն վերին աստիճանի խոչեմ վարմանըքը, այն իմաստուն քաղաքականութիւնը, որ բռնեց Արշակ Մեծը, Արշակունեաց հարստութեան հիմնադիրը հպատակ երկների վերաբերութեամբ, որին և հետեեցին յետագայ բոլոր Արշակունիները։ Պատմութիւնից յայտնի է, որ Արշակ Մեծը, տիրելով Ասիայի մեծամասնութեան, ինքը այդ բոլոր աշակին տարածութեան վերայ չթագաւորեց, այլ կազմեց զանազան առանձին-առանձին թագաւորութիւններ և իշխանութիւններ իւր հովանաւորութեան ներքոյ, որոնց վերայ թագաւորեցրեց Արշակունի ցեղից թագաւորներ և իշխաններ, մտածելով որ Արշակունեաց ցեղի այդ թագաւորները և իշխանները, իշխելով միմեանցից օտար լեզուով, կրօնով, սովորութիւններով ազգերի վերայ, իրենց ազգակցութեան և արևնակցութեան շորհիւ երբէք չեն խղել միմեանցից իրենց ազգակցութեան կապերը, և ընկած

ամեղը միշտ բոլորը միասին կը միանան ընդհանուր թշնամու դէմ; որ և փայլուն կերպով արդարացաւ ապագայում:

Սրշակունեաց հարստութեան հովանաւորութեան տակ կաղմուած Սրշակունի ցեղից թագաւորներով և իշխաններով թագաւորութիւններից և իշխանութիւններից նշանաւոր եղան, բայցի Պարսկաստանից և Պարթևաստանից, որոնց վերայ թագաւորեց ինքը Սրշակ Մեծը և նորա սերունդը, հայաստանը, որի վերայ թագաւորեց Մեծի եղբայր Վաղարշակը և նորա սերունդը, և համարուեցաւ իւր նշանակութեամբ երկրորդը Պարսկաստանից և Պարթևաստանից յետոյ, Քուշանքը, Սկիւթական իշխանութիւնները և այն: Հակառակ Սրշակունեաց հարստութեան այդ արտաքին փայլուն ընդունակութեան, ինչպէս վերն ասացինք, երևան է գալիս նոցատղիտութիւնը և անսահման անընդունակութիւնը ներքին կառավարչական գործերում, որին պարզ ապացոյց կարող է լինել պարսից նախագահ Սրշակունիների բռնած ներքին քաղաքականութիւնը և կառավարչական եղանակը պարսից և Պարթևաստանի վերաբերութեամբ, որ ինչպէս յայտնի է, շատ տիուր հետեանք ունեցաւ ոչ միայն պարսից Սրշակունիների համար, այլ և բոլոր Սրշակունիների համար ընդհանրապէս: Սրշակ Մեծի յաջորդները, թագաւորելով Պարսկաստանի վերայ, Հասկացան իրերի իսկական գրութիւնը, չճանաչեցին այն ժողովուրդը, որի վերայ կոչուած էին իշխելու, չճանօթացան նոյա լեզուին, սովորութիւններին, կրօնին, չաշխատեցին զանազան միջոցներով զրաւել իրենց կողմը պարսիկ ժողովրդի սէրը, նամանաւանդ, նոքա չկարողացան շահել պարսից աղնուականների սրտերը, որոնք մեծ յարդ և նշանակութիւն ունէին պարսից ժողովրդի մէջ: Սյս բոլորի փոխարէն նորա, ընդհակառակն, գործ էին գնում բռնակալական իշխանութիւն և կառավարում էին երկիրը ոյժի և զէնքի գորութեամբ: Նորա տանջում էին ժողովուրդը խիստ և մեծագումար Հարկապահանջութեամբ, արհամարհում էին նոցա սովորութիւնները, լեզուն, կրօնը, միով բանիւ այն բոլորը, ինչ որ թանգ է մի ժողովրդի համար: Նորա գորոջութեամբ էին վարվում պարսից նշանաւոր իշխանների հետ, նոցա չէին տալիս պաշտօններ տէրութեան մէջ: Նորա հալածում էին մոգերին, իրեւ հակառակ կրօնքի ներկայացուցիչների, և յաճախակի ոյժի զօրութեամբ մոցնում էին նոցա մէջ Պարթևաց աստուածապաշտութեան ծէսերը և սովորութիւնները: Աչա՛ այս և այսպիսի

վարմունքով Արշակունիաց հարստութիւնը, դրգելով իւր դեմ պարսից ժողովրդի բոլոր դասակարգերի ատելութիւնը, ինքն է իւր ձեռքով նախապատրաստում իւր կորուստը Պարսկաստանում, որից օգուտ քաղելով պարսիկները, սկսում են մեծ եռանդով պատրաստուել և յարմար բոպէ են որոնում միայն ապստամբելու և ձգելու իրենց վերայից Պարմեւ աշխարհակալների անարդ լուծը:

III.

Քրիստոսի 226 թուականին պարսիկները, արգէն իրենց բոլորին պատրաստուած զգալով և յարմար բոպէ ևս համարելով իրենց համար այն հանգամանքը, որ Պարսկաստանի վերայ սկսում է թագաւորել Արշակունի անարժան և թուլամիրթ Արտաւան թագաւորը ապստամբում են Արտաշիր Ստահրացի, պարսիկ իշխանի առաջնորդութեամբ և, ջարդելով Պարմեւաց զօլքը և իրեն Սրտաւանին ևս սպանելով, վերականգնում են, երկար տարիների գերութիւնից յետոյ, Պարսկաստանի անկախութիւնը, որի վերայ թագաւորում է Արտաշիր Ստահրացին, հիմնագիր լինելով պարսից մի նոր հարստութեան, որ Արտաշը մեծ հզր Սասանի անունով կոչվում է Սասանեան հարստութիւն, Պարսիկները այդ իրենց յաջող ապստամբութեամբ վերջնականապէս լուծում են իրենց առաջ հէնց սկզբից դրած երկու գլխաւոր իննդիներից մէկը, պարսից անկախութեան կամ ինչպէս մէնք վերը կոչեցինք, ներքին Արշակունեաց ինդիրը, բայց գեռ անլուծ է մնում արտաքին Արշակունեաց կոչուած պարսից համար վերին աստիճանի կարեւոր ինդիրը, որի յաջող լուծուելուց կախումն ոնէր պարսից նորահասառատ տէրութեան ամրութիւնը և յաղթանակը: Ճիշդ է, պարսիկները, կործանելով Արշակունեաց հարստութիւնը, մեծ հարուած են տալիս ընդհանրապէս բոլոր Արշակունեաց հարստութեան, բայց դորանով նորա թշնամանում են ուրիշ երկիրներում թագաւորող և իշխող Արշակունի հարստութիւններին, որոնց ներկայացուցիչները, գեռ բաւականին հզօր լինելով Ասիայում, շուտով չէին մոռանալու իրենց ազգականների իշխանութեան կորուստը Պարսկաստանում, մշտական պատերազմի վտանգի մէջ պահելով Սասանեան հարստութիւնը: Այդ պատերազմի վտանգը, այդ ուրիշ Արշակունիների թշնամա-

կան յարաբերութիւնը իրենց շատ երկար սպասել չեն տալիս և արծարածվում են հէնց իսկոյն Արտաւանի մահից յետոյ, երբ հայոց Մեծն Խոսրով (213—216) Արշակունին, որ այդ ժամանակ բոլոր Արշակունիների մէջ ամենազօրէղն էր, ուրիշ Արշակունիների հետ միասին և Արտաւանի մահից անմիջապէս յետոյ, մտնում է Պարսկաստան, աւեր և սարսափի է տարածում ամենայն տեղ և, շատ պատերազմներում յաղթելով Արտաշին, հրաւիրում է Պարթևաց գլխաւոր իշխաններին գալ, ժողովել և իւր օգնականութեամբ վերականգնել Արշակունեաց ընկած հարստութիւնը Պարսկաստանում, Եւ եթէ Արշակունիները այդ անգամ չեն համեռում իրենց նպատակին, դորանով Պարսկաստանը պարտական է միայն Պարսկաստանի Պարթևաց գլխաւոր իշխանների անհամաձայնութեան, որով խանգարվում է Արշակունիների միութիւնը, և Արտաշրի խորամանկ քաղաքականութեան, որով նա, նոյն իսկ Պարթևների ձեռքով սպանելով հայոց Խոսրով մեծին, Արշակունեաց այդ ժամանակուայ գլխաւոր ներկայացուցին, ապահովեցնում է Պարսկաստանի անկախութիւնը և Սասաննեանների տատանող իշխանութիւնը. Աչա այդ մշտական վտանգից աղասուելու համար, պարսիկները, Արշակունեաց ներքին ինդիրը լուծելուց անմիջապէս յետոյ, ձեռնարկում են լուծելու և երկրորդը, արտաքին Արշակունեաց ինդիրը, որից, բացի նորանից, որ, ինչպէս վերն ասացինք, կախումն ունէր Պարսից տէրութեան հաստատութիւնը, այլ և նորա նշանակութիւնը, Ասիայի ուրիշ տէրութիւնների մէջ ընդհանրապէս:

Սկսվում է մի երկար ու ձեր արինաշեղ պատերազմ Սասաննեանների և Արշակունիների մէջ, որ շարունակվում է մինչեւ Արշակունեաց հարստութիւնների ընկնելը և կորցնելը իրենց նշանակութիւնը. Այդ երկար պատերազմը մղվում է գլխաւորապէս Սասաննեանների և հայոց Արշակունիների մէջ, որովհետեւ, ինչպէս արդէն նկատեցինք, Պարսկաստանի Արշակունիների կործանուելուց յետոյ, ամենահզօր, ուրեմն և գլխաւոր ներկայացուցիչ Արշակունեաց հարստութիւնների, մտնում էին հայոց Արշակունիները, որոնց չորս չորս կողմը համախմբվում էին միւս երկրորդական և երրորդական Արշակունի հարստութիւնները՝ Քուշանայ, Շիւսիսպին, Կովկասեան լեռնորդինների կամ Սկիւթացւոց Արշակունիները, Պատերազմի այդքան երկարելու և արինաշեղ լինելու պատճառը ոչ թէ հայոց գլխաւոր Արշակունիների զօրութիւնն

էր, նամանաւանդ որ թագաւորական իշխանութիւնը հայաստանում երբէք հաստատ հիմք չէ բռնել և նոյն իսկ Սրբակունիները մի առանձին համականք չէին վայելում բռն ժողովրդի կողմից, այլ զանազան կողմնակի հանգամանկներ, որոնք նպաստում էին Սրբակունեաց և որոնք առաջ էին եկել հայաստանում այն երկար ժամանակամիջոցում, երբ Պարսկաստանը գեռ գտնվում էր Պարթևների իշխանութեան ներքոյ: Հայ ժողովուրդը այդ ժամանակամիջոցում շատ փոխուած էր, նա այլ ևս տուաջուայ իւր սովորութիւններով կեանքի տարազով ու կրօնական համոզմոնքով պարսից բոլորովին մօտ և նման ժողովուրդ չէր:

Աղեքսանդր Մակեդոնացու 180 տարուայ (330—150 Ք. առաջ) իշխանութիւնը և Սրբակունեաց յունասէր հարստութեան 376 տարուայ (150 Ք. առաջ—226 Ք. յետոյ) կառավարութիւնը բոլորովին առանց հետեւանքի չէին անցել հայաստանի համար. նոքա, մոցնելով հայոց մէջ Յունաց սովորութիւնները, լեզուի ուսումնասիրութիւնը, բաւականին հեռացրել էին հայերին պարսիկներից և մօնեցրել էին նոցա յոյներին: Բայց ամենամեծ փոփոխութիւնը հայ ժողովրդի մէջ առաջ էր եկել հեթանոսական կրօնքի փոփոխմամբ և քրիստոնէական լոյս հաւատքի ընդունելութեամբ, որի սկիզբն գրուած լինելով Ս. Թագէսու (33—48) և Բարթողիմէոս (49) առաքեալների քարոզութեամբ Արքագարի ժամանակ (3—34), վերջացել էր նոյն իսկ Սասանեան հարստութեան երկրորդ թագաւորի ժամանակ, հայոց Տրդատ Սրբակունու, Խորով մէծի արժանաւոր ժառանգի օրերով (286—342), խոպառ հայերին կտրելով հեթանոս պարսիկներից և մօնեցնելով քրիստոնեայ յոյներին, որոնց ներկայացուցիչը այդ ժամանակ համարվում էր արեւելեան հոռվի կայսրը կամ ինչպէս ընդունած է կոչել Բիւզանդիոնի կայսրը: Մինչև անդամ կրօնքի այդ միութեան շնորհիւ կապուել էր հայոց Տրդատ թագաւորի և յունաց Կոստանդիանոս առաջին քրիստոնեայ կայսեր մէջ դաշնց թուղթը (319թ.), որի հիման վերայ նոքա, իբրև քրիստոնեայ թագաւորներ, պէտք է պաշտպանէին միմեանց հեթանոսներից: Աչա՛ այս և այսպիսի կողմնակի հանգամանկներն էին, որ ոյժ էին տալիս հայոց Սրբակունիներին, արգելք լինելով պարսից նպատակներին և գժուարացնելով, երկարացնելով պատերազմը:

IV.

Պարսիկները ձեռնարկելով արտաքին Արշակունեաց ինդիրը լուծելու գործին և գորա համար սկսելով պատերազմ՝ բոլոր Արշակունիների հետ, հետո առաջին անգամից պատահում են վերդիշեալ կողմնակի հանգամանքներին. նորա խազյն նկատում են այն փոփոխութիւնը, որ առաջ էր եկել հայ ժողովրդի մէջ. նորա տեսնում են, որ հայերը առաջուանոլ չեն, որ նորա շատ հեռացել են նոցանից և վերաբերում են գէպի նոցա վերին աստիճանի թշնամութեամբ և ատելութեամբ. միով բանիւ, նորա նկատում են այն խոր անդունդը, որ փորել էր նոցա և հայերի մէջ քրիստոնէական կրօնքը. Բայցի այս բոլորից, պարսիկների ու շագրութիւնը գրաւում է և մի ուրիշ հանգամանք. նորա պարզ կերպով տեսնում են, որ քրիստոնէութիւնը, մեծ անդունդ փորելով նոցա և հայերի մէջ և դորանով հայերին խպառ հեռացնելով պարսիկներից, մօտեցրել է նոցա և սերտ կապերով կապել է նոցա յոյների հետ, յոյների, որոնք աւելի շահաբետական և քաղաքագիտական նպատակներով, քանի թէ կրօնական միութեան պատճառով պաշտպանում էին հայոց Արշակունիներին, աշխատելով հայաստանը միշտ իրենց ձեռքի տակ պահել, օգտուելով նորա նիւթեական և բարոյական զօրութիւններից և գորանով միշտ վտանգի մէջ պահելով Պարսիկաստանը, Պարսիկները բոլորը տեսնում են, բայց արգէն ուշ և անկարելի էր մինչև անգամ՝ յետ կենալ ձեռնարկած գործից. Արշակունեաց խնդիրը նոցա համար կենսական էր, նորանից կախումն ունէր պարսիկների ապահովութեան, նոցա հզօրանալու և իրենց առաջին նաշանակութիւնը Ասիայում ձեռք բերելու գործը, նորանից կախումն ունէր և պարսիկների հայաստանին տիրելու և հայերին իրենց հետ ձուլելու գործը, որովհետեւ քանի որ Արշակունեաց խնդիրը մնար անլուծ, հայաստանը պէտք է պահպանէր իւր անկախութիւնը, մշտական խռովութեան ինձոր լինելով պարսիկների և յոյների մէջ. Պարսիկները, իրենց նպատակներին յաջողութեամբ հասնելու համար, պատերազմը գլխաւորապէս կենտրոնացնում են հայաստանում, իրեն ամենահզօր Արշակունիների երկրում, և աշխատում են նախ և առաջ հայ Արշակունիների զօրութիւնը խորտակել. Բայց որովհետեւ Արշակունիներին ոյժ և զօրութիւն տուողը բուն հայոց ժողովուրդն էր, որ, քրիստոնէա-

կան կրօնքի շնորհիւ խորշելով պարսիկներից, ամենայն ձեռքից եկած միջոցներով պաշտպանում էր Արշակունի թագաւորներին, իրեւ երկրի քաղաքական անկախութիւնը և քրիստոնէական լոյս կրօնքի աղատութիւնը պաշտպանողներին, և նեղն ընկած տեղը նոյն խէ քրիստոնէական կրօնքի շնորհիւ միշտ դիմում՝ էր յոյների օգնութեան, ուստի և պարսիկները իրենց գլխաւոր ոշադրութիւնը դարձնում են քրիստոնէական կրօնքի վերայ և աշխատում են ոչնչացնել նորան հայաստանից և զբարարական դեկն տարածել նորա տեղ ժողովովի մէջ, մասձելով այդպիսով զրկել հայոց Արշակունիներին նոցա գլխաւոր նեցուկից—ժողովովից և հեշտութեամբ յաղթել նոցա, կտրել, բաժանել հայերին յոյներից և հեշտութեամբ տիրել հայաստանին, հայերը ևս աշխատում են, ամենայն ձիգն թափելով ամենայն տեսակ միջոցներով, մինչև անգամ իրենց քաղաքական անկախութիւնը ևս զոհելով, պաշտպանել քրիստոնէական կրօնքը, որից և առաջ է գալիս Վարդանանց կրօնական պատերազմը, որ, ինչպէս զես առաջ յիշեցինք, տևում է երկար ժամանակ և բաժանվում է երեք գլխաւոր շրջանների, որոնց մէջ զիշաւոր մօմենտը համարվում է բան Վարդանանց պատերազմը, կամ, լաւ է ասել Աւարայրի Ճակատամարտը: Վարդանանց կրօնական պատերազմի միքանի շրջանների բաժանուիլը և նորա այգան երկարելը առաջ էր զալիս պարսից ձեռնարկած գործի բուն էութիւնից, որ, պարունակելով իւր մէջ շատ և շատ ժժուարութիւններ, չէր կարող մէկ անգամից վերջանալ, այլ կարող էր միայն լուծուել քայլ առ քայլ, եռանգուն, հեռատես և վերին աստիճանի խորամանկ քաղաքականութեամբ: Պարսից պէտք էր գերազանցել յաղթել յոյներին և ստիպել նոցա, որ նորա այնուհետեւ այլ ևս չմիջամտն պարսից և հայոց հաշիւների մէջ, նոցա պէտք էր խորտակել հայաստանի քաղաքական ոյժը—Արշակունիներին, որ նորա արգելք չլինէին պարսից իշխանութեան հայաստանի վերայ: Նոցա պէտք էր ընկճել Քուշանաց և Սկիւթացւոց Արշակունիներին, որ նորա օգնութեան ձեռք չմէկնէին հայոց Արշակունիներին, որով լուծուած կը լինէր Արշակունեաց արտաքին կարեոր ինդիրը և, որ զիշաւորն էր, նոցա պէտք էր ջնջել հայաստանից իրենց համար ատելի քրիստոնէութիւնը և վերականգնել հեթանոսութիւնը, որ կարողանային հայերին մօտեցնել իրենց, կտրելով նոցա յոյներից և ձուլելով նոցա իրենց հետ,

որով և կը վերջանար յունաց և պարսից մէջ յաճախակի կը բնուող պատերազմների պատճառներից մէկը. Եւ նոքա, չնայելով գործի այսքան գժուարութիւններին, ձեռնարկում են այդ շրս գործին ևս միանգամից, գործ զնելով, որտեղ զէնքի ոյժ էր հարկաւոր, զէնք, որտեղ խելքի և մտքի գործոններութեան, խելք և միտք և պարսից նուրբ քաղաքականութիւն. Նոքա մեծաւ մասսամբ աշխատում են գործ տեսնել խաբերպյութեամբ, կաշառներով. քսովթեամբ և այլ այսպիսի միջոցներով, նոյն իսկ հայերին իրենց ձեռքին զէնք շնինելով և նոցա ձեռքով իրենց նպատակները առաջ տանելով հայաստանում. Աչա այսպիսի միջոցներով պարսիկները շատ և շատ առաջ են գնում իրենց գործունելութեան մէջ. Նոքա կարծ ժամանակամիջոցում, կրօնական պատերազմի գեռ առաջին շրջանի առաջին կիսում այնքան աջողութ են, որ արդէն մօտ ապագայում պատկուած են տեսնում իրենց աշխատանքը:

Այդ այն ժամանակամիջոցումն էր, երբ Բիւղանդիսոնում թաղաւորում էր Վաղէս Արքունեան կայսրը, որ, թշնամնապով հայոց Արշակ (364—382) թագաւորի հետ, պատասխ էր առել Արշակի որդուն՝ Պապին և Ներսէս մեծ հայրապետին (364—384), որ գնացել էր Բիւղանդին անօրէն կայսեր մօտ, հաշտութեան միջնորդ լինելով կատալած կայսեր և անխօչեմ Արշակի մէջ, բռնել ու աքսորել էր. Պարսից երկրորդ Շապուհ թագաւորը ևս, օգտուելով այդ հանգամներից, բռնել էր Արշակին և փակել Պարսկաստանի Անյուշ բերդում, զրաւելով նոյն ժամանակ հայաստանը և Մեծրուժան Սրծրունի, Վահան Մամիկոնեանի և ուրիշ ուրացող նախարարների ձեռքով հայոց եկեղեցիները քանդելով, ատրուշաններ շինելով ուժով տարածելով ժողովրդի մէջ պարսից լեզուն ու սովորութիւնները և արգելելով հայերին յարաբերութիւն ունենալ յոյների հետ. Բայց պարսից այս անգամ և այսպէս շուտով վիճակուած չէր վերջացնելու այնքան գժուար գործը. Բիւղանդիսոնում շուտով մեռնում է Վաղէսը և նոքա տեղ թագաւորում է բարեպաշտ Թէոդոս կայսրը. Ներսէսը վերադառնում է աքսորանքից և, առնելով իւր հետ Պապին, յունաց օգնական զօրքով մանում է հայաստան. Պատահում է նշանաւոր Զերաւի պատերազմը (382), որ մի առ ժամանակ վերջ է գնում հայերի թշուառութեան, վերականգնելով Արշակունի հարստութիւնը և պարսից յոյները ի դե-

բե հանելով։ Սակայն պարսիկները չեն վշատում։ Նորա չեն ողում բաց թողնել ձեռքից այնքան դժու արութեամբ ձեռք բերած հետևանքը և շարունակում են դործել նոյն եռանդով և ուղղութեամբ, և արդէն կրօնական պատերազմի նոյն առաջին շրջանի առաջին կիսում գործը այն տեղին են հասցնում, որ, եթէ չեն կարողանում խսպան հեռացնել յցներին հայերից և բոլոր հայաստանը իրենց ձեռքը ձգել գոնէ, իրենց իշխանութեան տակն են ձգում հայաստանի մի մասն, հաշտութիւն կայացնելով յայների հետ և հայաստանը երկու մասի բաժանելով՝ արեւմուեան—յունական և արեւելեան—պարսկական (392—399): Ճիշտ է, հայոց Արշակունիները շուտով, այդ բաժանմունքից յետոյ, կարողանում են Խոսրով Գ-ի ձեռքով նորից միացնել հայաստանի երկու բաժանուած մասերը, բայց պարսկիները արդէն մեծ իշխանութիւն էին ձեռք բերել հայաստանում։ Նորա հայոց թագաւորներին մի տեսակ խաղալիկ էին շնորհ իրենց ձեռքում, այնպէս որ նորա իրենց խօսքով ձգում էին նոցա գահից, գահն էին բարձրացնում։ Նորա հայի տեղ պարսիկ թագաւոր էին նշանակում, հայոց սպարապետին և կաթուղիկոսին ինքեանք էին հաստատում և միջամտում էին հայոց թագաւորութեան, համարեա՛, ամենափոքր գործերի մէջ։ Եւ այս բոլորով պարսիկները այնպիսի մեծ հարուած էին տալիս Արշակունիներին, որ այնուհետեւ արդէն որոշուած կարելի էր համարել նոցա համար հայոց Արշակունեաց ինդիրը, ուրեմն և Արշակունեաց ինդիրը ընդհանրապէս, որովհետեւ Կոլգասեան կամ Ակիւթացւոց Արշակունիները արդէն կորցրել էին իրենց ոյժը և նշանակութիւնը այն ներքին պատերազմում, որ պատահէցաւ հայոց Արշակունիների և նոցա մէջ չորրորդ գարի կիսում, հայոց Խոսրով Բ-ի (343—352) և Կովկասեան Արշակունիների զինաւոր և հզօր Սանեսան թագաւորի մէջ։ իսկ Քուշանաց Արշակունիները, որոնք անդադար արշաւելով պարսից հիւսիս—արեւելեան սահմանների վերայ, դորանով մեծ օգնութիւն էին ցոյց տալիս հայերին, այդ ժամանակ նոյնպէս, սկսել էին թուլանալ և ընկած գրութեան մէջ էին։ Նորա շուտով համարեա՛, նոյն իսկ հայոց Արշակունիների հետ միասին չորրորդ գարի վերջերում և հինգերորդի սկիզբներում բոլորովին ընկնում են և կորցնում իրենց քաղաքական անկախութիւնը յաղթուելով և նուաճուելով Յեփթաններից կամ, ինչպէս ընդունուած է նոցա կոչել ընդհանուր պատմութեան մէջ, Սպիտակ հոններից,

Այժմ երբ Արշակունեաց ինդիրը արդէն յաջողութեամբ լուծուել էր պարսիկների համար, նոցա մնում էր միայն զերազանցել յոյներից և ստիպել նոցա յետ կենալ և ամենենին չխառնուել հայոց և պարսից հաշիների մէջ, ճանաչելով պարսից գերիշխանութիւնը Ասիայում, որպէս զի կարողանան առանց արգելքի տիրել քաղաքականապէս հայաստանին և, ոչնչացնելով նորա միջից քրիստոնէութիւնը և հեթանոսութիւնը վերականգնելով ձուլեն հայերին, սկզբնական ծրագրին համեմատ, իրենց հետ Սասանեան թագաւորները այդ գէպքրում ևս, ինչպէս և շատ ուրիշ այդ տեսակ գէպքրում, գործելով վերին աստիճանի եռանդով և աշարջութեամիք, շուտով կարողանում են հասնել իրենց նպատակին, որին աջողութեամբ հասնելու ոչ պակաս նպաստում են ինքեանք Բիւզանդիոնի կայսրները. Յունաստանը, Թէոդոս մեծ կայսեր մահից յետոյ, որ, մեկ անդամ ևս միացնելով նորա բաժան-բաժան մասերը, վերականգնել էր նորա գերիշխանութիւնը, նորա անարժան Արկադէոս և Ոնորիոս ժառանգների ժամանակ նորից մասերի է բաժանվում և ներքին անդադար խոռովութիւններից սակաւ առ սակաւ սկսում է թուլանալ և ընկնիլ, կորցնելով ոչ միայն իւր գերիշխանութիւնը, այլ և իւր արտաքին քաղաքական միապետութիւնը. Պարսիկները, որոնք Սասանեան հարստութեան սկզբնաւորութեան ժամանակներից անդադար պատերազմների մէջ էին գտնվում յօյների հետ, մրցելով գերիշխանութեան համար, այժմ տեսնելով նոցա լնկած զրութիւնը, շտապում են օգուտ քաղել յաջող հանգամանքներից. Նոքա մի քանի յաջող պատերազմներով ստիպում են յօյներին տեղի տալ և ճանաչել պարսից գերիշխանութիւնը, որով և իշխանութիւն են ձեռք բերում անարդելք և իրենց ցանկացածին պէս գործելու հայաստանում. Նոքա շտապում են վերջացնել շատ ժամանակներից ի վեր անունով միայն գոյութիւն ունեցող Արշակունիների իշխանութիւնը հայաստանից, գահավեժ անելով 428 թուականին Արտաշեր Գ., Արշակունի վերջին թագաւորին և Մարզպանական իշխանութիւն հաստատելով, և ձեռնարկում են քրիստոնէութիւնը հպյաստանից ջնջելով գործին, որով և վերջանում է կրօնական պատերազմի առաջին շրջանը—յառաջարանը և սկսվում է երկրորդը—բուն վարդանանց պատերազմը:

Սակայն կրօնական պատերազմի այս երկրորդ շրջանում

պարսիկները չեն ունենում այն յաջողութիւնը, որ նոցա շարունակ առաջնորդում էր առաջին շրջանում։ Այստեղ պարսիկները պատահում են ճակատ առ ճակատ բուն հայոց ժողովրդի հետ, նորա մարմնից անբաժան, նորա մէջ արիւն և մարմին դառած կրօնական համոզմունքի հետ, որ ոչինչ նմանութիւն չուներ այն հանգամանկներին, որոնց մէջ յաջողութիւն գտան նոքա առաջին շրջանում։ Հայոց համար քրիստոնէական կրօնքը փառքի, պատուի, գերիշխանութեան, քաղաքական անկախութեան խընդիր չէր, որի մէջ նորա կարողանային վլչողութիւն անել տեղի տալ և, վերջապէս, զոհել նորան։ Նա Արշակունեաց թագն ու գաւաղանը չէր, որից կարողանային նորա այնքան շուտով հրաժարուել։ Առանց արտաքին քաղաքական անկախութեան, առանց Արշակունեաց փայլուն թագի հայերը գեռ կարող էին ապրել, բայց առանց քրիստոնէական կրօնքի նորա կերանք չունեին, որովհետեւ նա նոցա, ինչպէս վերև ասացինք, ներքին համոզմունքի, սրտի զգացմունքի հետ սերտ կապերով կապուած էր, աղդայնութեան արիւնով խառնուած էր, որից բաժանուելը հայերի համար կրնշանակեր կորցնել իւր բոլոր ազգային առանձնայատկութիւնները, ձուլուել տիրապետող ազգութեան հետ և մեռնել բարզապէս։ Իսկ քրիստոնէութիւնը, Ճիշտ որ, նոր արմատներ էր ձգել հայոց բարերեր հողի վերայ։ Նա հայոց պատղամեր անդաստանում նմանում էր այն հաստաբուն կաղնի ծառին, որ իւր արմատները տարածում է այնպէս խոր, այնպէս հետի երկրի ծալքերում, որ ոչ ձմեռուայ սառնամնները, ոչ ամառուայ տառն ու խորշակը կարող են նորան չորացնել, ոչ հողմը, ոչ հեղեղը և ոչ սաստիկ մրրիկն ու փոխօրիկը կարող են նորան արմատախիլ անել։ Եւ եթէ պատահի մինչև անդամ, որ բնութեան արհաւիրքը յաղթէ և վայր տապալէ նորան, նա պէտք է ընկնի ահագին ճայթիւնով, և վայ է նոցա, որ նորա տակ կամ մօտը պատահին այդ ժամանակ։ Հայոց անդաստանի այդ հաստաբուն և խորաբաժատ կաղնին սնուցուած էր ոչ հասարակ ձեռքերով։ Նորան տնկել էին Ս. Թագէոս և Բարթոլոմէոս առաքեալները և Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Նորան ջրել էին Ս. Գրիգոր Լուսաւորչին որդիները և Ներսէս Մեծը, նորան ինամել ու մշակել էին Ս. Սահակ Պարթ'ը ու Մեսրովը Մաշտոցը և նոցա անմահ յիշատակի աշակերտները։ Աչա ինչու պարսիկները որոնք կարողացել էին կործանել Սրբակունեաց հզոր հարստութիւնը Պարս-

կաստանում, որոնք կրօնական պատերազմի առաջին շրջանում յաջողել էին ջլատել միւս Արշակունի հարսութիւնների ոյժերը և յաղթել հայոց Արշակունիներին, որոնք մրցելով յոյների հետ, գերազանցել էին նոցա և ձեռք էին բերել իրենց նախկին նշանակութիւնը Աստիայում, այս երկրորդ շրջանում ընդհարուելով հայոց կրօնքին, որի բառնալը հայաստանից նոցա վերջնական կէտ-նպատակն էր, պատահում են անյաջողութեան։ Այս առաջին անյաջողութիւնը չէր, որ պատահում էին պարսիկները իրենց գործունէութեան ճանապարհին, նոքա գեռ կրօնական պատերազմի առաջին երկար շրջանում իւրաքանչիւր անգամ, երբ միայն փորձում էին ձեռնամենիւ լինել հայոց կրօնքին, կոր ի գլուխ էին լինում։ Նոցա մաքից անշուշտ գեռ չէր մոտացուել Մեհրուժանի անյաջող կրօնափօխութեան գործունէութիւնը հայաստանում և Զիրաւի պարտութիւնը, բայց նոքա այդ բոլոր անյաջողութիւնները վերադրում էին այն հանգամանքին, որ կրօնական պատերազմի առաջին շրջանում նոքա, զբաղուած լինելով Արշակունիների և յոյների հետ պատերազմելով, չէն կարողանում իրենց բոլոր ցժերը կենարոնացնել և գործել միայն այդ ուղղութեամբ։ Այժմ, երբ այլ ևս չէար յունաց պատերազմների ինսդիր, ընդհանուր Արշակունեաց և հայոց Արշակունիների խնդիր, պարսիկները կարծում են հեշտութեամբ համանել իրենց նպատակին։ Նոքա մոցնում են հայաստան սուր, հուր և գաւաճանութիւն, բայց ոչ մի կէտում չեն գըտնում աջողութիւն։ ամենայն ինչ սպառվում է հայոց հոգեորականութեան եռանդի և հայ ժողովրդի քրիստոնէական կրօնքի վեհութեան առաջ։ Աւարայրի պատերազմը ցոյց է տալիս, թէ որքան սիսալուել էին պարսիկները իրենց հաշիւների մէջ։

Նոյն անյաջողութեան պարսիկները պատահում են և կրօնական պատերազմի վերջին շրջանում — Վահանանց պատերազմում, երբ Պերողը, Յազկերտի յաջորդը, տեսնելով, որ իւր նախորդի պատերազմական զէնքի և որի քաղաքականութիւնը չհասցրեց պարսիկներին իրենց նպատակին, մտածում է փոխել իւր ընթացքը և զէնքի ու պատերազմի քաղաքականութեան տեղ, գործ դնել քսութեան, խարէութեան, կաշառքի, գաւաճանութեան քաղաքականութիւնը, բայց և այս գէպքում Պերողի այդ նուրբ քաղաքականութիւնը ջլատվում է Գիւտ և Յովշան Մանդակունի կաթողիկոսների ազգու քարոզների և Վահան Մամի-

կոնեան ազգասէր նախարարի սրի դէմ, ինչպէս մի ժամանակ Յազկերտի սուրլ ջախջախուեցաւ նորա ձեռքում Աւարայրի պատերազմում Յովսէփեանց, Ղեռդեանց քարոզութիւնների և Վարդանի քաջանիշ սրի առաջ Վահանի և Վաղարշի 485 թուականի դաշնագրութիւնը վերջ է զնում այդ երկարատև կրօնական պատերազմին, հաստատելով քրիստոնէական կրօնիքի յաղթանակը և մոգական-զրադաշտական գենի պարտութիւնը:

V.

Վարդանանց պատերազմը, շարունակուելով այդքան երկար ժամանակ, պահանջելով երկու կողմից ևս՝ հայերի և պարսիկների, այգան մեծ աշխատանք և զոհ, յայտնի բան է, չէր կարող բոլորովին առանց հետեւանքի անցնել, գնալ նա, ընդհակառակն, նայելով այն խստութեան ու յամառութեան, որով մըդղում էր երկու կողմից ևս, պէտք է ունենար և ունեցաւ իսկ ի ը հետեւանքները թէ պարսիկների և թէ հայերի համար: Պարսիկները, ամենայն ձիգն թափելով, ամենայն միջոց գործ գնելով, մինչև անգամ պաշտօնապէս պատերազմ հրատարակելով հայոց կրօնքի դէմ և չհասնելով իրենց նպատակին, վերջ ի վերջոյ ստիպուած են լինում խոստովանել իրենց պարտութիւնը: Նքառ համոզվում են, որ, ինչպէս ասում էր նկը պարսից մոգպետը: «Իթէ ինքեանք աստուածք եկեսցեն յօգնութիւն, չէ չնար օրինացն մոգութեան և ՚ի հայո առնուլ հաստատութիւն» և որոշում են խպառ յետ կանգնել իրենց դիտաւորութիւնից, բաւականանալով՝ հայաստանի միայն քաղաքական իշխանութեամբ: Պարսից այս որոշումն ունենում է իւր բարերար աղղեցութիւնը հայերի համար ապագայի վերաբերութեամբ, որովհետև նա դառնում է մի տեսակ ծրագիր յետագայ մահմեդական աշխարհակալ ազգերի՝ Արարիայի, Աելջուկ, առաջ հեթանոս, յետոյ մահմեդական Մոնղոլ-Թաթարների, Թուրքմէն ցեղերի, Օսման-Տաճիկների և նոր Պարսիկների համար, որոնք օգտուելով անցեալի օրինակից, նոյնպէս բաւականանում են հայաստանի միայն քաղաքական իշխանութեամբ: Յայտնի բան է, վերսցիշեալ աշխարհակալների կողմից առանց փորձանքի չմնաց հայոց կրօնքը, նամանաւանդ արարացիներից, որոնք, Ասիայի շատ ազգերի մէջ իսլամութիւն տարածելուց յետոյ, չզլացան իրենց մահմեդական

մոլեռանդութիւնը գործ գնելու և հայերի վերաբերութեամբ, Բայց այդ բոլորը միայն մասնաւոր փորձեր և գէպքեր էին, իսկ այնպիսի մի ընդհանուր պատերազմ՝ հայոց կրօնքի դէմ, որպեսին մշեցին Վարդանանց ժամանակ պարսիկնելը, այնուհետև այլ ևս տեղի չունեցաւ, չկրկնուեցաւ. Հայաստան արշաւող օտար աշխարհակալները, աւանդաբար պահպանելով յիշատակ այն մեծ անձնութիւնեան մասին, որ ցայ էին տուել Հայերը Վարդանանց պատերազմում գէպի իրենց կրօնքը, որին կենդանի ապացոյց նորա առիթ են ունենում յաճախակի տեսնելու և իրենց աչքի առաջ, ստիպուած են լինում՝ ճանաչել քրիստոնէական կրօնքը, իբրև մի մեծ ոյժ, ստիպուած են լինում քաշուել պատկանուած առաջ, յարդել նորան և նորա ներկայացուցիչներին, հոգ և որականութիւնը համարել գլուխ հայոց ազգի. Սյստեղից առաջ եկած պէտք է համարել հայոց հոգեոր գլուխների՝ կաթողիկոսների և պատրիարքների այն մեծ նշանակութիւնը, որ նորա միշտ ունեցել են օտար ոչ քրիստոնեայ տիրապետողների առաջ, այս տեղից առաջ եկած պէտք է համարել և այժմուայ այն մեծ գերը, որ խաղում են հայոց հոգեոր ներկայացուցիչները երկու մահմեդական տէրութիւններում՝ Տաճկաստանում և Պարմիկաստանում, վայելելով, բացի հոգեոր իշխանութիւնից, և մարմնաւոր իշխանութիւն:

Բայց աւելի ևս մեծ հետևանք Վարդանանց պատերազմը ունեցաւ հայոց ազգի համար, զգալի լինելով ոչ միայն նոյն իսկ հինգերորդ և վեցերորդ դարներում, այլ ևս չկորցնելով իւր թարմութիւնը նորա համար մինչև անդամ յետագայ երկար դարերի լութացքում. Սխալուած չենք լինիլ, եթէ մինչև անդամ ասենք, որ կրօնական պատերազմների աղդեցութիւնը, եթէ ոչ այնքան թարմութեամբ, ինչպէս առաջին ժամանակները, գոնէ, բաւականին զգալի կերպով շարունակուեցաւ ներգործել հայերի վերայ մինչև վերջին ժամանակները և, գուցէ շարունակում է աղգել մեր վերայ մինչև մեր օրերը իսկ. Վարդանանց պատերազմի աղդեցութեան տակ հայերը ըմբռնեցին քրիստոնէական կրօնքի բուն հոգին և բոլորովին ամրապնդուեցան նորա մէջ, արդարացնելով այն մեծ ջանքն ու աշխատանքը, որ զործ էին զրել նոցա վերայ Ս. Գրիգոր Լուսաւորիչը և նորա երջանկայիշատակ յաջորդները, առատութեամբ պաղապերելով այն ատոր սերմերը, որ այնքան հմտութեամբ ցա-

նել էին հայոց երկու մեծ ուսուցիչները՝ Սահակ և Մեսրոպը և նոցա աշակերտները, Վարդանանց պատերազմի ազգեցութեան ներքոյ հայերը լմբոնեցին և մի ուրիշ բան, որ ոչ պակաս, քան թէ առաջներ, նշանակութիւն ունեցաւ նոցա համար; Նոքա հասկացան, որ ինքեանք, անզօր լինելով քաղաքականապէս կազմել մի հզօր տէրութիւն, որ կարողանար աջողութեամբ մաքառել հայաստանը շրջապատով աշխարհակալ ազգերի հետ, որ ունի մի մեծ ոյժ, մի կրօնք, որ կարող է ամենայն զեաքում մեծ ծառայութիւն անել ազգին, պահպանելով ազգի ամերողջութիւնը և չթոյլ տալով նորան ձուլուել հզօր իշխողների հետ, որի փորձը մէկ անգամ արդէն առած լինելով կրօնական պատերազմում, աւելի շօշափելի կերպով դեռ պէտք է առնէին նոքա յետագայ ժամանակներում, երբ հայ ազգի մի ստուար մասն ստիպուեցաւ թողնել իւր սիրելի հայլմնիքը և խմբերով զիմել օտար երկիրներ, պահպանելով իւր հայրենիքի և ազգի ընդհանրութեան հետ կապ միայն կրօնքի նորդիւ: Հայ գաղթականութեան պատմումութիւնը կարող է ամենալաւ և ամենաշօշափելի ապացոյց համարուել հայոց կրօնքի այդ մեծ նշանակութեան: Մէկ անգամ արդէն հասկանալով կրօնքի այդ մեծ նշանակութիւնը, հայերը իրենց բոլըր ուշագրութիւնը կենտրոնացնում են նորա վերայ: Նոքա նորան շինում են իրենց համար նշանարան, ուղղութիւն, որի մէջ նոքա ամիսիում են այն բոլըր, ինչ որ նուիրական է մի ազգի համար՝ լեզուն, մոտաւոր արդիւնաբերութիւնը, ազգային հոգին ու նոցա սուրբ աւանդութիւնները: Նոքա հայ եկեղեցու մէջ հոգու փրկութեան հետ տեսնում են և հայկական կեանքի փրկութիւնը այն բոլըր փորձանկներից, որ նա յաճախակի պատահում է իւր ազմկալի քաղաքական կեանքի ասպարիդում: Ահա այս է պատճառ, որ հայ ժողովովի բոլըր անդամները՝ աղքատները իրենց լուսններով հարուստները իրենց ոսկիներով, իշխանները իրենց ընդարձակ կալուածներով ծածկում են հայաստանը հայկապ վանքերով ու եկեղեցիներով: Հայ մանկան լցնում է վանքերի ուսումնարանները և հեռու կեանքի աղմուկից պաշտպանում, շարունակում և զարդացնում է գրականութիւնը, որով նոքա ապահովեցնում են ազգի գոյութիւնը և հասցնում են նորան մինչև մեր օրերը, գոնէ, այն դրութեամբ, որի մէջ տեսնում ենք մենք այժմ նորան:

ՀԵՂՈՂՈՂԻ ՖՈՆ ՌԱՆՔԵ

ԵՒ

ՀԱՅԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԲ.

Հայ ընթերցող հասարակութեան անցայտ չէ այս մեծ պատմաբանի անունը. թէ նորա 90 ամեայ յօրելեանի և թէ մահուան առիթով լցու տեսան նաև մեր պարրերական հրատարակութեանց մէջ համառօտ տեղեկութիւններ պարունակող յօդուածներ. Ուստի և մենք կը բաւականանաք նորա կենսագիւթեան համառօտ նկարագրութեամբ և մի փոքր աւելի կանգ կ'առնենք նորա աշխատութեանց ուղղութեան մասին:

Լէօպողդ ֆօն Ռանքէն ծնուեցաւ 1795 թ. գեկտեմբերի 2-ին Թիւրինգէնի Վ.ի հէ կոչուած փոքրիկ քաղաքում: Նորա հայրը կալուածատէր-իրաւաբան էր: Լէօպողը արդէն իւր փոքրիկ հասակից ցոյց էր տալիս իւր ձիբքերը և յաճախ բաժանուելով իւր եղբայր ու քոյրերից՝ առանձնանում էր և ընթերցանութեամբ պարապում: Նա իւր սկզբնական ուսումը ստանալով իւր հայրէնի քաղաքում՝ մի ասսուածաբանութեան կանգիգատից, տասն և մէկ տարեկան հասակում՝ այցելում է մօտակայ Գօնդօրֆի վանքական դպրոցը: Սակայն երեք տարուց յետոյ տեսնելով որ այդ դպրոցն իւր ուսման ծարաւին բաւականութիւն չէ տալիս, փոխադրվում է պատմական յայտնի նշանաւոր դպրոց Շույպֆօրտա *),

*) «Schulpfforta» Ն ալսօր ևս յայտնի դպրոց է համանուն տեղում, աշակերտները գիշերոթիկ են և ունի զիմնապիօնի դասրնմաց: Այժմեան դպրոցը եկեղեցուն կից մի հին շինութիւն է, սակայն յարմարեցրած դպրոցական պահանջներին:

ուր առանձնապէս աղաս ժամանակը պարապում է յունարէնով: Նա իւր 18 ամեայ հասակում թարգմանում է յունարէնից Սոֆոլէսի Յ զրամաներն և իւր հօր ծննդեան տարեդարձին ուղարկում է իրր նուեր: Շուլպֆօրոսայից երիտասարդ Լէօպօլդը փոխադրվում է Լայպցիկի համալսարանը և ուսանում է աստուածաբանութիւն ու լեզուագիտութիւն: Սակայն հետզհետէ իրեն բոլորովին նուիրում է վերջնին և գորա հետ կապակցուած պատմութեան ուսումնասիրութեան: «Պատմութեան ուսողութիւնն իմ տեսակէտից, ասում է ինքը Ռանքէն, չկար իմ ժամանակ Լայպցիկում, այլ միայն իսկական լեզուաբանութիւն: առաջին մեծ պատմաբանն, որի ազգեցութեամբ ես խորասուզուեցի պատմութեան ուսումնասիրութեան մէջ, Թուկիդիտէսն էր»:

Համալսարանական դասընթացն աւարտելուց յետոյ, արդէն 1818 թ. Ռանքէն նշանակվում է Ֆրանկֆուրտի—Օդերի վերայ—Գիմնազիայի աւագ ուսուցիչ, որտեղ և նա աշխատասիրում է իւր առաջին պատմական գործը: «Ռոմանական և գերմանական ազգերի պատմութիւնը 1494—1525 թ.»—Die Geschichte der romanischen und germanischen Völker von 1494—1525» և գորա հետ միասին «Zur Kritik neuerer Geschichtsschreiber»: «Պատմագրի գործն է անցեալը քննադատելը ներկան յօգուտ ապագայի բայցարել, սակայն ներկայ գրուածքը ցցց է տալիս միայն իսկապէս հզածն»: Այսպէս պարզ և մի և նզին ժամանակ այսպէս ընդարձակ է ըմբռնում Ռանքէն պատմութեան ինդիրը վերցիշեալ գրուածքի յառաջաբանում*):

*) Պրօֆ. Լուենց խօսենով նոյնպէս նշանաւոր պատմաբան «Ծլուէրի» մասին՝ մի նկատողութեան մէջ ասում է հետեւալը: «Երկի աւելորդ չէ լիշել, որ Ռանքէի ոռմանական և գերմանական ազգերի պատմութիւնը լուս տեսաւ 1824 թ.: Համոզուելու համար, որ այս աշխատութիւնը պատմութեան մէջ մի նոր դարաշրջան է կազմում, պէտք է միայն կարդալ այդ գրուածքի յառաջաբանը: Ինչ որ Ռանքէն խօսում է այդ տեղ իւր պատմագրութեան խնդրի մասին, այնպիսի դարձանալի պարզութիւն և հեշտ դիտարութիւն ունի, որ կարելի է ասել, թէ այդպիսի վծողականութեամբ, պարզութեամբ և հաստատմտութեամբ երբէք ոչ մի պատմաբան չէ լառաջ տարել իւր նախագիծը, ինչպէս Ռանքէն ամբողջ 50 տարուայ ընթացքում:

... «Ռոմանական և գերմանական ազգերի պատմութեան» յառա-

ԹՇպէտ Ռանքին պատմութեան ուսումնակրութեան մէջ քննական մեթոդի ստեղծողը չէ, վասն զի Նիւռուր—Niebuhr և Դայլման—Dahlemann —արգէն դրանից առաջ գործ էին դրել այդ մեթոդը, առաջինը հին հռոմեական, իսկ երկրորդը միջին դարու պատմական աղբիւրների ու աւանդութեանց վերաբերութեամբ, սակայն նա առաջինն էր, որ այդ մեթոդի սկզբունքները գործադրեց՝ նորագոյն պատմութեան աղբիւրների ուսումնասիրութեամբ և քննադատութեամբ։ Ռանքին այս առաջին հեղինակութեան հետեան հետեան այն եղաւ, որ գրի հրատարակուելուց անմիջապէս յետոյ՝ նա հրաւիրուեցաւ Բերլինի համալսարանից իր պատմութեան ուսուցչապետ։ Իւր դասախոսութեանց հետ ի միասին տքնածան աշխատելով այն տեղի մատենադարանում՝ նա բաղդ ունեցաւ մի 46 հատորից ձեռագիր գտնելու, որ ներկայացնում էր զանազան աղգերի և տէրութեանց յարաբերութիւնները։ Ժամանակակից և գործող անձանց պարզ գրուածքներ, որ առատարուղին աղբիւր բացին հետատես և հանձարաւոր պատմաբանի ուսումնասիրութեան և քննադատութեան համար։ Այդ ձեռագրների գիւտը և Ռանքին նոր աշխատութիւնը. «Հարապյին Եւրոպայի իշխանները և ազգերը»—Fürsten und Völker von Südeuropa—պատմութեան համար մի նոր դարագլուխ են կազմում։ Այս աշխատութեան առաջին հատորի մէջ—«Օսմանները և Խսանական միապետութիւնը»—«Օսմանուն և Սպանական ժամանակական աղքատութիւնը»—«Օսմանուն և Սպանական ժամանակական աղքատութիւնը»—մինչև այն ժամանակ շտեմնուած և չեղած՝ պարզ և մի և նոյն ժամանակ խորը թափանցող կերպից ջաբանի մէջ արտապատած հայեացակէտը Ռանքին պահպանում է նաև իւր վերջին աշխատութեան, ընդհանուր պատմութեան մէջ։ Հստ այդ հայեացակէտի, Քրիստոնէական պատմութիւնը չի կարող համաշխարհային նշանակութիւն ունենալ և աշխարհի, նոյն իսկ Եւրոպայի զարգացման միութեան զաղափարը անկարելի է ընդունել։ «Պատմաբանի դիտողութիւնը չպէտք է լինի, ասում է Ռանքին, ինչ որ օտար է նորան, երկրորդական նշանակութիւն տալ, իսկ առաջնակարգ տեղը տալ ցեղակից ազգերին, կամ մաքուր գերմանական կամ թէ գերմանա-ռոմանական ծագումից, որոնց պատմութիւնը բոլոր նոր պատմութեան միջուկն է կազմում։ Տես. Die Geschichtswissenschaft in Hauptrichtungen und Aufgaben, kritisch erörtert von Dr. O. Lorenz. Berlin 1886. էջ 47 սպ. 1. և 48 սպ. 1:

Է նկարագրուած օսմաննական պետութեան ծաղումն, աճումն, անկումն և դորա հակապատկերը ներկայացնող սպանիական զօրութիւնը, դորա ներքին հանգամանքներն և այլն:

1827թ. Ռանքէն պրուսական կառավարութեան հաշուով Ճանապարհորդում է Եւրոպայում — գլխաւորապէս Վիէննա, Վիեննետիկ, Ֆլորէն և Հռու — և ուսումնափրում այդ քաղաքների դիւնեների — արխի. — մէջ գտնուած ձեռագիրները: Նոյն ժամանակ գրեց նաև «Սերբիական յեղափոխութեան պատմութիւնը» — «Geschichte der Serbischen Revolution», — որ ներկայացնում է պատմական դէպէրի նկարագրութեան մի օրինակելի ստեղծագործութիւն: Պատմաբան-քննադատ Նիբուրն այդ գրքի մասին խօսելիս ասում է. «Այդ աշխատութիւնն ամենալաւն է մի ժամանակակից անցքի մասին... դորանով կարող է հպարտանալ Գերմանիան...»

1831թ. Ռանքէն վերագարձաւ Բերլին և սկսեց իւր մեծ և հոչակաւոր աշխատութիւնը. «Հոռովմական պապերը, եկեղեցին և տէրութիւնը 16 և 17-րդ դարերում» — «Römische Päpste, ihre Kirche und ihr Staat im 16 und 17 Jahrhundert» — վերնագրով, որ լցու տեսաւ 1834թ. ից սկսած Յ հատոր. Այս աշխատանքով Ռանքէն իսկապէս լուծեց մի պատմագրից պահանջուած ինդիրը, որ նա ինքը հետևեալ կերպիւ է ձեւակերպում. «Երբ մի բանաստեղծական աշխատութեան ներքին բովանդակութիւնը և գեղեցիկ ձեւը կապակցում են միմեանց հետ, իւրաքանչեւր որ բաւականացած է զգում իրեն: Երբ մի գիտնական աշխատութիւն թափանցում է իւր նիւթի մէջ և նոր բացատրութիւններ տալիս, աւելի ոչինչ չէ պահանջմանը. Ընդհակառակը պատմաբանի ինուդին է մի և նոյն ժամանակ գրականական և գիտնական. պատմութիւնն է նոյն ժամանակ արուեստ — Կոնստ — և գիտութիւն: Նա պէտք է կրիտիկայի և գիտութեան պահանջներն այնպէս իրագործէ, ինչպէս մի լիցուարանական աշխատութիւն. սակայն մի և նոյն ժամանակ նա պէտք է զարգացած ողոն այնպէս հաճայք պատճառէ, ինչպէս մի ամենայաջող գրականական աշխատութիւն. Կարելի էր ենթագրել, որ իրը թէ ձեի գեղեցկութիւնը կարելի է միայն ի վեաս ճշմարտութեան ձեռք բերել: Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ պէտք էր գիտութեան և արուեստի կապակցութեան գաղափարը մի կողմը թողնել և իրը սխալ նկատել: Ես համոզուած եմ՝ ընդհակառակը,

որ գէպի ձեն—Form—ուղղուած ձգտումը մինչև անդամ՝ հետազօտութեան ենանդը խանդարում է. վասն զի լուսի վերայ կարող է հիմուել նկարագրութիւնը, եթէ ոչ կենդանի իմացողութեան—Kentniss,—իսկ այդ անկարելի է ձեռք բերել առանց հիմաւոր ուսումնասիրութեան...»

Պատերի պատմութիւնից յետոյ Ռանքէն լոյս աշխարհ հանց «Գերմանիոյ պատմութիւնը յեղափոխութեան ժամանակաշրջանում»—«Deutsche Geschichte im Zeitalter der Reformation», «Ֆրանսիական պատմութիւնը առանձնապէս 16 և 17-րդ դարերում»—«Französische Geschichte vornehmlich im 16 und 17 Jahrhundert», «Անգլիացւոց պատմութիւն», «Եօթնամեայ պատերազմի ծագումը», «Լալենշտայնի պատմութիւնը», «Մագումն և սկիզբն յեղափոխութեան պատերազմի 1791—1792», «Պատմութիւն Պրուսացւոց» և այլն. Ամերող էջեր է հարկաւոր Ռանքէի բոլոր գրուածքների վերնագիրները յիշելու համար, որոնք մօտ 50 հատորից են բազկացած:

Թէև այս բոլոր հասողներն, որոնք մեծ մասամբ վերջին տասնեակ տարիների ընթացքում՝ լոյս տեսան, այդ ժամանակի աշխատութիւններ չեն, այլ առաջուց պատրաստած և այժմ կատարելագործուած, սակայն այնուամենայնիւ մեծ պատմաբանի ոգւյ հզօրութիւնն ու աշխուժութիւնը և բաղնակողմնի զիտութիւնը զարմանք են պատմառում նորա ընթերցողներին:

Նորա աշխատութեանց մեծ մասը հիմնուած է գիւանագրների հետազօտութեանց և զանազան աղբեկների քննադատութեանց վերայ, որոնց ուսումնասիրները համար ժամանակ, հայրերութիւն և ոգւյ առցգութիւնը անհրաժեշտ են, այս տեղեց երեւում է Ռանքէի հանճարն ու քանքարը իրը պատմագիր, Ռանքէն՝ համեմատ իւր աղբային յատուկ ոգուն, հետազօտում է գերմանական պատմութեան հետ ի միասին նաև միւս բոլոր աղբերի պատմութիւնը մի և նոյն եռանդով. Եթէ Գեօթէն գերմանական այս հանճարի ներկայացուցիչն էր բանաստեղծական գրականութեան շրջանում, Ռանքէն մի և նոյն հանճարի ներկայացուցիչն է պատմական շրջանի մէջ. Նորա բոլոր գրուածքները կրում են համաշխարհային կնիք իրենց ճակատին. ինչպէս արգէն տեսանք, նորա առաջին աշխատութիւնն էր «Ռոմանական և գերմանական աղքերի պատմութիւնը»։ Նա իրը նպատակ որոշեց հետեւալը. «Ճանաչողութիւն մասնաւ որի և ընդհանուրի. նկա-

բագրութիւն թէ մէկի և թէ միւսի՝ կատարեալ իրապէս—Objectivität—վերարտադրութիւն և մի և նոյն ժամանակ փիլիսոփայութիւն պատահածի, պատմական իրողութեան», որ և կատարելապէս յաջողուեցաւ նորան. Առաջին անգամ թէկ նորա նկարագրութիւնը սառն է թվում, բայց ուշիմ ընթերցողն ինքը կըտաքանայ այդ սառը նկարագրութիւնը կարդալով. նա չէ ցանկանում իւր դատողութեամբ ընթերցողին իրեն գաղափարակից անել այլ նոյն խակ իրողութիւնները նկարագրել, ինչպէս նորա էին և ոչ թէ քաղաքական և կրօնական կուսակցական ոգւով իրողութիւնը յեղաջրջել:

Նորա «Պապերի պատմութիւնը» կարդալով չի կարելի եղակացնել, որ գրողը մի գերմանացի և բողոքական է. բայց երբ կարդանք նորա ընդհանուր պատմութեան Յ հատորի 5-րդ գլուխը, կըպատահենք հետեւալ տողերին. «Կարծում եմ, որ ես մի լաւ աետարանական Քրիստոնեայ եմ»: Եւ այս մեծ պատմաբանի հանձարաւոր առաւելը ընթերցութիւններից մէկն է, ազատ ամեն տեսակ նախաղացումներից և նախապաշարման ազդեցութիւնից, ոգեսրուած ամենը հասկանալու, ամենը զգալու ձգուումից, ազատ իւր ժամանակի ազդեցութիւնից և կեանքից՝ վերամեռում է դեպի անցեալն և պարզ հայեացքով դիտում պատահած իրողութիւնները. Եւ միայն այսպիսի պարզ հայեացքի առաջ կ'անցպատանայ այն թանձր մառախուզն, որ սովորաբար ծածկում է անցեալի կեանքը:

Պատմական անձանց բնաւորութեանց նկարագրութիւնը Ռանքէի ուղղութեան գլխաւոր գծերից մէկն է. Իւր ընդհանուր պատմութեան մէջ նա ասում է մի տեղ. «Բարձր նշանակութիւն ունեցող մարդկանց չի կարելի փոխանակել վամ զի գորա համար այն պայմաններն ևս պէտք է կրկնուէին, որոնցից և զարգացել է դոցա անհատական դրութիւնը». մի այլ տեղ. «Գերմանական պատմութեան» մէջ ասում է. «Եյն գաղափարներն որոնք պէտք է աշխարհը շարժողութեան մէջ դնեն, յերկան են գալիս առաջ միշտ մի-մի լուսաւոր անհատների միջ»: Հաւատարիմ այս սկզբունքներին, նա միշտ ձգտում է ապացուցանել այն «պայմանները», որոնց մէջ այն մեծ անձնաւորութիւնները դարձել են այն, ինչ որ նորա մեզ երկում են. Մարդս՝ գաղափարների ներկայացուցիչը, նորա մարմնացումն է. գաղափարն է այն ոգեկան հոսանքը, որ սկիզբն է առնում մարդուց և ներդործում

է ժամանակի և տարածութեան վերայ, թէկ անձնաւորութեան մէջ գործում են գաղափարները, սակայն այնուամենայնիւ անձնաւորութիւնն է, որ պատմութիւն է յառաջացնում. այդ պատճառու և պատմաբանի համար մեծ նշանակութիւն ունի այդ անձնաւորութեան վերայ մի կենդանի և ամիսով հայեացք ունենալ:

Բննական հայեացը կազմում է Ռանքէի ուղղութեան մի այլ գլխաւոր տարրը. նա նկարագրում է պատմական անցեալը՝ հիմնուած քրաւոր աղբերների և ապա աւանդութեանց վերայ, սակայն երկուսն ևս իմստ քննութեան ենթարկելով. Իւր քառամասմեայ հասակում ուսուցչապետի ամբիոնը բարձրանալիս նա ի միջի այլոց ասում է և հետեւալը. «Որչափ որ պատմութիւնը ձկոտում է իրողութեանց շարայարութիւնն ըստ կարելցն ձիշտ և սուր կերպիւ իմանալու և դոցանից իւրաքանչիւրին իւր սկզբնական գոյնն ու կերպարանքն տալու՝ մեծ նշանակութիւն տալով գորան, այնուամենայնիւ նա—պատմութիւնը—չէ բաւականանում այդ աշխատանքով, այլ շարունակում է իւր հետազոտութիւնը և աշխատում թափանցել մարդկային կեանքի ամենախորին և գաղտնի մնացած շերտերը»:

Եօթանասնամեայ աշխատանաց ժամանակը թէկ երկար միցոց է, սակայն երբ այն բոլոր գրերը և դիւանագրերը միատեղ հաւաքենք և նայենք, որ կարդացել և ուսումնասիրել է Ռանքքան, այն ժամանակ միայն կարող ենք մի գաղափար կազմել մարդկային աշխատանաց ուժի և նորա ուշոյ ընդունակութեան վերայ. Սրգէն 1867 թ. Ռանքէն սկսեց իւր բոլոր աշխատութեանց հրատարակութիւնը, և երբ արդէն լրացել էր նորա 80-ամեակը, կարծվում էր, որ նա վերացրեց արդէն իւր գործը գրական ասպարեզում, սակայն ընդհանուր լարմանը յառաջացրեց այն իրողութիւնը, որ Ռանքէն գեռ ևս այժմ սկսեց իւր ամենամեծ աշխատութեան ձեռնարկութիւնը. Ուժուուն և հինգ ամեայ հասակում սկսեց նա մի աշխատութիւն, որպիսին այդ հասակի մէջ ո՛չ մի մահկանացու չէր ձեռնարկել. Եթէ այդ մեծ մարդուն յաջողուէր այդ աշխատութեան ամիսողացումը, այն ժամանակ միակ օրինակը կը լինէր պատմութեան մէջ. Սոֆոկլէսի մասին պատմում են, որ նա իւր ԳՅ-ամեայ հասակում մի ողբերգութիւն գրեց, որի յաջողութիւնից զգացուած՝ մահացաւ. Եթէ այդ աւանդութեան հաւատ ընծայենք, այնուամենայնիւ պէսը է

ասենք, որ Մանկէի աշխատութիւնը պահանջում է առաւել ներքին զյժ և ոգւց զօրութիւն, քան մի հնագարեան ողբերգութեան նիւթը. Մանկէի «Ընդհանուր պատմութեան» նիւթը հարկաւ նոր չէ, սակայն նոր են այդ նիւթը ձևակերպող շարայարող և ուղղութիւն տուող գաղափարները:

Այդ մեծ պատմաբանի համար մի ներքին պահանջ պէտք է լինէր՝ իւր աշխատութիւնը, որ միշտ ընդհանուր մարդկային բնաւրութիւն ունէր, մի մեծ գործով վերջացնել, որի մէջ նա կարողանար ներկայացնել մարդկութեան ամբողջ զարգացումը պատմական ժամանակներում. Եւ աչա՛ իւր այդ ներքին պահանջին գոհացումն տալու համար նա 1880 թուից սկսեց իւր «Ընդհանուր պատմութիւնը—Weltgeschichte» և այդ օրից սկսած Մանքէն իւրաքանչիւր նոր-տարին գիտնական աշխարհին ընծայ էր բերում այդ պատմութեան մի հատորը, որ միշտ բաղկացած էր լինում երկու մասերից. Սակայն Մանկէին չվիճակուեցաւ իւր գործը ամրողացնել, նա գախճանուեցաւ 91 տարեկան հասակում—1886 թ. մայիսի 23-ին—և «Ընդհանուր պատմութիւնը հասցրեց մինչև հենրիկոս VI-ի մահը—բնդամենն եօթը հատոր:

Մանկէի այս վերջին նշանաւոր աշխատութեան մասին դեռ վերջնական կարծիք չէ յայտնուել, սակայն իւրաքանչիւր պատմաբան ընդունում է, որ այդ գործը մի անզուգական աշխատութիւն է. գորա մէջ ոչինչ անմշակ նիւթ չկայ. իւրաքանչիւր ընթերցող զգացվում է այն իդէալական տեսակէտից, որով այդ պատմութեան մէջ ըմբռնուած է մարդկութեան վիճակը. Այն տեսակէտը, որ ունի Մանկէն պատմութեան էռութեան մասին և այն իրողութիւնը, որ այդ տեսակէտը նա պաշտպանում է 90-ամեայ հասակում, գրականութեան մէջ չունի իւր հաւասարը:

Սակայն Բ'նչ է պատմութեան էռութիւնը:

Այս հարցը պատկանում է 19-րդ դարին. առաջին անգամ Հեգէ փիլիսոփան ներկայացրեց պատմութեան ընթացքն իր ամենամեծ շաղկապուած գործ. միայն գորա «Պատմութեան փիլիսոփայութեան» հետ կարելի է համեմատել Մանկէի աշխատութիւնը. այդ երկու աշխատութիւնները կարելի է միակ փորձերը համարել այն սկզբունքի՝ որ պատմութիւնը ըմբռնում է իրը մի ամրողացութիւն. Հեգէլ փիլիսոփան պատմութիւնը բացատրում է՝ իրը «աղատութեան գիտակցութեան յառաջգիմութիւն», գորանով նա կամենում է ասել, որ մարդկային ոգին առաւել և ա-

ռաւել կատարելագործելով իւր բովանդակութիւնը կամ զօրութիւնը՝ հասնում է մի և նոյն ժամանակ իւր բոլոր ուժերի ստեղծող կենտրոնի զիտակցութեան։ Կարելի է ասել, որ այս տեղ ընդհանուր պատմութեան նպատակն է ոգւզ կատարելութիւնն իբր ինքնահայեցողութիւն։

Ռանքեն ըմբռնում է ընդհանուր պատմութիւնը իբր պրակտիմա, — գործողութիւն, գործ — ոչ իբր մի շարք անցողական, ծաւալուալ նպատակաձգտմանց, այլ իւր շաղկապեալ նպատակագործութիւն— Zweckarbeit. — Այդ շաղկապը չեն շշափում այն բոլոր ձգտումներն, որոնց զանազանակերպ հանգամանքներում ձեռնարկել է մարդկային գործունեայ ոգին. այդպիսի բաժանեալ կամ մեկուսացած ձգտումները չեն պատկանում ընդհանուր պատմութեան։ Ընդհանուր պատմութիւնը չի կարող լինել մարդկային քաղաքակրթութիւն։ Ըստ Ռանքեի պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նպատակների կոիւ իսկ այդ կրիւը ներկայացնելու համար պահանջմում է մի բազմակողմանի, աշխայժ ոգի, հասկացողութիւն մասնաւոր իրողութեանց, հասկացողութիւն մասնաւոր իրողութիւններից ամբողջութիւն կազմելու, սակայն նոյնպէս հասկացողութիւն կամ կարողութիւն՝ մասնաւոր և անկախ շարժողութեանց ամբողջութիւնն ըմբռնելու։

Ռանքեն հմուտ է բոլոր տեխնիքական օժանդակիչ միջոցներին, ինչպէս պատերազմի հերոսի արուեստին, նոյնպէս քաղաքակետի, օրէնսգէտի և կառավարողի ևայլն, նա զնահատում է մարդկային ընդհանուր աշխատանքի բոլոր գործիչները իրենց ուղիղ յարաբերութեամբ. Նա զանազանում է տարրական ձրգումնաց և ընդհանուր գաղափարների աղքեցութիւնն, ըմբռնում է օրիգինալ անձնաւորութեանց, ինչպէս և կրօնի, արուեստի և գիտութեան բարեկարգիչ իդէալական զօրութիւնը։ Այսպիսի ձոխ հայեցողութեանց միութեան համար կարեոր է ոգեստիչ ձեռնարկումն վեհ և ճշմարտագոյն գործի, սառը գատողութիւն, հաւասարաշափ պատկերացումն թէ ամբողջի և թէ մասնաւորի։

Մի այսպիսի յատկութիւններով օժանդակուած պատմազիր կարող է միայն պատմութիւնն իբր քաղաքականութեան մայր ներկայացնել և Ռանքեն ունի այդ յատկութիւնները։

«Sagt mir nichts von Resultaten,

«Denn die will ich selber ziehen».

«Ոչինչ մի' ասէք ինձ հետևանդների մասին»։ գոյցէ այս տողն օտարութի թուի, վասն զի այլ ի՞նչ ունի պատմութիւնը մեզ հաղորդելու, բացի հետևանդներից։ Սակայն այն հետևանդների մասին, որ ակնարկում է բանաստեղծը—Ռնկերտ—արդարե խափափէս Ռանքէի «Ընդհանուր պատմութիւնը» ոչինչ չէ հաղորդում։ Այս կարելի է բացատրել հետևեալ տեսակէտներով։ Ռանքէն երրէք չէ անցնում վկայուած և հաստատուած երեղյթների սահմանից։ Նորա «Ընդհանուր պատմութիւնը», —չէ յառաջարում հետևանդներ։ Ենթաղրութեանց հիման վերայ։ «Եթէ իրերի կաղմանկերպութեան համար մի որոշ նպատակ չդնէնք, ապագան պէտք է մթնացնէնք և լնդհանուր պատմութեան շարժողութիւնն և անսահման նշանակութիւնը չճանաչէնք», ասում է Ռանքէն։ Նա ասում է գարձիալ իւր յառաջարանում պարզ կերպիւ, որ անկարելի է մի լնդհանուր պատմութիւն գրել որ պարունակէ մարդկային գործողութեան բոլոր տեսակները։ այդ կարելի և ցանկալի է միայն պատմական գիտութեան էնցիլոպեդիայի մէջ իսկ ընդհանուր պատմութեան մէջ կարող է տեղ գտնել միայն այն, ինչ որ իրական աշխարհում ապահով տեղ ունի բռնած։

Ռանքէի «Ընդհանուր պատմութեան» վերայ խօսելով ներկայիս պատմաբաններից մէկը—Cost. Rössler—ասում է հետևեալը։ «Սա հին ժամանակների պատկերների դաշիճն է, որ Ռանքէն ցցյ է տալիս, և ոչ պատկերահանդէս միայն նոր կամ փոխադրուած նկարների։ սակայն հին խորին տպաւորութիւններն երեւում են մի նոր լցոսի ներքոյ։ անձնաւորութիւններն և իրողութիւններն աւելի կենդանի են թվում։ Նորա շարժվում են լի ոգւով և գործոնէութեամբ։ Մենք ճանաշում ենք նոցա մէջ նոյն իսկ մեր ընդհանուր մարդկային ոգին, մարմնացած իւրակերպ անձնաւորութեանց մէջ, որ կրկին յերեան են գալիս և մենք հասկանում ենք գոյց՝ նայելով գոյցա կեանքին և գործին»։

Եւ այս «լնդհանուր մարդկայինը» կարծես թէ յատուկ է ներկայացնել գերմանական ազգին։ այն ինչ այլ մեծ ազգեր պարապած են միայն իրենց սեպհական ժողովրդի պատմութեամբ։ և գորա իւրաքանչիւր ժամանակաշրջանի և մամկնաների հետազոտութեամբ, զերմանական պատմագրութիւնը առաւել ձգտում է մի աւելի բարձր նպատակի և լայնածաւալ հօրիզոնի։ Նա ըմբռնում է ամերող մարդկութիւնը իբր մի ամերող զութիւն և տար-

բեր ազգութիւնները նկատում է իր անդամներ տիեզրաց. ընդհանուր աշխարհի պատմութիւն զրելը գերմանական ստեղծագործութիւն է. Պատմագրութեան այս ուղղութիւնը ընդհանրապէս համապատասխանում է գերմանական բնաւորութեան և այդ ազգի փիլիսոփիայական զարգացման. նոյն իսկ Գերմանիոյ աշխարհագրական դիրքը նպաստում է այդ ուղղութեան:

Ռանքէի պէս մի տաղանդաւոր մարդ հարկաւ անուշադիր չէր մնալ. պատույ նշաններ և կոչումներ ամենայն կողմից ուղարկվում են նորան՝ թէ իշխաններից և թէ զիսնական զանազան կաձառներից և ընկերութիւններից. Արդէն 1865 թ. աղնուական կոչումն է տրվում նորան. իսկ 1867 թ. նշանակվում է պրուսական քուր լե մերժ օրդենի կանցլէր. նոյն իսկ տարին նա տօնում է իւր 50 ամեայ գօկտօրութեան յօրելեանը նշանաւոր գիտնականների մասնակցութեամբ. 1882 թ. լրացաւ 50 տարին, այն օրից, երբ Ռանքէն Բերլինի գիտութեանց ակադեմիայի անդամ էր, որի առիջով կայսրը շնորհում է նորան իսկական գաղտնի խորհրդականի տիտղոսը. 1885 թվին ամբողջ Գերմանիան զարմացած էր մնացել՝ տեսնելով այդ վեհ ծերունու մըտաւոր աշխատժութիւնը *), և առնեց նորա իննանամեայ յօրելեանը, որին մասնակցեց ամբողջ Եւրոպան. Այս յօրելեանի առթիւ նա ընտրվում է Բերլինի պատուաւոր քաղաքացի և կայսրը նուիրում է նորան իւր պատկերը. Ռանքէի շնորհակալութեան առթիւ ծերունի Կիլհէլմ Ի կայսրը չետեւեալ նամակն է ուղարկում նորան. «Ի սրտէ ուրախ եմ, տեսնելով Զեր ամսոյս 22-ի գրութիւնից, որ ինձ յաջողուել է անսպասելի կերպիւ ուրախացնել Զեր Զեր ծննդեան տօնի առթիւ շնորհելով իւր պատ-

*) Այդ յօրելեանը մեծ հանդէսով կատարուեցաւ Բերլինում. ալդ ժամանակ ես ուսանում էի Ենալում. և այսօր ես յիշում եմ թէ ինչպիսի ոգնորութեամբ էր խօսում Ռանքէի մասին մեր պատմութեան ուսուցչապետ Լոռնենցը, որ Ենալի համալսարանի կողմից իր պատգամաւոր ուղարկուել էր Բերլին այդ յօրելեանին ներկայ գտնուելու համար. նա զարմանօր պատմում էր այդ 90 ամեայ «Գրօգմալստերի» ոգեկան աշխատութիւնն ու Թարմութիւնը և ասում, որ նա «իւր Թելաղրութիւններով լոգնեցնում է երկու քարտուղարներին» — վերջին տարիները Ռանքէն այլ ես ինքը չէր գրում, այլ միշտ Թելաղրում էր իւր մտքերը և աղքիւրները մասնացոյց անում:

կերս։ Զեր ինձ մատուցած ընդհանուր պատմութեան ։ IV հատորը, որ պարունակում է Կարոլինգների քայլայումը և գերմանական պետութեան հիմնաբրութիւնը, զարմանքով ընդունեցի իր մի զարմանալի ապացոյց այն իրողութեան, թէ որպիսի յաջողութեամբ ձգտում էք, ստեղծողական ուժով ։ Զեր նշանաւոր պատմական աշխատութիւնը վերջացնելու՝ համեմատ բոլոր զարպացած ըրջանների ցանկութեան, Շնորհակալութիւն՝ յայտնելով ։ Զեր գրքի և Զեր հաւատարիմ մաքերի արտայայտութեան համար, ևս ևս Զեղ հետ միասին ցանկանում եմ, որ թէ ինձ և թէ իմ կառավարութեան յաջողութիւնաղջութիւն պահպանել»։ Վիլհելմ. Բերլին, 30 գեկտ. 85 թ.։ Սակայն ծերունի կայսեր իրքը չկատարուեցաւ և Ռանքէն վախճանուելով հինգ ամսից յետոյ, ինչպէս արդէն, ասացինք, նորա մեծ գործը մնաց թերի։

Մեծ պատմաբանի թաղումն ևս հարկաւ վայելու և կերպիւ կատարուեցաւ և այդ առիթով երեաց որ Գերմանիայի սրկաթեայ կանցլերի քաղաքականութիւնը առանց Ռանքէի ազգեցութեան չէր մնացել։

1886 թ. մայիսի 27-ին իշխան Բիսմարկը գրում է Լեօպոլդ Ռանքէի որդուն ի միջի այլը և հետևեալը. «Ես կապուած եմ եղել Զեր հօր հետ ամենասերտ կերպիւ՝ քաղաքական կարծեաց համաձայնութեան շնորհիւ»։

Հայ ընթերցողի համար այս շափու բաւական համարելով Ռանքէի գրուածների ու զգութեան մասին, տեսնենք թէ նա ի՞նչ յարաբերութիւն ունի Հայոց պատմութեան հետ։

Խօսելով Ռանքէի վերջին նշանաւոր աշխատութեան, «Ընդհանուր պատմութեան» մասին, ասացինք թէ նա ի՞նչ սկզբունքների է հետեւում պյտ աշխատութեան մէջ և յիշեցինք նցնպէս, որ նա պյտ աշխատութեամբ չէ գրում իսկապէս բոլոր ազների պատմութիւնը, այլ Ռոմանական և Գերմանական ազգերի և գոյա հետ սերտ կապ ունեցող հանդամանքները և քաղաքական գրութիւնները պարզող երեցյթներն է առաջ բերում և գոյա ազգեցութիւնը բացատրում։ Հայոց պատմութիւնը, որ առ հասարակ չնչին դեր է կատարում ընդհանուր պատմութեան մէջ, հարկաւ տեղ չէր կարող գտնել Ռանքէի պատմութեան պէս մի համառօտ և խիստ քննադատական տեսակէտից գրուած աշխատութեան մէջ, սակայն այնուամենացնիւ մեր այս մեծ պատ-

մարտնի սուր և քննիչ հայեացքը գտել է գարձեալ հայոց պատմութեան մէջ այնպիսի կէտեր, որոնք սերտ կերպիւ կապուած են ընդհանուր պատմութեան հետ. Ռանկբէի յիշած կամ բայցատրած այդ կէտերը թէկ մի նոր լցո չեն ձգում հայոց պատմութեան վերայ, սակայն այնուամենայնիւ հայ պատմարտնի և բանասէրի համար հետաքրքիր է տեսնել թէ հայոց պատմութեան որ շրջանները կամ դէպքերը արժան է համարել կապակցել ընդհանուր պատմութեան հետ Ռանկբէի պէս մի հանձարեղ և քննիչ պատմակէտը. Ահա՝ այս տեսակէտից միայն առաջնորդուած՝ այդ աշխատութիւնը ուսումնասիրելու ժամանակ մենք նշանակեցինք այն տեղերը, ուր յիշվում են հայերը և յառաջ ենք բերում այս տեղ, վասն զի այդ աշխատութիւնը անկատար մնալով՝ չունի մի ընդարձակ ցանկ, որով խրաքանչիւր ոք կարողանար բանալ այդ տեղերը, իսկ եօմը հատոր գրուածք հարկաւ. ամեն ցանկացող չի կարող ձեռք բերել և ծայրէ ի ծայր կարուալ:

Ռանկբէն իւր «Ընդհանուր պատմութեան» մէջ առաջն անգամ յիշում է հայերին, խօսելով Սարգսի մասին 722—705 թ. Քրիստոսից առաջ.—տես հատոր I. մասն ա. էջ 97—ասելով որ Սարգսն սիրելով Ասորեստանին և Դամասկոսին, հայերին տեղափոխեց այստեղ. Ապա երեք էջեց յետոյ շարունակում է. «Երեք անգամ ապստամբեցին հայերը և դոցա դրացիները Սրարատի շուրջը. դոցա յաղթուեցան, և կրեցին մի այնպիսի սարսափելի պատիժ, որ նշյան իսկ բարբարոսների մէջ հազիւթէ լուուած լինի. դոցա կենդանի-կենդանի մորթաղերծ արին. Այդ ապստամբութեան առաջնորդն, երեսի գոյնպիսի վիճակի ենթարկուելու երկիւղեց, սպանում է ինքն իրեն»: Տես հատ. I. մասն ա. էջ 100. Սայն հատորի մէջ հայերը յիշուած են նոյնպէս 101, 139, 145 և 147 էջերում. ապա հատ. I. մասն բ. էջ 191, 244 և 250 *).

*) Մեր պատմութեան այս շրջանին վերաբերեալ հատուածները Ռանկբէն բաղում է այն սեպագիր արձանադրութիւններից, որոնց բովանդակութիւնը հաղորդում էն Lenormant: Histoire ancienne de l'Orient և Maspero: Geschichte der morgenländischer Völker im Alterthum—übersetzt von Pietschmann.

Հասոր II. մասն ա.

Փիւնիկեան առաջին պատերազմի ժամանակներում՝ նշանաւոր դեր է խաղղում Եգիպտոսի Պաղպմէս ԱՅ Եւրեգիտէս *). Մերջին ժամանակներում գտնուեցաւ նորա շինած մի տաճարի աւերակները, որի պատերի վերայ նա, ըստ եգիպտական սովորութեան, նկարել էր տուել գերիների պատկերներն և արձանագրիլ այն նաշանգիների անունները, որոց նա տիրել էր. աչայս այս անուանց մէջ գտնվում են նաև Պարսկաստան և Հայաստան: Տես Էջ 280 նաև 284:

Հասոր II. մասն բ.

Մինչդեռ Լիսիաս—Lysias—Սելևկիոյ Տէրը պատերազմում է Հրէից դէմ, նորա տեղապահներն, որոնց թվում և Հայաստանինը, հրատարակում են իրենց անկախ իշխան: Տես Էջ 164.

Հրէից Սելքսանդր Եաննակօս կինն՝ 79 թ. նախ քան զՔրիստոս—ցանկանում է Հայկական պետութեան հետ, որ Սելևկեանների տեղն էր բռնել բարեկամական յարագերութիւն ակսել. այս յարագերութեան պատճառով ծագում են խռովութիւններ Հռովմայեցիների հետ, որոնք և առիթ են տալիս Պօնտեան պատերազմը Հայաստան տեղափոխելու: Տես Էջ 173:

«Լուկուլսո Միհրդատին յաղթելոց յետոյ կամենում է ասիական երկիրները գրաւել մեղմութեամբ և խելացիութեամբ, սակայն դորա դէմ զինվում է մի նոր թշնամի հայոց Տիգրան II-ի անձնաւորութեամբ, որ Միհրդատի փեսան էր. Հայաստանը պարսից և Աղեքսանդր Մեծի յաջորդների իշխանութեան ժամանակ պահպանել էր մի Հայտնի աստիճանի պետական ինքնուրզնութիւն, որ փոխուեցաւ քաղաքական անկախութեան, երբ Հռովմայեցիները տիրեցին Սնտիոքոսը. այդ անկախութիւնը աւելի ամրապնդուեցաւ Սելևկացիների հետ խիստ պատերազմներ մղելուց յետոյ. Այն ինչ Սելևկացիների պետութիւնը ոչնչանում էր, հայոց Տիգրանը Հիմնեց մի պետութիւն հին արևելեան օրինակով, որչափ որ այդ կարելի էր միացնել հելլենականութեան հետ. Նա նուածեց Սպիաբենէ, Միշագետքը և տիրեց Կապադովկիայի մեծ մասին և ապա դիմեց դէպ ասորական յառաջաւոր Ասիայ: Անտիոքեան, Փիւնիկեայի մեծ մասը, Պաղէմայիս ընկան

*) Այս Պաղպմէսոս վախճանուեցաւ 221 թ. նախ քան զՔրիստոս:

նորա ձեռքը. նա պատրաստվում էր հրեաստան մանելու, երբ Հռովմայեցիների յարձակումը հարկադրեց նորան Հյաստան վերագառնալ. Տիգրանը թշնամացաւ Լուկուլոսի հետ, վասն զի չկատարեց նորա պահանջն, այսինքն չյանձնեց նորա ձեռքը Միհրդատին, որ իւր մօտ էր գտնվում. Հռովմայեցին կամենում էր Միհրդատին յաղթանակով տանել Հռովմ. իսկ Տիգրանն, որի ամուսին Կլէօպատրան Միհրդատի գուստրն էր, չէր կարող անպատճել արեւելքան թագաւորութիւնը՝ իւր աներոշը մատնելով Հռովմայեցիներին, և մանաւանդ մի այնպիսի նպատակի համար, որ կարելի էր պարզ գուշակել:

Սյդ ժամանակ Տիգրանը գտնվում էր Ասորիքում և փարթամ կեանք լսրում իրեն արքայից-արքայ կոչելով չորս արքաներ ուղեկցում էին նորան ուղբով երբ նա ձիով էր գնում և կանգնում էին ձեռքերը ծոցերին, երբ նա իւր գահի վերայ նրատած հրամաններ էր արձակում. Քսան և հինգ տարի շարունակ նա մի ազատ խօսք չէր լսել. Եւ երբ մի երիտասարդ Հռովմայեցի, Ապահոս Կլաուգիոս, եկաւ նորա մօտ և յայտնեց յանուն Լուկուլոսի, որ նա կամ պէտք է Միհրդատին մատնէ, կամ թէ Հռովմայեցւոց յարձակման սպասէ՝ նորա դէմքի վերայ տեսնուեցաւ մի հարկադրուած ժպիտ. նա մի ընծայ տուեց գեսպանին և ասաց, որ ինքն ընդունում է պատերազմը. Տիգրանը ցայժմ չէր կամեցել տեսնել Միհրդատին, որովհետեւ դա ատելի էր դարձել նորա համար, սակայն այժմ մօտեցրեց նորան իւր մօտ.

Հռովմում ընդդիմագրում էին Լուկուլոսի ձեւնարկութեան, վասն զի չէին կամենում մի արդէն վերջացրած արեւելեան պատերազմից յետոյ՝ կրկին և երկրորդը սկսել. զօլքերը նզնպէս համաձայն չէին. սակայն չնայելով սորան, սկզբում գործը յաջող գնաց:

Հռովմայեցիք անցան Եփրատը յաջող ժամանակ, ջարդեցին Հայոց առանձին-առանձին խմբերն, որոնցից մէկի մէջ էր գտրնվում նզն իսկ ինքը Տիգրանը և պաշարեցին նորա մայրաքաղաք Տիգրանակելտը—մի բարձրավանդակի վերայ, որ Միջագետքին պէտք է վերագրել *).

*) Տիգրանակերտի տեղն այժմ վիճելի է. հին կարծիքները պարզում է Ritter Erdkunde von Asien Bd. VII. I Abth. Th. 10. S. 87. II. Abth. 11. S. 104. այնպէս Մոմզէնի և Կիպերտի բացատրութիւնները—Hermes Bd. IX. S. 128—149.

Տիգրանակերտը պաշարումից աղասելու համար ժողովուեցան բոլոր դրացի ազգերը՝ Մեդացիք, Աղիարենացիք, Ալբանացիք, Իրերացիք, Ասորիները ևայլն. Տիգրանի զօրքը բաղկացած էր 170,000 հետևուազներից և 50,000 այլուձից. Երբ Տիգրանը տեսնում է Հռովմայեցիների սակաւութիւնը՝ բացագանչում է. «Երբ գեսապաներ շատ են գրքա, իր զինուորներ՝ քիչ». սակայն այդ փոքր թւով ևս Հռովմայեցիները նորան գերզանցեցին. Լուկուլլոսը տիրեց մի բարձրութիւն, որի վեշերի վերայ տարածուեցան Տիգրանի զօրքերը. Այդ օրուայ համար Լուկուլլոսին զգուշացրել էին, իր մի դժբաղդ օրից, որին նա մեծաւ ինքնամիրութեամբ պատասխանում է, որ ինքն այդ օրը բարդաւոր կրդարձնենէ. Երբ նա վերցոյիշեալ բարձրութիւնն իւր ձեռքն առաւ, գոչեց զինուորներին, որ յաղթանակն իրենցն է. Տիգրանի զօրքն երկու կողմից յարձակման ենթարկուելով՝ խառնուեցաւ և յաղթուեցաւ. Էստ Հռովմայեցիների վկայութեան, այդ օրն իրենք միայն հինգ սպանուած ունեցան, այն ինչ թշնամին 10,000 միայն հետևակ զինուորներից. այս ճակատամարտը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 6-ին 69 թ. նախ քան զՔրիստոս. Տիգրանակերտը ընկաւ Լուկուլլոսի ձեռքը. դորան նպաստեց այն հանգամանքը, որ տեղացի յոյները Հռովմայեցւոց կողմն անցան. Լուկուլլոս թշլ տուեց, որ քաղաքը յափշտակեն և կողոպտեն. սակայն օտարները տարուեցան իրենց հայրենիքը.

Տիգրանը կանչել էր տուել մի թատրոնի բացման համար յայն գերասաններ. սոքա պէտք է այժմ փառաբանէին. Լուկուլլոսի յաղթութիւնը:

Միհրդատի առաջուայ և Տիգրանի այժմեան յաղթուիլը յառաջ է գալիս այն հանգամանքից, որ դոքա երկուան ևս երևակայում էին, որ յունական տարրի հետ կարող էին միհանալ. սակայն հինց ալդ էր զոցա դժբաղդութիւնը: Այն ներքին կապն, որ յոյներին միացնում էր Հռովմայեցիների հետ, առաւել զործոն էր քան այն կապը, որ յոյներին միացնում էր ալդ օտար, կիսաբրբարոս թագաւորութեանց հետ: Այս պետութեանց իսկական ոյժն միայն իրենց նահագների զօրութեանց մէջ էր» *): Տես. էջ 178—181.

«Սակայն Լուկուլլոսի յաղթութիւնից յետոյ գեռ ևս Հա-

*). Այս տողերը մենք ենք դիտմամբ գծում, վասն զի ալդ խօսքերը պէտք է իրաքանչիւր հայ պատմաբանին մտածելու առիթ տան:

յաստանը չընկճուեցաւ. Ասորիքն գեռ. ևս հայոց ձեռքին էր: Պարսից Փրաստէս III արքան յարձակուելով Փռքը հայաստանի վերայ արգելում է Տիգրանին—որ կրկին ժողովել էր խր ուժեւրը—օգնութիւն հասցնել Միհրդատին», Տես. էջ 190:

«Երբ Միհրդատ յաղթվում է, Պոմպէոս գիմում է հայաստան Տիգրանի գէմ, որ մի և նոյն ժամանակ պատերազմում էր Պարթևաց Փրաստէս արքայի գէմ: Փրաստէսի հետ միացել էր Տիգրանի որդի Տիգրանէս կրտսերը: Այս խառը դրութեան ժամանակ Պոմպէոս մտնում է հայաստան, սակայն ոչ իր թրշնամի, այլ իր հաշտարար դատաւոր: Կան զանազան զրայցներ, որոնք ցոյց են տալիս Տիգրանի հպատակում Պոմպէոսին, զլիաւոր հանգամանքը կարող է այն լինել, որ Տիգրանը տեսնելով որ աշխարհի վիճակը արդէն Պոմպէոսի ձեռքն է, հպատակում է է նորան: իսկ Պոմպէոսը հասկացրեց նորան, որ գորանով նա ոչինչ չէ կորցնում, վասն զի ձեռք է բերում հոռվմայեցւոց բարեկամութիւնը: Տիգրանը ստիպուած էր յետ դարձնել այն լուսոր երկները, որ նա նուածել էր Սելլկացիների հետ պատերազմելով՝ սակայն հայաստանը մնաց իւր ձեռքը: Տիգրանի որդին, որ ձեռք բերեց հայաստանի մի փոքրիկ մասը, ձեռբակալուեցաւ հոռվմայեցիներից, վասն զի իւր հօր խոստացած գրամները հոռվմայեցիներին յանձնելիս գժուարութեանց առիթ տուեց:

Հայաստանը արդէն թից մէ շատ բնդանուր պատմումեան շրրջանն էր մտել. Արտաշատը բնակեցրած էր Փռքը Ասիայի յցներով և, ինչպէս ասում են, հաննիրալի յատակագծով ամրացրած: Այն կողմերը, որ Յունաց և Պարսից մէջ ու յետոյ Յունա-արեւելեան պետութեան և հոռվմայեցիների հետ վիճելի էր, այժմեանից կազմեցին հոռվմայեցիների արևելեան նահանգների հիմնաբարը, Պոմպէոսին կարող ենք այն մարդոց թուի մէջ հաշուել որոնք ընդհանուր աշխարհի շարժումները այնպիսի երկըրներ մոցրին, որնք մինչև այդ ժամանակ գորանից անմատչելի էին մնացել»: Տես. էջ 193—194:

«Անսոնիուս գերում է հայոց արքային—34 թ. նախ քան զբիստոս—ձգում է նորան արծաթեայ շղթաների մէջ և ի յիշատակ այդ յաղթութեան կտրել է տալիս մի գրամ, որի վերայ գրուած է «Յաղթուած հայաստան»: Եւ ապա իւր որդիներից մէկին հրատարակում է արքայ հայոց»: Տես էջ 381—383:

«Եզիփտոսի թագուհի Կլէօպատրան ուղարկում է Ատրպա-

տականի իշխանին Հայոց արքայի գլուխը իր նուէր, վասն զի արքան այդ իշխանի թշնամին էր»։ Տես էջ 388։

Հատոր III. մասն ա.

Խօսելով կայսր Ներոնի իւր մօր հետ ունեցած՝ յարաբերութեան մասին, յիշում է, որ իւր գաստիարակ և նախարար Սենեկան արգելում է Ագրիպպային—կայսեր մայրը—կայսեր կողքին նստելու, երբ Հայոց դևսպանը հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ կայսրից օգնութիւն պէտք է ինդրէր ի պաշտպանութիւն իւր արքայի։ Տես էջ 110։

Արեւելքում Ներոն կայսրը Արշակունիներից մէկին ճանաչում է իր արքայ Հայոց, որ և պատճառ եղաւ Պարթևների գերազանցութեան այս երկրում, որին վերջ էր ուզում գնել Տրայեանոս կայսրը, ուստի և մեծ զօրութեամբ դիմեց Հայաստան։ Տես էջ 277։

«Պարթամազիրիս՝ Խօսրովի եղբօրորդին, որ կարգուել էր վերջինից արքայ Հայոց, միտք չունենալով իւր թագի ինդիրը մահուան և կեանքի ինդիր գարձնել և պաշտպանուել հոռմայեցիների դէմ, գալիս է այն առաջին Հայկական քաղաքը, որ Տրայեանի ձեռքն էր ընկել և իւր թագը զօրաց ժողովի ներկայութեամբ կայսր առաջն է դնում, յուսալով որ կայսրը կը կին յետ կըսոյ այդ իրեն։ Սակայն Հռովմայեցւոց լէգեսները այդպէս չէին հասկանում Արշակունու խոնարհումը, նորա զինուրական եղանակով ողջունում են այդ իր նշան կատարեալ Հպատակութեան։ Պարթամազիրիս նեղացած այս աղաղակից, սակայն առանց երկիւղի պահանջում է առանձին խօսակցութիւն կայսեր հետ. սակայն այդ խօսակցութիւնը ոչինչ հետևանք չունեցաւ, վասն զի կայսրը Հակառակ զօրաց կամքի ոչինչ չէր կարող անել։ Տրայեան վարդում է Հայաստանի հետ իր երբեմն Հպատակ և այժմ կրկին ընկճուած երկիր հետ» *), Տես եջ 278։

Խօսելով Հադրիան կայսեր ժամանակակից դէպքերի մամին՝ շարունակում է Ռանքէ. «Յառաջաւոր Սսիայի տիրապետութեան համար մեծ նշանակութիւն ունէր, որ Հայաստանը Հռով-

*) Այս տեղ Ռանքէն նկատողութեան մէջ յիշում է, որ ինքը հետուում է Դիօս պատմածին. Ֆրոնտորի պատմութիւնը առաւել անլազող է Տրայեանի համար. Trajano caedes Parthamasiri regis supplicis haud satis excusata.

մայեցիներից կախումն ունէր. Հռովմայեցիք այդ բանը գլուխ բերին նորանով, որ հայաստանը յանձնեցին Արշակունեաց ցեղեց ծագող մի արքային. Վերջին Միջագետում պահպանուեցաւ ասորա-յունական տարրերից բաղկացած Եղեսիայի Արքարների փոքրիկ պետութիւնն. Հագրիան կայսեր ժամանակ Եփրատ գետը կազմում էր Հռովմէական կայսրութեան արևելեան սահմանը»:

Տես էջ 287:

Խօսելով Մարկ Առուրելի մասին, շարունակում է Ռանքէն. «Հռովմայեցիների Պարթևների դէմ այդպէս յաճախ ձեռնարկած, սակայն միշտ ընդհատուած և երբէք մինչեւ վերջը չհասցրած պատերազմը, որից կախուած էր Ասիայի ամրողջ ապագան, կրկին վերանորոգուեցաւ. Պարթևները Հագրիան կայսեր զիջողութիւններով չքառականանալով, պահանջում էին Հայաստանը կրկին իրենց անմիջական իշխանութեան ներքոյ առնել. այդ ժամանակ թէեւ Հայաստանում մի Արշակունի էր իշխում, սակայն երկիրը կախումն ունէր Հռովմայեցիներից... Վօլոգեղէս Արքան անսպասելի կերպիւ յարձակուելով Հայաստանի վերայ, արտաքսում է Հայոց արքային, յաղթում է իրեն դէմ ելնող Լէօգոնին և մտնում Ասորիք, ուր նզնակէս յաջողութիւն է ունենում»։ Տես էջ 337—338։

«Սակայն երբ կուցիուս Վերուս ուղարկվում է Արևելք, նորա զօրավարներից մէկը Ստացիուս Պրիսկուս մտնելով Հայաստան՝ յաղթող է Հանդիսանում Պարթևների վտանգաւոր զօրքերի վերայ. Հռովմայեցիները կրկին գրաւում են կորցրած քաղաքները և արտաքսուած Հայոց արքան կրկին վերադառնում է Հայաստան» *): Տես էջ 339։

«Սակայն Պարթևները կրկին Հայաստան են մտնում» — էջ 368. — Կարճ ժամանակից յետոյ Կարակալլապէս նուածում է Հայաստանը — էջ 376. — Այս ևս երկար տեղութիւն չէ ունենում և Մակրինուս յաղթուելով Պարթևներից՝ Հայաստանը կրկին Պարթևների ձեռքն է ընկնում»։ Տես էջ 379։

Պատմելով Դիոկղետիանոսի մասին՝ շարունակում է Ռանքէն. «Եատ հաւանական է, եթէ ոչ անկասկած, որ Դիոկղե-

*) 164 Թուին կտրած մի դրամի վերայ ներկայացուած է այն նդեռութիւնը՝ թէ ինչպէս Վերուս իրենից ստորև կանգնած արքայի գլխին թագ է դնում. դրամի վերայ գրուած է «Rex Armeniis Datus».

տիանոսին յաջողվում է մի երիտասարդ Արշակունի, Տիրիդատէս անունով՝ կարգել իշխան Հայաստանի» *), Տես էջ 476:

«Պարսից Նարսէս արքան յաղթուելով Դիոկղետիանոսից՝ Հայաստանը թողնում է կրկին հռովմայեցւոց ձեռքը»; Տես էջ 485:

Եւ այսպէս երկար գարեր շարունակ՝ Հայաստանը երկու երեխանների ձեռքն ընկած գնտակի նման մէկի ձեռքից ազատուելով՝ միւսի ճանկըն է ընկնում։ սակայն թողնենք այս գարաշրջանը և դիմենք մի այլ ժամանակաշրջանին, գուցէ այն տեղ մի մսիթարական բան գտնենք:

Հատոր V. մասն ա.

«Փոկաս կայսեր ժամանակ—Նարսէս զօրավարի մահից յետոյ պարսիկները առնում են հռովմայեցիների ձեռքից Պարսկա-Հայաստանը—618թ.»—էջ 24:

«Սակայն շուտով՝ Հերակլէս կայսրը մտնելով Հայաստան զարդում է պարսից զօրքը—622թ.—էջ 32:

«Հերակլէս կայսրը տեսակցում է Հայաց եկեղեցւոյ պետի հետ կրօնական Հանգամանքների առթիւ. էջ 133.

«Կոնսուանս Ա-ի ժամանակ Հայաստանում ապստամիութիւն է ծագում. էջ 156 և շուտով՝ Արարացիք մտնում են Հայաստան. էջ 157:

«Իւստինեանի ժամանակ Հայաստանը հռովմայեցւոց—Բիւզանդացւոց—ձեռքն է ընկնում—էջ 188—սակայն շուտով անցնում է Արարացւոց ձեռքը:

«Ապեմարտս Տիբերուս կայսրը կրկին գրաւում է Հայաստանը—698թ. էջ 193:

«Անաստոլիայի և Հայաստանի կառավարիչները լէօ և Արտարազդուս չեն հպատակում թէոդոս կայսեր. էջ 234:

«Լէօ Իզաւարացին կայսր օծուելով՝ իւր աջակից է ունենում Արտարազդուսին և իւր աղջիկը նորան կնութեան է տալով՝ փեսայացնում է և բարձր պաշտօն տալիս արքունիքում. էջ 239:

Արարացիք կրկին տիրում են Հայաստանը—8-րդ դարի առաջին կիսում—էջ 246:

*) Այս տեղ նկատողութեան մէջ Ծանքէն լիշում է Խորովի պատմութիւնը ըստ հայկական մատենադրութեան:

Հատոր V. մասն բ.

«Լէօ կայսեր մաշից յետոյ Արտաբազուս գրաւում է Բիւզանդիոյ արքայական թագը, լէօի որդի Կոստանդին ընդդիմադրում է. Արտաբազուսի որդին իւր Հայկական զօրքով աշխատում է միանալ հօր Հետ, սակայն յառաջ քան այդ միութիւնը տեղի ունենար, Արտաբազուս յաղթվում է Կոնստանդինից և Պոլիս փախչում. Հայոց զօրքը նոյնպէս յաղթվում է—743 թ. օգոստոսին, Արտաբազուսի որդին նորից դառնում է Հայաստան, նոր զօրք կազմում և գալիս, սակայն կրկին յաղթվում է Նիկոմեդիայի մօտ և անձամբ գերի ընկնում։

Կոնստանդինոս սպանվում է և Կ. Պօլսի բնակիչք ժողովուելով եկեղեցու մէջ Արտաբազուսին կայսր են հրատարակում, որ կրկին վերանորոգում է պատկերաց երկրպագութիւնը և իւր անդրանիկ որդուն Նիկիփորոսին կայսր պահում. —Դրամների վերայ Արտաբազուս երրէք մենակ չէ երեսում. զրամի միւս երեսի վերայ փորագրուած է Նիկիփորոսի կամ Կոնստանդինոսի պատկերը. —Կոնստանդին Կոպրոնիմուս գրաւելով Կ. Պօլսը հրամայում է Արտաբազուսին և իւր աթոռակից որդուն ուրացնել. տես էջ 80—82։

«Կոնստանդին Կոպրոնիմուսի, որ Լէօ Իղաւրացու որդին էր—ժամանակ Փաքր Հայաստանը աղատվում է Արաբացւոց ձեռքից և հայ Փուշանը Բիւզանդացւոց օգնութեամբ քշում է Արաբացիներին Արզումից. —Հստ Թէոփանոս պատմագրի Կոստանդին վերցնում է 751—752 թ. Մալաթեա և Արզում և 755—756 թ. այս քաղաքների բնակիչները—Հայեր և ասորիներ—տեղափոխում են Թրակեայ. Ժամանակակից Ղեռնդ պատմագիրը նոյնպէս յեշում է այս գէպը. տես էջ 84։

«Կոնստանդին Կոպրոնիմուս—որ կոչվում է նոյնպէս Իկոնոմախուս—ո՛չ պակաս նշանաւոր Հանդիսացաւ քան իւր Հայրընա Հաստատեց իւր ընտանեաց ժառանգական իրաւունքը ընդդէմ իւր հօր բարեկամ Հայ Արտաբազուսի. սա ընկճեց նոյնպէս Հայաստանը. տես էջ 87։

«Կոնստանդին ամուսնացած էր Մարիամ՝ անունով մի Հայկական իշխանի դստեր Հետ—788 թ., Կոնստանդինի մայր իրենէն կամենալով միայնակ իշխել՝ հրամայում է բոլոր զօրքերին երդուել, որ իւր կենդանութեան ժամանակ Կոնստանդինին կայսր չձանաչեն. Այս երգման ձևին հակառակում են Հայոց

զօրքերը և այլ զօրաբաժիններն ևս հետեւով հայոց զօրքի օրինակին՝ ընդդիմագրում են այս հրամանին, և ընդհանուր զօրաժողովի մէջ Կոնստանդին հրատարակվում է կայսր—790 թ.—Ժամանակի զօրեղ մարդիկը Ստավրացիուս և Էմիուս—երկուսն ևս ներքիններ, արտօրվում են հայաստան. սակայն Կոնստանդին իրեն բաւականին զօրեղ չպալով՝ կրկին ճանաչում է իւր մօրն իրը կայսրուհի. ժողովուրդը շնորհաւորում է կայսրուհուն, սակայն այն ձեռով ինչ ձեռով որ պահանջել էին հայերը. տես էջ 94—96:

«Կոնստանդին կայսրը կանչել է տալիս Բիւզանդիոն այն Ալեքսիուսին, որ համաձայնել էր հայոց զօրքերի հետ ընդգէմ կայսրուհու. հայերը կրկին պահանջում են նորան. բայց կայսրը լսելով որ իբր թէ հայերը մոտագիր են նորան — Ալեքսիուսին կայսր հրատարակել հրամայում է բանոտարկել նորան, և ապա սպանել է տալիս. հայերը լուր առնելով որ Ալեքսիուսին կուրացիել են, ապստամբվում են—792 թ. նոյեմբերին.

793 թ. զատկի տօնից յետոյ, ապրիլի 7-ին Կոնստանդին արշաւում է հայոց դէմ: Նա ամբողջ կայսրութեան մէջ մեծ զօրք է ժողովրում և մի բաց գաշտային ճակատամարտի մէջ յաղթում է հայերին 793 թ. մայիսի 23-ին: Մատնութիւնները այս տեղ ևս իրենց ազգեցութիւնը ունեցան, վասն զի Կոնստանդին ծայերի մէջ ևս իւր բարեկամներն ուներ: 795 թ. Կոնստանդինը բաժանվում է իւր հայ ամուսնուց—Մարիամից և ուղարկելով նորան մի վանք, ամուսնանում է թէօգոտա անունով մի պալատական ծառայողի կնոջ հետո». տես էջ 97—99:

Բաւականանում ենք այս չափով և աւելի հետաքրքրուողին ուղարկում անձամբ թերթելու և բանալու հետեւեալ էջերը.

I հատոր, 1 մաս, էջ՝ 97, 100, 101, 139, 145, 147.

I հատոր, 2 մաս, էջ՝ 191, 244, 250.

II հատոր, 1 մաս, էջ՝ 280, 284

II հատոր, 2 մաս, էջ՝ 156, 164, 173, 178 — 181, 187, 188, 190, 193—196, 210, 228, 255, 381, 382, 383, 388.

III հատոր, 1 մաս, էջ՝ 45, 110, 277, 278, 286, 287 338, 339, 376, 379, 476, 484, 485.

III հատոր, 2 մասը պարունակում է միայն աղքիւդների քըն-նութիւնը:

IV հատոր, 1 մաս, էջ՝ 32, 92, 97, 100, 101, 115, 131, 152, 155, 158.

IV հատոր, 2 մաս, Էջ՝ 12, 46, 48, 63, 81, 107, 130, 158, 286.

V հատոր, 1 մաս, Էջ՝ 13, 14, 24, 32, 120, 125, 133, 134, 156, 157, 176, 188, 189, 193, 194, 224, 233, 234, 239, 246.

V հատոր, 2 մաս, Էջ՝ 80, 81, 84, 87, 94—99.

VI հատոր, 1 մաս, Էջ՝ 313, 314.


VI հատոր, 2 մաս, Էջ՝ 254.

Այս վեց հատորները կարողացաւ միայն հրատարակել մեծ պատմաբանը իւր կենդանութեան ժամանակ։ Նորա մահից յետոյ լցու տեսան VII հատորը Alfred Dove-ի հրատարակութեամբ 1886 թ.։ Այս հատորը, ինչպէս երեսում է գրքի յառաջաբանից, Ռանքեն պատրաստ է թողել պարունակում է. «Höhe und Niedergang des deutschen Kaiserthums. Die Hierarchie unter Gregor VII».

Ռանքեի թողած թղթերից և գասախօսութեանց տետրակներից վերցիշեալ Dove, G. Winter և Th. Wiedemann հրատարակեցին 1887 թ. ընդհանուր պատմութեան շարունակութիւնը, որ է VIII հատոր և պարունակում է խաչակրաց արշաւանքը. «Kreuzzüge und päpstliche Weltherschaff».—XII և XIII դար։

L O R T.

Թիֆլիս.



ՇԱՀԻՐ ԽԱԶԱՏՐԻ ԵՐԳԵՐԻՑ

(ՀԱՂՈՐԴԵՑ ՕՐ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ.)

I.

Ն Կ Ա Տ Ա Ղ Ա Ւ Թ Ի Ւ Ն.

Ասում եմ և կրթում եմ՝
Պէտք ա չետևած, չետևած,
Աղաչում եմ, խնդրում եմ,
Պէտք ա չետևած, չետևած:

Ամենայն ազգ կը թիւռում ա,
Կեղտ ու մուրից վրօկը ռում ա,
Աշխատում ա, չետևում ա.
Պէտք ա չետևած, չետևած:

Չի մընում ռշնչ մի վարդի,
Փոխլում ա, մըտնում ջոկ կարգի,
Այս է օրէնքըն աշխարհքի,
Պէտք ա չետևած, չետևած:

Նոյնպէս էլ մենք դուրս ենք եկել,
Դէպի լաւից վասն ենք ընկել,
Պատճառ որ ծուռն ենք ըմբընել,
Պէտք ա չետևած, չետևած:

Այդ վատըն չեռացընելու,
Լաւըն մեզի իւրացնելու
Սուանց մի ժամ կորցընելու.
Պէտք ա հետեած, չետեած:

Վարուց ապականութիւնը
Եւ չափազանց փափկութիւնը
Կըքանդի իսպառ մեր տունը.
Պէտք ա հետեած, չետեած:

Ահա արդէն ըսկըսել ա,
Համարեա կէսին չասել ա,
Ով սուր աշքի ունի՝ տեսել ա.
Պէտք ա հետեած, չետեած:

Աղջկերքը՝ որ մնում են տանը,
Պատճառըն է չէնց պրիդանը,
Հեռացընելու այդ բանը.
Պէտք ա հետեած, չետեած:

Ամուսնութիւնը իլի սրտից
Եւ սուրբ սիրոյ շարժառիթից,
Ոչ նիւթական տեսակէտից.
Պէտք ա հետեած, չետեած:

Ոչ տղէն պըտոի փողի քըսակ,
Ոչ աղջիկըն փայլուն կոճակ,
Ճանաչեն համեստ աշխատանք.
Պէտք ա հետեած, չետեած:

Պատճառ գորան փընտըռելով,
Մընում են չէնց պառաւելով,
Գընում անշահ թառամելով.
Պէտք ա հետեած, չետեած:

Եթէ այդպէս շարունակենք,
Շատ չի քաշի որ կըհանգենք,
Մինչև հանգելը մեղ վրկինք.
Պէտք ա հետեած, հետեած:

Այս է ողջից գըլխաւորը,
Եւ ամենից հարկաւորը,
Թէ չէ կորած է բոլորը.
Պէտք ա հետեած, հետեած:

Երբ ամուսնութիւն է սակաւ,
Ամենայն ինչ էլ վերջացաւ,
Մըտածելով այդ կէտը լաւ,
Պէտք ա հետեած, հետեած:

Ուսումնականք մեր հարազատ
Ուշ գարձըրած մըտքով հաստատ
Զբաղուեն այդ հարցովը շատ.
Պէտք ա հետեած, հետեած:

Քան ըզբաղում են վէճերով
Մին մինի միսը կըոծելով
Որ ըզբաղուեն այս հարցերով.
Պէտք ա հետեած, հետեած:

Ունենալով այդպէս ցաւեր,
Էլ մեղ ինչ կվայելի վէճեր,
Զըլվատնեն ի զուր տեղ ժամեր.
Պէտք ա հետեած, հետեած:


Թողնեն վերացական վէպերն,
Նրանով չեն լաւանում վէրքերն,
Ճանաչեն մեր շատ ցաւերըն.
Պէտք ա հետեած, հետեած:

Մեր կեանքը լաւ հարցասիրեն,
Նորա վերայ ճառեր զըրեն,
Սուրբ կը շըռեն և նուրբ ընտրեն,
Պէտք ա հետեւած, հետեւած:

Լըկտի պիեսէք չթարգմանեն,
Մեղ առաւել չապականեն,
Որըն լաւ է, այն էլ անեն.
Պէտք ա հետեւած, հետեւած:

Սրանումն է հենց մեր պակասը,
Մեծ սխալը և մեծ վեասը,
Սթափուի ուսումնական դասը,
Պէտք ա հետեւած, հետեւած:

Խաչառուր, քեզ ընկեր կանչի,
Մերթ իրնդըրիր, մերթ աղաչի,
Հիմայ էն ժամանակը չի.
Պէտք ա հետեւած, հետեւած.



II.

Տեսէք, որբան ենք մենք երջանիկ,
Որ այս են ասում մեր կնանիք:

Ներկայ դարուս ազատ հոգով
Մենք զարգացեալ կանայք ենք էլ,
Լուսաւորուած ամեն կողմով
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Կըթթուել էլ ենք, առել ուսում,
Առաջ գնացել ամեն մասում,
Ինչ ուզում ենք այն ըսկըսում,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Դուրս ենք եկել ստրկութիւնից,
Մարդկանց կոպիտ բըռնութիւնից,
Եւ պըթել ենք նեղութիւնից,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Էլ չենք գերին մեր մարդկերանց,
Արել ենք մենք գերի նըռանց.
Ազատամիտ, լուսաւորուած
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Չենք շետեռում մեր նախամօր,
Մաղենք ալուր, հունցենք խըմոր,
Բան չենք անի այդպէս ըստոր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Եւ կամ որ մենք բոնենք աղաջուր,
Դընենք թըթու, եփենք ապուր,
Էտոնք ինչ են՝ միայն կեղտ ու մուր,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Մերել մածոն, հանել կարագ,
Չունինք մեզի էլ ժամանակ,
Վատնենք այդպէս տեղեր դատարկ,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Յերկար ենք այդպէս բաներէն.
Սնենք էլ չի զայ մեր ձեռէն,
Սնելու պարագ էլ չկայ մեր վրէն,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Էն չին կանայք էին ըստուկ,
Տանջանաց մէջ մաշվում յատուկ,
Մեր գործըն ա ապել փափուկ,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Չեռք չենք ձբգում տան մի բանին,
Մել համար ողջ ծառայք կ'անեն,
Թըշնամի մարդկանց գրպանին,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Փոյթ չէ մեզի մեր զաւակը,
Թո՛ղ կըթէ օտար դպիեակը,
Միայն լաւ անցնի մեր կեանքը,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Մանըր մունըր այդպէս գործեր
Չեն շարժում ցանկութիւնը մեր.
Ունինք իդեալ բարձրը մըպեր,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Գընալ միշտ բալ և մասկարագ,
Նստել գոռող, ձեմել հըպարտ,
Ճաշել անուշ, ուտել պարարտ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Զենք աշխատող մենք, այլ մնխող,
Նոր ձեերին ճիշտ հետեղող.
Հինըն ատող, միշտ նոր հագնող,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Քաղիացիք մեզ տամ են տարագ,
Հագնում ենք իսկ տեղբատել սազ,
Նրանցից աւել ոչ թէ պակաս,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Կարելն անփոս չգիտենք իսկի,
Տալիս ենք մենք միշտ մադիսոկի.
Որքան ապա դուրս գայ ոսկի,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այդ մասին փող չենք խընայում,
Ոչ էլ մարդկանց կալին նայում,
Առատութեամբ վարձ ընծայում,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Մարդիկն են մեզ հիմի գերի,
Նրանք են Ճնշվում տակ հոգսերի,
Դառել իսաղալին մեր ձեռի,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այս բանումը մեծ լաւութիւն
Արաւ մեզի մեր մամուլը,
Որ տըւաւ այդ ուղղութիւնը,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Նրա սերմանած սերմերն կանուխ
Աճան առատ, տըւան պլատուղ,
Դառանկ թեթև, եղանկ կակուղ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Չենք նըստում՝ մէկ օր մեր տանը,
Հիւր գնալ դալն է մեր բանը,
Փառաւորուի հայաստանը,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Երջանիկ ա շատ ազգն հայոց,
Կ'առողջանայ ողջ վլրքն ու խոց,
Երևում է մեր ամեն գործոց,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Խաչատուր, դու շատ մի՛ խօսիր,
Ակա՞նչ արա և մեղ լըսիր.
Քեզ էլ շուտով կանենք եսիր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:



III.

Ուսումնաւարտ օրիորդ ենք,
Այսուհետև մաշուել պիտինք:

Առանք ուսում, կրթուեցինք, զարգացանք.
Որտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք.
Դորա վերջն ի՞նչ կըլինի, չիմացանք.
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Զարգացումն տւառ մեղի նուրբ ճաշակ,
Սովորցրաւ կեանքի անուշ եղանակ.
Որի համար չենք գտնում մենք շրջանակ.
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Մանաւանդ ուսումն էլ առանք թերատ,
Ոչ հնիցըն, ոչ նորից իլանք հասուատ,
Անցեալից էլ վիճակներս եղան վատ.
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Պէտք էր կրթել տղերք, յետոյ աղջկերք,
Կրթան աղջկերք դեռ չըկրթած տղերք,
Շուարուել ենք, մնացել ենք հիմի մենք
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Մեր ծընողքը այդ կէտն չմտածան,
Երկի շատ լաւ է, հէնց իմացան,
Մեղ համար վշտերի աղբիւր լացան,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Մեր ժողովրդի մեծ մասն չարչի է,
Չարչին կրթեալ աղջիկ ի՞նչին է,
Եւ մեծ հարցն էլ հիմի դրա մէջն է,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Թէ կը կապենք նրանց հետն մեղ տարած,
Էն ժամանակ կեանք բառը կորաւ, զնաց,
Նրանք մեղի չեն հասկանայ, մենք նրանց,—
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Մեր մայրերն մեղնից էին բախտաւոր,
Անկիրմ անկիրմի գնում էին, թեոր
Մենք որ կրթուանք, իլանք փոքր ինչ լուսաւոր,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:

Կրթուած աղջիկը կուղի տղայ կրթեալ
Պէսք էր այդ բանը սկըբիցն իմանալ,
Տէր հայերն բոնան այդպէս գործ սիսալ,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք ի՞նչ անենք,

Հայը հօրը ա գործէ գործն խորհելով,
Կուրօքն արել ա հետևելով,
Էնդուր համար մնացել ենք ողբալով,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք,

Մեր մամուլն չի զբաղվում այդ հարցով
Պարապած է նա էլ իր վէճերով
Իսկ մենք տկար, և մեր այդ թոյլ ուժերով,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք,

Լաւն էն ա գնանք մօտ խաչատուրի,
Կարելի է այդ հարցը նա վճոի,
Յանձնենք ինչպէս ուղում է որ գրի.
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք,

Խաչատուրն ինչ վճիռ տայ այդ հարցին,
Անչնար է ճար անել էլ անցածին,
Կենդանութիւն տալ չիլ մեռածին,
Ո՞րտեղ գնանք, ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք:



ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Ս Օ Ս Ե Կ Ա Ր Դ Ի Թ Ե Ը *

Ա. Է. Պ

ՊԵՐՃ ՊՌՈՇԵԱՆՑԻ.

...Գինի խմելու ժամանակ ամեն տեղ գործ են ածում
և շատ անգամ էլ որպէս եախչի եօլ**), որ միամտաբար թարգ-
մանելով «բարի ճանապարհ», կարծումն թէ գինուն են մաղ-
թում պյտ բարի ճանապարհ դէպի փորը: Բայց մենք դառնակի դէպի
Պ. Պոշեանցի գործը:

*) Սրտի բերկրութեամբ գետեղելով «Հանդիտում» հանգուցեալ
Միքայէլ Նալբանդեանի այս աշխատութիւնը, որ համարեա կորած էր
համարվում, պէտք է աւելացնենք, որ սա յօդուածի ամբողջութիւնը չէ
կազմում, այլ միայն մի կտորը: Մեզ հասած տեսրակի մի մասը պա-
կատում է, այն է՝ սկսում է 27-դ էջից և վերջանում 42-դով: Տպա-
գրելով այս հատուածը, մենք վատահանում ենք յուսալ, որ մեծ հրապա-
րակախօսի և մատենագրի այս տողերն էլ կրվակելեն արժանի ուշադրու-
թիւն: Հետեւալ անգամ մենք կըսկսենք տպագրել նոյն հեղինակի մի
ուրիշ և ընդարձակ յօդուածը, որ կրում է հետեւալ վերնագիրը. «Յա-
ղազ հայկական դպրութեան ձառ Միք. Նալբանդեան»:

Ինչ վերաբերում է բանաստեղծութիւններին, որոնց մի մասը II
գրքում գետեղեցինք, մի մասը այժմ, իսկ մնացեալը IV գրքում կը-
լինի, պէտք է ասած, որ ղոցանից «Թարնան մուտը», որքան մեզ
յալտնի է, աւելի փոփոխուած կերպով տպագրուած է հանգ. Մ. Մի-
անսարեանի «Քնար Հայկականում»: — . U. R.

**) Պ. Արովեանցը ասումէ. (Վէրը Հայաստ. էր. 92) «Ազգին

Ֆաթալիզմի վկայ խօսելով, ազգային աւանդութեանց մէջ մտանք, այն տեղեց էլ ծանօթութեան մէջ, այնպէս որ լուն վիպասանութեան վերաբերեալ նկատողութիւնքը ընդհատվեցան: Կը ներեն մեզ մեր ընթերցողքը և մեզ այս անկարգութիւնքը վկայ ենք դնում այն բանին, թէ մտել ենք քննութեան մէջ առանց ծածուկ մաքերի, այլ պարզութեամբ, և խօսումնք ուղղ զակի մեր սրտից, որ շատ անգամ չէ ենթարկվում սառը կանոների, Բայց կարգից գուրս գալը գուրս գալ է, գոնէ ծանօթութեանց հետ մեր հաշիւը վերջացնենք ու այնպէս դառնանք դեպի վիպասանութեան բովանդակութիւնը:

Ծանօթութեանց մէջ այօլ բառը բացայայտված է կոտ, կամ կօպի, կամ կօլոտ: Խոստովանումնք որ այս բացայայտիչներն նոյնպէս անհասկանալի են ինչպէս բացայայտեալ պօլը. և այս ոչ միայն ընդհանուրին անհասկանալի, այլ և մեզ իսկ, մինչ փաքր ի շատէ հայերէն սորված ենք, ոչ միայն հին լեզուն այլ և նորը, որքան մեզ կարելի է եղել և մի քանի էլ գաւառական բարբառներ, Այսպիսի բառերը աւելի լաւ է մի քանի խօսքով բացայայտել, քան թէ տեղական մի պյլ բառով, ինչպէս շուշտակ, բաշորթիկ, ճլպինդ և չալ-օխամը կամ չալ-շխամը բառերը բացատրված են: Այս բառերից բաշորթիկը թուրքի բառ է երեւում, բաղկացած բաշ-զլուխ և էօրթմէք-ծածկել հովանացնել բայից: բայց չալ-օխամը կամ չալ-շխամը*) չգիտենք թէ ինչի բառ է, թէ մուրքի հոտ է գալիս. օրինակ՝ Զալ, ճլպինդը անշուշտ հայի բառ է, բայց թէ ծլ-ը ինչ բառի կոոր է որ կպել է պինդ բառին, չգիտենք: Շուշտակ բառը մինչև այժմ ուրիշ նշանակութեամբ գիտէինք, այսինքն արեղայ, որ առաջ ամուսնաւոր քահանայ էր և այրիանալով վանական դարձած: Առ հասարակ, տեղ-տեղ խրթին գաւառական բառեր, որ թէ մեզ հասկանալի պյլ ընդհանուրին ոչ, մնացել են առանց բացատրութեան, թէ շատերն էլ բացատրված են: Բայց սորանից ցաւում-

անհաւատ են կանչում, լեզուն սիրում, զարմանալի չի»: Բայց դու կրակը տես, որ թուրքը իսկի գինի էլ չի խմում քնդհանքապէս, և եաքըշի եօլ էլ յայտնի է թէ չունի. բայց և այնպէս հայերը ոչ միայն թուրքերից փոխ են առնում, այլ և ծաղկեցնումն նոցա լեզուն:

*) Սոցանից մինը պէտք է որ տպագրութեան պիտակ լինի:

Ենք, որ պ. Պոօշեանցը փոխաբերաբար առնված ոճերի և ձեւերի բուն նշանակութիւնը չէ բացատրում, թողնելով «Հետախոյզ բանագիտաց», ինչպէս ասումէ յառաջաբանի վերջին տողերում։ Եյս շատ անդորժադրելի գաղափար է, Մարդը մեղաւո՞ր եղաւ որ Հետախոյզ բանասէր դարձաւ, որ նստի ծանր ու բարակ ոճերի բառարան շնէ։ Ասէնք թէ գլուխը քարը տուեց, շնեց, յետոյ պիտի այդ բառարանը տպէ ու հրատարակէ, որ «Սօս և Վարդիթեր» կարդացողները հասկանան այն փոխաբերական ձեւերը և ոճերը, որ առաջ չէին հասկացել, և որոնք շատ տեղ, այս, աղ ու համ են տալիս գործին, Միթէ աւելի լաւ և աւելի յարմար չէր, որ ինքը հեղինակը բացատրէր, քան թէ թողնումէ «Հետախոյզ բանագիտաց»։ Ինչ որ մեղ է վերաբերվում, խոստավանումնք, որ ախորժակ չունենք մի այդպիսի բառարան շնելու, թէև բոլոր այլաբանութիւնքը շատ լաւ հասկանում ենք։ Ա propos, Հորթաթողի բարեկենդան կամ Հորթաթողի պաս խօսերը, որ այլաբանութիւն չէ, այլ պարզ անուն, չգիտենք թէ, Վարագայի Խաչինն է, Յիսոնակաց թէ սուրբ Յակոբի, Մեղ թվումէ թէ այս բառը աւելի կարօտ էր ծանօթաբանութեան քան թէ եարօշի օլը, որ ձախողակի ամեն հայի յայտնի է թէ ուղիղ, թէ սխալ հասկացողութեամբ։

Այժմ գանումնք դէպի «Սօս և Վարդիթերի» բովանդակութիւնը,

Մենք արդէն ասած ենք, որ թէ «Սօս և Վարդիթերը» առնունք որպէս բանաստեղծութիւն, նորա տկար և թշլ կողմերը այն տեղերում են, ուր հեղինակը, դուրս գալով բնականի սահմանից, օգնութիւն է խնդրում երևակայութիւնից։

Եյս զրութիւնը մենք արդէն օրինակիներով արդարացուցինք, բայց համեմատաբար աւելի թեթև հանգամանաց մէջ։ Մեցքի կատաստրօֆը, որ ամեն իրաւունքով պահանջումէ հեղինակից աւելի հմտութիւն և ճարտարութիւն, ուր պիտի որ գործի ամբողջ ընթացքի մէջ շարուած թելերը աւելի ճարտարութեամբ, աւելի հնարագիտութեամբ և աւելի բնականաբար միանան, հաւաքվին և կենդրնանան, ինչպէս արևի ճառագայթքը անցնելով մի սապնաձև ապակուց, որ խսկոյն կրակեն այդ կատաստրօֆը, եթէ համեմատումնք գործի ընտհանուր արժանաւորութեան հետ, շատ թոյլ է և ոչ միայն այսչափ, այլ և անբնական։ Այս՝ հեղինակի բուն խորհուրդը Սօսի կամ Վարդի-

թերի պատմութիւնը չէ, ինչպէս առաջ էլ ասած ենք, այլ Աշտարակի կեանքը, բայց և այնպէս, իրը թէ և որպէս օգնական առել է Սօսը, Վարդիթերը և սիրու կրակը, ցանկալի էր որ կատաստրօֆը ունենար աւելի բնականութիւն:

Անբնական է, երբ Վարդիթերը որպէս տասն և մէկ տարեկան աղջիկ մի զլերը սասանեցնող տիսուր անցքից կաթուածահար է լինում. անբնական է, երբ կաթուածից հոգեվարք մարդը ցոյց է տալիս ուղեղի և զլերի անխոտոր և առողջ պաշտօնակատարութիւն. Եթէ նորա ուղեղը և զլերը այն վիճակում՝ են, որ նա հանգիստ խօսումէ, ուղիղ մտածումէ, յիշողութիւնը չէ կորցնում, աչք տեսնումէ և ականջը լսում, էլ ի՞նչ պատճառից է մեռնում. Ուգերին են կաթուածահարուել, այնպիսի զիպուածում նա կարող է շատ տարիներ ապրել: Թոքերը կամ սիրտն է կաթուածահար եղել, այն ժամանակ պիտի որ մեռնէր առանց ոչ թէ շաբաթներով օրերով այլ և ժամերով ապրելու:

Թէ Սօսն ասես, շատ կեղծ վիճակում է: Ցրտում, գլխարաց, ոտքը բորբիկ ման է գալիս երկը գաղ ձնի միջում և այն ցուրտ ձմեռ և Արագածի զառիվայրում: Չորը մտնումէ, ջրում լողանում, աղուէների և գայլերի հետ կոխ տալիս և այն օրերով եւ չնայելով որ նա մահ է փնտում քան թէ կեանք, այնուամենայնիւ չէ մոռ անում իր կեանքի պահպանութեան հոգալ. «Խոսի քքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս» տեսնումեն նորան Ապարանցիք: Մի շաբաթ է, որ նորա քամնակից ման են գալիս Աշտարակի տղաքը, տեսնումեն, բայց սիրտ չեն անում մօտենալ. վերջապէս երկու շաբաթ անցնելուց յետոյ Գարեգինն է նորան տեսնում և Սօսը գալիս է նորա մօտ: Գարեգինը խրատումէ, համողումէ տուն գառնալ և Սօսը դաւնումէ: Բայց այս երկու շաբաթում, այն ցրտի և ձնի մէջ սառը ջրում լողանալով, սառուցի վրայ թեք ընկնելով, սոված և ծարաւ, բնաւ նորա երեսի գոյնը չէ թաչում, նորա առողջութիւնը չէ սասանում. իսկ երբ տանը նստած լսումէ Վարդիթերի մահը խոր հոգոց է քաշում մէջքի վրայ, յետ գնում, զլուխը Գարեգինի ձեռքի վրայ դնելով ինդրումէ որ աշխատի երկուսին (իրեն և Վարդիթերին) իրար կշտի թաղել տայ, իր մօրը միսիթարէ, եղբարցը մնաս բարով ասէ, ինքն էլ ուրախ կենայ (!), յետոյ աչքերը վերև բարձրացնում, ալզիք անում ու հոգին աւանդում»: Իրար մօտ թաղելու ինդիրը անումէ նաև Վարդի-

թերը երբ գեռ Սօսը մեռած չէ, որին արգոյ հեղինակը մի վայր-
կեան Փանուէլի աղջկայ շնորհքն է ընծայում:

Մենք չենք ուզում այս բոլոր անրնական և շատ թշլ
նկարված անցքերը քննութեան դանակի տակ ձգել այդ շատ
երկար կլինի. առանց նորան էլ երկարումէ մեր հատուածը:
Գուցէ աւելորդ էլ լինէր այս աչքի յայտնի թուլութեան վրայ
շատ խօսել մանաւանդ որ ինքը արգոյ հեղինակը կամ մեր ըն-
թերցողքը, եթէ ուշագրութեամբ կարդան այս անցքերի նկարա-
գրութիւնը, որ մենք առանց մեր կողմից մեծ խօսք ևս աւելցնելու
քաղեցինք բնագրից (եր. 218—222), երենք կը աեսնեն մեր տե-
սած անբնականութիւնը և հակասութիւնը: Այսչափ միայն ա-
սումնենք, որ վիպասանութեան շինուածքին մեծ հարուած է
տուել կատաստրօֆի այս անբնականութիւնը: Եւ որպէս թէ
հերիք չէր ինչ եղել էր, այն պատուական տապանագրից յետոյ.

«Ահա սիրոյ պտուղներ,
Մի ագահ մարդու դոժներ,
Ով բստեղից անց կննալ,
Ցիշի Սօսն ու Վարդիթեր»,

որ շատ ընտիր է կարճ և ազդու, գնումէ Գարեգինի անտէր ողբը:
Ամբողջ գործի մէջ բոլոր ոտանաւոքը որ տակ ու վերև են ա-
նում, մէկ հատ չկայ այսպիսի անխորհուրդ, անաջող և սառը
ոտանաւոր: Պատճառը շատ բնական է: Գործը հեղինակի մաքում
և սրտում արդէն վերջացած է, նորա ոգին էլ բան շունի այս
գործի հետ. բայց երբ բռնադատումես զրիշը ինչ որ էլ լինի
բան գրել յայտնի բան է, որ Գարեգնի ողբի պէս կը լինի, որ
ո՛չ բարով պիտի ասէր:

Եթէ ստոյգը ասենք, մեր քննութեան այն մասը, որ նուիր-
ված էր թերութիւններին Սօս և Վարդիթեր գործի, որպէս վի-
պասանութեան, պրծաւ: Մեր այսուհետեւ նկատելի թերութիւն-
քը էլ վերաբերութիւն չունին բնագրին, այլ հեղինակի լեզուին
և յառաջարանին, հեղինակի լեզու ասելով չենք խնանում Աշ-
տարակի բարբառը*), որով գրված է գործի բնագիրը, ուր կամ

*) Այդ բարբառի քննութիւնը տեղիս վերաբերութիւն չունի, բայց
և այնպէս այսքան պէտք է ծանօթացնել, որ նա իր քանի վերջա-

Խիստ քիչ խառնել է հեղինակը Աշտարակի բարբառի մէջ օտար ձեւ, օտար ոճ, կամ, կարելի է ասել, ամենայն ոչինչ, եւ հեղինակը, ուզելով իր գործը այդ բարբառով զրել որ կարդացողը ոչ միայն Աշտարակի վարքի, բարքի, այլ նորա լեզուի վրայ էլ տեղեկութիւն ստանայ, ոչ միայն աղատ է այդ լեզուի մասին պատասխանատուութիւնից, այլ և մեծ շնորհակալութեան արժանի. Մենք կարող ենք որ և իցէ զաւառական բարբառ քըն-նել, սորվել, տեսնել նորա արժանաւորութիւնքը և թերութիւնքը. բայց այսչափ միայն և ոչ աւելի, ինչպէս մի հեղինակի կարող ենք ասել, թէ «ինչի՞ այս ձեւ այսպէս ես գործ գնում կամ այնպէս», այլպէս չենք կարող խօսել հաղարների և բիւրեփի հետ, հեղինակը աղատ է այս ու այն ձեւ գործ գնել կամ չգնել, բայց մի գաւառի բնակիչ, (մեր խօսքը բուն հասարակ ժողովոցի վրայ է) չունի այդ աղատութիւնը, նա այնպէս միայն կարող է խօսել, ինչպէս խօսումէ ամբողջ ընկերութեանը, որին անդամ է և ինքն խօսողը: Իսկ այդ ընկերութեան բարբառը կերպարանագործվել է աշխարհագրական և բնութեան ազգեցութեան տակ, պատմական գէպքերը չեն անցել նորա վրայից առանց իրենց հետքը խոր գրոշմելու. և բարբառները նոցա խօսողի անցուցած կեանքի արդիւնքն են, թայտնի է թէ ոչ մէկ մարդ պատասխանատու չէ, թէ մի որոշեալ տեղում այնպէս է ազդել բնութիւնը և ոչ այսպէս, թէ ինչի պատահել են այս կամ այն

տրութեամբ և ձեւերով տարբերվումէ Երեանի բարբառից: Զարմանալի մի քան է. Քանաքեռ, Երեան, Վաղարշապատ և Աշտարակ, իրարուց երեք չորս ժամ հետաւորութիւն ունին, բայց այդ տեղերում խօսված լեզուին ուշադրութեամբ ականծ զնողը կարող է տարբերութիւն գտնել: Պ. Արովեանի Վէրք Հայաստանին և պ. Պոչշեանցի Սօս և Վարդիթերը այս տարբերութեան ծալրումն են. Քանաքեռ և Աշտարակ, ուստի և տարբերութիւնը աւելի շօշափելի է: Բայց աստիճան աստիճան երթալով, տարբերութիւնը թուլանումէ: Քանաքեռի և Երեանի մէջ քիչ տարբերութիւն կալ, որպէս նաև Երեանի և Վաղարշապատի մէջ, ինչպէս այս վերջինի և Աշտարակի մէջ. բայց եթէ այս շղթայի մէկ կամ երկու ողը հանումես, այն ժամանակ տարբերութիւնը աւելի որոշ է լինում, ինչպէս Վէրք Հայաստանի և Սօս և Վարդիթեր վիպասանութեանց ծեփ և ոժի մէջ: Մենք այս խօսքերը ասումենք ոչ միայն հիմնուելով այդ երկու գործի վրայ, այլ և անկած զնելով այդ բարբառներին:

պատմական դեպքերը և ինչի համար այնպիսի ընթացք և ուղղութիւն է ստացել հասարակաց կեանքը, որի արդինքը բնականաբար եղել է այս կամ այն բարբառը, Եւ որովհետեւ մնութեան և պատմութեան ազգեցութեանց մասին պատասխանատու չէ մարդը, ուրեմն պատասխանատու չէ և ոչ իսկ պախարաբելի կամ ծաղըելի, եթէ մի սարսափելի աւերանքի տակ ընկել նորալեզուն, Այս զրութիւնից պարզ երեսում է թէ որ աստիճանի թեթևամութիւն է այս կամ այն գաւառական բարբառը ծաղրելը և նորանով խօսողի վրայ որպէս մի ստոր և խեղճ էակի վրայ նայելը, որպէս թէ այն մարդը յանցանք է գործել:

Եթէ ցանկալի և հոգով չափ ցանկալի է նոր լեզուի համապային միութիւնը, ապա ուրեմն պիտի ուրախութեամբ ողջունել մի ամրող գործ, որ կատարուած էր որ և իցէ գաւառական բարբառով, որ տակաւին, տպագրութեան միջնորդութեամբ, հեռաւորների և ընդհանուր ուսումնասիրութեան նիւթ չէր եղած. պատճառ, նոր լեզուի հիմնաւոր գիտութիւնը, նորա մշակութիւնը և ապագայ միութեան գաղափարը առանց այդ գաւառական բարբառների օգնութեան աներևակայելի է անգամ, Մենք շատ փաստեր հաւաքած ենք այս զրութիւնը պաշտպանելու համար, բայց այստեղ անյարմար է ասպարէզ բանալ ուրիշ ժամանակ, մի առանձին գործով կը հրատարակենք մեր տեսութիւնը նոր լեզուի մշակութեան մասին, եթէ միայն աջողի մեզ կատարելագործել այդ ձեռքիապ աշխատութիւնը, Բայց այս չափ միայն, գոնէ հարևանցի, անհրաժեշտ ենք համարում ասել որ սորկանալով հին լեզուին, առանց ժողովրդին ականջ դնելու, լեզուի նոր ծխած ձևերը, որ զեռ թարմ են և աճելու վրայ, կապելով և ձնշելով անցածի և մեռածի պատճիք մէջ, նոր լեզուի մշակութեան գաղափարը ազգին համար դառնում նոյնպէս ամուլ և անպտուղ ինչպէս հին լեզուի գործադրութեան գաղափարը, Անշուշտ, այս խօսքերը չեն նշանակում թէ հին լեզուի լծից աղատելով նոր լեզուի մշակութիւնը դնել այս կամ այն գաւառական բարբառի լծի տակ: Տեղական բարբառը ազգի ընդհանուրի համար գործական արժեք չունի և նոր լեզուն այս կամ այն գաւառական բարբառի տակ, դրականապէս, մշակելու գաղափարը նոյնպէս ամուլ և անգործագրելի է, ինչպէս հին լեզուի գաղափարը, ինչպէս սորա սորընկութեան տակ աճած նոր լեզուի գաղափարը: Այս տեսակ մշա-

կութիւնը ինքն իրեն հակասումէ նոր լեզուի մշակութեան գաղափարին, որ է որքան կարելի է առանել շատ և առանել մեծ բաղմութեան հասկանալի կերպով խօսել: Այս պատճառներով, նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրոյնարար, առանց ամենենին չին լեզուից խանելու^{*)} և առանց այս կամ այն գաւառական բարբառին ստրկանալու: Բոլոր գաւառական բարբառների էական տարերբը, որ իրենց ձևով և բազմութեամբ աւելի ընդունակ են կենդանի—ընդհանրութեան լեզուի վրայ պատռաստվելու, պիտի ընկնեն ճարտարապետ հեղինակների բուրպյի մէջ և այն տեղ հալվելով և քիմիաբար (ֆիզիկաբար ո՛չ) միանալով պիտի գուրս գան ոչ որպէս թշլպատութիւն կամ անթշլպատութիւն, այլ որպէս նոր արարած: Այո՛, ծանր ինդիք է այս և իր բնութեամբ շատ ժամանակի կարօտ, բայց զո՞նէ այս է մեր ճամբան, այս է մեր պարտականութիւնը, որ ինչքան մեր զյժը կը տանի, ձգտենք այս ինդիքը լուծելու:

Ուզելով շինել հաղարամեայ աւերանքը, չպիտի փոքրոգութեամբ սրտնեցնք, թէ ինչի՞ մէկ գարում կամ չինդ դարում չէ շնուրում: Այն որ հաղար տարիներով տարբեր աշխարհների և տարբեր պատմական դէպքերի տակ աւերվել է և այդ հաղար տարիների միջոցում ամեն մեր լեզուի մօտից անց կացող թուրք, թաթար, արաբացի, պարսիկ, ուուս Սարգիս Բուխարացու գեօնի պէս մի քար է ձգել, բնականաբար անհնարին է, որ մի ակնթարթում շինվի, կոկի, փայլի և պայծառանայ: այստեղ հարկաւոր է համբերութիւն և յարատե արիաջան աշխատութիւն:

Աւելորդ է ասել որ մենք բնաւ պահանջողութիւն չունիք, թէ մեր գործադրած ձեւ ու ոճը աւելի մօտ է կատարելութեան գաղափարին: քան լիցի: Մենք ամեն օր ուսանումենք նոր լեզուն, ամեն օր մշակումենք, որքան մեր խելքը զօրումէ: սորքն որպէս անմերժելի վկայութիւն գնումենք մեր գրուածքը 1857-ից սկսած, որնց ժամանակագրական յաջորդութեանց մէջ պարզ երեսումէ թէ մենք կանգնած չենք, այլ գտնվումենք անդադար ընթացքի մէջ—մեր կարծիքով դէպի ի առաջ: Յայտնի է թէ այն մարդը, որ գիշեր ցերեկ աշխատումէ մի բան աւելի առաջ տանել, գորանով վկայումէ թէ այդ բանի ներկայ վեճակը չէ կարող նորան գոհացնել աւելի փոքր, կատարելութիւն

*) Հին լեզ. խուզանիլ:

Համարվիլ: Ստիպվեցանք ծանօթաբանել, որ չլինի թէ կարդացողը, տեսնելով, որ մենք ուրիշի ձև ու ոճ ենք դատում, կարծէ թէ մենք մեր վրայ դրական կամ բռնաւորական գաղափար ունիք: Բռնութիւնը ո՞ր դիմակի կամ ինչ շպարի տակ ևս ծածկվի, այնուամենայնիւ մինչև գերեզման մեղ միշտ ատելի կը մնայ:

Մեզ կարող են ասել, թէ պ. Պոօշեանցը հազիւ մի քանի տող է գրած սեփական ձև ու ոճով, կարժէ այդ քանի մի տողերի համար ատեան կանչել նորան, իրաւ, պ. Պոօշեանց միայն յառաջարանը և ծանօթութիւնը գրել է իւր ձեռվ. բայց այդ մի քանի տողեց էլ պարզ տեսնումնենք նորա ուղղութիւնը նրա լեզուի մշակութեան մէջ, եթէ միայն նախատեսաբար և սկզբունքի վրայ հիմնուած ուղղութիւն է այդ և ոչ պատահականութեան արդիւնք. որովհետեւ շատ նորելուկ գրողներ, առանց սկզբունքի, առանց ուղղութեան հանդիպածը գրումեն, էլ աջ ու ձախ նայել չկայ: Լեզուի մասին ատեան ենք կանչում պ. Պոօշեանցին ոչ ծաղղելու և ոչ պախարակելու մնքով այլ կատարեալ բարեմտութեամբ, յուսալով թէ մեր մի քանի նկատողութիւնքը կարող են նորան օգտակար լինել նորա ապագայ ասպարիզում, մանաւանդ եթէ ուխտ չէ արել միշտ Աշտարակի լեզուով գրելու. թէն ճշմարտութեան անունով ասումենք որ նորա բնագրի (Աշտարակի) լեզուն համեմատաբար աւելի կատարելութիւն և աւելի բնականութիւն ունի քան թէ այն լեզուն, որով գրել է իւր ծանօթութիւնը և շատ անաջող յառաջարանը: Անաջող ածականը նորա յառաջարանին տրված, նորա բովանդակութեանն է վերաբերվում, որ լեզուի մասին մի քանի բան նկատելուց յետոյ կը քննենք: Նոյնպէս, հանդէս հանելով այստեղ այն թերութիւնքը, որ տեսնումնենք պ. Պոօշեանցի սեփական ձև ու ոճի մէջ, ստիպվումնենք ասել, թէ գրողների մեծագոյն մասը աղաս չէ այդ տեսակ թերութիւններից, ուստի մեր նկատողութիւնքը հաշուէ՛ ուղղված են ընդհանուրի թերութիւններին քան թէ մասնաւորապէս պ. Պոօշեանցի: Եւ եթէ այդ ուրիշները նոյնպէս օգուտ քաղեն մեր նկատողութիւններից, գո՞նէ մի ծեղի չափ մող շնորհակալ լինին, ինձնից ո՞չ այլ պ. Պոօշեանցից, որի գործը պատճառ է եղել մեղ այս տողերը գրելու:

Դարձեալ մի քանի տեղ լոկ մի հատ բառը կամ մի հատ ձւը որ գործ էր ածում պ. Պոօշեանցը, որ թերեւս կարող էր

տպագրութեան սխալ լինել։ Մենք հանդէս ենք հանում, սորանից չէ պիտոյ եղակացնել թէ բժախնդրութիւն է մեր արածը, ոչ այլ մենք այդ բոլորի վրայ թէ խօսումենք, այն է պատճառը, որ պ. Պոօշեանցի գործի մէջ մի անդամ երևածը ու բիշների մօտ շատ կան, ուստի և մեր բոլոր նկատողութիւնքը պիտի ընդհանուրին ընծայուի, թէև պ. Պոօշեանցի պատճառով էինք խօսք բացում։

Պ. Պոօշեանցի ձև ու ոճի մէջ, մենք տեսնումենք հին լեզուին ստրկութիւն, բայց արգց հեղինակը ստրկանումէ ոչ թէ հին լեզուի ոգուն և տրամաբանութեան, որի տակ հինդ տարի ընկճված էինք մենք էլ, հելսիսափայլն էլ, ոչ. այդ տակաւին խորհուրդ ունէր և սկզբունքից առաջ էր գալիս, թէև ոչ դրականապէս գործադրելի էր այդ սկզբունքը, այլ ստրկանումէ հին լեզուի արտաքին ձևին, —կեղենին, որ լնաւ խորհուրդ չունի Բայց այս էլ ձշմարիտ է, որ պ. Պոօշեանցի գերութեան ոգին բուն հայկական է և կատարելապէս ազատ պյն եկամուտ ձևերից, որ Ռուսիայում, շատ ուստագէտ հեղինակների և մանաւանդ—Տաճկաստանի քրանսեագէտ հայ հեղինակների գրուածքի մէջ վիստումնեն*)։

Հին լեզուի կեղենին ստրկանալ համարումենք, երբ մի հեղինակ փոխանակ ժողովրդի հանրական ձևին հետեւելով կենդանացնելու, գրելու, կանգնելու, նստելու և այլն ասելու տեղ գրում է կենդանեցնելոյ, գրելոյ, կանգնելոյ, նստելոյ և այլն։ Ի նշ է այս ոյասիրութեան խորհուրդը. գրածին աւելի վսեմութիւն տալ, թէ աւելի հասկանալի անել նորան ժողովրդեան։ Նախ որ ոյ-ը ու-ից ոչ գեղեցիկ է և ոչ վսեմ. ու վերջաւորութիւն սեռական աներեւոյթ եղանակի, որպէս համօրէն աղջի գործածած, նոր լեզուի մէջ միշտ աւելի գեղեցիկ և աւելի պատշաճաւոր է քան թէ ոյ-ը, որ նոր լեզուի մէջ բնաւ հանդէս չունի. Երկրորդ, ոյ-ը ու-ից ո՞չ միայն աւելի հասկանալի չէ, այլ շուտով աւելի անհասկանալի, ասել է թէ այս երկու պատճառով էլ ոյասիրութիւնը չէ կարող արդարանալ, մնումէ մէջ տեղ հին լեզուի ստրկութիւնը, որ ստիպումէ հեղինակին կենդանի ժողովրդի կենդանի լեզուի արտօնութիւնը յափշտակելու։ Նոյնպէս ի գործ գնել, ի մէջ բերել, ի լցոյ հանել որպէս թէ

*) վիստալ.—հստառոտ։

եթէ գործ դնել, մէջ բերել, և լոյն հանել ասէ կամ աւելի անարգ է լինում կամ անհասկանալի, սորանից լաւերը կան «ջանի գործ ենք լինում», «Յօրէ անտի իւր հաստատութեան մինչեւ ցայսօր»։ Զպիտի մոտանալ, որ այդ նախորդները կորուցել են իրենց իրաւունքը ազգի շրժունքի վրայ, և անաքանդները սովորնձի նման մի մածուցիկ բան ել չունին, որ մի հեղինակ թէ կամենայ դնել ազգի շրժունքի վրայ, կազմն մնան ու վայր շրնկնեն։

Հին լեզուի մէջ, յատկացուցիչը կարող է զրվել և նախադաս և վերջադաս, բայց նոր լեզուի լնդհանուր կանոնն է, որ յատկացուցիչը լինի միշտ նախադաս, Այն ժամանակ միպյն կարելի է վերջադաս գնել և թէ յատկացուցիչը յարարերեալ է, այսինքն մի որ, խական հետեւով այդ յատկացուցին է յարարերում պատճառ նոր լեզուի մէջ յարարերեալի և յարարերականի մէջ չկարողանալով ուրիշ բան մննել և թէ յարարերական ունեցող յատկացուցիչը սովորական կանոնին հետեւով դրվի յատկացուցեալին նախադաս, այն ժամանակ կորցնումէ իւր յարարերականը, որովհետեւ սորա ուժը յարարերումէ յատկացուցեալին, որ անմիջապէս յարարերականից առաջ է։ Պ. Պոօշեանցը հին լեզուի համաձայն, բայց նոր լեզուին հակառակ յատկացուցիչը դրել է մի տեղում վերջադաս։ «այս է կարգը կանգնելոյ» (Եր. 181)։

Մենք նորա համար այս մէկ հատ բանը մէջ բերինք, որ իրեն խոկ հեղինակին որոշ կերպով երեխ այդ անբնականութիւնը, որ թէ ուրիշ ամենը թողած իր առաջարանի մէջ գործ դրված յատկացուցիչներին նայի, կտեսնէ որ ժողովրդի խօսած լեզուի հոսանքին հետ երթալով յատկացուցիչը միշտ նախադաս է գործած ված։

Նոր լեզուի մէջ կան բայեր, օրինակ տաճ, գամ երեմն և լամ, որ իրենց լծորդութեամբ գուրս են լնդհանուր կանոնից, լնդհանուր և միակ լծորդութիւնը է ումեն, օրինակ, զրումնեն, տեսնում եմ և այն. խկատալլ, զալլ երբեմն և լալր խօսարհումն են տալիս եմ, գալիս եմ, և լալիս եմ *), Բայց չնայելով այս բո-

*.) Լալիս եմ քիչ ենք լսել, սովորաբար լինիմ բայով է վարփում, «լաց եմ լինում» և այլն. Տալլ զալլ, Աստրախանցիք խոնարհումնեն «տաճ եմ», գամ եմ, բայց այս շատ անգործադրելի է և տղեղ, յայտնի է թէ և դպրութեան մէջ անընդունելի։ Նոյն այս բայերը նոր

Ը՞ր Արարատեան աշխարհին ընդհանրացած սովորութեան վրայ, կան մարդիկ, ինչպէս նաև բոլոր Աշտարակը (ինչպէս երեսում Սօս և Վարդիթերից) որ թէ բայի վերջաւորութիւնը այսինքն եմ, ես, չն նախընթաց է գրվում բայարմատից, ինչպէս չեմ տալիս և այլն, չեն ասում չեմ տալիս կամ չէ տալիս, այլ չեմ տալի կամ չէ տալի: Պ. Պոօշեանցը իր գրութեան մէջ գործ է ածում այս ձեւը՝ մոռացնել տալի, յառաջ գալի, հոգի է տալի և այլն, փոխանակ մոռացնել կամ մոռցնել տալիս, յառաջ կամ առաջ գալիս, հոգի է տալիս ասելու տեղը ինչպէս երեսում: Պ. Պոօշեանցը ուրիշ շատերի նման կարծումէ, թէ տալիս եմ-ը շնորմէ տալի ընդունելութիւնից, որի ծայրն թարմատարաբար կպել է ս տառը, ուրեմն և աւելի ուղղու է տալի ասել քան թէ տալիս, մանաւանդ որ տալին էլ գործ է ածում ժողովուրդը: Շատապումնքը ծանօթաբանել, որ ներկայութիւն, մօտադրութիւն ցոյց տուող է այն թարմատար համարված Ս տառը, և առանց նորան տալի եմ ասելով չենք կարող ցոյց տալ այն գործողութիւնը որ կատարվումէ ներկայում: Եւ մեզ թվումէ թէ տալիս եմ-ի արմատը բնաւ տալի ընդունելութիւնը չէ, այլ տալ աներեցիթ եղանակը և տալիսը հոլովեալ աներեցիթ է, նախողին գրական, որ միանալով եմ, ես, է-ի հետ դիմաւոր բայի զօրութիւն է ստանում: որպէս թէ ասէր, ի գալս իմ, այսինքն գալու գործողութիւնը կատարելու վրայ: Նոր լեզուի մէջ հոլովակերտ և հոլովառու նախադրութիւնքը, շատ տեղ և գրեթէ մեծ մասով, գարձել են վերջաւորութիւն, եթէ ծիծաղելու հա-

Ցուղայի և Հնդկաստանի հայերի բերանում մի ուրիշ ծե են ստացել: Նորա ասումն դալման եմ, գոլման ևմ: (Գալը գու է եղել: Երբ առաջին անդամ լսեցի ալրի ո կամ և փոխվելը—նորա չեն ասում լա, այլ լեւ,—անգլիական ալրի ազդեցութիւնը կարծեցի, բայց վերջը ստուդեցի, որ այս նմանութիւնը պատահական էր:) Թէկ հին լեզուի մէջ գոլումն, տալումն չկայ, բայց լալումն կայ և Հնդկաստանցին ասումէ լալման եմ. արդեօք, այս դարձեալ նախդրի տրականի ուժով չէ, այսինքն, լալու վրայ եմ. մենք գոնէ կարծումնք: NB Լինիմ բայով վարժումէ տեղ տեղ և թաց'թ-թաց լինել: բայց նոր լեզուն ունի թլրչվել բայը, որ ամեն տեղ հասկանալի է, ուստի և աւելորդ է, գործ դնել թաց'արի, թաց եղայ, փոխանակ թրչվեցի, թրչվեցայ, որի կագմուածքը աւելի սպարդ է և կարծ:

մար կարելի է այսպէս ասել, և շատ տեղ էլ հոլովակերտը իսպառ դուրս ընկել, ուստի չպիտի զարմանալ եթէ տալիս-ը աներեցիթ եղանակի նախդրիւ տրական է գիմնուշ յօդի հետ միացած։ Օրինակներով այդ ամենը ցցց տալը քերականութեան գործն է, բայց մենք կամեցանք որ այս երկու խօսքով պատճառ տանք մեր գրագէտներին, որ թէ մենք սիսալվումենք այսպէս կարծելով, մեր սիսալը մեզ ցցց տան, որ մենք էլ ուղիղ կանոնը սորվելով լեզուին ընդդէմ չմեղանչենք։ Բայց թող առաջուց յայտնի լինի, որ հեշտութեամբ չենք թողուլ պատերազմի ասպարէզը։ Մենք բացի զալ, տալ բայերից ցցց ենք տալիս բոլոր միւս բայերի նախդրիւ տրական հօրվված աներեցիթ եղանակները—տեսնելիս, նայելիս, օրինակ, «նորան տեսնելիս ասա»։ «Նորավոյ նայելիս զարմացան»։ Ինչ են այս նայելիսը, տեսնելիսը եթէ ոչ ի տեսանել, ի նայել։ Ս տառը չպէտք է ընդունել այս տեղ որպէս առաջին գէմք ցցց տուող, այլ որպէս բանի մօտաւորութիւնը, ներկայութիւնը։ Հին լեզուի մէջ, «տեղիս անապատ է և օրս տարածամեալ»։ Նոր լեզուի մէջ—«գիշերս շատ քննեցի» չեն նշանակում ես տեղ, ես օր, ես գիշեր, այլ այս տեղը ուր որ այժմ՝ կանգնած ենք անապատ է, այս օրը որ անցնումէ ուշացել է, այս գիշերը որ անցաւ և այլն։ Շատ անգամ, ինչպէս նաև Աշտարակում, նախդրիւ տրականի տեղ, օրինակ գալիս, գործ են ածում սեռականը, բայց գարձեալ և տառը աւելցնելով։ Ինչպէս գալուս տեղը տեսայ, Բայց ոչ միշտ գործ են ածում այս, որովհետև մենք տեսնումենք որ արգոյ Պոօշեանցը գրումէ «...Նորհակալութիւն անելիս, ու խոտերի քօքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս»։ Բայց այս մասին այսպանը առ այժմ՝ հերիք է։

Նոր լեզուի մէջ կրաւորական բայը Վ տառը պիտի ունենայ խոնարհվող վերջաւորութեան նախընթաց և այս այնպիսի ընդհանուր կանոն է, որ Հին լեզուի հասարակ ասած բայերն էլ ինչպէս ծնանեմ, գտանեմ և այլն, Նոր լեզվում գարձուցել է ներգործական, որովհետև կրաւորականը ծնանվել, դատվել և այլն է, Հին լեզվում ներգործականից կրաւորական է գառնում բայը միայն ներգործականի նչը ինի փոխվելով օրինակ։ գործեմ, — գործիմ, բայց նոր լեզուի մէջ այդ ինի նախընթաց պիտի և մէկ վել աւելացնել, գործել, — գործվիլ։ որովհետև շատ անգամ՝ Հին կրաւորականը կամ ինչպէս ասացինք հասարակ բայը գարձել է ներգործական, ուստի և կրաւորականի բուն կազմութիւնը հենվում

Է վեպի վրայ *): Կան բայեր, որ երբեմն գուրս են գալիս այդ ընդհանուր կանոնից, օրինակ կորուցանել, կամ կորցնել, յայտնի է թէ ներգործական է, բայց դորա կրաւորականը լինում, շատ անգամ կորչել: Ասացինք շատ անգամ, որովհետեւ կրաւորականը գործ են գնում որպէս կորցվել, մէկ խօսքով կրաւորականը վեցվով գործ դնելը համօրէն ազգի հանրական կանոն է և ոչ մի տեղ չենք լսում՝ նորան առանց վեպի: Պ. Պոօշեանցը նշյալէս ընդուռում է այս, թէև վեպի տեղ ու գործ ածելով, ինչպէս, բարձուում է, վերահաստատուիլը, պառակտուիլը, պատարուիլը և այլն. բայց մի տեղ էլ գործ է զրել ամրապնդիլ, փոխանակ ասելու ամրապնդվիլ, յայտնի է թէ դարձեալ հին լեզուի ազգեցութեամբ: Թող ներեն մեզ, որ մենք այսպիսի մէկ-մէկ հատ երեցած արտուղութեանց վրայ խօսք ենք բանում: բանը շատի կամ քչի վրայ չէ, այլ կանոնի վրայ, ուստի հարկաւոր է, որ լեզուի վրայ աշխատողքը իրենց մշակութեան արդիւնքը և իրենց նկատողութիւնքը յայտնեն միմեանց, որ այս հասարակաց փոխադարձ գործակցութեամբ լեզուի գործը առաջ երթայ:

Բացի սորանից, վեպի տեղ ու գործ դնել այն տեղ, ուր իսկըն յաջորդումէ ումը, շատ ծանր է և հասարակ ժողովսդին գայթակղեցուցիչ որոնց շատը ուում է տեսնելով չէ կարդում փում է, այլ ուում է: Պէտք չէ գործ դնել այս ձեզ եթէ հարկ չկայ: Այսպէս ասումնք այն պատճառով, որ երբեմն հարկը ստիպումէ վեպի տեղ ուն պահել չնայելով որ իսկըն հետեւումէ կամ ում կամ ութիւն: Այս այնպիսի դիպուածներում, երբ

*) Եթէ բայը դիմաւոր է, ներգործականից կրաւորական դառնալու համար (յայտնի է թէ նոր լեզուում) միան մի վեպ է առնուած իսկ թէ անդէմ, օրինակ. աներեսոյթ եղանակ, այն ժամանակ և վեպ է, աւելանում և եչը փոխվումէ ինի. ինչպէս գրումեմ, — զրվումեմ, զրել, — զրվիլ: Պ. Պոջեանցը որպէս կրաւորական աներեսոյթ եղանակ գործ է, ածել մի տեղ կատարելագործուել, փոխանակ կատարելագործվել ասելու: Վերը մէջ բերած օրինակում, նա հերիք է համարում, ներգործականի եչը ինի անելով կրաւորականացնել, ինչպէս ամրապնդիլը. իսկ այս օրինակում կրաւորականացուցել է միայն ու (վեպի տեղ ի հարկէ) աւելացնելով ներգործականի վրա, ինչպէս կատարելագործվել: Ոչ առաջինը և ոչ երկրորդը տալիս են նոր լեզուում կրաւորականի գաղափար:

բառը իր ուղղական վեճակում ու է վերջանում, ինչպէս լեզու, կատու, առու և այլն և այլն, կամ պատասխանատու, հարկատու, որ սոէպ ութիւն վերջաւորութիւն են ստանում վերացական նշանակութիւն առնելու համար. Մնացած միւս գիպուածներում մենք յօժար ենք ժողովրդի ընթերցանութիւնը հեշտացնելու համար ու կամ մինը վեզով փոխանակել ինչպէս գրումենք թիւ, թվի, թվական. Աւետիքեան չ. Գաբրիէլեան ականաւոր Քերականը սորանից յիսուն տարի առաջ խոստովանել է իր ընտիր քերականութեան մէջ, նոր լեզուի սեփական ուղղագրութեան իրաւունքը:

«Անորոշ տարբերութենէն մտեր է, որ ու-ով կամ եւ-ով «բառերը երբեմն վեզով կը զրեն. զօր օրինակ բուրուառ և «բուրվառ, երիվար և երիւար, նուագ և նրվագ. Թուական և «թվական. Աստիցմով կիմանաս պատճառը՝ որ ինչո՞ւ աս քերա-«կանութեան աշխարհաբարին*) վեզով զրինք, անվան, պատ-«վական, հիմակվան, առվոտանց և այլն. անոր համար որ աշ-

*) Շատ մարդիկ, որ ամեն բան չափումն հին լեզուի չափով, Աւետիքեան չ. Գաբրիէլի պէս նոր լեզուին ասումեն «աշխարհաբար»: Զափեցէք պարոններ, բայց այնպէս արէք որ նոյն իսկ հին լեզուին չհակառակէք: Հին լեզուի բար մասնիկը մակրայացուցիչ է և աշխար-հաբարը մակրայ և ոչ լոկ ածական անուն: Բացի սորանից, եթէ նոր լեզուն «աշխարհաբար» է, ուրեմն հինը «զրարար» և ոչ «զրարառ»: Յայտնի է թէ ուղիղ խօսելով չէ կարելի ասել զրարար, այլ զրարառ, ուրեմն և' աշխարհաբառ և ոչ աշխարհաբար: Շտապումենք այդ պարոններին իմացնել, որ զրարառ կամ աշխարհաբառ խօսքնը չեն բաղկացած զիր և բառ կամ աշխարհ և բառ բառերից, այլ զիր և բարբառ, աշխարհ և բարբառ: Ոչ մի տեղում չենք տեսնում ի զրոց բառ, ի բառ աշխատնին. այլ ի զրոց բարբառ կամ ի բարբառ զրոց, ի բարբառ աշխարհիկ կամ յաշխարհիկ բարբառ, որ միանալով (կրծասուել է բար-բառ խօսքը և մնացել է միայն բառը, որով և) զարձել է մէկ բառ (ածական) զրարառ, աշխարհաբառ: Ածական անոնը երբեմն վար-փումէ որպէս մակրայ, ինչպէս նաև զրարառ և աշխարհաբար խօսքնը.—զրարառ խօսել, աշխարհաբառ զրել. բայց, բուն մակրայը կամ մակրայի սեփական վերջաւորութեամբ բաղադրված մակրայը չէ փար-փում որպէս ածական: Նոյն այս հին լեզուի կանոնով էլ սիալ է «աշ-խարհաբար» ասելը, աշխարհաբառ ասելու տեղ:

« խարհաբար վեզ կըսենք նէ, վեզ վեզ ալ գրելու է և ոչու կամ չ, որ « ծուռ Հնչիւնը հաստատել չերենայ»: (Տես նորա քերակա. 179 եր.):

Ծուռ Հնչում ասումէ այն պատճառով, որ ինքը հիմնաւորապէս ապացուցանումէ փոնի ձայնաւոր լինելը, ինչպէս այժմեան ֆրանսիական և կամ Յունական յ իսկալոնը: Եւ իրաւումք ունի: Նոր լեզուի մէջ, եթէ ու վերջաւորութիւնը հողովարմէ է, իսկըն վեզի ձայն է ասանում, ոչ ոք չէ լսում լեզու, լեզու, այլ լեզու, լեզու. Պ. Արովլեանցը աւելի հաւատարիմ մնալով նոր լեզուի իրաւունքին և արտօնութեան, իր «Վերք Հայաստանի» գործում ու-ի աեղլ միշտ վեզ է գործ ածում, մինչև անդամ այնպիսի տեղերում, ուր միմիայն Երեանի գաւառում ուն վեզ է, իսկ այլ տեղեր ու: Նա գրումէ «Նազլի սուզը, Նազլի նամակը». Ճայտնի է թէ բացի Երեանի գաւառից ուրիշ տեղերում այդ բառը արտաքերվումէ որպէս Նազլուի. նոյնպէս կատվի, փոխանակ կատուի: Մենք չենք գնում տակաւին մինչև այսչափ. որովհետեւ շատ բառ ժողովրդին հասկանալի է լինում, եթէ Հոլոված ժամանակ իր ուղղական վիճակը պահումէ. մանաւանդ լեզվի վերածնութեան ժամանակ, երբ այս ու այն գաւառական բարբառներից բառեր ենք առնում: Այս է գարձեալ պատճառը, որ մենք շատ անգամ սեռական կամ ուրիշ Հոլովում պահումնենք բառերի ամերող ուղղականը, մինչդեռ նորա, ընդհանուր կանոնով, տառ պիտի կորցնէին իրենց միջից Հոլովելու ժամանակ:

Սակայն ու վերջացած բառեր Հոլովելու ժամանակ և բացի ուած *) վերջաւորութիւնից վեզի տեղ ու պահելը աւելորդ շրայ-

*) Շատ նորելուկ գրողներ ալնքան սիրահարուած են վեվի տեղ ու գործածելու վրայ, որ կրաւրականի անցեալ ընդունելութիւնն էլ շատ անգամ գրումեն ու մասնիկով. ինչպէս, գրված ասելու տեղ ասումն գրուած. ալս երկուքը տարբեր բաներ են և առանց ուղղախօսութիւնը շփոթելու չեն կարող իրար տեղ գործ դրվել: Ներգործականի անցեալ ընդունելութիւնն է գրած, իսկ կրաւրականինը գրված. Էլ սոցանից դուրս անցեալ ընդունելութիւն չկայ: Մնաց որ շատ անգամ կրաւրականի տեղ էլ ներգործականն է բանում. չենք ասում հալված եղ, այլ հալած եղ. յայտնի է թէ հալածը կրաւրականի դօրութիւնով է գործ դրվում այս տեղ: Պիտի իմանալ նոյնպէս, որ ան-

Ըսթիւն է և քանի որ այդ ուն զեկ պիտի հնչվի, ու պահելու խորհուրդն ի՞նչ է. ընթերցանութիւնը դժարցնել ինչ որ մեզ է վերաբերում, մենք ընդդէմ ենք այս տեսակ պահպանողութեանց, որովհետեւ ծանր են գալիս հասարակ ժողովրդին այդ ձեւը, որ հազիւ հազ է կարդում: Բացի այս ծանրութիւնը աւելորդ ներմուծութիւնք և շատ անդամ հին լեզուով էլ չեն կարող արդարանալ: Օրինակ հին լեզուում հաշտեմ բայը նոր լեզուի մէջ եղել է հաշտվում եմ. էլ հաշտուում եմ գրելու ժամանակ, այդ ոն ինչ իրաւունքով և որտեղից է մտնում: Պ. Պոօշեանցը սովորաբար գրումէ՝ երգումէ, փայլումէ, կարողանումէ և այն, այսինքն, բայ արմատի վրայ ունը թողնելով իսկ բայական վերջաւորութիւնը եմ, ես, է առանձին գրելով: Բայց, արդարութեան անունով խոստվանումենք, որ այս ձեւը բնաւպ: Պոօշեանցին միայն սեփական չէ, այլ գրեթէ բոլոր գրողներին, բացի մեզանից և պ: Նազարեանցից, որքան յիշումենք: Հարկ չկայ ասել, որ այս մի աններելի սխալ է, որի մասին աւելորդ չէ մի քանի բառ խօսել: Բայը մէկ մասն բանի է, որ ցոյցէ տալիս անել կամ կրել դէմքով, ժամանակով և այն: Գործ բայ չէ, այլ անուն, իսկ գործեմը բայ է և ցոյց է տալիս անելու գործողութիւնը առաջին դէմքում, որոշեալ եղանակով ժամանակով և թըլվով: Անելը կամ ցոյց տալը այսինքն բուն բայի պաշտօնակատարութիւնը երևումէ այս եմ վերջաւորութեան

ցեալ ընդունելութիւնը գործ է դրվում ածական առմամբ: Իսկ ուած կամ ուածքը երբ միանումեն մի բառի հետ, ինչպէս գրուած կամ գրուածք, գոյական են և վերացական նշանակութիւն են ստանում ինչպէս գրութիւն: Մի և նոյն ուժն ունի, եթէ ասենք «իմ գրութեանց մէջ կամ իմ գրուածքի մէջ»: Պարզ է թէ այս ընդունելութիւն չէ, այլ գոյական անուն: Բացի սորանից ուած կամ ուածքը միանալով մի բայարմատի հետ, ինչպէս ծեծուածք ուստի օստի կամ ոստի, իսկ ֆրանսերէն — վերջաւորութեանց ուժն ունի: ինչպէս երկաթի ծեծուածքը, երկաթի քաշուածքը կօքութ չկը լուսաւ, ու այս պահանջները մեր գաղափարը, որ աւելի որոշ կերպով լայտնիի: Պ. Պոօշեանցի գործի մէջ (եր. 108) կարդումենք «Ամերեմը գոված ջուր ա, համա սրա խումը չունի»: Այս խում խօսքը ծիշտ ալն է նշանակում, ինչ որ մենք ուրիշ բառերում ուղեցանք ասել. այսինքն եթէ ջըին խումը, ապա և երկաթին ծե-

մէջ, որ միանալով գործի՞ն հետ, գոյական գործ անունին տալիս է բայի զօրութիւն, չին լեզըւի մէջ միայն եմ վերջաւորութիւնը չէ որ ունի այս ոյժը, այլ կան երեք ուրիշներ եւ ինչպէս ում, իմ, ամ, սոքա էլ ճիշտ նյոյն պաշտօնակատարութիւնն ունին ինչպէս վերը զրաքած եմը, Այս վերջաւորութիւնը առանձին առնված բայ չեն, բայցուցիչ մասնիկներ, այնպէս որ թէ նոքա չմիանան մէկ բայարմատի հետ, իրենք իրենց ոչինչ նշանակութիւնն և խորհուրդ չունին, Թէ և առաջին լծորդութեան վերջաւորութիւնը նման է էական եմ բային, բայց այդ պատահական նմանութիւնն է միայն սահմանական եղանակի ներկայի և անցեալ անկատարի մէջ, որովհետեւ եմ բայի կատարեալը երկ, ապառնին եղից է, մինչդեռ եմ լծորդութեան տակ գնացող բայերի կատարեալի և ապառնու վերջաւորութիւնը եցի և եցից է, Կարող են մեզ վրայ ծիծագել, թէ այդ ինչ ասելու բան է որ ասումես, ով չգիտէ: Թէ ամենքը պարտական են գիտենալ, այդ գիտեմ ես, բայց թէ գիտե՞ն սոսոգաբէս, գորան զրական ապացոյց չկայ, մանաւանդ թէ ամեն քայլափոխ հակառակ վկայութիւնը եմ աւենում: Եթէ գիտենային, եթէ զրելու ժամանակ իրենք իրենց հաշիւ տային, թէ ի՞նչ բանի վրայ են, այն ժամանակ բայական վերջաւորութիւնը պէտք չէր որ իրեւ առանձին առնված էական բայ բայարմատից բաժանէին. ի՞նչ են կարծում այդ պարոնները, խոնարհածները աներեցիթ եղանակ է, թէ ընդունելութիւն որ եմ, ես,

ԾՈՒԱՃՐԸ: Յուր ունինք որ այժմ հասկացուցինք թէ ինչ նշանակութիւն ունի ուածը կամ ուածը և թէ որքան հնոու է նա կրաւրականի անցեալ ընդունելութեան ված վերջաւորութիւնից: Եթէ ալսպէս է, (որպէս և է), ապա ուրեմն կրաւրական ընդունելութեան ված վերջաւորութեան տեղ ուած կամ ուածը զրելը աններնի սխալ է ուրդախօսութեան ընդէմ: NB. Իւ վերջացած բառերը, ինչպէս պատիւ, եմէ գործ են զրգում որպէս պատուած ևալին, վերացական նշանակութիւն չունին և կարող են կրաւրական անցեալ ընդունելութեան տեղ վարվել մանաւանդ որ պատվածը պատուէ բայի կրաւր անցեալ ընդունելութեան տեղ կարող է հասկացվել, թէ պատած կարելի է և կրաւրականապէս գործ դնել ինչպէս հալածը, որի մասին խօսեցանք:

Առ հասարակ մենք խօսումենք ընդհանուր կանոնների վրայ, որոց մանրամասն և, բացառական կանոնների աւանդութիւնը պիտի ընդականութիւնից և բառարանից պահանջել:

ի՞ն իրրև էական բայ գրումն առանձին, Թերեւս մեր պահանջողութիւնը երիտասարդ գրողներից այնքան խիստ չէ, որովհետեւ նոցա մեծագոյն մասը հին լեզուն չգիտէ, բայց ի՞նչ ասենք այն պարօններին, որոնք ոչ միայն պարծենումեն իրենց հին լեզուի գիտութեամբ, որպէս միակ արժանաւորութեամբ, այլ քսան երեսուն տարիներով ոչ բարով, քերականութիւն են դաս տուել: Պէտք չէ որ մոտածեն, թէ չէ կարելի գրել գործ եմ, մեղանչ եմ, ևայլն ևայլն, այլ թէ գործեմ, մեղանչեմ, ևայլն: Բայց այն պարօնները մեզ կարող են ասել, թէ այդ հին լեզուի կանոն է, դորանից նոր լեզուին ի՞նչ*): Խչափէս թէ ինչ հին լեզուի բայը բայ է, նոր լեզուինը բայ չէ: Եթէ հին լեզուի, առաջին լծորդութեան բայերի, եւ վերջաւորութիւնը էական բայ չէ գարձել և միայն այն պատճառով, որ երկու երեք ժամանակի մէջ երեւումէ և մնացած ժամանակների մէջ բոլորովին կորչում, որովհետեւ այդ եմը ունի իր սեփական վերջաւորութիւնքը: Եթէ եմը էական բայ է, ինչպէս կարծումն բաժանողքը, չարկաւրապէս պիտի խոստովանեն նոյնպէս, որ նոր լեզուի մէջ բացի էական բայից ուրիշ բայ չկայ. բայց կարելի՞ է թոյլ տալ մէկ լեզու, որ միայն էական բայ ունենայ, առանց ուրիշ բայեր էլ ունենեալու. յետոյ, կարելի՞ է մի այդպիսի լեզուով իսօսել կարելի է ասումն, որովհետեւ էական բայը ինչ բայի որ կպչէ, նորան բայացնումէ ևայլն: Զպիտի մնուանալ որ նոր լեզուի մէջ, թէն գրեթէ միակ լծորդութիւնը եմ է, այնուամենայնիւ միայն ինքը եմը չէ կարող բայական զօրութիւն տալ բառին, սահմանական եղանակում, պէտք է որ նա կպչի նոյնպէս ուն մասնիկի հետ: Եթէ ասենք կամ գրենք «նորա ձեռքերը ներկում են» և այս ենը ընդունենք որպէս էական բայ, ուրեմն ներկումը դառնումէ նորան ինդիր և ուրիշ բան չէ հասկացնում, եթէ ոչ այս թէ «նորա ձեռքերը ներկի մէջ են»: Խսկ եթէ գրենք «նորա ձեռքերը ներկումն», այս տեղ ենը ընդունելով որպէս բայական վերջաւորութիւն, ումի հետ միացած, խկոյն հասկանումնք, թէ նորա ձեռքերը ոչ թէ ներկի մէջ են, այլ ներկելու գործողութեան վրայ: Եթէ եմ, ես, է բայական վերջաւորութիւնը էական բայ է,

*.) Մննք շատ հին լեզուով գրողներ գիտենք, որ և հին լեզուի մէջ երեւմն գործ են ածում իրենց սրանցելի տրամարանութիւնը. փոխանակ գրելու ցաւէ ինձ, ցաւ է ինձ գրելով:

և նոր լեզուի բոլոր բայերի ծնող կամ կալմաղը ուրեմն անհնար է, որ իւրաքանչիւր բայի իւրաքանչիւր ժամանակը, գէմքը և թիւը գրվեն առանց էական բայի, Բայց մենք տեսնումենք, որ ինչպէս մեր լեզուի նոյնպէս և օտար լեզուների մ.ջ մի բայ իր մի որոշեալ եղանակում, ժամանակում, գէմքում, թվում, պահումէ իր կազմուածքը անխախտելի, անմերի և անփոփոխ, այնպէս չե մեր նոր լեզուի բայերի կազմութիւնը։ Նախ, չերիք է, շատ անգամ, եթէ եղանակ, ժամանակ, գէմք և թիւ ցայց տուող վերջաւորութիւնը մէկ անգամ երևի, նորան հետեւող բայերը կարելի է դնել առանց այդ վերջաւորութեան։ այսպիսի դիպուածում էլ այս հետեւեալ բայերը ցոյց են տալիս գործողութիւն, բայց եղանակ, ժամանակ, գէմք և թիւ նախընթաց բայի վերջաւորութեան ուժով։ ինչպէս «գնումէ կարգում», յետոյ բերում վառում»։ Եթէ եմ, ես, Ե՞ն էական բայ է և նոր լեզուի բայերի կազմող, ուրեմն առանց նորան, բայը չափսի բայ լինի, բայց մենք վերի օրինակից տեսնումենք, որ կարդում, բերում, վառում բայեր են և ամրող բայական զօրութեամբ, որի գէմքը, թիւը և ժամանակը երեսումէ միայն նախընթաց գնումէ բայում։ Երկրորդ, շատ անգամ չերիք է, եթէ հարցնողը իր խօսքի բայով ցոյց տայ ժամանակը, գէմքը և թիւը, պատասխանի մ.ջ կարելի է բայերը դնել առանց եմ ես Ե՞ի. օրինակ, «ի՞նչ են անում ծցյերը» — «ուտում, խմում, պառկում», այսինք, ուտումեն, խմումեն, պառկումեն։ Յայտնի է, որ թէ եմ, ես, Ե՞ն էական բայ լինէր և միևն բայերի կազմող ուտում, խմում, պառկում չէին կարող բայի զօրութիւն ունենալ առանց, անպատճառ, իրենց վերջում ունենալու եմ, ես, և։ Եւ այս եմ, ես, և բայական վերջաւորութիւնք բուն էական բայի հետ չշիռելու համար չէ կարելի բաժան գրել երբ բայը գրումենք ամրող ձապէս, ինչպէս «ներկումէ», որպէս զի ներկում խօսքը, էական և բային ինսդիր չգառնայ և գաղափարի շփոմութիւն չծագի։ Բայց մեզ կարող են ասել, թէ ինչի՞ ուրեմն բաժանումենք, երբ այդ վերջաւորութիւնքը գնումենք նախադաս, ինչպէս «տուն եմ գնում»։ Ի՞նչպէս է որ այս դիպուածում չէ հասկացվում այս եմը որպէս էական բայ, Եւ եթէ նախադաս գրվելով բաժան է գրվում, ինչի՞ չէ կարող բաժան գրվել և վերջադաս լինելով։ Ստոյգ է, որ շատ անգամ լեզուի որին պահանջումէ այդ վերջաւորութիւնքը գրել նախադաս և մենք գրումենք. բայց, այսպիսի դիպուածում եմ,

ևս, ին չեն կարող բուն էական բայ կարծվել, որովհետեւ էական բայի խնդիրը միշտ նախադաս է լինում բայից. չենք ասում «ձեռքերը են ներկում», եթէ անորոշ է ներկը, իսկ թէ որոշեալ, պյան ժամանակ նորա ծայրին կալչումէ ը տառը, որով փարաւովումէ ամեն մթութիւն. Ուզերով ասել ձեռքերը ներկի մէջ են, պյլ ասումենք «ձեռքերը ներկում են», ուր ներկումը, որպէս նախադաս, խնդիր է լինում, ներկումից չէ ընդունվում որպէս առանձին առնված բայ և ներկումը նորան խնդիր, այլ երկուքը միասին մէկ բայ, թէև բայական վերջաւորութիւնը նախադաս. Կան քանի մի պատճառներ, որ պահանջումնեն շատ անգամ բայական վերջաւորութեանը նախադասութիւնը, որոնց մանրամասն քննութիւնը քերականութիւնից պիտի պահանջել. բայց մենք աւելի աչքի երկցող և ամեն մարդու հասկանալի մէկ պատճառը միայն գնենք. Նոր լեզուի բաղաձայն բառով վերջացած հայցականը կամ որոշեալ ուղղականը իրենց վերջում ըն ունեն, ինչպէս ծեռքերը. Այս ըթե, որ բառի վրայ մէկ վանկ է աւելցուցել նու է փոխաւում, եթէ հետեւեալ բառը ձայնաւոր տառով է սկսվում. և այդ նուն հնչվումէ այդ հետեւեալ ձայնաւորով սկսած բառի առանջին վանկի հաշուով, այնպէս, որ մէկ ամբողջ վանկ պակտումէ, որով խօսքը թեթեանումէ. Եթէ գրենք «ներկումն», այն ժամանակ ծեռքերը խօսքը չէ կարող իր ըթե նու փոխել և եթէ այդպէս խօսող էլ լինի, ինչպէս կան մի քանի նուասէր մարդիկ, զարձեալ բառի կազմութեան մէջ վանկի տնտեսութիւն չի լինիլ, որովհետեւ ինչպէս ծեռքերը, այնպէս էլ ձեռքերն երեք վանկից են բաղկանում. իսկ թէ բայական վերջաւորութիւնը նախադաս դնենք, այն ժամանակ ենը իր հաշուով է հնչում ձեռքերի նուն, ինչպէս ձեռքերն են — ներկում, որով ձեռքերը խօսքը առանց իր նշանակութիւնը փոխելու կամ կորցնելու ձգումէ մէկ վանկ և թեթեանումէ. Նոր լեզուի բովանդակ կազմութեան մէջ մեծ պաշտօն ունի այս տնտեսութիւնը, որպէս նաև բառերի վանկերը և տառերը հաւասարաշափ միմեանցից բաժանելու ձգտողութիւնը. Եւ առողջ աչքերով նայողը կտեսնէ, որ նոր լեզուի մէջ, ժամանակի խնդրութիւնը, առողանութեան ներդաշնակութիւնը և արտաքերութեան հեշտութիւնը մեծ քայլափոխ են արել. Մենք բաւական նիւթ պատրաստել ենք, որ վերաբեր վումն նոր լեզուի անդամագնուութեան և ֆիզիօզգեային, բայց բոլորը պիտի մտնեն նոր լեզուի մշակութեան տեսութեանը մէջ,

որ մի ներածութիւն է... Եթէ, ինչպէս մի անդամ ասացինք, աջողի մեզ գլուխ բերել այդ կտիս գործը:

Այս բոլոր խօսքի զօրութիւնը այս է, ա) թէ բայերը չպիտի բաժան գրվին իրենց բայական վերջաւորութիւնից, ինչպէս, փայլումէ, այլ անբաժան, ինչպէս փայլումէ; բ) Կարելի է բաժնել եթէ այս վերջաւորութիւնը նախագաս է գրվում; ինչպէս, է փայլում։ գ) Եթէ մի որպիսի և իցէ բայ ամենող գրվումէ ինչպէս զնումէ, կամ նն զնում, չետևեալ բայերը, ինչպէս, կոտրում, բերում, փառում և այլն կարող են առանց վերջաւորութեան գրվիլ։ Եւ դ), նոյն այս կանոնի զօրութեամբ, եթէ Մարկոսը իր հարցմունքի մէջ գործ է զնում բայը եղանակով՝ ժամանակով՝ դէմքով և թվով ինչպէս, «ինչ նն անում», Կիրակոսը կարող է պատասխանել բուն հարցմունքին առանց բայական վերջաւորութեան, ինչպէս, «ուտում, խմում, պառկում»։

Որ և իցէ հեղինակ, մի բան զրելու ժամանակ, պէտք է նայի, որ իր ձև ու ոճը հարթութիւն ունենայ և մի կանոնով առաջնորդվի, իսկ առանց կանոն, առանց համակարգութիւն, երբեմն արեւելք նայելով և երբեմն արեմուտք, լեզուն դառնում է մի մածնաբրդոց էլ գժուար է այնուհետև հաւասար, թէ այդ լեզուով գիրք կամ օրագիր հրատարակելը կարող է ժողովդի խօսած լեզուն մաքրել մշակել, կամ նորա վրայ ազգեցութիւն ունենալ։ Եւ ինչպէս կարնայ ժողովուրդը իր կարգացած գրքից մի ձև առնուլ մի որոշեալ բառի վերաբերութեամբ, երբ այդ բառը տարբեր ձևերով է գործ ածվում այն տեղ, որը նոցանից ընդունէ որպէս հետեւելի օրինակ։

Նոր լեզուի մէջ, թէև կան վեց հոլովմունք*), բայց նոցանից առաջնը իր տակ քաշել է բառերի ամենամեծ մասը, այնպէս, որ մնացած հինգ հոլովմունքը, միասին առնելով առաջին հոլովման տակ գնացող բառերի և մի քառորդը չունին. բացի սորանից այս հինգ հոլովմունքը իրենց սեփական յատկութիւնը միայն եղանակում ունին, իսկ յոգնականի մէջ բոլորն էլ գնումն առաջին հոլովման տակ, եթէ միայն դուրս հանենք մի քանի բառ, որ երբեմն

*.) Այս բոլոր հոլովմունքը մանրամասն և իրենց խոտորմունքներով է բացառութիւններով աւանդելը բերականութեան գործն է և մեր ներկայ քննութեան մէջ տեղ չունի. ապա մէջ ոչ մեր հատուածը բնաւ չի վերջանալ:

գործ են գրվում՝ չին ձևով, ինչպէս գպրութիւնք— գպրութեանց ևայլն, կամ՝ հայաստանի այլք— հայաստանի այց. Բայց որպէս այս խռորմանկը, նյոնպէս և ուրիշ շատեր, մեզ պէս, ոչ բարով, դրողների պահպանութիւնք կամ թոյլտութիւնք են, այս կամ՝ այն պատճառով և ոչ թէ ժողովողի ոգու կամ՝ հանձարի ստեղծած. Մեր առաջին հոլովումը է քաղաք, քաղաքի, քաղաքից. քաղաքներ, քաղաքների, քաղաքներից. Երկրորդը մարդ, մարդու, մարդուց. Մեր երկրորդ հոլովումը Տաճկաստանի հայոց առաջին հոլովումն է և մեր առաջինից աւելի բռնակալ, այնպէս, որ գրեթէ լեզուի բոլոր բառերը գնումեն այդ հոլովումի տակ իմաստքից բացառ ութեամբ:

Պ. Պոօշեանցը գիտէ այս, որովհետեւ Արարատեան աշխարհի ծնունդ է և իր գրուածքի մէջ գլխաւորապէս հետեւում բուն Արարատեան առաջին հոլովման, եթէ այդ հոլովումի տակ է հոլովմում բառը, ինչպէս Ճիւղեր, Ճիւղերի, Ճիւղերից. բայց և այնպէս երբեմն խռորվումէ և անխստիր գործ է գնում Ճիւղեր, Ճիւղերու. Խօսքը այն չէ, թէ առաջինն է գեղեցիկը, թէ երկրորդը, այլ այն թէ, որը սոցանից հանրական է Արարատեան լեզուն և թէ կարդացողը որը պիտի ընդունի. — Ճիւղեր, Ճիւղերի, թէ Ճիւղերու. Ոչ լոկ այս բառի վրայ է մեր խօսքը, և ոչ խակող. Պոօշեանցի գրուածքի վրայ. այսպիսիք հաղարներով կան մեր ամենիս գրուածքի մէջ. բայց, այս է մեր ասածը, թէ ինամով և ուշագրութեամբ վարվելով նոր լեզուի հետ հարկաւոր է այս ցիր ու ցան ճապաղ ընկած ձեւերը կարելի սկզբունքների վրայ ամբայնել որպէս զի նոցա միջնորդութեամբ կարելի լինի մի համակարգութիւն, մի ուղղախոսութեան արուեստ կազմել և նոր լեզուի ուսումնասիրութիւնը հեշտացնել. Բացի սորանից, չին լեզուի յոգնակի սեռականները շատ ինսամով, (որովհետեւ օտար է ժողովրդին) պիտի թոյլ տալ երբեմն, եթէ նոր յոգնականը բազմավանկ է, մանաւանդ եթէ երկու կամ երեք այդպիսի սեռականք (վերջահոլովն տրականն էլ պակաս չէ) իրար քամակից են գալիս. Իսկ միավանկ կամ քիչ վանկով բառերում՝ իսպառ պէտք է հեռանալ չին սեռականներից, որովհետեւ ժողովուրդը ունի իր բուն ձեւը. Շատ ուրիշների հետ, պ. Պոօշեանցը անխստիր գործ է ածում երգոց, զօրաց և այլն, երգերի, զօրքերի աւելու տեղ:

Հաստ նախադրութիւնը, որ հին լեզուում սովորաբար վերջահողով տրական ինդիր է առնում, նոր լեզուում բոլորովին անդործածական է: Ժողովուրդը, շատ անդամ «ըստ քաջութեան» կամ «ըստ քաղցրութեան» ասելու տեղ ասումէ կամ լոկ «քաջութիւնով», «քաղցրութիւնով» կամ «իր քաղցրութիւնով», «իր քաջութիւնով» և այլն. իսկ թէ գործիականի մողով չէ կարելի հասկանալ շատ իր ինդրով, օրինակ «վկայքն պատկին ըստ ճգնութեանցն», այն ժամանակ ըստ-ի ինդիր դարձած բառը առնումէ սեռական հողովով և նորա մօտ դնումէ կամ յափ խօսքը գործիական—չափով կամ համեմատ խօսքը և կամ մի որիշ խօսք, որ աւելի յարմարութիւն ունի բանին. ինչպէս «վկաները պատկումեն իրենց ճգնութեան չափով» և այլն. Մէկ խօսքով ըստ-ը վերջահողով տրականի ինդրով կենդանի լեզուի մէջ չէ գործածվում. համաձայն ենք որ գիտնական առարկաների մէջ, ուղենք չուղենք, պիտի ստիպվենք ըստ-ը ներս առնուլ բայց և այնտեղ պարտը կայ մեր վրայ խնամով գործ գնել, և աշխատել որ բուն իր ինդրի մօտ մի հին յոզնակի սեռական յատկացուցիչ էլ չունենայ: Պ. Պոօշեանցը շատ է քշում այս բառ-ը, «ըստ ժամանակին ներկործութեանց» զրումէ նա, որ պարզ գրաբառի կանոնիցն էլ դուրս և աւելի միջակ և խրթին ոճերի համաձայն, յատկացուցիչը յատկացելուց նախլնթաց: Բայց սորանից էլ լաւերը կան. «ըստ այլ և այլ ժամանակին հանդամանաց»: «թէ ըստ գիպաց, թէ ըստ հանդամանաց և թէ ըստ այլ և այլ իրողութեանց»: «ըստ պահանջման հանդամանաց վիպասանութեան»: Ասես թէ լուսահոգի Խապառաձին Կըկոիկեանի չետ է կովում: «կը քննեն, կը քաշքչեն, կը կրկտեն ըստ զանազան խելաց և իդէայից»*): Միշտ ներելի է հին լեզուից փոխ առնուլ, եթէ նորում չկայ այդ ձեւ կամ այդ բառը, բայց միշտ իննայելով և պէտք եղածից աւելի չառնելով: Մենք ասացինք որ ըստ-ը պիտի ստիպուենք ներս առնուլ բայց գիտական առարկաների մէջ և այն աւելի կարծութեան և ճշտութեան համար. ապա թէ ոչ ըստ-ը ինքն իրեն այն նախադրութեանց կարգումն է, որ ժողովուրդը կորուցել է:

*.) Թուղթ կաթուղիկեայց Խապառաձեան հօր՝ ընդդէմ Թոռնակակայ Կըկոնեկեան, տպեալ 'ի Փարիզ, յերեսներորդ եօթներորդ ամի ընակութեան հեղինակին 'ի նմին քաղաքի:

Մենք ամեն քայլափոխի մէջ տեսնումենք հին ձեւերի ազգեցութիւնը պ. Պոօշեանցի լեզուի վրայ: «...Խորենացին... ախորժանօք*) նուագ է հնչեցնում հասարակ ժողովրդեան հետ նրա բամբիուր»: Պարոններ, Աստծու սիրուն, իննայեցեք ժողովրդին, իրաւոնք արեք նորան: Նախ որ ոչ մի տեղ այդպիսի խօսակցութիւն չէ լսվում ժողովրդի մէջ, երկրորդ, պ. Պոօշեանցը գեղեցիկ և վսեմ ձեւերի հետևելով(?) բուն իրը փախուցել է, կենդանի է Աստուած, որ մենք չենք հասկանում այսուղ մէջ բերված խօսքերը Խորենացու հնչեցուցածը նուազն է, թէ բամբիուր. եթէ հնչեցուցածը նուագն է (ինչ ասել է նուագ հընչեցնել), ուրեմն հնչեցնել բայլ հասել է իր գաղարման կէտին նուագի մէջ, այսինքն Խորենացու առարկան նուագն է կամ Չամչեանի խօսքերով «նուագն է ինդիր սեռի բայիս հնչեցուցանէ», ուրեմն իւեղծ բամբիուր մնում է անգործ, թէև տեսքի համար մէջ տեղ է բերվում, Բայց անտիկեան բամբիուր չէ ուզում երկայսութեան տակ մնալ. նա դրականապէս բողոքումէ և ասումէ թէ երբ թափեցիր իմ վրայից երկու երեք հաղար տարեկան փոշին և էլ հանեցիր կեանքի աշխարհը, ուրեմն պատշաճապէս ներգործել տուր ինձ, ապա թէ ոչ թող Ճնշուիմ դարերի ծանրութեան տակ:

Ախ պարոններ, մաքուր սրտով և սուրբ Խողճմանքով ասումեմ ձեզ, քանի որ դուք այդ վերև ոճերի քամակից գնաք,

*) Զք վերջաւորութեամբ գործիականը միմիայն «ձեռք» բառը հոլովելի ժամանակ Նոր-Նախիջևանի հին պառաւները ասումէին «ձեռօքս զրի», բայց այժմ իսպան չէ լսվում: Առ հասարակ այդ քաղաքի լեզուն մնձ փոփոխութեան է ենթարկվել, որոնց մի քանիսը մեր աշքի առջև կատարված: Սորանից 20—30 տարի առաջ շատ պառաւներ կամ ծերունիք գործ էին ածում այնպիսի բառեր որ բաւական մօտաւորութիւն ունէին հին լեզուին, օրինակ բերեմ բայի կատարեալի երրորդ դէմքում ասումէին ի բեր փոխանակ երեր, նոյնպէս գնեմէի կատարեալը եղեր, փոխանակ եղ: Այսօր այս բոլորը անհետացել են. և Ղըմից բերած թամար բառերի պաշարի վրայ ոչ միայն «օր ըստ օրէ», այլ «ժամ ըստ ժամէ», եթէ կարելի է այսպէս ասել, աւելանումն ուուսի բառեր, այնպէս որ սորանից լիսուն տարի ետքը, եթէ այս աղծատանքի առաջը չառնվի, հարիւր բառի մէջ բան հինգ բառ հայի չպիտի մնայ: Ցաւալի երկոյիծ:

միշտ անսպակաս պիտի լինին ձեր զլելից այս տեսակ վործանքներ. ձեռք վեր առեք գոյանից և այն բարձրաստիճան պատուանդաններից իջէք հասարակ ժողովրդի մէջ; Հին լեզուի կարկատանները պյնքան յարձարութիւն ունին նոր լեզուին, որքան խաչը Ամենասին, որ Սիբասոս հինգերորդը տուեց Ամենասի արձանի ձեռքը, խլելով նորա նիզակը. Բայց նա իր խելքով ասումէր, երբեմն, Հառվիմի մէջ Ամենասի պաշտոնքը խաչ պաշտոնների արինը թափեցին, թող այժմ խաչը յաղթական հանգնի Ամենասի ձեռքում և թող փշրզի նորա մահաբեր նիզակը. Մենք չենք կարող այս դրութեան հետեւել. Նոր լեզուն հնի առջեւ այնպէս յանցաւոր չէ, ինչպէս Սիբասոսը յանցանք էր համարում Ամենասին քրիստոնեանների մարտիրոսութիւնքը. Մնաց որ նոյն խոկ Սիբասոսի գործը անխորհուրդ և յիմարական, վրէժ հանել անշունչ արձանից, երբ նա քրիստոնեանների կոտորվելու ժամանակ էլ այնքան անմեղ էր իր նիզակով որքան այժմ Սիբասոսի տուածով:

Համաձայն ենք, որ մէկ մարդ կարդալով մեր այս տուղերը և տեսնելով, որ մենք մի կողմից վսեմ ոճերի հետևողութիւնը, հին լեզուից արտաքին ձեւեր փոխանուուը գատապարտելով, ինքներս շատ անգամ աւելի խրթին բառեր ենք առնում հին լեզուից, որ ժողովուրդը չէ գործածում, տեղտեղ էլ գաւառական բառեր կամ ձեւեր գործ ածում, որ ամեռող աղջի մէջ սովորական չէ, կարող է ոչ միայն զարմանալ մեղ վրայ, որպէս մի ինքնահաւանի վրայ, որ ինքն էլ չգիտէ թէ ինչ է ասում, այլ մինչեւ անգամ արհամարհել մեղ, կարծելով, թէ մեր խօսքերը ուրիշ բանի համար չեն, եթէ ոչ ուրիշ գրածը գատել և պակասութիւնքը երեան հանել, մինչդեռ մենք ինքներս մինչեւ մեր վեզը թաղված ենք այդ տեսակ պակասութեանց մէջ: Սւելորդ չէ երկու խօսք ասել այս պատճառով, որ երկցած հակառակութիւնը բացատրվի:

Նոր լեզուի հնից զլինաւոր և հիմնական տարբերութիւնը էապէս հիմնված է բանի կազմութեան վրայ, բաղդասութեան և ձեւերի վրայ: Սայդ է, որ հին լեզուի բառերի շատ մասը մոռցել է ժողովուրդը, ստոյգ է որ շատ բառ չի հասկանում, բայց, ինչպէս մի չգիտացած լեզու սովորելու ժամանակ, եթէ առանձին առանձին առնված բառեր միայն սորվենք, հերիք չէ մեղ այդ բառերով խօսող աղջի լեզուն հասկանալ և դորա հակառակ,

եթէ այդ լեզուի կաղմութեան օրէնքը և բաղդասութիւնը սոր-
վենք, այլ բառ ոչ այնքան շատ, այնու ամենայնիւ այդ լեզուն
մենք կը հասկանանք, այնպէս էլ մեր ժողովուրդը չնայելով, որ
երեւմ հարկից ստիպուած նորան անծանօթ բառեր ենք գործ
գնում, կը հասկանայ մեր գրածը, եթէ հաւատարիմ մնանք նոր
լեզուի ոգուն բաղդասութեան և օրէնքներին. Առանձին առան-
ձին առնված բառեր սորվելը շատ հեշտ է, մենք մեր փորձերից
կարող ենք ստուգել, երբ սկսումենք օտար լեզուներ սովորել,
բայց թէ ինչ օրէնքներով միմէանց հետ են կապվում այդ բա-
ռերը, մէկ խօսքով լեզուի բաղդասութիւնը այնպէս հեշտ չէ և
երկար տարիներով կեանք ենք մաշում, մինչև սորվումենք. Մտքի
զօրութիւնը բաղդասութեան օրէնքի մեջ է, եթէ այդ օրէնքը
մեզ յայտնի է, մեզ անծանօթ բառ հանդիպելու էլ լինի շատ
անդամ՝ առանց բառարանի օգնութեան հասկանու մենք նորա նշա-
նակութիւնը, որովհետեւ ամրող բանի զօրութիւնը մեզ հաս-
կանալի է, որովհետեւ բաղդասութիւնը և ձեերը ծանօթ են.
Ասպա եթէ մի այնպիսի բառի պատահենք, որ չկարողանանք հաս-
կանալ, ում հարցնենք որ մեզ շասէ, կամ՞ ո՞ր բառարանը չէ
կարող լուծել մեր տարակոյսը, Սորա հակառակ, ինչպէս վերը
ասինք, եթէ լեզուի բաղդասութեան օրէնքը անհասկահալի են
մեզ, բանի զօրութիւնը կմնայ անյայտ, էլ ոչ Մարկոսը կարող է
օգնել, ոչ բառարանը. Եյս պատճառով հին լեզուի արտաքին
ձեերը, նորա բաղդասութեան կծեպը (կեղե) նոր ժողովուրդը չի
մարսիլ. այս պատճառով էլ մենք ընդդէմ ենք, երբ ամրող
նախադասութիւնք գործ են դրվում այդ ձեռվ. Բայց նոր լե-
զուն գյանալով այլ պատմական գէպքերի, այլ աշխարհների
և այլ ժամանակների աղղեցութեան տակ շատ բառ չունի, որով-
հետեւ ժողովուրդը կամ չունի այդ բառերի գաղափարը. կամ
օտար բառ է գործ ածում. Յայտնի է թէ այդպիսի դիպուա-
ծում պիտի բառ փոխ առնենք հին լեզուից. և այնպէս գաղա-
փարների համար, որ նոր քաղաքակրթութեան արդիւնք են և
բնաւ նոյս բռն բառը հին լեզուում էլ չունիք, պիտի նաև
օտար լեզուներից առնունք, ինչպէս մեր նախնիք առել են, որ
մենք կարող ենք հարիւներով զայց տալ. Տարակոյս չկայ, որ
ժողովուրդը, իսկոյն, կարդացած բոպէին, չէ կարող հասկանալ
ոչ հին լեզուի և ոչ օտարից առնված բառերը. այստեղ ոչ
ժողովուրդն է մեղաւոր, ոչ հեղինակը. Ինչ անէ ժողովուրդը որ

չպիտե այդ բառը, կամ ինչ անէ հեղինակը երբ ուրիշ բառ չկայ և հարկից բոնադատված ընդունել է կամ հինը կամ օտարը, հեղինակը բնաւ հնար չունի այս ցաւին ճար անելու. բայց ժողովուրդը այդ առանձին առանձին առնված բառերը կարող է կամաց կամաց սորվել և հասկանալ, մանաւանդ եթէ մի փոքր ուշադրութեամբ կարգայ, կամ թէ մի մարդու հարցնէ կամ բառարանին ակը տայ, հեղինակի պարտականութիւնն է ժողովոդի լեզուի բաղդասութեան հաւատարիմ մնալ, և չին կամ օտար լեզուներից առնված բառերը ժողովոդին յայտնի օրէնքով կապակցել ժողովոդի պարտականութիւնն է հեղինակի գրածը ուշադրութեամբ կարգալ և չհասկացած բառի նշանակութիւնը սորվել կամ մի գիտեցողի կամ բառարանի միջնորդութեամբ: Գո՞նէ այսպէս է մեր հայեացքը և այն է պատճառը որ տեղն եկած ժամանակ, երբ ուրիշ հնար չկայ, չենք փախչում հին լեզուի կամ օտար լեզուների բառերից:

Գաւառական բառերը, եթէ բուն հայերէն են և այդ բառի գաղափարը հասկացնելու համար մեր նոր գրական լեզուն բառ չունի կամ երկու երեք բառ է գործ զնում՝ այն գաւառական մէկ բառի տեղ այն ժամանակ նախընտիր է այդ գաւառական բառը, որ գործ ածվելով կը գառնայ հանրական: Գրութեան շնորհքն է, որ այսօր Խուսիացի և Տաճկաստանցի հայերը միմեանց գրած աւելի շատ են հասկանում, քան թէ տասը տարի առաջ. հարկ չկայ ասել, որ քսան տարի ետքը աւելի լաւ պիտի հասկանան իրար խօսածը:

Կան գաւառական բառեր, որ գրեթէ նոյանշան են, բայց և այնպէս բարակ քննութիւնը բացումէ նոցա տարբերութիւնը. այդ բառերը պիտի գործ ածել իրենց բուն, ճիշտ նշանակութեամբ և դորա նման մի բառ ունենք ասելով այն բառը շոայլութիւն համարել: Մարդկային միտքը շատ նազիկ գոյներ ունի և որքան շատ հայելի ունենանք իւրաքանչիւր այդ գոյները մեզ ցոլացնող, այնքան պարզ կը տեսնիմի մոքի ամբողջ նկարը, բայց եթէ կոպութեամբ միայն գլխաւոր և խոշոր գոյների քամակից գնալով կէս գոյները կամ կէս ստուերները աչքից փախցնենք, նկարի տպաւորութիւնը կը կորցնէ իր ներդաշնակութիւնը: Մտքի գոյները ցոլացնողքը բառերն են. և աշխարհիս երեսին ոչ մի լեզուում երկու բառ չկայ մաթեմաթիկաբար ճիշտ մի և նոյն նշանակութիւնը տուող, ամենքն ել տարբերվութեն իրարից թէ


շատ և թէ քիչ կեղսի հարստութիւնը բառերով է, նոքա են
այն ամանները որոնց միջնորդութեամբ մեր միտքը հասնում է ու-
րիշին. Այս տեղ տղպյական նեղսրտութիւնք կամ ցնդի հեգնու-
թիւնք, արհամարհանք այս կամ այն գաւառական բառի վրայ,
եթէ ոչ կորստաբեր ազգեցութիւն կունենայ նոր լեզուի մշա-
կութեան և առաջադիմութեան վրայ, գոնէ կը գանդաղեցնէ
նորա ընթացքը. Կամ բառեր կամ ձևեր որ Արարատեան այն
է մշակել և կերպարանել, կան բառեր, որ Վանեցին է մշակել
կամ Մշեցին. բայց ինչ հարկաւոր է այսպիսի ուժով կենդրոն-
ների վրայ խօսել, շատ հզյակապ և հեշտ պատուաստով բառեր
և ձևեր կան այս ու այն տեղ նաև շատ փոքր հասարակութեանց
մէջ, պէտք է այդ բոլորից ել օգուտ քաղել ինսամով և շշան-
կատ ընտրութեամբ, եթէ այժմեան գրագէտը մի որոշեալ գա-
ղափարի համար բառի կամ ձեի է կարօտ, աւելի լաւ չէ որ մի
հայ ընկերութեան միջից առնու իր չունեցածը, որ հայ ազգի
պէտքերից և հայ ազգի ոգուց առաջացած լինելով, աւելի հեշտ
կարող է մարսական լինել ազգի ընդհանրութեան, որովհետեւ
և այն տեղի հայերը միմեանց հետ ունին ոգու ընական ազգա-
կցութիւն, քան թէ նստի բառ արուեստակէ, ձե շինէ, կամ այս
ու այն ազգից մուրայ, որ իր անսպարութեամը կամ օտարու-
թեամբ գուցէ բնաւ չի պատուաստվի ել ազգի լեզուի վրայ:
Վերստին կրկնումնք, մինչև բոլոր գաւառական բարբառներից
ճանփաններ չբացուին դէպի գրական լեզուի կենտրոնը, սա ոչ
միայն չէ կարող ծաղկել և ուժ առնելով հանրական խորհուրդ
ունենալ ազգի համար, այլ կամ մի գաւառի կը սորկանայ, կամ
չորցած, սատկած, ամուլ և անպատուղ կը մնայ. երկու դիպուա-
ծումն ել լեզուն հանրականութեան խորհուրդը կորցնելով ազ-
գին համար կը լինի չեղածի պէս, իսկ ինքը ազգը կենդանի—
գրական լեզուի կարօտ: Թէ և այս խնդիրների ընդհանուր մշա-
կութիւնը տեղիս վերաբերութիւն չունի, բայց և այնպէս չամ-
բերեցինք, որ մի քանի խօսք չասենք: Այս խնդիրը խիստ մօտ է
իմ սրտիւ, ուստի թող ներեն մեզ մեր ընթերցողքը մեր տկա-
րութիւնը, երբ չենք կարողանում մեր խօսքի ընթացքը կտրել
երբ բաննը գալիս է լեզուի մշակութեան:

Հին լեզուի ումն վերջացած բայանունները, որպէս անկումն,
հերքումն և այն, ընկած է ժողովրդի բերնից այդ բառերը փո-
խանակել է նա նոցա բայերի աներեւոյթ եղանակով, ինչպէս

ընկնել հերքել և այլն և որ նցյն բանն ասել է, մինչև որ Սալշանթեանց Միքայել եպիսկոպոսը, բացի աներեւյթ եղանակը ուրանալով ընկնելը և հերքելը անկման և հերքման հաւասար գոյական անուն է, ասաց. Յայտնի է թէ Սալշանթեանցի սիսալը տրամաբանութեան մէջ չէր, այլ սկզբունքի մէջ. քերականութիւնը միայն նշանակութեամբ չէ օրոշում մասունք բանին, որով շատ խառնախնտորութիւնք կը լինէին, այլ և բառի կազմութեամբ. Սայդ է աներեւյթ եղանակը անունի պարագաները ունի և բայի պարագայք չունի, բայց հասարակ բայանուներից տարբերվումէ նորանով, որ բայի լծորդութեան արմատը ունի իր մէջ. գործել գտանալ թողուլ հաշտիլ որոնք իրենց ծայրի տառերը միմիայն դէմք ցոյց տուող տառերով փոխանակելով, ինչպէս մ, ս, է արդէն ստանումն բայի կատարեալ ուժը և զօրութիւնը, մինչդեռ բայանունները, որ ճիշտ աներեւյթ եղանակի նշանակութիւն ունին, չեն կարող այս կերպով բայի պարագայք ստանալ անունի պարագայքը իրենց վլայից ձգելով. Սորանից երեսումէ, որ այս բայանունները կամ նոյն բայերի աներեւյթ եղանակները կարող են միմեանց փոխանակ գործ գործել որով հետեւ նշանակութիւններն մի և նոյնն է և աներեւյթ եղանակը տարբերվումէ այդ անուններից նորանով, որ միայն դէմք ցոյց տուող տառեր առնելով իր վերջը կատարելապէս բայի որականութիւնն է ստանում, ուրիմն ժողովրդը դատապարտելի չէ, եթէ այդ ումն վերացական առքական անուններն փոխանակել է նոյն բայերի աներեւյթ եղանակով որ հեշտ հոլովվում է երկրորդ հոլովամի տակ, ինչպէս մարդ մարդու. հաւատարիմ մնալով ժողովրդին, մենք պարտական ենք ընդունել այս կանոնը, բայց ոչ դրականապէս. Տաճկաստամի նորահիւս հայ հեղինակները շատ տեղ գործ են զնում այս առքական անուննունները առանց նոփ, ինչպէս հերքում, մերժում, հոլովելով հերքումի և մերժումի. Պիտի թոյլ տալ այս ձեւը, որովհետեւ շատ անգամ երկու աներեւյթ եղանակներ միմեանց քամակից են գալիս, եթէ բնական աներեւյթ եղանակից յետոյ ումն էլ գարձնումնենք ել, ինչպէս մերժումն—մերժել. Յայտնի է թէ այս լոլոր բացառութիւնքը, որ անումենք ժողովրդի ձեփ ընդգետմ, պիտի ինամով, զգուշութեամբ և միայն անհրաժեշտ եղած տեղը գործ գնել և ոչ թէ բան գործ շինել. Իսկ բուն հին ձեփ գործադրութիւնը—

Հեղումն—Հեղման և այլն, շպիտի թշվ տուած, թէև մինչև
այժմ ազատ չենք նորանից և կարձութեան համար*) ստիպ-
վումենք երբեմն գործ դնել:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.



*) Արդարութիւնը պահանջումէ խոստովանել, որ այս կարձու-
թեան համար պահելն էլ իրաւունք չէ; Նոր լեզուի բառը կարծէ թէ
երկալն, որ այդպէս է ձեւորդել, մենք բնչ իրաւունք ունինք մերժել
այդ բառը: Հին լեզուում չկան բազմավանկ բառեր: Բայց այս որ,
անհնար է մէկ օրվայ մէջ կամ մէկ տարու մէջ միայն տեսական կա-
նոնների վրայ հիմնվելով հազար տարու աւերանքը շինել, հերիք է
եթէ միայն այդ ուղղութիւնով առաջ երթանք:

ԱՍԱՑԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

ԲԻՒԶԱՆԴԱՑԻ, Նորայր Ն.—Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստուգանոսի Տարօնեցով Սատղիկ Կոչնցելով. Սրտատպած «Գրականական և Պատմական Հանդիսից», Մոսկովա, տպ. Օ. Հերբեկի, 1889:

Գիհի ԴՀ-ՍՕՊԱՍՍՆ.—Երեք զրոյց, I. Վախկու. II. Գիւղի Մուրացկան, III. Զինուոր Դիւրիւին. Թարգ. Աղ. Մատուրեան. արտատպած «Գրականական և Պատմական Հանդիսից» (Մեծ. ա. Յ. Տէր-Յակոբեանի ձախրոյց). Մոսկովա. տպ. Օ. Հերբեկի, 1889:

ԴԵ ԱՄԻՉԻԾ.—Եղ.՝ Սիրտ, աշակերտի լիշտակարանը. Գրանսերէնից Թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1889. գինն է 1 ր.:

Ե. Մ.—Փաստոս Բուգանդ, Վիեննա, 1890. Միսիթարեան տպարան, գինն է 50 կոպ.:

ՆԱՐ-ԴԻՈՍ.—Աննա Մարդեան, Էտիոդ. VI հրատարակութիւն Բ. Բամալեանի. Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանի, 1890. գինն է 30 կոպ.:

ՇԻԼԵԲԻ, Ֆ.—Աւազակներ, ողբերգութիւն. գերմաներէնից Թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1890. գինն է 50 կոպ.:

ԶՈՒԲԱՆ, Գ.—Հասօ, պատկեր. արտատպած «Գրականական և Պատմական Հանդիսից». Մոսկովա, տպարան Օ. Հերբեկի, 1889. գինն է 30 կոպ.:

ՍՍՐԴԱՐԵԱՆՑ Ա.—№ 1. Զուարծալի ժամեր, ժողովածու հանելովների, բառախաղների, խաղերի, խնդիրների, բէրուաների, անեկդուսների և այլն... մասն առաջին, Թիֆլիս, տպ. Խոտինեանցի, 1890. գինն է 40 կոպ.

— № 1. Բանալի կամ բացատրութիւններ «Զուարծալի ժամերի», մասն արկրորդ. Թիֆլիս, տպ. Խոտինեանցի, 1890. գինն է 10 կ.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ առաջին հնարողը Յ. Գուտէնբերգ, Թարգ. Մարդարիտ. Մոսկովա, տպ. Մ. Բարինուարեանի, 1890.

ՌԱՅԹԻ.՝ Սամուէլ, պատմական վէպ. առաջին, երկրորդ և երրորդ գիրք: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի. 1888. գինն է 3 ր.:

ՓԱՆԵԱՆՑ Թ.—Մելիք, պատկերներ հայ գիւղական կեանքից: Թիֆլիս, տպ. Վարդանեանի, 1889. գինն է 25 կ. (ծախում է յօդուտ Ռաշտ բաղաքի ծխական դպրոցի):

Դրամական Հաշիւ Բագույ Հայոց Մարդասիրեկան Հնկերութեան յանուն Ա. Գրիգորի Լուսաւորչին վասն 1889 ամի:

Մոսկովյի Հայոց Եկեղեցեաց Խորհրդարանի 1888 և 1889 Թուականների հաշիւ. Մ. 1890.

Կասպարովսկի ծոլոք ծայ որիոտա ծոծոյիք Արլինչ Յա Մոսկվա, Թ. 1889.

Օթշետ օվունտա Կասպարովսկաց Որիոտա ծայ ծոծոյիք Արլինչ Յա Մոսկվա 1889 տար. Թ. 1890.

Հ Ա Ն Դ Ե Ս

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՄԻ ԻՆԸ.

I. Նա սպասում է զեռ... պատկեր. Գ. Զուբար;—II. Միքարծէք որ ես... բանաս. Գաման-Քայլիպար.—III. Առաջին Սէր, վէպ Տուրգենևիլից;—IV. Զորս բանաստեղծութիւն. I. Արագն Էկաւ, II. Մ-ին, III. Երգչի անէծքը (Ուլանգից) և IV. Կեանք. Յով. Յովանիսիւսեան;—V. Անկոչ Տիւրը, վէպ. Պ. Հ. Աղամեան;—VI. Մտիր կուսաստան, բանաստ. Պ. Հ. Աղամեան;—VII. Մանկան թոթովանք, բանաստ. Ղ. Աղայեանց;—VIII. Յիւնար ոչիարներ (առակ մեծերի համար). Գ. Զուբար;—IX. Սրեելեան զրոյց. Եւրէինովից;—X. Ազգային բանաստեղծ, բանաստ. Աղ. Ծատուրեան;—XI. Ազեւոս իշխանի պատմութիւնը, Վ. Գարշենից. Վ. Մ.-—XII. Չեմ ալօթում... բանաստ. Նադոսնից. Պ. Հ. Աղամեան;—XIII. Յարութեան գիշեր, աւանդութիւն Շշեղինից. Աղ. Ծատուրեան;—XIV. Դիւղի ասպետները, զրոյց Մօնսրէից;—XV. Մուսա, բանաստ. Աղ. Ծատուրեան;—XVI. Կիսրար կամ Մշեցու չայրու մը խոստովանանքը. Վ. Յ. Մ.-—XVII. Հայ ժողովուրդը, նորա այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Իշխանաստանում, համարոտ տեսութեամբ. Ստ. Նաղարեանց;—XVIII. Հին ցաւ. Գար. Ենգ.-—XIX. Նիւթեր մատենագրութեան պատմութեան համար. I. Ստեփանոս Նաղարեանցի թղթերից, II. Ուկան վ. Կոտակը;—XX. Ծատուրէն մէկը, պատկեր. Սիւլիկ.—XXI. Զէյթունցի կինն առ պանդուխտ ամուսինն իւր. Յ. Զարբեան;—XXII. Խոստովանանք, Կուպէնանաթուին հացը, Նոր աղօթք, հայի. Սիւլիկ;—XXIII. Վանեցի պատաւ. Սառայի իրատն առ Կուտրաթ Խաթունն և Կուտրաթ Խաթունի պատասխանը. Մ. Կ. Միքայիլուրեան;—XXIV. Օձի խածած, պատկեր. Սիւլիկ;—XXV. Ատենախոսութիւն. I. Շէքսպիր և իւր համեմեթ ողերգութեան աղքիւրն ու քննադատութիւնները, աշխատասիրեց Պ. Հ. Աղամեան գերասան. II. Կորած Մարգարիտ, վէպ-Նկարագրութիւն. Ս. Փիլոյեան;—XXVI. Մահացուցակ Յ. Շիշմանեանի;—XXVII. Ռաֆֆիի մահը (մի առաջարկութիւն),—XXVIII. Հայ գիւղացիների հայեցքը լնութեան երկոյթների վերայ, Յ. Մ. Տուտուխեան;—XXIX. Ակամայ պատաման,—XXX. Հրատարակչի կողմից;—XXXI. Յայտարարութիւններ.

ԵՐԿՐՈՌԴ ԳՐՑԻ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը.

I. Մի Կտոր՝ հանած իմ տպելու պատրաստ աշխատասիրութիւնից, Պ. Պոչեանց:—II. Բանաստեղծութիւններ, Մ. Նալբանդեան:—III. Ծեր Յարկոսը, պատկեր. Լէօ:—IV. Վերջին փափագ, բանաստ. Ս. Շահազիղեան:—V. Կաճետայ ծռեր, յիշողութիւն, Տ. Փիրումեան:—VI. Ընկեր իմ, բանաստ. Նազսոնից, Յ. Յովչաննիսեան:—VII. Հաս, պատկեր. Գ. Չուրապ:—VIII. Երեք արմաւենի, բանաստ. Լէրմծնոռովց. Գամառ-Քաթիպա:—IX. Յիշողութիւն, Սօնէտ, Ինչպէս քաղցր երալ. բանաստ. Յ. Յովչաննիսեան:—X. Պոյէտ, բանաստ. Աղ. Ծատուրեան:—XI. Հայի Ճուտ. Երգ, Աշող Զիւան:—XII. Երեք զրոյց. I. Վահկոս. II. Գիւզի Մուրացին և III. Զինուոր Դիւրիսին, Գիւի դը-Մօպասանից. Աղ. Ծատուրեան:—XIII. Երգ, բանաստ. Նժդէչ:—XIV. Մէր դաշտն ու հովիտ... բանաստ. Գ. Բարխուզարեան:—XV. Սիրոյ վատեր, Զարատանջ զոհ. Այս աշխարհին. (Հայնէից). բանաստ. Աղ. Ծատուրեան:—XVI. Լաւ բժշկեցին, պատկ. Նար-Դոս:—XVII. Պոէտ և Աստղեր. Սպիտակ զգեստ, բանաստ. Ժարդ. Ս. Թանգեան:—XVIII. Արձագանք, Տաճկա-Հայատան և Հայք. բանաստ. Գ. Բարխուզարեան:—XIX. Ճանապարհորդութիւն գեպի Հայատան, Ֆր. Բոգէնշտէզամից:—XX. Ժուկ ովքեր էին ս. Վարդանանց և նոցա ժամանակակից Հայ սերունդի դաստիարակենիները, Լօրդ:—XXI. Երկու խօսք. Յառաջարան: Մ. Նալբանդեան:—XXII. Աղգային նկատողութիւնք. Լապտեր Հայատանի. Ս. Նաղարեանից:—XXIII. Արկողդ ըգլոյա... Գ. Եպ. Այլվաղեան:—XXIV. Յուցակ ստացեալ աղխից... Մ. Թաղապետեան:—XXV. Մատենախօսութիւն — Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողեկ կոչեցելոյ. Ն. Ն. Բիւզանդացի:—XXVI. Բանք ի Պողոս Կրօնաւորէ, Ղ. Վ. Փիրղալէմեան:—XXVII. Աղդ. Ելլ և այլք:

- I. Վարժապետ, II. Վարժէվօր. պատկ. Ախտամերկեան:
 III. Սատանայի օջիլ, պատկեր }
 IV. Խօռթլախ } » } Սիւլիւկ:
 V. Յայտարարութիւններ:

Հրատարակիչ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԻՇԱՐԵԱՆ.

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն

Ն Ո Ր - Դ Ա Ր

Ա Մ Ե Ն Օ Ր Ե Ա Յ Թ Ե Ր Թ Ը

Թ Ի Փ Լ Ի Ս Ո Ւ Մ

ՆԵՐԻԱՅ 1890 Թ ՈՒԱԿԱՆԻՒՆ

(Ե Շ Ա Խ Ե Ր Ր Ե Ր Պ Պ Ա Յ Հ Ե Վ Ե Լ)

Հ Յ Ա Տ Ա Ր Ա Կ Վ Ո Ւ Մ է Ն ո յ ն ղ ե ր բ ո վ և Ն ո յ ն ծ ր ա զ ր ո վ .

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Ժ Ի Ւ Ն Ծ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ է ի ւ ր ս ե պ չ ա կ ա ն հ ե ռ ո ւ ժ ի լ ն ե ր ը .
Տ ա ր ե կ ա ն գ ի ն ն է 10 ր . վ ե ց ա մ ն ու ա ն ը՝ 6 ր . հ ա տ ո վ՝ 5 կ .
Ե ւ ր ո պ ա յ ի , Թ ի ւ ր ք ի ա յ ի , Ա մ ե ր ի կ ա յ ի և ա յ լ հ ե ռ ա ւ ո ր ե ր կ ը ր -
ն ե ր ի բ ա ժ ա ն ո ր դ ն ե ր ը վ ճ ա ր ո ւ մ ե ն տ ա ր ե կ ա ն 30 ֆ ր .:
Բ ա ժ ա ն ո ր դ ե ն գ ր վ ո ւ մ ի ւ ր ա ք ա ն չ ի ւ ր ա մ ն ի 1-ի ց մ ի ա յ ն :
Թ ի փ ի ս ո ւ մ բ ա ժ ա ն ո ր դ ե ն գ ր վ ո ւ մ մ ի ա յ ն «Ն ո ր - Դ ա ր » - ի
խ մ բ ա գ ր ա տ ա ն ը :

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Ժ Ի Ւ Ն Ծ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ է Բ ա ր օ ն ս կ ա յ ա փ ո ղ ո ց ո ւ մ , պ օ ս տ -
հ ե ռ ա գ ր ա տ ա ն գ է մ , տ ո ւ ն № 12 :

Օ տ ա ր ք ա ղ ա ք ն ե ր ի ց գ ի մ ու մ ե ն խ մ բ ա գ ր ո ւ ժ ե ա ն . Տ պ լ ի ս է ,
въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis
(Caucase), Rédaction du journal «NOR-DAR».

Խ մ բ ա գ ի թ ի ր ա կ ի ի չ

Ս Պ Ա Ն Դ Ա Ր Ս Պ Ա Ն Դ Ա Ր Ե Ա Ն .

Բ Ա Զ Մ Ա Վ Ե Պ

Ա մ ա մ ե ր թ , Խ Ը լ տ ա ր ի .

Տ ա ր ե կ ա ն բ ա ժ ա ն ո ր դ ա գ ի ն ն է 10 ֆ ր . (4 լ ո ւ բ .) .

Հ ա ս ց է ն՝ Rédaction de la Revue «Basmavep» , Venise
(Italie) St-Lazare.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

,,Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Ք“

Ներկայ 1890 թուականի Յունուարի սկզբից «Արձադանք» շարաթաթերթը հրատարակվում է պատկերազարդ:

Պատկերազարդ «Արձադանքը» հրատարակվում է նոյն ծրագրով, աւելի մեծ դիրքով և աւելի ճոխ բովանդակութեամբ:

ԱՅՑԱ Է ՏԵՍԽԱՌԻՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ,

ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵԲԸ,

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ.

Պատկերազարդ «Արձադանքը» կը պարունակէ հետևեալ

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՒ ՆԿԱՐՆԵՐԸ.

- I. Պատկերներ հայրենի և օտար ժամանակակից ու պատմական գործիչների, հռչակուած պետական ժառայութեան, գիտութեան, գրականութեան և գեղարուեստի ասպարեզներում:
- II. Պատկերներ արձանների, գանազան տեսարանների և պատճեներ գեղարուեստական նկարների:
- III. Ուրուագիծներ, զծազրութիւններ, լուսանկարներ տեղագրական և հնագիտական բովանդակութեամբ:
- IV. Ճարտարապետական, դրամագիտական և գրոշագրական նկարներ և պատկերներ:
- V. Ծածկանկարներ և բառախաղութիւններ:

Պատկերազարդ «Արձադանք» բաժանորդագինն է տարեկան ՏԱՅՆ րուբլի, կես տարով ՎԵՅՑ րուբլի:

Ապահով բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Թիֆլիսում բաժանորդագրութիւն ընդունվում է Խորագործութեանս մէջ, Կենտրոնական գրավաճառանոցում և Խորագրի մօտ (Փոխագարձ Վարկի Ընկերութիւն):

Օտար քաղաքներից պէտք է գիմել՝ Տիֆլիս, Ռեడակցիա յահութեալ պահանջման մէջ, Կենտրոնական գրավաճառանոցում և Խորագրի մօտ (Փոխագարձ Վարկի Ընկերութիւն):

Խոր. ՀՀ Տիֆլիս, Ա. ՅՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ,

„Մ Ո Ւ Թ Շ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍՏԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԵՄՍԱԳԻՐԻ 1890 թ.

Բաժանորդագլուխիւնը շաբանակվում է.

«Մուրճը» հրատարակվում է ամեն ամիս 9—11 թերթ
մեծութեամբ:

| | |
|---------------------------------|-------|
| Տարեկան բաժանորդագիրը | 10 ր. |
| Կէս տարուանը | 6 » |
| Երեք ամսուանը | 4 » |
| Մի գրքով կը 50 դ. | |

Ընդունվում է բաժանորդագլուխիւն նաև մաս-մաս առա-
ջին կիսամեակում ամրողը վճարելու պայմանով:

Խմբագրութեան Հասցէն՝ Տիֆլիս, въ редакцію журнала
«МУРЧ». Խակ Արտասահմանից. Tiflis, Rédaction de la Revue
«MOURTCH».

Խմբ. Հրատ. Ահետիք ԱռԱՍԽԱՆԵԱՅ.

„ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՑ“

Բարոյական, Ուսումնական, Արուեստադիտական.

Դ. Տ Ա Ր Ի.

«Հանդիսի» դ. տարւոյ բաժանորդք տարւոյն վերջը կընդու-
նեն մեկ օրինակ նոր վեպ իր յաւելուած:

Բաժանորդագիրն է 8 ֆրանք=4 ռուբլի թղթագրամ=4
վլորին:

Հասցէն. Въ Вѣнну (Австрія), Редакція «Лідесъ». Vien,
VII. Mechitharistengasse 4. և կամ Rédaction de la Revue
«Hantess», Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

Խմբագր. «ՀԱՆԴԵՍԻ».

,,Ա Ղ Բ Ի Ի Ռ“
ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ.

Հրատարակում է՝ նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ, դիրքն աւելի մեծացրած, աւելի զբեղ եղածի վրայ և
նորագոյն տառերով:

Ա. Պրէմիան է՝ ՅԻՍՈՒԻՍ ԽՍՋԱԿԻՐ մէկ ու կէս անգամ աւելի մէծ, քան 1889 թ. «Արշալոյ» պատկերը:

Բ. Պրէմիան՝ 1) Յովսէփ Գեղեցիկի վաճառումը, 2) Յիսուս Սինա լերան վրայ աղօթելիս, 3) Մովսէս մարգարեկի տասը պատգամ ստանալը, վերին աստիճանի շքեղ պատկերները. 100 ր. գրքեր, 50 ր. գրասեղանի զարդ-իրեղներ վիճակ կըգցուին սեպտեմբեր ամսին բաժանորդների մէջ:

Գ. Պրէմիան՝ պատի-տախտակ օրացոյց կուղարկուի բաժանորդներին գեկուեմիերի հետ չետ:

Բացի դրանցից՝ տարուալ ընմացրում կառացարկուին հանելուկներ և թերուաներ, որոնց ԱՌԱՋԻՆ վճռողները կստանան մրցանակներ—գրքեր, պատկերներ, ալբոմներ, գրասեղանի զարդեր և այլն:

Բ ՈՎԱՆ Դ ԱԿՈՒԹԻՒՆ.

ՄԱՍՆ ԵԲԸՉԻՆ

I. Վէպեր, մանրավէպեր, զօյցներ, առակներ, չէրիաթներ, ձանապարհորդութիւններ, կենսագրութիւններ. II. Բանաստեղծութիւններ. III. Գիտութիւն և Արուեստ. IV. Նոր լուրեր. V. Այլ և այլք:

Զ ՈՒ Խ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

VI. Մանկական ֆիզօրէլեան, շախմատի և այլ խաղեր, ըերուածներ, թուարանական խնդիրներ. VII. Անեկդոտներ, հանելուներ, շուտական բանական գործութիւններ. VIII. Երգեր՝ ձայնագրած (նօտաներով):

ՄԱՍՆ ԵԲԿՐԹՈՐԴ

VIII. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ. IX. Առաջարկութիւններ, խորհուրդներ, X. Մատենախոսութիւն և նոր գրքեր. XI. Խառն լուրեր. XII. Պատասխաններ. Յայտարարութիւններ.

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը Յ թ. է և պրէմիայի ձանապարհածախս պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա:

Ապառիկ ոչ ոքից չի ընդունվում:

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակյա «ԱՐՑՈՒՐԵ», իսկ Արտասահմանց՝ Տիֆլիս (Caucase) de la Revue «AGBUR». Խմբ.-Հրատ. Տիֆլիս. Հիգրամ. ՆԱԶԱՐԵԱՆ.

„Տ Ա Ր Ա Ջ“

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՇԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

Հրատարակվում է Թիֆլիսում ամիսը մի անգամ, դիրքը
քառածալ, մօտաւորապէս ոսաց «ՀԱՅՈՎՈՐԾՈՅ ՕՅՈՅՐԵՆԻԵ» հան-
դիսի գերբով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Գեղարուեստ և Գիտութիւն, II. Պատմական և ժամա-
նակակից վէպեր, պատկերներ, թատրոնական զրուածներ, III.
Բանաստեղծութիւն, IV. Քննագատութիւն և Գենսագրութիւն,
V. Կար, ձեւ, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստների վերա-
բերեալ, VI. Տնային արդիւարերութիւն և տնտեսութիւն, VII.
Ճանապարհորդութիւն և արկածք, VIII. Երաժշտութիւն և թատ-
րոն, IX. Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուած-
ներ և այլն, X. Ֆէլիէտօն, ծաղր, և առած, կատակ, XI. Շախ-
մատի և այլ խաղեր, րերուս, հարցեր, Խորհուրդներ, այլեայլք,
Պատասխաններ, XII. Ցայտարարութիւններ,

«Տարազեր» բաժանորդագինը է 3 ր.

«Տարազին» և «Աղբիւրին» միանուագ բաժանորդ գրուողը
մի և նոյն հասցէով փոխանակ և բուրլու վճառում է 5 ր. և 28.
կ. փոստի մարկա «Աղբիւրի» պրէմիա «Ցիսուս Խաչակիր» պատկերի
Ճանապարհածախուս,

Ապառիկ ոչ որից չի ընդունվում։

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակյալ Ալլոյստ. Հկուրի. «ՏԱՐԱՅՇ»,
իսկ Արտասահմանից. Tiflis, (Caucase) Rédaction du journal
illustre «TARAZ».

Խմբ.-Հրատ. Տիգրան ՆԱԶԱՐԵԱՆ.

„Ա Ր Ա Ր Ա Տ“

ԱՐՈՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՀԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ Լ

ՍՈՅՆ 1890 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Հրատարակվում է նոյն ուղղութեամբ և ծրագրով։

Բաժանորդագինն է Թուաստանում՝ 4 ր. Երոպայում՝ 5

ր. Հնդկաստանում՝ 6 ր..

Հասցէն՝ Եպիմական, Տիպոգրաֆ. Կոմիտեъ.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԵԳՈՒՆԵՐՈՎ ԳՐՈՒԱԾ ԳՐՔԵՐ ԵՒ ՅՈԴՈՒԱԾՆԵՐ

ՏԱՄԱՅ ՏԱՐՈՒԱՅ ՀՆԹԱՑՔՈՒՄ (1876—1886)

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻ,

Եկեղեցով, կեզուի, Պատմութեան և Գրականութեան մասին.

(ՀԱՅՈՐԴՈՒԱՅ Ե ԿԱՐ. ԵԶԵԱՆԻՑ).

1876.

Armenian Folk Songs (Frasérs Mag. March).

Brosset.—Revue de la litterature historique de l'Arménie (Bull. de l'Acad. d. sciences de St.-Pétersbourg XXII, 2).

— Vide Collection.

Chansons populaires de l'Arménie (Revue brit. Avril).

Collection d'historiens arméniens. Traduits par M. Brosset. t. II Lex.—8. IV, 696 p. St.-Pétersbourg. (Leipzig, Voss 8 M. 80 Pf.)

Dervischjan, S.—Armeniaca S. Das altarmenische Φ. Ein Beitrag zur indo-europäische Lautlehre. Anhang: Altarmenisch-baktrische Etymologien. 8. 117 S. Wien, Verlag d. Melchitharisten-Congregation. (Sitz.—Ber. d. Wiener Academie d. Wiss. Phil.—hist. Cl. 5—9) 6 M.

Deyrolle, Th.—Voyage dans la Lazistan et l'Arménie (Tour du Monde. Sem. 1).

Gardthausen, V.—Ueber den griechischen Ursprung der armenischen Schrift. (Ztschft. d. Dtsch. Morg. Ges. XXX, 1).

Grigorens J.—England's Eulogy written in Armenian verses, a. d. 1675. (Text and translation) 18, 36 pp. Venice, St. Lazarus.

Gutschmid. A. v.—Ueber die Glaubwürdigkeit der armeneschen Geschichte des Moses von Khoren. 43 S. gr. 8 Leipzig, Hirzel.

Harlez, de.—Yezdergerd II et les Arméniens (Revue cath. t. 42, pt. 1).

Hübschmann, H.—Armeniaca (Ztsch. f. vergl. Sprachforsch. N. F. III, 4).

— Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogerman. Sprachen. (Kuhn's Zeitschrift N. F. III, 1).

— Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen. (Ztschft. d. Dtsch. Morg. Ges. XXX, 1).

Issaverdens, J.—Armenia and the Armenians, being a sketch of its geography, history, church and literature. 2 vols. 410 and 390 pp. Venice, printed in the Armenian Monastery.

Martin, l'Abbé.—Des signes hieroglyphiques dans les manuscrits Arméniens (Compte-rendu de la I-ére sess. du congrès d. Orient. 1873 t. II).

Müller, Fr.—Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogerman. Sprachen. (Sitz—Ber. der Wiener—Acad. Phil-hist. Cl. 20—23).

In Türkisch-Armenien (Globus XXX, 20).

West, M. A.—The romance of Missions; or; Insiede Views of Life and Labour in the Land of Ararat. With an Introduction by Mrs. Charles, London, Nisbet.

Telfer, J. B.—The Crimea and Trancaucasia; being a narrative of a journey in the Kouban, in Gouria, Georgia, Armenia, Ossely, Imeritia, Swannely and Mongrelia, and in the Tauric Range. With 2 Maps and Illustr. 2 vols. 8 ro 610 pp. London Kiny. 36 s.

Patkanoff.—Sur l'écriture Cunéiforme Arméniaque et

les Inscriptions de Van (Compte-rendu de la I-ére sess. du congrès d. Orient. 1873 t. II).

Robert. L., de.—Étude philologique sur les inscriptions cunéiformes de l'Arménie. In—4 (autogr.) 196 p. Paris, Leroux. 20 fr.

Sayce, A. H.—On the cuneiform Inscriptions of Van. (Ztsch. f. vergl. Sprachforsch. N. F. III. 4).

1877.

Les Arménies de Turquie. Rapport du patriarche arménien de Constantinople à la Sublime Porte. Traduit de l'arménien par K. S. Achguard. In—8^o, 71 p. Paris, Leroux. 1 fr. 50.

Assises d'Antioche reproduites en français et publiées au sixième centenaire de la mort de Sempad le Connétable, leur ancien traducteur arménien. Dediées à l'académie des inscriptions et belles-lettres de France par la Société Mekhitariste de Saint-Lazare. 4^o, XXIII, 93 p. Venise 1876. Impr. Armén. médaillée, 12 fr.

Blau, O.—Die Herren von Sophene und deren Münzen. (Numism. Zeitschrift., IX, 1).

Les Chants liturgiques de l'église Arménienne traduits en notes musicales européennes par Pietro Biachini et publiées par la Congregation des Pères Mekhitharistes. 4^o XIII, Venise impr. Armén. de St. Lazare 20 fr.

Gutschmid, A. v.—Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren. (Ber. d. Verh. d. Ges. d. Wissensch. Leipzig., Ph.-hist. Cl. 1876).

— Agathangelos (Zeitschr. d. Dtsch. Morgl. Ges. XXXI, 1).

Hübschmann.—Report on Armenian. (Transactions of the Philol. Soc. 1877—1879. Pt. 1).

Klein, D.—L'Arménie et les Arménieurs. (L'Exploration., Déc., 2).

Lagarde, P. de.—Armenische Studien. Aus. d. Abhandlg. des Ges. d. Wiss. zu Göttingen. gr. 4. 216 S. Göttingen Dieterich. 8 M.

Laudes et Hymni ad. Ss. Mariae Virginis honorem ex Armenorum breviario excerpta Mechitaristicae congregationis opera latinitate donata. 4. 423 pp. Venetiis, in Sancti Lazari insula. (9 M.)

Mémoire sur la situation actuelle des Arméniens et sur leur avenir. Respectueusement transmis aux chancelleries des Grandes Puissances par Seth A. Apcar. Constantinople.

Müller, Fr.—Ueber die Stellung des Armenischen in Kreise der indogermanischen Sprachen. Lex—8. 24 S. Wien, Gerold. (S. B. O. f. 1876. No. 781) 50 pf.

Petermann, H.—Armenien. (Herzog's Real-Eencyklopädie Bd. I S. 663 u. Folge).

Néve, F.—Hymnes arméniennes aux apôtres Saint Pierre et Saint Paul (Revue cath. de Louvin, Juin).

Stuart, R.—The Ascent of Mount Ararat in 1856. (Proc. of the R. Georg. Soc. XXI, 1).

Radde.—Der Bin-göl-dagh, der Tausend-Seen-Berg, das Quellgebirge des Aras. (Petermann's Mitth XI).

Schweiger—Lerchenfeld. Das Neue Vilayet Wan (Oester. Monatsschrift fur den Orient 3).

In Türkisch-Armenien. (Globus XXIX, 22—24. XXX, 21—24).

Mordtmann, A. D.—Ueber die Keilinschriften von Armenien. (Ztschr. d. Dtsch. Morgl. Ges. XXXI. 2. 3).

1878.

Armenian Literature and Education (The Academy. Sept. 14).

Am Wan-See in Türkisch-Armenien (Aus ullen Weltheil. VIII. 1877).

Armeniens culturhistorische Stellung. (Europa. No 22).

Brosset, M.—Sur deux rédactions arméniennes, en vers et en prose, de la légende des Saints Baralain et Ioasaph (Bull. de l'Acad. des Sciences de St.-Pétersbourg T. XXIV, coll. 561—67).

Bryce, J.—On Armenia and Mount Ararat. (Proc. Geogr. Soc., London. Vol. XXII, No 3).

Chodzko.—Ascension du Grand Araraten. 1850. (Annuaire du Club Alpin franc. 1876).

Das von Russland beanspruchte Gebiet in Vorder-Asien. (Petermann's Mitth, VIII).

Ecclesiae Fphesinae de Obitu Joannis apostoli narratio ex versione armeniaca saeculi V. Nunc primum latine cum notis prodita curavit P. Josephus Catergian, Sod Mechit. Vienn. Viennae, 1887 mense Martii. 53 p. 8. Verlag. der Mechitharisten—Buchdr. Wien.

Erzerum und Erzingdjan (Ausland. N. 13).

Geikie, Prof.—Ararat. (The Nature N. 428).

Justi, Fr.—Les noms d'animaux en Kurde. (Revue de linguistique T. XI, fasc. I. Jan. p. 1 à 32) 32 p. Paris, impr. nation. (Maisonneuve. 4 fr.)

Moesinger, G.—Vita et Martyrium St. Bartholomaei Apostoli, ex sinceris fontibus armeniacis in linguam latinam conversa. Salisburgi, in libr. Soc. cathol. 1877. (Wagner).

Müller, Fr.—Armenica. V. 10 S. Lex—8. (Aus «Sitzungsber. der k. Acad. d. Wiss.») Wien. Gerold. 30 pf.

Schweizer-Lerchenfeld, A. v.—Armenien. Ein Bild seiner Natur und 'seiner Bewohner. Im Anh.: Anatolische Fragmente. gr. 8. XXVIII, 227 S. Jena, Costenoble. M. 4. 50.

— Lazistan und die Lazen. (Monatsseh. f. d. Orient, 1877. S. 121).

— Zur Völkerstellung der Armenier. (Oesterr. Zeitschr. für den Orient, 1877. № 12).

Smith, G.—The Armenians: their past and futur. (Good words, March).

Von Tiflis nach Alexandropol. (Europa 16).

Zur Geographie von Armenien. (Augsb. Allg. Ztg., Beil. № 7—13).

Antiquities from Lake Van. (The Athenaeum, Febr. 16).

Pauli G.—Von Wan bis an den Tigris bei Hesn Refa. (Westermann's Monatspefpe April, Mai).

1879.

S. Aristidis philosophi Atheniensis sermones duos quorum originalis textus desideratur ex antiquo Aramenica versione nunc primum in latinam linguam translatos Exec. Dom. F. Dupauloup. a gale epis. etc. Patres Mechitarestae cungr. S. Lazari Venetiis 1878. Libraria P. P. Mechitaristarum in Monastereo S. Lazari 23. 8. S. 8^o. Armenischer und Lateinischer text gegenüber.

Arzrouni Krikor. Die Oekonomische Lage der Armenier in der Turkei 36 S. 8. St.-Petersbourg (Akad. der Wissenschaften).

Bedrossian F. M.—A. New Arménian English dictionary XXX 786 pp. 8. Venice S. Lazare 1875—79 Imp. des P. P. Mékhitaristes. lire 20.

Brosset.—Sur deux rédactions arméniennes en vers et en prose de la légende des Saints Baralam-Varlaam et Joasaph-Josaphat. (Melanges Asiatiques. T. VIII. livr 3. 4).

— Notice sur un manuscrit arménien nouvellement aequis pour la Bibleothèque imperiale publique (Melanges Asiatiques T. VIII. livr. 3. 49).

Joh Chrijsostomi oratio Panegyrica de vita et labo-ribus S. Gregorii Illuminatoris, Patriarchae Armeniae, cuius orginalis textus desideratur, et antiqua armeniaca versione, in latinam linguam translata. (Texte en regard) In 8 Venice S. Lasare. Imp. des P. P. Mekhitaristes.

Faustus von Byzanz, Die Geschichte Armeniens. Aus dem Armen. ubers. u. mit e. Abhandlg. üb. die Geographie Armenien eingeleitet von M. Lauer. gr. 8 XI. 218 S. Köln du Mant Schauberg.

Sasse.—Prolegomena in Aphraatis Sapientis Persae sermones homiletieos. Dissertatio inauguralis ser. I. J. Fr. Sasse Lips. 1878.

Schönfelder.—Aus und über Aphraatis (theol. Quartalschrift 1878. S. 195—56).

1880.

Creagh J.—Armenias, Koords and Turks. 2 vols. 8 ro
London. Tuisley.

Gatteyrias J. A.—Élégie sur les malheurs de l'Arménie
et le Martyre de St Vahan de Kogthen. (Journ. Asiat, Août-
Sept).

Lauer, M.—Armenische Chrestomathie. Zu des Verfassers
Grammatik der claiissischen armenischen Sprache. 8. IV. 179
S. Wien. 1881. Braumüller.

Patkanoff, K. P.—Ueber die Stellung der armenischen
Sprache im Kreise der indo-europäischen. (Russische Revue
IX, 7).

Thoumaian.—Agathangelos et la doctrine de l'église ar-
ménienne V siecle. These présentée à la faculté de l'Eglise
libre du caupon de Vaud par G. Thoumaian 8. Lausanne 1879.

1881.

Essai d'un système de linguistique, comprenant l'in-
terprétation des racines par les 1 ttres de l'alphabet, appli-
qué à la langue arménienne. In—8. 40 p. 2 fr. (Lorenz &
Keil) Constantinople.

Hübschmann, H.—Armenica, I. II. (Zeitsche d. D.
Morgenl. Gesellsch. XXXV, 1, 4).

Petit.—Études Arméniennes. (L'Instruction publique,
Févr).

Vetter, P.—Ueber die armenische Uebersetzung der
Kirchengeschichte des Eusebuis (Theol. Quartalschr. 63, 2).

Sachau, Ed.—Ueber die Lage von Tigranokerta. Mit 2
Karten. gr. 4 92 S. Berlin, Dümmler. 5 M.

1882.

Gatteyrias, J. A.—L'Arménie et les Arméniens. In—
18 jés. 144 p. avec fig. Paris. Cerf. 1 fr.

Grammatica inglese-armena. 216 p. 16. Venezia 1881,
tip. armena.

Himpel, v.—Armenische Sprache, Schrift und Literatur. (Wetzer u. Wette's Kirchenlex. I. S. 1344—54).

Hübschmann, H.—Die Umschreibung der iranischen Sprachen und des Armenischen. 8. Leipzig. Breitkopf & Härtel. 1 M.

—Armeniaca. III. (Zfschrff. D. Morg. Ges. XXXVI, 1). (Vgl. B. O. VI № 697).

Kuhn, E.—Armenien & Kaukasus—Lander. (Jahresber. 1879. d. D. Morgenl. Ges).

Moïse de Corène.—Geographie d'après Ptolémée, texte arménien, trad. en français par le Père A. Soukri. VIII. 46 p. 8—vo Venise, Impr. Armenienne 1881.

New Testament in Ararat — Armenian. Revised by Pastor. Simon. London, Bible Society.

Sayce A. H.—The Cuneiform inscriptions of Wan, deciphered and trauslated (Jaurnal Roy. Asiatic. Soc. № 3. XIV 3. 4)

1883.

Açogh'ig de Daron, E.—Histoire universelle. Trad. de l'arménien et annotée par E. Dulaurier. Première partie. Gr. in—8°. Paris 1883, L'eroux. L'ouvrage complet en 2 parties. 15 fr.

Armenian Antiquities. (Builder Vol. XIV, № 2111)

Carrière.—Inscriptions d'un reliquaire arménien de la Collection Basilewski, publiées et traduites par A. Carrière. In—8°, avec 2 planches. (Mélanges orientaux. Ecole spéc. des langues orient. vivant). Paris 1883. Leroux. fr. 3.50

Gutschmid, A. von.—Moses of Choren. (Encyclop. britan. XVI). 812.

Hübschmann, H.—Armenische Studien. I. Grundzüge der armen. Etymologie. I. Thl. gr 8°, VI. 102 S. Leipzig 1883. Breitkopf & Härtel. 3 M.

Chronique de Jean, évêque de Nikiou. Texte éthiopien publié et traduit par H. Zotenberg. In—4°. Paris 1883. Maison-

neuve. (Extraits du Tome 24 des Notices et extraits des manuscrits de la Bibliothéque nationale et autres bibliothéques).

Lauer. — Grammaire arménienne. Traduite, revue et augm. d'une chrestomathie et d'un glossaire par A. Carrière. Paris 1883. Maisonneuve. 12°. XIV, 218 p. fr. 7.50.

Sowa, R. v. — Zur Aussprache des Westarmenischen. Programm des Staats—Gumn. in M. Trübau, 1882.

Weber, A. — Lückenbüsser (der árische Charakter des Armenischen). (Ind. Studien, Bd. 16, 1883. p. 240).

Professor J. Wünsch.—Zweite Reise in Armenien und Kurdistan: (Mith. der k. k. Geogr. Ges. Wien. Bd. 26, № 8, 1883).

Patkanoff, K. A Sayce A. H.—De quelque nouvelles inscriptions cunéiformes découvertes sur le territoire russe. (Muséon. T. 2. № 3. 1883).

Sayce, A. H.—Les inscriptions vanniques d'Arnavir (Le Muséon 4—2).

Litteratur Blatt für orientalische Philologie, Herausg. von proff. D-r. Ernst Kuhn in München. Otto Schulze. II. Band. II. et. III. I. Band. Heft 7.89.

Анучинъ, Д. — Доисторическая археология Кавказа Журн. Мин. Нар. Просв., Jan. 1884, Bd. 231, Abth. 2, p 201—37.

(D. Anutschin. Praehist. Archaeol. d. Kaukasus: Journ. d. Min. d. Volksaufkl).

Ueber die Reise Anutschin's in Daghestan: Ausland, 14 Jan. 1884 p. 36 pf.

Artwin: — Ausland, Jg. 56, № 45, 5 Nov. 1883, p. 886—9. (Aus: Wilh. Petersen. Reiseberichte aus Transkaukasien u. Armenien, in d. St.-Petersb. Zeitg.).

Arzruni. — Zur Charakteristik der Armenier: ib., Jg. 57, № 2, 14 Jan. 1884, p. 39 f.

Bapst, G. — Un voyage au Caucase. Moniteur univ., Paris, 26 Aug.

Bayern, Friedr. — Kaukasische Gräberfelder: Verh. d. Berl. Anthropol. Ges., Sitzug v. 19 Mai 1883. p. 256 — 64. (Anh. zur Zschr. f. Ethnol., Jg. 15).

Berger, Wilh. — Beiträge zur armenischen Folklore. Unedirte Redensarten u. Sprichwörter aus Türkisch Armenien. Transcribierte Originaltexte nebst Verdeutschungen. Kolozsvár. Sumptibus Editoris «Actorum Comparationis Litt. Universarum». (1883). 16°.

Rec. P (itré): Arch. per lo studio d. trad. pop. II 621.

Bernoville, B.—Notes d'un voyage au Caucase: Revue cath. de Bordeaux. Oct. 1883.

Chantre, Ernest.—La nécropole de Koban. (Caucase): Bull. de la Soc. d'anthrop. de Lyon. T. 2, № 1, 1883. p. 92—107. fig. 5—14.

Damas, Amédée de.—En Armenie: Missions cath. T. 16, № 762—4, 11, 18, 25 Jan. 1884, p. 20—2, 35—6, 46—7.

Erxleben, Th.—Die Reisen in Kaukasien vor hundert Jahren und jetzt: Aus allen Welttheilen. Jg. 14. 10, 1883. Joseph-Andrè Gatteyrias († 28 Mai 1883). Nekrolog v. J. Vinson: Revue de Ling. T. 16, Fasc. 4, 15. Oct. 1883. p. 413 f.

Goilaw, Avedik.—Deutsch-armenisches Wörterbuch... Lfg. I. Wien, Mechitharisten—Buchdr. (Kirsch.) 1884. 8°. XV. 160 p. M. 2. 80. Auch m. armen. Tit.).

Gutschmid, A. v.—Moses of Choren: Encycl. Brit., 9. ed. Vol. 16. 1883. p. 861—3. Nachträgliches über Hocharmenien und den Rückzug der Griechen unter Xenophon. Nach W. Strecker mitgeth.v. H. Kiepert: Zschr. d. Ges. f. Erdkunde, Berlin, Bd. 18, H. 4. 5, 1883. p. 388—92.—Die orient. Kirche in Armenien u. der Türkei: Archiv. f. kath. Kirchenrecht 1884. H. 2. März—Apr., Bd. 51, p. 312—20.

Neumann, Karl. Joh.—Strabons Landeskunde v. Kaukasien. Eine Quellenuntersuchung: Jahrb. f. class. Philol. Suppl. Dd. 13. H. 2, 1883. p. 319—54. (Auch sep. 36 p. 8°. 1 M.).

Паткановъ, К. — Изъ новаго списка Географіи, приписываемой Монсею Хоренскому: Жур. Мин. Нар. Просв., Марз 1883. 226. Омд. 2. р. 21 — 32. (K. Patkanow. Aus der neuen Handschr. der dem Moses v. Choren zugeschr. Geographie).

Promis, Vincenzo.—Reliquario armeno già esistente nel convento del Accad. d. sc. di Torino, Ser. 2. T. 35, 1884.

Sc. mor., p. 125—30. 5 tav. (Auch sep. Tor., Loescher 1883. 4°. 8 p. 5 tav).

Russland u. die armenische Frage. Grenzboden № 9, 10, 21, 28. Febr. 1884. Jg. 43, p. 431—9. 486—92.

Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа. Изд. управлениія Кавказскаго учебнаго окружуа, Вып. 3. Тифлисъ 1883. 8°. 350, 168, 23 р. 2. R. (Sammel. d. Material. z. Beschreib. d. Oertlichkeiten u. Völker d. Kaukasus).

Rec. (H. I. II., 1881 — 2): Ws. Miller: Journal d. Minist. d. Volksaufkl. (ruiss.) Febr. 1883. Bd. 225. Abth. 2., p. 383—91.

Seidlitz in Tiflis. N. v.—Armen. u. grusin. Sprichwörter: Ausl., Jg. 57., № 4, 28 Jan. 1884. p. 69—73.

Notes on the Caucasus. By Wanderer New, York. Macmillan 1883. 8°. VIII, 280 p. 2.50. Cf. p. 91 p. 484 b.

Rec. Athen, 27 Oct., p. 525. D. W. Freshfield: Acad. 15 Dec., p. 390. E. C. Rye: Proc. R. Geogr. Soc. Dec., h. 742.

Wünsch.—Erzernum: Kvéty. V. 1883. 9.10.

— Meine Reise in Armenien u. Kurdistan. Vortrag: Mith. d. k. k. Geogr. Ges. Wien 1883, Bd. 26, № 10—12, p. 487—96, 513—20.

Prof. Wünsch's Reisen in Kurdistan: Globus, Bd. 44, p. 286 f.

Guyard Stanislas. — Note sur quelques passages des inscriptions de Van. Journ. as Ser. J. T. 2, № 2. Août—Sept. 1883 p. 306—7.

Паткановъ, К.—Ванскія надписи и значеніе ихъ для исторіи передней Азіи: Журн. Мин. Нар. Просв. dec. 1883. Bd. 230 abth. 2 p. 199.

Hübschmann.—Amenische Studien. I., 1. 1883.

Rec. Athen, 11. Aug., p. 175 b. Muséon II, 497 f. Nordisk Revy, 15 Sept. Sp. 16 f. E. J. r. Dillon: Gött. gel. Anz., 10 Oct., p. 1281—99. Acad. 1884. 5 Jan. p. 12.

Koch.—Der Kaukasus. 1883.

Rec. Tt. E. : Lit. Centralbl. 1883. 22 Sept., Sp. 1368.

Алексановъ, И. Я.—Краткая исторія Армениі съ прибавл. очерка «Армяне въ Россіи». Ростовъ на Дону, тип. А. Адамковича. 1—4. 8°. 114 р. 50 к. (J. J. Alexanow. Kurze Gesch. Armeniens. Rostow am Don. 1884).

Alishan, P. Léonce. — Deux descriptions arméniennes des lieux saints de Palestine: Archives de l'orient latin, t. II, 2, 1884. p. 394 — 403. (Anastase d'Arménie, VII-e siecle Nicolas, évêque d'Acquirmann., 1483).

«Antiquities from Armenia»: Builder, Apr. 26, 1884, vol. 46., p. 566.

Avéd Jakó. — Az örmény netzet irodalomtörténetének kisérlete. Jrta Neumann K. Frigyes. Ford. — Gynlaféhervári kath. gymn. Progr. 188³₄ Neumann's armen. Literaturgeschichte übers).

Careri, G.—Gli Armeni nella questione d'Oriente: Società africana d'Italia (Napoli) 1884., febbr.

Damas, Le p. Amédée. — Les Sandjaks d'Angora et de Sivas: Annales de la propagation de la foi, no 333.

Rec. V. Groffier: Bull de la soc. de géogr. de Lyon 1—5. V. 455 f.

Дилленъ, Э.—Армянские этюды. I. Отношение армянского къ эранской группѣ языковъ. II. Война армянъ противъ персовъ. Харьковъ, тип. Окружного штаба. 1884. 8°. 119; VIII, 190 р. (E. Dillon, Armen. Studien I. Das Verhältniss d. Armen. zur eran. Sprachgruppe. II. Der Krieg. d. Armenier gegen die Perser. Charkow).

Rec. C. de Harlez: Muséon, Ost III 662—4. J.—Martiniow: Revue des quest. hist. 1—5. I Jan. XXXVII, 282 f.

Histoire universelle, par Etienne Acohig de Daron, trad. de l'arménien et annotée par E. Dulaurier. I. 1883.

Rec. Filix Néve: Muséon 1884, Oct. III 653—6.

Эминъ, Н. О.—Династический списокъ Хайкидовъ въ исторіи Арменіи Моисея Хоренского и Хронологическая ихъ таблица у О. Михаила Чамчяна. Москва, тип. Гербека, 1884. 8°. 43 р. (M. 1.50) (N. O. Emin. Dynastische Liste der Haimiden in d. Gesch. Armeniens des Moses v. Choren.).

Gailaw, Avedik. — Deutsch-armen. Wörterbuch... Sfg.

2. Wien, Mechitharisten-Buchdr. (Kirsch) 1884 8°. p. 161—320. fl. 1.40 kr. (s. Lit.-Bl. I. p. 317, n. 996).

Rec. Frdr. Müller.: Oest. Mon. f. d.

— Orient 1885. 15 Febr., XI, 45 f.

General Gordon's, letters from the Crimea, the Danube, and Armenia Aug. 18, 1854. to Nov. 17, 1885. Ed. by Demi. C. Boulger. London, Chapman 1884. 8°. XIII, 205 p. 5 s.—2 ed. ib. 1884.

Rec. Athen, 19 Juli, p. 69 f. Contemp-Rev., Sept. p. 464. Westminster Rev. 1885 Jan., p. 270 f.

Hübschmann. — Armenische Studien. I, 1. 1883. (s. Lit.-Bl. I, p. 59. p. 91 n. 484 u. p. 318).

Rec. Bthl. (Bartholemæ): Lit. Centralbl. 1884. 28 Juni. Sp. 928 f.

Löher, Franz v.—Die Armenier : v. Löher, Beiträge zur Gesch. u. Völkerkunde, Bd. I, Frankf a M. 1885. p. 252—76.

Merx, Adalb.—De artis Dionysianae interpretatione armeniaca, p, LVII—LXXIII, in: Dionysii Thracis ars grammatica... ed. Gust. Uhlig. Praemissae sunt præter prolegamina: Adalberti Merxii de versione armeniaca disputatio atque syri interpretis lectiones. Lipsiae, Teubner 1883 (Umschlag 1884). 8°.

Dictionnaire français-arménien d'après les dictionnaires d'E. Littré et de l'académie française par Neandre (Horayr) de Byzance. Constantinople, impr. A. H. Boyajian 1884. 4°. VIII, 1299 p. 46 francs. (Auch. m. armen. Titel).

Néve, Flix.—La transfiguration dans l'office des Arméniens: Revue cath. (Louvain), livr. 8, 15 Août 1884. p. 510—27.

Паткановъ, К. II.—Материалы для армянского словаря. Вып. II. Спб. Акад. 1884 8°. 64 р. (К. P. Patkanow. Materialien zum armen. Wörterbuch. Heft 2. — Darin p. 47—61. О хронологии Моисея Хоренского. Ueber die Chronologie des Moses v. Khorene) (Reste der Literatur der Armenier. hrsg. v. K. P. Patkanow. St.-Petersburg. Druk. v. А. А. Krajewski 1884. 8°. VIII p. russ. 72 p. armen. M. 3).

(Enth. Augustin Badschetzi u. 5 andere hist. Texte).

Patrubány, Lukács.—Ormény tanulmanyok: Egyetemes philologici közlöny 1884. Juli, Jg. 8, II. 7, p. 713 — 62.

(Auch sep. Budapest, Franklintársulat könyvnyomdája 1884. 8°. 53 p.) (Armen. Studien).

Robert, Ulysse.—La chronique d'Arménie de Jean Daridel, évêque de Tortiboli: Archives de l'orient latin. t. 2 1884, d. 1—15.

Schlumberger, Gust.—Sceau d'un capitaine arménien au service de Byzance au dixième siècle: Revue numism., sér. 3. t. 2. trim. 4, 1884. p. 430—9.

Stickel, G.—Eine der älteren armen. Münzen: Numism. Zschr. (Wien). Bd. 15, 1883, p. 216—20. Nachschrift v. S. N. Antonian: ib. 220—1.

Szongott, Kristóf.—A hazai örmények vezeték—és kesztnyevei. Stamos ujvártt (Klausenburg, Demjén) 1884. 8°. 72 p. 50 kr. (Die Familien—und Taufnamen der ungar. Armenier).

Chantre, Ernest.—Rapport sur une mission scientifique dans l'Asie occidentale et spécialément dans les régions de l'Ararat et du Caucase; Archives des miss. scient. ser. 3. t. 10. 1883. p. 199—263. 14 pl. s. Lit—Bl. I. p. 9. n. 482.

Hamdy Bey O. et Osgan Effendi.—Le Tumulus de Nemroud Dagh. Voyage, description, inscriptions avec plaus et photogr. Musée Imp. Ottaman-Coustantinople Lorensz et Keil. Imp. Soeffler: 1883. fol. 2 pläne. 35 photogr. 6 Inscha-Taf. 30 n. XX p. Test. (M. 30).

Rec. Pierrot: Revue archéol. 1884. apr. p. 270—2. Wochenschr. fur. Klass. philol. 21 Mai Sp. 658—61.

Die Orient. Kirche in Armenien u: der Türkei. Arch. f. kath Kirchenrecht. 1885. H. 2, März — Apr. Bol. 53. p. 336—41. H. 1. Niw-dec. Bal. 54. p. 464—6.

Հայութապահան Նախալեզու — գրեց Հ. Սեղովելէ Տէրսիշեան Կ. Պօլիս, ա. Պերպերեան. 1885. Rec. Frdr. Müller: Oest Mon f. d. Orient. 15. Febr. XI.



| | | | |
|--------|--------------------------------------------------|------------------------------------|-----|
| XIII. | ԴԱԻՍՁԱՆԻՆ. ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՆ... | բանաստ. Լ. | |
| | ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ | 166 | |
| XIV. | ԿԱՐԱԲԱՍ, Մօրիս Մօնտղիկից Զ. Պ. | 168 | |
| XV. | ԱՐԾԻԻ, բանաստ. Մէլթ. | 213 | |
| XVI. | ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ, | ֆանտազիա. Ի. Տուրդենեփից | 214 |
| XVII. | ԾԵՐ ԺԱՄԿՈՉԸ, | գարնանային իդիլիա. Վ. Կորուն-կոլից | 258 |
| XVIII. | ԹԱՓՈՐ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅՑՆԱՆ, | բանաստ. | |
| | Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ | 267 | |
| XIX. | ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ և | | |
| | ՀԵՏԵԻԱՆՔԸ. ԵՐ. ՇԱՀԱԶԻՋ | 269 | |
| XX. | ԼԵՂՊՈԼԴ ՖՈՆ ՌԱՆՔԵ և ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒ- ԹԻՒՆԸ, ՀՕՐԴ | 289 | |
| XXI. | ՇԱՀԻՐ ԽԱԶԱՏՐԻ ԵՐԳԵՐԻՑ | 312 | |
| XXII. | ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. Սօս և Վարդիթեր, վեպ | | |
| | Պերծ Պոջեանցի. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ | 322 | |
| XXIII. | ՍՑԱՑՈՒՑԾ ԳՐՔԵՐ | 353 | |
| XXIV. | ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ | 354 | |

I. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ, հաղորդեց Կ. ԵԶԵԱՆՑ 1



„ՀԱՆԴԻՍԻ“

ՀՐԱՑԱՐԱԿՉԻՑ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՀԵՑԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

ԽՈԹ. ԿՈԴ

| | | |
|-----|-----------------------------------------------------|------|
| 1. | Հանդէս Գրականական և Պատմական դ. I | 2 |
| 2. | » » » II | 2 |
| 3. | Յ. Յովաննիսեան, Բանաստեղծութեաներ | 60 |
| | Ճանապարհածախանյ | 75 |
| 4. | Շիրքանդայլ, Արամքին | 75 |
| 5. | Գ. Չուբար, Վլաքեր. Ճանապարհածախանյ | 1 50 |
| 6. | Տ. Նարանշին. Հալ-ժողովրդական ուրիշաներ 4 դ. | 50 |
| 7. | » » » » 5 դ. | 50 |
| 8. | Հնդու Արագաղ | 05 |
| 9. | Ինչով Ան ապրու մարդիկ | 10 |
| 10. | Երկու երեկոյ | 10 |

«ԱՆԴԻՍԻ» III և IV զրքերի զինն է միամին 3 ր.
իսկ խրաբանչւրը ստանձնին 2 ր.

Թէ այս զրքերը ստանդու և թէ մը ապագանի պայմանների մասին ահզեկութեան համար պէտք է զինն հանեալ հացելով. Մոսկվա, Գազетնի թա. դոմъ Լանզова, Տիպографія М. ԲԱՐХУԴԱՐՅԱՆЪ.

